

Հրատարակվում է **ԱՅԼԸՆՏՐԱՆՔ** Հետազոտական Կենտրոնի  
գիտական խորհրդի որոշմամբ:  
ՀՀ ԿԳՆ ՀՀ ԲՈՂ-ի կողմից ընդունելի է ատենախոսությունների հիմնական  
արդյունքների և դրույթների հրատարակման համար:

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔ**

Եռամսյա գիտական հանդես  
**տնտեսագիտություն, գործարարություն, կառավարում**

Հոկտեմբեր – Դեկտեմբեր, 2017թ.

Խմբագրական խորհուրդ

**ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

դոկտոր, պրոֆեսոր

Խորհրդի նախագահ և

գլխավոր խմբագիր ՀԱՅԱՍՏԱՆ

**ԳՐԻՇԱ ՂԱՐԻԲՅԱՆ**

դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀԱՅԱՍՏԱՆ

**ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**

դոկտոր, պրոֆեսոր, ՀԱՅԱՍՏԱՆ

**ՖՐԱՆՍԻՍ ԲԱՐՈՆ ՎԱՆ ԼՈՒՆ**

դոկտոր, պրոֆեսոր, ԲԵԼԳԻԱ

**ՄԵՐԻԼԻՆ ԹԵՅԼՈՐ**

դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ

**ՊԱՈԼՈՂ ԼԵՈՉԻ**

դոկտոր, պրոֆեսոր, ԻՏԱԼԻԱ

**ՍԵՐԳԵՅ ԿԱԼԵՆՋՅԱՆ**

դոկտոր, պրոֆեսոր

**ԼԻԼԻԱՆ ՎԱՆ ՀՈՖ**

դոկտոր, պրոֆեսոր, ԲԵԼԳԻԱ

**ՇԱՈՍ ՅԱՆԳ**

դոկտոր, պրոֆեսոր, ԱՄՆ

**ԱՐՄԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ**

տնտեսագիտության դոկտոր, ՀԱՅԱՍՏԱՆ

**ՋՈՆ ՈՒՈԼՇ**

դոկտոր, պրոֆեսոր, ԹԱԻԼԱՆԴ

**ԱՐՄԱՆ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀԱՅԱՍՏԱՆ

Research Center **ALTERNATIVE**

**ALTERNATIVE** Quarterly Journal

Editorial Board:

**Tatoul Manasserian** – Doctor of Sciences, Professor (Editor in chief), , ARMENIA

**Grisha Gharibyan** – Doctor of Sciences, Professor, ARMENIA

**Vardan Bostanjyan** – Doctor of Sciences, Professor, ARMENIA

**Francis Baron Van Loon** – Doctor of Sciences, Professor, BELGIUM

**Marilyn Taylor** – Doctor of Sciences, Professor, USA

**Paolo Leoci** – Doctor of Sciences, Professor, ITALY

**Sergey Kalenchyan** – Doctor of Sciences, Professor, RUSSIA

**Liliane Van Hoof** – Doctor of Sciences, Professor, BELGIUM

**Xiaohua Yang** – Doctor of Sciences, Professor, USA

**Armen Safaryan** – Doctor of Sciences, ARMENIA

**John Walsh** – Doctor of Sciences, Professor, THAILAND

**Arman Martirosyan** – Ph.D. in Economics, ARMENIA

Исследовательский Центр **АЛЬТЕРНАТИВА**

**АЛЬТЕРНАТИВА** Квартальный Журнал

Редакционный Совет:

**Татул Манасерян** – доктор наук, профессор (Главный редактор, председателем совета), АРМЕНИЯ

**Гриша Гарибян** – доктор наук, профессор, АРМЕНИЯ

**Вардан Бостанджян** – доктор наук, профессор, АРМЕНИЯ

**Франсис Барон Ван Лун** – доктор наук, профессор, БЕЛЬГИЯ

**Мерилин Тейлор** – доктор наук, профессор, США

**Паоло Леочи** – доктор наук, профессор, ИТАЛИЯ

**Сергей Каленчан** – доктор наук, профессор, РОССИЯ

**Лилиан Ван Хоф** – доктор наук, профессор, БЕЛЬГИЯ

**Шао Янг** – доктор наук, профессор, США

**Армен Сафарян** – доктор наук, АРМЕНИЯ

**Джон Уолш** – доктор наук, профессор, ТАИЛАНД

**Арман Мартиросян** – кандидат наук, АРМЕНИЯ

ԱՐԱՐՈՒՄՈՎ ԻՄԱԱՍՏԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԻՆԵՐ	7
<b>Արտակ ՇԱՐՈՅԱԼ</b>	
Տնտեսական մրցակցության եռությունը և տեսական հիմքերը	9
<b>Թաթուկ ՄԱՆԱՍԵՐՅԱԼ</b>	
Այլընտրանքային ներդրումների ներգրավման տեսա-գործնական խնդիրներ	15
<b>Վարդան ԲՈՍԱՆՁՅԱՆ, Սեդրակ ԹՈՓԼԱՂԱԼՅԱՆ</b>	
Ներդրումային քաղաքականության միջազգային փորձը	21
<b>Ռուբեն ՄԱՐԳԱՐՅԱԼ</b>	
Ժառանգության իրավունքի և հողային կադաստրի հիմանհարցերի կարգաբերման համաշխարհային մոդելները	31
<b>Էյա ՂԻԱՍՅԱԼ</b>	
Քեթրին Մաքաուլեյի գենդերային հայացքների առանձնահատկությունները հանրապետական կառավարման համակարգի շրջանակներում	39
<b>Մարատ ՂՈՒՐՅԱԼ</b>	
Որոշման ընդունման, ինտելեկտի և մասնագիտական հատկանիշների կապերի հետզոտություն	50
<b>Անդրանիկ ՈՍԿԱՆՅԱԼ</b>	
Ակտիվների արժեթղթավորման նախադրյալներն ու խոչընդոտները ՀՀ-ում	57
<b>Լիլիթ ՊԵՏՐՈՍՅԱԼ</b>	
Սովետային տնտեսության զարգացման նախադրյալները	66
<b>Արփինե ԿՅՈՒՐԵՂՅԱԼ</b>	
ՀՀ գործարար միջավայրի վրա ազդող գործոնների հարցի շուրջ	72
<b>Անուշ ԱՆԱՆՅԱԼ</b>	
Ներդրումային գործունեության պետական կարգավորման հիմնախնդիրները	77
<b>Ցոլակ ՄԱԿԱՐՅԱԼ</b>	
Էլեկտրոնային առևտուրը և էլեկտրոնային բիզնեսը որպես ՀՀ արտահանման շարժիչ ուժ	85
<b>Մարիա ՊԵՏՐՈՍՅԱԼ</b>	
Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դերը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում	96
<b>Լիլիթ ՄԿՐՏՉՅԱԼ</b>	
Նորագույն քաղաքական մարքեթինգային կառուցակարգերի կիրառման իրավիճակային վերլուծությունը Բարաք Օբամայի ընտրարշավի օրինակով	101
<b>Գրիգոր ԿԻՐԱԿՈՍՅԱԼ</b>	
ՀՀ առ-տրային բանկերում ներդրումային ռիսկի գնահատման հիմնական մեթոդները	111
<b>Սերգեյ ԻԳՆԱՏՈՎ</b>	
Սփյուռքը որպես ՀՀ ներդրումային ներուժի ավելացման գործոն	117
<b>Շիրազ ՎԱՐԴԱՆՅԱԼ</b>	
Հարկային և տրանսֆերային գնագոյացման մեխանիզմի կառավարման մոտեցումների հիմնական տարբերությունները	123
<b>Շիրազ ՎԱՐԴԱՆՅԱԼ</b>	
Ներֆիրմային գործարքների հիմնավորման նպատակով տնտեսական վերլուծության իրականացման ռազմավարությունը	127
<b>Վիկտորյա ԲԴՈՅԱԼ</b>	
Ակտիվների արժեթղթավորման դերը վարկային շուկայի զարգացման գործընթացում	134
<b>Քրիստինե ԵՂԻՎՉԱՐՅԱԼ</b>	
Օդային տրանսպորտի զարգացման հիմնական խոչընդոտները և մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում	140
<b>Քրիստինե ԵՂԻՎՉԱՐՅԱԼ</b>	
Ավիատրանսպորտի ազատականացման ծրագրանպատակային հիմքերը Հայաստանում	148
<b>Հասմիկ ՂԱՆԻԵԼՅԱԼ</b>	
ՀՀ հավատարմագրային և կոնցեսիոն կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման համակարգը	154

<b>Տիգրան ԱՅՎԱԶՅԱՆ</b>	
Արտահանման վրա մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցության գնահատումն Էկոնոմետրիկ մեթոդներով	160
<b>Աշոտ ՍԱԼԿԱՆՆԻՍՅԱՆ, Հայկազ ԱՐԱՄՅԱՆ</b>	
ՀՀ դրամավարկային քաղաքականության և արժեթղթերի շուկայի փոխազդեցության հիմնախնդիրները	167
<b>Վոլոդյա ՄԿՐՏՉՅԱՆ</b>	
Հայաստանում արտահանման ոլորտում ներուժի աճի և արտահանման կառուցվածքում սպասվող փոփոխությունների վերլուծություն	177
<b>Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, Վոլոդյա ՄԿՐՏՉՅԱՆ</b>	
Մրցունակության ռիսկի հարցը ԵՏՄի (չգիտեմ ոնց կլինի հայերեն) ինտեգրման գործընթացների շրջանակներում	185
<b>Վարսենիկ ՍԱՐԳՍՅԱՆ</b>	
Սևանկացում. գործընթացներ և կառավարում	194
<b>Գայանե ՍՈՒՆԻՅԱՆ</b>	
Աշխարհաքաղաքական իրողությունները հետխորհրդային տարածաշրջանում	208
<b>Սուրիկ ՍԱՐԳՍՅԱՆ</b>	
ՀՀ հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքի վերափոխումները	213
<b>Նարեկ ԶԱՐԴՈՒՄՅԱՆ</b>	
ՀՀ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի փոխկապակցվածության վերլուծությունը	223
<b>Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	
Հակամենաշնորհային օրենքների և քաղաքականության քննական վերլուծությունը	229
<b>Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</b>	
ՀՀ վարկային կազմակերպությունների վարկավորման ցուցանիշների համեմատական վերլուծությունը	234
<b>Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</b>	
ՀՀ վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի կառուցվածքի ու վարկավորման ուղղությունների վերլուծությունը	241
<b>Արարատ ՉԱՔԱՐՅԱՆ, Մերի ՊԵՏՐՈՍՅԱՆ</b>	
Առողջապահության ոլորտի կազմակերպությունների շուկայական դիրքավորումը մեդիամարքեթինգի գործիքներով	249
<b>Էլինա ՇԱՄՆԱԼՈՎԱ</b>	
Արցախի Հանրապետության առևտրային բանկերի ավանդների և վարկերի ժամանակային շարքերի էքսպոնենցիալ հարթեցում և կանխատեսումներ	255
<b>Ղալիթ ԱԼԱԶԿԵՐԴՅԱՆ</b>	
Գյուղատնտեսության վարկավորման անհրաժեշտությունը և առկա խնդիրները ԼՂՀ-ում	259
<b>Ֆաթմա ԱՐՉՈՒՄԱՆՅԱՆ</b>	
Ի՛նչ է գյուղատնտեսական կոոպերացիան	264
<b>Հրանտ ՄԱՐԳԱՐՅԱՆ</b>	
ՀՀ և Վրաստանի էլեկտրաէներգետիկ համակարգերի փոխհարաբերությունների զարգացման ուղիները	270
<b>Ռոզա ԱՎԱԳՅԱՆ</b>	
Բնակչության սոցիալական ապահովության և կենսամակարդակի հիմնական ցուցանիշների փոխկապակցվածության վերլուծությունը (Արցախի տվյալներով)	275
<b>Շուշան ԱՍԱՏՐՅԱՆ</b>	
Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման իրավատնտեսական դաշտի բարելավում որպես գործազրկության կրճատման պայման	282
<b>Էդվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ</b>	
Բնապահպանական ապահովման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում	287
<b>Խեղեր ԱԼԱԴԻ</b>	
Թեհրանի ֆոնդային բորսայում գրանցված ընկերությունների ֆինանսական ցուցանիշների ազդեցությունը և սիստեմատիկ ռիսկի գնահատումը	294
<b>Խեղեր ԱԼԱԴԻ</b>	
Նորարարությունների ֆինանսավորման գնահատումը	302

<b>Սեդրակ ԹՈՓԼԱՂԱՆՅԱՆ</b>	
Ներդրումային միջավայրի գնահատման խնդիրները	309
<b>Սևակ ԹՈՐԳՈՍՅԱՆ</b>	
Անշարժ գույքի արհեստական օբյեկտների դասակարգման արդի հիմնախնդիրները	316
<b>Սուրեն ԱՆԱՆՅԱՆ</b>	
Էլեկտրաէներգիայի արտահանման կողմնորոշումը որպես ՀՀ-ում էներգաարդյունավետության հիմք	329
<b>Մաջիթ Արաբ ՉԱՂԵԳՊԱՆԻ</b>	
Իրանի սոցիալական անվտանգության կազմակերպության բյուջեի պատրաստման, ձևավորման և առաջարկման ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրություն	340
<b>Մաջիթ Արաբ ՉԱՂԵԳՊԱՆԻ</b>	
Իրանի սոցիալական անվտանգության կազմակերպության բյուջեի հաստատման ուժեղ և թույլ կողմերի ուսումնասիրություն	348
<b>Արծրունի ՎԱՐԴԱՆՅԱՆ</b>	
Ձեռնարկատիրական գործունեության և դրա ենթակառուցվածքների կայացումը ՀՀ-ում. վիճակագրություն	356
<b>Ռոբերտ ԲԱԲԱՅԱՆ</b>	
Ֆրանսիայի գլխավոր Հայաստանի Հանրապետությունում	366
<b>Լևոն ԱԼԻՍԱՆՅԱՆ</b>	
Վարկային կազմակերպությունների կապիտալի շահութաբերության վերլուծությունն ըստ «համանման խմբերի»	372
<b>Ռեգա ԱՐՄԱՆՂՈՒՐ</b>	
Միջազգային վաճառքի մշակույթների ճանաչում	383
<b>Արսեն ՍԱՐԳՍՅԱՆ</b>	
Միջհամայնքային համագործակցության ձևավորումը և զարգացումը: Համայնքների խոշորացում	393
<b>Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ</b>	
ՀՀ-ում ներդրումների ներգրավման գործում խոչնդոտ գործոնները	403
<b>Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ</b>	
ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա երկրների օրինակով, Էմպիրիկ միջճյուղային հետազոտություն	408
<b>Հասմիկ ՓԱԼԱՆՂՈՒԶՅԱՆ</b>	
Չինվորական ծառայության արդյունավետ կառավարմանը նպաստող մի շարք հոգեբանական բաղադրիչներ	414
<b>Արամ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ</b>	
Հանրային կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը	423
<b>Խաչատուր ԻԳԻԹՅԱՆ</b>	
Ներդրումային միջավայրի վերլուծությունը ԵԱՏՄ անդամ երկրներում. ֆինանսական խնդիրներ և մարտահրավերներ	436
<b>Սուրեն ԹՈՐՈՍՅԱՆ</b>	
Անշարժ գույքի շուկաներ	442
<b>Հակոբ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ</b>	
Բջջային կապի ծառայությունների մարքեթինգային առանձնահատկությունները (ՀՀ օրինակով)	447
<b>Ռոբերտ ՀԱՅՐԱՂԵՏՅԱՆ</b>	
Տնտեսական դիվանագիտության առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում	455
<b>Գնել ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	
ՀՀ-ում պարտադիր աուդիտի տեղին լինելը կազմակերպության բնույթից կախված	461
<b>Սոնա ԷԼՈՅԱՆ</b>	
Ձեռներեցների հոգեբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն	470
<b>Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, Վահե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ</b>	
Էներգետիկ անվտանգության ապահովման հնարավորությունները և հելիոֆիկացիայի ծրագրի իրագործման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում	478

<b>Անի ՍԵՐՈՒՅԱՆ</b>	
Հարկային օրենսգրքի բարեփոխումների հիմնախնդիրները	490
<b>Արա ԱՂԱԶԱՆՅԱՆ, Նոնա ԽԱՉԱՏՐՅԱՆ</b>	
Կրթական ծրագրերի որակի վարկանիշավորումը բուհերում	495
<b>Գևորգ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Անի ՍԱՐԳՍՅԱՆ</b>	
Հարկային քաղաքականության կատարելագործման և տնտեսական առաջնության ապահովման հիմնախնդիրները	501
<b>Էսթեր ՀԱԿՈՒՅԱՆ</b>	
Ոչ ֆորմալ զբաղվածությունը և դրա հետևանքները ՀՀ տնտեսության վրա	506
<b>Էսթեր ՀԱԿՈՒՅԱՆ</b>	
Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը ՀՀ-ում	513
<b>Վահե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ</b>	
Էներգետիկ անվտանգության տեսական և մեթոդական հիմքերը	519
<b>Հայկ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ</b>	
Բնական մենաշնորհների հիմնական գործառույթները և դրանց իրականացման մեխանիզմները	526
<b>Աշոտ ՍԱԼԱՉՈՒՅԱՆ, Սրբուհի ԻՍՐԱՅԵԼՅԱՆ</b>	
Ֆինանսական խորության, միկրոֆինանսավորման և ֆինանսական ներգրավվածության կապը ՀՀ-ում	530
<b>Վահագն Մելիք-Փարսադանյան, Անի Գալստյան</b>	
Վարկային ռիսկով պարտատոմսի գինը և եկամտաբերությունը	537
<b>Էդգար ԹԱՂԱՐՅԱՆ</b>	
Նորարարական ներուժը ՀՀ երկարաժամկետ տնտեսական աճի գործոնների համակարգում	545
Մարդկային կապիտալը և Հայաստանի տնտեսական առաջնահերթությունները. խիստ արժեքավոր աշխատություն	
<b>Գրիգոր (Գրիշա) Ղարիբյան, Ալվարո Խառատյանի, Ռազմիկ Իսահակյան</b>	
«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները անկախության տարիներին»	551
<b>ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐՎԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՁՆԵՐԸ</b>	553

## ԱՐԱՐՈՒՄՈՎ ԻՄԱԱՍՏԱՎՈՐՎԱԾ ՏԱՐԻՆԵՐ

Հայաստանի տնտեսագիտական հանրությունը հանդիսավորությամբ նշեց ճանաչված մանկավարժ, գիտնական, ազգային և պետական գործիչ պրոֆեսոր Նորայր Մանասերյան ծննդյան 90 ամյակը:

ՆՈՐԱՅՐ ՄԱՐԳԱՐԻ  
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

90



28 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 2017



Նորայր Մարգարի Մանասերյանի անունը քաջ հայտնի է ինչպես ավագ, այնպես էլ միջին և երիտասարդ սերնդի տնտեսագետների, ագրարային բնագավառի մասնագետների, ինչպես նաև մտավորականության լայն շրջանակներում: Մոտ 50 տարի առաջ նա գերազանց գնահատականներով ավարտել է Մ.Լոմոնոսովի անվան համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և վերադառնալով հայրենիք, աշխատանքի է անցել ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Տնտեսագիտության ինստիտուտում, որտեղ առավել մեծ է գիտնականի վաստակը:

Նրա ապրած տարիները Հայաստանում, Ղազախստանում և Ռուսաստանում եղել են գիտությանը, դրա առաջընթացին ծառայելու, հայրենիքի տնտեսական վերելքին մասնագիտորեն նպաստելու և անմնացորդ նվիրումի տարիներ: Մեզ համար հավասարապես գնահատելի են պրոֆեսոր Նորայր Մանասերյանի ինչպես գիտական, մանկավարժական, այնպես էլ Հայաստանի երրորդ հանրապետության օրոք ընտրված առաջին հորհրդարանի պատգամավորի կարգա-

վիճակով օրենսդրական բեղմնավոր գործունեությունը: 1990-1995թթ. նա ղեկավարել է ՀՀ Գերագույն Խորհրդի Ագրարային հարցերի հանձնաժողովը, մշակել երկրում հողի սեփականաշնորհման օրենսդրական հիմքերը, որոնք արդյունք են նրա գիտականորեն հիմնավորված իրատեսական վերլուծությունների և բազմաթիվ արժեքավոր աշխատությունների: Այսօր տնտեսության ոլորտում գործող բազմաթիվ օրենքներում կա ականավոր տնտեսագետի մասնագիտական ավանդը:

Լինելով օրինակելի հայ և քաղաքացի, Նորայր Մանասերյանը մեծ ներդրում է ունեցել նաև Արցախի հետ տնտեսական համագործակցության ծավալմանը, մանրակրկիտ ուսումնասիրել Արցախի ներկայիս տնտեսական կարողությունը և նախանշել դրա տնտեսության զարգացման կարևորագույն ուղղությունները:

Ականավոր գիտնականին ճանաչում են ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում, ուր առիթ է ընձեռնվել հանդես գալ գիտական բովանդակալից զեկուցումներով: Ռուսերեն լեզվով հրատարակված նրա մենագրություններից շատերը դարձել են հետխորհրդային տարածքի գիտական կառույցների համար բացառիկ արժեք ներկայացնող աշխատություններ: Պրոֆեսոր Մանասերյանի գիտական հոդվածները պարբերաբար լույս են տեսնում նաև ԱՄՆ-ում, Կանադայում, Միջին Արևելքում՝ Սփյուռքի հայալեզու պարբերականներում:

Նորայր Մանասերյանը, դասավանդելով Երևանի պետական համալսարանում, Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում, պատրաստել է բանիմաց մասնագետներ, որոնցից շատերն այսօր գիտության թեկնածուներ և դոկտորներ են, հանրապետության տարբեր կառույցներում աշխատող բարձրաստիճան պաշտոնյաներ, մտավորականներ:

Հաշվի առնելով գիտության, կրթության բնագավառներում, ինչպես նաև անկախ պետականության կայացման և Հայաստանի Հանրապետության օրենսդիր աշխատանքի բնագավառներում ունեցած պատկառելի վաստակը, Արարատի մարզի Գետազատի միջնակարգ դպրոցն այսուհետ կրելու է Նորայր Մանասերյանի անունը:



## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ և ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### Արտակ ՇԱԲՈՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր. տնտեսական մրցակցություն, մրցակցային առավելություններ, մրցակցային ռազմավարություն, մրցակցային վարքագիծ

Մրցակցությունը հանդիսանում է շուկայական տնտեսության բնականոն կենսագործունության հիմնական նախադրյալը և դրա արդյունավետ զարգացման շարժիչ ուժը: Այն հզոր խթան է ձեռնարկատիրության զարգացման համար՝ վերջինիս մոտ ստեղծելով որոշակի մոտիվներ և տնտեսական հետաքրքրություններ ծախսերի կրճատման, արտադրության ծավալների ավելացման, ինովացիաների ներդրման և այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Ժամանակակից տնտեսական իրողությունները, որոնք հանդիսանում են ինտեգրացիոն և գլոբալիզացիոն գործընթացների հետևանք, նոր պայմաններ և պահանջներ են ստեղծում մրցակցային հարաբերությունների զարգացման համար՝ միաժամանակ դրանցով պայմանավորելով տնտեսական զարգացման, կյանքի որակի և հասարակական բարեկեցության մակարդակի բարձրացումը, ինովացիոն զարգացման և մի շարք այլ տնտեսական ցուցանիշների բարելավումը:

Պետք է նշել, որ տնտեսական մրցակցության վերաբերյալ տեսական ուսումնասիրություններն ունեն երկար պատմություն և առաջին անգամ ձևակերպվել են դեռևս 18-րդ դարում քաղաքատնտեսության դասականների կողմից (Ա. Սմիթ, Դ. Ռիկարդո, Ջ. Միլ), որոնց կողմից մշակվեց կատարյալ մրցակցության մոդելը և ներկայացվել մրցակցային շուկայի բնութագիրը: Նեոդասականներ Ա. Մարշալի և Ա. Կոունոյի կողմից շեշտվեց, որ մենաշնորհը, որպես ազատ մրցակցության հակապատկեր, նվազեցնում է տնտեսության արդյունավետությունը: Տեսական ուսումնասիրությունների արդյունքում ձևավորվեց այն գաղափարը, որ մրցակցությունը և մենաշնորհն այն աստիճանի են միմյանց հետ կապված, որ կարելի է խոսել, այսպես կոչված, մենաշնորհային մրցակցության մասին: Այն իրենից ներկայացնում է այնպիսի շուկայական կառուցվածք, որի պայմաններում միաժամանակ զուգակցվում են մրցակցության և մենաշնորհների հատկանիշները: Ջ, Ռոբինսոնը և Է. Չեմբերլինը առաջին անգամ հետազոտեցին ոչ կատարյալ մրցակցությունը: Իսկ

շուկայական տնտեսության պայմաններում մրցակցության դերի վերաբերյալ ուսումնասիրությունները գործառնական և վարքագծային մոտեցումների տեսանկյունից խորացվեցին Յ. Շումպետերի, Ֆ. Հայեկի, Մ. Պորտերի և այլոց կողմից: Մրցակցության ժամանակակից տեսության մեջ էական ավանդ ունեն Ա. Բրանդեբուրգերը, Բ. Նեյբաֆը և այլք, ովքեր հանգեցին այն մտքին, որ արդի աշխարհում առավել արդյունավետ ձև են համագործակցության և մրցակցության վրա հիմնված մրցակցային հարաբերությունները:

Մրցակցության վերաբերյալ տեսական ուսումնասիրությունների և գաղափարների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեսաբանները տվյալ տնտեսագիտական կատեգորիան հիմնականում մեկնաբանում են վարքագծային, գործառնական և կառուցվածքային մոտեցումներից ելնելով:

Վարքագծային մոտեցման տեսանկյունից մրցակցության տակ հասկացվում է, նախ և առաջ, տնտեսավարող սուբյեկտների կողմից միմյանց հետ մրցելու գործընթացը: Այս մոտեցման կողմնակիցները տալիս են մրցակցության հետևյալ սահմանումները: Գ. Ազուն<sup>1</sup> այն սահմանում է որպես միևնույն նպատակի ձեռք բերմամբ հետաքրքրված առանձին ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև մրցակցություն, իսկ Դ. Բորիսովը<sup>2</sup> պայքար ապրանքների իրացման շուկաների համար առավել բարձր շահույթ, եկամուտ և այլ օգուտներ ստանալու համար: Վ. Շկարդունը<sup>3</sup> մրցակցությունը դիտարկում է որպես ապրանքներ և ծառայություններ արտադրողների միջև տեղի ունեցող գործընթաց շուկայի առավել մեծ բաժնի գրավման, առավելագույն շահույթի ստացման, և այլ կոնկրետ նպատակների ձեռք բերման համար: Ա. Յուդանովը<sup>4</sup> ևս մրցակցությունը սահմանում է որպես ֆիրմաների միջև պայքար սպառողների սահմանափակ վճարունակ պահանջարկի համար: Ինչպես նկատում ենք, վարագծային մոտեցման կողմնակիցները հիմնական շեշտադրումը կատարում են մրցակցային հարաբերությունների վրա:

---

<sup>1</sup> Азоев Г.Л. Конкуренция: анализ, стратегия и практика. М.: Центр экономики и маркетинга. 1996. 208 с.

<sup>2</sup> Борисов Д.Б. Большой экономический словарь. – М.: Книжный мир, 2013. – 860 с.;

<sup>3</sup> Шкардун В. Д. Методика исследования конкуренции на рынке // Маркетинг в России и за рубежом. 2000. №4. С. 44-54; Юданов А.Ю. Конкуренция: теория и практика / А.Ю. Юданов. – 2- изд. Испр. И доп. – М.: ГНОМ-ПРЕСС, 1998. – 384 с.

<sup>4</sup> Юданов А.Ю. Конкуренция: теория и практика / А.Ю. Юданов. – 2- изд. Испр. И доп. – М.: ГНОМ-ПРЕСС, 1998. – 384 с.

Ընդ որում, այս դեպքում նպատակները տարբեր կերպ են սահմանվում՝ իրացման շուկաների համար պայքարից մինչև առավել բարձր շահույթի ստացում: Ըստ էության, կարելի է նշել, որ մրցակցային հարաբերությունների սուբյեկտների հիմնական նպատակն, ի վերջո, կապված է սեփական գործունեության պայմանների բարելավման հետ: Հետևաբար, վարքագծային մոտեցման տեսանկյունից մրցակցությունը տնտեսավարող սուբյեկտների կողմից շուկայում իրականացվող գործողություններն են տնտեսական գործունեության համար առավել ցանկալի պայմանների ստեղծման համար: Այս դեպքում մրցակցության հետազոտման առարկա են հանդիսանում մրցակցային հարաբերությունների ձևերը և մեթոդները, մրցակցային վարքագիծը, մրցակցային ռազմավարությունը, մրցակցային առավելությունը և մրցունակությունը:

Գործառնական մոտեցման տեսանկյունից մրցակցությունը հանդիսանում է շուկայական համակարգի անբաժանելի տարր, որի էությունը դրսևորվում է իրականացվող գործառույթների մեջ: Այն դիտարկվում է որպես ռեսուրսների արդյունավետ տեղաբաշխում, հաշվեկշռված գների ձևավորում և նորարարությունների խթանում ապահովող մեխանիզմ: Ելնելով գործառնական մոտեցումից, մրցակցության ռուսումնասիրության առարկա է հանդիսանում տնտեսությունից կամ կոնկրետ շուկայում մրցակցող տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացվող ազդակները (տնտեսական աճ, արտադրության և ճյուղի արդյունավետություն, նորարարությունների մշակում և ներդրում, ծախսերի կրճատում և արտադրանքի որակի բարձրացում և այլն): Մասնավորապես, Ա. Սմիթը<sup>5</sup> որպես այդպիսին դիտարկում էր անտեսանելի ձեռքը, որը կոորդինացնում է շուկայի բոլոր մասնակիցների գործողությունները: Յ. Շումպետերը մրցակցությունը համարում էր դինամիկ գործընթաց, որը "ստեղծարար կործանման" մեխանիզմի միջոցով տանում է "նոր" ապրանքի կամ տեխնոլոգիայի բացահայտմանը և տնտեսությունը մաքրում է հինից և ոչ անհրաժեշտից:<sup>6</sup> Ֆ. Հայեկը մրցակցությունը համարում էր գիտելիքի ստացման և փոխանցման գործընթաց:<sup>7</sup> Իսկ Ա. Շաստիտկոյի կարծիքով

<sup>5</sup> Смит А. Исследование о природе и причинах богатства народов / пер. с англ. В.С. Афанасьева. – М.: Эксмо, 2009. – 960 с.;

<sup>6</sup> Шумптер Й. А. Теория экономического развития. М.: Прогрес. 1982. С. 120.;

<sup>7</sup> Хайек Ф. Познание, конкуренция и свобода: пер. с нем. СПб.: Пневма, 1999. – С. 50.;

մրցակցությունը փոփոխվող հանգամանքներին շուկայում գործող սուբյեկտների ադապտացման միջոց է:<sup>8</sup>

Կառուցվածքային մոտեցման կողմնակիցները մրցակցությունը ներկայացնում են որպես վաճառողների և գնորդների փոխգործողություններով բնութագրվող շուկայի ստատիկ վիճակ (մոդել, տիպ), ովքեր ի վիճակի չեն էական ազդեցություն ունենալ ապրանքների գների փոփոխության վրա: Մասնավորապես, Ա. Կուռնոյի կարծիքով մրցակցությունը պայքար է երկու և ավելի ֆիրմաների միջև, երբ նրանցից յուրաքանչյուրը ենթադրում է, որ մրցակիցների արտադրության ծավալը կմնա անփոփոխ:<sup>9</sup> Ֆ. Նայթը մրցակցությունը սահմանում է որպես անորոշության պայմաններում գործող բազմաթիվ միմյանցից անկախ տնտեսական միավորների փոխգործողություն:<sup>10</sup> Լ. Կաչալինան մրցակցության հիմնական նախապայման է համարում մենաշնորհի բացակայությունը:<sup>11</sup>

Կառուցվածքային մոտեցման տեսանկյունից մրցակցությունը (կատարյալ մրցակցության մոդելը) հանդես է գալիս որպես շուկաների մենաշնորհացման աստիճանը որոշող չափանիշ: Այսպիսով, մրցակցության էության համալիր ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս բացահայտել տվյալ կատեգորիայի բազմաբովանդակությունը և դրսևորման առանձնահատկությունները:

Ընդհանուր առմամբ, մրցակցային հարաբերությունները ենթադրում են շուկայում տնտեսավարող սուբյեկտների տարբեր՝ մրցակցային և ոչ մրցակցային վարքագծեր: Եթե ոչ մրցակցային վարքագիծը բնութագրվում է տարերային (ոչ նպատակամետ) գործողություններով կամ տնտեսավարող սուբյեկտի անգործությամբ, ապա մրցակցային վարքագիծը հիմնված է մրցակցության սուբյեկտների ակտիվ և նպատակասլաց գործողությունների վրա՝ համապատասխան նպատակների ձեռք բերման համար: Ըստ էության, նման գործողությունների համախումբն էլ կազմում է մրցակցային վարքագծի ռազ-

<sup>8</sup> Шаститко А., Голованова С. Последствия слабой конкуренции: количественные оценки и выводы для политики (доклад) // Экономическая политика. 2012. №6. С. 5-53;

<sup>9</sup> Блауг М. Курно, Антуан Огюстен // 100 Великий экономистов до Кейнса — СПб.: Экономикс, 2008. — С. 152-154.

<sup>10</sup> Найт Ф. Риск, неопределенность, прибыль./ пер. с англ. — М.: Дело, 2003. — 360 с.;

<sup>11</sup> Качалина Л. Н. Конкурентоспособный менеджмент. М.: Эксмо, 2006. — 464 с.

մավարությունը, որն ուղղված է մրցակցային առավելությունների ձեռք բերմանը<sup>12</sup>: Վերջինս էլ հանդիսանում է շուկայում տնտեսավարող սուբյեկտի վարքագծի հաջողության հիմքը: Մրցակցության պայմաններում տնտեսավարող սուբյեկտի վարքագծի հնարավոր հետևանքները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ: Մրցակցային վարքագծի դրսևորման պարագայում տնտեսավարող սուբյեկտը ձեռք է բերում մրցակցային առավելություններ, որոնք, ի վերջո, կարող են հանգեցնել կամ նրա մրցունակության բարձրացմանը, կամ մենաշնորհի ձևավորմանը: Մինչդեռ, ոչ մրցակցային վարքագծի հնարավոր հետևանքը տվյալ սուբյեկտի սնանկացումն է: Այլ կերպ ասած, շուկայում մրցակցության առկայությունը տնտեսավարող սուբյեկտին դրդում է մրցակցային առավելությունների ձեռք բերմանը, որոնք շահեկանորեն տվյալ ընկերությանը (կամ նրա կողմից թողարկվող արտադրանքը) առանձնացնում են շուկայում գործող համանման այլ ընկերություններից (արտադրանքից): Նման հատկանիշների առկայությունը հնարավորություն է տալիս ընկերությանը մրցակցել շուկայում այլ համանման սուբյեկտների հետ և լինել մրցունակ, որն, ի վերջո, կարող է վերջինիս մոտ առաջացնել տվյալ ճյուղում մենաշնորհ դառնալու հակումներ: Մինչդեռ, շուկայական պահանջների չափապատասխան սուբյեկտները, որպես կանոն, սնանկանում են:

Ամփոփելով, պետք է նշել, որ մրցակցության վերաբերյալ գոյություն ունեցող տեսակետները և գաղափարները տվյալ տնտեսագիտական կատեգորիան բնութարարում են տարբեր ասպեկտներից, ինչը վկայում է վերջինիս բազմաբովանդակության մասին:

---

<sup>12</sup> Թ.Ն.Մանասերյան, ՀՀ Տնտեսական զարգացման առանձնահատկությունները և հեռանկարները, "Հայկական բանակ", 2016, #3, էջ 37-53:

## **Արտակ ՇԱԲՈՅԱՆ**

### **Տնտեսական մրցակցության էությունը և տեսական հիմքերը**

*Բանալի բառեր. տնտեսական մրցակցություն, մրցակցային առավելություններ, մրցակցային ռազմավարություն, մրցակցային վարքագիծ*

Հոդվածը նվիրված է մրցակցության տեսական հիմքերի և սոցիալ-տնտեսական բովանդակության ուսումնասիրությանը: Քննարկվել են տնտեսական մրցակցության էության ուսումնասիրության հիմնական մոտեցումները և դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Գնահատվել է մրցակցության ազդեցությունը շուկայում գործող սուբյեկտների վրա և ներկայացվել է նրանց հնարավոր վարքագիծը: Քննարկվել են տնտեսավարող սուբյեկտների մրցակցային և ոչ մրցակցային վարքագծերի դրսևորումները և դրանց հնարավոր հետևանքները:

## **Артак ШАБОЯН**

### **Сущность и теоретические основы экономической конкуренции**

*Ключевые слова: экономическая конкуренция, конкурентные преимущества, конкурентная стратегия, конкурентное поведение*

Статья посвящена изучению теоретических основ и социально-экономического содержания конкуренции. Обсуждены основные подходы по изучению сущности экономической конкуренции и особенности каждого из них. Оценено влияние конкуренции на действующих на рынке субъектов и представлено их возможное поведение. Обсуждены проявления конкурентного и не конкурентного поведения хозяйствующих субъектов и их возможные последствия.

## **Artak SHABOYAN**

### **The essence and theoretical bases of economic competition**

*Key words: economic competition, competitive advantage, competitive strategy, competitive behavior*

The article is devoted to the analysis of the theoretical bases and socio-economic content of the competition. The main approaches for the analysis of the nature of economic competition and the features of each of them are discussed in the article. The impact of competition on existing market subjects is estimated and their possible behavior is presented. Manifestations of competitive and non-competitive behavior of economic subjects and their possible consequences are discussed in the article.

**ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՆԵՐՊՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՏԵՍԱ-  
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**

**Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Բանալի բառեր. այլընտրանքային ներդրումներ, բաժնետոմսեր, ֆյուչերսներ, տնտեսություն, անշարժ գույք, դիվերսիֆիկացիա

Այլընտրանքային ներդրումների ակտիվների մեծամասնությունը հիմնը-ված են ինստիտուցիոնալ ներդրողների կամ անհատների կողմից<sup>13</sup>: Դրանք ներառում են մասնավոր կապիտալ, անշարժ գույք, ֆյուչերսներ, ածանցյալ պայմանագրեր: Շատ այլընտրանքային ներդրումներ ունեն նվազագույն միջոցներ և վճարային համակարգ համեմատած փոխադարձ ֆոնդերի և փոխանակվող ֆոնդերի<sup>14</sup>: Նաև կա պակաս հնարավորություն հրապարակելու հավաստի տվյալներ գովազդելու պոտենցիալ ներդրողներին: Այլընտրանքային ակտիվների մեծամասնությունն ունեն ցածր իրացվելիություն համեմատած սովորական ակտիվների: Օրինակ, ներդրողները ամենայն հավանականությամբ 80 տարեկան գինին վաճառելն ավելի դժվար կհամարեն քան 1000 Apple -ի բաժնետոմս, քանի որ գինու գնորդները սահմանափակ են:

Մյուս կողմից, այլընտրանքային ներդրումներն ունեն ավելի ցածր կորելյացիա որն իրենց դարձնում է ավելի հարմար պորտֆելի դիվերսիֆիկացման համար: Դրա պատճառով շատ խոշոր ինստիտուցիոնալ ֆոնդեր, ինչպիսիք են կենսաթոշակայինները եւ մասնավոր նվիրատվությունները, իրենց պորտֆելների մի փոքր մասը, սովորաբար, 10%-ից քիչ, ներդնում են հեջ ֆոնդերում: Չնայած այլընտրանքային ակտիվները կարող են ունենալ բարձր նախնական կանխավճարային ներդրումային վճարներ, գործարքի ծախսերը սովորաբար ցածր են պայմանական ակտիվների համեմատ՝ շրջանառության ցածր մակարդակի պատճառով: Երկար ժամանակահատվածում այլընտրանքային ներդրումները կարող են հանգեցնել հարկային արտոնությունների, քանի որ 12 ամսից ավելի երկարաժամկետ ներդրումները ենթակա են ավելի ցածր ներդրումային հարկի՝ ավելի կարճաժամկետ ներդրումների համեմատ: Չնայած մանրաձախ ներդրողների մեծամասնությունը կարող է այլընտրանք-

<sup>13</sup> <http://www.globfin.ru>

<sup>14</sup> <http://mir-investicyj.ru>

քային ներդրման հնարավորությունները սահմանափակ գնահատել, անշարժ գույքն ու թանկարժեք մետաղներն իրականում լայն տարածում ունեն:

Այնընտրանքային ներդրումների գնահատման արդյունավետ համակարգի համար համաշխարհային պրակտիկայում գոյություն ունեն տարբեր մոդելներ, սակայն դեռևս չկա որևէ մեկը, որը կարող է որակվել որպես միակը կամ «ճշմարիտը»: Որոշ երկրների փորձը, որպես առավել արդյունավետ, ուսանելի և ուղեցուցային է դարձել այլոց համար: Որոշներն էլ փորձել են ձևավորել միանգամայն ուրույն մոդելներ: Ասել է թե՛ յուրաքանչյուրը որդեգրում է այնպիսի մոդել, որը առավելագույնս կհամապատասխանի կառավարման իր համակարգին, կրթի ներդրումային քաղաքականության առաջնահերթություններից: Հետևաբար, հանրային ներդրումների գնահատման արդյունավետ համակարգ ձևավորելու նպատակով կարևոր է ուսումնասիրել առկա միջազգային լավագույն փորձը: Այս նպատակով այլ երկրների շարքում հատկապես դիտարկվել է Չիլիի, Միացյալ Թագավորության և Իռլանդիայի փորձը, որոնք ճանաչված են որպես կապիտալ ներդրումների գնահատման հաջողված համակարգեր ունեցող երկրներ: Նշված երկրները, որոնք արդյունավետ համակարգի ներդրման շնորհիվ հասել են ներդրումների արդյունավետության բարձր մակարդակի, չնայած համակարգային որոշ տարբերությունների, այնուամենայնիվ ունեն որոշ ընդհանրություններ: Մասնավորապես, միջազգային փորձի համեմատական վերլուծությունն ըստ համակարգային հենակետերի՝ ռազմավարական պլանավորում, համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածք, գնահատման մեթոդաբանական հիմքեր:

Հիմնականում նշված բոլոր երկրներին էլ հատուկ է պլանավորման և հանրային ռեսուրսների տեղաբաշխման ռազմավարական փաստաթղթերի առկայությունը: Զարգացման առաջնահերթություններն ամրագրվում են ինչպես երկարաժամկետ, այնպես էլ կարճաժամկետ հատվածի համար: Այսպես, Իռլանդիան (ի տարբերություն ԵՄ մյուս երկրների) աչքի է ընկնում իր արդյունավետ պլանավորման համակարգով: Իռլանդիայի կապիտալ բյուջետավորման համակարգի բարեփոխումները հիմնված են ԵՄ-ի համախմբված և կառուցվածքային ֆոնդերի ծրագրային փաստաթղթերի վրա: Համապարփակ ազգային ռազմավարական փաստաթղթերը ուղղորդում են պետական ներդրումային որոշումների ընդունումը: Իռլանդիան քաջ հայտնի է վերլուծական աշխատանքներով, որոնց արդյունքում ամրագրվում են երկրի երկա-



րաժամնետ ներդրումային գերակայությունները: Այստեղ բյուջետային գործընթացը մշակվում է այնպես, որ ապահովվի բազմամյա նախագծերի՝ ներառյալ ենթակառուցվածքային ներդրումների ֆինանսավորման կանխատեսելիությունը: Ֆիսկալ քաղաքականության շրջանակներում կառավարությունը նախարարություններին ապահովում է բազմամյա ծախսերի փաթեթներով: Ֆինանսների նախարարությունը ոլորտային նախարարություններին ապահովում է հնգամյա կապիտալ փաթեթով և ռեսուրսների տասնամյա պլանավորմամբ: Բազմամյա ծախսերի նման համակարգը կայունություն է ապահովում նախարարություններին և հնարավորություն տալիս պլանավորել երկարաժամկետ ներդրումային ռազմավարությունները: Սա միաժամանակ թույլ է տալիս չծախսված միջոցները օգտագործել հաջորդ տարում:

Միացյալ Թագավորությունում բյուջետային գործընթացները այնպես են ծրագրավորված, որ կանխատեսումներ են պարունակում երկարաժամկետ հատվածում պահանջվելիք ներդրումների (այդ թվում՝ ենթակառուցվածքների) համար: Դրա շրջանակներում կառավարությունը պահանջում է, որպեսզի նախարարությունները միջնաժամկետ հատվածի համար պլանավորեն իրենց ծախսային քաղաքականությունը: Ռազմավարական զեկույցը առաջիկա 3 տարիների համար սահմանում է կառավարության առաջնահերթություններին համապատասխան ծախսային քաղաքականությունը: Այն առաջիկա 3 տարվա կտրվածքով նախանշում է յուրաքանչյուր գերատեսչության ծրագրերը և Կառավարության պետական ծախսային ռազմավարությունը:

Հարավկորեական համակարգը, մինչև ծրագրերի մանրամասն նախագրծման աշխատանքների սկիզբը, մեծապես կարևորում է ծրագրային հայեցակարգերի նախնական գնահատման իրականացումը: Օրենքով այս գործընթացի իրականացման իրավասությունը դրվում է Պլանավորման և բյուջետավորման նախարարության վրա և ծրագրերի նախնական գնահատման գործընթացները կիրառվում են թե՛ պետական և թե՛ պետական սուբսիդավորմամբ համայնքային ծրագրերի նկատմամբ:

Ի տարբերություն Իռլանդիայի և Միացյալ Թագավորության, որտեղ համակարգը կառավարվում է ֆինանսների նախարարության կողմից Չիլիում այն համակարգվում է համատեղ՝ ֆինանսների և պլանավորման նախարարությունների կողմից: Միևնույն ժամանակ ներդրումային ծրագրի ըն-

տըրությունը պատվիրակվում է ոլորտային գերատեսչություններին՝ բյուջեով նախատեսված առավելագույն սահմանաչափերին համապատասխան: Ինչպես և ընդհանուր համակարգի դեպքում, այդպես էլ հանրային ներդրումների արդյունավետ կառավարման առանցքային գործառույթների իրականացման համար գոյություն ունեն տարաբնույթ իստիտուցիոնալ կառույցներ, և դարձյալ չկա դրա միակ «ճիշտ» մոդելը:

Սկանդինավյան երկրներում ներկայումս գործող մոդելը, որտեղ կենտրոնական կառավարության կազմում «Պետական ներդրումային գործակալություն» է գործում, որոշ փորձագետների կողմից առաջարկվում է անցումային շրջանում գտնվող երկրների համար: Ֆինանսների նախարարության հետ սերտորեն կապված նման գործակալությունը պատասխանատու է ծրագրերի և մեթոդական ուղեցույցերի մշակման համար, ինչպես նաև ծրագրային առաջարկների քննարկման և որակի ապահովման համար:

Բելառուսում անկախ գործող պետական գնահատման գործակալությունը մոտ է իր բնույթով այս մոդելին: Գործակալությունը ստեծվել է վերջին տարիներին և դրա նպատակը կապիտալ ծրագրերի առաջարկների առավել անկախ գնահատումն է: Կապիտալ շինարարության բոլոր ծրագրերը, որոնք իրականացվում են առանձին կազմակերպությունների կամ պետական հիմնարկների կողմից, պարտադիր կերպով պետք է վերանայվեն և գնահատվեն գործակալության կողմից:

Չիլիում պետական ներդրումների իրականացման գործընթացի համար պատասխանատու են միաժամանակ Պլանավորման նախարարությունը և Ֆինանսների նախարարությունը: Ծրագրերն առաջարկվում են՝ ոլորտային նախարարությունների, դրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների, տարածաշրջանային և համայնքային (տեղական) կառավարման մարմինների կողմից: Այս կազմակերպությունները ձևակերպում և գնահատում են ծրագրերն ըստ Պլանավորման նախարարության կողմից ներկայացվող մեթոդաբանության և ընթացակարգերի: Ներդրումային գործընթացը կառավարվում է Ներդրումային ազգային համակարգի (ՆԱՀ) կողմից, ինչը ամրագրված է օրենքով: Պլանավորման նախարարությունը ՆԱՀ աշխատանքի միակ կարգավորող մարմինն է: Պլանավորման նախարարությունը ծրագրեր չի մշակում. այն միայն վերանայում և վերահսկում է ծրագրերը:

գրերի գնահատման գործընթացը, ապահովելով բոլոր ծրագրերի համապատասխանությունը ՆԱՀ կանոններին: Այն միակ կազմակերպությունն է, որը վերջնական հավանություն է տալիս ներդրումային նախաձեռնությունը, դրանով իսկ հնարավորություն տալով այդ նախաձեռնությանը հետագա ընթացք ստանալ և արտացոլվել բյուջեում: Պլանավորման նախարարությունը ներգրավված է միայն ծրագրային ցիկլից մինչ իրականացումն ընկած հատվածում, այսինքն՝ մինչև բյուջետային ֆինանսավորման հայտ ներկայացնելու պահը: Պլանավորման նախարարությունը վերահսկում է այն համակարգը, որն ապահովում է որակյալ ծրագրերի «զամբյուղի» առկայությունը, որոնք արդեն իսկ պատրաստ են հետագա ընթացք ստանալ բյուջեից ֆինանսավորման միջոցով: Ընդ որում, ոչ բոլոր ծրագրերը կներկայացվեն ֆինանսավորման այս կամ այն կոնկրետ տարվա ընթացքում, քանի որ առկա է միջոցների սահմանափակության գործոնը: Ֆինանսների նախարարությունն, իր հերթին, պատասխանատու է բյուջետավորման, ռեսուրսների տեղաբաշխման, ժամանակացույցի կազմման և ծրագրի ընթացքի միջանկյալ թիրախների սահմանման և մոնիտորինգի համար: Ուստի առկա է հստակ տարանջատում Պլանավորման և Ֆինանսների կառույցների դերերի միջև:

Քանի որ ֆոնդային շուկան չափազանց անկայուն է, շատ ներդրողներ փնտրում են իրենց միջոցները հուսալի և անվտանգ ներդրնելու սցենարներ:<sup>15</sup> Այսպիսով, այլընտրանքային ներդրումները դառնում են ավելի ճանաչված: Դրանք կարող են իրականացվել բաժնետոմսերի, պարտատոմսերի և կանխիկ դրամի տեսքով: Մեր համոզմամբ, այլընտրանքային ներդրումները լավագույնն են, երբ օգտագործվում են դիվերսիֆիկացված ֆինանսական պորտֆելներով. որոշ մասը բաժնետոմսերում, մի մասը՝ պարտատոմսերում, և մյուս մասն էլ հեջ ֆոնդերում կամ նույնիսկ կերպարվեստում և գինիներում<sup>16</sup>: Ներկայումս ընձեռված հնարավորությունների ուսումնասիրությունը վկայում է, որ կարելի առանձնացնել այլընտրանքային ներդրումների առավել ապահով և անվտանգ տեսակներ, որոնք դարձնում են տվյալ ոլորտներն ավելի գրավիչ, քան ավելի մեծ ռիսկ պարունակող գործիքները և ոլորտները:

<sup>15</sup> Альтернативные инвестиции – неотъемлемая часть портфеля ценных бумаг <http://bankir.ru/publikacii/20130916/alternativnye-investitsii-neotemlemaya-chast-portfelya-tsennykh-bumag-10003933/>

<sup>16</sup> 10 Reasonably Safe Alternative Investments <http://money.howstuffworks.com/personal-finance/financial-planning/10-reasonably-safe-alternative-investments.htm>

## **Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

### **Այլընտրանքային ներդրումների ներգրավման տեսա-գործնական խնդիրներ**

Բանալի բառեր. այլընտրանքային ներդրումներ, բաժնետոմսեր, ֆյուչերսներ, տնտեսություն, անշարժ գույք, դիվերսիֆիկացիա

Հոդվածում ներկայացված են այլընտրանքային ներդրումների էությունը, ինստիտուցիոնալ հիմքերը և տարբեր երկրների ուսանելի փորձը: Դրանք ներառում են մասնավոր կապիտալ, անշարժ գույք, ֆյուչերսներ, ածանցյալ պայմանագրեր: Շատ այլընտրանքային ներդրումներ ունեն նվազագույն միջոցներ և վճարային համակարգ համեմատած փոխադարձ ֆոնդերի և փոխանակվող ֆոնդերի: Նաև կա պակաս հնարավորություն՝ հրապարակելու հավաստի տվյալներ գովազդելու պոտենցիալ ներդրողներին: Այլընտրանքային ակտիվների մեծամասնությունն ունեն ցածր իրացվելիություն համեմատած սովորական ակտիվների:

#### **Татул МАНАСЕРЯН**

#### **Теоретические и прикладные вопросы привлечения альтернативных инвестиций**

*Ключевые слова: альтернативные инвестиции, акции, фьючерсы, экономика, недвижимость, диверсификация*

В этой статье рассмотрены сущность, институциональные основы и пучительный опыт привлечения альтернативных инвестиций. Они включают в себя частный капитал, недвижимость, фьючерсы и разные контракты. Многие альтернативные инвестиции имеют минимальные средства и другую систему платежа в отличие от совместных и обменных фондов. Также, имеется меньше возможностей для публикации достоверных данных по рекламе потенциальных инвесторов. Большинство активов альтернативных инвестиций имеют низкую ликвидность по сравнению с обычными активами.

#### **Tatul MANASERYAN**

#### **Theoretical and practical aspects of attracting alternative investments**

*Key words: alternative investments, shares, futures, economy, real estate, diversification*

Issues related to the institutional foundations, trends and international experience of attracting alternative investments are discussed in this article. These investments include private capital, real estate, futures, shares and various derivatives. Many alternative investments are limited in resources and use different system of payments compared to exchange funds or hedge funds. Also, there are less opportunities to publish reliable data on prospective investors. Majority of alternative investments are less liquid compared to the regular investments.

**ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ**

**Վարդան ԲՈՍԱՆՁՅԱՆ**  
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Սեդրակ ԹՈՓԼԱՂԱԼՅԱՆ**  
ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի հայրորդ

Բանալի բառեր. ներդրումներ, ներդրումային քաղաքականություն, տնտեսական քաղաքականություն, տնտեսություն, հարկային քաղաքականություն

Ներդրումային արդյունավետ քաղաքականության լավագույն ապացույցը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակն է, տնտեսական իրական աճի կայուն միտումը, որն ի վերջո հանգեցնում է բնակչության կենսամակարդակի աճի և բարեկեցության, ինչը պետության և ողջ հասարակության գերխնդիրն է:<sup>17</sup> Հայաստանի Հանրապետության համար, մեր կարծիքով, կարող է ուշագրավ ներկայանալ ներդրումային քաղաքականության մշակման իրականացման այլ երկրների՝ մասնավորապես եվրասիական տնտեսական միության անդամ որոշ պետությունների փորձը:

1990-ական թվականներից Ռուսաստանի Դաշնության տնտեսությունը զգալի փոփոխություններ է կրել, որոնք պայմանավորված են տարատեսակ, այդ թվում՝ քաղաքական պատճառներով: Տնտեսության մեջ էական բեկումնային ժամանակաշրջաններից մեկը 1998թ. տնտեսական ճգնաժամն էր, որը պայմանավորված էր պլանային տնտեսությունից շուկայականին անցնելու բարդություններով: ԱՊՀ բոլոր երկրներում պլանային վարչահրամայական տնտեսարգից ազատ շուկայականին անցումային շրջանը բնորոշվեց սոցիալ-տնտեսական խորը ցնցումներով: Ստեղծված քառսային իրավիճակում ռուսական ներդրողները հսկայական կորուստներ էին կրում, ինչը վկայում էր, որ ներդրումային միջավայրն անբարենպաստ էր, իսկ Ռուսաստանի նման բնական հարուստ ռեսուրսներ և հսկայական տարածք ունեցող երկրի համար ներդրումային միջավայրի բարելավման մեծ ջանքեր կպահանջվեին: Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում պետության կողմից խիստ վերահսկողություն սահմանել տրամադրված միջոցների նպատակային օգտագործումն ապահովելու նպատակով, մասնավորապես կատարված աշխատանքների ծավալների և արժեքի ստուգումներ՝ պատժամիջոցների կիրառմամբ՝ միջոցների ոչ նպատակային օգտագործման դեպքում:

Վերջին տարիներին պետության ակտիվ մասնակցությամբ ներդրումների խթանման ուղղությամբ կարևոր քայլ էր արժեթղթերի շուկայի զարգացումը, որն իրավական հիմքեր է ստեղծում տնտեսության առավել ար-

<sup>17</sup> В.Е. Черкасов, Международные инвестиции, М.: Дело, 2003

դյունավետ ճյուղեր կապիտալի հոսքի համար, որոնք իրենց արդյունավետությունն արդեն իսկ ապացուցել են և լրացուցիչ ներդրումների կարիք են զգում հետագա ընդլայնման համար:

Բելառուսում ներդրումային գործունեության կարգավորման հիմքում ընկած է Բելառուսի Հանրապետության Ներդրումային օրենսգիրքը՝ ընդունված 2001թ.: Այն սահմանում է ներդրումային գործունեության կարգավորման ընդհանուր պայմաններ և ուղղված է պետության կողմից դրա խթանմանը, ինչպես նաև ներդրողների իրավունքների պաշտպանությանը: Ներդրումային գործունեությունը, համաձայն ԲՀ օրենսդրության, ֆիզիկական և իրավաբանական անձանց կամ պետության (պետական վարչատարածքային միավորի) կողմից ապրանքների կամ ծառայությունների արտադրության մեջ ֆինանսական, գույքային, մտավոր կամ այլ արժեք ներկայացնող միջոցի ներդրումն է եկամտի կամ շոշափելի այլ արդյունքի ստացման նպատակով: Պետական աջակցությունը վերաբերում է հարկային և մաքսային ոլորտում արտոնություններ սահմանելուն, կառավարության երաշխիքներին, կենտրոնացված ներդրումային ռեսուրսների տրամադրմանը: Օրենքը ներդրողին հնարավորություն է տալիս նաև հարկերի և տուրքերի վճարումից հետո մնացած եկամուտը ազատ փոխադրել ԲՀ սահմաններից դուրս: Վերջին իրավունքը վերաբերում է նաև ներդրողին պատկանող գույքի վաճառքից ստացված միջոցների փոխանցմանը: Իրավական ռիսկերի կրճատման երաշխավորը պետությունն է՝ իր վարած քաղաքականությամբ, որի հիմքում պետք է ընկած լինի օրենքների և իրավական այլ ակտերի ստորակարգության սկզբունքը, իրավական ակտերի հետադարձ ուժի կիրառումից հրաժարվելը, դատական համակարգում իրականացվող որոշումների իրավացիությանը հետևելը, որոնք էլ իրենց հերթին, օտարերկրյա ներդրողի համար իրավական ռիսկերի նվազեցման ուղղությամբ կարևոր նախապայմաններ կստեղծեն:

Ռազմավարական նշանակություն ունեցող օտարերկրյա ներդրումների ներգրավման ուղղությամբ սահմանվել է երաշխիքների որոշակի համակարգ, այդ թվում՝ օտարերկրյա կազմակերպությունների կողմից երկրի տարածքում արտադրության կազմակերպման նպատակով ներմուծվող մեքենասարքավորումների մաքսատուրքից ազատումը: Ստեղծվել և գործում են 4 ազատ տնտեսական գոտիներ, նախապատրաստական փուլում են ևս 2-ը:

Տնտեսության զարգացման հիմնական խոչընդոտներից է երկրի նեղ շուկան, որի արդյունքում ձեռնարկությունները չեն կարողանում բավարար միջոցներ կուտակել՝ արտադրության նորացման և վերազինման նպատակով: Նման իրավիճակում ձեռնարկությունները նպատակաուղղվում են թե՛ ապրանքների և թե՛ կապիտալի արտաքին շուկաներ, ընդ որում

առաջնային է կապիտալինը, քանի որ առանց ֆինանսական ռեսուրսների արտաքին աղբյուրների խիստ դժվար կլինի արտադրության որակական մակարդակի բարձրացումը:

Առևտրային բանկերի վարկերը շատ թանկ են ձեռնարկությունների համար, և երկրի ներսում եղած ազատ դրամական միջոցներն էլ արտահոսում են առավել արդյունավետ շուկայական տնտեսությամբ երկրներ, ուստի արտադրության զարգացման հիմնական հույսը մնում է օտարերկրյա կապիտալի ներգրավումը: Համախառն պահանջարկը ավելացնելու հիմնական միջոցը արտադրության աճն ու կատարելագործումն են, ինչը ոչ միայն կհանդիսանա որակյալ ապրանքների ու ծառայությունների առաջարկի խթան, այլև արտադրության միջոցներ արտադրողների համար սպառման շուկա:

Ի լրումն ասվածի, Բելառուսը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է, ուստի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական առումով չի կարող լիարժեք անկախ վարքագիծ ունենալ, ինչն էլ անպայման բացասական արձագանք է առաջացնում մասնավորապես Արևմուտքի երկրներում և անդրադառնում է նրանց կողմից ԲՀ նկատմամբ վարած տնտեսական քաղաքականության վրա: Ռուսաստանն էլ բազմաթիվ չլուծված խնդիրներ և հսկայածավալ ներդրումների կարիք ունի սեփական տնտեսության մեջ, ինչը առայժմ հնարավորություն չի տալիս տնտեսական լուրջ համագործակցություն և աջակցություն առաջարկել իր գործընկերոջը: Ղազախստանի Հանրապետությունում (ՂՀ) շուկայական տնտեսությանն անցման պայմաններում առաջնահերթ խնդիր է համարվում պետական ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղություններից է: ՂՀ-ում ևս ներքին ֆինանսական ռեսուրսների սահմանափակության խնդիր լուծման նպատակով պետության ներդրումային քաղաքականության մեջ առաջնային է դառնում օտարերկրյա ներդրումների ներգրավման հարցը, որի նպատակը օտար երկրների հետ տնտեսական փոխշահավետ համագործակցության ծավալման հեռանկարն է:<sup>18</sup>

Շուկայական հարաբերություններին անցման գործընթացին զուգահեռ, ստեղծվել է նաև ներդրումային ոլորտի օրենսդրական դաշտը: Ղազախստանի կառավարությունը, նախագահի նախաձեռնությամբ, 1998-ից հատուկ ռազմավարական ծրագիր է իրականացնում “ՂՀ ռազմավարական զարգացման ծրագիր 2030”<sup>19</sup> խորագրով, որում հատուկ տեղ է հատկացվում ներդրումային քաղաքականության ոլորտում նպատակների և ա-

<sup>18</sup> Иностранные инвестиции в РК, Алматы 2000

<sup>19</sup> Казахстан 2030. Процветание, безопасность и улучшение благосостояния всех казахстанцев.

ռաջնայնությունների սահմանմանը: Մասնավորապես, դիտարկվել են խընդիրներ՝ կապված երկրում ներդրումային միջավայրի բարելավման, օտարերկրյա ներդրումների արդյունավետ պաշտպանության մեխանիզմների մշակման, ֆոնդային շուկայի զարգացման տեմպերի արագացման, մանր ձեռնարկատիրության աջակցման հետ: ՂՅ-ում օտարերկրյա հիմնական ներդրողներն են ԱՄՆ-ը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Չարավային Կորեան, Ֆրանսիան և այլն: Օտարերկրյա ներդրումների ներգրավումը, ըստ տեղի փորձագետների և տնտեսագետների, կստեղծի Ղազախստանի արդյունաբերական ոլորտի բարելավման իրական պայմաններ, հնարավորություն կտա ստեղծել նոր, բարձր տեխնոլոգիական արտադրություններ, կբարձրացնի հիմնական միջոցների նորացման և տեխնիկական վերագինման մակարդակը և այլն: Մասնավորապես, խնդիր է դրվում արտասահմանից ներգրավված միջոցների հաշվին բարձրացնել արտահանման մակարդակը, փոխել դրա հումքային ուղղվածությունը, ամրապնդել ՂՅ դիրքերը արտաքին շուկաներում, զարգացնել ներմուծմանը փոխարինող արտադրությունները, նոր տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և արտադրանքի իրացման ժամանակակից մեթոդների կիրառմամբ բարձրացնել արդյունաբերության գիտատեխնիկական մակարդակը, ավելացնել բյուջեի հարկային մուտքերը, աջակցել առավել անբարենպաստ պայմաններում գտնվող տարածաշրջանների զարգացմանը, ստեղծել նոր աշխատատեղեր և այլն:

Օտարերկրյա ներդրումների իրականացման հիմնական ձևը համատեղ և օտարերկրյա ձեռնարկությունների ստեղծումն է: Օտարերկրյա ներդրողները կարող են գործունեություն ծավալել ՂՅ օրենքով թույլատրված ցանկացած բնագավառում: Անհատական ձեռնարկատիրության մասին 1997թ. ընդունված օրենքի համաձայն օտարերկրացիները կարող են հիմնել նաև փոքր ձեռնարկություններ, որոնց աշխատողների թիվը չի անցնում 50-ից: ՂՅ օրենսդրության համաձայն օտարերկրյա ներդրումները երաշխավորվում են նաև ազգայնացումից և առգրավումից, եթե դրա անհրաժեշտությունը չի բխում հասարակության շահերից, սակայն նույնիսկ այդ դեպքում անպայմանորեն և անհապաղ կարգով վճարվում է համարժեք և արդյունավետ փոխհատուցում:

Անցումային երկրներում ներդրումային քաղաքականությունը դիտարկելուց զատ, հետաքրքիր է նաև այն երկրների փորձը, որոնք անցել են ճգնաժամային պայմաններով և, շնորհիվ հետևողական քաղաքականության, բարձր արդյունքների են հասել ինչպես ներդրումների, այնպես էլ ամբողջ տնտեսության զարգացման բնագավառում: Ճապոնիան, Չարավային Կորեան, Թայվանը, արևմտաեվրոպական մի շարք երկրներ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հարաբերականորեն կարճ



Ժամանակահատվածում նորացրին իրենց արդյունաբերական համակարգը, որի գլխավոր նախապայմանը ՀՆԱ ծավալում ներդրումների բարձր տեսակարար կշիռն էր: Հարավարևելյան Ասիայի երկրները ներդրումային գործընթացը խթանելու նպատակով հետևյալ հիմնական լծակներն էին օգտագործում. պետական ներդրումներ (և ոչ միայն ենթակառուցվածքային ոլորտում), ներդրումների հարկային խթաններ, մեքենասարքավորումների գների ցածր մակարդակի ապահովում՝ դրանց ներմուծման համար մաքսատուրքի արտոնություններ սահմանելով, տոկոսադրույքի շուկայականից ցածր մակարդակ և այլն: Ինչպես նշում են Համաշխարհային բանկի մասնագետները, տնտեսության զարգացման որոշակի մակարդակից հետո միայն հնարավոր եղավ այս երկրներում ձևավորել ու զարգացնել արժեթղթերի շուկաները: Չնայած այսօր ֆինանսական շուկաների դերը այս երկրներում անհամեմատ մեծացել է, դրանց առավել դինամիկ զարգացման ժամանակաշրջանում այն էական նշանակություն չի ունեցել:

Դինամիկ զարգացող բազմաթիվ երկրներում ներդրումների ֆինանսավորման գործում էական է եղել պետական ֆինանսական ինստիտուտների դերը: Օրինակ Հարավային Կորեայի ֆինանսական շուկայում գերակշռում էին պետական ինստիտուտները, մինչդեռ մասնավոր հաստատություններն առաջ եկան միայն 1980-ականների առաջին կեսին ու մինչև 90-ականները դեռևս կայացման գործընթացում էին:

Հարավարևելյան Ասիայի ներդրումային գործընթացի պետական խթանման կարևոր լծակներից է նաև տոկոսադրույքի պետական կարգավորումը: Հարավային Կորեայում երկարաժամկետ վարկերը տրամադրվում էին կառավարության կողմից հատուկ ընտրված ձեռնարկություններին բացասական իրական տոկոսադրույքներով՝ այդ ոլորտներում զարգացումը խթանելու նպատակով: Համաշխարհային բանկի փորձագետների գնահատմամբ նշված երկրներում հարկային, սակագնային և արժույթային քաղաքականությունները ոչ միայն նպաստում էին ներդրող ձեռնարկությունների ներդրումային ռիսկերի նվազեցմանը և տոկոսադրույքի աճի որոշակի սահմանափակմանը, այլև վերահսկում էին կապիտալի և ցածր գներով ներդրումային ապրանքների ներմուծումը: 1986թ. Հարավային Կորեայում պետությունը 110 անուն ապրանքների գներ էր կարգավորում՝ ներառյալ գազինը, պողպատինը, դեղամիջոցներինը, ավտոմեքենաներինը, թղթինը, հեռուստացույցներինը և այլն: Թայվանում պետությունը կարգավորում էր ներմուծմանը փոխարինող ապրանքների գները՝ տեղական արտադրողներին խթանելով ծախսերի կրճատման հարցում: Այսպես, եթե 1960թ. տեղական արտադրության՝ ներմուծմանը փոխարինող ապրանքները թույլատրվում էր վաճառել միջազգային միջին գներից 25% բարձր, ապա 1964թ.՝ 15%, 1968թ.՝ 10%, 1973թ.՝ 5%:


ԱՄՆ-ում ներդրումային նախագծերի ֆինանսավորման համար լրացուցիչ աղբյուրների ձևավորման գործում մեծ դեր խաղացին ամորտիզացիայի իրականացման փոփոխությունները և ընկերությունների շահութահարկի զգալի նվազեցումը: 1980-ականներին ԱՄՆ-ում իրականացվող հարկային բարեփոխումների արդյունքում զգալի կրճատվեցին հիմնական ֆոնդերի ամորտիզացիայի ժամկետները: Երկար տարիներ առավել տարածված հարկային խթաններից էր ձեռնարկության կողմից արդյունաբերական շինարարության և սարքավորումների ձեռք բերման նպատակով կատարված ծախսերի որոշակի տոկոսի չափով շահութահարկի գումարի նվազեցումը: Հարկային նման արտոնություններ տարբեր տարիների կիրառվել է նաև զարգացած շուկայական տնտեսությամբ այլ երկրներում, մասնավորապես Էներգետիկ ճգնաժամի տարիներին, երբ արտոնություններ էին տրվում հատկապես այլընտրանքային Էներգիայի կիրառման հետ կապված կապիտալ ներդրումների խրախուսման նպատակով, ինչպես նաև Էներգախնայողական և շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված ներդրումներ իրականացնելիս:

Բացի վերը նշվածից, այդ երկրների տնտեսության վրա դրական զգալի ազդեցություն ունեցավ գիտատեխնիկական ոլորտում ներդրումների խթանումը: Օրինակ ԱՄՆ-ում և Ճապոնիայում շահութահարկի գումարը կարող է նվազեցվել գիտատեխնիկական ոլորտում կատարված ներդրումների 20%-ի չափով: ԱՄՆ-ում հատուկ հարկային խթաններ են կիրառվում ձեռնարկությունների և բուհերի համագործակցության սերտացման նպատակով: Ձեռնարկություններին իրավունք է վերապահվում շահութահարկը նվազեցնել համալսարանների հիմնարար գիտական հետազոտությունների ֆինանսավորմանն ուղղված գումարի 20%-ի չափով: Շահութահարկից նվազեցվում է նաև համալսարաններին և ոչ առևտրային գիտահետազոտական կազմակերպություններին տրամադրված գույքի ու սարքավորումների արժեքը: Դա հանգեցրել է բուհական համակարգում գիտահետազոտական խոշոր կենտրոնների զարգացմանը, գիտության ու արդյունաբերության սերտ համագործակցությանը:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, յուրաքանչյուր երկրի բնորոշ է որոշակի, միայն այդ երկրին հատուկ տնտեսական քաղաքականության տարբերակ, որն էլ բնորոշվում է տվյալ երկրում շուկայական հարաբերությունների զարգացման մակարդակով, տնտեսության մեջ պետության տեղով ու դերով, ժողովրդի պատմական և սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններով, ազգային մշակույթով և այլն: Նշվածն ընդհանրացնելով կարելի է նկատել, որ նախ, որպես կանոն, ուղիղ համեմատական կապ գոյություն ունի ներդրումների մակարդակի և ՀՆԱ աճի տեմպի միջև: Ընդ որում այս կապը երկկողմանի պատճառա-

հետևանքային բնույթ է կրում. ներդրումների աճը բերում է ՀՆԱ ծավալների մեծացման, հակառակը՝ ՀՆԱ ծավալի աճին զուգահեռ, սովորաբար դիտվում է նաև ներդրումների մակարդակի աճ:

Համաշխարհային տնտեսության խոցելիության, աշխարհաքաղաքական ռիսկերի և անկայուն քաղաքականության պայմաններում 2016թ. ընթացքում համաշխարհային օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը նվազել են շուրջ 2%-ով՝ հասնելով 1.75 տրիլիոն ԱՄՆ դոլլարի: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ համաշխարհային տնտեսությունում դեռևս չեն վերականգնվել ուղղակի ներդրումների նախաճգնաժամային ծավալները, ինչը նշանակում է, որ համաշխարհային տնտեսությունը դեռևս գտնվում է հետճգնաժամային վերականգման փուլում: Համաշխարհային օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը ավելի շատ անկում են ապրել զարգացող երկրներում, որը կազմում է ավելի քան 14%: Ըստ փորձագիտական կանխատեսումների համաշխարհային օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները 2017-2018թթ. ընթացքում շարունակելու են աճել՝ ձգտելով հասնել 2007 թվականին գրանցված պիկին: Ստորև ներկայացված է համաշխարհային օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերի դինամիկան 2007-2016թթ. ընթացքում<sup>20</sup>:




**Գծապատկեր 1.** Համաշխարհային օտարերկրյա ուղղակի ներդրումների հոսքերը 2007-2016 թթ.

Փորձագիտական կանխատեսումները ցույց են տալիս, որ համաշխարհային ՀՆԱ-ի և առևտրի եական աճ առաջիկա տարիներին չի սպաս-

<sup>20</sup> www.unctad.org

վում: Այդուհանդերձ, մի շարք տնտեսություններում աճի ցածր մակարդակն ու անկանխատեսելի հեռանկարները, ինչպես նաև ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի՝ տնտեսության ֆինանսական խթանման ծրագրի կրճատումը հնարավոր է նվազեցնեն գլոբալ տնտեսության վերականգնման տեմպերը: Առանձնացնենք ՕՈՒՆ ամենամեծ հոսքեր ապահոված երկրների տասնյակը, որտեղ ԱՄՆ-ը 391 միլիարդ դոլար ՕՈՒՆ հոսքերով 2016թ. առաջատար է /գծապատկեր 2/, իսկ Միացյալ Թագավորությունը և Չինաստանը՝ երկրորդ և երրորդ հորիզոնականները:



**Գծապատկեր 2.** Օտարերկրյա ուղղակի ներդրումների ամենամեծ հոսքեր ապահովված երկրների տասնյակը /մլրդ ԱՄՆ դոլար/<sup>21</sup>

Նախկին ԽՍՀՄ բոլոր երկրներում ինչպես ներդրումների, այնպես էլ ՀՆԱ ծավալների աճը անբավարար մակարդակ ունի: Ներդրումների ցածր մակարդակը հանգեցնում է արտադրությունում ներդրումների “քաղցի” ինչի հետևանքով էլ ընկնում է արտադրության ծավալային և որակական մակարդակը: Մյուս օրինաչափությունը պետական քաղաքականության ուղղվածությունն է դեպի ներդրումների արտաքին աղբյուրներ: Սակայն ՕՈՒՆ ներգրավմամբ ևս այս երկրներում բավարարվելը դժվար է, և բացի այդ դրանք որոշակի բևեռացված են, որն էլ արտահայտվում է բնական ռեսուրսների և սպասարկման ոլորտներ դրանց ուղղվածությամբ: ԱՊՀ երկրներում ընդհանրություններ կան նաև տնտեսության պետական կառավարման ոլորտում: Հետխորհրդային ժամանակաշրջանում սկսվեց պետական կենտրոնացված կառավարման համակարգի վերափոխում:

<sup>21</sup>Trends and Policies Monitors - [www.unctad.org](http://www.unctad.org)

Սակայն այս պարագայում ևս բազմաթիվ խոչընդոտներ են առաջանում՝ կապված կառավարման օղակների բազմազանության, դրանց գործողությունների համաձայնեցման ցածր մակարդակի, վերահսկողության կորուստի և այլ հանգամանքների հետ:

Հաջորդ ընդհանրությունը, որը կարելի է բնորոշ համարել անցումային տնտեսությամբ երկրներին, օրենսդրական անկայուն դաշտի առկայությունն է: Օրենսդրական հարափոփոխ գործընթացը անորոշության և տարակուսանքի մթնոլորտ է ստեղծում ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղի ներդրողների, հասարակության լայն շրջանում, որն էլ ոչ միայն բացասական է ազդում արտաքին աղբյուրներից ներդրումների հնարավոր ներգրավման վրա, այլև նպաստում է ներքին ֆինանսական միջոցների արտահոսքին: Ի վերջո առավել կարևոր են օրենսդրական դաշտի կայունությունը և դրա պահանջների արդյունավետ իրագործումը:

Այդ երկրներում դիտվում է նաև ֆինանսական շուկաների զարգացման ցածր մակարդակ, ինչը թերևս բնական կարելի է նշել, քանի որ ֆինանսական շուկան ներդրումային ձևավորված դաշտի, տնտեսության զարգացածության որոշակի մակարդակի առկայություն է պահանջում: Կարելի է ասել, որ ֆինանսական շուկայի ձևավորումը ներդրումային գործընթացի կազմակերպման առավել զարգացած ձևն է, ուստի այն կարող է արդյունավետ լինել միայն համապատասխան օրենսդրական դաշտի և տնտեսական պայմանների առկայության դեպքում:

Թույլ են զարգացած նաև մյուս ենթակառուցվածքային ոլորտները, ինչպես բանկային համակարգը, ներդրումային գործակալությունները, ապահովագրական ոլորտը, արդյունավետ չեն կիրառվում լիզինգի, ֆրենչայզինգի հնարավորությունները և այլն: Նշված խոչընդոտներից բացի ներդրումային միջավայրի գործոնների թվում առաջնային տեղ է զբաղեցնում քաղաքական և ռազմաքաղաքական դաշտի կայունությունը, որի անկայունությունը բերում է միջազգային ասպարեզում պետության վարկանիշի անկման, ինչը բացասաբար է ազդում տնտեսության և ներդրումային գործընթացի զարգացման տեմպերի վրա:

Վերը նշված խնդիրները փոխկապակցված են միմյանց հետ և դրանց իրագործումը հնարավորություն կտա ոչ միայն ավելացնել ներդրումների ծավալները, այլև բարձրացնել վերջիններիս արդյունավետությունը, որը կարևոր նախապայման է ցանկացած երկրի զարգացման համար:

**Վարդան ԲՈՍՏԱՆԶՅԱՆ, Սեդրակ ԹՈՓԼԱԴԱԼՅԱՆ  
Ներդրումային քաղաքականության միջազգային փորձը**

*Բանալի բառեր. ներդրումներ, ներդրումային քաղաքականություն, տնտեսական քաղաքականություն, տնտեսություն, հարկային քաղաքականություն*

Չողվածը նվիրված է զարգացող և զարգացած երկրներում մշակվող և իրականացվող ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունների և առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Ներկայացվել են ԵԱՏՄ երկրներում ներդրումային գործունեությունը կարգավորող օրենսդրական և ինստիտուցիոնալ մեխանիզմները և դրանց հիմնական բնութագիրը: Քննարկվել են զարգացած երկրներում ներդրումների խթանման հիմնական գործիքները և մեխանիզմները:

**Вардан БОСТАНДЖЯН, Седрак ТОПЛАГАЛЦЯН**

**Международный опыт инвестиционной политики**

*Ключевые слова: инвестиции, инвестиционная политика, экономическая политика, экономика, налоговая политика*

Статья посвящена изучению основных путей и особенностей инвестиционной политики, разрабатываемой в развивающихся и развитых странах. Представлены регулирующие инвестиционную деятельность в странах ЕАЭС законодательные и институциональные механизмы, а также их основные характеристики. Рассмотрены основные инструменты и механизмы, стимулирующие инвестиции в развитых странах.

**Vardan BOSTANJYAN, Sedrak TOPLAGHALTSYAN**

**Foreign experience of investment policies**

*Key words: investments, investment policy, economic policy, economy, tax policy*

The article concentrates on the study of the directions and peculiarities of investment policy, processed and implemented in the developing and developed countries. Legislative and institutional mechanisms and their primary characteristics regulating the investment policy in the countries of EEU were presented. The principal instruments and mechanisms of promotion of investments in the developed countries.

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ԿԱՂԱՍՏՈՒ ՀԻՄՆԱԴԱՐՑԵՐԻ  
ԿԱՐԳԱԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄՈՂԵԼՆԵՐԸ**

**Ռուբեն ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀՊՏՀ Բնօգտագործման ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր, ժառանգության իրավունք, հողային կադաստր, եկամտաբեր տնտեսություն, սեփականատեր, սահմանափակումներ

Ժառանգությունը կամ ժառանգականությունը հողի սեփականատերերի փոխման ձևերից մեկն է, և որպես այդպիսին հողի շուկայի տարրերից մեկը: Ժառանգության իրավաբանական ընթացակարգն արդեն մի քանի հազարամյակ գոյություն ունի, այն ամենատարածված իրավական ակտերից մեկն է, որի պատճառով էլ վերջինիս սկզբունքների վրա իրենց հետքն են թողել նաև առանձին երկրների ավանդույթները, իրավական դպրոցները, տնտեսական նպատակահարմարությունը, սովորույթները և զգալիորեն նաև պետական քաղաքականությունը: Ընդ որում, այդ սկզբունքներն ինքնին փոփոխությունների են ենթարկվում այսօրվա իրականությանը համապատասխանելու համար<sup>22</sup>: Ընդհանուր առմամբ չկա միասնական տեսական իրավաբանական հիմք ժառանգության ինստիտուտի համար, ամբողջական իրավաբանական, տնտեսական և վարչական պրակտիկա, իսկ ժառանգության համակարգը կարելի է բաժանել մի քանի խմբերի՝ կախված այս կամ այն իրավաբանական համակարգից ծագած լինելու հանգամանքի հետ: Նրանք տարբեր տեսական և պատմական հիմքեր ունեն, տարբեր գործնական կիրառություն և միևնույն ժամանակ կրում են պետական քաղաքականության ազդեցությունը, որը հիմնականում ուղղված է դեպի հողատարածքների սեզմենտավորման դեմ պայքարը, գյուղատնտեսական արտադրության կենտրոնացման նպաստումը և կենսունակ տնտեսություններին աջակցությունը: Կարելի է որոշակի եզրահանգման գալ նաև այն մասին, որ և իրավաբանական տեսությունները և իրավական պրակտիկան պետության կողմից լուրջ ազդեցության են ենթարկվում, որը նախ և առաջ դեպի ինչ-որ կոնկրետ տնտեսական նպատակների է ուղղորդված: Ընդհանուր առմամբ ժառանգության իրավունքի իրավաբանական սկզբունքները և համակարգերը ընդհանուր քաղաքացիական իրավունքի շրջանակներում կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի:

1. Այպես կոչված «Գերմանական քաղաքացիական իրավունք ունեցող երկրների» խումբ, որոնք ուղղորդված են դեպի գերմանական քաղաքացիական օրենսգիրքը և իրավաբանական պրակտիկան: Այս երկրների թվին են պատկանում Գերմանիան, Ավստրիան, Շվեյցարիան և Հունաստանը: Նրանք

<sup>22</sup> «Հողագույքային հարաբերությունների հիմունքներ» ուսումնական ձեռնարկ, Երևան 2013 թ. Ս. Գևորգյանի խմբագրությամբ, գլուխ 2.5.7:

ինչպես տեսականորեն, այնպես էլ գործանականորեն մոտ են սկանդինավյան երկրների իրավական համակարգերը Շվեդիայում, Նորվեգիայում, Դանիայում և Ֆինլանդիայում:

2. Երկրորդ խմբին կարելի է վերագրել այն պետությունները, որտեղ հռոմեական իրավունքի հիման վրա ձևավորվել է քաղաքացիական իրավունք, որն էլ իր արտահայտությունն գտել Նապոլեոնի Քաղաքացիական օրենսգրքում: Անկասկած, 1804թ-ին այդ օրենսգրքի ընդունումը մեծ ազդեցություն ունեցավ ինչպես իրավաբանական տեսության, այնպես էլ գործնական ընթացակարգերի վրա նախ և առաջ ռոմանական մշակույթ ունեցող երկրներում, որոնք պատմականորեն միշտ իրենց նույնացրել են հռոմեական մշակույթի, այդ թվում նաև հռոմեական իրավունքի հետ: Երկրների այս խմբի մեջ մտնում են Ֆրանսիան, Բելգիան, Լյուքսեմբուրգը, Սիդեռլանդները, Իտալիան, Իսպանիան և Պորտուգալիան: Նշենք, որ քաղաքացիական իրավունքի, այդ թվում նաև ժառանգության իրավունքի ոլորտում նրանց իրավական համակարգի հիմքը հանդիսացել է հենց Նապոլեոնի քաղաքացիական օրենսգրքը: Այդ սկզբունքների և հատկապես նրանց իրավական կիրառման մեջ էական ուղղումներ են մտցվել, որպեսզի դրանք համապատասխանեն ժամանակի ոգուն և պահանջներին:

3. Երկրների երրորդ խմբի մեջ մտնում են անգլոսաքսոնական իրավաբանական մշակույթ ունեցող երկրները, որոնք մեծ մասամբ տարբերվում են մայրցամաքային Եվրոպայից: Անգլոսաքսոնական իրավական տեսությունը և պրակտիկան հիմնվում է սովորութային իրավունքի, առանձին օրենքների, կանխավարկածի իրավունքի վրա, այն ելնում է կոնկրետ փաստերից՝ չձգտելով դրանք օրենսգրքերի ավարտուն տեսքի վերածել: Միաժամանակ այս իրավաբանական համակարգն ուղղորդված է դեպի առանձին անհատի, նրա անքակտելի իրավունքի ազատությունը և տարբերվում է քաղաքացիաիրավական, մասնավորապես ժառանգության ոլորտում պետության զգալիորեն քիչ միջամտությամբ (օրինակ՝ Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Իռլանդիա, Կանադա, Ավստրալիա և Նոր Զելանդիա):

Մի փոքր առանձնացված է ճապոնիան, որը չնայած մեծամասամբ իր քաղաքացիական օրենսգրքում արտապատճենել է մայրցամաքային Եվրոպայի երկրների շատ դրույթներ, սակայն այստեղ քաղաքացիական իրավունքի և իրավաբանական պրակտիկայի վրա ազդել է նաև ճապոնական ազգային բնավորությունը՝ ժառանգության մասին խնդրի լուծման գործում ձգտել ամեն ինչ անել ընտանեկան խորհրդում՝ առանց իշխանություններին դիմելու միասնական կարծիքի: Դրանում ի հայտ է գալիս տարբերությունը իրավական հարցերի նկատմամբ ճապոնական և ամերիկայն մոտեցումների միջև, որտեղ բոլորը ձգտում են հարցը դատական կարգով լուծել: Այդ պատ-



Ճառով էլ ներկայումս աշխարհի բոլոր իրավաբանների կեսից ավելին ապրում է ԱՄՆ-ում, իսկ ճապոնիայում՝ հաշվի առնելով բնակչության համապատասխան խմբերը, իրավաբանների ամենափոքր քանակությունն է՝ մյուս զարգացած երկրների հետ համեմատած: Վերլուծելով նշված երեք հիմնական իրավաբանական համակարգերի տեսական հիմնադրույթները և իրական պրակտիկան կարելի է ցույց տալ նրանց հիմնական սկզբունքները և տարբերությունները:

Երկրների առաջին՝ գերմանական, իրավունքի խմբում ժառանգության հողային իրավունքում լայնորեն տարածված է հետևյալ սկզբունքը՝ ժառանգողը իրավունք չունի ինքնական իր հողային գույքը ժառանգություն թողնել և այն, որպես կանոն, պետք է անցնի միայն ժառանգորդներից մեկին, իսկ մյուս բոլորը պետք է համապատասխան դրամական կամ գույքային փոխհատուցում ստանան: Այս սկզբունքը հատկապես հստակ նկատվում է Գերմանիայի հյուսիսային, բողոքական երկրամասերի օրենսդրություններում: Այստեղ ժառանգողի մահվան հաստատված փաստից հետո հողը, ինչպես նաև ողջ գույքն անցնում է կամ ընտանիքում ավագին, կամ էլ նրան, ով ավելի շատ է կապված տնտեսության վարման հետ: Վեճերի առկայության դեպքում նման ժառանգորդը որոշվում է դատարանի կողմից: Օրենքով պահանջվում է, որպեսզի այդ մարդն ունենա համապատասխան որակավորում, աշխատանքային փորձ և տնտեսությունն արդյունավետ վարելու ունակություններ: Իսկ Գերմանիայի այլ երկրամասերում՝ կաթոլիկ հարավում, որտեղ այլ ավանդույթներ են տիրում, քաղաքացիական օրենսգիրքը թույլ է տալիս կատարել գույքի բաժանում ժառանգորդների միջև: Սակայն նույն օրենսգիրքը թույլ է տալիս նաև հողը թողնել միայն մեկ ժառանգորդի, մյուս ժառանգորդներին դրամական փոխհատուցում տալու պայմանով: Ընդհանուր առմամբ, նույնիսկ գերմանական իրավունքի ընդհանուր սկզբունքներից ելնելով՝ այս խմբի երկրներից յուրաքանչյուրում իրականացվում է բազմաբնույթ և բնորոշ հողային կադաստրի կարգաբերման մոդել և կիրառվում են հատուկ իրավական նորմեր, որպեսզի արտացոլեն ինչպես տեղական իրականությունը, այնպես էլ ագրարային կամ ողջ տնտեսական քաղաքականությունը:

Շվեդիայում, որտեղ ավանդաբար իշխում է պետական կարգավորման բարձր մակարդակը, ժառանգության ստացման ժամանակ պահանջվում է իշխանությունների թույլտվությունը, որպեսզի պահպանեն նրա ամբողջականությունը: Եթե խնդիր է առաջանում մասնակիցներից մեկի առանձնացման հետ, ապա դա ևս թույլտվություն է պահանջում: Հիմնական գաղափարը կայանում է տնտեսության մասնատման կամխման և ձեռնարկության կենսունակ չափը պահպանելու ցանկության մեջ, որը եկամտաբերության խոհեմ մակարդակ կապահովի և թույլ կտա համապատասխան եկամտու ունենալ: Եթե ան-

գամ իշխանությունները համաձայնություն չեն տալիս տնտեսությունների բաժանմանը, ապա ժառանգորդը պարտավոր է այն ամբողջությամբ վաճառել կամ վարձակալության տալ, որը խնդրի բավական հաճախակի լուծում է հանդիսանում և բացահայտում է երկրում վարձակալված հողերի բարձր բաժինը: Ընդհանուր առմամբ, եթե անփոփենք ժառանգությամբ հողերի անցման տեսությունների և պրակտիկայի հետ կապված հարցերը, ապա կարող ենք ասել, որ չկան ընդհանուր սկզբունքներ, ընդհանուր տեսություն և ընդհանուր իրավակիրառում: Պատմականորեն ձևավորվել են տարբեր մոտեցումներ ժառանգության իրավունքի նկատմամբ և դրանք պահպանվում են, սակայն կենտրոնացման կամ ամեն դեպքում տնտեսությունների մասնատման կանխման անհրաժեշտությունը պահանջում է այնպիսի օրենսդրության և գործադիր քաղաքականության կիրառում, որը թույլ կտար պահպանել հարաբերակա-նորեն կենսունա և եկամտաբեր տնտեսությունները սեփականատերերի սերունդների փոփոխումից հետո: Հողի սեփականության իրավունքի ոլորտում արտասահմանցիների համար երկու միտում գոյություն ունի՝ մի կողմից հողի սեփականության իրավունքը օտարերկրյա քաղաքացիների կամ ոչ ռեզիդենտների կողմից հնարավոր գնումից պաշտպանելու ցանկությունը, մյուս կողմից էլ այնպիսի իրավական համակարգերի ստեղծումը, նախ և առաջ Եվրոպական Միությունում, որտեղ փոխադարձության իրավունքով ոչ ռեզիդենտները, որոնք սակայն Եվրոմիության պետությունների քաղաքացիներ են, իրենց իրավունքներով հավասարվում են տվյալ պետության քաղաքացիներին՝ հիմնվելով կապիտալի և աշխատուժի ազատ շարժի միասնական սկզբունքի վրա: Իսկ իրական վիճակը որոշվում է պետության տնտեսական զարգացման աստիճանով, նրա ֆինանսական համակարգով: Մի շարք այլ երկրներում ևս սահմանափակվում է օտարերկրացիների կողմից հողի գնման հնարավորությունը: Այսպես, նման սահմանափակումներ գործում են Ավստրիայում, Չեխիայում, Իսլանդիայում և Թուրքիայում: Եվրամիությունում օտարերկրացիների կողմից հողի գնման արտոնությունները տարածվում են միայն այդ միջազգային կազմակերպության անդամ պետությունների քաղաքացիների վրա, մյուսների նկատմամբ սահմանափակումներ են կիրառվում: Նման սահմանափակումների բնույթը և խնդրի լուծման ձևերը տարբերվում են տարբեր պետություններում: Այսպես, Նոր Զելանդիայում 2 հեկտարից ավելի հողի գնման կամ վարձակալման իրավունքը որոշում է հողի պահպանության տրիբունալի կողմից և որոշումը կախված է կոնկրետ դեպքից՝ հաշվի առնելով նոր տեխնոլոգիաների, խոշոր ներդրումների, գործարար իրավասությունների ներդրման հնարավորությունները, ինչպես նաև ազատ հողերի առկայությունը:

Ավստրալիայում այդ սահմանափակումները կիրառվում են հիմնականում մայրցամաքի արևմտյան մասում, որպեսզի ավստրալացիների համար

ապահովեն վերահսկողությունը դեռ քիչ օգտագործվող հողերի մեծ մասի նկատմամբ: Կանադայում այս կարգավորումը ավելի խիստ բնույթ է կրում՝ հողի նկատմամբ օտարերկրյա սեփականության սահմանափակման կամ կանխման նպատակով: Այս խնդրի վերաբերյալ օրենսդրությունն իրականացվում է համայնքային մակարդակում, ընդ որում մի շարք դեպքերում դա վերաբերում է ոչ միայն օտարերկրացիներին, այլ նաև տվյալ համայնքների ոչ ռեզիդենտներին:

Եվրամիության երկրներում արտոնությունների ներքին ռեժիմ է գործում Միության երկրների բոլոր քաղաքացիների համար և Միության մակարդակում ընդունվել են ընդհանուր կանոններ արտաքին կապիտալ ներդրումների վերաբերյալ այլ երկրների քաղաքացիների համար: Սակայն Միության ներսում էլ որոշ երկրներում պահպանվել են սահմանափակումները այս միջազգային կազմակերպության անդամ այլ երկրների քաղաքացիների համար: Այսպես, Իռլանդիայում, որտեղ ուժեղ են անգլիական լենդլորդերի (հողատերերի) հետ հողի համար պայքարի տեղական ավանդույթները, ստեղծվել է ռեժիմ, որի համաձայն խստորեն սահմանափակվում է օտարերկրացիների հող գնելու հնարավորությունը:

Ֆրանսիայում հատուկ թույլտվություն է պահանջվում երկու դեպքում՝ եթե գործարքը գերազանցում է 3.750 մլն եվրոն (սկսած 1999 թվականի նոյեմբեր ամսից) կամ խաղողի այգիների գնման ժամանակ, որոնք ավանդության համաձայն երկրում համարվում են ազգային հարստության կարևոր մաս: Ճապոնիայում գյուղատնտեսության մեջ, ինչպես և տնտեսության բազմաթիվ այլ ճյուղերում ավանդականորեն վարվում է օտարերկրյա կապիտալ ներդրումների սահմանափակման քաղաքականություն: Գյուղատնտեսությունում օտարերկրյա կապիտալ ներդրումները արգելվում են ոչ միայն հողի, այլև ողջ գյուղատնտեսական արտադրության մեջ, այդ թվում նաև ձկնային և անտառային տնտեսությունում<sup>23</sup>: Այս առումով կարելի է հատուկ դիտարկել ԱՄՆ-ում իրավիճակը, որտեղ ընդգծված բազմաբնույթ փորձ կա հողի գնման իրավունքի տրամադրման կամ օտարերկրացիների համար այդ իրավունքի սահմանափակման առումով: 1978թ. ընդունվել է գյուղատնտեսությունում օտարերկրյա կապիտալ ներդրումների մասին ֆեդերալ ակտը, որի համաձայն արտասահմանցիներին չի արգելվում գյուղատնտեսական տարածություններ ձեռք բերել ԱՄՆ-ում, սակայն յուրաքանչյուր առանձին դեպքում (նաև՝ անտառային հողատարածությունները) նրանք պետք է այդ մասին հաղորդեն ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարին: Հիմնականում օտարերկրացի հողատերերը կանադացիներ և եվրոպացիներն են, իսկ օտարերկ-

<sup>23</sup> Варламов А. А., Лойко П. Ф. и др., «Земельный кадастр в зарубежных странах» Учебное пособие, Москва, 1996 г.

րացիների հող գնելու իրավունքի փաստացի սահմանափակումը իրականացվում է նահանգների մակարդակով: Այժմ մի շարք նահանգներում գործում են օտարերկրացիների կողմից գյուղատնտեսական նշանակության հողերի գնման իրավունքը սահմանափակող օրենքներ, որոնք վերաբերում են նաև քաղաքային, անտառային հողերին և քաղցրահամ ջրերի աղբյուրներ ունեցող հողերի ձեռք բերմանը: Մի քանի նահանգներում նույնիսկ բարեկամական երկրների քաղաքացիներին չի թույլատրվում գնել գյուղատնտեսական հողեր, սակայն բացառություն են լեռնահանքային կամ գիտահետազոտական աշխատանքների կատարման համար հողերի գնման դեպքերը: Սահմանափակումներ կան թշնամի երկրների քաղաքացիների համար կամ պետական հողերի վաճառքի ժամանակ կամ գյուղատնտեսականից դեպի հողօգտագործման այլ ձևեր հողերի անցման ժամանակ: Ընդհանուր առմամբ 17 նահանգներ, որոնք հիմնականում գյուղատնտեսական ուղղվածություն ունեն, սահմանափակումներ կիրառում են օտարերկրացիների կողմից գյուղատնտեսական հողերի գնման նկատմամբ<sup>24</sup>:

Յոդային կադաստրը, որը ներկայումս գործնականում վարվում է աշխարհի գրեթե բոլոր պետություններում, անքակտելիորեն կապված է հողային ռեսուրսների հաշվառման, նրանց վիճակի և օգտագործման գնահատման հասկացության հետ և ենթադրում է իրենց հատկություններով միատեսակ օբյեկտների առանձնացում և բնորոշում՝ նկարագրելով դրանց տարածական սահմանները և ներկայացնելով դրանց քանակական և որակական բնութագրերը: Յոդամասի տակ հասկանում են երկրի մակերևույթի որոշակի մաս, որը մյուսներից առանձնացված է սահմաններով, որոնց ներսում գործում է պաշտոնապես ճանաչված իրավունքների, պարտավորությունների և սահմանափակումների փաթեթ: Ընդ որում այս հասկացությունը ներառում էին ինչպես բնական, այնպես էլ արհեստական օբյեկտները կամ շինությունները, որոնք տեղակայված են այդ սահմանների ներսում: Արտասահմանյան երկրների փորձի դիտարկման համար անհրաժեշտ է նաև հստակեցնել անշարժ գույքի կառավարման պրատիկայում կիրառվող տերմինները՝ ֆիսկալ կադաստր, իրավաբանական կադաստր, բազմանպատակ կադաստր: Ֆիսկալը այն կադաստրն է, որն ուղղված է անշարժ գույքի հարկման նպատակների սպասարկմանը: Իրավաբանականը այն կադաստրն է, որն ուղղված է անշարժ գույքի սեփականության իրավունքների գրանցմանը և պաշտպանությանը: Բազմանպատակը այն կադաստրն է, որը կիրառվում է հողային ռեսուրսների կառավարման համար (որպես արտադրական միջոցի և տարածական հիմքի): Ընդհանուր ըմբռնմամբ կադաստրային համակարգի առավել տարած-

<sup>24</sup> Маховикова Г. А. – М36 Экономика недвижимости: учебное пособие / Г. А. Маховикова, Т. Г. Касьяненко. – М.: КНОРУС, 2009.

ված սահմանումը տրվել է FIG-ի (գեոդեզիստների միջազգային ֆեդերացիայի) կողմից՝ «Կադաստրը անշարժ գույքի պաշտոնական ռեգիստրն է, որը հիմնվում է հողամասերի (պարցելի) վրա»: Իրավաբանական կադաստրի և հողային գրանցման համակարգի միջև տարբերությունը միայն տերմինաբանական է (անգլիախոս երկրներում տարածված է կոչումների գրանցման համակարգ տերմինը): Աշխարհում գրանցման ամենատարածվածը այն համակարգերն են, որոնք հիմնվում են «փաստաթղթերի գրանցման» վրա և նրանք, որոնցում հիմք է հանդիսանում «իրավունքների կամ կոչումների գրանցում»: Այն համակարգերում, որոնք հիմնվում են «փաստաթղթերի գրանցման» վրա, ռեգիստր են ներմուծում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման համար, որը հանգում է պայմանագրի կամ համաձայնության վավերացմանը: Նման համակարգը բնորոշ է ագրարային երկրներին: Այն համակարգերում, որտեղ հիմքը «իրավունքների և կոչումների գրանցումն» է, գրանցվում է ինքնին համաձայնության փաստը, որը ձևակերպված է որոշված կերպով<sup>25</sup>: Այն իրավունքները և սահմանափակումները, որոնք կազմել են համաձայնության առարկան, ինչպես նաև անշարժ գույքը, արտապատկերվում է խոշորամասշտաբ քարտեզների վրա: Բոլոր գործողությունները կատարվում են սահմանված կարգով, որտեղ պետությունը երաշխավորում է համաձայնագրերի ճշգրտությունը և պատասխանատվություն է կրում սեփականատերերի իրավունքների խախտման դեպքում: Սեփականության իրավունքները (կոչումները) գրանցող մարմինները բացարձակապես ոչ մի կարգադրական գործառույթ անշարժ գույքի հետ կապված չի կատարում: Երկրների մեծ մասում գրանցման համակարգը բաղկացած է երկու մասից՝

1.Քարտեզագրում 1:500-1:5000 մասշտաբով, որոնցում արտացոլվում է սեփականության սահմանի տեղեկությունը, վարչական սահմանը, պլանների մաթեմատիկական հիմքը (կոորդինատների համակարգը, գեոդեզիական կետերը), կադաստրային համարը (ինդենտիֆիկատորը), տեղանքի հիմնական տարրերը (շինություններ, միացման ուղի, հիդրոգրաֆիա, անտառներ և այլն):

2.Փաստաթղթային տեղեկություն՝ կադաստրային ինդենտիֆիկատորը, սեփականության ռեգիստրում գրանցման համարը, հասցեն, տիրոջ մունիցիպալ կողմ, երբ է ստեղծվել սեփականությունը, սեփականության իրավունքները և այլն: Համակարգում տեղեկատվությունը խմբավորվում է հողամասի կամ տիրոջ անվան կամ էլ նրանց համադրության հիման վրա: Գրանցման համակարգում կարևոր է պետության դերը, որը սահմանում է, թե ինչ կառույցներ են պատասխանատու որոշակի տեղեկատվության համար:

<sup>25</sup> Кухтин П. В., Левов А. А., Морозов В. Ю., Пуднек А. В., Семкина О. С., Хованова Н. В. – У66 Управление земельными ресурсами: Учебное пособие. 2-е изд. – СПб.: Питер, 2006

### **Ռուբեն ՄԱՐԳԱՐՅԱՆ**

#### **Ժառանգության իրավունքի և հողային կադաստրի հիմնահարցերի կարգաբերման համաշխարհային մոդելները**

*Բանալի բառեր. ժառանգության իրավունք, հողային կադաստր, եկամտաբեր տնտեսություն, սեփականատեր, սահմանափակումներ*

Հոդվածում ներկայացված են հողային հարաբերություններում համաշխարհային առաջավոր փորձի ուսումնասիրությունը ու միջազգային մոդելների պահանջների վերլուծությունը, որը տարածվում է ոչ միայն կառավարման ոլորտի սկզբնական և ընթացիկ գործունեության մակրոխնդիրներին, այլ նաև գույքաշրջանառելիության հատուկ դեպքերին և պայմաններին, որոնք իրավա-օրենսդրական կարգավորման առումով ունեն կայունացնող, հարմարավետություն ապահովող, ինչպես նաև կենցաղում իրեն արդարացնող, պրակտիկ հաջողություններ գրանցող նշանակություն: Ներկայացված են նաև մի քանի երկրների, երկրների համախմբերի և պետությունների ներսում գործող հողերի օգտագործման, դրանց նկատմամբ իրավագործությունների տեղաբաշխման, բնական սերնդափոխության պայմաններում հողօգտագործման մոդելները:

### **Рубен МАРГАРЯН**

#### **Всемирные модели регулирования прав наследства, земельного кадастра**

*Ключевые слова: право на наследство, земельный кадастр прибыльная экономика, владелец (собственник), ограничения*

В статье представлены исследования всемирного опыта в земельных отношениях и анализ требований международных моделей, что ассоциируется не только с мелкими проблемами управления, но и особые случаи оборота имущества, которые в правовом смысле имеют стабилизирующее, вспомогательное, используемое в практике и приносящий плоды значение. Представлены так же модели разных стран и союзов в использовании земли, прав на них и дальнейшая их судьба при смене поколений. Изучались так же право на наследство, передача прав на землю, их государственная регистрация, регулирование прав.

### **Ruben MARGARYAN**

#### **Global models of regulations for rights of inheritance and land cadaster**

*Key words: right to inheritance, lucrative economy, owner, land cadaster, limitations*

The article presents the research of global experience in land relations and analysis for requires of international models, which not only associates with little problems in management but also special cases in real estate return that in the legal sense have stabilizing, auxiliary, accepted in practice and bearable importance. Also there are presented the models of different countries and unions in making use of land, the rights to them and further destiny while changing generations. As well there are investigated the right to inheritance, transfer of rights for lands, state registration for them, regulations of rights between heritors, especially experience in the sphere of changing of the owners in agriculture.

**ՔԵԹՐԻՆ ՄԱՔԱՈՒԼԵՅԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

**Էյա ՂԻԱՍՅԱՆ**  
ՀՊՄՀ ասպիրանտ

Բանալի բառեր. հասարակություն, կրթություն, քաղաքացիական իրավունքներ, հանրապետություն, ընտրելու իրավունք

Այս հոդվածում ես ցանկանում եմ անդրադառնալ մասնավորապես Քեթրին Մաքաուլեյի գենդերային հայացքներին և դրանց յուրօրինակությանը: Հետաքրքրական է, որ իր աշխատություններում Մաքաուլեյը ինչպես և բազմաթիվ այլ կարևոր հարցերի դեպքում բացահայտորեն չի անդրադարձել այս գաղափարներին: Անգլիայի պատմությանը նվիրված իր բազմախառու աշխատության շրջանակներում նա երբեք կանանց համար չի առաջարկել ընտրելու իրավունք և տղամարդկանց հետ համընդհանուր և հավասար մասնակցություն ընտրություններում: 1767թ-ին Մաքաուլեյը գրել է “Լավ դեմոկրատական կառավարման ձևի մասին համառոտ ակնարկ” աշխատանքը, որում նա ոչ մի բան չի գրել կանանց ընտրելու իրավունքի մասին, փոխարենը առաջարկել է ապահովել կանանց համար ամենամյա անկախ վճար օժիտի փոխարեն<sup>26</sup>:

Տոքսը Մաքաուլեյի ստեղծագործական կյանքին նվիրված իր ստեղծագործության մեջ այս առիթով գրում է՝ “Մաքաուլեյի աշխատանքներում հանրապետական պարտականությունը հաղթանակել է սեռի նկատմամբ”<sup>27</sup>: Ի՞նչ է սա նշանակում: Ըստ իս՝ այս տեսակետը մեկնաբանելու համար անհրաժեշտ է ներկայացնել հեղինակի քաղաքական հայացքներում և հասարակության մեջ կնոջ դերակատարության վերաբերյալ պատկերացումները: Մաքաուլեյի քաղաքական տեսությունը քաղաքացիությունն ունեցող անհատի հանրապետական գաղափարի համադրությունն է գործունյա, ինքնավստահ անհատի դերի մասին ավելի լայն տարածում գտած հայեցակարգի հետ, ով միաժամանակ ունի իրական քաղաքական գործընթացից դուրս իրավունքներ<sup>28</sup>: Այս ձևակերպման շնորհիվ նա ինչպես մյուս կանայք, ովքեր քվեար-

<sup>26</sup>Macaulay C., Letters on Education with Observations on Religions and Metaphysical Subjects, Dublin, 1790, pp. 5-198

<sup>27</sup>Fox C., Catharine Macaulay, An Eighteenth-Century Clio, The University of Chicago Press on behalf of the Henry Francis du Pont Winterthur Museum, 1968, pp. 9-82

<sup>28</sup>Macaulay C., The History of England from the Revolution to the present time in a Series of Letters to a Friend, Bath, 1778, p. 37

Macaulay C. Observations on the Reflections of the Right Hon. Edmund Burke, on the Revolution in France, London, 1790, p. 1-39.

Կելու իրավունք չունեին կարող է հավասարվել այդ քաղաքական մոդելը ներկայացնողներին<sup>29</sup>: Ավելին առաջադրված տեսակետները ակամայից կարծես ավելի մեծ շփոթության մեջ կարող են գցել ուսումնասիրողին: Սակայն ըստ իս՝ Մաքաուլեյի գենդերային հայացքները անհրաժեշտ է հետազոտել հանրապետական կառավարման մոդելի շրջանակներում, ընդ որում քննել քաղաքացիների աստիճանակարգության մասին նրա ներկայացրած գաղափարը, քանի որ վերջինս ներկայացնելիս հեղինակը իր տարբեր աշխատություններում կանանց իրավունքները սերտորեն աղերսում է քաղաքացու իրավունքների հետ: Ըստ իս Մաքաուլեյը կողմակից է այս տեսակետին հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Ես կներկայացնեմ նրա հայացքները և կփորձեմ վերլուծել դրանցից յուրաքանչյուրի եզակիությունը, որը հնարավորություն կտա ամբողջական պատկերացում կազմել նրա գենդերային հայացքների մասին: Համաձայն այս մոդելի ոչ բոլոր մարդիկ կարող են քաղաքացիություն ունենալ, այլ միայն որոշները: Արդեն իսկ ըստ այս սահմանման հասարակության որոշ անդամներ չեն կարող ունենալ քաղաքացիական իրավունքներ (ստրուկներ, օտարերկրյացիներ, կանայք, երեխաներ): Մյուսները կարող են դասակարգվել որպես հնարավոր (պոտենցիալ) քաղաքացիներ պայմանով, որ նրանք ունենան որոշակի սեփականություն, նյութական առումով անկախ լինեն և ակտիվորեն զբաղվեն հասարակական գործունեությամբ: Այս ամենի առկայության դեպքում միայն նրանք պայմանականորեն հետագայում կդառնան քաղաքացիներ և քաղաքական կյանքի լիարժեք մասնակիցներ<sup>30</sup>: Մաքաուլեյը համոզված է, որ հնարավոր քաղաքացու հիմնական և անհրաժեշտ որակներն են անկախ մտածելակերպը, ռացիոնալ ինքնավերահսկումը և ֆինանսական անկախությունը<sup>31</sup>: Ֆինանսական անկախությունը, նրա տեսանկյունից քաղաքացիության դասակարգման ամենակարևոր չափանիշներից մեկն է, սակայն ինտելեկտուալ և բարոյական որակները նույնպես կարևոր են: Սա նշանակում է, որ որոշ կանայք, ներառյալ նաև իրեն, ովքեր ունեն անհրաժեշտ որակներ կարող են համարվել պոտենցիալ քաղաքացիներ կամ նախաքաղաքացիներ: Նա համոզված է, որ կանայք պետք է պատասխանատվություն կրեն հասարակության առջև ընդհանուր օգուտի և գործի համար, պատրաստ լինեն ինքնուրույն որոշումներ կայացնել հատկապես այն դեպքերում, երբ դա պահանջում է ընդ-

<sup>29</sup> Hicks P., Catharine Macaulay's Civil War: Gender, History, and Republicanism in Georgian Britain // Journal of British Studies, 2002, pp. 30-67.

<sup>30</sup> Маргарян Л. Гендерный дискурс в исторических работах У. Робертсона // Теория и практика гендерных исследований в мировой науке: мат-лы IV междунар. конф. - Прага, 2013, с. 10-29

<sup>31</sup> Macaulay C., Letters on Education, with Observations on Religious and Metaphysical Subjects, London, 1790, pp. 19-300.



հանուր գործը: Միայն այս դեպքում նրանք ձեռք կբերեն քաղաքացիություն<sup>32</sup>: Պոտենցիալ քաղաքացու “դասակարգման” վերաբերյալ Մաքաուլեյի տեսությունը իր աշխատություններում ներկայացվում է համամարդկային բնական իրավունքների և ընտրովի քաղաքացիության վերաբերյալ գաղափարներում: Հեղինակի այս գաղափարի հիմքում դրվում է աչալուրջ, զգոն, մշտապես ընդդիմացող, քաղաքական առումով ակտիվ անհատի իդեալը: Յուրաքանչյուր անհատ լինի տղամարդ թե կին, ով ունի ինտելեկտ և ռացիոնալ մտածողություն, կարող է գտնել իրեն այն տեղում և այն ժամանակ, երբ երկրին պետք լինի իր մասնակցությունը: Այս տեսակյունից յուրաքանչյուրի հետաքրքրությունների շրջանակում է գործել հանուն համընդհանուր օգուտի:

Հետաքրքրական է այն փաստը, որ ուսումնասիրելով Մաքաուլեյի կյանքը ու ստեղծագործական ուղին, նկատել ենք, որ նա ձգտում է ամբողջությամբ համապատասխանել գովերգով իդեալին: Քաղաքացու՝ պետության մեջ դերակատարության վերաբերյալ իր հայացքներում, Մաքաուլեյը հատուկ ուշադրություն է դարձնում հասարակության մեջ կնոջ նկատմամբ վերաբերմունքին<sup>33</sup>: Նա նկատել է, որ կնոջ նկատմամբ հարգանքը և հատուկ վերաբերմունքը չպետք է լինի միայն նրբանկատության արդյունք: Կանանց նկատմամբ չափազանցված խնամքը տղամարդու գերազանցությունը ցուցադրելու միջոցներից մեկն է<sup>34</sup>: Սա ըստ իս ևս մեկ անգամ գալիս է շեշտելու, որ այս հեղինակը հասարակության մեջ կնոջ և տղամարդու դիրքը բազմաթիվ առումներով նույնականացնում է, բացառելով այն խոչընդոտող իրավունքները, որոնք անջրպետ են ստեղծում երկու սեռերի միջև: Կնոջ նկատմամբ այսպիսի վերաբերմունքը միայն հաստատում է սեռերի միջև տարբերության գաղափարը և ներկայացնում է կանանց ավելի շուտ որպես սոցիալական, քան քաղաքական կատեգորիա: Այդ պատճառով Մաքաուլեյը գտնում է, որ Բյորկի և Լուսավորության դարաշրջանի բազմաթիվ մտածողների ելույթները կեղծ են առաջընթացի, քաղաքակրթության և եվրոպական բարքերի գերազանցության վերաբերյալ, քանի որ կանանց վերաբերյալ նրանք առաջադրում էին ոչ թե տղամարդկանց հավասար քաղաքացիական իրավունքներ, այլ ավելի շուտ աղավաղելով նրանց դիրքը հասարակության մեջ

<sup>32</sup>Рутковская И. Женщины в политике в трактовке В. Робертсона и Н. М. Карамзина // Диалог со временем : альманах интеллектуальной истории. -М. : Ленанд, 2010. - № 31, 27, с. 49  
Macaulay C., Letters on Education, with Observations on Religious and Metaphysical Subjects, London, 1790, pp. 19-300.

<sup>33</sup>Аксенова Е. «Ученая леди», Общественно-политические и исторические взгляды Кэтрин Маколей (1731-1791), Самара, Самарский институт, Высшая школа приватизации и предпринимательства, 2011, сс. 11-70.

<sup>34</sup>Macaulay C., The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line, Vol. I. -1763, pp. 25-400.

ներկայացնում էին արական սեռի գերազանցությունը<sup>35</sup>: Նա հատկապես կեղծ էր համարում այն աշխատությունները, որոնցում հեղինակները որպես եվրոպական քաղաքակրթության գերազանցության գլխավոր փաստարկ ներկայացնում էին եվրոպական երկրներում կանանց դիրքը և նրանց նկատմամբ հասարակության վերաբերմունքը: Սակայն ես նկատել եմ, որ սրանում Մաքաուլեյը մեղադրում է ոչ այնքան տղամարդկանց, որքան կանանց, ովքեր համակերպվել են բնակչության չդասակարգված խավի դերի հետ և չեն ձգտում դուրս գալ իրենց սահմանափակող շրջանակներից<sup>36</sup>:

Այսպիսով, հետազոտելով հեղինակի տեսակետները կարելի է եզրակացնել, որ Մաքաուլեյի իրեն ժամանակակից կանանց քննադատությունը հիմնավորված էր ոչ թե ինչ-որ "արական պահվածքով", նրա տղամարդկանց նմանվելու ցանկության կամ նրանց հարգանքը ձեռք բերելու, գենդերային տարբերակման բացակայության, այլ իր և իր ժամանակի մյուս կանանց նկատմամբ պահանջկոտությամբ: Նա պահանջում էր կանանց համար ոչ թե տղամարդկանց հետ հավասար իրավունքներ, այլ հավասար հնարավորություններ "առաջին հերթին կրթության բնագավառում", որպեսզի վերջիններս դառնան հասարակության լիարժեք անդամներ և արժանի քաղաքացիներ: Վերոնշյալ մոդելին անդրադառնալով հեղինակը իր կրթության մասին աշխատություններում հայտարարում է տղամարդկանց ընտրյալ խավի հետ իր հավասարության մասին: Կրթությունը ըստ հեղինակի հանդիսանում է հասարակության մեջ կնոջ դերի ամբողջական կայացման անկյունաքարերից մեկը, որի բացակայության պարագայում կինը զրկվում է մի շարք առավելություններից: Հատկանշական է, որ Մաքաուլեյի հայացքները "արական" և "իգական" հասկացությունների վերաբերյալ տարբերվում էին բրիտանական Լուսավորության դարաշրջանի մյուս ներկայացուցիչների նմանատիպ հայացքներից<sup>37</sup>: Մաքաուլեյը կողմնակից էր Բրիտանիայում, հատկապես լիբերալ և հանրապետական շրջանակներում պահպանված արականության հռոմեական մոդելին: Նա առաջ է քաշում այս մոդելը ավելի բնորոշ կերպով ցույց տալու համար հասարակության մեջ կանանց և տղամարդկանց քաղաքական և քաղաքացիական տիրույթներում տարբերությունները և իր կողմնորոշումները: Նա իր աշխատություններում ներկայացնում է "իրական

<sup>35</sup>Bonwik C. English Radicals and the American Revolution, Chapel Hill, The University of North Caroline, 1977, pp. 7-43.

Берк Э., Размышления о революции во Франции и заседаниях некоторых обществ в Лондоне, относящихся к этому событию/сокр. пер. с англ.: Е. И. Гельфанд. - М.: Рудомино, 1993, сс. 1-39

<sup>36</sup> Hicks P, Catharine Macaulay's Civil War: Gender, History, and Republicanism in Georgian Britain Author(s), Cambridge University Press on behalf of The North American Conference on British Studies, 2002, pp. 25-95.

<sup>37</sup> Fox C., Catharine Macaulay, An Eighteenth-Century Clio, The University of Chicago Press on behalf of the Henry Francis du Pont Winterthur Museum, 1968, pp. 50-99.

տղամարդ՝ -ու կերպարը ցանկանալով շեշտել, որ պետության կառավարման մեջ, այսինքն քաղաքական բնույթի հարցերում, գերադասությունը տրվում է ոչ թե կնոջը, այլ տղամարդուն<sup>38</sup>: Ավելին, նա ընդգծում է սա իր բազմաթիվ աշխատություններում քննադատելով կին կառավարիչների գործունեությունը՝ ցանկանալով ներկայացնել կրթության և մի շարք կարևորագույն որակների բացակայության ազդեցությունը պետական կառավարման ոլորտում: Իհարկե հեղինակի այս պահվածքը ուներ նաև այլ դրդապատճառներ: Այդ իսկ պատճառով ի հակադրություն կանացի կերպարի, որն իր աշխատություններում շատ աղոտ է ներկայացվում, նա գտնում է, որ "իրական տղամարդ" կարող է համարվել միայն ստոիկ, բարոյական առումով կայուն, ֆիզիկապես ուժեղ և ռազմատենչ քաղաքացին<sup>39</sup>:

Զեթրին Մաքաուլեյի համար նրբանկատ տղամարդու նոր իդեալները որոնք այնքան տարբերվում էին հռոմեական արականության մոդելից ավելի շատ հիշեցնում էին կանացի գծեր, այդ իսկ պատճառով առաջանում էր բնական հարց, թե կարող է արդյո՞ք այսպիսի որակներ ունեցող պետական գործիչը պահպանել մտքի անկախություն ու ամրություն և կատարել իր քաղաքացիական պարտքը ինչպես հարկն է: Նա կարծում է, որ այսպիսի գործիչները չեն կարող պատշաճ կերպով կատարել իրենց գործը<sup>40</sup>: Մաքաուլեյի գենդերային պատկերացումները կարելի է լավ ուսումնասիրել նաև դիտարկելով այն փաստերը, որոնք վերաբերում էին պետական կառավարման ասպարեզում կանանց դերակատարությանը: Յետաքրքրական է, որ քաղաքական դժբախտությունների պատճառը Մաքաուլեյը տեսնում էր կառավարության ֆեմինիզացման մեջ: Սա շատ ուրույն մտածելակերպ է, քանի որ տարբեր ժամանակներում հետազոտողները մեր կարծիքով սխալ են մեկնաբանել այս երևույթը՝ աղավաղելով հեղինակի իրական պատկերացումներն այս ֆեմոմենի վերաբերյալ: Ես կարծում եմ, որ նա նկատի ունի ոչ թե կանանց ներթափանցումը պետական կառավարման ոլորտ, այլ կանացի ոգու ներթափանցումը: Յեղինակը նաև անուղղակիորեն բացատրում է կանացի ոգու ներթափանցման գործընթացը և արդյունքները: 1750-1760-ական թթ. Բուրգը, Մաքաուլեյը և բրիտանական քաղաքականության մյուս քննա-

<sup>38</sup> Аксенова Е. «Ученая леди», Общественно-политические и исторические взгляды Кэтрин Маколей (1731-1791), Самара, Самарский институт, Высшая школа приватизации и предпринимательства, 2011, сс. 17-83.

<sup>39</sup> Macaulay C., Loose Remarks on Certain Position to be Found in Mr. Hobbes's «Philosophical Rudiments of Government and Society» with a Short Sketch of Democratical Form of Government, In a Letters to Signor Paoli, London, 1767, pp. 1-39.

Macaulay C., The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line, Vol. I. 1763, pp. 5-411.

<sup>40</sup> Macaulay C., The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line, Vol. I. 1763, pp. 5-411.

դատները, ինչպես նաև նոր դասական, հանրապետական, հակաարխտոկրատական, հակակաթոլիկական գաղափարախոսությունների հիմնադիրները բազմաթիվ ազգային խնդիրների լուծումը տեսնում էին “արական հայրենասիրության” մեջ, ներառյալ Յոթնամյա պատերազմում պարտության արդյունքների հաղթահարումը և կաշառակերության վերացումը: Հավատարիմ լինելով անգլիական հանրապետական գաղափարախոսությանը Մաքսուլեյը նկարագրել է 17-րդ դարի հայրենասերի կերպարը որպես ուժեղ, ռացիոնալ, անվեհեր, բարեպաշտ, անկախ և քաջ քաղաքացի: Ուսումնասիրելով նրա աշխատությունների վերաբերյալ հետազոտողների կարծիքները եզրահանգում ենք, որ շատերը բարձր են գնահատում նրա տղամարդուն ներհատուկ գրելաոճը, մյուսները կասկածում են, որ նրա գրքերը գրված են տղամարդու կողմից, իսկ այլոք գտնում են, որ նա զգեստափոխված տղամարդ է: Սակայն այս ամենի հետ մեկտեղ ի տարբերություն բազմաթիվ իր ժամանակակիցների, այդ թվում կանանց, Մաքսուլեյը համառորեն մերժում է այս կարծիքները և ցանկանալով ընդգծել իր տեսակետը նշում է, որ սեռերի միջև կա բնածին և հաստատուն տարբերություն, ինչը կանանց տղամարդկանց հետ անհավասար և ինքնուրույն որոշումներ կայացնելու անընդունակ է դարձնում<sup>41</sup>: Սա գալիս է ապացուցելու, որ նա, ճիշտ է, կողմնակից է կանանց քաղաքացիության շնորհմանը, նրանց համար կրթության ապահովմանը և այլն, այնուամենայնիվ, գտնում է, որ պետության կառավարման ղեկին պետք է կանգնած լինի տղամարդը: Սակայն ավելի մանրագնահատելով իր աշխատությունները, կարելի է եզրահանգել, որ հեղինակն արտահայտել է տեսակետ, որ առանձին դեպքերում կանայք տղամարդկանց հետ հավասար կարող են մասնակցել պետության կառավարմանը<sup>42</sup>:

Գեներալային հարցին անդրադառնալով, որպես երկրորդ կարևորագույն հիմնահարց, հեղինակը շեշտել է կանանց կրթության բարելավման անհրաժեշտությանը: Իր “Կրթության մասին նամակներ” աշխատությունում նա գանգատվում է, որ ժամանակները իրականում ոչ մի կերպ չեն ազդել կանանց իրավական կարգավիճակի բարելավման վրա, որը նրանց հնարավորություն կտա կրթություն ստանալ: Նա այս առթիվ գրում է՝ “Ինչպես այս սեռը ամբողջությամբ զրկված է ցանկացած տիպի, այդ թվում քաղաքական և քաղաքացիական իրավունքներից, այնպես էլ հատկապես ամուսնացած կանայք, որոնց կարգավիճակը պահանջում է զիջողություն, ներողամտություն, դժվար թե ունեն քաղաքացիական իրավունքներ, որպեսզի պաշտպա-

<sup>41</sup>Hume D., History of England IV, London, 1768, pp. 10-79.

<sup>42</sup> Macaulay C., The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line, Vol. I. 1763, pp. 10-400; Volume II (1765), pp. 100-300; Volume III (1767), pp. 200-400.

նեն իրենց աճող անարդարությունից<sup>43</sup>: Ուսումնասիրելով նոր ժամանակների որոշ եվրոպական հասարակություններ, նկատել ենք, որ դրանցից ոմանք ներողամտություն են ցուցաբերում կանանց թերությունների նկատմամբ, մյուսներում դրանք մեկնաբանվում են այնպիսի խստությամբ, որ հակասում է կրոնի և հասարակական գիտակցության բոլոր սկզբունքներին: Մաքաուլեյը նվազագույնի է հասցնում բնավորության ձևավորման մեջ սեռով պայմանավորված բնածին տարբերությունները՝ շեշտելով կրթությունը և դաստիարակությունը: Նրա կարծիքով սեռերի միջև հիմնական տարբերությունը տղամարդկանց ֆիզիկական գերազանցությունն է, ուստի ճիշտ էր համարում տղաների և աղջիկների համատեղ կրթությունը և մերժում էր մարդկային ենթարկվածության գաղափարը, ինչպես դա ձևակերպված էր Ռուսսոյի կողմից<sup>44</sup>: Նա հայտարարում է, որ փիլիսոփաները հրաժարվել են բնածին գիտակցության գաղափարից, սակայն շարունակում են պնդել, որ կանացի բարոյական կերպարը բնածին է: Ըստ իս՝ Մաքաուլեյի հայացքները կարելի է ճշգրիտ ներկայացնել՝ Սիմոնա դե Բեվուարի հայտնի թեզով՝ «կին չեն ծնվում, կին դառնում են»<sup>45</sup>: Անհատը ձևավորվում է որպես անհատականություն՝ իր հասարակության մեջ կամ մշակվելով սոցիալականացման գործընթացի արդյունքում՝ կայանալով որպես կին կամ տղամարդ: Այս երկու տեսակետների բաղդատման և Մաքաուլեյի աշխատություններում կնոջ հասարակության մեջ դերակատարության մասին փաստերը վկայում են, որ թեև գոյություն ունեն սեռով պայմանավորված տարբերություններ և առանձնահատկություններ, սակայն քաղաքակազմական կարգավիճակի համար իզական սեռը պետք է ունենա որոշակի արական բնութագրիչներ: «Կրթության մասին նամակներ» իր աշխատության մեջ նա մեջբերում է հետևյալը՝ «Բոլոր բանական արարածների համար կա վարժքազծի մեկ ընդհանուր սկզբունք: Շարունակելով նա ավելացնում է, որ կանայք ունեն «իրենց ներհատուկ թույլ կողմերը և թերությունները»<sup>46</sup>: Մաքաուլեյը կարծում է, որ «պատմական հանգամանքները, հատկապես վատ կրթությունը թուլացրել են նրանց»<sup>47</sup>: Սակայն ի հակադրություն այս ամենի

<sup>43</sup> Macaulay C., Letters on Education with Observations on Religions and Metaphysical Subjects, Dublin, 1790, pp. 31.

<sup>44</sup> Hill B., The Republican virago. The life and time of Catharine Macaulay, historian, Oxford : Clarendon press, 1992, pp. 1-50.

<sup>45</sup> Симона де Бовуар: этика подлинного существования. издательская группа «прогресс» москва — санкт-петербург 1997; айвазова с., симона де бовуар: этика подлинного существования — предисловие к книге: симона де бовуар, второй пол, том 1 и 2, м., «прогресс»; спб «алетейя», 1997 г., с. 6-7.

<sup>46</sup> Macaulay C., Letters on Education with Observations on Religions and Metaphysical Subjects, Dublin, 1790, p. 75.

<sup>47</sup> Hume D. History of England IV, London, 1768, p. 206.

Նա գտնում է, որ "Փափկասուն կանայք, ինչպես և տղամարդիկ, կրթության և ինտելեկտուալ աճի շնորհիվ ունակ են փոխակերպվելու և վերածվելու ազկիվ, ուժերով լեցուն և փառահեղ անձանց"<sup>48</sup>: Սա գալիս է հաստատելու, որ հեղինակը մեծ կարևորություն է տալիս կրթությանը և դաստիարակությանը, որոնք խթանում են նրա նկարագրած անհատի ձևավորմանը: Այս առումով Մաքաուլեյի կրթության և դաստիարակության վերաբերյալ կարծիքը կարելի է նշմարել նրա մի շարք աշխատություններում: Նա գրում է. "Անհերքելի փաստ է, որ կրթությունը և հանգամանքները ձևավորում են անհատականություն: Մեծ ներդրամությամբ պետք է վերաբերվել յուրաքանչյուր տղամարդու և կնոջ թուլությանը և նույնիսկ թերություններին, ովքեր չեն ստացել այն արտոնությունները, որոնք հանդիսանում են կրթության արդյունք"<sup>49</sup>: Իր գրքերում նա ներկայացնում է, որ կրթությունը ապահովում է մտքի ազատություն: Իր մասին արտահայտվելիս նա գրում է, որ պատմագրությամբ զբաղվելը իրեն բերել է մտքի ազատություն. "Վաղ հասակից ես հիացմունքով ընթերցել եմ այն պատմությունը, որը ցուցադրում է ազատությունը, իր ամենավեհ դրսևորման մեջ, հատկապես հռոմեական և հունական հանրապետությունների աննախնդրում: Նմանատիպ հետազոտությունները խթանում են բնական սեր ազատության նկատմամբ, որը թաքնված է յուրաքանչյուր բանական էակի սրտում, որը դեռևս կծկվում է նախապաշարմունքների և թերությունների ազդեցությունից: Արդյունքը, որը գրեթե միշտ ուղեկցում է այսպիսի ընթերցումը բացատրվում է բարքերի և ազատության նկատմամբ իմ հակվածությամբ, ինչպես նաև դառնում է իմ երևակայության մեջ երկրպագման երկրորդական օբյեկտ"<sup>50</sup>:

Ուսումնասիրելով իր աշխատությունները, այն կարծիքի եմք, որ թեև Մաքաուլեյը ամբողջությամբ չի բացառում և նույնսիկ որոշ դեպքերում քաղաքական դեկին տեսնում է կնոջը, միաժամանակ խրախուսելով, որ կանայք հետաքրքրություն ցուցաբերեն քաղաքականության կամ դասական տեքստերի ընթերցանության նկատմամբ: Նա մեծ նշանակություն է տալիս ինչպես ազգային, այնպես էլ յուրաքանչյուր անհատի ազատությանը ընդհանրապես և մասնավորապես քաղաքական հոսանքներին հարելու մարդու բնական ազատությանը: Մաքաուլեյը ներկայացնում է, որ կրթությունը հանդիսանում է կյանքի կարևոր խթանիչներից մեկը, որը ուղղորդում է դեպի հայրենա-

<sup>48</sup> Hume D. History of England IV, London, 1768. p. 207.

<sup>49</sup> Macaulay C., Letters on Education with Observations on Religions and Metaphysical Subjects, Dublin, 1790, pp. 2-399.

O' Brien K., Women and Enlightenment in Eighteenth-Century Britain, Cambridge university press, 2010, pp. 8-42.

<sup>50</sup> Macaulay C. The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line. Vol. I. -1763, p. 424-25, 450-51.

սիրություն և ձևավորում ազատության հանդեպ սեր, որոնք միմյանցից անբաժանելի են: Ըստ նրա Թյուդորներին հաջողվել էր անգլիացիների մեջ խեղդել ազատության ոգին մինչև "հեղափոխական գիտակցության" ի հայտ գալը: Բողոքական աստվածաբանական գաղափարախոսությունը, կրթություն նշանակության վերականգնումը փոփոխեցին անգլիացիների միտքը: Ծանոթացումը Յոհանի և Յունաստանի պատմություններին, նրանց քաղաքական տեսություններին ստիպեցին ընդլայնել անգլիացիների հայացքները "ազատության համակարգի" հանդեպ<sup>51</sup>:

Այսպիսով, Մաքաուլեյի կարծիքով, ստանալով միայն համապատասխան կրթություն, կանայք և տղամարդիկ կարող են դառնալ իրական հայրենասերներ, իսկ առանց դրա դատապարտված են "կանացիություն" և խոցելիության: 18-րդ դարի բառապաշարում effeminacy բառը նշանակում էր բնութագրիչների մի խումբ, որոնք անցանկալի էին ոչ միայն տղամարդկանց, այլ նաև կանանց համար: Ինքը Մաքաուլեյը բազմաթիվ կանանց կերպափոխումը նշում էր effeminization տերմինով: Հանրապետական գաղափարների կողմակից գրողները սովորաբար միացնում էին effeminacy և կանացիություն բառերը, ինքնաբերաբար ստեղծելով կապ կնոջ և քաղաքական անկման միջև: Այնինչ Մաքաուլեյը միշտ տարբերակում էր դնում այս տերմինների մեջ: Նա գտնում էր, որ պատմականորեն կանայք, ինչպես և տղամարդիկ ունեն որոշակի, միայն իրենց սեռին բնորոշ գծեր, սակայն միևնույն ժամանակ նշում էր, որ որոշ տղամարդիկ չեն ցուցաբերում տղամարդկային գծեր, իսկ կանայք կանացի: Միաժամանակ, նա կանանց վերագրում էր բազմաթիվ դրական որակներ, հատկապես այնպիսիները, ինչպիսիք էին "խելամտությունը, համեստությունը և հաստատականությունը", առաքինություններ որոնց պակասը զգացվում է և որոնց պետք է ձգտեն նաև տղամարդիկ<sup>52</sup>: Մաքաուլեյի գենդերային հայացքները զգալիորեն տարբեր-

<sup>51</sup> Macaulay C., The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line, Vol. I. -1763, pp. 100-400; Volume II (1765), pp. 45-150; Volume III (1767) pp. 200-315; Volume IV (1768), pp. 219-373; Volume V (1771), pp. 95-351; Volume VI (1781), pp. 65-298; Volume VII (1781), pp. 10-135; Volume VIII (1783), pp. 100-400.

Macaulay C., The History of England from the Revolution to the present time in a Series of Letters to a Friend, Bath, 1778, pp. 1-400.

Macaulay C., Observations on the Reflections of the Right Hon. Edmund Burke, on the Revolution in France, London, 1790, pp. 10-35.

<sup>52</sup>Macaulay C., Letters on Education, with Observations on Religious and Metaphysical Subjects, London, 1790, pp. 1-40.

Macaulay C., Loose Remarks on Certain Position to be Found in Mr. Hobbes's «Philosophical Rudiments of Government and Society» with a Short Sketch of Democratical Form of Government, In a Letters to Signor Paoli, London, 1767, pp. 1-29.

Macaulay C., The History of England from the Accession of James I to that of the Brunswick Line, Vol. I. -1763, pp. 100-400; Volume II (1765), pp. 45-150; Volume III (1767) pp. 200-315; Volume IV (1768),

վում են Լուսավորության դարաշրջանի մյուս պատմաբանների հայացքներից: Գ. Բուլինգբրոկը, Դ. Յուսեր, Ու. Ռոբերտսոնը, Է. Գիբբոնը, Է. Բյորկը և իր ժամանակակիցները հստակորեն ցուցադրել են գեղեցիկին զգայունություն: Հատուկ հարգանք և նույնիսկ յուրահատուկ վերաբերմունք կանանց սեռի նկատմամբ, որը Բյորկի կողմից անվանվել է ասպետական վարքագիծ, որը նրանք համարում էին քաղաքակրթության առանձնահատկություն, սակայն այս ամենի հետ միասին նրանք հանդես էին գալիս կանանց կառավարման դեմ: Մաքաուլեյի աշխատությունները կարդալիս ամենուրեք հանդիպում ենք կանանց ցուցաբերած թուլությունների քննադատության, հատկապես այս քննադատությունը սուր է արտահայտվում կին կառավարողների հանդեպ: Այս իսկ պատճառով կարող է թվալ, որ նա հանդես է գալիս կանանց կառավարման և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների դեմ: Սակայն ավելի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ դա այդպես չէ:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ նա չէր պահանջում կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքներ, քվեարկելու իրավունք և այլն, հավանաբար գիտակցելով, որ հասարակությունը դեռևս չի հասունացել այսպիսի արմատական փոփոխությունների համար: Ավելին, նա անկասկած գիտակցում էր, որ կանայք ևս դեռ պատրաստ չէին ընդունել իշխանությունը և պատասխանատվություն վերցնել երկրի ճակատագրի համար: Սակայն նա պահանջում էր տղամարդկանց հետ հավասար հնարավորություններ կանանց զարգացման համար, ինչը հիմքեր կստեղծեր նրանց մոտ քաղաքացիական գիտակցության ձևավորման համար: Սրա հիմնական նախապայմանները հեղինակը համարում էր կրթությունը և նյութական անկախությունը, ինչի համար նախատեսում էր ստեղծել դպրոց կորսիկացի կանանց համար, ինչը ակնհայտորեն իր պատկերացմամբ պետք է դառնար անձնական ազատության ճանապարհին առաջին քայլը: Կնոջ նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի մասին դատողությունը, ասպետությունը, նա համարում էր կեղծ և կարծում, որ կանանց պետք է ներկայացնել նույն պահանջները ինչ տղամարդկանց: Կանանց նկատմամբ ասպետական վերաբերմունքը շեշտադրում էր նրանց թուլությունը և խոցելիությունը: Ինչպե՞ս կարելի է վստահել պետության կառավարումը թույլերին, ովքեր հենց իրենք կարիք ունեն պաշտպանության և խնամքի:

---

pp. 219-373; Volume V (1771), pp. 95-351; Volume VI (1781), pp. 65-298; Volume VII (1781), pp. 10-135; Volume VIII (1783), pp. 100-400.



### **Էլյա ԴԻԱՍՅԱՆ**

#### **Քեթրին Մաքաուլեյի գեղեցիկ հայացքների առանձնահատկությունները հանրապետական կառավարման համակարգի շրջանակներում**

*Բանալի բառեր. հասարակություն, կրթություն, քաղաքացիական իրավունքներ, հանրապետություն, ընտրելու իրավունք*

Մաքաուլեյի գեղեցիկ հայացքները ունեն բազմաթիվ առանձնահատկություններ, սակայն հատկապես կարևոր են երկուսը: Առաջինը կապված է հանրապետական կառավարման մոդելի շրջանակներում քաղաքացիների աստիճանակարգության գաղափարի հետ: Յեղիակը այս մոդելի շրջանակ-ներում ընդգծում է հասարակության մեջ կանանց դիրքը և իրավունքները: Միաժամանակ մյուս առանձնահատկությունը կապված է կանանց կրթու-թյան հետ: Յեղիակը մեծ կարևորություն է տալիս կրթությանը և վերջինիս դրական ազդեցությունը կանանց գիտակցության վրա՝ մատնանշելով հասարակության մեջ նրանց դիրքը:

### **Elya GHIASYAN**

#### **Peculiarities of gender views of Catharine Macaulay**

*Key words: society, education, civil rights, republic, the right to vote*

Macaulay's gender views have various peculiarities, but two are especially important. Specifically, the first one is related to the idea of citizens' hierarchy in the frameworks of the republican governing model. In the frameworks of this model, the author emphasizes the role and the rights of women in a society. At the same time, the other characteristic is related to the education of women. The author specifies the importance of education and its positive impact on women's consciousness indicating their role in society.

### **Эля ГИАСЯН**

#### **Особенности гендерных взглядов Катарини Макаулей**

*Ключевые слова: общество, образование, гражданские права, республика, право голоса*

Гендерные взгляды Макаулей имеют много особенностей, но особенно важны два. Первая связана с идеей иерархии граждан в рамках республиканской модели правления. В рамках этой модели, автор подчеркивает место и права женщин в обществе. Одновременно другая особенность связана с образованием женщин. Автор большое значение придает образованию и его положительному влиянию на сознание женщин указывая их положение в обществе.

## ИССЛЕДОВАНИЕ ВЗАИМОСВЯЗИ ОСОБЕННОСТЕЙ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ, ИНТЕЛЛЕКТА И ПРОФЕССИОНАЛЬНЫХ ПРИЗНАКОВ

**Марат ДУРЯН**

Соискатель Государственной академии управления РА

Ключевые слова: принятие решений, интеллект, профессиональные признаки, копинг стиль, поведение

Разработанность проблемы психологических особенностей принятия решений в хронологическом и методологическом аспектах имеет сложный и многогранный характер. Исследования в основном сконцентрированы на оптимальности процесса принятия решений, которая представляет собой совокупность средств и методов, ориентированных на нахождение наиболее адекватных вариантов из определённого количества допустимых альтернатив и вариантов. Проблема различных особенностей принятия решений актуальна практически во всех сферах деятельности человека (учёба, управление, маркетинг, спорт и т.п.) и, соответственно, во всех случаях от оптимальных решений зависит конечный результат деятельности. Помимо основных психологических факторов, обуславливающих уровень оптимальности принятия решений, подчёркиваются не менее важные, которые связаны с ситуацией и условиями деятельности.

Оценка различных параметров деятельности в условиях неопределённости во многом обусловлена продуктивностью принятия решений, которые связаны как с интеллектуально-личностным, так и с эмоционально-волевым потенциалом. Т.В. Корниловой предложена мультипликативная модель принятия решений, которая состоит из трёх следующих основных умозрительных «осей»: интеллектуальной ориентировке, личностным свойствам, выраженности новообразований, характеризующих уровень актуалгенеза решений, или выборов, со стороны вкладов интеллектуально-личностных усилий [7]. Формализация рассуждений в рамках квазиаксиоматической теории дает возможность уточнить феномен правильности (или корректности) рассуждения посредством критерия достаточного основания принятия заключения правдоподобного рассуждения [5]. Полидисциплинарная теория принятия решений, основанная на изучении закономерностей выбора при решении задач и проблем. Условия повышения степени правдоподобия выводов по аналогии[3].

В конкретном случае при выборе теоретико-методологического подхода мы исходили из концепции предложенной Р. Солсо по проблеме принятия решений, основанной на индуктивном рассуждении, “реалистичности”, аргументации, репрезентативности и оценке вероятностей [10]. Так же теоретические предпосылки исследования связаны со следующими подходами: формализация рассуждений в

квазиаксиоматической теории, (Б. Кобринский, 2001) полидисциплинарная теория принятия решений, основанная на изучении закономерностей выбора при решении задач и проблем (Н. Воробьев, 1963) [3], подходе о причинно-следственных отношениях событий влияющих на принятие решений (А. Michotte, 1963). В процессе теоретического анализа по исследуемой проблеме были выделены работы, которые акцентировали внимание на особенностях принятия решений связанных с риском, а именно, философский [4], социологический [2] и психологический подходы [7].

Современный этап развития теории принятия решений даёт толчок к развёртыванию новых перспективных направлений исследований, имеющих не только теоретическую, но и прагматическую составляющие. В экспериментальных исследованиях, как правило, используется комплекс методик с целью выявления связи между спецификой принятия решений и личностными особенностями. Так, например в одном из исследовательских комплексов были включены тест «определения уровня развития рефлексивности», методику «личностные факторы принятия решений», шкалу SACS «Стратегии преодоления стрессовых ситуаций» и тест «Опросник принятия решения ЛПР» [9].

Цель данного многоэтапного исследования предусматривала анализ методологических подходов к исследованию особенностей принятия решений, адаптацию на армянский язык и апробацию методики МОПР, а так же сравнение показателей тестирования. На основании анализа многочисленных экспериментальных исследований для этого был выбран Мельбурнский опросник принятия решений (MDMQ).

Процесс адаптации теста проводился в соответствии с основными положениями, которые приняты в современной психодиагностике. Выбор участников экспериментальной работы осуществился по принципу идентичности с аналогичными исследованиями. Так, в исследовании приняли участие студенты-юристы, оперативные работники (следователи) и контрольная группа (квалифицированные сотрудники научных и учебных организаций). Оценивались сходства и различия по полу, возрасту и соответствующим группам. В последующем проводился анализ психометрических свойств опросника и установленных коэффициентов достоверности различий. Предположение о стилях принятия решений и соответствия оценочных шкал проверялось методом сравнительного анализа и экспертного опроса, в котором участвовало восемь психологов, стаж профессиональной работы которых превышал десять лет.

Процесс адаптации опросника предусматривал двусторонний перевод, лингвистическую экспертизу терминов и словосочетаний, экспертный опрос, пилотажное тестирование и статистическую обработку сравнительных данных. Про-

цесс перевода состоял из этапов сравнения с русской версией опросника [7] и с английским оригиналом [11].

Авторы теста при оценке особенностей принятия решений и их личностной регуляции, выбрали такие переменные, как бдительность, избегание, сверхбдительность и прокрастинация. В целом совокупность этих свойств рассматривается авторами как стиль принятия решений. Исследования Т.В. Корниловой показали, что индивидуальные особенности принятия решений, диагностируемые с помощью Мельбурнского опросника, оказались не связанными с IQ, но связанными с эмоциональным интеллектом человека. В нашем исследовании, была использована методика Равена, выявляющая логический компонент мышления. Выбор данного теста был обусловлен тем обстоятельством, что дифференцированность когнитивного опыта, связанна с такими особенностями интеллекта, как когнитивная сложность и вербальная компетентность личности[8]. Предполагалось, что все эти особенности влияют на эффективность принятия решений в сложных условиях деятельности.

После обобщения результатов экспертного опроса и формирования окончательной формы изложения утверждений было проведено тестирование выбранных респондентов. Результаты статистического анализа групповых показателей копинг стратегий поведения в представленных ситуациях были сопоставлены с аналогичным исследованием. В этом случае был выбран русскоязычный вариант, который наиболее близок с социально-культурными особенностями армянской молодёжи. Рациональность как готовность к обдумыванию решений была связана со шкалами опросника противоречивым образом, как и готовность к риску, получившая отрицательные связи со всеми его шкалами.

Далее было проведено сравнение показателей, которое предполагало сверку нормативов методики для экспериментальной и контрольной групп. Показатели тестирования студентов имели следующую выраженность: бдительность –  $\bar{x}_1 = 13.5$ ,  $\bar{x}_2 = 15.0$ ; сверхбдительность –  $\bar{x}_1 = 4.5$ ,  $\bar{x}_2 = 11.5$ ; избегание –  $\bar{x}_1 = 11.5$ ,  $\bar{x}_2 = 9.5$ ; прокрастинация –  $\bar{x}_1 = 9.5$ ,  $\bar{x}_2 = 11.0$ . Различия между однородными показателями в трех случаях не превышала 3.0 баллов по шкале методики и не выявила статистически достоверно значимой разницы. Это свидетельствовало об относительно адекватном восприятии специфических рисков при принятии решений. И только в одном случае обнаружена достоверная разница, при непродуктивной стратегии – свехбдительность (при  $P < 0.001$ ). Данную особенность подтвердил в последующем проведённый корреляционный анализ, показатели которого имели следующую выраженность и корреляционную значимость: бдительность –  $r = 0,58$  ( $P < 0.01$ ); избегания -  $r = 0,45$  ( $P < 0.05$ ); прокрастинация  $r = 0,56$

(при  $P < 0.01$ ). Статистический показатель сверхбдительности значимой корреляционной связи не выявил.

В результате статистического анализа результатов тестирования были выявлены определённые закономерности выраженности тех или иных характерологических особенностей принятия решений для студентов. Наиболее значимые связи обнаружены по двум показателям, а именно, бдительность и прокрастинация. Это позволяет сделать заключение о том, что эти два профиля являются более устойчивыми для мужчин и женщин. Так же необходимо иметь ввиду то, что опросник ориентирован на выявление основных паттернов совладания со стрессом, связанным с принятием сложных и угрожающих решений у лиц с уже устоявшимися стратегиями. Однако, большая часть респондентов в данном исследовании студенты, находящиеся еще в стадии самоопределения, что также могло сказаться на полученных результатах [7].

Предполагается так же, что при прохождении тестирования большая часть участников ориентировалась на идеализированную модель стиля поведения в неопределённой ситуации выбора, принятия решений, что может не соответствовать с их поведением в реальных условиях, которое свойственно данной личности. Данное обстоятельство требовало проверку с помощью тестирования, дополненного методикой репертуарные решётки Равена, а так же соблюдения половой однородности выборки. Полученные данные также сравнивались с результатами других исследований, в которых рассматривались особенности принятия решений в различных ситуациях. В исследовании Д. Айрапетяна, в котором участвовали так же студенты, были применены бинарные задачи в условиях индивидуальной и групповой работы. Обнаружено, что динамика предпочтений зависит от стиля принятия решений [1, с.192]. По результатам другого исследования выявлено, что восприятие риска для жизни и здоровья у представителей экстремального вида деятельности опосредуется интеллектуально-личностными свойствами. Субъекты воспринимает риск посредством когнитивных репрезентаций и личностных особенностей, так как они обладают специфической структурой этих свойств [6].

Сравнительный анализ показателей принятия решений по критерию достоверности выявил некоторые различия, которые в определенной степени соответствуют, а в некоторых случаях противоречат аналогичным исследованиям. Рассмотрим результаты статистического анализа, проведенного по психологическим показателям тестирования трех групп. По показателю бдительность представители взрослых групп, а именно, следователей и контрольной группы превосходили студентов ( $X_1 = 15,25$ ;  $X_2 = 15,43$ ;  $X_3 = 11,05$ ). По показателю прокрастинация обнаружена обратная закономерность, а именно, студенты имели более высокие показатели по сравнению со следователями и контрольной группой ( $X_3 = 11,2$ ;  $X$

$x_1 = 7,48$ ;  $x_2 = 8,54$ ). По параметру сверхбдительности среднестатистические показатели имели последовательную закономерность, а именно, контрольная группа выше, чем следователи, а следователи выше, чем студенты ( $x_2 = 9,03$ ;  $x_1 = 7,15$ ;  $x_3 = 5,67$ ). По показателям избегание межгрупповых различий не обнаружено. Ранее в исследованиях авторами отмечалось, что отсутствуют данные о связях шкал МОПР с показателями интеллекта. В данном исследовании применялась тестовая батарея ROADS, которая выявляет академический и практический интеллект. *В отличие от указанного исследования нами было выдвинуто предположение о роли логического компонента интеллекта в процессе принятия решений.* При обработке результатов тестирования по методике Равена суммарный показатель индивидуальных решений по стандартной таблице был переведён в проценты. Согласно интерпретационной шкале различались 4 степени интеллектуального уровня: высокий интеллект (95%), интеллект выше среднего (75-94%), средний интеллект (25-74%) и ниже среднего (5-24%). Среди представителей нашей выборки пятой степени (ниже 5%) выраженности не было обнаружено. При анализа суммарной выраженности по интеллекту обнаружено, что наиболее высокий коэффициент соответствовал представителям контрольной группы ( $x_2 = 118,3$ ), а наименьший студентам ( $x_3 = 102,8$ ). Достоверные различия обнаружены между среднестатистическими показателями 1-ой и 2-ой, и 2-ой и 3-ей группами (при  $P \leq 0,05$ ).

Исследования Т. Корниловой при диагностике по методике МОПР выявили отсутствие различий по половому признаку, которые также связаны с профессиональной специализацией. По этой причине мы обратились к сравнению по возрастным признакам и опытом профессиональной деятельности, а именно, стажу работы оперативного характера (юристы - следователи и студенты). Для проверки данного предположения был проведен корреляционный анализ результатов тестирования всей выборки ( $n=132$  чел.). После анализа статистической программы SPSS выявлены определенные закономерности, а именно, показатель возраста положительно коррелирует с бдительностью, сверхбдительностью в принятии решений и интеллектом. И только в одном случае показатель возраста отрицательно связан с параметром прокрастинации, который интерпретируется как промедление или затягивание. Показатели интеллекта положительно коррелируют с бдительностью и избеганием, а с прокрастинацией так же связаны отрицательно.

Обобщение результатов сравнительного исследования свидетельствуют о том, что они преимущественно реплицируют данные, полученные в независимых группах российской выборки, что свидетельствует о надёжности полученных результатов, а также экстраполирует данные паттерны принятия решений на армянский контингент. Следовательно, адаптированный вариант опросника в

сочетании с методикой Равена может применяться в дальнейших исследованиях, связанных с особенностями принятия решений в неопределённых и рискованных ситуациях. Сравнительный анализ по показателям методик МОПР и Равена выявил определённые особенности по возрастным признакам и опытом профессиональной деятельности, а именно, стажу работы оперативного характера связанного с условиями неопределённости и риска.

- [1] Айрапетян Д. Р., Эбоян А. К. Личностные предпосылки принятия решений в индивидуальной и групповой работе // Материалы межд. конференции «Современные проблемы теоретической и прикладной психологии». - Ереван, ЕГУ, 2011, С. 391-393
- [2] Альгин А.П. Риск в предпринимательстве. - СПб.: Лань., 2002. - 250 с.;
- [3] Воробьев, Н. В. Умозаключение по аналогии: лекция. М.: Изд-во МГУ, 1963. - 26 с.
- [4] Диев В. С. Риск в междисциплинарном контексте: концептуальные основания анализа и оценки // Вестник Рос. гуманитар. фонда. 2006. Т. 4 (45). С. 85–91.
- [5] Кобринский Б.А. Логика аргументации в принятии решений в медицине //НТИ, сер. 2, N 9. С. 1-8.
- [6] Краснорядцева А. И. Отношение к риску у лиц, имеющих разный опыт занятий дайвингом // Материалы VI Межд. конф. молодых учёных «Психология – наука будущего», М.: Изд-во «ИП РАН», 2015. С. 212-215
- [7] Корнилова Т. В. Психология риска и принятия решений: Учебное пособие для вузов / М.: Аспект Пресс, 2003. - 286 с.
- [8] Прогрессивные матрицы Равена: методические рекомендации /Сост. и общая ред. О.Е. Мухордовой, Т.В. Шрейбер. Ижевск: Изд-во «Удмур. Ун-та», 2011. – 70с.
- [9] Санников А.И. О соотношении рефлексивности и параметров принятия решения// Science and Education a New Dimension. Pedagogy and Psychology, II(8), Issue: 16, 2014, p. 173-177
- [10] Солсо Р. Когнитивная психология. 6-е изд. - СПб.: Питер, 2006. - 589 с.
- [11] Mann L., Burnett P., Radford M., Ford S. The Melbourne Decision Making Questionnaire: An instrument for measuring patterns for coping with decisional conflict. Journal of Behavioral Decision Making, 1997, 10(1), p.1-19.

**Марат ДУРЯН**

**Исследование взаимосвязи особенностей принятия решений, интеллекта и профессиональных признаков**

*Ключевые слова: принятие решений, интеллект, профессиональные признаки, стиль, копинг, поведение*

Многоэтапное исследование предусматривало анализ методологических подходов к исследованию особенностей принятия решений в сложных условиях деятельности, а так же адаптацию армянского варианта Мельбурнского опросника принятия решений, сравнение показателей тестирования по признакам специальности, возраста и стажа профессиональной деятельности. Рассмотрены так же показатели исследования стиля принятия решений и интеллекта в различных группах.

**Marat DURYAN**

**Research of interrelation of features of decision making, intelligence and professional basis**

*Key words: decision-making, intelligence, professional basis, style, coping, behavior*

Multistage study involved analysis of methodological approaches to the study of features of decision making in a complex activity, as well as the adaptation of the Armenian version of the Melbourne questionnaire decision, the comparison test parameters on the basis of profession, age and the experience professional activity. The indicators of the study of the style of decision making and intellect in different groups are also considered.

**Մարատ ԴՈՒՐՅԱՆ**

**Որոշման ընդունման, ինտելեկտի և մասնագիտական հատկանիշների կապերի հետզոտություն**

*Բանալի բառեր. որոշումների ընդունում, ինտելեկտ, մասնագիտական հատկանիշներ, հաղթահարման ոճ, վարք*

Սույն հետզոտությունը նարառում է գործունեության բարդ պայմաններում աշխատող մասնագետների որոշումների ընդունման առանձնահատկությունների ուսումնասիրություն, այդ հիմնահարցի վերաբերյալ մեթոդաբանական մոտեցումների վերլուծություն: Նաև որոշումների կայացման ցուցանիշների հարմարման և համեմատական վերլուծությունը ըստ որոշումների կայացման Մելբուրնյան հարցադարանի (MDMQ) հայկական տարբերակի: Զննարկվել և համեմատվել են տարբեր խմբերում որոշումների կայացման ոճերի ուսումնասիրության ցուցանիշները:



**ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐՆ ՈՒ  
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**Անդրանիկ ՈՍԿԱՆՅԱՆ**

ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. «երկար փողեր», ֆինանսական ռիսկերի վերաբաշխում, ակտիվներով ապահովագրված արժեթղթեր, հիփոթեքային վարկերի արժեթղթավորում

*Գործնականում կարող եք արժեթղթավորել ամեն ինչ: Եթե կան դրամական հոսքեր, ապա արժեթղթավորեք այն: դոկտոր Հանս Փիթեր Բերի*

Ակտիվների արժեթղթավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում դիտարկվում է համեմատաբար նոր ֆինանսական գործիք, միևնույն արևմուտքում այն տասնամյակների պատմություն ունի և ուրույն գործառույթներ է իրականացնում տնտեսության ակտիվացման գործընթացում: Մասնագիտական գրականությունում ակտիվների արժեթղթավորմանը անվանում են նաև «սեքյուրիթիզացիա», որն առավելապես փոխառնչվում է ոչ թե ապահով ելքով տնտեսական գործարքների՝ այլ պարզապես անգլերեն արժեթղթեր (securities) տերմինի հետ:

Որպես կանոն, ակտիվների արժեթղթավորումը դիտարկվում է որպես տնտեսավարման համակարգում «երկար փողերի ապահովման գործընթաց», որն ուղղորդվում է տնտեսական գործունեության ակտիվացմանը<sup>53</sup>: Մեր կարծիքով, այդ բնորոշումը պետք է լրացնել, շեշտելով նաև, որ ակտիվների արժեթղթավորումը թիրախավորվում է հիմնականում «պասիվ» փողերի ակտիվացմանը, երբ դանդաղ իրացվելի ակտիվները տեղափոխվում են արագ իրացվելիության դաշտ, դրանով իսկ ակտիվություն հաղորդելով տարբեր ոլորտների տնտեսական գործունեությանը: Իսկ պասիվ փողերի առկայությունը բնորոշ չէ միայն բանկային համակարգին, որի ավանդական տեսակներից են հիփոթեքային վարկային տեղաբաշխումները: Ֆակտորինգային, լիզինգային ընկերությունները, անգամ շինարարական և արտադրական կազմակերպությունները նույնպես ձևավորում են երկարաժամկետ դեբիտորական պարտքեր, որոնք ըստ էության պասիվ փողեր են ընդգրկում և արժեթղթավորման դեպքում կարող են «ակտիվանալ» և լուրջ ազդակ հանդիսանալ ձեռնարկատիրության ընդլայնման ու մրցունակության բարձացման գործում: Փաստորեն, պասիվ փողերը կամ դանդաղ իրացվող ակտիվները արժեթղթավորման միջոցով փոխակերպվում են ա-

<sup>53</sup> Մամիկոնյան Ա., Հավաքական (սինդիկացված) վարկերի տրամադրման համաշխարհային փորձի օգտագործումը ՀՀ-ում, Բանբեր ՀՊՏՀ, 2 (26), 2012 էջ 67 (64-76)

րագ իրացվող ակտիվների, որոնք մասնագիտական գրականությունում<sup>54</sup> հիմնականում ներկայացվում են երեք ուղղություններով.

- հիփոթեքային վարկերի արժեթղթավորում,
- ֆինանսական ակտիվների արժեթղթավորում,
- դրամական ապագա հոսքերի արժեթղթավորում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ակտիվների արժեթղթավորման գործընթացում առավել մեծ տեսակարար կշիռ են զբաղեցնում հիփոթեքային վարկերի գծով կատարվող բանկային տեղաբաշխումները, սակայն ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամից հետո գործարար միջավայրում հիփոթեքային վարկերի արժեթղթավորման տեսակարար կշիռն սահանջի միտում է նկատվում, փոխարենը ակտիվություն արձանագրելով դրամական ապագա հոսքերի արժեթղթավորման ոլորտում<sup>55</sup>: Ընդհանուր առմամբ, հիփոթեքային վարկերի արժեթղթավորումն է մասնագիտական գրականությունում հիմնականում ներկայացվում որպես «սեքյուրիթիզացիայի» դասական օրինակ, երբ 15-20 տարով գրավադրված անշարժ գույքի դիմաց դեբիտորական պարտքերը ներկա պահին փոխակերպվելով արժեթղթերի, վաճառահանվում են և տարբեր ֆինանսական սխեմաներով նորից ուղղորդվում բանկային համակարգ, ակտիվացնելով վարկային ինտերվենցիան, ի դեպ, որի ոչ արդյունավետ կառավարումն էլ հենց հանգեցրեց ֆինանսատնտեսական ճգնաժամի և շղթայական էֆֆեկտ ունեցավ հիփոթեքային վարկերի շուկայում<sup>56</sup>:

Սակայն, որքան էլ որ քննադատության արժանանան ֆինանսական փուլիկների ձևավորման ռիսկեր պարունակող հիփոթեքային ակտիվների արժեթղթավորման գործընթացները, միևնույնն է, դրանց արդյունավետ կառավարման դեպքում բանկերը հաղթահարում են մի շարք կարևորագույն խնդիրներ: Այսպես, արժեթղթավորման գործընթացը օգնում է առևտրային բանկերին լուծելու իրացվելիության հետ կապված խնդիրներ: Դանդաղ իրացվելի ակտիվների փոխակերպումը արժեթղթերի, բանկերը անմիջապես ներգրավվում են պարտատոմսերի վաճառքից դրամական միջոցներ և դրանք վերաուղղում առավել շահութաբեր, հնարավորինս ոչ ռիսկային վարկավորման ոլորտներ: Այս ճանապարհով լուծվում է նաև առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ապահովման խնդիր-

<sup>54</sup> Սալմազարյան Ա., Մամիկոնյան Կ., Բանկային ակտիվների արժեթղթավորումը որպես ՀՀ կապիտալի շուկայի ակտիվացման և երկար փոխերի ձևավորման նախապայման, Ֆինանսներ և էկոնոմիկա 2 (164), 2014, էջ 13 (12-15)

<sup>55</sup> US Securitization 2016: Year in Review, Part 1, Securitization Market Trends

<sup>56</sup> Финансовые пузыри и мировой финансового -экономический кризис, М., Финансы, 2013, стр.26-27

րը, քանի որ իրենց հաշվեկշռից դուրս գրելով ռիսկային հիփոթեքային վարկերը, բանկերը բարելավվում են ռիսկով կշռված ակտիվների որակական կազմը և դրանով նաև՝ սահմանված նորմատիվի նկատմամբ կապիտալի համարժեքության փաստացի ցուցանիշը: Դրանով, առևտրային բանկերը հնարավորություն են ձեռք բերում կատարելու լրացուցից վարկային տեղաբաշխումներ<sup>57</sup>:

Այսպիսով, առևտրային բանկերը գործնականում իրականացնում են լրացուցիչ շահույթի ստացման հնարավորություններ մի քանի ուղղությամբ: Նախ, ակտիվների արժեթղթերի վաճառքից ստացված գումարները տեղաբաշխվում են առավել բարձր տոկոսադրույքներով, քան մարվող արժեթղթերի տոկոսներն են: Բացի այդ, բանկերը լրացուցիչ տոկոսներ են ստանում հիփոթեքային վարկի սպասարկման դիմաց: Այստեղ նաև ձևավորվում են “եժան” փողեր, քանի որ որքան մեծանում է ակտիվով ապահովված արժեթղթավորման հիմնավորվածության երաշխիքների աստիճանը, այնքան նվազում է արժեթղթի տոկոսային դրույքը, որը շատ դեպքերում առավել ցածր է լինում միջբանկային վարկավորման դրույքաչափից<sup>58</sup>: Եվ վերջապես, ակտիվների արժեթղթավորմամբ իրականացվում է ֆինանսական ռիսկերի դիվերսիֆիկացիա և վերաբաշխում՝ գործարքին մասնակցող առավել լայն շրջանակի մասնակիցների միջև (բանկերից բացի՝ ներդրողներ, ապահովագրական, ընկերություններ, թրասթներ): Այս պարագայում, դիվերսիֆիկացվում են նաև փոքր բանկերի վարկային պորտֆելները, որը նրանց հաճախ չի հաջողվում լոկալ վարկային շուկաներում: Դրանով, փոքր բանկերին հնարավորություն է ստեղծվում երկարատև վարկային տեղաբաշխումների արժեթղթավորման և վաճառքից ստացած դրամական ներգրավումների ճանապարհով ստանալ տարբեր ուղղություններով կարճամկետ տեղաբաշխումների հնարավորություններ<sup>59</sup>: Սակայն, գործնականում բանկային ակտիվների արժեթղթավորումը տնտեսական իր առավելություններով (տես գծապատկեր 1) կրում է ֆինանսական ռիսկեր և ֆինանսական փուլիկների ձևավորման սպառնալիքներ, եթե չի գտնվում արդյունավետ կառավարման համակարգում: Առաջին հերթին, այն հնարավորություն է ստեղծում անորակ վարկերը “փաթեթավորելու” վարկանիշավորման ոչ համարժեք բարձրակարգ գնահատականներով և որպես արժեթղթավորված ակտիվ՝ շուկայում վաճառահանե-


<sup>57</sup> Рачкевич А., Алексеева И., Секьюритизация: характерные признаки и определения, Денги и Кредит #8, 2008, стр24 (22-31)

<sup>58</sup> Некторов А., Философия секьюритизации активов, Рынок ценных бумаг, #1, 2017, стр 53.

<sup>59</sup> Киселева М., Классификация субъектов секьюритизации активов и их роли в сделке.

Экономические выгоды секьюитизации для участников сделки. // Современная наука: актуальные проблемы теории и практики. Серия “Экономика и право”, # 2-2012, стр 17-22

լու անհիմն բարձրացված գներով, որն ի դեպ շղթայաբար վերավաճառների փուլ է անցնում և ավելի է խորացնում անապահով արժեթղթերի վաճառքի ռիսկայնությունը:



**Գծապատկեր 1.** Ակտիվների արժեթղթավորման տնտեսական դրական ազդակները բանկային համակարգում<sup>60</sup>

Բացի այդ, նմանատիպ ֆինանսական փուլիկների առաջացմանը նըպաստում է նաև արժեթղթավորված ակտիվների վաճառքին և դրան հետևող պարտատոմսերի ետգնմանը առնչվող դրամական հոսքերի անարդյունավետ կառավարումը, ներհոսքերի և արտահոսքերի ներդաշնակության խախտումները, որոնք հանգեցնում են պարտատերերին անվճարունակության: Արդյունքում, ձևավորվում են համակարգային ֆինանսական ռիսկեր և առիթ տալիս ֆինանսատնտեսական ճգնաժամային իրավիճակների, որոնք կարող են անգամ համաշխարհային բնույթ ստանալ, ինչը որ եղավ 2007-2010 թվականներին և սկսվեց հենց հիփոթեքային վարկերի շուկայի ներդաշնակության խախտումներից:

Այս առումով, Հայաստանի Հանրապետությունում դեռևս զգուշավորություն է ցուցաբերվում հիփոթեքային վարկերի արժեթղթավորման գործընթացին: Այսպես, միայն 2015 թվականի դեկտեմբերի 15-ին տեղի ունեցան ակտիվների արժեթղթավորում՝ հատուկ ստեղծված «Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ 1»-ի կողմից: Այդ ակտիվների

<sup>60</sup> Կազմվել է մասնագիտական գրականությունում առկա մեկնաբանումների հիման վրա:

պորտֆելով համախմբված արժեթղթերը (asset-backed securities - ABS) ապահովված էին կանխիկ դրամական միջոցների հոսքերով, որոնք ստացվում էին օրիգինատորներին մոտ գործող ակտիվներից: “Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամ 1”-ը կազմավորվեց 55% ԱՄՆ դոլարով և 45% ՀՀ դրամով ակտիվներից, ձևավորելով պորտֆելը հայաստանյան՝ “CARD Agro-credit”, “Գառնի Ինվեստ”, “Global Credit”, “Կամուրջ” և “Նոր Հորիզոն” ունիվերսալ վարկային ընկերությունների կողմից: Ակտիվների պորտֆելը ՀՀ դրամով կազմեց 495.8 մլն դրամ: ABS-ն ապահովվեց վարկերի պորտֆելի ակտիվներով, որոնք ուղղվեցին ագրոհատվածի (36%), ՓՄՁ (25%) և սպառողական վարկերի (39%) ֆինանսավորմանը: Մեկ վարկի միջին չափը կազմեց 1.6 մլն դրամ: Պորտֆելը միավորեց 298 վարկ: Մարման միջին ժամկետը (ոյուրացումը) կազմեց է 21 ամիս, ֆիքսված տոկոսադրույքը՝ տարեկան 22.04%<sup>61</sup>:


Այսպիսով, արժեթղթավորումը նախատեսվեց մինչև \$5 մլն պարտատոմսերի համար, որից ներդրողների կապիտալում ունեցած հնարավոր կորստի 50%-ը երաշխավորվեց է ԱՄՆ ՄՁԳ Չարգացման վարկային մարմնի կողմից: Թողարկվող պարտատոմսերի արժեքը ներառեց վարկերի մայր գումարը, ինչպես նաև տոկոսները<sup>62</sup>: Սակայն, դրան զուգահեռ, դեռևս ՀՀ-ում չձևավորվեց կայուն երաշխիքային այն ինստիտուցիոնալ համակարգը (թրասթներ, պարտատոմսերի ապահովագրումներ, ակտիվների արժեթղթավորում վարկանիշավորում), ուղղված ակտիվների արժեթղթավորման ֆինանսական ռիսկերի կանխարգելմանը:

Հիփոթեքային ակտիվների արժեթղթավորման գործընթացը դանդաղում է նաև ՀՀ վարկային շուկայում վերջին տարիներին նկատվող միտումների պատճառով: Հատկանշական է, որ միայն 2016 թվականին 2015 թվականի համեմատ, հիփոթեքային վարկերի կազմում չաշխատող վարկերի աճը կազմել է 19,9%<sup>63</sup>: Դրա հետ մեկտեղ, անշարժ գույքի շուկայի պասիվության պայմաններում առևտրային բանկերում դեռևս առկա է գրավադրված ակտիվների իրացվելիության բարձր ռիսկը: Ներկայումս գրավադրված գույքի վաճառահանման աճի տեմպերը գերազանցում են հիփոթեքային ակտիվների գծով տրամադրված վարկավորման աճին: ՀՀ առևտրային բանկերում, շահագործումից դուրս, վաճառքի համար պահվող և գրավ համարվող անշարժ գույքի ծավալների աճը (տես գծապատկեր 2) լուրջ խոչընդոտ է հանդիսանում հիփոթեքային ակտիվների արժեթղթավորման համար:

<sup>61</sup> Arminfo, [http://finport.am/full\\_news.php?id=23682&lang=1](http://finport.am/full_news.php?id=23682&lang=1)

<sup>62</sup> Banks.am [http://www.banks.am/am/news/capital\\_market/11670](http://www.banks.am/am/news/capital_market/11670)

<sup>63</sup> ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2016թ. էջ 25



**Գծապատկեր 2.** ՀՀ առևտրային բանկերում շահագործումից դուրս, վաճառքի համար պահվող անշարժ գույքի ծավալները (մլրդ դրամ)<sup>64</sup>


Արդյոք կարող ենք փաստել, որ շվեցարացի գիտնականի “արժեթղթաձևավորեք ամեն ինչ, եթե կան դրամական հոսքեր” եզրահանգումը՝ տնտեսության ակտիվացման նպատակով ՀՀ-ում չի կարող արդյունավետ գործել և անգամ ֆինանսական կայունության խաթարման լուրջ ռիսկեր է պարունակում: Կարծում ենք, այս պահին ակտիվների արժեթղթավորումից բխող իրոք նման ֆինանսական սպառնալիքներ և մտահոգություններ կան, սակայն դրանք կարող են չեզոքացվել, եթե հանրապետությունում օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումների միջոցներ ձեռնարկվեն արժեթղթավորման ֆինանսատնտեսական ակտիվության բարելավման մի շարք ուղղություններով (տես գծապատկեր 3): Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, ակտիվների արժեթղթավորման ակտիվության բարելավման գործընթացին ՀՀ-ում անհրաժեշտ է ցուցաբերել համալիր մոտեցում, լուծելով օրենսդրական, կանոնակարգային և ֆինանսատնտեսական մոտիվացիոն խնդիրներ: Այսպես, դեռևս 2008 թվականին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում ներկայացվում են ներդրումային ծառայությունների մատուցման դրույթները<sup>65</sup> սակայն զուգահեռաբար այնտեղ իրենց մեկնաբանումները չեն ստանում ակտիվների արժեթղթավորման գործընթացների կարգավորման գործընթացները: Ավելին, արժեթղթային շուկայի կարգավորման գործառույթները մեկնաբանելիս, ակտիվներով ապահովված արժեթղթերի ձեռքբերման մասնակցությունը՝ օրենսդրական քննարկում չի անցնում: Թերևս, “Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին” ՀՀ օրենքում<sup>66</sup> նշված

<sup>64</sup> ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական կայունության հաշվետվություն, 2016թ. էջ 25

<sup>65</sup> Արժեթղթերի շուկայի մասին՝ ՀՀ օրենքը, բաժին 3, բաժին 4 11.10. 2007

<sup>66</sup> Ակտիվների արժեթղթավորման և արժեթղթերի մասին ՀՀ օրենքը, 25.05 2008

հարցադրումները իրենց օրենսդրական մեկնաբանումները ստանում են, սակայն ուշադրությունից դուրս են մնում ակտիվների արժեթղթավորման գործառնություններից բխող դրամական հոսքերի հավատարմագրված կառավարման, ակտիվներով ապահովված արժեթղթերի ապահովագրման կանոնակարգման հարցերը, որոնք չափազանց կարևորվում են ինչպես արժեթղթեր գնորդների, այնպես էլ թողարկողների շրջանում: Ավելին, սույն օրենքում նշվում է վաճառողի կամ սպասարկող բանկի մասնակցությունը արժեթղթավորման ենթակա ակտիվների հավաքագրման և արժեթղթավորման հիմնադրամին հանձնման գործառնությունում, սակայն այդ գործընթացի կանոնակարգումը դեռևս խորքային իր մեկնաբանումները չի ստանում հողվածում (3, կետ 1): Նույնը վերաբերում է արժեթղթավորման հիմնադրամի պարտավորություններին (գլուխ 2, հոդված 7), որոնք մեր կարծիքով, օրենքում առավել ընդգրկուն մեկնաբանումների կարիք ունեն: Ակտիվների արժեթղթավորման վերը նշված օրենսդրական կարգավորման հարցերի իրենց լուծումները նույնպես դեռևս չեն ստանում ոլորտին առընչվող ՀՀ-ում գործող այլ օրենքներում<sup>67</sup>:



**Գծապատկեր 3.** Ակտիվների արժեթղթավորման ակտիվության բարելավման հիմնական ուղղությունները ՀՀ-ում<sup>68</sup>

<sup>67</sup> Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենքը, 30.06.1996

Ներդրումային ֆոնդերի մասին ՀՀ օրենքը, 22.12.2010

<sup>68</sup> Կազմված է ակտիվների արժեթղթավորման ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտերի վերլուծության վրա:

Բացի այն, որ ակտիվների արժեթղթավորման օրենսդրական դաշտը դեռևս բարեփոխումների կարիք ունի, ներկայումս անհրաժեշտ է նաև այդ գործընթացի կայունության երաշխիքների տրամադրման ինստիտուցիոնալ համակարգի բարելավումը, որը ՀՀ-ում զգում են արժեթղթավորման գործընթացի բոլոր մասնակիցները (թողարկողները, ներդրողները, բանկերը, նախաձեռնողները): Միջազգային փորձը ցույց է տալիս, որ վաճառահանվող արժեթղթերը իրենց որակական գնահատականն են ստանում վարկանիշային կառույցների կողմից, որոնք մեծ դեր ունեն շուկայում արժեթղթերի առքուվաճառքի ժամանակ: Բացի այդ, արժեթղթի գծով գնորդների վստահության աստիճանը էականորեն բարձրանում է պարտատուների ապահովագրման պարագայում: Թերևս, 2015թ. ՀՀ-ում իրականացված ակտիվների արժեթղթավորման ռիսկերի 50%-ը երաշխավորվեց ԱՄՆ ՄԶԳ Չարգացման վարկային մարմնի կողմից, սակայն դա ընդամենը պիլոտային ծրագիր էր: Չեղարկված, կարծում ենք, որ ակտիվների արժեթղթավորման գործընթացը ՀՀ-ում զգալիորեն կակտիվանա, նրանում ապահովագրական, վարկանիշավորման կառույցների, դրամական հոսքերը կանոնակարգող թրասթային հիմնադրամների ընդգրկման պարագայում: Վերջին տարիներին ՀՀ-ում քայլեր են արվում ֆինանսական ակտիվների ներգրավման և արժեթղթավորման ուղղությամբ<sup>69</sup>, սակայն դրանք լիարժեք չեն անդրադառնում ակտիվների արժեթղթավորման գործընթացների համարժեք կանոնակարգմանը և դրան առնչվող վարչակառավարման համակարգի բարելավմանը: Վերջապես, ֆինանսատնտեսական շարժառիթը ևս կարևոր դեր ունի ակտիվների արժեթղթավորման ընդլայնման մասնակիցների շրջանակում, որը դեռևս ՀՀ-ում իրեն զգացնել չի տալիս: Արժեթղթավորման գործընթացներին մասնակից կողմերը մակերեսային տեղեկացվածություն ունեն գործարքների ֆինանսատնտեսական արդյունավետության, գրավադրված ակտիվների և դրանից բխող պարտավորությունների մարման իրատեսական գնահատումների մասին, որը բնավ չի շահադրդում նրանց առավել հուսալիորեն մասնակցելու արժեթղթերի առքուվաճառքի գործարքներին: Անհրաժեշտ ենք համարում նաև այդ ակտիվության բարձրացման նկատառումով պետության կողմից հարկային արտոնությունների սահմանումը ակտիվների արժեթղթավորման գործարքների տարբեր ոլորտների նկատմամբ, որը իր արտացոլումը պիտի ունենար Հարկային օրենսգրքում:

<sup>69</sup> Հրապարակային եղանակով դրամական միջոցների ներգրավման մասին պաշտոնական պարզաբանում, ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդ, 15.05.2012  
Իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման համակարգին և գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին. ՀՀ Կառավարության նիստի թիվ 47 արձանագրություն, 14 նոյեմբեր 2013



### **Անդրանիկ ՈՍԿԱՆՅԱՆ**

**Ակտիվների արժեթղթավորման նախադրյալներն ու խոչընդոտները ՀՀ-ում**  
*Բանալի բառեր. «երկար փողեր», ֆինանսական ռիսկերի վերաբաշխում, ակտիվներով ապահովագրված արժեթղթեր, հիփոթեքային վարկերի արժեթղթավորում:*

Ակտիվների արժեթղթավորումը արդյունավետ ֆինանսական գործիք է տնտեսական գործունեության աշխուժացման գործում, երբ ձևավորված “երկար փողերը” վերաորակավորվելով, ուղղորդվում են ներդրումային ոլորտներ: Սակայն, այդ գործընթացները պահանջում են ոչ միայն օրենսդրական կարգավորումներ և ենթաօրենսդրական հստակ ընթացակարգեր, այլև մասնակիցներին ուղղված շարժառիթային ազդակներ, որոնց ուղղությամբ ՀՀ-ում դեռևս համակարգային բարեփոխումների պահանջ է զգացվում:

### **Андраник ВОСКАНИЯН**

#### **Предпосылки и Препятствия Секьюритизации Активов в РА**

*Ключевые слова: «длинные деньги», перераспределение финансовых рисков, ценные бумаги застрахованными активами, секьюритизация ипотечных кредитов*

Секьюритизация активов является эффективным финансовым инструментом для активизации экономической деятельности, когда «длинные деньги» вкладываются в инвестиционную сферу. Однако эти процессы требуют не только законодательных подкреплений и подзаконных процедур, но и мотивирующих сигналов к участникам, по которым по-прежнему в Армении проявляется потребность осуществления совокупных реформ.

### **Andranik VOSKANYAN**

#### **The Prerequisites and Obstacles of Asset Securitization in RA**

*Key words: "long term money", redistribution of financial risks, securities of insured assets, securitization of mortgage loans*

Securitization of assets is an effective financial tool for activating economic activity, when "long term money" flows are oriented in the investment sphere. However, these processes require not only legislative reinforcements and subordinate procedures, but also motivating signals to participants, for which there is still a need for implementation of aggregate reforms in Armenia.


## ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ

### Լիլիթ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. ստվերային տնտեսություն, ինստիտուցիոնալ, հարկային բեռ, պետական վերահսկողություն

Ստվերային տնտեսություն հասկացությունը տնտեսագիտության առավել հայտնի և տարածված կատեգորիաներից մեկն է: Ստվերային տնտեսական գործունեությունը, որպես տնտեսական երևույթ, ի հայտ է եկել այն պահից սկսած, երբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներ կանոնակարգելու նպատակով ձևավորվեցին պետական կառավարման մարմինները: Հարկ է նշել, որ տնտեսական գործունեության այս տեսակն ունի լայն ընդգրկվածություն, որն էլ պատճառ է հանդիսացել այն բանին, որ ներկայումս տնտեսագիտության մեջ չկա այս երևույթի մեկ հստակ ձևակերպում: Այդ տարբերությունները պայմանավորված են նրանով, որ գոյություն ունեցող հետազոտություններից յուրաքանչյուրում՝ որպես հետազոտման ելակետ, ընդունվել են տարբեր հետազոտության օբյեկտներ, ինչպիսիք են ստվերային տնտեսության ծավալների գնահատման խնդիրները կամ ստվերային տնտեսական գործունեությանը մասնակցության շարժառիթները: Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն ստվերային տնտեսության սահմանման երկու մոտեցումներ, որոնք էլ առավել պատկերավոր ձևով արտացոլված են ստորև՝ գծապատկեր 1-ում.



**Գծապատկեր 1.** Ստվերային տնտեսության սահմանման մոտեցումները<sup>70</sup>

Այժմ համառոտ ներկայացնենք այս երկու մոտեցումների կողմնակիցների պատկերացումներն ուսումնասիրվող երևույթի վերաբերյալ: Առաջին

<sup>70</sup> Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից.

մոտեցման կողմնակիցներն են՝ Ջիմ Թովմասը, Ֆ. Շնայդերը, Դ. Էնեստը, Ֆիլիպ Սմիթը, Դ. Բհաթաքարյա<sup>71</sup> և այլոք: Համաձայն Ջ. Թովմասի. «Դժվար է տալ ստվերային տնտեսության ֆորմալ սահմանում» և ըստ նրա ստվերային տնտեսական գործունեությունն իր մեջ «ներառում է գործունեության այն տեսակները, որոնք չեն գրանցվում ազգային եկամտի հաշիվներում»<sup>72</sup>: Ֆ. Սմիթը սահմանում է այս ոլորտը որպես «շուկայական հիմունքներով ապրանքների և ծառայությունների օրինական կամ անօրինական արտադրություն, որը խուսափում է ՀՆԱ-ի պաշտոնական գնահատման մեջ արտացոլումից»<sup>73</sup>: Դ. Գիլսը և Լ. Տեդդերը ստվերային տնտեսությունը սահմանում են որպես «տնտեսական գործունեություն, որը չի գրանցվում ազգային հաշիվներում և դուրս է մնում հարկային բազայից»<sup>74</sup>:

Այլընտրանքային մոտեցումը գտնում է, որ ստվերային տնտեսական գործունեությունն առավել լավ սահմանվում է՝ ելնելով այն վարքաբանական բնութագրերից, որոնք ընկած են տվյալ գործունեության հիմքում: Այս ուղղության առավել հայտնի ներկայացուցիչներն են՝ Էդգար Ֆեյջը, Դե Սոոն, Լոայգան, Մ. Ֆլեմինգը, Ջ. Ռոմանը, Գ. Ֆարրելը և այլոք: Համաձայն Է. Ֆեյջի պաշտոնական տնտեսական գործունեության և ստվերային տնտեսական գործունեության միջև հիմնական տարբերությունն արտահայտվում է նրանում, թե որքանով է գործունեությունը ենթարկվում գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կանոններին: Այսպես, եթե գործունեությունը ծավալվում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ կանոններին համապատասխան, ապա այդպիսի գործունեություն ծավալող սուբյեկտը համարվում է պաշտոնական տնտեսության մասնակից: Իսկ այն դեպքում, երբ սուբյեկտ հակադրվում և խուսափում է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ միջավայրից, ապա դա ենթադրում է մասնակցություն ստվերային տնտեսությանը<sup>75</sup>: Համաձայն Մ. Ֆլեմինգի, Ջ. Ռոմանի և Գ. Ֆարրելի ստվերային տնտեսությունը սահմանվում է որպես «տնտեսական գործակալների վարքագծի որոշակի փոփոխություն՝ ի պատասխան ինստիտուցիոնալ սահմանափակումներին»: Համաձայն Դե Սոտոյի՝ ստվերային տնտեսության առկայությունն անցումային տնտեսու-

<sup>71</sup> Dilip K. Bhattacharyya, " On the Rational of Estimating the Hidden Economy ‘’, The Economic Journal, 109, no 456 (sane 1999), p. 2. (pp.2-4).

<sup>72</sup> Tomas Jim (1999). Quantifying the black economy: ‘ measurement without theory’ yet again? The Economic journal, 109 (June), p. 382. (pp.381-389).

<sup>73</sup> Smith Philip (1994) Assessing the Size of the Underground Economy: The Canadian Statistical Perspectives. Canadion Economic Observen, No. 11-010, 3. 18 March, p. 17.

<sup>74</sup> Gilles David E. A., Tedds Lindsay M. (2002). Taxes and the Canadion Underground Economy. Canadian Tax paper n. 106. Canadian Tax Foundaffon. Toronto, p. 4. (pp.4-7)

<sup>75</sup> Feige Edgard L. (1990). Defining and Estimating Underground and Informal Economics: The New Institutional Economic Approach. World Development, 18, no. 7, p. 993. (pp.989-1002)

թյան պայմաններում ցույց է տալիս այն<sup>76</sup>, որ «ավանդական կենտրոնացվածությունը, որը գոյություն ունի մեր հասարակության մեջ, պարզապես ունակ է բավարարելու այն հիմնական պահանջները, որոնց կարիքն ունի պետությունն անցման փուլում»<sup>77</sup>: Այսպիսով, ամփոփելով ստվերային տնտեսական գործունեության (ստվերային տնտեսություն) ընդհանուր բնութագիրը տվող սահմանումների ուղղությունները կարող ենք նշել, որ և՛ առաջին ուղղությունը, և՛ երկրորդ ուղղությունը հնարավորություն են տալիս առավել համապարփակ դիտարկել ստվերային տնտեսության էությունը: Մասնավորապես, եթե առաջին՝ բնութագրող մոտեցումը, հնարավորություն է տալիս պատկերացում կազմել ստվերային տնտեսության էության մասին, ապա երկրորդ՝ վարքաբանական մոտեցումը՝ այն շարժառիթների մասին, որոնք պատճառ են հանդիսանում ստվերային տնտեսական գործունեության ծավալման համար: Այլ կերպ ասած՝ այս երկու մոտեցումները ոչ այնքան հակասում, որքան լրացնում են մեկը մյուսին և դրանով իսկ մեղմացնում են այն բացերը, որոնք կան այս կամ այն մոտեցման մեջ ընդգծված սահմանումներում:

Ամփոփելով վերգրվածները, կարելի է եզրակացնել, որ ստվերային տնտեսությունը բազմաթիվ և բազմաբնույթ սոցիալ-տնտեսական երևույթների և գործընթացների մի ամբողջություն է, որոնց միավորում է դրանց անօրինական լինելը, գոյություն ունեցող ինստիտուցիոնալ միջավայրին հակադրվելու և ամեն կերպ հասարակական վերահսկողությունից դուրս մնալու ձգտումը: Ինչպես երևում է վերը նշված սահմանումից, ստվերային տնտեսությունը հանդիսանում է խիստ բարդ հետազոտվող օբյեկտ, որն էլ մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ ստվերային տնտեսության սահմանման, գնահատման և հետազոտման խնդիրն այսօր ևս արդիական է, ինչպես երեք տասնամյակ առաջ, երբ Արևմուտքում սկսեցին լրջորեն հետազոտել այն: Այժմ տեսնենք, թե ինչպիսի երևույթներ են պատճառ հանդիսանում ստվերային տնտեսության ձևավորման և զարգացման համար: Անդրադառնանք այդ պատճառներից մի քանիսին.


- Առաջին և հիմնական պատճառը հարկային բեռն է: Ինչպես ցույց են տալիս տարբեր հետազոտություններ, այլ հավասար պայմաններում հարկային դրույքաչափերի ավելացումը կամ նոր հարկատեսակների սահմանումը բերում է նրան, որ տնտեսվարող սուբյեկտներն ամեն կերպ ձգտում են խուսափել լրացուցիչ հարկային պարտավորություններից և գնալ ստվեր:
- Ստվերային տնտեսության աճին խթանող գործոն է հանդիսանում նաև պետական վերահսկողության աճը, որն ուղեկցվում է հասարակական կյանքի

<sup>76</sup> Fleming M. H., Roman S., Farrel G. (2000). The Shadow Economy. Journal of International Affairs, Spring 2000, p. 53, no. 2.

<sup>77</sup> Сото де Э. Иной путь. Невидимая революция в третьем мире. М., 1995, с.6.

այս ոլորտի կարգավորման օրենքների և սահմանափակումների ավելացմամբ: Վերահսկողության աճը բերում է տնտեսավարող սուբյեկտների գործարքային ծախքերի ավելացմանը, որն էլ պատճառ է, որ էլ ավելի շատ ջանքեր ներդնեն գործունեությանը ստվերային ոլորտ տեղափոխելու համար:

• Մեկ այլ գործոն է աշխատանքի շուկայում պետական կարգավորման անհամապատասխան աճը, որը դրսևորվում է պաշտոնական աշխատանքային օրվա տևողության կրճատման, որն էլ իր հերթին լրացուցիչ խթան է ստեղծում թաքնված զբաղվածության ծավալների աճի համար:



**Գծապատկեր 2.** Արևելյան Եվրոպայի երկրներում ստվերային տնտեսության աճին նպաստող հիմնական գործոնները <sup>78</sup>

Սակայն, ինչպես ցույց են տալիս Քյունի համալսարանի տնտեսագետ Դոմինիկ Էնստի հետազոտությունները, Արևելյան Եվրոպայի երկրներում, բացի վերը նշված պատճառներից, կան նաև այլ հիմնական գործոններ, որոնք ևս նպաստում են ստվերային տնտեսության աճին (գծապատկեր 2): Իսկ այժմ տեսնենք, թե ինչպիսի հետևանքների է բերում ստվերային տնտեսության առկայությունն այս կամ այն երկրում: Դրանք հետևյալն են՝

1. Գոյություն ունեցող հավասարության խախտումը: Խոսքը գնում է այն մասին, որ ստվերային տնտեսությունը բերում է սոցիալական անհավասար-

<sup>78</sup> Enste H. Dominik, The Shadow Economy and Institutional Change in Transition Countries: Keln 2002, p. 18.

րության: Ղա դրսևորվում է նրանով, որ ստվերային ոլորտը, դուրս մնալով պաշտոնական վերահսկողության դաշտից, չի պաշտպանում աշխատանքային օրենսդրությունը, հարկային օրենսդրությունը, որակի վերահսկման հետ կապված իրավական նորմերը և այլն: Այս ամենը բերում է նրան, որ աշխատողը չի օգտվում այն բարիքներից, որոնք օրենքով սահմանված են նրա համար, իսկ պետական բյուջեն չի ստանում այն եկամուտները, որոնք հնարավորություն կտային պետությանն իրականացնել արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականություն և մատուցել համապատասխան քանակի և որակի հասարակական ծառայություններ: Արդյունքում աճում է սոցիալական բևեռացվածությունը, որը բերում է հասարակական անբավարարվածության, պետական կառույցների հանդեպ վստահության վերացման:

2. Շուկայական կատարյալ մրցակցության համակարգի խախտումը, երբ ձեռնարկությունը, որը գործում է հարկվող տնտեսությունում, չի կարող արդյունավետ մրցակցել ստվերային ոլորտում գործող ձեռնարկության հետ, քանի որ վերջինս, չվճարելով հարկեր և տուրքեր, բացարձակ մրցակցային առավելություն է ստանում, որով «ճանապարհից» հանում է օրինապահ ձեռնարկությանը և ոչնչացնում գոյություն ունեցող մրցակցային կապերը:

3. Մեծ ծավալի հասնող ստվերային տնտեսությունն աղավաղում է նաև տվյալ երկրի ազգային վիճակագրությունը, որն էլ սխալ ազդակներ է տալիս պաշտոնական և ոչ պաշտոնական մարմիններին առկա վիճակի մասին:

Այս ամենը հիմք է տալիս փաստելու, որ ստվերային տնտեսությունը, ընդհանուր առմամբ վերցրած, բացասական ազդեցություն ունի ազգային տնտեսության վրա, քանի որ այն խախտում է օրինաչափ հավասարակշռությունը, որը պետք է լինի շուկայական տնտեսության պայմաններում տարբեր տնտեսական սուբյեկտների միջև: Չնայած այս ամենին, տնտեսագիտության մեջ ժամանակ առ ժամանակ հնչում են կարծիքներ, որ ստվերային տնտեսությունը, տնտեսական զարգացման որոշակի փուլում, լուծում է մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ (Շնայդեր, Էնստ)<sup>79</sup>: Խոսքը գնում է այն մասին, որ հատկապես անցումային փուլի սկզբում մինչև պաշտոնական տնտեսության ձևավորումը, ստվերային ոլորտը հասարակության որոշակի խավին ապահովում է աշխատանքով, որն էլ փոքր-ինչ թեթևացնում է առկա սոցիալական լարվածությունը: Այնուամենայնիվ, ստվերային տնտեսությունն ունի ավելի շատ բացասական, քան դրական ազդեցություն, որն էլ պահանջում է դրա դեմ համակարգված և հետևողական պայքար:

<sup>79</sup> Enste D. and Schneider F. ‘‘ Increasing Shadow Economies all over the World - Fiction or Reality? ’’ Discussion Paper No. 26., IZA, December 1998, pp. 26-27.

## **Լիլիթ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

### **Ստվերային տնտեսության զարգացման նախադրյալները**

*Բանալի բառեր. ստվերային տնտեսություն, ինստիտուցիոնալ, հարկային բեռ, պետական վերահսկողություն*

Предлагаемый нами «Портал цифрового бизнеса экспорта» может дать требуемые ответы на вопросы по освоению и масштабизации цифрового бизнеса в РА, поскольку в целом, эта сфера развивается относительно спонтанно, без должной координации. Развитие электронной торговли и электронного бизнеса создадут благоприятные условия для полноценного участия бизнеса РА во внешнеторговой деятельности, что в свою очередь послужит положительным фактором для делового климата и улучшения конкурентной среды в сфере торговли, для развития внутреннего производства. С этой целью необходимо сосредоточиться в первую очередь развитие технологий электронной торговли в секторах бизнес-бизнес B2B (Business - to – Business, B2B), бизнес-потребитель B2C (Business - to – Consumer, B2C), что позволит повысить экспортные возможности хозяйствующих субъектов. Задача государства в этом случае разработка комплекса мер по реализации организационных, технических, экономических и др мер для поддержки экспортеров в секторах B2B и B2C, включая формирование специального регулирования в в сфере экспортно-импортных процедур, налогообложения и развитие международного сотрудничества в этой области.

**Շոլակ МАКАРЯН**

**Электронная коммерция и электронный бизнес как движущая сила стимулирования экспорта в РА**

*Ключевые слова: электронная коммерция, электронный бизнес, стратегия освоения цифрового бизнеса, критерии цифрового бизнеса, модели электронного бизнеса*

В статье представлена значимость и роль электронной коммерции или цифрового бизнеса для расширения экспортных возможностей бизнеса в РА. Рассмотрены проблемы и препятствия по внедрения электронного бизнеса, а также пути преодоления барьеров и препятствий освоения электронного бизнеса и коммерции. Представлены основные компоненты по построению веб сайта для электронной коммерции, наиболее востребованные для внешнеэкономической деятельности в РА модели электронного бизнеса.

**Յուլակ ՄԱԿԱՐՅԱՆ**

**Էլեկտրոնային առևտուրը և էլեկտրոնային բիզնեսը որպես ՀՀ արտահանման շարժիչ ուժ**

*Բանալի բառեր. էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային բիզնես, թվային բիզնեսի յուրացման ռազմավարություն, թվային բիզնեսի չափորոշիչները, էլեկտրոնային բիզնեսի մոդելները*

Հոդվածում ներկայացված է Հայաստանում արտահանման հնարավորությունների ընդլայնման համար էլեկտրոնային առևտրի և թվային բիզնեսի նշանակությունն ու դերը: Դիտարկվել են էլեկտրոնային բիզնեսի և առևտրի ներդրման խնդիրներն ու խոչընդոտները, ինչպես նաև դրանք հաղթահարելու ուղիները: Ներկայացվել են էլեկտրոնային առևտրի կայքի կառուցման համար անհրաժեշտ հիմնական բաղադրիչները, ՀՀ արտաքին տնտեսական գործունեության համար առավել կարևոր էլեկտրոնային բիզնես մոդելները:

**Tsolak MAKARYAN**

**E-commerce and e-business as driving force for export promotion in RA**

*Keyw ords: electronic commerce, e-business, digital business development strategy, digital business criteria, e-business models*

The article presents the importance and role of e-commerce and digital business for expanding export business opportunities in Armenia. The subject of investigation are issues and obstacles for the introduction of electronic business, as well as directions to overcome barriers and obstacles of them. The article presents of main components for building a web site for e-commerce as well the e-business models most requested for foreign economic activity in RAHH .

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԳՅՈՒՄ**

**Մարիա ՊԵՏՐՈՍՅԱՆ**  
ՀՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր. կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, ԿՍՊ  
արդյունքներ, տարածքային զարգացում, պետություն-մասնավոր հատված  
գործընկերություն, կայուն զարգացում:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ) գործարարության հիմնական գործունեությունից զատ իրականացվող կամավոր գործողություններն են՝ ուղղված սոցիալական և բնապահպանական խնդիրների լուծմանը: Այն ենթադրում է, որ կազմակերպությունները իրենց գործունեության համար կրում են իրավական, տնտեսական, սոցիալական ու բարոյական պատասխանատվություն և հաշվետու են ոչ միայն կազմակերպության բաժնետերերի կամ ներդրողների, այլև մյուս շահակիցների առջև:<sup>97</sup> Ընդ որում՝ ԿՍՊ-ը զուտ բարեգործություն կամ կամավորություն չէ, այլ կորպորատիվ մշակույթ է, որի շրջանակներում հաճախորդների ու բաժնետերերի պահանջներին բավարարումից առավել կարևորվում է հասարակության հետ փոխազդեցությունը և սոցիալական արժեքների ստեղծումը:

Ինչպես հայտնի է, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղություններն են՝ շրջակա միջավայրի պահպանությունը, համայնքային զարգացումը և աշխատողների ու հասարակության բարեկեցության ապահովումը: Կազմակերպությունների կողմից ԿՍՊ հայեցակարգի որդեգրումը և իրագործումը ենթադրում է երկարաժամկետ ու կայուն գործունեություն այն համայնքներում, որտեղ իրենք գործում են: Յետևապես, գործարարության ԿՍՊ ռազմավարության մշակումն ու հետևողական իրականացումը բարձրացնում է ոչ միայն տվյալ կազմակերպության մրցունակությունն ու կայունությունը, այլև նպաստում է տվյալ համայնքի կամ հասարակության որոշակի հատվածի տնտեսական ու սոցիալական որոշ խնդիրների լուծմանը: Ընդ որում՝ դրական փոփոխությունները ուղեկցվում են նախ և առաջ տվյալ տարածքային միավորի տնտեսական աճի ապահովմամբ, բյուջեի համալրմամբ, բնապահպանական վիճակի բարելավմամբ և բնական ռեսուրսների պահպանմամբ, ինչպես նաև բնակչության կյանքի որակի ու բարեկեցության բարձրացմամբ: Մրցունակության բարձրացումն իր հերթին ապահովվում է որակապես նոր միջավայրի ձևավորման և պետության ու մասնավոր կազմա-

<sup>97</sup> Corporate Social Responsibility: an Overview and New Research Directions, Thematic Issue on Corporate Social Responsibility, Academy of Management Journal 2016, Vol. 59, N2, pp. 534–544.



կերպությունների համատեղ կառավարչական որոշումների ու ծրագրերի իրականացման շնորհիվ:

Հետևապես, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացումն ապահովում է դրական երկարաժամկետ արդյունքներ ինչպես կազմակերպության, այնպես էլ պետության, հասարակության և համայնքի համար: Այսպես՝

- Կազմակերպության օգուտներից կարելի է առանձնացնել կազմակերպության հեղինակության բարձրացումը, ֆինանսական ցուցանիշների, արտադրանքի որակի բարելավումը, արտադրողականության միջին մակարդակի բարձրացումը և աշխատողներին գրավելու ու պահպանելու կարողությունների մեծացումը: ԿՄՊ-ը նպաստում է կազմակերպության գործունեության կայունությանը և հանգեցնում ներդրումների ավելացմանը:

- ԿՄՊ գործունեությունը խթան է հանդիսանում տարածքային կայուն զարգացման համար, քանի որ կազմակերպությունը, առաջարկելով սպառողներին ավելի բարձր որակի ապրանքներ և ծառայություններ՝ տնտեսապես հիմնավորված գներով, հետևելով առողջության ու անվտանգության կանոններին ու պահանջներին, բարձրացնում է մրցունակությունը, բարելավում է ֆինանսական ցուցանիշները, ինչը դրականորեն է ազդում նաև տնտեսական աճի վրա ու նպաստում տարածքային միավորի բյուջեի համալրմանը:

- Կազմակերպություններն իրականացնելով շրջակա միջավայրի պահպանությանն ու ռեսուրսների խնայմանն ուղղված ծրագրեր, նվազեցնում են վնասակար արտանետումները, ինչը հանգեցնում է էկոլոգիական իրավիճակի բարելավմանը, ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և ռեսուրսային ներուժի պահպանմանը:

- Գործարարության իրավական և բարոյական նորմերին համապատասխան գործելու և մասնագիտական ստանդարտներին հետևելու արդյունքում ձևավորվում է մրցակցային միջավայր, որն իր հերթին ստեղծում է պայմաններ տվյալ տարածաշրջանի մրցունակության բարձրացման համար և կարող է նպաստել ներդրումների ավելացմանը:<sup>98</sup>

- Ապահովելով աշխատանքային բարենպաստ պայմաններ իրենց աշխատողների համար և առաջարկելով նրանց սոցիալական երաշխիքների ամբողջություն բացի օրենսդրորեն սահմանված նվազագույն մակարդակից՝ կազմակերպությունները կարող են խրախուսել աշխատողներին, ինչը կբարձ-

<sup>98</sup> Perry P., Towers N., 2013, Conceptual Framework Development for CSR Implementation in Fashion Supply Chains, International Journal of Physical Distribution & Logistics Management, Vol. 43, No. 5/6, p. 478–500

րացնի նրանց արտադրողականության մակարդակը, իսկ մյուս կողմից՝ կնպաստի համայնքի բնակչության կյանքի որակի բարձրացմանը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ մասնավոր հատվածի կողմից իրականացվող սոցիալապես պատասխանատու գործունեությունը կարող է ձևավորել նախադրյալներ տնտեսության մեջ առկա համակարգային խնդիրների լուծման համար՝ որոշ չափով թեթևացնելով հասարակության սոցիալական խնդիրները և հարթելով տարածքային զարգացման անհամաչափությունը: Մյուս կողմից, մասնավոր կազմակերպությունների հաջող և երկարաժամկետ գործունեությունը կարող է ապահովված լինել միայն տվյալ տարածքային միավորի սոցիալ-տնտեսական կայունության պարագայում: Հետևաբար, ընդհանուր շահերի առկայությունն էլ հենց նախադրյալ է այս ուղղությամբ կողմերի՝ պետության և մասնավոր հատվածի համագործակցության համար: Այս տեսանկյունից առկա է տարածքային կայուն զարգացման հայեցակարգերի մշակման անհրաժեշտություն, որոնք հաշվի կառնեն գործարարության սոցիալական պատասխանատվության գործոնը:

Հայաստանի համար ԿՍՊ նոր երևույթ է, և դրա էության վերաբերյալ հասարակության պատկերացումները և տեղեկացվածությունը լիարժեք չեն, իսկ առկա փորձը բավարար չափով ուսումնասիրված չէ: Այս է պատճառը, որ շատ հաճախ ԿՍՊ-ը նույնացվում է բարեգործության հետ, չնայած որ ԿՍՊ-ն գործարար մշակույթի մի մաս է և կրում է մշտական բնույթ: Ներկայումս ՀՀ-ում գործող մի շարք ընկերություններ (հիմնականում բազմերկյա կամ օտարերկրյա ներդրումների մեծ մասնաբաժին ունեցող)<sup>99</sup>, փորձում են ներդնել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հայեցակարգն իրենց գործունեության մեջ, այնուամենայնիվ, իրականացվող գործողությունները հաճախ չեն կրում հայեցակարգային-համակարգային բնույթ և կապված չեն սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության հետ: Բացի այդ, անկատար մրցակցային միջավայրը, մենաշնորհների առկայությունը, օրենսդրական դաշտի անկատարությունը, հարկերի մուծումից խուսափումը, օրենքների շրջանցումը և տնտեսության մեջ առկա բացասական մի շարք այլ երեվույթներ խոչընդոտում են ԿՍՊ տարածմանը:

Այս պարագայում նախ և առաջ անհրաժեշտ է ստեղծել համապատասխան օրենսդրական դաշտ, որը կնպաստի և կաջակցի ԿՍՊ-ի ներդրմանն ու զարգացմանը, կխրախուսի այս ուղղությամբ կազմակերպությունների գործունեությունը՝ հաշվի առնելով այն, որ պետության կողմից աջակցվող ԿՍՊ ծրագրերի իրականացումը պետություն-մասնավոր հատված գործընկերության միջոցով կարող է էականորեն ազդել տարածքային սոցիալ-տնտեսական

<sup>99</sup> Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության վերաբերյալ հայեցակարգային փաստաթուղթ, Երևան, 2010թ., էջ 7

զարգացման վրա: ԿՍՊ գործունեությունն ծավալող կազմակերպությունների հետ համագործակցությամբ և պետության կողմից աջակցվող այսպիսի նպատակային ծրագրերի հետևողական իրականացումը դառնում է տարածքային մակարդակում սիներգիայի էֆեկտ ապահովող կարևորագույն գործոն, որի շնորհիվ բարելավվում են առանձին կազմակերպությունների գործունեության ցուցանիշները և ինչը նպաստում է տարածաշրջանի տնտեսական համակարգի կայունության և մրցունակության բարձրացմանը:

Մեր կարծիքով, այս ծրագրերի արդյունավետ իրականացման համար էական նշանակություն ունի նաև ԿՍՊ գաղափարների տարածումը հասարակության մեջ: Մասնավորապես՝ անհրաժեշտ է մշակել գործարարության և պետության սոցիալական պատասխանատվության ու սոցիալական բարեգործության նկատմամբ միատեսակ մոտեցում, ինչը ենթադրում է, որ հասարակության մեջ պետք է արմատավորվի գործարարության պատասխանատվության ու հաշվետվողականության նկատմամբ պահանջը, իսկ կառավարությունը պետք է օրինակ ծառայի՝ մեծացնելով սեփական սոցիալական պատասխանատվության մակարդակը և աջակցելով ԿՍՊ տարածմանը:

Այսպիսով, ՀՀ-ում ԿՍՊ-ի զարգացման հայեցակարգային ուղղությունները պետք է ենթադրեն պետական, տարածքային և տեղական մակարդակում մի շարք ակտիվ միջոցառումներ, որոնք թույլ կտան քաղաքացիական հասարակության մեջ ձևավորել սոցիալական գործընկերություն, որի արդյունքում կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի հետևողական իրականացումը կնպաստի տարածքային կայուն զարգացմանը՝ տնտեսական աճի, բյուջե հոսքերի մեծացման, բնապահպանական իրավիճակի բարելավման, ռեսուրսների խնայողաբար օգտագործման շնորհիվ, և կապահովվի մրցունակության բարձրացում՝ որպես զարգացման հետևանք:

### **Մարիա ՊԵՏՐՈՍՅԱՆ**

#### **Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության դերը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում**

*Բանալի բառեր. կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, ԿՍՊ արդյունքներ, տարածքային զարգացում, պետություն-մասնավոր հատված գործընկերություն, կայուն զարգացում*

Չողվածում դիտարկվում են կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) էությունը, դերը պետական և մասնավոր հատվածների համար, ԿՍՊ հայեցակարգի որդեգրման և ծրագրերի իրականացման շնորհիվ ստացվող դրական արդյունքները տնտեսության զարգացման համատեքստում: Այնուհետև ներկայացվում է ՀՀ-ում ԿՍՊ տարածման կարևորությունը և առաջարկվում է խթանել ԿՍՊ ծրագրերի իրականացումը պետության կողմից աջակցության, կայուն զարգացման հայեցակարգերի մշակման և պետություն-մասնավոր հատված գործընկերության միջոցով:

### **Мария ПЕТРОСЯН**

#### **Роль корпоративной социальной ответственности и перспективы развития в РА**

*Ключевые слова: корпоративная социальная ответственность, результаты КСО, территориальное развитие, государственно-частное партнерство, устойчивое развитие*

В статье рассматривается суть корпоративной социальной ответственности (КСО), ее роль в государственном и частном секторах, положительные результаты от принятия и реализации концепции КСО в контексте экономического развития. Затем представлена важность распространения КСО в Армении, и рекомендуется содействовать внедрению программ КСО посредством государственной поддержки, разработки концепций устойчивого развития и государственно-частного партнерства.

### **Maria PETROSYAN**

#### **The role of corporate social responsibility and development perspectives in RA**

*Key words: corporate social responsibility, CSR benefits, regional development, public-private partnership, sustainable development*

The article presents the essence of corporate social responsibility (CSR), its role in the public and private sectors, positive results of adoption and implementation of the CSR concept and its influence on economic development. Then, the importance of CSR dissemination in Armenia is presented and it is proposed to promote the implementation of CSR programs through state support, development of sustainable development concepts and public-private partnership.

**ՆՈՐԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԱՔ ՕՐԱՄԱՅԻ  
ԸՆՏՐԱՐՇԱՎԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

**Լիլիթ ՄԿՐՏՉՅԱՆ**  
ԵՊՀ ասպիրանտ

Բանալի բառեր. մարքեթինգային կառուցակարգեր, իրավիճակային վերլուծություն, Web 2.0 տեխնոլոգիական բաղադրիչ, միկրոթիրախավորում

Քաղաքական ընտրարշավներում մարքեթինգային կառուցակարգերի կիրառման առաջին փորձերը ԱՄՆ-ում հայտնի են Դ. Էյզենհաուերի 1952 թ. ընտրություններում direct mail-ի կիրառմամբ, իսկ Մեծ Բրիտանիայում Մ. Թեթչերի ընտրարշավում ‘Սաթչի և Սաթչի’ գովազդային գործակալության ներգրավմամբ:<sup>100</sup> Ընտրարշավներում ռազմավարական մարքեթինգային կա-ռուցակարգերի կիրառման նախադեպի հետազոտման լավագույն օրինակ դեռևս ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի 2008թ. ընտրարշավային ռազմավարությունն է: Բ. Օբամայի քաղաքական թիմի մարքեթինգային ռազ-մավարությունն աննախադեպ էր մինչ այդ ընտրական գործընթացներում կիրառություն ստացած ռազմավարությունների և նորագույն մարքեթինգա-յին կառուցակարգերի ու տեխնալոգիաների տեսանկյունից: Բացառիկ էին ինչպես դրանց մասշտաբները, այնպես էլ դրանց հարմարեցումը քաղաքա-կան գործընթացների համատեքստին: Փորձը հաջողված էր այնքանով, որ այդ ընտրությունները հոչակվեցին պատմական՝ պայմանավորված ոչ միայն երկրի բարձրագույն պաշտոնի թեկնածուի աֆրո-ամերիկյան ծագմամբ, որը թերևս առաջին անգամ խախտում էր ավանդական ‘WASP’ սկզբունքը, այլ նաև քաղաքական տեխնալոգիաների փոխարեն գերակշռող մարքեթին-գային կառուցակարգերով: Մամուլում և տարբեր լրատվամիջոցներում մեկ-նաբանները եզրահանգում էին, որ ԱՄՆ նախագահական ընտրությունների պատմության մեջ նախադեպը չգրանցած հաղթանակը մարքեթինգինն է. ‘մարքեթինգը ընտրեց նախագահ’, ‘ընտրություններում հաղթանակեցին

<sup>100</sup> Stú Bains P. R., Brennan R., Egan J. Structure and Strategy in Political Marketing. Submission to Middlesex University Discussion Papers, 2001, էջ 2 // <http://www.scribd.com/doc/6830986/Structure-and-Strategy-in-Political-Markets-2001>

մարքեթինգային կառուցակարգերը՝ և, մինչև անգամ, 'ինչ կարող են մարքեթոլոգները սովորել Օբամայի ընտրարշավից':<sup>101</sup> Գուցե նման հաղթանակը միայն ռազմավարական մտքի արդյունքը չէր, այլ կրում էր երկրի քաղաքական ու տնտեսական խնդիրների հարուցած կողմնակի ազդեցությունը:

Ընտրարշավի նախապատրաստական փուլում շուրջ երկու տարի տևած հարցումների ընթացքում բացահայտվեց, որ ընտրողների գերակշիռ մեծ մասն ակնկալում էր փոփոխություն, վաշինգտոնյան երկար տարիների աշխատանքային փորձի փոխարեն նախընտրում այն թեկնածուին, որը կառաջարկեր շրջադարձային փոփոխություններ: Ընտրազանգվածի ցանկությունների այս կարևոր կետը չանտեսվեց Օբամայի թիմի կողմից: Պարզ և հստակ ձևակերպվեց ընտրարշավի գլխավոր թեման՝ 'Փոփոխություն' (Change), 'Հույս' (Hope) և լավատեսական տրամադրություն նախանշող 'Այո, մենք կարող ենք' (Yes, we can) կարգախոսերով: 'Փոփոխություն' այն գաղափարն էր, որը հնչում էր բավարար պարզ, արագ 'վաճառվելու' համար, հնչեցվում էր այն հաճախականությամբ, որ հաջողվեց պոտենցյալ ընտրողների գիտակցության մեջ ամրապնդել Օբամայի և այդքան սպասված փոփոխության գաղափարի նույնականացումը: Անընդհատ հնչեցվող 'փոփոխություն' բառը ոչ միայն ամերիկացիներին, այլ նաև ողջ աշխարհին հասկանալի դարձրեց նրա քաղաքական խոստումների էությունը: 'Փոփոխությունը' հնչեցվում էր ամենուր, յուրաքանչյուր ելույթ, ուղերձ և քաղաքական գովազդ կառուցվում էր փոփոխության գաղափարի շուրջ: Փրայմերիզների փուլում Օբամայի գլխավոր մրցակից Հ. Քլինթոնը, որը նախնական հարցումների արդյունքում ուներ բարձր վարկանիշ, թույլ տվեց էական սխալ՝ ողջ ընտրարշավի ընթացքում ներկայացավ որպես Վաշինգտոնյան յուրային (insider)՝ հարուստ փորձի շեշտադրումով, որն ընտրողների շրջանում չունեց պահանջարկ: Իրար հաջորդող կարգախոսերը չամրապնդվեցին ընտրողների գիտակցության մեջ. առաջինը՝ 'Փորձն' (Experience) էր, որ շեշտում էր նրա անցյալը, որին հետևեց 'Գալով փոփոխության' (Countdown to change) կարգախոսը, որը քննադատների կարծիքով, 'ես նույնպես' ոճով էր ու կրկնում էր Օբամային, և այդ պատճառով անցում կատարվեց 'Լուծումներ Ամերիկայի համար' (Solutions for America) կարգախոսին: Հաճախ փոփոխվող կարգախոսերի և թեկնածուի

<sup>101</sup> St' u Ries A. What Marketers Can Learn from Obama's Campaign, Advertising Age, 2008, November 5 // <http://adage.com/article/al-ries/marketers-learn-obama-s-campaign/132237/>

միջև կապը այդպես էլ ընտրողների մոտ չամրագրվեց: Մքթեյնի նշանաբանն էր՝ ‘Առաջնայինը Երկիրն է’ (Country first), որն այդ պահին ոչ մի կերպ չէր առնչվում միջին ընտրողի խնդիրների ու պահանջների հետ: Հարցումները և ֆոկուս խմբերի հետ աշխատանքները ցույց էին տալիս, որ գործում է Մքթեյնի և Բուշի միջև հստակ նույնականացում, որն էլ ինքնին խոստանում էր այդ թեկնածուից ակնկալել ավելի քիչ փոփոխություն: Եվ Հ. Քլինթոնը, և Ջ. Մքթեյնը փորձում էին հանդես գալ փոփոխության խոստմամբ, սակայն 2008 թ. մայիսի հարցման տվյալներով Բ. Օբաման արդեն ամրապնդել էր ‘փոփոխության գործակալի’ կերպարը՝ Մքթեյնին զիջելով միայն ‘գլխավոր հրամանատարության’ պատրաստակամությամբ:<sup>102</sup> Եվ սա ոչ միայն ԱՄՆ-ում: Նույնիսկ Սաուդյան Արաբիայում երեք հարյուր հարցվողներից երեք հարյուրը Բ. Օբամայի անվան հետ առաջինը ասոցացրել են ‘փոփոխություն’ բառը:<sup>103</sup> Օբամայի թիմի ռազմավարական քայլերից էր սևամորթ ընտրազանգվածի գրավումը և ռասիզմի ազդեցության բացահայտումը ընտրական որոշման կայացման հարցում: Ընտրարշավի սկզբում վերլուծությունների արդյունքում պարզվեց, որ սևամորթ ընտրազանգվածի քվեների ընդհամենը 30% է Օբամայի օգտին, աֆրո-ամերիկացիների ձայների մեծամասնությունը Հ. Քլինթոնի օգտին էր, որի բրենդը շատ ամուր էր: Դրա առաջին պատճառը լայն զանգվածներին Օբամայի անհայտ լինելն էր նույնիսկ սևամորթների շրջանում (he wasn’t black enough), և երկրորդ, աֆրո-ամերիկացիների մտահոգությունը ռասիստական գործոնն էր. արդյոք Ամերիկան պատրաստ էր ընդունելու սևամորթ թեկնածուի: Գործում էր ‘պարտվողների բանակում’ չհայտնվելու սինդրոմը: Ամեն ինչ սկսվեց Այոհա նահանգի ձայների գրավմամբ, որն ամբողջությամբ սպիտակամորթ բնակչություն ուներ: Սա յուրատեսակ մեսիջ էր սևամորթ համայնքին, որից հետո նրանց ձայների թիվը սկսեց ակտիվորեն աճել: Նա հանդես եկավ որպես քաղաքական գործիչ, որը սևամորթ է, այլ ոչ որպես սևամորթ, որը զբաղվում էր քաղաքականությամբ:

Ընտրական գործընթացներում մարքեթինգային կառուցակարգերի լայնամասշտաբ կիրառմանը զուգընթաց յուրաքանչյուր ընտրական նոր

<sup>102</sup> Տե՛ս Jamieson K. H. *Electing the President 2008: the insiders’ view*. Philadelphia, Pennsylvania, University of Pennsylvania Press, 2009, էջ 95

<sup>103</sup> Տե՛ս Scott D. M. *Ten Marketing Lessons from the Barack Obama Presidential Campaign*, 2008, November 6 // <http://www.webinknow.com/2008/11/ten-marketing-lessons-from-the-barack-obama-presidential-campaign.html>

շրջան բերում է նորանոր մարքեթինգային գործիքների փոխառման: Օբամայի ընտրարշավի ամենահաջող ռազմավարական քայլերից էր Web 2.0 տեխնոլոգիական բաղադրիչի մեծածավալ կիրառումը, որը ընտրարշավի համատեքստում լուծեց միաժամանակ մի քանի կարևորագույն ռազմավարական խնդիր՝ միկրոթիրախավորման կիրառում, նոր սեգմենտների գրավում, 'խոսքից-խոսք' մարքեթինգի կիրառում, ընտրարշավի ֆոնդի գոյացում:

Նախ ինչ է Web 2.0-ն: Այն սկզբունքների ու գործողությունների ամբողջություն է, որը միավորում է բազմաթիվ համացանցային էջեր, որոնք ունեն օգտատերերի կողմից ստեղծվող բովանդակություն և սոցիալական կապի ապահովման շեշտադրում:<sup>104</sup> Այլ կերպ, Web 2.0-ն վիրտուալ տարածք է, որտեղ մարդիկ ազատորեն փոխանակում են գաղափարներ և տեղեկատվություն, շատ հեշտորեն կազմում միություններ՝ առանց ծախսերի կամ նվազագույն ծախսերով: Այստեղ տեղեկատվական բազան ստեղծվում և համալրվում է ոչ թե կայքի հիմնադիրների, այլ օգտատերերի կողմից: Web 2.0-ի գործիքներից են YouTube, Twitter, Facebook, Flickr և այլ սոցիալական կայքերը: 2008թ. ընտրությունները առաջինը չէին հաղորդակցային և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման տեսանկյունից: Օրինակ՝ 2000թ. նախագահական ընտրություններում դեմոկրատ թեկնածու Ալ Գոռը կիրառեց BlackBerry հավելումը՝ ընտրողներին արագ մեսիջների համար, 2003թ. դեմոկրատ Հովարդ Դինը կիրառեց DemocracyForAmerica.com բլոգը, որն առաջինն էր նախագահական ընտրություններում:<sup>105</sup> 2007 թվականին արդեն ընտրարշավների անցկացման հարցում սոցիալական մեդիաների դերը վերագնահատվեց՝ համացանցից և հատկապես սոցիալական կայքերից օգտվողների թվի կտրուկ աճի հետ կապված: Այդ ընթացքում արդեն 2003թ. 54.7%-ի համեմատ ամերիկացիների 61.7%-ը հնարավորություն ուներ միանալու համացանցին տանից:<sup>106</sup> Սոցիալական ցանցերի տեխնոլոգիաները զարգացած էին և նրանց կիրառումն ավելի էր հեշտացված հանրության համար: Ըտրարշավի հաղորդակցային ռազմավարության կառուցման ժա-

<sup>104</sup> Տե՛ս O'Reilly T. What is Web 2.0. Design Patterns and Business Models for the Next Generation of Software, 2005 // <http://oreilly.com/pub/a/web2/archive/what-is-web-2.0.html?page=1>

<sup>105</sup> Տե՛ս <http://www.democracyforamerica.com/>

<sup>106</sup> Տե՛ս Computer and Internet Use in the United States. Population Characteristics. United States Census Bureau, Issued May, 2013 // <http://www.census.gov/prod/2013pubs/p20-569>



մանակ թվային տեխնոլոգիաների կարևորությունը չանտեսվեց Օբամայի թիմի կողմից: 2008թ. ընտրությունների ժամանակ շատ թեկնածուներ ունեին համացանցային էջեր՝ ‘մեկ սեղմումով’ նվիրատվություն կատարելու հնարավորությամբ (click-to-donate), նույնիսկ Ջոն ՄքՔեյնը, որն անձամբ չէր օգտվում էլեկտրոնային նամակագրությունից: Սակայն Օբամայի թիմը թվային տեխնոլոգիաները դրեց ընտրարշավի կենտրոնում՝ մեդիա-ռազմավարության մշակման համար դիմելով թվային տեխնոլոգիաների առաջատար ‘Կապույտ թվային նահանգներ’ (Blue State Digital) կազմակերպությանը, որը մասնագիտացած էր ընտրարշավների տեխնոլոգիական նոր լուծումների և ֆոնդերի առցանց հավաքման մեջ:<sup>107</sup> Ընտրարշավի հաղորդակցային ուղիների մշակման համար հրավիրվեց Facebook-ի համահիմնադիր Քրիս Հյուզը, որի ղեկավարությամբ մշակվեցին ընտրարշավային հաղորդագրությունների տարածման լիարժեք ուղիներ: Վերջինիս գլխավորությամբ հաղորդագրությունների համացանցային և բջջային ճանապարհներով տարածման համար ստեղծվեց թեկնածուի գլխավոր MyBarackObama.com կայքը, որտեղից էլ հավաքվում էին ընտրողների վերաբերյալ տեղեկությունների մեծ մասը:

Web 2.0-ի միջոցով ընտրազանգվածի սեզմենտավորման, ճիշտ թիրախների ընտրության և ճիշտ հասցեներով համապատասխան հաղորդագրությունների համար ստեղծվեց պատմության մեջ տվյալների ամենամեծ կենտրոնացված բազան՝ կիրառելու միկրոթիրախավորման կառուցակարգը: Շրջանառվեցին Web 2.0-ի գործիքներից Facebook-յան էջը, հաղորդագրությունների տարածման համար Twitter-ը, քաղաքական տեսահոլովակների և այլ տեսանորոյթների հեռարձակման համար YouTube-ը: Քաղաքական թիմի կողմից աջակիցներից հարցվեցին տվյալներ՝ էլ-փոստի հասցեներ, փոստային կոդեր, հեռախոսային համարներ: Ընտրողների մասին տվյալները հավաքվում էին օգտատերերի կայքերից օգտվելուց թողած տեղեկություններից, տարատեսակ հարցումներից, հասցեատերերին ուղղարկվող հարցաթերթիկների տվյալներից: Ընտրողների մասին հավաքվում էր բազմաբովանդակ տեղեկատվություն. ազգային և կրոնական պատկանելիությունը, տարիքը, ընտանեկան վիճակը, կրթության մակարդակը, տարեկան եկամուտը, սեփականության ձևերը, բոլոր հնարավոր կոնտակտները, ժամանցի կազմակերպումը, հետաքրքրությունները, նախընտրելի ՁԼՄ-ները, բրենդերը,

<sup>107</sup> Տե՛ս // <http://www.bluestatedigital.com/our-work/case-study/obama-for-america-2008>

նույնիսկ տեղեկություններ ազգականների ու հարևանների մասին: Համատեղությամբ կիրառվում էին սեզմենտավորման մի քանի մեթոդներ, հատկապես VALS-ը և ACORN-ը: Օբամայի էլ-փոստում առկա էին առավել քան 5 մլն էլեկտրոնային հասցեներ, որոնցով օգտատերերին հաղորդագրություններ էին ուղղարկվում թվային կենտրոնի, ընտրարշավի ղեկավար Դ. Փլոֆֆի և հենց Բ. Օբամայի կողմից: Շուրջ 13 մլն օգտատեր գրանցվել էր էլեկտրոնային նամակներ ստանալու համար:<sup>108</sup> Որպես թիրախ ընտրվել էին ինչպես ավանդական աջակիցները, այնպես էլ նոր և "լողացող" ընտրողները: Ճիշտ հաղորդակցային ռազմավարության շնորհիվ հնարավոր եղավ ներգրավվել շուրջ մեկ միլիոն կամավորների, որոնց 75%-ը նախկինում երբևէ ներգրավված չէր եղել ընտրություններում: Օբամայի թիմի ընտրողների հետ կապի ապահովման պատասխանատու Ջոն Քարսոնի խոսքերով կազմակերպության ղեմնորակական ռեսուրսն այնքան մեծ էր, որ քարոզչության համար այցելում էին այնպիսի տարածքներ, ինչպիսին Օհայոյի հյուսիսային հատվածն է, որտեղ ընտրարշավների որևէ քարոզչական այց չէր եղել:<sup>109</sup>

Սոցիալական կայքերի կիրառումը նպաստեց ինչպես ընտրողների, այնպես էլ թեկնածուի և ընտրողների միջև ամուր կապի ստեղծմանը: Օբամային հաջողվեց գրավել երիտասարդ սերնդի՝ հատկապես առաջին անգամ ընտրելու իրավունք ստացողների աջակցությունը, հատված, որը ուշադրության չէր արժանանում մյուս թեկնածուների կողմից, քանի որ ընտրարշավի նվիրատվությունների հարցում այս սեզմենտը գրավիչ չէր: Օբաման ստացավ 18-29 տարեկան ընտրողների ձայների ընդհանուր թվի 68%-ը, ներառյալ՝ սպիտակամորթ ընտրողների ձայների 54%-ը, իսպանախոսների 76%-ը, սևամորթների 95%-ը, ինչը գերազանցում էր նախորդ բոլոր ընտրությունների ցուցանիշները:<sup>110</sup> Այս խմբի մարդիկ՝ ըստ էության համացանցից հիմնական օգտվողները, ներգրավվեցին ընտրությունների մեջ՝ մասնակցելով ոչ միայն քվեարկությանը, այլև որջ ընտրարշավին՝ հիմնականում կամավոր հիմունքներով: Նման աջակցության պատճառը զուցե այն էր, որ նոր ընտրողների

<sup>108</sup> Տե՛ս Delany C. Learning from Obama: Lessons for Online Communicators in 2009 and Beyond, 2009, August, էջ 9 // [www.epolitics.com](http://www.epolitics.com)

<sup>109</sup> Տե՛ս Jamieson K. H. Electing the President 2008: the insiders' view, էջ 45

<sup>110</sup> Տե՛ս The Center of Information & Research on Civic Learning & Engagement, Young Voters in the 2008 Presidential Election, by CIRCLE Staff, December 19, 2008, էջ 4 // [http://www.civicyouth.org/PopUps/FactSheets/FS\\_08\\_exit\\_polls.pdf](http://www.civicyouth.org/PopUps/FactSheets/FS_08_exit_polls.pdf)

խումբը ռասսայական և էթնիկական տեսանկյունից ավելի բազմազան էր, աչքի էր ընկնում առավել ազատական հայացքներով, կողմ էր արտահայտվում պետության դերի նվազմանը, Իրաքի պատերազմի դադարեցմանը, հարցեր, որոնք դեմոկրատ թեկնածուի նախընտրական ծրագրում էին:<sup>111</sup> Web 2.0-ի միջոցով հնարավոր եղավ կերպափոխել ընտրական գործընթացը. թեկնածու-ընտրողներ շփումը տեղափոխվեց նաև վիրտուալ հարթություն: Ստեղծվեց վիրտուալ քաղաքական հանրույթ, որի վիրտուալ մասնակցությունը հնարավոր եղավ վերածելու իրական քաղաքական աջակցության: Այս հանգամանքը լիարժեք հնարավորություն տվեց կիրառելու մարքեթինգային նորույթներից ևս մեկը՝ ‘խոսքից-խոսք’ գովազդային ռազմավարությունը, որը ընտրողից ընտրող է փոխանցում բանավոր տեղեկատվությունը ոչ ֆորմալ մեթոդներով ու ձևերով: Վերջինիս կիրառման համար անհրաժեշտ է սոցիալական ցանցերում ներգրավված հետաքրքրվողների լայն բանակ, ‘գործակալներ’ և տեղեկատվության տարածման համար շահադրման տեխնոլոգիաներ: Ռազմավարությունը տեղեկատվության փոխանցումը դարձնում է արդյունավետ երկու առումներով: Առաջին՝ ռազմավարությանը նվազեցվում է գովազդի համար պահանջվող ռեսուրսների օգտագործումը: Երկրորդ՝ ընտրողից ընտրող փոխանցվող տեղեկատվությունն ավելի հավատարժան է, որն էլ ընտրության կարևորագույն խթանիչ է: Վստահության ճգնաժամի պայմաններում քարոզները կամ քաղաքական գովազդը հիմնարար չեն վստահության և ընտրական որոշման կայացման համար, իսկ այլ ընտրողներից ստացված տեղեկատվությունն ավելի ճշմարտամոտ է, քանի որ տվյալ անձը չունի անձնական շահ և փոխանցում է սեփական եզրահանգումը, տպավորությունը կամ որոշումը, փոխանակում իր անձնական փորձը: Այսինքն, մյուս ընտրողները ստանում են պատրաստի վերլուծված տեղեկատվություն՝ խնայելով սեփական ռեսուրսները: ‘*խոսքից-խոսք*’ մարքեթինգային ռազմավարությունը ընտրական որոշումն ավելի հեշտ և պարզ դարձնելու արդյունավետ մեթոդ է:<sup>112</sup> Բազմաթիվ բլոգերներ, արվեստի գործիչներ և շարքային քաղաքացիներ որպես ‘գործակալ’ մասնակցեցին գովազդային արշավին: Օրա-

<sup>111</sup> Տե՛ս Keeter S., Horowitz J., Tyson A., Young Voters in the 2008 Election, Pew Research Center for the People and the Press, 2008, November 13 // <http://www.pewresearch.org/2008/11/13/young-voters-in-the-2008-election/>

<sup>112</sup> Տե՛ս Silverman G. The secrets of word-of-mouth marketing: how to trigger exponential sales through runaway word of mouth. 2<sup>nd</sup> ad., AMACOM Div American Mgmt Assn, 2011, էջ 30

մայի թիմի կողմից Web 2.0-ի և սոցիալական մեդիաների լայնամասշտաբ կիրառմամբ հնարավոր եղավ ընտրարշավի բյուջեի հավաքման հարցում սահմանել նոր ռեկորդ՝ 639 մլն դոլար, որն ավելին էր, քան նախորդ ընտրություններում բոլոր թեկնածուների օգտին կատարված նվիրատվությունները միասին վերցրած: Ընտրարշավի ֆոնդի գոյացմանը մասնակցեցին 5 մլն կամավորներ, որոնցից 3.1 մլն անհատ փոքր նվիրատուներ էին (50-300 դոլար)՝ ընդամենը ֆոնդի 48%-ը: Հավաքված աննախադեպ բյուջեն հնարավորություն տվեց կիրառելու լայնամասշտաբ գովազդային ռազմավարություն: Գովազդի համար կիրառվեցին բոլոր հնարավոր միջոցները՝ հեռուստատեսություն, ռադիո, տպագիր մամուլ, համացանցային գովազդ: Հեռուստագովազդի նշանակալից մասը կենտրոնացած էր, այսպես կոչված, ‘վեճի առարկա’ նահանգներում (battlegrounds), որտեղ երկու թեկնածուների հնարավորությունները հավասար էին: Սակայն Օբամայի ֆինանսական առավելությունները այստեղ ևս նրանց մրցապայքարը անհավասար դարձրեցին, նահանգներից յուրաքանչյուրում զիջման տանելով Մքթեյնին:<sup>113</sup>

Օբամայի կարևորագույն ռազմավարական քայլերից էր ‘կարմիր’ նահանգների փոխակերպումը ‘կապույտի’: Ռազմավարական լուծումը ‘կարմիր’ նահանգներին ավելի շատ ժամանակ ու ֆինանսներ հատկացնելն էր, որի արդյունքում կարմիր նահանգներից շատերը ընտրությունների օրը փոխակերպվեցին կապույտի: Կիրառվեց Հոլարդ Դինի ‘50 նահանգների ռազմավարությունը’, որտեղ գլխավոր խնդիրները դեմոկրատների օգտին ձայների ավելացումն ու մեծ թվով ընտրողների գրանցումն էր: Հիմնական տեղեկատվությունը ստացվում էր MyBO.COM կայքից, որը տալիս էր տվյալներ քվերակության համար գրանցվածների և նրանց նախորդ ընտրական վարքի վերաբերյալ: Թիրախներին ուղարկվող մեսիջներն ունեին տնտեսական բովանդակություն: Օբամայի թիմը բոլոր կարմիր նահանգներում ծախսեց ավելին, քան կարողացավ դա անել Մքթեյնը, որոշներում գերազանցելով մինչև անգամ 28.4 մլն դոլարը:<sup>114</sup> Արդյունքում՝ 2008թ. օգոստոսից մինչև սեպտեմբեր Օբամայի վարկանիշային միավորը 44%-ից բարձրացավ 64%-ի, իսկ Մքթեյնինը 34%-ից նվազեց 12%-ի: Այնպիսի ավանդական հանրապետական նահանգներում, ինչպիսիք են Օհայոն, Այոհան և Նյու Մեքսիկոն, ակըն-

<sup>113</sup> Տե՛ս Jamieson K. H. Electing the President 2008: the insiders’ view, էջ 122:

<sup>114</sup> Տե՛ս Jamieson K. H. Electing the President 2008: the insiders’ view, էջ 87

հայտ առավելությամբ հաղթանակեց դեմոկրատ թեկնածուն:<sup>115</sup> Ընտրական գործընթացում Օբամայի թիմի կողմից համացանցի կիրառումը կրում էր ավելի շուտ փորձի և նորարարական մոտեցման բնույթ: Սակայն վերջինիս հաջողության տեսական հիմնավորման համար կարող ենք դիմել 'Նոր սոցիալական շարժման' տեսությանը, համաձայն որի *Web 2.0-ն ապահովում է սոցիալական կապիտալի բարձր մակարդակ և կոլեկտիվ գործողությունները մոբիլիզացնելու հնարավորություն*, ինչն էլ իր հերթին ռազմավարական կարևորության խնդիր է ընտրություններում հաղթանակելու համար: Համացանցի կիրառումը ինքնին չի բերում սոցիալական կապիտալի կուտակմանը, սակայն սոցիալական այնպիսի կայքերից ինտենսիվ օգտվելը, ինչպիսին Facebook-ն է, բերում է:<sup>116</sup> Տեսությունը մեկնաբանում է մասսայական մոբիլիզացիայի պատճառները, դրանց լավագույն խթանիչը տեսնելով տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների մեջ: Ըստ նոր սոցիալական շարժման տեսության քաղաքականությունը, գաղափարախոսությունը և մշակույթը կարող են պայմանավորել կոլեկտիվ գործողություններ: Անհատի կենսակերպի կարևորագույն մասը համարվում է քաղաքական մասակցությունը, որն առավել ակտիվ է դառնում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ: Սոցիալական կայքերի շնորհիվ անհատները հանրայնացնում են իրենց քաղաքական տեսակետները, դժգոհությունն ու նոր գաղափարները՝ ստեղծելով համակիրների վիրտուալ բանակ, որոնց վիրտուալ քաղաքական ակտիվությունն իրականում կարող է ազդել քաղաքական գործընթացների վրա: Նոր սոցիալական շարժման մասնակիցները ռացիոնալ են: Տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաները կերպափոխում են սոցիալական շարժման մոբիլիզացիոն ճանապարհները, անհատներին հնարավորություն տալիս ներգրավվելու կոլեկտիվ գործողությունների մեջ, խթանում նրանց քաղաքական մասնակցությունը:<sup>117</sup>

---

<sup>115</sup> Տե՛ս Plouffe D. Obama for America // <http://www.slideshare.net/obamagirl17/obama-for>

<sup>116</sup> Տե՛ս Cogburn D. L., Espinoza- Vasquez F. K. From Networked Nominee to Networked Nation: Examining the Impact of Web 2.0 and Social Media on Political Participation and Civic Engagement in the 2008 Obama Campaign, *Journal of Political Marketing*, 2011, N 10, էջ 193

<sup>117</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 195

### **Լիլիթ ՄԿՐՏՉԱՆ**

#### **Նորագույն քաղաքական մարքեթինգային կառուցակարգերի կիրառման իրավիճակային վերլուծությունը Բարաք Օբամայի ընտրարշավի օրինակով**

*Բանալի բառեր. մարքեթինգային կառուցակարգեր, իրավիճակային վերլուծություն, Web 2.0 տեխնոլոգիական բաղադրիչ, միկրոթիրախավորում*

Քաղաքական ընտրարշավներում մարքեթինգային կառուցակարգերի կիրառման առաջին փորձերը ԱՄՆ-ում հայտնի են Դ. Էյզենհաուերի 1952 թ. ընտրություններում direct mail-ի կիրառմամբ, իսկ Մեծ Բրիտանիայում Մ. Թեթչերի ընտրարշավում՝ Սաթչի և Սաթչի՝ գովազդային գործակալության ներգրավմամբ: Բ. Օբամայի քաղաքական թիմի մարքեթինգային ռազմավարությունն աննախադեպ էր մինչ այդ ընտրական գործընթացներում կիրառություն ստացած ռազմավարությունների և նորագույն մարքեթինգային կառուցակարգերի ու տեխնոլոգիաների տեսանկյունից:

### **Лилит МКРТЧЯН**

#### **Ситуационный анализ применений новейших полит-маркетинговых механизмов на примере кампании Барака Обамы**

*Ключевые слова: новейшие маркетинговые механизмы, ситуационный анализ, технологический компонент Web 2.0, микроцелевой маркетинг*

Темой исследования данной статьи является новейшие маркетинговые механизмы, внедренные из общего маркетинга в избирательный процесс путем адаптации и, как показывает ситуационный анализ избирательной кампании Барака Обамы 2008 года, с оправданными результатами. Изучается удачный стратегический шаг: широкомасштабное применение технологического компонента Web 2.0. Таким образом, удалось разрешить несколько важнейших стратегических задач. Теория “нового социального движения” приводится в качестве теоретического обоснования удачного применения интернета в избирательных процессах.

### **Lilit MKRTCHYAN**

#### **Situational analysis of the application of modern political marketing mechanisms on the example of Barack Obama's campaign.**

*Key words: latest marketing mechanisms, case study, technology component Web 2.0, microtargeting*

This article studies the latest marketing mechanisms introduced from business marketing to electoral process through adaption and, as demonstrates the situational analysis of 2008 election campaign of Barack Obama, with justified results. The study examines a successful strategic move: the wide-range use of technology component Web 2.0. The theory of "new social movements" demonstrates a theoretical foundation of a successful application of the Internet in an electoral process.

**ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

**Գրիգոր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի  
ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. առևտրային բանկ, ներդրումային ռիսկ, ներդրումային  
գործունեություն, ֆինանսական գործիք, սպառողական վարկ, բիզնես վարկ

ՀՀ առևտրային բանկերում ներդրումային ռիսկի գնահատման մեթոդները հիմնված են բանկերի կողմից իրականացվող ներդրումային գործունեության վրա: Բանկերի կողմից ներդրումային գործունեությունն իրականացվում է վարկերի և ֆինանսական գործիքների միջոցով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող ներդրումների 90%-ից ավելին ուղղված է վարկերի տրամադրմանը, բանկերի կողմից այն հիմնական ռիսկերը, որոնց հետ կարող է բախվել բանկը՝ պայմանավորված են վարկային ռիսկի և դրա տարատեսակների հետ:

Դիտարկելով Կոնվերս բանկի, Արարատբանկի, Արդշինբանկի, ՎՏԲ-Հայաստան բանկերի վարկունակության գնահատման փորձը: Այդ փորձի ուսումնասիրության արդյունքում ներկայացվել է ՀՀ բանկերում վարկունակության գնահատման հիմնական մեթոդները: Վարկունակության գնահատման մեթոդաբանության տեսանկյունից՝ վարկերը լինում են՝ սպառողական և բիզնես վարկեր: ՀՀ-ում առևտրային բանկերի կողմից սպառողական վարկերի վարկունակության գնահատման հիմնական մոտեցումներն են՝

- գործակիցների հաշվարկման մեթոդը և
- սքորինգային մեթոդը:

Սպառողական վարկերի վարկունակության գնահատման գործակիցների հաշվարկման մեթոդի հիմքում ընկած են հետևյալ երկու հիմնական գործակիցները՝

- Ընդհանուր պարտքի վճարում /Ձուտ եկամուտներ (ՕՏԻ գործակից),
- Պարտքային վճարումներ/Ձուտ եկամուտներ (ՓՏԻ գործակից):

Նշված երկու գործակիցների հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը՝ գնահատել վարկառուի զուտ եկամուտները (զուտ եկամուտները = համախառն ամսական եկամուտ – կենսագործունեության պահպանման հետ կապված ամսական ծախսեր), որոնք բավարար են՝

- ՕՏԻ գործակցի դեպքում պահանջվող վարկի և վարկառուի ունեցած մնացած վարկի պարտավորությունների ամսական սպասարկման համար,
- ՓՏԻ գործակցի պահանջվող վարկի ամսական սպասարկման համար:

ՀՀ առևտրային բանկերի համար մեծ կիրառական նշանակություն ունի ՕՏԻ գործակիցը: ՕՏԻ գործակցի առավելագույն շենը, եթե հաշվարկվում է միայն վարկառուի եկամուտները, պետք է կազմի՝ 55%, իսկ ընտանիքի անդամների եկամուտները հաշվարկելիս՝ 45%: Նման տոկոսային հարաբերությունը ցույց է տալիս, որ ՀՀ առևտրային բանկերի համար վարկառուի ունեցած զուտ եկամուտների առավելագույնը՝ 55%-ը պետք է կազմի ընդհանուր պարտավորությունների ամսական սպասարկման ծավալը: Այս մեթոդն ունի որոշ թերությունները: Մասնավորապես՝ այս գործակիցները չունեն ապագայի որևէ կանխատեսման հնարավորություն և իրավիճակը գնահատում են միայն տվյալ պահի դրությամբ: Այս մեթոդի օգնությամբ տրամադրվող վարկերի վարկունակության գնահատումը ամբողջությամբ չի գնահատում վարկային ռիսկը: ՕՏԻ և ՔՏԻ գործակիցներով վարկունակության քանակական վերլուծություն իրականացնելու դեպքում ՀՀ առևտրային բանկերն իրականացնում են նաև վարկունակության որակական վերլուծություն: Բանկերի կողմից վարկունակության որակական վերլուծության ժամանակ ուսումնասիրվում են՝

- վարկառուի ներկայացրած փաստաթղթերի արժանահավատությունը,
- վարկառուի դրական/բացասական վարկային պատմությունը,
- վարկառուի կողմից վարկի ուշացման օրերի քանակը:

Վարկառուի վարկունակության որակական գնահատման ժամանակ ի հայտ եկած բացասական միտումները բավարար հիմք են վարկը մերժելու համար: ՀՀ առևտրային բանկերի կողմից վերջին տարիներին սկսվել է լայնորեն կիրառվել վարկունակության գնահատման սքորինգային մեթոդը, որի իրականացման նկատմամբ հստակ չափորոշիչներ է սահմանել ՀՀ ԿԲ-ն՝ իր մշակված «Սքորինգային համակարգի ձևավորման ձեռնարկ»<sup>118</sup>-ում:

Սքորինգային համակարգը հնարավորություն է տալիս նոր վարկեր տրամադրելիս որոշումներ կայացնել՝ հիմնվելով նախկինում տրամադրված համանման հատկանիշներ ունեցող վարկերի ցուցաբերած վարքագծի վրա: Յուրաքանչյուր վարկատուի համար մեծ նշանակություն ունի կանխատեսել, թե արդյոք վարկառուն ի վիճակի կլինի վարկի տրամադրման ողջ ժամանակահատվածի ընթացքում իրականացնել վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, թե ոչ: Սքորինգային համակարգն օգտագործում է նախկինում տրամադրված վարկերի քանակական բնութագրիչները, որպեսզի կանխատեսի համանման բնութագրիչներ ունեցող վարկերի գծով պարտավորությունների կատարման ընթացքն ապագայում: Տվյալների բազայում արտացոլված առանձին տվյալները հնարավորություն են տալիս կանխատեսել վարկառուի կողմից վարկի գծով վճարումների իրականացման ընթացքը:

<sup>118</sup> Սքորինգային համակարգի ձևավորման ձեռնարկ. ՀՀ ԿԲ, [www.cba.am](http://www.cba.am)



Տվյալների յուրաքանչյուր տեսակի, ելնելով վերջինիս հարաբերական կարևորությունից և վարկառուի վարկունակության վրա ազդեցությունից, վերագրվում է որոշակի թվային արժեք: Տվյալների բազայում արտացոլված տվյալներին տրված թվային գնահատականների հանրագումարն էլ ձևավորում է ակտիվի վերջնական սքորը: Նշված սքորն օգտագործվում է վարկային հայտերի հաստատման կամ մերժման համար՝ նվազեցնելով վարկային մասնագետի կողմից վարկային հայտի վերլուծության վրա ծախսվող ժամանակը:

Սքորինգային համակարգի հաշվարկման հիմքում հիմնականում ընկած են տնտեսաչափական Logit<sup>119</sup> կամ Probit<sup>120</sup> մեթոդները, իսկ հազվադեպ դեպքերում Բայեսյան հավանականության հաշվարկման սկզբունքը<sup>121</sup>: Սքորինգային մեթոդն իր մեջ ներառում է վարկունակության քանակական և որակական բոլոր չափանիշները: Այս մեթոդի կանխատեսման հնարավորությունները զգալի մեծ են, քանի որ հիմնվում են առկա հիմնական օրինաչափությունների վրա: ՀՀ առևտրային բանկերում բիզնես վարկերի վարկունակության գնահատման մեթոդի հիմքում ընկած են հետևյալ 2 գնահատումները՝

- գործակիցների գնահատման (վարկունակության քանակական գնահատում),

- վարկունակության որակական գնահատում:

Բիզնես վարկերի վարկունակության գնահատման ժամանակ ՀՀ առևտրային բանկերի միջև առկա հիմնական տարբերությունը կայանում է վարկունակության գնահատման քանակական վերլուծության մեջ հետևյալ 2 մոտեցումների առումով՝

- համապատասխան գործակիցների ընտրություն,

- համապատասխան գործակիցների սահմանաչափերի ընտրություն:

Նշենք որ վարկունակության գնահատման որակական վերլուծությունն ըստ էության իր տրամաբանությամբ չի տարբերվում սպառողական վարկերի դեպքում վարկավորման որակական վերլուծությունից: Այդ առումով, վերլուծությունն իրականացվել է միայն վարկունակության քանակական գնահատման տեսանկյունից: ՀՀ առևտրային բանկերը բիզնես վարկերի քանակական վերլուծության համար առանձնացնում են հետևյալ գործակիցների խմբերը՝

- իրացվելիության գործակիցներ,

- ֆինանսական անկախության և/կամ կապիտալի համարժեքության գործակիցներ,

<sup>119</sup> Chris Brooks. “Introductory Econometrics for Finance” 3<sup>rd</sup> edition. Cambridge University Press, 2014, pp. 559-589.

<sup>120</sup> Տես նույն տեղում:

<sup>121</sup> Michael Miller. “Mathematics and Statistics for Financial Risk Management” 2<sup>nd</sup> edition, John Wiley & Sons, 2013, pp. 75-87

- վճարունակության գործակիցներ:

Իրացվելիության գործակիցների ընտրության առումով կան բանկեր, որ հիմնվում են միայն ընթացիկ իրացվելիության, կան բանկեր որ հիմնվում են ընթացիկ, բացարձակ և ընդհանուր իրացվելիության գործակիցների վրա: Ընթացիկ իրացվելիության գործակցի մասով մի բանկում ընդունելի է համարվում որ այն մեծ լինի 1-ից, մեկ այլ բանկում՝ որ այն մեծ կամ հավասար լինի 1.2-ից: Իրացվելիության գործակիցների ընտրության, ինչպես նաև սահմանների ընտրության հարցում ընդհանուր միասնական մոտեցում գոյություն չունի: Ֆինանսական անկախության գործակցի, կապիտալի համարժեքության գործակցի հաշվարկ ոչ բոլոր բանկերն են իրականացնում: ՀՀ առևտրային բանկերի կողմից հիմնականում հաշվարկվում է կապիտալի համարժեքության գործակիցը, որի սահմանաչափը վերցվում է <0.5-ից: Վճարունակության կամ վարկի ծածկման գործակցի մասով սահմանաչափերը տատանվում են հետևյալ տրամաբանությամբ, որ այդ գործակիցը պետք է մեծ լինի 1.5-ից կամ մեծ լինի 1.3-ից:

ՀՀ առևտրային բանկերի կողմից բիզնես վարկերի քանակական գնահատումը կատարվում է պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացված նախկին ժամանակահատվածում իրականացված բիզնես գործունեության համապատասխան հաշվետվությունների հիման վրա: Մյուս կողմից՝ ՀՀ առևտրային բանկի կողմից իրականացվում է վարկառուի դրամական հոսքերի կանխատեսում առանց կանխատեսման համապատասխան տնտեսաչափական մեթոդների, սթրես թեսթավորման, սցենարային վերլուծությունների, տվյալ ոլորտի մակրոտնտեսական հնարավորությունների ու կանխատեսումների: ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկառուի դրամական հոսքերի կանխատեսման գործընթացը վերամշակման ու զարգացման կարիք ունի և նման ձևով կանխատեսման դեպքում չի կարող հանդիսանալ ճիշտ վարկային որոշումների կայացման հիմք:

Ստացվում է, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից բիզնես վարկերի վարկունակության քանակական գնահատման ժամանակ բիզնես վարկի տրամադրման որոշումը կայացվում է ընկերության տվյալ պահին ունեցած իրավիճակից ելնելով: Նման մոտեցման դեպքում ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի վարկային ռիսկն ամբողջությամբ և համալիր չի գնահատվում: ՀՀ առևտրային բանկերը բիզնես վարկերի վարկային ռիսկի գնահատման ժամանակ չեն օգտագործում միջազգայնորեն ընդունված սթրիկն-գային մեթոդը: Միջազգային փորձն ունի դրա օգտագործման լավագույն մոդելները՝ Ալտմանի, Չեսսերի մոդելները:

ՀՀ առևտրային բանկերում սթրիկնգային համակարգով վարկային ռիսկի գնահատում չի իրականացվում հետևյալ երկու պատճառով՝ համապա-

տասխան որակյալ կադրերի և ծրագրային ապահովման բացակայության պատճառով:

ՀՀ առևտրային բանկերի կողմից ներդրումային գործունեության վարկային ռիսկից բացի, բանկերը կարող են բախվել նաև արտարժութային, տոկոսադրույքի և շուկայական ռիսկերի ազդեցության:

ՀՀ առևտրային բանկերում արտարժութային ռիսկի հաշվարկն իրականացվում է ՀՀ ԿԲ Կանոնակարգ 2-ի պահանջների հիման վրա VaR (Value at Risk) մեթոդի օգնությամբ: ՀՀ ԿԲ-ն առաջարկում է կիրառել դելտա նորմալ VaR, որի ժամանակ ենթադրվում է, որ թվային շարքերը ստանդարտ նորմալ են բաշխված (միջինը հավասար է 0, իսկ ստանդարտ շեղումը՝ 1): Նման VaR-ի հաշվարկը ճիշտ է կարճաժամկետ հեռանկարի համար: Միջազգային փորձի տեսանկյունից հայտնի են պատմական և Մոնտե Կառլոյի VaR-ի մեթոդներ, որոնք ավելի բարդ են հաշվարկման տեսանկյունից, բայց նախնական ենթադրություն չունեն, որ թվային շարքը ստանդարտ նորմալ է բաշխված: Պատմական և Մոնտե Կառլոյի VaR-ի մեթոդների օգնությամբ հնարավոր է կանխատեսել արտարժութային ռիսկը ավելի մեծ ժամանակային լագի համար:

ՀՀ առևտրային բանկերի կողմից տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման տեսանկյունից ամենաբարձր մակարդակի վրա է գտնվում տոկոսադրույքի ռիսկերի հաշվարկն ի համեմատ ներդրումային ռիսկերի մաս կազմող այլ ռիսկերի գնահատման մեխանիզմների: ՀՀ առևտրային բանկերի կողմից տոկոսադրույքի հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ մեթոդները՝

- GAP մեթոդը,
- Դյուրացիայի հաշվարկ,
- Սփրեդի հաշվարկ,
- Ջուտ տոկոսային մարժայի հաշվարկ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ՀՀ առևտրային բանկերի կողմից ներդրումային գործունեության հետ կապված ներդրումային ռիսկերի հիմնական տարրերի հետ կապված առկա են էական թերություններ, ինչը թույլ չի տալիս ամբողջությամբ ու ճշգրիտ գնահատել վարկային և արտարժութային ռիսկերը: Հետևաբար կայացված ներդրումային որոշումները ոչ միշտ կարող են ճիշտ լինել:

### **Գրիգոր ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

#### **ՀՀ առևտրային բանկերում ներդրումային ռիսկի գնահատման հիմնական մեթոդները**

*Բանալի բառեր. առևտրային բանկ, ներդրումային ռիսկ, ներդրումային գործունեություն, ֆինանսական գործիք, սպառողական վարկ, բիզնես վարկ*

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել ՀՀ առևտրային բանկերում ներդրումային ռիսկի գնահատման մեթոդները: ՀՀ առևտրային բանկերում ներդրումային ռիսկի գնահատման մեթոդները հիմնված են բանկերի կողմից իրականացվող ներդրումային գործունեություն վրա, որն իրականացվում է ներդրումային վարկերի և ֆինանսական գործիքների միջոցով: ՀՀ առևտրային բանկերի կողմից իրականացվող ներդրումների 90%-ից ավելին ուղղված է վարկերի տրամադրմանը: Բանկերը հիմնականում բախվում են վարկային ռիսկի և նրա տարատեսակների հետ:

### **Григор КИРАКОСЯН**

#### **Основные методы оценки инвестиционного риска в коммерческих банках РА**

*Ключевые слова: коммерческий банк, инвестиционная деятельность, инвестиционный риск, финансовые инструменты, бизнес-кредит, потребительский кредит*

Цель статьи исследовать основные методы оценки инвестиционного риска в коммерческих банках РА. Методы оценки инвестиционного риска в коммерческих банках РА основаны на инвестиционной деятельности банка, которые ведутся с помощью финансовых инструментов и инвестиционным кредитованием. Более 90% инвестиции коммерческих банков Армении идут на кредитование. Банки в основном, сталкиваются с кредитными рисками.

### **Grigor KIRAKOSYAN**

#### **The basic methods of investment risks in commercial banks of RA**

*Key words: commercial bank, investment risk, investment activity, financial investment, consumer credit, business credit*

The main purpose of this article is to investigate the basic methods for assessing investment risks in commercial bank of RA. The methods of assessing investment risk in commercial banks of RA is based on investment activity of banks, implemented by investment credits and financial instruments. More than 90% of RA commercial banks investments go to lending banks mainly face credit risks.

## ДИАСПОРА КАК ФАКТОР УВЕЛИЧЕНИЯ ИНВЕСТИЦИОННОГО ПОТЕНЦИАЛА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**Сергей ИГНАТОВ**

Соискатель кафедры Международных экономических отношений АГЭУ

Ключевые слова: диаспора, иностранные инвестиции, инвестиционный потенциал, Евразийский экономический союз

<sup>144</sup> John Henderson “Asset securitization: current techniques and emerging market applications” published by Euromoney Books, 2003, p 81

### **Վիկտորյա ԲՊՅԱՆ**

#### **Ակտիվների արժեթղթավորման դերը վարկային շուկայի զարգացման գործընթացում**

*Բանալի բառեր. արժեթղթավորում, կապիտալի շուկա, վարկային ակտիվներով ապահովված պարտատոմսեր, գրավ, վարկային ռիսկ, հավասարակշռման սկբունք*

Ժամանակակից ֆինանսական համակարգում անժխտելի է արժեթղթավորման դերը ֆինանսական միջնորդության հետ կապված ծախսերի կրճատման, ռիսկերի դիվերսիֆիկացիայի, ինչպես նաև «երկար փողեր»-ի ձևավորման տեսանկյունից: Մյուս կողմից արժեթղթավորման արդյունքում ստեղծվում է լրացուցիչ իրացվելիություն՝ ոչ իրացվելի ակտիվների (այդ թվում վարկային ակտիվների) փոխարինմամբ շուկայում շրջանառելի ակտիվներով: Հոդվածում ներկայացված է արժեթղթավորման էությունը, դրա հնարավոր ազդեցությունը վարկային շուկայի զարգացման վրա, հիփոթեքային վարկերի արժեթղթավորման դանիական մոդելի հիմնական բնութագիրն ու գործարկման հնարավորությունը ՀՀ-ում:

### **Виктория БДОЯН**

#### **Роль секьюритизации активов в процессе развития кредитного рынка**

*Ключевые слова: секьюритизация, фондовый рынок, кредитные инструменты, обеспеченные облигации, кредитный риск, принцип Балансирования*

Роль секьюритизации в современной финансовой системе неоспорима с точки зрения сокращения расходов на финансовое посредничество, диверсификации рисков и формулирования долгосрочных денег. С другой стороны, секьюритизация создает дополнительную ликвидность путем замены неликвидных активов (включая кредитные активы) на ликвидные. В статье представлена суть секьюритизации, ее возможное влияние на процесс развития кредитного рынка, основная характеристика датской модели секьюритизации ипотечного кредита и возможность ее запуска в Армении.

### **Viktorya BDOYAN**

#### **The role of asset securitization in the credit market development process**

*Key words: Securitization, Secured Loans, stock market, asset-backed security (ABS), collateral, Credit Risk, Funding principle*

In the modern financial system, the role of securitization is undeniable in terms of reducing financial intermediation costs, diversifying risks, and forming long-term money. On the other hand, securitization creates additional liquidity by replacing non-liquid assets (including credit assets) with liquid assets in the market. The article presents the essence of securitization, its possible impact on the credit market development process, the main characteristic of the Danish model of mortgage securitization and the possibility of launching the model in Armenia.

**ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Քրիստինե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

ՀՊՏՀ Միջ. տնտ. հար. ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. օդային տրանսպորտի հասանելիություն և մատչելիություն, սակագնային քաղաքականություն, վառելիքի գներ, օդային բեռնափոխադրումներ

Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է, այսինքն՝ երկրի, քաղաքացիների և գործարարների համար մեծ է օդային տրանսպորտի հասանելիության և մատչելիության նշանակությունը: Ծովային ելք չունեցող զարգացող երկրների մեծ մասում բարձր տրանսպորտային ծախսերն անխուսափելի են քանի որ նրանք կախված են ցամաքային և օդային տրանսպորտից<sup>145</sup>:

Քաղաքացիական ավիացիայի կանոնակարգված և նպատակասլաց զարգացման գործում առանձնահատուկ կարևորություն ունի օդային փոխադրումների վաճառքի կազմակերպումը: Այն մեծ նշանակություն ունի օդանավերի բեռնվաճառքի ապահովման համար և ուղղակիորեն անդրադառնում է ավիաընկերության ֆինանսական վիճակի վրա: Օդային փոխադրումների շուկայում նպաստավոր դիրք գրավելու համար ավիաընկերությունները վաճառքը կազմակերպում են ելնելով իրենց առջև դրված երկարաժամկետ և կարճաժամկետ ծրագրային խնդիրներից, նպատակ ունենալով ապահովել ուղևորների և պատվիրատուների առավելագույն հարմարավետություն և սպասարկման բարձր որակ: Օդային փոխադրումների վաճառքի կազմակերպումը կախված է օդային երթուղիների և չվերթների ուղղությունների ճիշտ ընտրությունից, օդային փոխադրումների շուկայի առանձնահատկություններից, սակագնային քաղաքականությունից, ինչպես նաև բուն վաճառքի առանձնահատկություններից<sup>146</sup>: Խնդիրներից ամենակնհայտն ավիափոխա-

<sup>145</sup> Նազարյան Գ., Հախվերդյան Դ., Գրիգորյան Ա., Եղիազարյան Ա., Փախյան Ա., Արրահամյան Ա., Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (ՀՀ օրինակով), Մենագրություն/ Մասնագիտ. խմբ.՝ Ատոմ Վարդանյան. – Եր.: Տնտեսագետ, 2014. – 112 էջ.- («Ամբերդ» մատենաշար.13), էջ 38:

<sup>146</sup> Մուրադյան Ա., «Օդային տրանսպորտի զարգացումը և փոխադրումների պետական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» ատենախոսություն, Ը.00.02 «Տնտեսության և նրա ճյուղերի էկոնոմիկա, կազմակերպում և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման, Երևան, 1999, էջ 110, 160 էջ

դրումների գործող սակագներն են, որոնք առնվազն չեն նպաստում Հայաստանի ավիացիոն շուկայի զարգացմանը, մասնավորապես, ուղևորահոսքերի ավելացմանը դեպի Երևան և Երևանից դուրս: Ինչպես վկայում են ուսումնասիրությունները, ավիափոխադրումների գների առաձգականությունը գտնվում է -1.0 սահմաններում, այսինքն՝ գների 10% նվազեցումը կբերի ուղևորահոսքերի 10% աճի<sup>147</sup>: Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գների փոփոխության նկատմամբ նվազ զգայուն են փոքր ծավալ կազմող գործարար ուղևորները, իսկ ազատ ճանապարհորդողները, ընդհակառակը, շատ ավելի գնազգայուն են: Հայաստանի պարագայում 30% կազմող գործարար ուղևորների մեծ մասն երթևեկում է ավելի էժան դասի տոմսերով: Այսինքն՝ ավիատոմսերի գների -1 գների առաձգականության գործակիցը Հայաստանի համար լիովին ընդունելի է, իսկ ուղևորահոսքերի ավելացումը, բնականաբար, լրացուցիչ եկամուտներ կբերի ՀՀ-ին:

Ուղևորափոխադրումների սակագների վրա ազդող գործոններից են՝ Հայաստանի համար վառելիքի բարձր գները, օդային ծառայությունների միջկառավարական համաձայնագրերում առկա որոշ սահմանափակումները, օդանավակայանի մատուցած ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը և այլն: Հայաստանի օդային բեռնափոխադրումների ցուցանիշները դեռևս անկայուն են: Աճը, ըստ երևոյթին, բացատրվում է Ռուսաստանի տնտեսական ճգնաժամից դուրս գալու փաստով, իսկ նվազման միտումն ինչ-որ չափով պայմանավորված է հանրապետության ցամաքային կապերի որոշակի բարելավումով (ուղևորափոխադրումների ընդհանուր ծավալում 90.6%-ը բաժին է ընկնում ավտոմոբիլային տրանսպորտին, 8.6%-ը՝ էլեկտրատրանսպորտին, 0.5%-ը՝ օդային և 0.3%-ը՝ երկաթուղային տրանսպորտին): Ընդհանրապես, ինչպես վկայում է միջազգային փորձը, օդային տրանսպորտի ծառայությունների արդյունքներն աճում են մոտ 50%-ով ավելի արագ, քան՝ տնտեսությունը<sup>148</sup>: Օդային տրանսպորտով բեռնափոխադրումների ծավալների՝ վերջին տարիների անկման միտումները ցույց են տալիս, որ ՀՀ-ում

<sup>147</sup> “Air Travel Demand Elasticities: Concepts, Issues and Measurement”, Final report, David W. Gillen, William G. Morrison, Christopher Stewart 2003 Department of Finance, Canada [www.fin.gc.ca](http://www.fin.gc.ca)

<sup>148</sup> “Air Travel Demand Elasticities: Concepts, Issues and Measurement”, Final report, David W. Gillen, William G. Morrison, Christopher Stewart [www.fin.gc.ca](http://www.fin.gc.ca) 2003

օդային տրանսպորտը, տրանսպորտի այլ տեսակների համեմատ, դարձել է պակաս մրցունակ:

Օդային տրանսպորտի ոլորտում դեռևս պահանջվում է բարելավել սպասարկման մակարդակները, մասնավորապես՝ օդանավակայաններում: Սա հատկապես կիրառելի է, եթե Հայաստանը նպատակ ունի իրագործել զբոսաշրջության կենտրոն դառնալու իր ներուժը: Տրանսպորտային բարձր ծախսերը խոչընդոտում են նաև ծառայությունների, առևտրի, հատկապես՝ զբոսաշրջության զարգացմանը<sup>149</sup>: Զբոսաշրջիկները շատ զգայուն են տրանսպորտային ծախսերի նկատմամբ. ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճամփորդական ծախսերի կրկնակի թանկացումը հանգեցնում է զբոսաշրջիկների հոսքի ութնապատիկ կրճատմանը<sup>150</sup>: Այսպիսով, զբոսաշրջության կենսական ոլորտը կխթանի տնտեսությունը և կհզորացնի միջազգային տրնտեսական համագործակցությունը:

Հայաստանի Հանրապետություն կառավարության վարած քաղաքականության արդյունքում քաղաքացիական ավիացիան աստիճանաբար ճանաչվում է որպես տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման հաջող ռազմավարության կարևոր բաղադրիչ: Ավիացիայի մատուցած ծառայությունների առավելությունները՝ ժամանակի խնայողության և «տարածության» կրճատման իմաստով կարևոր դեր են խաղում նաև գործարար հնարավորությունների ստեղծման, շուկաների աճի, միջազգային կապերի ամրապնդման և արգելքների նվազեցման գործում:

Բոլոր երկրները գիտակցում են, որ քաղաքացիական ավիացիայի ոլորտը չի կարող ունենալ տեղային բնույթ, քանի որ ավիացիայի զարգացման վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են համաշխարհային տնտեսության զարգացումը և գլոբալացումը, գործարար հարաբերությունների վերազգայնացումը, ոլորտի մասնավորեցման մշտապես աճող դերը, ավիափոխադրողների միջև մրցակցային պայքարի սրումը, ինչպես նաև նրանց միջև այլանսների ձևավորումը, համաշխարհային զբոսաշրջության զարգացումը և

<sup>149</sup> Գ.Նազարյան, Դ.Հախավերդյան, Ա.Գրիգորյան, Ա.Եղիազարյան, Ա.Փախյան, Ա.Աբրահամյան, Ծովային ելք չունեցող երկրների միջազգային մրցունակության հիմնախնդիրները (<< օրինակով), Մենագրություն/ Մասնագիտ. խմբ.՝ Ատոմ Վարդանյան. – Եր.: Տնտեսագետ, 2014. – 112 էջ.- («Ամբերդ» մատենաշար.13), էջ 43:

<sup>150</sup> World Bank, Global Economic Prospects and the Developing Countries 2002, p. 99

այլն: Այս բոլորով հանդերձ, այսօր հրատապ խնդիր է դարձել սպառողների շահերի պաշտպանությունը և փոխադրումների նկատմամբ պահանջարկի բավարարումը, որոնց հետևանքով ավիափոխադրողները «ստիպված են» զարգացնել փոխշահավետ համագործակցության բազմաթիվ ձևերը և մեթոդները:

Այսօր հրատապ խնդիր է դարձել համաշխարհային քաղաքացիական ավիացիայի զարգացմանը խոչընդոտող իրավական արգելքների մեղմացումը կամ դրանց վերացումը և սպառողների պահանջարկի բավարարումը: Ընդ որում, համաշխարհային քաղաքացիական ավիացիայի ազատականացման ցանկացած մակարդակի դեպքում անվերապահորեն պետք է պահպանվի հետևյալ երեք հիմնարար սկզբունքները.

- թռիչքային և ավիացիոն անվտանգության ապահովումը,
- սպառողների շահերի առավելագույն պաշտպանությունը,
- ավիաձեռնարկությունների (օդանավակայաններ, ավիափոխադրողներ) միջև արդար մրցակցության ապահովումը:

Իրավական արգելքների մեղմացման (ազատականացման) գործընթացը կարևորվում է հատկապես այն ժամանակ, երբ դրանք իրենց արտացոլումն են գտնում ինչպես օդային հաղորդակցության երկկողմ պայմանագրերում, այնպես էլ ազգային օրենսդրությունում:

Հայաստանի Հանրապետության օդային փոխադրումների միակողմանի մասնակի ազատականացումը 1990-ական թվականներին ձևավորված և, ըստ էության, սկզբունքային փոփոխությունների չենթարկված քաղաքականության շարունակությունն է: Այն անվանվում էր «բաց երկնքի» քաղաքականություն, սակայն բոլորովին չէր համապատասխանում միջազգային ավիացիայում այդ հասկացության հանրաճանաչ իմաստին:

Գործնականում բաց երկնքի քաղաքականությունը Հայաստանի համար ի հայտ բերեց մի շարք խնդիրներ: Նման քաղաքականության կիրառման արդյունքում, փաստորեն, զարգացման բարձր աստիճան ունեցող և զգալի շահույթներ ապահովող, տեխնոլոգիապես հագեցած և երկրի տնտեսության առավել զարգացած ոլորտներից մեկի՝ օդային տրանսպորտի հետագա առաջընթացը փոխարինվեց սպասարկման ոլորտի զարգացման հետ: Այդ քաղաքականությունը դրական արդյունքների չհանգեցրեց մի պարզ և հասկանալի

պատճառով՝ այդ ոլորտի զարգացման երաշխիքը կարող էր և պետք է հանդիսանար հենց ազգային փոխադրողը: Այդ է վկայում այն պետությունների (Նիդեռլանդներ, Սինգապուր, Մալայզիա, Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա և այլն) փորձը, որոնց հաջողվել է իրենց երկրների օդանավակայանները վերածել խոշոր տրանսպորտային տարանցիկ հանգույցների: Բոլոր այդ երկրներում գործում են հզոր ազգային ավիաընկերություններ:

«Բաց երկնքի» քաղաքականության շրջանակներում 2013թ. հոկտեմբերին կառավարությունն ընդունեց «ՀՀ-ում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը»<sup>151</sup>: Այդ հարցում կառավարությանն աջակցեցին ամերիկյան «McKinsey» ընկերության կողմից հրավիրված մասնագետները: Այդ ծրագրի համաձայն՝ «բաց երկնքի» քաղաքականությունը դրական ազդեցություն կունենա աշխատատեղերի ստեղծման, ուղևորափոխադրումների քանակի աճի և ավիափոխադրումների սակագնի իջեցման վրա: Ենթադրվում է, որ ցամաքային կապուղիների առկա սահմանափակումների պայմաններում ավիափոխադրումների միջոցով արտաքին աշխարհի հետ կապի դյուրինացումը Հայաստանի տնտեսական աճի համար լրացուցիչ խթաններ կարող է ստեղծել: Ավելի կոնկրետ, «բաց երկնքի» քաղաքականության վարման և ծրագրի արդյունավետ իրականացման արդյունքում ներկա իրավիճակի համեմատությամբ առաջիկա 3-4 տարիների ընթացքում ակնկալվում էր 0.3-0.4 միլիարդ ԱՄՆ դոլարի չափով լրացուցիչ ՀՆԱ-ի ապահովում, 18,000-23,000 նոր աշխատատեղերի ստեղծում՝ հիմնականում օդագնացության և զբոսաշրջության ոլորտներում, 20-25%-ով ուղևորափոխադրումների քանակի աճ, ինչպես նաև տոմսերի միջին գների մոտ 10% նվազում<sup>152</sup>:

<sup>151</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի 23 հոկտեմբերի «Հայաստանի Հանրապետությունում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները հաստատելու մասին» N 1248-Ա որոշում <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86975>

<sup>152</sup> Հայաստանի Հանրապետությունում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 23 հոկտեմբերի 2013 թվականի N 1248-Ա որոշումը <http://www.arlis.am/documentview.aspx?docid=86975>



Պետք է հաշվի առնել, որ «Բաց երկնքի» քաղաքականության հայեցակարգն ընդունվել է 2013թ. հունիսին նախքան Մաքսային միությանն անդամակցելու մասին սեպտեմբերի 3-ի քաղաքական հայտարարությունը: Այսինքն, կարելի է ենթադրել, որ «բաց երկնքի» քաղաքականությունը կոչված էր իրականացվելու ԵՄ-ի հետ Հայաստանի ինտեգրման համատեքստում, այլ ոչ թե ԵԱՏՄ պայմաններում: Ընդ որում, ԵԱՏՄ-ի պայմաններում հայկական երկնքում ռուսական ավիաընկերությունները ձեռք են բերում բացարձակ իշխանություն:

ԵԱՏՄ պայմանագրի 24-րդ հավելվածի<sup>153</sup> համաձայն՝ միությունում օդային տրանսպորտի զարգացումն իրականացվում է համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության իրագործման շրջանակներում օդային տրանսպորտի ծառայությունների շուկայի փուլ առ փուլ ձևավորման միջոցով: Դրա համար նախատեսվում է, որ անդամ երկրները պետք է իրականացնեն համակարգված տրանսպորտային քաղաքականություն, ազատականացնեն և ներդաշնակեցնեն այդ ոլորտի օրենսդրությունը՝ աստիճանաբար շարժվելով դեպի միասնական շուկա:

Իհարկե, ԵԱՏՄ երկինքն «առանց ամպերի չէ»: Ղազախստանը հրաժարվել է ստեղծել «միասնական եվրասիական երկինք» և ազատականացնել ավիափոխադրումների շուկան Բելառուսի և Ռուսաստանի հետ: Աստանայում կարծում են, որ ղազախական փոքր ավիաընկերություններն ի վիճակի չեն մրցակցել ռուսական խոշոր ընկերությունների հետ, հետևաբար, ԵԱՏՄ շրջանակներում «բաց երկինքը» բացասաբար կանդրադառնա ազգային ավիացիայի զարգացման վրա: Դեռ 2015 թվականից Ղազախստանը որոշել է իր ավիացիոն օրենսդրությունը համապատասխանեցնել ԵՄ ստանդարտներին<sup>154</sup>: Ներկայումս ԵԱՏՄ երկրներ միջազգային չվերթներն իրականացվում են երկկողմանի պայմանավորվածությունների կամ ազգային օրենսդրություններով սահմանված թույլտվությունների համաձայն:

Վերջին տարիներին Ռուսաստանի նկատմամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցները ամենայն հավանականությամբ «կտեղափոխվեն նաև եր-

<sup>153</sup> «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=95272>

<sup>154</sup> <http://aviation.mid.gov.kz/ru/news/perechen-konkretnyh-del-2015-g-v-otraslyah-kuriruemyh-mir-rk>

կինք», ինչը ևս իր բացասական ազդեցությունն է թողնելու Հայաստանի ավիացիոն ոլորտի զարգացման վրա: ՀՀ-ում մրցունակ և կայուն ավիափոխադրումների ծառայությունների մատուցման ապահովման ծրագրի համաձայն՝ Հայաստանը կփորձի առավել ազատական մոտեցմամբ բանակցել գործընկեր երկրների հետ՝ նշանակելով հայկական ռեզիդենտ ավիաընկերությանը՝ անկախ սեփականության ձևից: Վերջինս կարող է առավել դյուրին դարձնել հայկական ավիաընկերության ֆինանսավորման գործընթացը: Երկարաժամկետ հատվածում հնարավոր է նաև փոխշահավետ գործընկերության և համագործակցության զարգացում եվրոպական ավիացիոն կազմակերպությունների հետ՝ համատեղ ձեռնարկություններ ստեղծելու միջոցով:

Ռուսաստանի հետ բանակցություններ են վարվում հաճախականությունների, փոխադրողների քանակի և ուղղությունների վերաբերյալ բոլոր սահմանափակումների վերացման և կողերի համատեղ օգտագործման համաձայնագրերի (code-share agreements) կնքման ուղղությամբ: Մերձավոր Արևելքի շատ երկրներ, ինչպես նաև ԵՄ-ն, իրականացնում են Բաց երկնքի քաղաքականություն: Օրինակ՝ ՄԱԷ-ը, Լիբանանը և Քուվեյթը ձգտում են հնարավորինս շատ երկրների հետ Բաց օդային տարածքների վերաբերյալ համաձայնագրեր ստորագրել, որոնց մեծ մասում ներառված են հինգերորդ ազատության իրավունքները:

Այսպիսով, Հայաստանի՝ որպես դեպի ծով ելք չունեցող երկրի համար, օդային տրանսպորտում առկա վերը նշված խնդիրների վերհանումը և լուծումների նպատակադրումը օրակարգային են: Օդային տրանսպորտն անդրադառնում է մարդկանց կենսամակարդակի, երկրում աղքատության մակարդակի նվազման վրա, օրինակ զբոսաշրջության զարգացման միջոցով, ինչի ներուժը Հայաստանի համար ակնհայտ է: Հետևաբար, կարևոր և առանցքային է Հայաստանի օդային տրանսպորտը դարձնել մրցունակ և լիարժեք գործարկվող՝ եկամտաբերության ապահովման, սպասարկման մակարդակի բարձրացման, գների և այլ կարևոր խնդիրների հաղթահարման հաշվին:

### **Քրիստինե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

#### **Օդային տրանսպորտի զարգացման հիմնական խոչընդոտները և մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում**

*Բանալի բառեր. օդային տրանսպորտի հասանելիություն և մատչելիություն, սակագնային քաղաքականություն, վառելիքի գներ, օդային բեռնափոխադրումներ*

Հոդվածում վերհանվել է Հայաստանում օդային տրանսպորտի զարգացման խոչընդոտող հիմնական մարտահրավերները: Պայմանավորված տրանսպորտային շրջափակմամբ և ծովային ելքի բացակայությունը կարևորվել է օդային տրանսպորտի դերն ու նշանակությունը երկրի տնտեսության զարգացման գործում: Տրանսպորտային բարձր ծախսերը, բարձր սակագները, օդային բեռնափոխադրումների քիչ մասնաբաժինը, ինչպես նաև սպասարկման ցածր որակը ներկայացվել են որպես օդային տրանսպորտի զարգացմանը խոչընդոտող հիմնական խնդիրներ:

### **Кристине ЕГИАЗАРЯН**

#### **Основные препятствия и проблемы развития воздушного транспорта в Республике Армения**

*Ключевые слова: наличие и доступность воздушного транспорта, тарифная политика, цены на топливо, воздушные перевозки, либерализация*

В статье излагаются основные препятствия на пути развития воздушного транспорта в Армении. В связи с транспортной блокадой и отсутствием выхода к морю была подчеркнута роль и значение воздушного транспорта в развитии экономики страны. Высокие транспортные издержки, высокие тарифы, небольшой процент авиаперевозок, а также низкое качество обслуживания были представлены в качестве основных препятствий к пути развитию воздушного транспорта.

### **Christine YEGHIAZARYAN**

#### **The main barriers and problems of the development of air transport in the Republic of Armenia**

*Key words: availability and accessibility of air transport, tariff policy, fuel prices, air transportation, improvement of service level, high transport costs, liberalization*

The article outlines the main obstacles to the development of air transport in Armenia. In connection with the transport blockade and the lack of access to the sea, the role and importance of air transport in the development of the country's economy was highlighted. High transport costs, high tariffs, a small percentage of air transportation, and poor quality of services were presented as major obstacles to the development of air transport.

**ԱՎԻԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԾՐԱԳՐԱՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Քրիստինե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

ՀՊՏՀ, ՄՏՀ ամբիոն, հեռակա ասպիրանտ

Բանալի բառեր. քաղաքացիական ավիացիա, «բաց երկնքի» քաղաքականություն, ազգային փոխադրող, օդային տրանսպորտ

Եթե Հայաստանի Հանրապետության անկախացումը նախապայմաններ ստեղծեց սեփական քաղաքացիական ավիացիայի (ՔԱ) ստեղծման և ձևավորման համար, ապա անցումը շուկայական տնտեսակարգին առաջին պլան մղեց ՔԱ-ի զարգացման և կառավարման խնդիրները լուծել շուկայական հարաբերությունների պայմաններում: Ինչպես վկայում է համաշխարհային փորձը, շուկայի պայմաններում հնարավոր են ինչպես քաղաքացիական ավիացիայի կառավարման ազատականացումը, այնպես էլ նրա գործունեության պետական կարգավորումը<sup>155</sup>:

Այս բնագավառում հիմնավորված որոշումների կայացումը ենթադրում է ոչ միայն այլ երկրների փորձի մանրազնիմ ուսումնասիրություն և օգտագործում, այլև մեր երկրի քաղաքական, տնտեսական, ժողովրդագրական իրավիճակների ու առանձնահատկությունների ազդեցության վերլուծություն:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո զարգացած երկրներին հուզում էր այն հարցը, թե արժե արդյոք ռազմավարական այս կարևոր ճյուղի կառավարման խիստ վարչական ձևից անցնել ավելի ազատական կառավարման ձևին: Այս գաղափարն ուներ և՛ կողմնակիցներ, և՛ հակառակորդներ: Անհրաժեշտ էին համապատասխան քաղաքական և տնտեսական պայմաններ, որոնց դեպքում հնարավոր կլինեք ճշգրտել ՔԱ-ի գործունեության մեջ պետական ազդեցության և միջամտության սահմանները: Ակնհայտ է, որ քաղաքացիական ավիացիայի գործունեության բոլոր կողմերի նկատմամբ ազատականացման այլընտրանք է պետական հովանավորչական քաղաքականությունը: Խոսքը վերաբերում է ոչ միայն փոխադրումների գործընթացի, թռիչքային և ավիացիոն անվտանգության ապահովմանը, այլ նաև ազգային ավիաընկերության՝ շուկայի որոշ հատվածի նկատմամբ իրավունքների օրենսդրորեն ամրագրմանը, թռիչքների հաճախականության և փոխադրման ծավալների, այլ փոխադրողների համար կոմերցիոն իրավունքների սահմանափակմանը, օդային երթուղիներով թռիչքների լիցենզավորմանը, օտարերկրյա և ազգային ավիաընկերությունների համար օդանավակայանի և ատրոնավիզա-

<sup>155</sup> Афанасьев В. Г., Либерализация и протекционизм в современной аэрополитике, Текст научной статьи по специальности «Государство и право. Юридические науки», 2013, с. 58

ցիոն հավաքագրումների տարբերակմանը, ավիաընկերությունների միջև թը-  
ռիչքների հաճախականության կոշտ բաշխման, սակագների մակարդակների  
վարչական սահմանմանը և այլն<sup>156</sup>:

Ավիափոխադրումների շուկայական համակարգի օգտին անվիճարկելի  
փաստարկներն են՝ ռեսուրսների բաշխման բարձր արդյունավետությունը,  
փոխարինման ազատությունը, փոփոխվող շուկայական պայմաններին հար-  
մարվելու ճկունությունը, ավիաընկերության և հաճախորդի շահերի «բնակա-  
նոն» միաձուլումը, բնակչության տարբեր պահանջումներին բավարարման  
համար պոտենցիալ հնարավորությունները, ավիափոխադրումների որակի  
բարձրացումը և այլն:

Ավիափոխադրումների շուկայական համակարգին խոչընդոտող փաս-  
տարկներն են՝ մրցակցության թուլացումը ավիաձեռնարկությունների միա-  
ձուլման և նրանց միջև գաղմտի համաձայնությունների սահմանումը, ավիա-  
աշխատողների լրիվ զբաղվածությունը ապահովելու անհնարինությունը, ա-  
վիասակագների անկայուն մակարդակը, շրջակա միջավայրի պաշտպանու-  
թյան և գիտության մեջ հիմնարար հետազոտությունների իրականացման հա-  
մար տնտեսական մեխանիզմի բացակայությունը և այլն: Եվ քանի որ երկրի  
ներսում ձևավորված հզոր ավիացիոն կառույցը կարիք ուներ նոր շուկաների,  
իսկ ներքին շուկան արդեն շատ փոքր էր աննախադեպ առաջարկը սպառելու  
համար, Ամերիկայի Միացյալ Նահանգները իրենց հայացքը ուղղեցին արտա-  
սահման, ինչը պատճառ դարձավ «բաց երկնքի» գաղափարախոսության տա-  
րածմանն ու զարգացմանը<sup>157</sup>:

“Բաց երկնքի” քաղաքականությունը ազատական ավիացիոն քաղա-  
քականության մյուս դրսևորումն է, որն օրեցօր ավելի լայն տարածում է ստա-  
նում: Նման քաղաքականությունն ենթադրում է, որ “բաց երկնքի” հիման վրա  
միջպետական համաձայնագիր կնքած երկրներն իրավունք ունեն կանոնավոր  
փոխադրումների իրականացման համար նշանակել ցանկացած թվով փոխա-  
դրող, որոնք կիրականացնեն թռիչքներ երկու երկրների ցանկացած կետերի  
միջև ցանկացած հաճախականությամբ, իրավունք կունենան օգտվել ազգա-  
յին շուկայից այպես կոչված «5-րդ ազատության» հիման վրա և այլն: Այսինքն,  
«բաց երկնքի» համաձայնագրերը կոչված են նպատավոր պայմաններ ստեղ-  
ծել օտարերկրյա շուկաներ ազգային ավիաընկերությունների ներթափանց-

<sup>156</sup> Protectionism, prestige, and national security: the alliance against multilateral trade in  
international air transport Randall D. Lehner  
<https://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?referer=https://www.google.am/&httpsredir=1&article=3299&context=dj>

<sup>157</sup> The economic & social benefits of air transport, Air Transport Action Group,  
[file:///C:/Users/usumnakan/Downloads/ATAG\\_SocialBenefitsAirTransport.pdf](file:///C:/Users/usumnakan/Downloads/ATAG_SocialBenefitsAirTransport.pdf)

ման համար<sup>158</sup>: Հստակ կարող ենք ասել, որ «Բաց երկրնքի» սկզբունքը իր մեջ կրում է տնտեսության վերածննդի և զարգացման կարևոր տարր՝ մշտական շուկայական մրցակցություն<sup>159</sup>: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է ուսումնասիրել «բաց երկրնքի» սկզբունքի բացասական հետևանքները, և ստեղծել արդյունավետ մեխանիզմ դրանք հաղթահարելու և աստիճանական ներդնելու համար: Հարկ է նշել, որ «բաց երկրնքի» ներդրման ռազմավարությունը այս կամ այն երկրում (կախված այդ երկրում ավիացիայի զարգացման մակարդակից) առաջ է բերել մի շարք բացասական հետևանքներ: Մասնավորապես.

- գլխավոր երթուղիներում նոր ավիափոխադրողների կենտրոնացումը, ինչը բացասաբար է ազդում տարածաշրջանային հաղորդակցության վրա, որի հետևանքով շատ հաճախ դադարեցվել են կարևոր սոցիալական նշանակություն ունեցող վնասաբեր երթուղիների շահագործումը,
- բաց միջավայրում ազգային ավիափոխադրողների դժվարությունները,
- սրվող մրցակցությանը դիմակայելիս նվազել են ավիաընկերությունների թռիչքային և ավիացիոն անվտանգությանն ուղղված ֆինանսական ռեսուրսների աղբյուրները, և այլն:

Մեր կարծիքով, հաշվի առնելով վերը նշված հանգամանքները Հայաստանի Հանրապետությունում «բաց երկրնքի» քաղաքականության իրականացման խնդիրները պետք է քննարկվեն, ելնելով՝

- յուրաքանչյուր գլխավոր (տարողություններ, շուկայի մուտքի թույլտվություններ, սակագներ) և այլ օժանդակ տարրերից (վաճառքի ավտոմատացված համակարգեր, ընթացակարգերի պարզեցում և այլն),
- «բաց երկրնքի» փուլային ներդրման անհրաժեշտությունից,
- կոնկրետ փուլի ուսումնասիրություններից և վերլուծություններից ելնելով գնահատել կատարված աշխատանքները և կատարել համապատասխան ճշգրտումներ:

Հայաստանի Հանրապետությունում պետք է կիրառվեն այլ երկրների, ամենից առաջ Եվրոպայի փորձը, որտեղ շուրջ 26 տարի (1987 թվականից) փուլերով ներդրվում է ազատականացման տարրեր, ինչպես Եվրոպայում, այնպես էլ աշխարհի մյուս երկրների հետ: Սակայն, եթե «բաց երկրնքի» քաղաքականության իրականացումը ընդունելի է օդանավակայանների և ատրոնավիզացիոն ծառայությունների համար, նույնը չի կարելի ասել ավիաընկերությունների համար: Ավիաընկերությունները պետությունից պահան-

<sup>158</sup> The Impacts of Globalisation on International Air Transport Activity, Past trends and future perspectives, Ken Button, School of George Mason University, USA, Global Forum on Transport and Environment in a Globalising World, 10-12 November 2008, Guadalajara, Mexico

<sup>159</sup> Գ. Նազարյան «Բաց երկրնքի խութերը» <http://armef.com/hy/news/erkkhosutyun/bac-erknqi-xutery/>

ջում են իրենց շահերի պաշտպանություն, ինչը ինքնըստինքյան ճիշտ է: Սակայն շահերի պաշտպանություն տակ, ազգային ավիաընկերությունները ամենից առաջ ենթադրում են արտասահմանյան ավիաընկերությունների համեմատ ֆինանսական կամ այլ արտոնություններ, պահպանելով ավիափոխադրումների պարիտետության սկզբունքը, արտասահմանյան փոխադրողների հետ պարտադիր կնքելով առևտրային համաձայնագրեր, համաձայնեցնելով փոխադրումների տարողությունները, հաճախականությունը, չվացուցակները և այլն, ինչպես նաև փոխհատուցում սահմանել օտարերկրյա փոխադրողների կողմից ազգային ավիափոխադրումների շուկան միակողմանի օգտագործելու դիմաց: Ազատականացումը և «բաց երկրնքի» քաղաքականությունն կոչված են հաղթահարելու այդ և այլ պահանջներ, քանի որ ազատականացումը պետք է նպատակաուղղված լինի սպառողների շահերի պաշտպանությանը և այդ շահերի գլխավոր կրողներին՝ սպառողներին: Այդ դեպքում, պահպանելով նշված սկզբունքները, պետությունը իսկապես պարտավոր է պաշտպանել ազգային փոխադրողների շահերը: Պետք է իրականացնի աջակցության պետական միջաջառումներ, որոնք կարտահայտվեն սպառողների և երրորդ անձանց նկատմամբ ավիափոխադրողների պատասխանատվության օրենսդրական սահմանափակմանը, օդանավերի լիզինգի դեպքում միջազգային երեշխիքների համակարգի ստեղծմանը, ազգային փոխադրողների միջազգային կազմակերպությունների և այլանսների ինտեգրմանը, ավիափոխադրումների շուկայի պարբերաբար ուսումնասիրությանը և ավիափոխադրողներին համապատասխան երաշխավորությունների տրամադրմանն և այլն: Պետության կողմից այդպիսի միջոցառումների իրականացումը պետք է կրի պարտադիր բնույթ: Մյուս կողմից, պետք է փոխել ավիափոխադրողների մտածելակերպը: Միջազգային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողը պետք է ունենա մենեջմենթ, որը կգիտակցի արհեստական դեֆիցիտի հաշվին ստեղծված արտոնությունները ստեղծում են ժամանակավոր ֆինանսական հաջողություններ, գիտակցի, որ ավիացիան սպառողի համար է, այլ ոչ թե ընդհակառակը: Անհրաժեշտ է գիտակցել, որ համաշխարհային ավիացիոն համագործակցությունը գնում է ոչ թե փոխադարձ սահմանափակումների ճանապարհով, այլ հակառակը, միջազգային քաղաքացիական ավիացիան բացում է բոլոր սահմանները: Այս առումով Հայաստանի համար ավիափոխադրումների գործում կարևորվում է ավիաընկերությունների դերը:

Հաշվի առնելով քաղաքացիական ավիացիայի ոլորտում ազատականացման համաշխարհային փորձը, պահպանելով և աջակցելով ազգային քաղաքացիական ավիացիային և անշեղորեն պաշտպանելով սպառողների շահերը, ՀՀ-ում ոլորտի ազատականացման քաղաքականությունը պետք է ընդգրկի հետևյալ միջոցառումները.

- Եվրամիության ազատականացման իրականացման փորձի ուսումնասիրություն,
- այսպես կոչված «միակողմանի բացարձակ բաց երկրնքի» մոդելի կիրառման արդյունքների ուսումնասիրություն,
- քաղաքացիական ավիացիայի բնագավառի օրենսդրական ակտերի համապատասխանեցում Եվրամիության օրենսդրությանը և ԵՄ օրենսդրությամբ սահմանված ազատականացման դրույթների և սկզբունքների կիրառում,
- ազգային ավիափոխադրողների պետական աջակցության միջոցառումների իրականացում,
- ՀՀ-ում «բաց երկրնքի» քաղաքականության իրավական նորմերի սահմանում,
- օդային երթևեկության կարգավորման ծառայությունների և օդանավակայանների արդիականացում,
- մրցակցային միջավայրի ձևավորման նպատակով համապատասխան միջազգային իրականացում, հաշվի առնելով քաղաքացիական օդանավակայանների, օդային երթևեկության կարգավորման ծառայությունների և ազգային ավիափոխադրողների շահերը,
- միջազգային ավիացիոն կազմակերպությունների հետ ազգային փոխադրողների համագործակցության ընդլայնման նպատակով աջակցության ցուցաբերում,
- հաշվի առնելով ազգային օրենսդրությունը և աշխարհում տեղի ունեցող գործընթացները այսօրվա ազգային փոխադրողների միավորվելու նպատակով աջակցության ցուցաբերում,
- օդային տրանսպորտով բեռնափոխադրումների ոլորտի լրիվ ազատականացում:

Ամփոփելով, նշենք որ կարևորվում է քաղաքացիական ավիացիայի զարգացման այնպիսի քաղաքականության մշակումը, որը լինելով հովանավորչական իր էությամբ, կհամապատասխանի նաև ամբողջ ճյուղի շահերին: Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկում է նախապատվությունը տալ ազգային օդային տրանսպորտի՝ հայկական ավիաընկերությունների և ոչ թե վերգետնյա սպասարկման տնտեսության զարգացմանը, ինչը հուշում է ինչպես միջազգային փորձը, այնպես էլ երկրի քաղաքացիական ավիացիայի վերջին տարիների փորձը: Իսկ որպես Հայաստանի քաղաքացիական ավիացիայի զարգացման հիմնական ուղի պետք է, ընտրել այն ճանապարհը, որը լավագույնս միավորում է իր մեջ ինչպես օդային փոխադրողի, այնպես էլ օդանավակայանների շահերը, միաժամանակ պայմաններ ստեղծելով ամբողջ ճյուղի հեռանկարային զարգացման համար:



**Քրիստինե ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**Ավիատրանսպորտի ազատականացման ծրագրանպատակային հիմքերը Հայաստանում**

*Բանալի բառեր. քաղաքացիական ավիացիա, «բաց երկրնքի» քաղաքականություն, ազգային փոխադրող, օդային տրանսպորտ*

Հոդվածում ներկայացված է քաղաքացիական ավիացիայի կառավարման ազատական և պետական հովանավորչական մոդելների առավելությունները և թերությունները: Հիմնվելով միջազգային փորձի և երկրի քաղաքական, տնտեսա-կան, ժողովրդագրական իրավիճակների ու առանձնահատկությունների վրա՝ հոդվածում հիմնավորվում է ՀՀ-ում «բաց երկրնքի» քաղաքականության ընտրությունը և կիրառումը: Միաժամանակ, հոդվածում վեր են հանվում վերոնշյալ քաղաքականության կիրառման ռիսկերը և ներկայացվում է ՀՀ-ում ավիացիոն ոլորտի ազատականացման քաղաքականությունը արդյունավետորեն իրականացնելու անհրաժեշտ միջոցառումները:

**Кристине ЕГИАЗАРЯН**

**Программно-целевые основы либерализации авиационного транспорта в Армении**

*Ключевые слова: гражданская авиация, политика «открытое небо», национальный перевозчик, воздушный транспорт.*

В статье представлены преимущества и недостатки либеральных и протекционистских моделей управления гражданской авиации. На основе международного опыта и политической, экономической, демографической ситуации и особенностей страны в Армении обосновывается политика «открытого неба». В то же время в статье выявлены риски использования вышеупомянутой политики и представлены необходимые измерения для эффективного осуществления политики либерализации авиационного сектора в Армении.

**Christine YEGHIAZARYAN**

**Programs and targets of liberalizing air transportation in Armenia**

*Key words: civil aviation, "open sky" policy, national carrier, air transport*

The article presents the advantages and disadvantages of liberal and state sponsorship models for civil aviation management. Based on international experience and country's political, economic, demographic situation and peculiarities, in the article the choice and application of the "open sky" policy in Armenia is substantiated. At the same time, the article highlights the risks of using the above-mentioned policy and presents the necessary measurements to effectively implement the aviation sector's liberalization policy in Armenia.

**ՀՀ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԵՎ ԿՈՆՑԵՍԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՍԲ ԳՈՐԾՈՂ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

**Հասմիկ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի  
«Կառավարման» ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. հավատարմագրային կառավարում, կոնցեսիոն կառավարում, արդյունավետության գնահատում, պետական վերահսկողություն, առևտրային կազմակերպություն

Ամբողջությամբ կամ մասամբ պետական սեփականություն հանդիսացող, հավատարմագրային, կոնցեսիոն, վարձակալական կամ այլ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա գործող առևտրային կազմակերպություններում պետական վերահսկողությունը կարգավորվում է ՀՀ կառավարության պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու, գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարված աշխատանքը գնահատելու ու առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N1844-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1262-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում): Վերջինս փոխարինում է ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 18-ի 1844-Ն որոշումը, որի սահմանված կարգով թեև իրականացվում էր պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի վերլուծություն, սակայն այն չէր ներառում արդյունավետության գնահատման համակարգ: Նոր Որոշման ընդունումը և արդյունքում կազմակերպությունների գործունեությունը նոր կարգով գնահատելը նպատակ է հետապնդում նախ բարձրացնելու առևտրային կազմակերպությունների արդյունավետությունը, այնուհետև մշակելու և իրականացնելու առավել շահեկան միջոցառումներ կազմակերպությունների գործունեության բնագավառում: ՀՀ կառավարության Որոշումն առավել խորքային մոտեցում է ցուցաբերում պետական վերահսկողության իրականացման նկատմամբ. այն վերահսկողություն իրականացնող պետական մարմնին օժտում է լիազորությունների ավելի լայն շրջանակով բոլոր ուղղություններով՝ ներառյալ ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումների ու վերլուծությունների իրականացումը, նշված կազմակերպությունների ղեկավարների գործունեության գնահատումը, գործունեության ու գործարար ծրագրերի համապատասխանու-

թյան ստուգումը: Որոշումը հստակեցնում է նաև, որ այն բոլոր կազմակերպությունները, որոնցում իրականացվում է ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ, գործունեությունը վերլուծելու և արդյունքները ամփոփելու միջոցառումներ (այլ կերպ ասած՝ դրանք ենթարկվում են մոնիտորինգի), պետք է ունենան գործարար ծրագրեր կոնկրետ ֆինանսատնտեսական ցուցանիշներով՝ եռամսյակային, կիսամյակային և տարեկան կտրվածքով, և այդ առևտրային կազմակերպությունների կառավարումը պետք է իրականացվի կորպորատիվ կառավարման սկզբունքով<sup>160</sup>:

Առևտրային կազմակերպությունների մոնիտորինգն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը կառավարման լիազոր մարմինների հետ համատեղ նրանցից համապատասխան տեղեկություններ ստանալու միջոցով:

Ի տարբերություն ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 18-ի 1844-Ն որոշման, համաձայն որի՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների արդյունավետության գնահատման համար որպես հիմնական ցուցանիշ հիմք է ընդունվում կազմակերպության շահութաբերությունը<sup>161</sup>, համաձայն ՀՀ կառավարության նոր որոշման՝ կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու ու առաջարկություններ ներկայացնելու կարգը սահմանում է, որ կազմակերպությունների արդյունավետությունը որոշվում է դրանց գործունեության տարեկան ցուցանիշների՝ հիմնական և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշների և ոչ ֆինանսական ցուցանիշների հիման վրա: Կազմակերպությունների արդյունավետության գնահատման համար որպես հիմնական ֆինանսական ցուցանիշներ ընդունվում են շահույթի ծավալը և շահութաբերությունը, իսկ որպես լրացուցիչ ֆինան-

<sup>160</sup> ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1262-Ն որոշում պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու, գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարված աշխատանքը գնահատելու ու առաջարկություններ ներկայացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N1844-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին <https://www.e-gov.am/gov-decrees/item/29352/>

<sup>161</sup> ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 18-ի 1844-Ն որոշումը ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ և վերլուծություններ իրականացնելու, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունքներն ամփոփելու և առաջարկներ ներկայացնելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. սեպտեմբերի 25-ի N 898 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, <http://www.arlis.am/DocumentView>

սական ցուցանիշներ ընդունվում են իրացումից հասույթը, աշխատանքի արտադրողականությունը, ընթացիկ իրացվելիության ցուցանիշն ու պարտքի գործակիցը: Ինչ վերաբերում է կազմակերպության ոչ ֆինանսական ցուցանիշներին, ապա պետական կառավարման մարմիններին տրված է հնարավորություն իրենց ենթակայության ներքո գործող կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը որոշելու համար ինքնուրույն սահմանել ոչ ֆինանսական 3 ցուցանիշ՝ ըստ գործունեության բնագավառի առանձնահատկությունների (օրինակ՝ էներգետիկայի ոլորտում՝ էլեկտրական էներգիայի արտադրություն (կՎտ/ժ): Սակայն ՀՀ կառավարության Որոշման մեջ չի հստակացվում կոնցեսիոն կամ հավատարմագրային կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների արդյունավետության ցուցանիշները: Նըման ձևակերպման բացակայությունը մեկնաբանության երկու հնարավորություն է ենթադրում. կա՛մ պետական կառավարման մարմինները զերծ են մնում կոնցեսիոն կամ հավատարմագրային կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների արդյունավետության ցուցանիշներ սահմանելուց, կա՛մ կոնցեսիոն կամ հավատարմագրային կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների արդյունավետությունը ևս պետք է որոշվի հիմնական և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշների և ոչ ֆինանսական ցուցանիշների հիման վրա: Միևնույն ժամանակ վերոնշյալ որոշումը տարբերակում է մտցնում պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների և կոնցեսիոն կամ հավատարմագրային կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների միջև հաշվետվություն ներկայացնելու ձևերի և ժանկետների մասով: Մասնավորապես, համաձայն Որոշման 1.4.ա ենթակետի՝ մոնիտորինգի շրջանակներում առևտրային կազմակերպությունները պահանջվող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն են ներկայացնում կիսամյակային և տարեկան կտրվածքով: Այն առևտրային կազմակերպությունները, որոնց կառավարումն իրականացվում է հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն, վարձակալական կամ այլ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա, և որոնց համար իրականացվել է աուդիտ, ներկայացնում են միայն տարեկան աուդիտի եզրակացությունը: Փաստորեն այս կետով առևտրային կազմակերպությունները, որոնց կառավարումն իրականացվում է հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն, վարձակալական կամ այլ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա, ազատվում են նաև այն բոլոր պարտավորություններից, որոնք բխում են վերոնշյալ որոշումից:

Եթե դիտարկենք միայն տարեկան աուդիտի եզրակացության ներկայացման պահանջը, հարց է առաջանում՝ արդյոք բավարար պետական վերահսկողություն է իրականացվում այն առևտրային կազմակերպություններում, որոնց

կառավարումն իրականացվում է հավատարմագրային կառավարման, կոնցեսիոն, վարձակալական կամ այլ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա: Արդյո՞ք ՀՀ կառավարման համապատասխան մարմինները, այդ ընկերություններից ստանալով բացառապես տարեկան աուդիտի եզրակացությունը, չենթարկելով այդ կազմակերպությունների գործունեությունը ֆինանսատնտեսական մոնիտորինգի, կարող են բացահայտել դրանց կանոնադրական կապիտալներում պետական սեփականություն կազմող միջոցների ներդրման արդյունավետությունը, գնահատել առևտրային կազմակերպությունների կառավարման և գործունեության արդյունավետությունը, դիտարկել առևտրային կազմակերպությունների կողմից պետական ծրագրերի իրականացման ընթացքը, ինչպես նաև ապահովել առևտրային կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը հանրության, պետական մարմինների և պոտենցիալ ներդրողների համար:

ՀՀ հավատարմագրային և կոնցեսիոն կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման համակարգը լիարժեք ուսումնասիրելու համար կարծում ենք անհրաժեշտ է անրադառնալ ոլորտը կարգավորող այլ օրենսդրական ակտերի և: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը բացառությամբ առևտրային և ոչ առևտրային ձևակերպման որևէ այլ կերպ չի դասակարգում կազմակերպությունները՝ որևէ կերպ չանրադառնալով ամբողջությամբ կամ մասամբ պետական սեփականություն հանդիսացող, կոնցեսիոն, վարձակալական կամ այլ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա գործող առևտրային կազմակերպությունների առանձնահատկություններին<sup>162</sup>: Օրենսգրքի 52-րդ գլուխը, սակայն, կարգավորում է հավատարմագրային կառավարումից ծագող իրավահարաբերությունները: Ըստ օրենքի՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի): Գույքը հավատարմագրային կառավարման հանձնելը չի հանգեցնում հավատարմագրային կառավարչին դրա նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման:

Առհասարակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում «պետական գույք» հասկացությունը հանդիպում է միայն մեկ՝ պետական գույքի մասնավորեցման մասին 171 հոդվածում, ըստ որի՝ պետությունը կարող է իր սեփականության ներքո գտնվող գույքը հանձնել քաղաքացիների և իրավաբանական անձանց

<sup>162</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք.  
<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=112635>

սեփականությանը՝ պետական գույքի մասնավորեցման (ապապետականացման) մասին օրենքներով սահմանված կարգով: Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքն առանձին գլուխ է տրամադրում գույքի հավատարմագրային կառավարման դրույթներին, սակայն օրենսգրքում առհասարակ բացակայում է հավատարմագրային կամ կոնցեսիոն կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների գործունեությանը վերաբերող որևէ հոդված: Հետևաբար, բազմիմաստ մեկնաբանություններից խուսափելու համար ցանկալի է, որ քաղաքացիական օրենսգրքում հստակ ձևակերպումներ ստանան պետական և մասնավոր գույքի կառավարումից ծագող իրավահարաբերությունները:

Ամփոփելով ՀՀ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա գործող առևտրային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը, գալիս ենք հետևյալ եզրահանգումների: Բացառությամբ ՀՀ կառավարության Որոշման, քննարկված նորմատիվային փաստաթղթերից և ոչ մեկը չի տալիս կազմակերպության գործունեության արդյունավետության սահմանման և գնահատման որևէ պահանջ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առհասարակ տեղ չեն գտել պետական-մասնավոր համագործակցությանն առնչվող առանցքային հասկացություններ, և այս օրենսգրքով փաստորեն կտրականապես չի կարգավորվում տվյալ ոլորտը: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նույնպես չի ներառում առևտրային կազմակերպության արդյունավետության սահմանման ու գնահատման պահանջ:

Վերոնշյալ օրենսդրական բացերը ենթակա են շտկման առաջին հերթին կոնցեսիայի մասին առանձին օրենքի ընդունմամբ, ինչը հստակ կսահմանի կոնցեսիոն և հավատարմագրային պայմանագրի հիման վրա գործող առևտրային կազմակերպություններին առնչվող նորմերը և համապարփակ պահանջներ կդնի նման կազմակերպությունների գործունեության կարգավորման, վերահսկողության ու արդյունավետության ապահովման հարցերում: Չէ՞ որ պետական-մասնավոր համագործակցության պայմանագրերի հիման վրա գործող առևտրային կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը պետք է մշտապես գտնվի թե՛ պետական, թե՛ հասարակական ուշադրության և վերահսկողության ներքո, քանզի դրանք բացի տնտեսական գործունեություն իրականացնելուց, ունեն նաև հասարակական, ռազմավարական և սոցիալական առաքելություն:

### **Հասմիկ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

#### **ՀՀ հավատարմագրային և կոնցեսիոն կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման համակարգը**

*Բանալի բառեր. հավատարմագրային կառավարում, կոնցեսիոն կառավարում, արդյունավետության գնահատում, պետական վերահսկողություն, առևտրային կազմակերպություն*

Սույն հոդվածն անրադառնում է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավական ակտերին, որոնցով կարգավորում է հավատարմագրային և կոնցեսիոն կառավարմամբ գործող առևտրային կազմակերպությունների գործունեությունը: Հետազոտությունն ուսումնասիրում է նշված առևտրային կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման համակարգն ու պետական վերահսկողության մեխանիզմները, ինչի հիման վրա առաջարկվում է ընդունել կոնցեսիայի մասին առանձին օրենք: Վերջինս թիրախային և ամբողջական մոտեցում կցուցաբերի նշված առևտրային կազմակերպությունների գործունեության նկատմամբ

### **Асмик ДАНИЕЛЯН**

#### **Система оценки эффективности деятельности коммерческих организаций функционирующих на основе доверенности или концессии**

*Ключевые слова: доверительное управление« концессионное управление» оценка эффективности» государственный надзор, коммерческая организация*

В данной статье рассматриваются правовые акты Республики Армения« которые регулируют деятельность коммерческих организаций» функционирующих на основе доверительного или концессионного управления© В исследовании изучаются механизмы государственного надзора и система оценки эффективности деятельности вышеупомянутых коммерческих организаций» на основе которых предлагается принять отдельный закон о концессии© Последний обеспечит целевой и комплексный подход к урегулированию деятельности указанных коммерческих организаций» упорядочит нормативные акты и надзорные нормы и будет способствовать более эффективному функционированию вышеупомянутых организаций.

### **Hasmik DANIELYAN**

#### **The Evaluating System of Commercial Organizations' Efficiency Operating as a Trust or Concession**

*Key words: trust management, concession management, efficiency evaluation, state supervision, commercial organization*

The article revises the legal acts of the Republic of Armenia which regulate the activities of commercial organizations operating through trust or concession management. The study examines the mechanisms of state supervision and the efficiency evaluating system for the above mentioned commercial organizations, on the basis of which it is proposed to adopt a separate law on concession. The latter will perform more comprehensive and target approach to the regulation of the activities of the commercial organizations, will consider normative acts and supervisory norms and will lead to a more efficient functioning of the commercial organizations.

**ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎՐԱ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԷԿՈՆՈՄԵՏՐԻԿ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ**

**Տիգրան ԱՅՎԱԶՅԱՆ**

ՀՊՏՀ Միջ. տնտ. հար. ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր արտահանում, ՀՆԱ, զբաղվածություն, արժույթային փոխարժեք, փոխազդեցություն, գնահատում:

Արտահանման ծավալների ընդլայնում հնարավոր է ապահովել արտահանման խրախուսման և ուղղորդված մակրոտնտեսական քաղաքականությունների զուգորդմամբ, քանզի արտահանման տեմպերի վրա էական ներգործություն են ունենում այլ մակրոտնտեսական ցուցանիշները, ինչպիսիք են՝ համախառն ներքին արդյունքը կամ ազգային եկամուտը, բնակչության զբաղվածության և գործազրկության մակարդակները, ինչպես նաև արտարժույթային փոխարժեքների տատանումները: Արտահանման ծավալների վրա հատկապես ազդում են այն արտարժույթների փոխարժեքների տատանումները, որոնք օգտագործվում են արտահանման դիմաց վճարումներ իրականացնելու համար (ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի և այլն): Արտահանման ծավալների փոփոխության վրա հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը գնահատվել է էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ:

Մոդելների կառուցման նպատակով օգտագործվել են 1998-2016թթ. ՀՀ եռամսյակային տվյալները. ՀՆԱ՝ շուկայական գներով, արտահայտված ԱՄՆ դոլարով (մոդելում՝ GDP), արտահանում՝ շուկայական գներով (մոդելում՝ Export), արտահայտված ԱՄՆ դոլարով, զբաղվածություն՝ արտահայտված հազար մարդ չափման միավորով (մոդելում՝ EMP), ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ արժույթային զույգի փոխարժեքը՝ մոդելում EXRATE: Տվյալների աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներն են: Դիտարկումների թիվը կազմել է 74, ընտրվել է գծային մոդել: Մոդելը գնահատվել է փոքրագույն քառակուսիների մեթոդով (ՓՔՄ)՝ օգտագործելով Eviews 4 ծրագիրը:

Ռեգրեսիոն և կոռելացիոն վերլուծության համար անհրաժեշտ է, որ դիտարկվող ժամանակային շարքերը լինեն ստացիոնար: Միավոր արմատ թեստի միջոցով դիտարկվող ժամանակային շարքերի ստացիոնարության ստուգման արդյունքում պարզ դարձավ, որ դրանցից ոչ մեկը ստացիոնար չէ, ուստի հետագա վերլուծության համար մենք կկիրառենք արտահանման,



ՀՆԱ-ի, զբաղվածության և փոխարժեքի աճի ժամանակային շարքերը, որոնք ստացվում են: Դիտարկենք կոռելացիոն վերլուծության մատրիցը:

**Աղյուսակ 1.** Կոռելացիոն մատրից

	DEXPORT
DEMP	0.161570569036
DEXRATE	-0.318702957072
DGDP	0.693184218439

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, արտահանման աճը ուժեղ դրական կոռելացված է ՀՆԱ-ի աճի հետ, թույլ դրական կոռելացված է զբաղվածության աճի հետ և թույլ բացասական՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետ: Արտահանման և ընտրված մյուս փոփոխականների միջև պատճառական կապի բացահայտման համար կիրառենք Գրենջեր-պատճառականության թեստը:

**Աղյուսակ 2.** Արտահանման աճի և ՀՆԱ-ի աճի միջև Գրենջեր-պատճառականության թեստի արդյունքները

Pairwise Granger Causality Tests			
Date: 06/09/17 Time: 11:34			
Sample: 1998:1 2016:4			
Lags: 2			
Null Hypothesis:	Obs	F-Statistic	Probability
DGDP does not Granger Cause DEXPORT	73	17.7001	6.5E-07
DEXPORT does not Granger Cause DGDP		8.28012	0.00060

**Աղյուսակ 3.** Արտահանման աճի և փոխարժեքի աճի միջև Գրենջեր-պատճառականության թեստի արդյունքները

Pairwise Granger Causality Tests			
Date: 06/09/17 Time: 11:26			
Sample: 1998:1 2016:4			
Lags: 3			
Null Hypothesis:	Obs	F-Statistic	Probability
DEXRATE does not Granger Cause DEXPORT	68	3.03369	0.03589
DEXPORT does not Granger Cause DEXRATE		1.70365	0.17566

Ինչպես երևում է Գրենջեր պատճառականության թեստի արդյունքներից (տե՛ս աղյուսակներ 2, 3 և 4), արտահանման աճը ՀՆԱ-ի աճի գրենջեր-պատճառ է հանդիսանում հաջորդող 2 եռամսյակում, զբաղվածության

աճի գրենջեր պատճառ է՝ հաջորդող 4 եռամսյակում, իսկ փոխարժեքի փոփոխությունը արտահանման աճի պատճառ է հաջորդող 3 եռամսյակում:

**Աղյուսակ 4.** Արտահանման աճի և զբաղվածության աճի միջև Գրենջեր-պատճառականության թեստի արդյունքները

Pairwise Granger Causality Tests			
Date: 06/09/17 Time: 11:33			
ошибок в прогнозах ожидаемых полезных результатов инвестиций должны учитываться в оценке целесообразности осуществления инновационных программ. В перспективных экономических расчетах не представляется возможным с высокой точностью определить ожидаемые положительные и отрицательные результаты намеченных инвестиций, что в свою очередь требует исчисления коэффициента риска ошибок таких прогнозов и использования его при анализе эффективности предполагаемых инноваций. Следует отметить, что данный коэффициент увеличивается с ростом объемов инновационных программ. На первоначальном этапе многие полагали, что вступление Армении в ЕАЭС принесет больше экономического ущерба, чем пользы, если вышеуказанная проблема не будет решена [4,526]. Сотрудничество Армения – ЕАЭС оценивается очень положительно, однако, наряду с политическими решениями, желательно, чтобы имели место правильные экономические расчеты. При вступлении в ЕАЭС как Армения, так и другие страны в сфере политики лишаются возможности принимать односторонние, самостоятельные решения по отношению к третьим странам. То есть, вопросы должны решаться со всеми странами совместно. Это, в первую очередь, относится к проблемам выявления относительных и абсолютных преимуществ стран-членов ЕАЭС [5,53]. Следовательно, необходимо выявить те критерии и стандарты, которые позволят объективно подходить к выбору и оценке национальных конкурентных преимуществ. Помимо производительности труда, качества и цены товаров, конкурентоспособность также может зависеть от опыта, профессионализма персонала, уровня компетентности менеджмента, умения глубоко и всесторонне исследовать потребительские рынки, точности и степени вероятности прогнозов и т.д. Конкурентоспособность в немалой степени зависит также от конкурентной среды и эффективности антикоррупционной и антимонопольной политики государства. В частности, уровень коррупции в странах ЕАЭС по классификации Transparency International нельзя считать удовлетворительным. Особо больно сказываются последствия коррупции на национальную экономику, снижая ее конкурентоспособность, увеличивая долю «теневой экономики», и как следствие – снижая уровень и качество жизни людей. При максимально возможном индексе восприятия коррупции в 100 баллов, у Армении значение этого индекса равно 35 в 2015г., а у других стран ЕАЭС 32 и ниже. Быстрое преодоление критического порога оценки 50 индекса восприятия коррупции из возможных 100 баллов должно стать ориентиром для стран ЕАЭС. Первая десятка и страны региона по рейтингу коррупции в 2016г. Согласно опубликованным данным, меньше всего коррупции в 2016г. в Дании, самая коррумпированная страна в 2016г. – Сомали [8]



**Рисунок 1.** Уровень коррумпированности стран в 2016 [8].

В 2015г. Армения – 95 место, а в 2016г. 94-ое место. В 2017г. Армения ухудшила свои позиции и с 33 баллами опустилась на 113-е место в рейтинге восприятия коррупции по итогам 2016 года, составленном организацией Transparency International. На том же месте в списке 176 стран - 113-м - находятся Боливия и Вьетнам. По показателям, Армения из государств бывшего СССР опережает: РФ, Украину, Казахстан (126 место), Азербайджан и Молдавию (123 место), однако уступает Эстонии (26 место), Литве (38 место), Латвии и Грузии (50 место). Турция и Иран занимают 64-е и 131-е места соответственно.

**Таблица 1.** Уровень восприятия коррупции согласно исследованиям Transparency International в 2016г.

РАНГ	СТРАНА	БАЛЛЫ
1	Дания	92
2	Новая Зеландия	91
3	Финляндия	89
4	Швеция	87
5	Норвегия	86
6	Швейцария	86
7	Сингапур	84
8	Нидерланды	83
9	Люксембург	82
10	Канада	81
26	Эстония	69
50	Грузия	52
64	Турция	45
94	Армения	37
119	Беларусь	31
126	Азербайджан	29
126	Казахстан	29
136	Киргизия	27
136	Россия	27

Возглавляют рейтинг Новая Зеландия и Дания, заработавшие, 92 и 91 балл соответственно. Далее расположились Финляндия и Швеция, занявшие 3 и 4 места с 89 и 87 баллами соответственно (2 места в рейтинге за 2016 год нет).

Наихудшие показатели у Сомали (10 баллов), Южного Судана (11 баллов), Северной Кореи (12 баллов) и Сирии (13 баллов). Индекс восприятия коррупции (The Corruption Perceptions Index) отражает распространенность коррупции в государственном секторе. Индекс составляется на основе данных опросов экспертов и представителей бизнеса. Опросы проводят независимые экспертные организации, изучающие госуправление и бизнес-климат. Эксперты Transparency International оценивают методологию каждого источника информации, чтобы убедиться, что она соответствует стандартам качества [9].

На предпринимательскую деятельность, конкуренцию и уровень конкурентоспособность отдельных компаний и всей экономики оказывает существенное воздействие также фискальная политика, особенно ее налоговая составляющая. Именно обоснованная и взвешенная налоговая политика с жестким применением законодательства и эффективное налоговое администрирование призваны бороться с теневой экономикой. Неустойчивость налогообложения также важный фактор риска, поскольку на первоначальном этапе нововведений предоставленные налоговые льготы могут быть в дальнейшем изменены и даже отменены, что ставит под сомнение планы проведения крупномасштабных инноваций.

Вместе с тем, существует ряд проблем, связанных с практическим применением таможенного законодательства ЕАЭС. Например, проблема косвенного налогообложения товаров в странах Союза. Так первоначально предполагалось, что легковые авто, растаможенные в Белоруссии юридическим лицом, на основе единой для России и Белоруссии ставки таможенного обязательства на ввозимые товары станет возможным поставлять в Россию без ущерба для российских производителей в силу произошедшей из-за выравнивания пошлины нивелировки цен. Однако на практике этого не произошло – между условиями приобретения легковых автомобилей для юридических лиц России и Белоруссии до последнего времени сохранялась разница в цене на них. Причиной этого явились правила уплаты НДС. В Белоруссии налог в 20% начислялся только на разницу между закупочной и отпускной ценой автомобиля, тогда как в России – на его полную розничную стоимость. В результате, стоимость легкового автомобиля в Беларуси, несмотря на более высокий уровень НДС, оказывалась значительно ниже, при этом, чем дороже машина, тем заметнее была разница [10].

Заметно влияет на конкурентоспособность экономики также система транспортных и иных коммуникаций. Определенные риски Армении связаны еще и с тем, что это пока единственная страна, не имеющая общей границы с другими

странами, входящими в ЕАЭС. Это означает, что в случае попыток поставок товаров в республику и из нее обязательно возникнет вопрос транзита, который сегодня в большей степени осуществляется мимо территории Азербайджана через Грузию и Иран. Однако, учитывая настроенность грузинских политиков, вполне можно ожидать, что Тбилиси вместе с Баку попытаются сделать все, чтобы осложнить жизнь армянам и использовать ситуацию в собственных интересах, что, в конечном счете, может свести на нет все плюсы от участия Армении в союзе. [11]

Возможности частичного блокирования важнейших коммуникационных систем Армении являются причиной формирования снабженческого риска. Неустойчивость поставок и срывы в снабжении товарно-материальными ценностями представляют серьезную угрозу развитию сотрудничества. Неэффективно действуют и рычаги государственной защиты внутреннего рынка. Импорт товаров осуществляется без особых экономических препятствий, что резко снижает заинтересованность отечественных предпринимателей в крупномасштабных инвестициях. В условиях сильной внешней конкуренции местные капиталовложения становятся порой слишком рискованными.

Наконец, для регулирования экономики и обеспечения долгосрочного экономического роста и повышения уровня конкурентоспособности национального хозяйства необходимо применить политику демонополизации экономики. Все это подразумевает такие меры, как:

Запреты на действия органов власти и управления, которые могут неблагоприятно повлиять на конкуренцию. Усердная и эффективная борьба с коррупционностью армянского рынка;

Создание эффективного рынка ценных бумаг, интегрированной с международными рынками капитала, что позволит иностранным инвесторам участвовать в финансировании той части экономики, которая наиболее конкурентна и имеет корпоративные принципы управления. Это в долгосрочной перспективе приведет к снижению конкурентоспособности фирм, которые не финансируют свой бизнес по корпоративным каналам и следовательно не инвестируют в механизмы инновационного управления бизнесом;

Стимулирование развития среднего и малого бизнеса посредством долгосрочных кредитов, что невозможно без соответствующего развития финансового рынка. Здесь также необходимо со стороны Комиссии осуществить действия, касающиеся вопроса усложнения государством входа на конкретные рынки, так как сумма денежных средств, необходимых для взноса, установленного государством, замедляет вход на данные рынки МСП, что играет на руку крупному бизнесу;

Рассчитывать долю участника рынка исходя также из понятия “аффилированное лицо”, то есть при расчете индекса концентрации и вычисления доли одного хозяйствующего субъекта нужно принимать во внимание и долю аффилированного лица, так как в нашей практике много примеров, когда один хозяйствующий субъект, владея множеством бизнесов, регистрирует их на имена своих родственников;

Рассмотрение налоговой политики, с целью исключения налоговых льгот для монополистов, а так же создание механизмов недопущения неуплаты налогов со стороны монополистов. Что однозначно не может быть сделано без механизмов борьбы против коррупции;

Усовершенствование институционального регулирования;

Усовершенствование закона о защите прав собственности, контрактных прав и экономической конкуренции;

Необходимо сократить административные барьеры (при получении лицензий, разрешений, сертификатов, при регистрации и т.д.);

Введение нормативов рентабельности по отношению к импортерам и налогообложения сверхдоходов от импорта, заработанных, например, благодаря ревальвации национальной валюты [12];

Принуждение к уголовной ответственности злоупотребителей доминирующим положением.

Обобщая можно подчеркнуть, что заметны незначительные, но положительные тенденции в формировании конкуренции на товарных рынках РА, в частности: стабильное увеличение количества хозяйствующих субъектов в отдельных секторах производства, уменьшение степени концентрации на отдельных товарных рынках и улучшение конкурентной среды.

Государственная политика при монополизированной экономике должна быть направлена на то, чтобы путем государственного регулирования потенциальной конкуренции, правительство могло соответствовать своим интересам эту власть и, используя антитрестовское законодательство, помешать монополиям получить избыточную рыночную власть. Обеспечивая конкуренцию на рынке товаров и услуг, политика ценообразования станет стабильным, тем самым поднимется уровень жизни и благосостояние населения. Потребители не будут вынуждены покупать товары с завышенными ценами монополистов, так как на рынке товаров и услуг будет не один производитель или поставщик, а несколько. Тем самым обеспечивая здоровую конкуренцию на рынке труда, Армения и других стран Союза в долгосрочной перспективе начнет развиваться и будет иметь стабильный экономический рост.

Обобщая вышеперечисленные проблемы, можно составить следующую небольшую иерархию основных угроз для Республики Армения в рамках ЕАЭС:

- зависимость от политической обстановки в области санкций на основного союзника - России;
- нерешенная проблема с импортозамещением, значительная доля на внутреннем рынке принадлежит зарубежным производителям;
- недостаточный совокупный объем промышленного сектора в экономике страны в целом;
- транспортная блокада, отсутствие альтернативных способов сообщения;
- высокий уровень коррумпированности, как в стране, так и на всей территории Союза;
- значительный уровень безработицы и высокая «текучка» лучших умов за границу;
- несформировавшаяся согласованность в области налогообложения.

Таким образом, решение проблемы конкурентоспособности отдельных товаров, услуг, а также компаний и всего национального хозяйства зависят не только от экономической политики отдельных государств, но и от коллективных и координированных действий и усилий всех стран-членов ЕАЭС. Это позволит заменить имеющуюся тенденцию вытеснения из рынков отдельных производителей и импортеров, политикой выявления ресурсов для успешного импортозамещения и эффективной реализации национальных конкурентных преимуществ. Все эти и многие другие вопросы интеграции наших стран уже сегодня требуют незамедлительного решения, что ставит проблему политической воли правительств стран участниц ЕАЭС.

#### **Список использованной литературы**

1. Мониторинг взаимных инвестиций в странах СНГ – 2016,
2. [http://www.eabr.org/tr/research/centre/projectsCII/projects\\_cii/index.php?id\\_4=49580](http://www.eabr.org/tr/research/centre/projectsCII/projects_cii/index.php?id_4=49580)
3. Манасерян Т.Н. Об ожиданиях делового сообщества Армении от участия страны в ЕАЭС, Научный журнал «Альтернатива», #4, 2016, стр.7-13.
4. Гулиян Г.А., Новые интеграционные форматы и экономические вызовы Армении, Научный журнал «Альтернатива», #2, 2016, стр. 526- 532.
5. Манасерян Т.Н., Особенности и перспективы экономического развития Республики Армения, Армянская Армия, Научный журнал МО РА, 3 (89). 2016, с.53-54.
6. Манасерян Т.Н., Рост деловой активности и вызовы экономического развития Армении, 8 августа 2016 г
7. [http://soyuzinfo.am/rus/analytics/detail.php?ELEMENT\\_ID=2003&sphrase\\_id=1439](http://soyuzinfo.am/rus/analytics/detail.php?ELEMENT_ID=2003&sphrase_id=1439).
8. <http://gotoroad.ru/best/corruption>
9. <http://www.panarmenian.net/rus/news/230870/>
10. Ушкалова Д.И. Формирование Таможенного союза и единого экономического пространства России, Белоруссии и Казахстана: проблемы и предварительные итоги. М.: Институт экономики РАН. 2012. – 48с.
11. <http://www.ritmeurasia.org/news--2015-06-30--eaes-i-armenija-perspektivy-i-riski1->
12. Экономическая газета Армении «Деловой экспресс».



**Татул МАНАСЕРЯН, Володя МКРТЧЯН**

**К вопросу о риске конкурентоспособности в рамках интеграционных процессов ЕАЭС**

*Ключевые слова: конкурентоспособность, национальные конкурентные преимущества, коррупция, теневая экономика, антимонопольная политика*

Аннотация: В данной статье описывается сущность проблем и угроз, возможных при формировании конкурентных преимуществ Республики Армения в рамках ЕАЭС. Дана краткая характеристика основных факторов риска, препятствующих повышению конкурентоспособности и развитию успешной деятельности. Исследованы возможные рекомендации по обеспечению долгосрочного экономического роста и повышению уровня конкурентоспособности национального хозяйства.

**Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, Վոլոդյա ՄԿՐՏՉՅԱՆ**

**Մրցունակության ռիսկի հարցը ԵՏՄԻ (չգիտեմ ոնց կլինի հայերեն) ինտեգրման գործընթացների շրջանակներում**

*Բանալի բառեր: մրցունակություն, ազգային մրցակցային առավելություններ, կոռուպցիա, սրվերային տնտեսություն, հակամենաշնորհային քաղաքականություն*

Այս հոդվածում նկարագրվում է ԵԱՏՄԻ շրջանակներում Հայաստանի Հանրապետության մրցակցային առավելությունները ձևավորելու հնարավորության և հնարավոր խնդիրների և սպառնալիքների էությունը: Ներկայացվում են հիմնական ռիսկային գործոնների համառոտ նկարագրությունը, որոնք խոչընդոտում են մրցունակության աճը և հաջող գործունեության զարգացումը: Նաև տրվում է ինֆորմացիա երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման և ազգային տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման հնարավոր առաջարկներ և խորհուրդների մասին:

**Tatoul MANASSERIAN, Volodya MKRTCHYAN**

**The question of risks of competitiveness within integration processes of EEU.**

*Key words: competitiveness, national competitive advantages, corruption, shadow/hidden economy, antimonopoly policy*

This article describes the essence of problems and threats, which are possible during the forming of competitive advantages of the Republic of Armenia within EEU. The short characteristic of general factors of risks, which are increasing the competitiveness and development of successful activity are given. The possible recommendations about ensuring long-lasting economic growth and increase in level of competitiveness of national economy are investigated.

## ՄԱՆԿԱՑՈՒՄ, ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

### Վարսենիկ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի աշխատակից

Բանալի բառեր. սնանկացում, սնանկացման կառավարում, կազմակերպությունների ֆինանսական առողջացում, սնանկության իրավատնտեսական կարգավորում, ֆինանսական կայունություն, սնանկության վարույթ

### 1. Կազմակերպությունների սնանկացման կարգավորման միջազգային փորձը

Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, տարաբնույթ գործոնների ազդեցությունը երբեմն կարող է հանգեցնել կազմակերպությունների գործունեության ճգնաժամային իրավիճակների առաջացմանը, ինչպես նաև, ճգնաժամի ծայրահեղ ձևի՝ սնանկացման ի հայտ գալուն: Վերջինիս կառավարման հիմնական խնդիրը կազմակերպության ֆինանսապես անկայուն աշխատանքի պայմաններում պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռված պաշտպանությունն է, ինչպես նաև տարատեսակ ռիսկերի կանխումը: Կազմակերպությունների սնանկացման ընթացակարգերի կառավարումը էականորեն փոխում է կազմակերպության բոլոր ենթահամակարգերի աշխատանքը: Մասնավորապես, դատարանի կողմից ընթացակարգերի ներգրավման պահից սկսած, որոնք ամրագրված են անվճարունակության մասին համապատասխան օրենսդրությամբ ու նորմատիվային ակտերով (ֆինանսական առողջացում, արտաքին կառավարում, մրցունակ արտադրություն, խաղաղության համաձայնագիր և այլն), կազմակերպության կառավարման գործընթացի մասնակիցների լիազորությունները սահմանափակվում, դադարեցվում կամ սառեցվում են: Կազմակերպությունը ստանում է պարտապանի կարգավիճակ, հայտնվում են կառավարման գործընթացի նոր մասնակիցներ՝ մրցակցային, լիազորված մարմիններ, լուծարային կառավարիչներ: Ֆինանսական առողջացման ընթացակարգում կառավարման համակարգը բնորոշվում է վարկատուների առավել խիստ վերահսկվող գործառույթով: Մինչդեռ, արտաքին կառավարման ընթացակարգում կառավարման նպատակային գործառույթը մնում է նույնը, ինչպես ֆինանսական առողջացման ժամանակ: Ընթացակարգը իրագործում է արտաքին կառավարիչը,

ով նշանակվում է դատարանի կողմից: Տվյալ դեպքում փոխվում է պարտապանի կողմից կառավարվող համակարգը. պարտապանի ղեկավարը հեռացվում է, իսկ նրա լիազորությունները իր վրա է կրում արտաքին կառավարիչը: Սնանկացման կանխարգելմանն ուղղված առավել հաճախ կիրառվող ընթացակարգերից է մրցակցային գործընթացը: Սնանկացման տրվյալ ընթացակարգում՝ պարտապանի կողմից կառավարման նպատակային գործառույթը վարկատուների դրամական միջոցների բավարարումն է, պարտապանի սնանկացման կանխարգելումը, ինչպես նաև կազմակերպության աշխատանքի անկայունության հաղթահարումը: Հայրենական պրակտիկայում գերակշռում է մրցակցային գործընթացը, որը հանդես է գալիս որպես կազմակերպչական և ֆինանսական խնդիրների լուծման գործիք:

Սնանկացման կարգավորման ստորև նկարագրվող միջազգային փորձը ներկայացվում է տարաբնույթ մոդելների տեսքով, որոնք ուղղված են ինչպես անվճարունակ կազմակերպությունների ֆինանսական կայունության ապահովմանը, այնպես էլ ազգային տնտեսության կայուն զարգացմանը: Այսպես օրինակ, **Ֆրանսիայում** սնանկացման կարգավորման գործընթացների հիմքում ընկած է եղել կազմակերպությունների վերակազմավորման գաղափարը, այսինքն՝ զգուշացնել, ոչ թե բուժել: Այստեղ սնանկացման կարգավորման խնդիրն ուղղված հայեցակարգերի և ծրագրերի հիմնական նպատակը կազմակերպությունում աշխատատեղերի պահպանումը և պարտատերերի պահանջների բավարարումն է: Ի տարբերություն այլ երկրների՝ Ֆրանսիայում ավելի սուր է արտահայտված կազմակերպության աշխատակիցների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը: Եթե կազմակերպությունը չունի բավարար ֆինանսական միջոցներ շարունակելու իր գործունեությունը, ապա դատարանի որոշմամբ բացվում է սնանկության գործի վարույթ, և սկսվում է ակտիվների վաճառքը: Ֆրանսիայում 2012թ. դատարաններում քննվել են 59780 սնանկության վարույթ, ինչը 2,7% գերազանցում է 2011թ. ցուցանիշը: Իսկ 2009թ. 2500 կազմակերպությունների համար հաջողվել է պահպանել 10000 աշխատատեղ: Եթե անդրադառնանք այդ գործընթացի հետևանքով առաջացած վնասին, ապա 2012թ. կրճատվել է 245000 հաստիք՝ թվով ավելի շատ, քան մինչև 2008 թվականը: Ֆրանսիայում տնտեսական ճգնաժամը 2012թ. գրանցեց 16000 սնանկ ճանաչված ձեռնարկություն, որը

12,5% ավել էր նախորդ տարիների ցուցանիշներից<sup>175</sup>: **Անգլիայում** սնանկացման գործընթացները մեծ ազդեցություն են ունեցել միջազգային իրավական համակարգի վրա, որոնք ուղղված են կազմակերպության պարտքերի կարգավորմանը և եկամուտների կառավարմանը: Այստեղ հիմնական նպատակը սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունն է, սնանկության չեզոքացումը կամ վճարունակության վերականգնումը: Անգլիայում սնանկության վարույթի օպերատիվությունն ապահովելու համար սահմանվում են գործողությունների հստակ ժամկետներ: Հավելենք նաև, որ հարկադիր ծառայությունների կողմից սնանկ ճանաչված կազմակերպությունների թիվը 2011թ. ամենաբարձրն էր (2003թ. կազմել է 949 կազմակերպություն)<sup>176</sup>: **Գերմանիայում** սնանկության կարգավորմանն ուղղված ընթացակարգերում ընդգծված չեն պարտապանի և վարկատուի հարաբերությունները: 1994 թվականին, երբ Գերմանիայում կտրուկ աճեց սնանկացման ենթակա կազմակերպությունների թիվը, ընդունվեց մի օրինագիծ, որը նպատակ ուներ պահպանել պարտապանի բիզնես գործունեությունը և վարկատուի իրավունքները: Գերմանիայում կազմակերպությունների սնանկության կարգավորման հիմքում դրված է հետևյալ խնդիրը՝ ոչ թե լուծարում այլ վերակազմավորում և եթե անվճարունակ կազմակերպությունը չի կարողանում վերականգնել իր ֆինանսական կայունությունը, ապա պարտավոր է այդ մասին դիմում ներկայացնել դատարան, հակառակ դեպքում, կկիրառվի քրեական հետապնդում: Հատկանշական է նաև այն փաստը, որ Գերմանիայում «Սնանկության մասին» օրենքի 58-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը վերահսկողություն է իրականացնում սնանկության կառավարչի նկատմամբ: Այսինքն, դատարանը ցանկացած պահի կարող է սնանկության կառավարչից պահանջել տեղեկատվություն կամ հաշվետվություն սնանկության վարույթի ընթացիկ վիճակի, առաջիկա ծրագրերի մասին: Իսկ դատարանի որոշումները չկատարելու դեպքում սնանկության կառավարչի նկատմամբ կկիրառվի տուգանք<sup>177</sup>:

Հարկ է նշել, որ 2012 թվականին սնանկ կազմակերպությունների թիվը նվազել է՝ հասնելով 28304 – ի, 2011 թվականի ցուցանիշից 6%-ով ավելի քիչ: Սակայն մի շարք խոշոր ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, էներգե-

<sup>175</sup> Анализ процедур банкротства во Франции, Германии, Англии и России, А. Шапова, И. Е. Рушицкий, А. Б. Воронина, Россия, 2017, стр. 6:

<sup>176</sup> Трайнин А. Ф. Несостоятельность и банкротство. СПб, 1913, с.125.

<sup>177</sup> French Insolvency law, Survey of Reforms in practice, 2016.

տիկան, վնասը 2011-2012 թվականներին 31.5 մլրդ եվրոյից հասել է 51.7 մլրդ եվրոի<sup>178</sup>: **Ռուսաստանում** սնանկացման գործընթացները սկիզբ են առել 11-րդ դարից և կիրառության մեջ են դրվել 1903թվականին ընդունված օրենքի հիման վրա, որը համապատասխանում է միջազգային չափանիշներին և զգալի դեր է խաղացել արդյունաբերության և առևտրի զարգացման գործում: Հարկ է նշել, որ Անգլիայում և Ռուսաստանում սնանկացման կարգավորման ընթացակարգերը նման են, բացառությամբ այն բանի, որ Անգլիայում ձեռնարկության ֆինանսական վիճակի վերլուծությունը իրականացվում է 12 շաբաթվա ժամանակահատվածում կառավարիչների կողմից<sup>179</sup>:

Անցումը դեպի շուկայական տնտեսություն և այդ հարաբերություններում ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը պահանջում էր անվճարունակությունը կարգավորող որակապես նոր իրավանորմատիվային հիմքեր ունեցող օրենք: Ռուսաստանի Դաշնությունում օրենքը ներառում է հետևյալ գործընթացները՝ ֆինանսական առողջացում, արտաքին վերահիսկողություն և մրցութային արտոնության գործընթաց: Սնանկության վարույթով քննվող գործերի թիվը Ռուսաստանում 2006թ. կազմել է 91431 կազմակերպություն, 2007թ.՝ 44255 կազմակերպություն, 2008թ.՝ 34367, իսկ 2010թ. աճել է 38,8 % - ով<sup>180</sup>: Ինչ վերաբերում է Ռուսաստանի արտաքին պարտքին, ապա հարկ է նշել, որ 2016թ. մարտի վերջին այն կազմել է ՀՆԱ-ի 16,3%-ը, համապատասխանաբար՝ տնային տնտեսություններինը 14,7%-ից աճել է 15,6%, ֆինանսական սեկտորինը՝ 11,8%-ից 14,4%, իսկ ոչ ֆինանսական սեկտորինը 14,7%-ից հասել է 15,6%-ի<sup>181</sup>: Վերոնշյալ երկրների սնանկացման կարգավորման ընթացակարգերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն երկիրը, որտեղ արձանագրվել է սնանկացվող կազմակերպությունների թվի նվազում, Ֆրանսիան է: Այստեղ գրանցվել է սնանկ կազմակերպությունների վերականգնման աճ, Գերմանիայում ցուցանիշը համեմատաբար քիչ է՝ 6%, Ռուսաստանում՝ 8%, Անգլիայում ակնհայտ նվազում է:

<sup>178</sup> Зарубежное законодательство на русском языке [Электронный ресурс]. Режим доступа : <http://www.worldbiz.ru>

<sup>179</sup> Анализ процедур банкротства во Франции, Германии, Англии и России, А. Шапова, И. Е. Рушицкий, А. Б. Воронина, Россия, 2017 стр. 3-7.

<sup>180</sup> Финмаркет [Электронный ресурс]. Режим доступа : <http://www.finmarket.ru/>.

<sup>181</sup> Հիմք են հանդիսացել Центральный банк Российской Федерации-ի տվյալները: <https://www.cbr.ru/>.

## 2. Սնանկացման կանխարգելման գործոնների և մեթոդների ուսումնասիրություն

Տնտեսության մեջ ճգնաժամային իրավիճակների զարգացմանը համընթաց անհրաժեշտ է կատարելագործել կազմակերպության կառավարման մոտեցումները: Արդյունավետ կառավարման խնդիրների համատեքստում կարևորվում է դերակատարությունը ձեռնարկության և նրա վարկատուների շահերի համաձայնեցման առումով: Դա օգնում է լուծել հակասությունները, որոնք անվճարունակության ժամանակ առաջանում են կողմերի միջև և ապահովել ոչ կոնֆլիկտային պայմաններ՝ կապված հակաճգնաժամային միջոցառումների իրականացման հետ: Ինչպես նշվել է, կազմակերպության սնանկացումը տարբեր արտաքին և ներքին բացասական գործոնների ազդեցության արդյունք է: Արտաքին միջավայրի գործոններն են.

- ✓ ընդհանուր տնտեսական գործոնները, որոնք պայմանավորված են պետության տնտեսական վիճակի ներգործությամբ,
- ✓ գործոնները, որոնց օգնությամբ որոշվում է պետության, նրա իրավական, հարկային և կառավարչական փոխազդեցությունը կազմակերպության գործունեության վրա,
- ✓ շուկայական տնտեսության գործոնների փոխազդեցությունը և այլն:

Ներքին գործոններից կարելի է առանձնացնել արդյունաբերական, կառավարչական, ֆինանսական և ներդրումային (կապված կազմակերպության անարդյունավետ ներդրումային քաղաքականության հետ) գործոնները: Զարգացած երկրներում արտաքին գործոնները կազմում են 10-15%, իսկ ներքինները՝ 85-90%<sup>182</sup>: Որոշ տեսաբանների կարծիքով արտաքին և ներքին ցուցանիշների առկայությունը չի կարող հիմք հանդիսանալ անհատի անվճարունակության ճանաչման համար: Մի շարք պետությունների օրենսդրություններ հնարավորություն են տալիս անհատին ճանաչել անվճարունակ ոչ միայն արտաքին և ներքին ցուցանիշների միաժամանակյա, այլև դրանցից մեկի առկայության դեպքում: Գրականության մեջ ի շարս սնանկացման կանխարգելման մի քանի մեթոդների առանձնացնում են<sup>183</sup>.

<sup>182</sup> Институт несостоятельности (банкротства) как инструмент повышения; С. А. Карелина, Москва, 2014, стр. 144, <https://books.google.am/books?id=p6u4BgAAQBAJ>.

<sup>183</sup> <http://madrih.ru/article/predotvrashenie-bankrotstva-predpriyatiya/>.

➤ **Էքստրապոլյացիան**, որը հնարավորություն է տալիս կատարել կազմակերպության ֆինանսական իրավիճակի մասին կանխատեսումներ առավել կարճ ժամկալի համար, բացահայտել անվճարունակության պատճառները, որոնք կհանգեցնեն կազմակերպության ֆինանսական անկայունությանը: Կախված ընդհանուր տնտեսական իրավիճակից և ժամանակահատվածից՝ էքստրապոլյացիան նաև թույլ է տալիս կառուցել ռիսկերի գնահատման վիճակագրական սանդղակ:


➤ **Փորձագիտական գնահատումը**, որը կիրառվում է այն դեպքում, երբ կազմակերպության տնտեսական իրավիճակը ավելի սուր է արտահայտված, իսկ երկրում տնտեսական փոփոխությունները՝ վտանգավոր, և անհրաժեշտություն է առաջանում իրականացնել կանխատեսումներ ավելի երկար ժամանակահատվածի համար:

➤ **Մոդելավորումը**, որը սնանկացման կանխարգելման առավել տարածված մեթոդներից է: Այն առաջարկում է սնանկացման կանխարգելման լուծման ուղիների որոնմամբ մոդելավորման գործիքակազմի և վերլուծության կիրառությունների միջոցով, որի ընթացքում քննվում են բոլոր գործընթացները, որոնք մի կողմից կազմակերպության անվճարունակության պատճառ կարող են հանդիսանալ, և մյուս կողմից հիմք հանդիսանալ կանխարգելման վերաբերյալ ռացիոնալ որոշումների կայացման համար:

### **3. ՀՀ պետական պարտքի ազդեցությունը սնանկ կազմակերպությունների թվաքանակի աճի վրա**

Հարկ է նշել, որ սնանկացման կանխարգելմանն ուղղված ցանկացած գործընթաց, նախևառաջ, պահանջում է գլոբալ ֆինանսական կայունություն: Հետևաբար, ուսումնասիրելով համաշխարհային և ՀՀ պարտքը, կարելի է ենթադրել, որ նմանատիպ ֆինանսական անկայունությունը բավականին դժվարությամբ կլուծի կազմակերպությունների սնանկացման կառավարման հիմնախնդիրը: Համաշխարհային պարտքը, որը ներառում է կառավարությունների, բանկերի, կազմակերպությունների ներքին և արտաքին պարտքերը, 2017թ. կազմել է ամբողջ ՀՆԱ-ի 327%-ը՝ 217 տրիլիոն դոլար՝ գերազանցելով նախորդ տարիների ցուցանիշներին 600 միլիարդ դոլարով: ԱՄՆ-ում և Չինաստանում այն համապատասխանաբար աճել է 2 տրիլիոն դոլարով՝ ԱՄՆ-ում այն հասել է 63 տրիլիոն դոլարի, իսկ Չինաստանում՝ 32,7

տրիլիոն դոլարի, Ճապոնիայում, Չիլիում, Կոլումբիայում և Թուրքիայում արտաքին պարտքը միասին կազմում է 56 տրիլիոն, այսինքն՝ ՀՆԱ-ի 218%-ը: Ըստ Ֆինանսների միջազգային ինստիտուտի (IIF) տվյալների՝ 2002թ. արտաքին պարտքը կազմել է ՀՆԱ-ի 246%-ը, 2007թ-ին՝ 276%-ը, 2012թ.՝ 305%, իսկ 2017թ.՝ 327%-ը<sup>184</sup>:



**Գծանկար 1.** Համաշխարհային պարտքի ընդհանուր պատկերը 2002-2017թթ. (տրիլիոն ԱՄՆ դոլար)

ՀՀ պետական պարտքը 2017թ. կազմել է 3 տրիլիոն 17,8 մլրդ դրամ, որից 4 մլրդ 456,5 մլն դոլար կազմում է ՀՀ կառավարության արտաքին պարտքը, 1 մլրդ 240,1 մլն դոլար՝ ներքին պարտքը, իսկ 611,3 մլն կազմում է ՀՀ Կենտրոնական բանկի պարտքը: Պարտքի կառուցվածքի բերված թվերի համադրության մեջ նկատենք, որ ոչ ֆինանսական հատվածի խոշոր և միջին կազմակերպությունների պարտավորությունները 2017թ. կազմել են 2 տրիլիոն 898 մլրդ դրամ, որից ժամկետանց պարտավորությունները կազմել են 1 մլրդ 451 մլրդ դրամ: Իրական հատվածի կազմակերպությունների ժամկետանց պարտավորությունները կազմել են 1,45 մլրդ դրամ: ՀՀ կազմակերպությունների պարտքի 2 տրիլիոն 127 մլրդ դրամը բանկերի վարկերի և փոխառությունների գծով պարտավորություններն են, իսկ 771,4 մլրդ դրամը՝ կրեդիտորական պարտքերը<sup>185</sup>:

<sup>184</sup> Տվյալների համար հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի ցուցանիշները <https://www.globalbank.com.pa/es>.

<sup>185</sup> Տվյալների համար հիմք են հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության <http://minfin.am/hy/content/> տվյալները:



Ժամանակակից հասարակություններում տնտեսական աճի բարելավմանն ուղղված իրավատնտեսական կարգավորումների համակարգում ավելի գերակայող են դարձել կազմակերպությունների սնանկացման կանխարգելման գործընթացները: Համաշխարհային տնտեսությունում անմրցունակ կազմակերպությունները ինքնաբերաբար դուրս են մղվում շուկաներից՝ չբավարարելով բիզնեսի կենսունակությունն ապահովող մենեջմենթի, մարքեթինգի ոլորտներում ռացիոնալ որոշումների կայացման պայմաններին: Հատկանշական է, որ զարգացած տնտեսություն ունեցող երկրների սնանկացման կանխարգելմանն ուղղված օրենսդրական ակտերը հիմնականում միտված են ոչ թե սնանկացման գործընթացի կառավարմանն ու կարգավորմանը, այլ կանխարգելմանը, այսինքն՝ առաջնային խնդիր է համարվում ձեռնարկության ֆինանսական առողջացումը: Նման մոտեցումը բացատրվում է նրանով, որ պետության համար առաջնային խնդիրը ուժեղ, կենսունակ ձեռնարկությունների պահպանումն ու աշխատատեղերի ավելացումն է:

Հավելենք, որ այդպիսի մոտեցման տրամաբանությունը սնանկացում երևույթը կենդանի օրգանիզմի համեմատության մեջ տեսնելն է այն իմաստով, որ յուրաքանչյուր դեպք չպետք է մեկուսի դիտարկվի, և քաղաքականությունը պետք է ուղղորդվի կանխարգելմանը: Ի դեպ, այդպիսիք են նաև շեշտադրումները առողջապահության ոլորտում՝ պրոֆիլակտիկայի կանխարգելման, ուժեղացման նշանաբանով բժշկական ծառայությունների մատուցում: Տնտեսական յուրաքանչյուր գործունեություն, որը միտված է շահույթի ստացմանը, կապված է ռիսկային և անորոշությունների պայմաններում ճիշտ կողմնորոշվելու գործոնի հետ, ուստի, այս դեպքում, խնդրի լուծումը ստանում է հակաճգնաժամային ուղղվածություն: Վերջինս բովանդակում է միջոցների հայտնաբերման ու հաղթահարման գործընթացը, որը միտված է կանխելու ճգնաժամային իրավիճակը: Սնանկացման կարգավորման հաջող և արդյունավետ մեթոդներ մշակելու համար անհրաժեշտ է իրականացնել կազմակերպությունների ֆինանսատնտեսական վերլուծություն, ուսումնասիրել և կիրառել զարգացած երկրների առաջատար փորձը:

#### **4. ՀՀ-ում սնանկության ինստիտուտի կատարելագործման նախադրյալները և հիմնական ուղիները**

Սնանկության վերաբերյալ մշակվող և կատարելագործվող միջազգային օրենսդրությունը խնդիր ունի հավասարակշռություն մտցնել տնտեսության մեջ՝ փոփոխելով և զարգացնելով նորմատիվային փաստաթղթերը, ստեղծելով առավելագույնս նպաստավոր պայմաններ ձեռնարկությունների ֆինանսական կայունության պահպանման համար:

ՀՀ-ում սնանկության ինստիտուտը ապահովում է պարտատերերի պահանջների պաշտպանությունը, որոշակի կառուցակարգերով նպաստում է ֆինանսական խնդիրներ ունեցող կազմակերպություններին ֆինանսական առողջացման ծրագրի միջոցով դուրս է հանում սնանկացման գործընթացից, ինչպես նաև օգնում է կազմակերպությանը գործունեություն ծավալել ֆինանսապես կայուն միջավայրում: Խնդիրն այն է, թե ինչ արդյունավետությամբ է գործում գործող սնանկացման ինստիտուտը:

Ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների փորձը, սնանկացման ինստիտուտը կարող է որոշակի խթան հանդիսանալ ձեռնարկության արդյունավետ զարգացման համար, քանի որ այն համարվում է միջոց՝ միաժամանակ մի քանի խնդիրների լուծման համար. օգնում է տնտեսության մեջ իրականացնել բարեփոխումներ, նպաստում է ձեռնարկության կառուցվածքային ստորաբաժանումների առավել արդյունավետ աշխատանքին, բարելավել կազմակերպությունների կառավարման մակարդակը, ինչպես նաև հանդիսանում է լրացուցիչ երաշխիք վարկատուների շահերի պաշտպանության և չօգտագործվող ակտիվները տնտեսական շրջանառություն վերադարձնելու համար:

Շուկայական տնտեսության պայմաններում, ինչպես կարելի է տեսնել, քիչ չեն այնպիսի իրավիճակները, երբ շուկայի մասնակիցները հնարավորություն չեն ունենում կատարելու իրենց պարտավորությունները: Սնանկության գործընթացի օպերատիվությունն ապահովելու համար 2016թ. «Սնանկության մասին» ՀՀ օրենքում կատարվել են սնանկության ինստիտուտի բարելավմանն ուղղված որոշակի փոփոխություններ, որոնց նպատակը սնանկության ինստիտուտի, սնանկության կառավարիչների գործունեությունը ավելի արդյունավետ դարձնելն է: Սակայն այն դեռևս պարունակում է որոշակի թե-

րություններ, ինչպիսիք են՝ սնանկության կառավարիչների գործունեության արդյունավետությունը և սնանկության վարույթի մասնակիցների շահերի պաշտպանությունը: Սնանկության կանխարգելման գործում կարևորագույն գործառույթ են իրականացնում սնանկության կառավարիչները: ՀՀ-ում սնանկության կառավարիչ կարող է լինել միայն ֆիզիկական անձը, իսկ որոշ երկրներում, ինչպիսիք են Վրաստանը, Բելառուսը, Անգլիան, սնանկության կառավարիչ կարող է լինել թե ֆիզիկական, թե իրավաբանական անձը: 2016թ. օրենքի որոշակի փոփոխություններից հետո առաջադրվել են մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են անմիջապես սնանկության կառավարիչներին: Ըստ Համաշխարհային բանկի արդյունավետ սնանկության և պարտատեր/պարտապան ռեժիմի վերաբերյալ սկզբունքների<sup>186</sup> D8 կետի սնանկության կառավարիչները պետք է ունենան իրավասություններ օրենքի շրջանակներում կատարելու իրենց վերապահված գործառույթները, գործեն անկողմնակալ և անկախ: ՄԱԿ-ի առևտրային իրավունքի հանձնաժողովի «Սնանկության իրավունքի վերաբերյալ» օրենսդրական ուղեցույցում<sup>187</sup> սահմանվում է, որ սնանկության կառավարչի բարձր որակավորումը և պրոֆեսիոնալիզմը կարևոր նախապայման է այն դեպքում, երբ սնանկության գործընթացները երկարաձգվում են: Փաստորեն, սնանկության վարույթի բարդությունը կարող է դրականորեն ազդել սնանկության կառավարիչների պրոֆեսիոնալիզմի վրա: Ինչ վերաբերում է սնանկության կառավարիչների նկատմամբ կարգապահական պատասխանատվության կանոններին, հարկ է նշել, որ դրանք պետք է հստակեցված լինեն օրենսդրությամբ: Սնանկության կառավարիչների որակավորումը իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարության կողմից, բայց երբեմն նախարարությունն էլ ի գորու չէ պատշաճ կերպով վերահսկել և կառավարել գործընթացը: Օրենքում կատարված փոփոխությունների համաձայն՝ նախարարությունն ինքն է իրականացնում սնանկության կառավարիչների նկատմամբ վերահսկողություն և ենթարկում կարգապահական պատասխանատվության: Օրենքը սահմանում է նաև սնանկության կառավարիչների մասնագիտական գործունեության նրկատմամբ վերահսկողության տարբեր համակարգեր: Վերահսկողությունը կարող է իրականացվել դատարանի, կազմակերպության կամ այլ մարմնի

<sup>186</sup> [http://siteresources.worldbank.org/INTGILD/Resources/ICRPrinciples\\_Jan2011.pdf](http://siteresources.worldbank.org/INTGILD/Resources/ICRPrinciples_Jan2011.pdf), 2011.

<sup>187</sup> UNICITRAL, Legislative guide on insolvency law, 2005, էջ 175,

[http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722\\_Ebook.pdf](http://www.uncitral.org/pdf/english/texts/insolven/05-80722_Ebook.pdf).

կողմից: Ներկայումս օրենքը սահմանում է, որ սնանկության կառավարիչների մասնագիտական գործընթացի որակավորումը վերապահված է կազմակերպությանը, մինչդեռ այն բավարար պայման չի կարող լինել: Սնանկության կառավարիչների գործունեության օրինականության վերաբերյալ բազմաթիվ դիմում-բողոքները օրինական կարգով չեն ստացել բավարար լուծումներ, թեկուզև տալու դրանց, այնինչ, ինչպես նշվեց վերևում, սնանկության կառավարիչների որակավորումը իրականացվել է արդարադատության նախարարության կողմից: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ որոշ երկրներում սնանկության կառավարիչներին վերահսկում է պետական լիազոր մարմինը, իսկ որոշ օրենքներում էլ վերահսկողությունը ուղղակիորեն նախատեսված է դատարանի կողմից: Դատարանը կարող է ցանկացած պահի սնանկության կառավարչից պահանջել տեղեկատվություն, հաշվետվություն գործի քննության վերաբերյալ, իսկ չներկայացնելու դեպքում սահմանի տուգանք:

Օրենքում առաջարկվող փոփոխություններից է նաև սնանկության կառավարիչների վարձատրության կարգը. վարձատրությունը սահմանվում է՝ ըստ պահանջների բավարարման չափի: Նախկինում սահմանվում էին վարձատրության տարբեր դրույքաչափեր, ըստ որի սնանկության կառավարիչը, անկախ գործի հաջող ավարտից, ստանում էր բավարար վարձատրություն, որը չէր խթանում, որպեսզի սնանկության վարույթը ավարտվի ֆինանսական առողջացմամբ: Այժմ, նախագծով նախատեսված օրենքի փոփոխությունը կհանգեցնի նրան, որ ֆինանսական առողջացման ընթացքում պարտատերերի պահանջների բավարարման դեպքում սնանկության կառավարիչը ստանում է պարգևավճար: Նախկինում սնանկության կառավարիչը իրավունք չուներ գույքագրման ժամանակ բնակարան մուտք գործելու օրինական հիմքերի, իսկ օրենքի փոփոխությունից հետո պարտապանի միջոցների հաշվին գույքի գույքագրումն իրականացվում է կառավարչի կողմից, որը իրավունք ունի հրավիրելու նաև անկախ գնահատող: Օրենքի փոփոխություններից է սնանկության գործընթացի համար սահմանված հստակ ժամկետները: Սնանկության կառավարիչների կողմից գործի հնարավորինս սեղմ ժամկետներում ավարտելը, այդուհանդերձ, չպետք է խոչընդոտվի սընանկացման վարույթի տևողության հիմնավորված երկարացմամբ: Սնանկացման գործընթացին մասնակցում են սնանկության վարույթի սուբյեկտ-

ները՝ պարտապանը, վարկատուները, ժամանակավոր կառավարիչը, կառավարիչը, լիազորված պետական մարմինը, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև պարտապանի աշխատակիցների ներկայացուցիչները, վարկատուների ժողովի ներկայացուցիչները և այլն: Ժամանակավոր կառավարիչը իրականացնում է լիազորությունները՝ օրենքով սահմանված մինչև այն պահը, երբ դատարանի որոշումը օրինական ուժ կստանա և պարտապանը սնանկ կճանաչվի: Մինևույն ժամանակ, կառավարչի գործունեության հիմնական սկզբունքներ են մնում անկախությունը, օբյեկտիվությունը և անշահախնդրությունը: Բացի այդ, սնանկացման ողջ գործընթացի շրջանակներում կառավարիչը պետք է գտնվի չեզոք դիրքում: Հետևաբար, կառավարիչ չի կարող նշանակվել այն անձը, ով ունի իր սեփական շահը սնանկացման գործընթացում: Կառավարիչն իրավունք ունի զբաղվելու պրոֆեսիոնալ գործունեության այլ տեսակներով և ձեռնարկատիրական գործունեությամբ մի պայմանով, որ նման գործունեությունը չի ազդի սնանկացման գործընթացի վրա դրված պարտականությունների վրա և չի առաջացնի շահերի բախում:

«Օրինագծի մեկ այլ առանձնահատկությունը նրանում է, որ ի տարբերություն որոշ երկրների օրենսդրության՝ սահմանվում են առավել խիստ չափանիշներ, մասնավորապես պարտքի մարման ժամկետներին վերաբերող հարցերում: Սնանկացման հիմնավորումներ են համարվում այն փաստերը, որոնց առկայությունն անհրաժեշտ է հայտարարության ընդունման համար: Պարտապանին սնանկ ճանաչելու հիմնավորումներից կարելի է նշել պարտապանի կողմից ուշացման թույլատրումը՝ կապված ոչ վիճելի վճարային պարտավորության հետ և պարտապանի անվճարունակությունը:

Սնանկացման կարգավորման արդյունավետ կառուցակարգերի մշակման ժամանակ հարց է ծագում՝ արդյոք պարտապանի անվճարունակությունը և պարտավորությունների ուշացումը նույն խնդրին չեն հանգեցնում: Պատասխանելով հարցին՝ նպատակահարմար է ուսումնասիրել դատա-արբիտրաժային պրակտիկայի հետևյալ օրինակը:

Երևանի քաղաքապետարանի կողմից հայց էր ներկայացվել սնանկ ճանաչել «Այոռուսգազպրոմ» ՓԲԸ-ը: Պայմանագրային պարտավորությունների չկատարման արդյունքում պարտքը կազմել էր 22 500 000 ՀՀ դրամ:

Նման խոշոր կազմակերպությունը սնանկ ճանաչելու համար հայց ներկայացնելը նշված գումարը ետ ստանալու նպատակով, տրամաբանական չէր, քանի որ դրամական պարտքը առաջացել է պարտապանի կողմից իր պարտավորությունը չկատարելու արդյունքում, այլ ոչ թե անվճարունակության<sup>188</sup>: Սակայն, համաձայն «Անվճարունակության մասին» ՀՀ օրենքի՝ 17.12.2003 թվականից սկսած եթե կազմակերպությունը վճարային պարտավորություն կատարելիս ուշացրել է 30 և ավելի օր<sup>189</sup>, ապա Երևանի քաղաքապետարանի կողմից սնանկ ճանաչելու մասին ներկայացված պահանջը համապատասխանում էր օրենքին:

Անվճարունակությունը արտահայտվում է չվճարվածությամբ և այլ արտաքին գործոններով, որոնք վկայում են պարտապանի վատ ֆինանսական վիճակի մասին և ցույց են տալիս, որ պարտապանը չի կարողանում ճիշտ ժամանակին կատարել վարկատուի պահանջները: Տեսակետ կա, որ պարտապանի անվճարունակությունը և գույքի անբավարարությունը համընկնում են. վճարումները կատարելու անկարողությունը վկայում է, որ պարտապանը բավականաչափ գույք (ունեցվածք) չունի:

---

<sup>188</sup> Տես՝ Երևանի քաղաքապետարանի հայցը ընդդեմ <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ -ն՝ սնանկ ճանաչելու պահանջով: Գործ համար՝ T-245.Երև.:1996/ www.datalex.am.)

<sup>189</sup> ՀՀ անվճարունակության(սնանկության) մասին օրենք, <http://www.parliament.am>.

## **Վարսենիկ ՍԱՐԳՍՅԱՆ**

### **Սնանկացում. գործընթացներ և կառավարում**

*Բանալի բառեր. սնանկացում, սնանկացման կառավարում, կազմակերպությունների ֆինանսական առողջացում, սնանկության իրավափոփոխական կարգավորում, ֆինանսական կայունություն, սնանկության վարույթ*

Համաշխարհային տնտեսության մեջ ճգնաժամային իրավիճակների զարգացումը անհրաժեշտություն է առաջացնում կատարելագործել կազմակերպությունների սնանկացման կառավարման/կանխարգելման մեթոդներն ու գործիքակազմը: Սնանկացման միջազգային փորձի ուսումնասիրությունից զատ քննության են առնվել նաև ՀՀ սնանկության ինստիտուտի զարգացման նախադրյալներն ու ուղիները: Սնանկացման կանխարգելման գործընթացը պահանջում է առաջին հերթին գլոբալ ֆինանսական կայունություն: Ներկայացված են սնանկացման կանխարգելման գործոններն ու մեթոդները, որոնք նշանակալի ազդեցություն կունենան կազմակերպությունների անվճարունակության կանխարգելման ռացիոնալ որոշումների կայացման գործում:

## **Варсеник САРГСЯН**

### **Банкротство: процессы и регулирование**

*Ключевые слова: банкротство, управление банкротством, финансовое оздоровление организаций, правоэкономическое регулирование банкротства, финансовая стабильность, процедура банкротства*

Развитие кризисных ситуаций в мировой экономике обуславливает необходимость совершенствования методов и инструментария управления/ предотвращения банкротства организаций. Описав практику банкротства, рассматриваются предпосылки и пути развития института банкротства в Армении. Процесс предотвращения банкротства в первую очередь требует глобальной финансовой стабильности. При анализе воздействия внешней и внутренней задолженности Армении на увеличение числа организаций склонных к банкротству становится очевидным, что для выявления причин банкротства необходима разработка новых подходов.

## **Varsenik SARGSYAN**

### **Bankruptcy: processes and management**

*Key words: bankruptcy, bankruptcy management, financial recovery of organizations, legal and economic regulation of bankruptcy, financial stability, bankruptcy proceedings*

The development of crisis situations in the global economy makes necessary to improve the methods and tools of bankruptcy management / prevention of organizations. Besides the study of bankruptcy international practice, have been also examined the prerequisites and ways of development of the Bankruptcy Institute of Armenia. The bankruptcy prevention process first of all requires global financial stability. Investigating the impact of the external and internal debt of Armenia on the increase in the number of bankrupt institutions is becoming apparent the necessity of developing new approaches to the problems of managing / preventing organizations bankruptcy.

## ГЕОПОЛИТИЧЕСКИЕ РЕАЛИИ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ

**Գայն՝ ՍՕԼԱԽՅԱՆ**

Преподаватель педагогического института им. М. Налбандяна в Гюмри

Ключевые слова: интеграционные процессы, СНГ, взаимосотрудничество.  
геополитические интересы

После распада СССР Россия являлась единственной притягательной силой на постсоветском пространстве. Однако со временем стало наблюдаться значительное ослабление влияния и места России, особенно ввиду усиления геополитических интересов Запада, в частности, США, на постсоветской территории. Заинтересованность США, а также активность ЕС, предпринимаемые ими попытки значительным образом предопределяют результаты и способствуют координации многих постсоветских государств в сторону Запада, что является одними из наиболее весомых препятствий в интеграционных процессах на постсоветском пространстве, инициатором которых сегодня в большей мере является «правопреемница Советского Союза».

Некоторые политологи и политические деятели видят в создании ЕАС стремление воссоздать империю, которая сможет, ограничивая суверенитет независимых государств, затормозить их вхождение в Европейский союз. Известный западный исследователь З. Бжезинский, хотя и считает Россию «крупным геостратегическим действующим лицом», утверждает, что «само ее присутствие оказывает ощутимое влияние на обретение независимости государства в пределах широкого евразийского пространства. Россия лелеет амбициозные геополитические цели, которые все более и более открыто провозглашает. ... Многое зависит от развития внутривнутриполитического положения и особенно от того, станет Россия европейской демократией или опять – евразийской империей»<sup>190</sup>.

Российская сторона, в свою очередь, все время говорит о неуместности таких заявлений. Очерчивая контуры будущего союза, его «архитектор» В. Путин, считает, что «наивно пытаться реставрировать или копировать то, что уже осталось в прошлом, но тесная интеграция на новой ценностной, политической, экономической основе – это веление времени»<sup>191</sup>.

---

<sup>190</sup> Бжезинский З. Великая шахматная доска. Господство Америки и его геостратегические императивы, М., 1999, 256 с. С. 59.

<sup>191</sup> Путин В.В. Новый интеграционный проект для Евразии – будущее, которое рождается сегодня // [Электронный ресурс] // Известия. 3 октября 2011г. // URL: <http://izvestia.ru/news/502761> (дата обращения: 12.04.2013).



Основные акценты интеграции непосредственно поставлены на сотрудничество в экономической, промышленной и др. сферах. Кроме этого, союз будет строиться на основе общих культурно-цивилизационных ценностях, оставшихся от Советского Союза, на общепринятых международных нормах и демократических началах.

Для этого следует, в первую очередь, обеспечить соблюдение демократических норм и ценностей во всех странах – предполагаемых участников будущего союза. Нужно, в первую очередь, задействовать реальные механизмы, создать определенные органы, ответственные за подготовку соответствующего уровня интегрирующихся в Союз государств. И только те государства, где наблюдается строгое соблюдение демократических ценностей, обеспечение прав и свобод граждан, могут в дальнейшем образовать союз, соответствующий международным нормам, который достоин стать серьезным геополитическим игроком в современных политических процессах. Нужно обеспечить готовность всех государств к реализации такого проекта, как создание Евразийского Союза. Ведь конечный успех интеграции во многом зависит не только от России, но и, в первую очередь, от самих интегрирующихся стран, т.к. гарантом успешного объединения является в первую очередь добрая воля и готовность каждого государства. Хотя некоторые западные исследователи скептически относятся к возможной реализации Евразийского проекта. Например, известный политолог Збигнев Бжезинский не верит, что идея создания Евразийского союза завершится успехом, и добавляет, что говорить, что Россия «создает Евразийский союз», было бы преувеличением. Последняя, и, в первую очередь, президент В. Путин, хотели бы его создать, но сейчас это лишь пожелания, а не свершившийся факт<sup>192</sup>.

Для России, которая находится как бы на стыке цивилизаций (конфуцианской, мусульманской, западно-католической), важным является не только стать глобальным стабилизирующим звеном в центре Евразии, но и нейтрализовать всякое воздействие, в частности, западное, на интеграционные процессы в рамках СНГ.

Намерение России создать геэкономический союз сегодня сталкивается с интересами Запада, которые могут негативно отразиться на интеграции государств-членов Содружества, с учетом расширения НАТО для привлечения новых потенциальных сторонников в регионе. Сегодня постсоветская территория яв-

---

<sup>192</sup> Бжезинский З. Я не верю, что идея создания Евразийского союза завершится успехом»/[Электронный ресурс]// 2 апреля, 2013 //газета № 59, Агатон Козиньский, Польша, 29 марта 2013г. Перевод ИноСМИ.ru // URL:<http://www.day.kiev.ua/ru/article/mirovye-diskussii/zbignev-bzhezinskiy-ya-ne-veryu-chto-ideya-sozdaniya-evraziyskogo-soyuza>

ляется не только центральным в ракурсе интересов России, но и Запада, в частности, США.

В связи с этим России необходимо, в первую очередь, укрепить двухсторонние отношения с бывшими союзными республиками, большинство из которых либо направляют ориентировочный вектор в сторону Запада, создавая проблемы и заграждая интеграционные процессы, либо ведут комплементарную внешнюю политику, пытаясь балансировать между двумя полюсами. Только после урегулирования отношений со всеми постсоветскими государствами, возможно будет по-отдельности воссоединить их на общем основании. Главным достижением на этом пути является Союзное государство России и Белоруссии, что обусловлено широким спектром совпадений интересов в экономической, политической, культурной и др. сферах. Большую значимость представляют отношения с Украиной, которая, будучи неотъемлемой частью постсоветского пространства в историческом, культурном, цивилизационном смыслах, во многом отдаляет себя от интеграционных процессов региона. В связи с тесным сотрудничеством с западными структурами (НАТО, ЕС), Украина не только переформирует отношения с государствами – членами Содружества, но и усиливает присутствие НАТО в регионе.

Что же в основном касается двухсторонних отношений с государствами Закавказья, то здесь самым верным и надежным союзником России является Армения, с которой совпадают интересы, в первую очередь, в геополитическом смысле: Армения, как и Россия, не допускают усиление влияния Турции в регионе, в отличие от Азербайджана, который близок к Турции в этническом, религиозном и др. аспектах. Грузия же является одним из постсоветских государств, взявших прозападный внешнеполитический курс, особенно после ее выхода из состава СНГ (2009г.). Во многом интеграционные процессы в рамках СНГ затормаживала также и «двойственная» политика Узбекистана (углубление сотрудничества с США, выход из состава ДКБ, присоединение к ГУАМ, затем опять же присоединение к ДКБ и выход из ГУУАМ-а).

Перед Россией сегодня серьезно стоит задача не только воссоединение Евразийского пространства и создание мощной конфигурации на международной политической арене, но и минимизация западного влияния, которое может негативно отразиться на реализации этого проекта. Для этого следует выработать конструктивные механизмы во взаимоотношениях с Западом, используя для этого политические маневры и общие точки соприкосновения (например, Россия и США сотрудничают в области борьбы с международным терроризмом). В противном случае, встает угроза не только усиления влияния Запада и ослабление влияния

России на евразийском пространстве, но и провала интеграционных процессов и реализации Евразийского проекта.

Л. Косикова считает, что глобализирующийся мир XXI века держится на «трех китах», на трех крупных экономических макрорегионах, возникших в процессе весьма продвинутой региональной экономической и политической интеграции. Это «Большая Европа», Северная Америка (блок НАФТА – США, Канада, Мексика) и «Большая Азия» (АСЕАН)<sup>193</sup>. И в связи с возрастающей ролью Азиатского региона, говоря о столкновении геополитических интересов на постсоветском пространстве, необходимо упомянуть также о другом крупном геополитическом игроке – Китае.

На современном этапе российско-китайское взаимодействие характеризуется широким спектром областей сотрудничества, включающих активные контакты на высшем уровне, торгово-экономические и гуманитарные связи, сотрудничество на международной арене, в том числе в Совете безопасности ООН, совместное участие в международных и региональных организациях (ШОС, БРИКС) и др. Важную роль в так называемой «конкуренции» России и Китая играет область транспортных перевозок.

Для преодоления возможных негативных последствий для России и, следовательно, для евразийских интеграционных процессов, России следует вести серьезные диалоги с китайскими партнерами. Необходимо найти «общие знаменатели», а не продолжать конкуренцию, т.к. от успешного сотрудничества двух стран во многом зависит стабильность как в Центральной и Южной Азии, так и в большей части Евразийского пространства – от Сибири до Дальнего Востока.

Таким образом, в геополитическом измерении проблему для евразийской интеграции может создать не только Запад, но и государства, имеющие геополитические интересы на постсоветском пространстве. Для преодоления существующих и возможных препятствий России необходимо выработать конструктивную и гибкую политику по отношению к странам, от которых исходящая угроза интеграции в рамках СНГ представляется возможной. И в этом смысле многое зависит от политической дальновидности нынешних властей, т.к. стабильная политическая ситуация во многом обуславливает гармоничное развитие остальных сфер.

---

<sup>193</sup> См: Косикова Л.С. Евразийская стратегия России как форма участия в глобальной экономике // Климов А.А., Лексин В. Н., Швецов А.Н. Евразийская интеграция в XXIв. Сборник статей, М. ЛЕНАНД, 2012, 288 с. СС. 108–129. С. 114.

**Գայն՝ СОЛАХЯН**

**Геополитические реалии на постсоветском пространстве**

*Ключевые слова: интеграционные процессы, СНГ, взаимосоотрудничество. геополитические интересы*

Сегодня перед российским руководством, наряду с попыткой воссоединить постсоветские государства, обеспечить динамичное и экономическое сотрудничество и т.д., стоит и другая немаловажная задача: свести к минимуму возможное воздействие извне, что во многом может стать реальной угрозой конечной цели интеграции вообще и нейтрализовать ранее достигнутые успехи в этом процессе.

**Gayane SOLAKHIAN**

**Geopolitical realities in the post soviet space**

*Key words: CIS countries, integration processes, geopolitical interests*

Today, the Russian leadership, along with an attempt to reunite post-Soviet countries, to ensure dynamic and economic cooperation, has another important task: to minimize the possible impact from outside, which in many ways can become a real threat to the ultimate goal of integration in general and neutralize earlier the progress achieved in this process.

**Գայանե ՍՈԼԱԽՅԱՆ**

**Աշխարհաքաղաքական իրողությունները հետխորհրդային տարածաշրջանում**

*Բանալի բառեր. ԱՊՀ փարածաշրջան, ինտեգրացիոն գործընթացներ, համագործակցություն աշխարհաքաղաքական հետաքրքրություններ*

Այսօր Ռուսաստանի ղեկավարությունը, հետխորհրդային պետությունների դինամիկ և տնտեսական համագործակցություն ապահովելու փորձի հետ միասին, ևս մեկ կարևոր խնդիր ունի՝ նվազագույնի հասցնել դրսից հնարավոր ազդեցությունը, որը շատ դեպքերում կարող է իրական սպառնալիք դառնալ ինտեգրման ճանապարհին և չեզոքացնել այս գործընթացում արդեն ձեռք բերված առաջընթացը:

**ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ  
ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ**

**Սուրիկ ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. հարկեր, տեսչություն, ռազմավարություն, կառուցվածք, բարեփոխումներ, վերափոխումներ, կարգավիճակ, քաղաքականություն

Հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքը, կիրառվող գործիքակազմն ու մոտեցումները պայմանավորված են ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ մի շարք օբյեկտիվ գործոններով: Օբյեկտիվ գործոնների շարքում կարևոր դերակատարում ունեն այնպիսի իրողությունները, ինչպիսիք են բյուջետային համակարգի կառուցվածքն ու մակարդակների թիվը, գործող իրավունքի նորմերը, պետության ստանձնած տնտեսական պարտավորությունները և դրանց իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ծավալը, միջազգային ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում տարբեր կառույցներին անդամակցությամբ պայմանավորված պարտավորությունները, տնտեսական զարգացվածության ընթացիկ մակարդակն ու հասարակության ինքնակարգավորման ունակությունը, սոցիալ-տնտեսական ավանդույթները, աշխարհաքաղաքական իրադրությունն ու այլ գործոններ:

Հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքի ելակետում պետության կողմից իրականացվող կառավարման կառուցվածքն է, որը պայմանավորում է ինչպես բյուջեների մակարդակների թիվը, այնպես էլ հարկային մարմինների տարբեր մակարդակների միջև փոխհարաբերությունների բնույթը: Հայաստանի Հանրապետությանը հանդես է գալիս որպես ունիտար պետություն, ինչով էլ պայմանավորված է ՀՀ բյուջետային երկմակարդակ կառուցվածքը: Վերջինս կարգավորվում է «ՀՀ Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով<sup>194</sup>: Նշված օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ բյուջետային համակարգն իրավունքի նորմերով կարգավորվող ՀՀ տնտեսական հարաբերությունների և ՀՀ պետական կառուցվածքի վրա հիմնված երկու մակարդակի բյուջեների ամբողջությունն է, որի առաջին մակարդակը պետական բյուջեն է, իսկ երկրորդ մակարդակը՝ հա-

<sup>194</sup> ՀՀ Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենք: ՀՕ-137, ՀՀՊՏ 1997.08.11/18, ընդունված 24.06.1997:

մայնքների բյուջեներն են: Պետական բյուջեն և համայնքների բյուջեները կազմում են ՀՀ համախմբված բյուջեն:

Հայաստանի հարկային համակարգի ժամանակակից պատմությունը ընդամենը երկու և կես տասնամյակի պատմություն ունի: Նորանկախ Հայաստանի հանրապետությունում հարկային համակարգը, որպես այդպիսին գոյություն չունեի, քանի որ գտնվելով ԽՍՀՄ կազմում՝ Հայաստանում ևս ձևավորվել էր պլանային տնտեսությանը բնորոշ տնտեսական կառուցվածք, որտեղ հարկային համակարգի դերակատարումը գործնականում երկրորդային էր<sup>195</sup>: Չնայած ԽՍՀՄ տարիներին հարկային համակարգի նման կարգավիճակին՝ պետք է արձանագրել, որ այդ տարիներին գործում էին այդ համակարգի բնորոշ առանձին տարրեր: Խորհրդային տարիներին հարկային համակարգին համահունչ էր հարկերի հավաքագրման գործառույթների ապակենտրոնացումն ու տեղային բնույթը<sup>196</sup>: ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին փորձ արվեց վերաիմաստավորել հարկային համակարգի դերն ու գործառույթները, որի նպատակով ԽՍՀՄ Մինիստրների Սովետի թիվ 76 առ 24.01.1990թ. որոշմամբ և «Պետական հարկային տեսչությունների իրավունքների, պարտականությունների ու պատասխանատվության» մասին ԽՍՀՄ օրենքով (21.05.1990թ.) ձևավորվեց ԽՍՀՄ պետական հարկային ծառայությունը: Ավաղ, ԽՍՀՄ փլուզմամբ ավարտվեց խորհրդային հարկային ընդհանուր համակարգի ձևավորման և զարգացման փուլը, որին հաջորդեցին արդեն անկախացած նախկին ԽՍՀՄ հանրապետություններում ազգային հարկային համակարգերի ձևավորման գործընթացները:

Անկախության ձեռքբերմամբ հարկային համակարգը նոր իմաստ և նպատակներ ստացավ, որոնց իրականացումը կենսական նշանակություն ունեցավ պետական համակարգի գործունեության համար: Սակայն այս փուլում առաջ եկան այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք էին՝ հարկային օրենսդրության բացակայությունն ու անկատարությունը, նյութատեխնիկական բազայի անհամապատասխանությունը նոր պահանջներին, և որ ամենակարևորն է, մարդկային ռեսուրսների անբավարար մակարդակը: Ընդ որում,

<sup>195</sup> Հարությունյան Վ., Մարգարյան Չ., Հարկերի ծագումը, էությունը և տնտեսագիտական բովանդակությունը: Սոցիալ-Տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (հանրապետական գիտաժողովի նյութեր): Եր., «Գիտություն», 2008, էջ 12:

<sup>196</sup> Խաչատրյան Ա.Հ., Հարկային իրավունք: Երևան, «Գիտություն», 2003, էջ 35:

Եթե նյութատեխնիկական բազայի հետ կապված հիմնախնդիրների լուծումն ընդամենը կապված էր համապատասխան ֆինանսական միջոցների պակասի հետ, ապա իրավական դաշտի և մարդկային ռեսուրսների անբավարարության ու անկատարության հարցերն ավելի երկարաժամկետ լուծում էին պահանջում:

ՀՀ ներկայիս հարկային համակարգի պատմության սկիզբը կարելի է դիտարկել 1990-1991թթ., երբ ընդունվեցին հարկային ծառայության սկզբունքների, կառուցվածքի, հարկային մարմինների և հարկատուների իրավունքներն ու պարտականությունները սահմանող առաջին օրենքներն ու իրավական ակտերը: ՀՀ պետական հարկային տեսչության կառուցվածքը պաշտոնապես հաստատվեց 1992թ. մայիսին, երբ ՀՀ վարչապետի 1996թ. մայիսի 10-ի թիվ 271 որոշումով հաստատվեցին «ՀՀ Հարկային տեսչության կանոնադրությունը» և «ՀՀ Հարկային տեսչության կենտրոնական ապարատի կառուցվածքը»: Պետք է արձանագրել, որ չնայած առկա բացերին, հանրության կողմից ոչ տարաբնույթ որակումներին ու առաջադրված խնդիրների լուծման արդյունավետությանը՝ հարկային համակարգը երկու և կես տասնամյակի ընթացքում վերածվել է բավականին կայացած ու առաջադեմ կառույցի, իսկ առկա խնդիրներից շատերը բխում են համապետական տարբեր հիմնախնդիրներից:

Հարկային ռազմավարության իրագործման հիմքում ընկած է հարկային համակարգն իր կազմակերպական կառուցվածքով: Ակնհայտ է, որ հարկային ռազմավարության ամբողջ գործընթացը՝ ռազմավարության մշակումից մինչ դրա իրագործումն ու վերահսկողությունը, գործնականում իրականացվում է հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքի տարբեր օղակների միջոցով, որոնց շարքում չկան ոչ կարևոր և երկրորդական օղակներ: Իր գործունեության ամբողջ ընթացքում ՀՀ հարկային համակարգը ենթարկվել է ինչպես կազմակերպարավական, այնպես էլ կառուցվածքային շարունակական փոփոխությունների, որոնք հիմնավորվել են մատուցվող ծառայությունների որակի բարձրացման անհրաժեշտությամբ և շատ դեպքերում էլ կրել են նաև քաղաքական ենթատեքստ՝ կարճ ժամանակ անց կրկին ենթարկվելով փոփոխությունների:

Եթե փորձենք ժամանակագրորեն ներկայացնել ՀՀ հարկային համակարգում ինստիտուցիոնալ կառուցվածքի կարևոր փոփոխությունները, ապա պետք է նշել «ՀՀ Կառավարության կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ Նախագահի 1996թ. հունիսի 15-ի թիվ 287 հրամանագիրը, որով հարկային մարմնի տեսչական մակարդակը հասցվեց նախարարության մակարդակի՝ ստեղծելով ՀՀ պետական եկամուտների նախարարությունը, որը ներառում էր ինչպես հարկային, այնպես էլ մաքսային ոլորտի կարգավորումը: 2001թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե ստեղծելու մասին» հուլիսի 6-ի թիվ 603 որոշմամբ ՀՀ պետական եկամուտների նախարարության կազմից առանձնացվեց մաքսային վարչությունն ու ստեղծվեց ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն, որից հետո մինչև 2008թ. այս երկու ծառայությունները գործեցին որպես առանձին պետական մարմիններ:


Նախարարության կարգավիճակով հարկային մարմինը գործեց շուրջ 6 տարի, երբ ՀՀ Նախագահի 2002թ. նոյեմբերի 13-ի թիվ ՆՀ-1202-Ն հրամանագրով «ՀՀ պետական եկամուտների նախարարությունը» վերակազմավորվեց «ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության»: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 21-ի թիվ 1926-Ն որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության աշխատակազմի կառուցվածքում ստեղծվեցին երեք նոր հարկային տեսչություններ՝ կապված խոշոր հարկ վճարողների, ակցիզային հարկ վճարողների ու բանկերի և վարկային կազմակերպությունների հետ:

2008թ. օգոստոսի 20-ին «ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության» և «ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի» միացման արդյունքում ստեղծվեց ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը պետք է ներկայացնել որպես հարկային մարմինների ինստիտուցիոնալ կարգավիճակի փոփոխության հերթական փուլ:

2014թ. նախաձեռնվեց հարկային մարմնի ինստիտուցիոնալ կառուցվածքի հերթական փոփոխությունը, մասնավորապես, ՀՀ Կառավարության 2014թ. մայիսի 8-ի թիվ 500-Ն որոշմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն և ՀՀ ֆինանսների նախարարությունը



միաձուլվեցին՝ ձևավորելով ՀՀ ֆինանսների նախարարությունը՝ հարկային մարմնի կարգավիճակը հասցնելով նախարարության մակարդակի: Սակայն նման կարգավիճակով հարկային մարմինը գոյատևեց 2 տարուց պակաս ժամանակ, մինչև ՀՀ Նախագահի 2016թ. մարտի 1-ի ՆՀ-213-Ն հրամանագրի ընդունումը, որով ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպվեց՝ դրանից առանձնացնելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն (ՀՀ ԿԱ ՊԵԿ): ՀՀ հարկային մարմնի ինստիտուցիոնալ կարգավիճակի փոփոխությունները ներկայացված են գծապատկեր 1-ում:



**Գծապատկեր 1.** ՀՀ հարկային մարմնի ինստիտուցիոնալ կարգավիճակի փոփոխությունները՝ ըստ 1991-2016թթ.

ՀՀ հարկային մարմնի կազմակերպման ինստիտուցիոնալ կարգավիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 25 տարիների ընթացքում այն


շուրջ 7 անգամ ենթարկվել է փոփոխության՝ տարբեր ժամանակահատվածներում կազմակերպվելով որպես տեսչություն, նախարարություն, ծառայություն և կոմիտե: Ակնհայտ է, որ նման թվով փոփոխությունները չեն կարող պայմանավորված լինել միայն օբյեկտիվ պայմաններով, և դա այն դեպքում, երբ հարկային մարմնի կազմակերպական կառուցվածքը և ինստիտուցիոնալ կարգավիճակը պետք է բխի հարկման համընդհանուր սկզբունքների տրամաբանությունից, որոնց ապահովումը հիմքեր է ստեղծում հարկային արդյունավետ համակարգ ձևավորելու համար: Միաժամանակ հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքը պետք է հիմնվի հարկման սկզբունքների վրա, ինչը կերաշխավորի հարկային ռազմավարության ինչպես մշակման, այնպես էլ իրագործման ողջ գործընթացի արդյունավետությունը:

Այսպիսով, ինստիտուցիոնալ կառուցվածքի փնտրտուքը ի վերջո հանգեցրեց հարկային մարմնի՝ ՀՀ կառավարությանն առընթեր գործող կոմիտեի կարգավիճակի տրամադրելուն, որը ներառում է ինչպես հարկային, այնպես էլ մաքսային ոլորտների կարգավորման դաշտը: Հարկային մարմնի կազմակերպման առումով նույնպես քննարկվող ժամանակահատվածում տեղի են ունեցել մեծաթիվ փոփոխություններ, որոնք բխել են ոչ միայն ինստիտուցիոնալ կառուցվածքի փոփոխություններից, այլև պայմանավորված են եղել ժամանակի հրամայականներով: ՀՀ հարկային մարմնի կազմակերպական կառուցվածքը սահմանվում է ՀՀ ՊԵԿ-ի կանոնադրությամբ, որը հաստատվել է ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 10-ի 224-Ն որոշմամբ<sup>197</sup>: Այն սահմանում է ՊԵԿ-ի նպատակները և խնդիրները, իրականացվելիք գործառնությունները, կառավարման կարգը, աշխատակազմը, գույքի, և մի շարք այլ կանոնադրական հարցերը: ՊԵԿ-ը հանդես է գալիս որպես «Հարկային ծառայության մասին», «Մաքսային կարգավորման մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված հարկային և մաքսային մարմին: Այն հանդես է գալիս որպես հանրապետական իրավապահ և գործադիր մարմին, որի պահպանման ծախսերը ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին: ՊԵԿ-ի համակարգն ընդգրկում է հարկային և մաքսային մարմինները: Այն կազմված է կոմիտեի նախագահից,


<sup>197</sup> ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին հի կառավարության որոշում: N 224-Ն, ՀՀ ՊՏ 2016.03.15/19(1199).1 հոդ.209.1, առ 10.03.2016:

կոմիտեի նախագահի տեղակալներից, խորհրդականներից, օգնականներից, մամուլի քարտուղարից, կոմիտեի աշխատակազմից, տարածքային ստորաբաժանումներից: ՊԵԿ-ի կառավարումն իրականացվում է նրա նախագահի կողմից, որին այդ պաշտոնին նշանակում և ազատում է ՀՀ նախագահը՝ վարչապետի առաջարկությամբ: ՊԵԿ-ի նախագահը ղեկավարում է կոմիտեի ընթացիկ գործունեությունը, ընդունում է գերատեսչական իրավական ակտեր, առաջարկություններ է ներկայացնում ՀՀ կառավարությանը, սահմանում է աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունների սահմանները, լսում և ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում կոմիտեի գործունեության տարեկան հաշվետվությունները, հաստատում է կոմիտեի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականն ու ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերստուգման արդյունքները, ՀՀ կառավարության հաստատմանն է ներկայացնում կոմիտեի կանոնադրությունը ու աշխատակազմի կառուցվածքը, հարկային տեսչությունների, մաքսատների (այդ թվում՝ տարածաշրջանային) ու մաքսային կետերի ստեղծման, վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ առաջարկություններ, ստեղծում է խորհրդակցական մարմիններ, շնորհում և իջեցնում է հատուկ կոչումներ ու դասային աստիճաններ, կամ զրկում դրանցից, հաստատում է կոմիտեի վերադաս մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, կառուցվածքը և հաստիքացուցակը: Ինչպես նշվեց, ներկայիս հարկային մարմինը, այն է՝ Պետական եկամուտների կոմիտեն, ձևավորվել է 2016թ.: Հատկանշական է, որ իր ձևավորումից շուրջ 1 տարի անց այն կառուցվածքային առումով ենթարկվել է լուրջ փոփոխություններ, որի արդյունքում հարկային մարմնի երկաստիճան համակարգը վերածվել է միամակարդակ համակարգի<sup>198</sup>: Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀՀ ՊԵԿ-ի կառուցվածքը մինչև 2017թ. կառուցվածքային բարեփոխումները, իսկ գծապատկեր 3-ում բերված է նույն թվականից հետո կատարված կառուցվածքային բարեփոխումները:

<sup>198</sup> ՀՀ Կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 224-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության N 514-Ն առ 18 մայիսի 2017 որոշում: N 514-Ն, ՀՀՊՏ 2017.05.31/33(1308) Հոդ.534, 18.05.2017:



**Գծապատկեր 2.** ՀՀ ՊԵԿ-ի կառուցվածքը մինչև 2017թ. կառուցվածքային բարեփոխումները



**Գծապատկեր 3.** ՀՀ ՊԵԿ-ի կառուցվածքը 2017թ. կառուցվածքային բարեփոխումներից հետո

Մինչև բարեփոխումները ՀՀ հարկային համակարգը երկմակարդակ էր, որտեղ առաջին մակարդակում վերադաս մարմինն էր՝ իր վարչություն-

ներով և բաժիններով, իսկ երկրորդ մակարդակում՝ առանձնացվում էին հարկային ու մաքսային մարմինները՝ իրենց տեսչություններով, մաքսատներով և մաքսային կետերով: Բարեփոխումներից հետո հարկային մարմինը դարձել է միամակարդակ, որտեղ նախկինում գործող կազմակերպական կառուցվածքի երկրորդ մակարդակում գործող օղակներն անմիջականորեն գործում են հենց հարկային վերադաս մարմնի կառուցվածքում: Կատարված բարեփոխումների արդյունքում լուծարված կառուցվածքային ստորաբաժանումների փոխարեն ստեղծվեցին նոր, վերադաս մարմնի ենթակայությամբ գործող կառուցվածքային ստորաբաժանումներ, մասնավորապես՝

- հարկ վճարողների սպասարկման վարչություն,
- փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն,
- խոշոր, միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչություն,
- 5 մաքսատուն-վարչություններ,
- ոչ առևտրային կազմակերպությունների հսկողության բաժին ու գնումների համակարգման բաժին:

Միաժամանակ, մաքսային վիճակագրության, վերլուծության և ռիսկերի կառավարման վարչությունը վերանվանվել է մաքսային վիճակագրության ու եկամուտների հաշվառման վարչության, իսկ մաքսանենգության դեմ պայքարի և կրկնակի մաքսային հսկողության վարչությունը՝ մաքսանենգության դեմ պայքարի վարչության:

Համակարգելով ՀՀ ՊԵԿ կազմակերպական կառուցվածքի փոփոխություններն ու բարեփոխումները, պետք է արձանագրել, որ իրականացված փոփոխությունների արդյունքում խորացվել է հարկային մարմնի ֆունկցիոնալ կազմակերպման և հարկատուների սեզմենտավորման սկզբունքները, ինչը համահունչ է ժամանակակից աշխարհում դիտվող միտումներին: Նախկինում գործող հարկային տեսչությունների կարգավիճակի փոփոխության արդյունքում դրանք վերածվել են վարչության կազմում գործող բաժինների: Հատկանշական է, որ հարկային մարմնի կազմում ստեղծվել է փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչությունը, իսկ նախկինում գործող խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության փոխարեն ստեղծվել է խոշոր և միջին հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչությունը, ինչը ենթադրում է, որ հարկային մարմինը նույն մոտեցումներն է որդեգրելու խոշոր և միջին ձեռնարկատիրության նկատմամբ:

## Սուրիկ ՍԱՐԳՍՅԱՆ

### ՀՀ հարկային համակարգի կազմակերպական կառուցվածքի վերափոխումները

*Բանալի բառեր. հարկեր, տեսչություն, ռազմավարություն, կառուցվածք, բարեփոխումներ, վերափոխումներ, կարգավիճակ, քաղաքականություն*

ՀՀ հարկային մարմնի կազմակերպման ինստիտուցիոնալ կարգավիճակը վերջին 26 տարիների ընթացքում շուրջ 7 անգամ ենթարկվել է փոփոխության: Ներկայումս հարկային մարմինն ունի կառավարությանն առընթեր կոմիտեի կարգավիճակ: 2017թ. հարկային մարմինը ենթարկվել է լուրջ փոփոխությունների, որի արդյունքում խորացվել են հարկային մարմնի ֆունկցիոնալ կազմակերպման և հարկատուների սեզմենտավորման սկզբունքները, ինչը համահունչ է ժամանակակից աշխարհում դիտվող միտումներին: Նախկինում գործող հարկային տեսչությունների կարգավիճակի փոփոխության արդյունքում դրանք վերածվել են վարչության կազմում գործող բաժինների:

## Сурик САРКИСЯН

### Трансформации организационной структуры налоговой системы РА

*Ключевые слова: налоги, инспекция, стратегия, структура, реформа, трансформация, статус, политика*

Институциональный статус организационной структуры налогового органа РА за последние 26 лет был изменен 7 раз. В настоящее время, налоговый орган имеет статус правительственного комитета. В 2017г. структура налогового органа подвергся серьезным изменениям, в результате чего были углублены принципы функциональной организации и сегментации налогоплательщиков, что соответствует тенденциям, наблюдаемым в современном мире. В результате изменения статуса существующие налоговые инспекции были преобразованы в подразделения.

## Surik SARGSYAN

### The features of the tax strategy of RA

*Key words: taxes, strategy, politics, privileges, burden, disposable income, redistribution*

The institutional status of the tax authority's organizational structure of the Republic of Armenia has been changed 7 times over the past 26 years. At present, the tax authority has the status of a government committee. In 2017 the structure of the tax body underwent serious changes, as a result of which the principles of the functional organization and segmentation of taxpayers were deepened, which corresponds to the trends observed in the modern world. As a result of the change in status, the existing tax inspectorates were transformed into divisions. It should be noted, as part of the structure of the tax authority departments of small as well as of large and medium taxpayers were created - in contrast to the general principle of dividing organizations into SMEs and large enterprises.

**ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ՀՆԱ-Ի ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Նարեկ ՔԱՐԴՈՒՄՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Ցանկացած, բայց ոչ պակաս երկուսից փոփոխականների փոխկապակցվածությունը բացահայտելու համար օգտագործվում է կոռելյացիոն և ռեգրեսիոն վերլուծությունը: Այժմ վերը նշվածի միջոցով ներկայացնենք հարկային եկամուտների և ՀՆԱ-ի փոխկապակցվածությունը՝ ըստ 2010-2016թթ. Ընկած ժամանակահատվածի: Վերլուծության համար կիրառենք Պիրսոնի կոռելյացիայի գործակիցը, որը թույլ է տալիս որոշել, թե որքան համամասնական է երկու ցուցանիշների միջև եղած փոփոխությունը և որպես արդյունքային ցուցանիշ հանդես են գալիս հարկային եկամուտները (y), իսկ ազդող գործոն (փոփոխական)՝ ՀՆԱ-ն (x): Կոռելյացիոն կապը ըստ ուղղվածության լինում է դրական (ուղիղ) և բացասական (հակադարձ): Դրական կապի դեպքում կոռելյացիայի գործակիցը բնութագրվում է 0-ից մինչև 1 արժեքներով, իսկ բացասական կապը բնութագրվում է կոռելյացիայի գործակցի՝ -1-ից մինչև 0 արժեքներով<sup>199</sup>: Կոռելյացիայի գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով<sup>200</sup>:

$$r_{xy} = \frac{\sum(x_j - \bar{x})(y_j - \bar{y})}{\sqrt{\sum(x_j - \bar{x})^2 * \sum(y_j - \bar{y})^2}} \quad (1)$$

- որտեղ՝
- $r_{xy}$  - ը՛ y-ի և x-ի կոռելյացիայի գործակիցն է,
- $x_j$  - ն՛ j-րդ x փոփոխականի արժեքն է,
- $y_j$  - ն՛ j-րդ y արդյունքային ցուցանիշի արժեքն է,
- $\bar{x}$  - ը՛ x փոփոխականի միջին թվաբանական արժեքն է,
- $\bar{y}$  - ը՛ y արդյունքային ցուցանիշի միջին թվաբանական արժեքն է:

Կոռելյացիայի գործակցի փոխկապակցվածությունը գնահատելիս օգտագործվում է Չեդդոկի սանդղակը (աղյուսակ 1)<sup>201</sup>:

<sup>199</sup> <http://statpsy.ru/correlation/napravlennost-correlation/>  
<sup>200</sup> <http://statpsy.ru/pearson/formula-pirsona/>  
<sup>201</sup> <http://statpsy.ru/correlation/velicina/>

**Աղյուսակ 1. Չեղդոկի սանդղակը**

Կոռելյացիայի գործակից	Փոխկապակցվածության ուժը
0-ից մինչև 0.3 և -0.3-ից մինչև 0	Շատ թույլ
0.3-ից մինչև 0.5 և -0.5-ից մինչև -0.3	Թույլ
0.5-ից մինչև 0.7 և -0.7-ից մինչև -0.5	Միջին
0.7-ից մինչև 0.9 և -0.9-ից մինչև -0.7	Բարձր
0.9-ից մինչև 1 և -1-ից մինչև -0.9	Շատ բարձր

Վերլուծության համար՝ ըստ 2010-2012թթ.-ի ՀՆԱ-ի տվյալները վերցնենք համաձայն ԱՀՀ 1993թ. միջազգային ստանդարտի, իսկ 2013-2016թթ.-ի համար՝ համաձայն ԱՀՀ 2008թ. միջազգային ստանդարտի (աղյուսակ 2)՝

**Աղյուսակ 2. ՀՆԱ և հարկային եկամուտները 2010-2016թթ. (մլրդ. դրամ)<sup>202</sup>**

Տարեթիվ	ՀՆԱ (xՀԱ),	Հարկային եկամուտներ (yհարկային եկամուտներ)
2010	3,460.2	699.4
2011	3,777.9	777.4
2012	4,000.7	878.4
2013	4,555.6	1,000.9
2014	4,828.6	1,064.1
2015	5,043.6	1,067.9
2016	5,079.9	1,079.7

Այս դեպքում ըստ բանաձև 1-ի և աղյուսակ 2-ի տվյալների կոռելյացիայի գործակիցը հավասար կլինի 0.9867: Դա նշանակում է, որ ՀՆԱ-ի և ընդհանուր հարկային եկամուտների կոռելյացիոն կապը դրական է, այսինքն դրանք 2010-2016թթ. կտրվածքով փոփոխվել են նույն ուղղությամբ, իսկ ՀՆԱ-ի և ընդհանուր հարկային եկամուտների փոփոխության փոխկապակց-

<sup>202</sup> ՀՆԱ տվյալները՝ <http://armstat.am/am/?nid=12&id=01001>  
 Հարկային եկամուտների վերաբերյալ 2016թ.-ի, 2015թ.-ի և 2014թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2016, էջ 3 Հարկային եկամուտների վերաբերյալ 2013թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2015, էջ 4  
 Հարկային եկամուտների վերաբերյալ 2012թ.-ի տվյալները՝ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2014, էջ 3  
 Հարկային եկամուտների վերաբերյալ 2011թ.-ի և 2010թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տարեկան հաշվետվություն 2012, էջ 4:



վածությունը շատ բարձր է: Որպես համեմատվող ցուցանիշներ ընդունենք ՀՆԱ-ն և առանձին հարկային եկամուտները (աղյուսակ 3)<sup>203</sup>

**Աղյուսակ 3.** ՀՆԱ-ն և ԱԱՀ-ի, ակցիզային հարկի, եկամտային հարկի ու շահութահարկի եկամուտները 2010-2016թթ.(մլրդ. դրամ)<sup>203</sup>

Տարեթիվ	ՀՆԱ (xՀՆԱ)	ԱԱՀ (yԱԱՀ)	Ակցիզային հարկ (yակցիզ. հարկ)	Եկամտային հարկ (yեկամտային հարկ)	Շահութահարկ (yշահութահարկ)
2010	3,460.2	301.73	48.14	179.5	79.07
2011	3,777.9	328.51	39.4	204.66	98.12
2012	4,000.7	369.1	50.2	220.7	118.7
2013	4,555.6	401.3	53.0	274.5	124.6
2014	4,828.6	440.6	51.7	301.6	103.6
2015	5,043.6	423.9	49.0	320.2	103.7
2016	5,079.9	391.1	59.7	332.8	127.2

Այս դեպքում կոռելյացիայի գործակիցը ՀՆԱ-ի և ԱԱՀ-ի միջև հավասար կլինի 0.8991, ՀՆԱ-ի և ակցիզային հարկի միջև՝ 0.6517, ՀՆԱ-ի և եկամտային հարկի միջև՝ 0.9977, իսկ ՀՆԱ-ի և շահութահարկի միջև՝ 0.6070: Սա նշանակում է, որ ՀՆԱ-ի կոռելյացիոն կապը նշված հարկատեսակներից յուրաքանչյուրի գծով ստացված հարկային եկամուտների հետ դրական է, այսինքն դրանք 2010-2016թթ. կտրվածքով փոփոխվել են նույն ուղղությամբ: Միևնույն ժամանակ պարզ է դառնում, որ ՀՆԱ-ի և եկամտային հարկի գծով ստացված հարկային եկամուտների փոփոխության փոխկապակցվածությունը շատ բարձր է, ՀՆԱ-ի և ԱԱՀ-ի գծով ստացված հարկային եկամուտների փոփոխության փոխկապակցվածությունը՝ բարձր, իսկ ՀՆԱ-ի և ակցիզային

<sup>203</sup> Հարկային եկամուտների վերաբերյալ 2016թ.-ի, 2015թ.-ի և 2014թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2016, էջ 9 (ԱԱՀ), էջ 10 (շահութահարկ), էջ 12 (եկամտային հարկ) և էջ 15 (ակցիզային հարկ)

Հարկային եկամուտների վերաբերյալ 2013թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2015, էջ 9 (ԱԱՀ), էջ 11 (շահութահարկ), էջ 13 (եկամտային հարկ) և էջ 18 (ակցիզային հարկ)

Հարկային եկամուտների վերաբերյալ 2012թ.-ի տվյալները՝ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գործունեության տարեկան հաշվետվություն 2014, էջ 10 (ԱԱՀ), էջ 11 (շահութահարկ), էջ 13 (եկամտային հարկ) և էջ 18 (ակցիզային հարկ)  
 Հարկային եկամուտների վերաբերյալ 2011թ.-ի և 2010թ.-ի տվյալները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ տարեկան հաշվետվություն 2012, էջ 7 (ԱԱՀ), էջ 9 (շահութահարկ), էջ 10 (ակցիզային հարկ), էջ 13 և 21 (եկամտային հարկ)

հարկի ու ՀՆԱ-ի և շահութահարկի գծով ստացված հարկային եկամուտների փոփոխության փոխկապակցվածությունը՝ միջին:

Չնայած այն հանգամանքին, որ կոռելյացիոն վերլուծությունը ցույց է տալիս փոփոխականների փոփոխության միջև առկա համամասնությունը, այլ ոչ թե մեկի փոփոխության կախվածությունը մյուսի փոփոխությունից, այնուամենայնիվ կատարված վերլուծությունից կարելի է թեկուզև ենթադրել, որ ընդհանուր հարկային եկամուտների, ինչպես նաև ԱԱՀ-ի և եկամտային հարկի գծով ստացված հարկային եկամուտների փոփոխությունն էականորեն պայմանավորված է ՀՆԱ-ի փոփոխությամբ:

Մի փոփոխականի փոփոխության կախվածությունը մյուս փոփոխականի փոփոխությունից կարելի է գնահատել ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Ռեգրեսիան մեծություն է, որը ցույց է տալիս որևէ պատահական մեծության միջին արժեքի կախվածությունը որևէ այլ մեծությունից կամ մի քանի մեծություններից<sup>204</sup>: Հարկային եկամուտների կախվածությունը ՀՆԱ-ից որոշելու համար կիրառենք ռեգրեսիայի գծային հավասարման մեթոդը<sup>205</sup>:

$$y_x = a + b * x, \tag{2}$$

որտեղ՝

$y_x$  - ը՝ հարկային եկամուտների սպասվելիք արժեքն է ՀՆԱ-ի տրված արժեքի դեպքում,

$b$  - ն ցույց է տալիս, թե որքանով են փոխվում հարկային եկամուտները ՀՆԱ-ի մեկ միավոր փոփոխության դեպքում,

$a$  - ն այլ գործոնների ազդեցությունն է հարկային եկամուտների վրա:

Ռեգրեսիայի գծային հավասարումը լուծելու համար կազմենք աղյուսակ

$\sigma$  - ն՝ միջին քառակուսային շեղումն է,

$\sigma^2$  - ն՝ դիսպերսիան է:

$$b = \frac{\sum y * x - \bar{y} * \bar{x}}{\sigma_x^2} = 0.2354 \tag{3}$$

$$a = \bar{y} - b * \bar{x} = -95.7414 \tag{4}$$

**Աղյուսակ 4.** ՆԱ-ն և հարկային եկամուտները 2010-2016թթ. (մլրդ. ՀՀ դրամ),

(2) հավասարումը լուծելու համար անհրաժեշտ ցուցանիշները

<sup>204</sup> <http://statpsy.ru/regression/regressiya/>

<sup>205</sup> <http://ecson.ru/economics/post/zadacha-1.postroenie-regressii-raschyot-korrelyatsii-oshibki-approximatsii-otsenka-znachimosti-i-prognoz/>

Տարեթիվ	ՀՆԱ, $x$	Հարկային եկամուտներ, $y$	$x * y$	$x^2$	$y^2$	$y_x$	$\left  \frac{y - y_x}{y} \right $
2010	3,460.20	699.4	2,420,063.88	11,972,984.04	489,160.36	718.82	0.027016
2011	3,777.90	777.4	2,936,939.46	14,272,528.41	604,350.76	793.61	0.020424
2012	4,000.70	878.4	3,514,214.88	16,005,600.49	771,586.56	846.06	0.038227
2013	4,555.60	1,000.90	4,559,700.04	20,753,491.36	1,001,800.81	976.69	0.024792
2014	4,828.60	1,064.10	5,138,113.26	23,315,377.96	1,132,308.81	1,040.9	0.022237
2015	5,043.60	1,067.90	5,386,060.44	25,437,900.96	1,140,410.41	1,091.5	0.021680
2016	5,079.90	1,079.70	5,484,768.03	25,805,384.01	1,165,752.09	1,100.1	0.018553
Ընդամենը	30,746.50	6,567.80	29,439,859.9	137,563,267.2	6,305,369.80	6,567.8	0.172929
Միջին	4,392.36	938.26	4,205,694.28	19,651,895.32	900,767.11	938.26	0.024704
$\sigma$	647.26	154.43	-	-	-	-	-
$\sigma^2$	418,943	23,847.42	-	-	-	-	-

Հաշվարկելով համապատասխան պարամետրերը՝ արդյունքում կստանանք հետևյալ ռեգրեսիայի հավասարումը՝

$$y_x = -95.7414 + 0.2354 * x$$

Ստացվում է, որ ՀՆԱ-ի մեկ միավոր փոփոխությունը հանգեցնում է հարկային եկամուտների մոտ 0.24 միավոր փոփոխությանը:

Միաժամանակ կորելյացիայի գործակիցը հավասար է՝  $r_{xy} = 0.9867$ , իսկ դետերմինացիայի գործակիցը՝  $r_{xy}^2 = 0.9735$  կամ 97.4%:

Այսինքն  $y$ -ի փոփոխությունը 97.4%-ով բացատրվում է  $x$ -ի փոփոխությամբ: Գծային հավասարման մեջ տեղադրելով  $x$ -ի փաստացի արժեքները՝ կորոշենք  $y_x$ -ի հաշվարկային արժեքները:

Քանի որ  $\sum y = \sum y_x$ , հետևաբար հավասարման պարամետրերը ճիշտ են որոշված:

Հաշվարկենք ապրոկսիմացիայի կամ համահարթեցման միջին սխալը, այսինքն հաշվարկային արժեքների միջին շեղումը փաստացի արժեքներից՝

$$\bar{A} = \frac{1}{n} \sum \left| \frac{y - y_x}{y} \right| * 100\% = \frac{1}{7} * 0.172929 * 100\% = 2.5\% \quad (5)$$

Ստացվում է, որ միջինում հաշվարկային արժեքները շեղվում են փաստացի արժեքներից 2.5%-ով:

## Նարեկ ՔԱՐԴՈՒՄՅԱՆ

### ՀՀ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի փոխկապակցվածության վերլուծությունը

*Բանալի բառեր. կոռելյացիա, ռեգրեսիա, հարկային եկամուտներ, ՀՆԱ*

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է կատարվել կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով ներկայացնելու ՀՀ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի փոխկապակցվածությունը: Մասնավորապես կոռելյացիոն վերլուծության միջոցով ներկայացվել է ընդհանուր հարկային եկամուտների ու առանձին հարկատեսակի գծով հարկային եկամուտների և ՀՆԱ-ի փոխկապակցվածությունը, իսկ ռեգրեսիոն վերլուծության միջոցով՝ հարկային եկամուտների փոփոխության կախվածությունը ՀՆԱ-ի փոփոխությունից: Նշված վերլուծությունը կատարելու համար ներկայացվել են համախառնասխան բանաձևեր և հավասարումներ: Կատարված վերլուծության միջոցով բացահայտվել է, թե ՀՆԱ-ի մեկ միավոր փոփոխությունը հարկային եկամուտների որքան փոփոխությանն է հանգեցնում, ինչպես նաև թե հարկային եկամուտների փոփոխությունը որքանով է բացատրվում ՀՆԱ-ի փոփոխությամբ:

## Narek KARDUMYAN

### Analysis of interconnection of RA tax revenues and GDP

*Key words: correlation, regression, tax revenues, GDP*

Within the framework of this article, an attempt has been made to present the interconnection between the tax revenues and GDP of Armenia with correlation and regression analysis. In particular, through correlation analysis was shown the interconnection between total tax revenues and each tax type revenues and GDP, and through regression analysis was shown the dependency between the change in the tax revenues and the change in GDP. For the purpose of this analysis, correspondent formulas and equations have been presented.

## Нарек КАРДУМЯН

### Анализ взаимосвязанности налоговых поступлений и ВВП РА

*Ключевые слова: корреляция, регрессия, налоговые поступления, ВВП*

В рамках этой статьи была предпринята попытка с помощью корреляционного и регрессионного анализа представить взаимосвязанность между налоговыми поступлениями и ВВП РА. В частности, с помощью корреляционного анализа была показана взаимосвязанность между общими налоговыми поступлениями и налоговыми поступлениями по отдельности и ВВП, а с помощью регрессионного анализа зависимость изменения налоговых поступлений от изменения ВВП. Для выполнения этого анализа были представлены соответствующие формулы.

**ՀԱԿԱՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՔՆՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

ՀՊՏՀ Կառավարման ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. մենաշնորհ, արտոնություն և արտոնությունների համակարգ,  
հակամենաշնորհային քաղաքականություն, օրենսդրություն, արդարացի գին

Մենաշնորհային տնտեսակարգի դրսևորման նախատիպերը և քննարկման նախնական փորձերը տեսանելի են Անտիկ ժամանակաշրջանում: Այդ տիրույթում մենաշնորհացման սոցիալ-տնտեսական հետևանքների մասին կարգադրություններում գների արհեստական բարձրացման և կոլեկտիվ համաձայնության դեպքերը խստորեն պատժվում էին: Ինչպես նաև, հատկապես մեծ ուշադրություն էին դարձվում սպառողական ապրանքների թանկացմանը, որոնք սոցիալական դժգոհությունների պատճառ էին դառնում<sup>206</sup>: Հատկապես խիստ պատիժներ էին գործում վաշխառուական գործունեության արդյունքում ապրանքների թանկացման վերաբերյալ: Կարգադրությունների խախտումը պատժվում էր գլխատմամբ, սակայն այս և մի շարք այլ պատիժներն ու սըպառնալիքները վերջ չդրեցին գնաճի ու տնտեսական սպեկուլյացիաների արատավոր փորձառությանը<sup>207</sup>: Տիպական է Բյուզանդիայի Ջենոն կայսրի ապրանքների գնանշման սահմանած օրենսդրությունը, ըստ որի արգելվում էր հազուստի և/կամ պարենային ապրանքների շուկայում մենաշնորհի հաստատումը, ինչպես նաև կասեցվում էին մինչև այդ կայսրության կողմից տրված առևտրային արտոնությունները<sup>208</sup>: Սա առաջին իրավական ակտն է, ուր ուղղակիորեն արժարժվում է տվյալ հիմնախնդիրը և կիրառվում է մենաշնորհի հասկացությունը: Տվյալ ժամանակաշրջանի օրենսդրության և հակամենաշնորհային քաղաքականության հետահայաց վերլուծությամբ նկատելի են շուկայական հարաբերությունների ձևավորման տարրեր, որոնք իրենց արտացոլում են գտնում հետագա քննարկումներում:

Միջնադարյան Եվրոպայում ավատատիրական հարաբերությունների ձևավորման և ծաղկման ժամանակաշրջանում հակամենաշնորհային օրենսդրության ու քաղաքականության փորձառությունը էական ուշադրության չէր արժանանում: Գործնականում, ավատատիրական հասարակարգում մենաշնորհային հնարավորություններ տրամադրվում էին տեղական սովորույթներ-

<sup>206</sup> О. Жидков, Античные и средневековые предтечи антимонопольного законодательства // Вестник Международного университета. 1996. Вып.1.

<sup>207</sup> С. Уильямс, Диоклетиан. Реставратор Римской империи, КЛИО, Евразия 2014 .

<sup>208</sup> О. Жидков, Античные и средневековые предтечи антимонопольного законодательства // Вестник Международного университета. 1996. Вып.1.

րի կամ քաղաքային իշխանությունների կանոնակարգերին համաձայն: Այսպիսով, միջնադարյան ընկերությունները սկսեցին ստանալ բացառիկ կամ հարաբերական մենաշնորհային իրավունքներ պետական հովանու ներքո, որոնցով երաշխավորվում էր տվյալ ապրանքը ներկայացնող ընկերության գերիշխանությունը շուկայում: Անգլիայում 11-րդ դարից սկսած թափ են առնում առևտրային միությունների (համքարությունների) ձևավորման գործընթացը, որոնց հատկացվում են բացառիկ իրավունքով առևտուր անելու իրավունքներ: 14-րդ դարում խառնաշփոթից ու չարաշահումներից խուսափելու նպատակով Էդուարդ 3-րդ արքայի կողմից արհեստակցական կազմակերպությունների համար սահմանվեցին միաժամանակ մեկից ավել արհեստագործությամբ զբաղվելու արգելքներ<sup>209</sup>: Այնուամենայնիվ, արքայական ընտանիքի, արքունիքի սահմանած առևտրատնտեսական ջերմոցային պայմանների հիքմում երկրի հարստացման մտայնություններն էին, սակայն 17-րդ դարի սկզբնամասում իշխող վերնախավը տեղի տվեց փաստացի անվավեր ճանաչելով նախկինում տրված մի շարք արտոնագրեր և այդ հայտարարությունն ընդունում էր շահագրգիռ անձանց դատարան դիմելու իրավունքը՝ մենաշնորհների սահմանման արտոնագրերում ընդգրկված բացառիկ իրավունքների օրինաչափության բացահայտման պահանջով<sup>210</sup>: Այս ամենի արդյունքում հետագայում ընդունվում են միայն այն այն արտոնագրերի իսկությունը, որոնք տրվել են երկրում նոր արտադրանքի վերանշակման և պատրաստման համար՝ այդ արտադրանքի առաջին և իրական ստեղծողին<sup>211</sup>:

Այսպիսով, մենաշնորհների մասին օրենքը չէր խախտում միջնադարյան առևտրատնտեսական գործունեության հիմնարար սկզբունքները: Իրավական հիմքից զրկում էին միայն այն թագավորական մենաշնորհները, որոնք տրվում էին առանձին մասնավոր անձանց, բայց նպատակ չէր հետապնդում չեղյալ համարել համքարությունների, միությունների ավանդական արտոնությունները: Կարևոր է նկատել, որ տվյալ օրենսդրության ընդունումը հիմք է դարձել այս ուղղությամբ հետագա օրենսդրական աշխատանքների իրականացման համար: Ապրանքների վերավաճառքը, վաշխառուական գործունեությամբ դրամակուտակումները, ամբողջական առաջարկի սահմանափակությունը, պահանջարկի տատանումները գների վայրիվերումների և այս ամենով պայմանավորված սոցիալական դժգոհությունների առիթ են դառնում:

<sup>209</sup> A Tale of Two Theories: Monopolies and Craft Guilds in Medieval England and Modern Imagination by Gary Richardson, *Journal of History of Economic Thought*, Vol. 23, Nov., 2001. e

<sup>210</sup> <http://www.historyofparliamentonline.org/periods/tudors/monopolies-elizabethan-parliaments>, *The History of British Parliament: Monopolies in Elizabethan Parliaments*

<sup>211</sup> *Proceedings in Parliament 1624: The House of Commons*, Edited by Philip Baker. Transcriptions of the Commons' Journals and private diaries covering the final Parliament of the reign of James I. <https://www.british-history.ac.uk/no-series/proceedings-1624-parl>

Արդյունքում մշակվում է արդարացի գնի տեսությունը, որի ներկայացումը կապված է աստվածաբան, փիլիսոփա Թ. Աքվիանացու հետ: «Մի դեպքում նա ընդունում էր ըստ աշխատանքային ծախսումների փոխանակության սկզբունքը: Մյուս դեպքում սրան համընթաց առաջ էր քաշվում մեկ այլ սկզբունք ևս, ըստ որի իրը կարող է իր արժեքից այնքան բարձր վաճառվել, որ համապատասխանի վաճառողի դասային դրությանը, ապահովի նրա պահանջումները: Այսինքն, գինը ծախսերը փոխհատուցելուց զատ պետք է ապահովի վաճառողի սովորույթ դարձած սպառման մակարդակը»<sup>212</sup>: «Արդարացի գնի» և «խելամիտ շահույթի» կաթոլիկ դավանաբանական սկզբունքները ապրանքների վերավաճառքի որոշակի սահմանափակման, առևտրատնտեսական գործունեության կանոնակարգման, առաջին անհրաժեշտության ապրանքների գների սահմանման հիմք հանդիսացան: Ընդունված մեկ այլ օրենքի համաձայն, ապրանքներ վերավաճառքով զբաղվող անձը համարվում էր «խելճ մարկանց բացահայտ ճնշող և հարուստներին խաբող» և ենթարկվում էր տարատեսակ պատիժների, օրինակ առաջին անգամ սեփականության բռնագրավման, երկրորդ անգամ՝ ժողովրդի կողմից անարգման, երրորդ անգամ՝ ազատազրկման և տուգանման, իսկ չորրորդ անգամ՝ բանտարկման, նույնիսկ մահապատժի, որը հետագայում դադարվեց կիրառվել<sup>213</sup>: Թագավորական իշխանության և խորհրդարանի կողմից Անգլիայում առևտրականների մենաշնորհային գործունեության նկատմամբ կիրառվող առավել յուրահատուկ ազդեցության միջոցներից էին մի շարք օրենքներ, որոնք արգելում էին սպեկուլյատիվ գործունեության յուրահատուկ ձևեր՝ «forestalling» (գների բարձրացման անօրինական փորձ), «regretting» (վերավաճառումներ), և «engrossing» (խոշոր գնումներ)<sup>214</sup>: Մինչև 13-րդ դարը ընդհանուր առմամբ «forestalling» միակ տերմինն էր որ նշանակում էր գների բարձրացման անօրինական փորձ: «Engrossing» բառը (ingrossator, ewgrossator) ծագում է ֆրանսիական «Groose» հասկացությունից՝ «խոշոր, մեծածախ»<sup>215</sup>: Նմանատիպ դեկլարատիվ որոշումների ընդունումը շարունակվեց եվրոպական մի շարք երկրներում, որտեղ ուղղակիորեն ալգելվում էին առևտրային մենաշնորհները: Օրինակ, Յոլանդիայում Կարլ 5-րդ (1531-1540 թթ.) կայսրի հրահանգներն արգելում էին բոլոր անօրինական մենաշնորհները և արհեստավորների ու առև-

<sup>212</sup> Գալստյան Գ., Մարտիրոսյան Ա., Ավետիսյան Կ., Եղիազարյան Մ., Հակոբջանյան Ա., Մարգարյան Հ., Ներսիսյան Ա., Տնտեսագիտական մտքի պատմություն, Երևան, 2009 թ., էջ 27:

<sup>213</sup> Жидков О., Античные и средневековые предтечи антимонопольного законодательства // Вестник Международного университета. 1996. Вып. 1, стр. 50.

<sup>214</sup> Жидков О., Античные и средневековые предтечи антимонопольного законодательства // Вестник Международного университета. 1996. Вып. 1, стр. 50.

<sup>215</sup> <http://www.dictionary.com/browse/engrossing> Հասանելի է 21.08.2017թ.

տրականների միջև պայմանավորվածությունների սահմանումը<sup>216</sup>: Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկոս 1-ի (1539 թ.) մեծ օրդոնանսը տեղեկացնում էր, որ բոլոր վաճառականներին արգելվում են օգտագործել մենաշնորհները, համաձայնությունները, խաբեությունները, որոնք վնասում են հասարակությանը: Հացի, փայտի և այլ ապրանքներ վաճառքով զբաղվողների անօրինական «մենաշնորհների և դավադրությունների» մասին դրույթներ է ներկայացվել նաև 1669թ. և 1694թ. թագավորական օրդոնանսներում: Նմանատիպ օրենսդրություն, որը պահանջում էր ապրանքների վաճառքը «խելամիտ գնով», թագավորական ծառայողներին (չինովմիկներին) որոշ ապրանքների գները սահմանելու բացառիկ իրավունք էր ընձեռում: Սա բնորոշ էր միջնադարյան պետություններին: Իհարկե, Եվրոպայում ընդունված նմանատիպ դեկլարատիվ որոշումները չէին կարող տալ սպասված արդյունքը, այն է՝ երկրում թույլ չտալ սպեկուլյատիվ գործարքների միջոցով ապրանքների գների թանկացումը:

Ինչպես արդեն պարզ դարձավ, դեռևս պատմության անտիկ խորքերից եվրոպական երկրներում տեսանելի են տարաբնույթ ոլորտների մենաշնորհային դրսևորումներ: Բնական է, որ իշխանություններն պետք է փորձեր ձեռնարկեին թույլ չտալու այս մենաշնորհներին խաթարելու ինչպես իրենց անձնական՝ թագավորական, այնպես էլ պետական շահերը: Մայրցամաքային երկրներում ընդունված առևտրային մենաշնորհների մասին օրենսդրությունը կորցրեց իր իմաստն ու ուժը XVIII-XIX դարերի հեղափոխական ցնցումներից հետո, վերջ դրեց հին վարչակարգին, այդ թվում ֆեոդալական մենաշնորհներին և ազատ ձեռնարկատիրության զարգացման ճանապարհին ի հայտ եկած բոլոր խոչընդոտներին: Այդ իսկ պատճառով, այնտեղ, ուր առկա էր մենաշնորհը, նշմարվել են հակամենաշնորհային կարգավորման փորձեր: Իհարկե հակամենաշնորհային անտիկ և միջնադարյան քաղաքականությունները չեն ունեցել այնպիսի ուժ, որը կվերացներ անարդար մենաշնորհները և սկիզբ կդներ ազատ մրցակցությանը շուկայում: Բայց ինչ վերաբերում է անգլիական հակամենաշնորհային իրավունքին, ապա դա անգլո-ամերիկյան իրավունքում խիստ հաջորդականության առումով ունեցել է թեև ոչ ուղղակի, բայց իր մեծ դերը Շերմանի օրենքի մշակման գործում, որը վերաբերում էր ժամանակակից առևտրային մենաշնորհների սահմանափակումներին: Դա վկայում է, որ ժամանակից շուկայական տնտեսությունը անընդհատ զարգացնում ու ավելացնում է մենաշնորհների արդյունավետ կառավարման և մրցակցության նոր հայեցակարգեր՝ չկորցնելով իր գեներտիկական կապն ավելի վաղ գոյություն ունեցող շուկայական մենաշնորհների կանխարգելմանն ուղղված օրենսդրական փորձերի հետ:

<sup>216</sup> J. Martineau, Les Halles de Paris da ongines a 1789 (Paris, 1960), p. 78.



### **Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

#### **Հակամենաշնորհային օրենսդրության և քաղաքականության քննական վերլուծությունը**

*Բանալի բառեր. մենաշնորհ, թագավորական արտոնություն, հակամենաշնորհային քաղաքականություն, օրենսդրություն, արդարացի գին*

Հոդվածում քննարկվում են մենաշնորհային և հակամենաշնորհային քաղաքականության առանձնահատկությունները հասարակական զարգացման տարբեր ժամանակաշրջաններում: Այս ընթացքում կարևոր նշանակություն է տրվում արդարացի գնի տեսության մշակմանը, որն իր հիմքում ունի ինչպես տնտեսական այնպես էլ քրիստոնեական, համամարդկային նշանակություն: Հարկ է նկատել, որ այդ բոլոր փորձերն ունեցել են կառուցողական ուղղակի թե անուղղակի նշանակություն ժամանակակից հակամենաշնորհային օրենսդրության մշակման գործում:

### **Hayk KHACHATRYAN**

#### **The analysis of anti-monopoly legislation and policy**

*Key words: monopoly, royal privileges, anti-monopoly policy, legislation, fair and reasonable price*

In the article given the history of the economic policy of monopoly and anti-monopoly is presented beginning from antient times till the 19th century. In the 13th century the notion of fair price was advanced which preserved its influence till the 17th century having both economical and Christian assignment not allowing usurers to get superprofit. It is worth mentioning that all the advanced anti-legislative attempts had little yet direct impact on formulating modern anti-monopoly legislation.

### **Айк ХАЧАТРЯН**

#### **Анализ антимонопольного законодательства и политики**

*Ключевые слова: монополия, королевская франшиза, анти-монополия политика, законодательство, справедливая или разумная цена*

В данной статье представлена экономическая история монопольной и антимонопольной политики начиная с античных времен до XIX века. В XIII веке была выдвинута идея ‘справедливой цены’, которая сохраняла свое влияние до XVII века, в своей основе имея как экономическое, так и христианское значение, не позволяя спекулянтам получать сверхприбыль. Стоит отметить, что все выдвинутые антизаконодательные попытки имели хоть и малое, но в то же время прямое воздействие на создание и развитие современного антимонопольного законодательства.

**ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ  
ՀԱՍԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
ՀՊՏՀ հայցորդ


Բանալի բառեր. վարկային կազմակերպություն, դրամային վարկեր, դոլարային վարկեր, կանխատեսումներ, միտումներ

Վարկային կազմակերպությունները վերջին տարիներին բավականին լուրջ դեր են ստանձնել ՀՀ վարկային շուկայում և մրցակցային առավելությունների հաշվին փորձում են ՀՀ տնտեսության մեջ ավելացնել իրենց վարկային պորտֆելի տեսակարար կշիռը: Սա բարդ մրցակցային միջավայր է, քանի որ վարկային կառույցների հիմնական մրցակիցներն են ՀՀ առևտրային բանկերը, որոնց կայուն մասնաբաժինը տնտեսության վարկավորման կազմել է մոտ 90%: Համադրելով տնտեսության մեջ վարկային կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ծավալները տարբեր տարիներին՝ դիտարկվել են, թե ինչ աճի դինամիկա է առկա վարկային կազմակերպությունները՝ տնտեսության մեջ վարկային պորտֆելի ավելացման հարցում: Համադրությունը կատարվել է ըստ ռեզիդենտության սկզբունքի, քանի որ ՀՀ ԿԲ-ի կողմից ՀՀ վարկային կառույցներին առնչվող վիճակագրությունը ներկայացված է միայն ռեզիդենտներին տրված վարկերի տեսքով: Վերլուծության համար հիմք ենք ընդունել դրամով, այնուհետև արտարժույթով, և երկուսի հանրագումարի (արտարժույթով տրված վարկերը ևս հաշվարկվում են դրամով) հիման վրա ստացված ցուցանիշները: Վիճակագրական տվյալները բավականին հետաքրքիր միտումներ են ցույց տալիս, երբ, հատկապես, կատարում ենք, որոշ տեսակարար կշիռների հաշվարկներ: Այսպես, ռեզիդենտների վարկերը ՀՀ վարկային կառույցների կողմից 2011թ. կազմել են 112.7 մլրդ դրամ, որից 76.3 մլրդ դրամով, իսկ 36.4 մլրդ դրամի արտարժույթով: Ավելի մանրամասն տվյալներ՝ առանձին արժույթներով վարկերի վերաբերյալ բացակայում են, որի արդյունքում արտարժույթային վերլուծություն չենք կարող անել: 2016թ. վերջի դրությամբ ՀՀ վարկային կառույցների կողմից տրված վարկերը հասել են գրեթե 300 մլրդ դրամի, իսկ 2017թ.-ի 9 ամիսների ընթացքում հասել են 306.6 մլրդ դրամի: Վերջինիս մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են սկսել կազմել դրամով տրված վարկերը՝ հասնելով 245,6 մլրդ դրամի, իսկ արտարժույթով վարկերը՝ 60.9 մլրդ դրամի: ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված վարկերը 2011թ. կազմում էին ընդամենը 1 տրիլիոն 226 մլրդ դրամ, իսկ արդեն 2016թ.-ին դրանք հասել էին 2 տրիլիոն 116 մլրդ դրամի: Այս ցուցանիշը չի ներառում ոչ ռեզիդենտների տրված վարկերը, որոնք ևս մեծ տեսակարար կշիռ ունեն առևտրային բանկերի վարկային պորտֆելում:

**Աղյուսակ 1. ՀՀ վարկային կազմակերպությունների և առևտրային բանկերից ռեզիդենտներին տրված վարկերը<sup>217</sup> (տարվա վերջ, մլրդ դրամ)**

	2011	2012	2013	2014	2015	2016	2017/09
<b>ՀՀ վարկային կազմակերպություններ</b>							
Ռեզիդենտներին <sup>218</sup> , այդ թվում՝	112,7	157,5	195,7	248,9	267,2	299,8	306,6
դրամով	76,3	108,5	141,0	180,0	207,6	232,6	245,6
արտարժույթով	36,4	49,0	54,7	68,8	59,5	67,1	60,9
<b>Տեսակարար կշիռը (%)</b>							
դրամով	68	69	72	73	78	78	80
արտարժույթով	32	31	28	27	22	22	20
<b>ՀՀ առևտրային բանկեր</b>							
Ռեզիդենտներին, այդ թվում՝	1,226,6	1,559,8	1,743,7	2,091,3	2,005,2	2,116,8	2,313,5
դրամով	483,6	560,5	667,1	714,8	680,9	746,3	872,8
արտարժույթով	742,9	999,2	1,076,5	1,376,5	1,324,3	1,370,5	1,440,6
<b>Տեսակարար կշիռը (%)</b>							
դրամով	39	36	38	34	34	35	38
արտարժույթով	61	64	62	66	66	65	62

2017թ.9 ամիսների ընթացքում ՀՀ առևտրային բանկերի կողմից տրված ցուցանիշը գերազանցել է 2 տրիլիոն 313 մլրդ դրամի մակարդակը: Գծանկար 1-ում համադրելով ՀՀ վարկային կառույցների և առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերը ստացվում է հետևյալ պատկերը:



**Գծանկար 1. ՀՀ վարկային կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերը<sup>219</sup> (մլրդ ՀՀ դրամ)**

<sup>217</sup> <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

<sup>218</sup> Տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, արժույթային սվոպ, ռեպո ըստ ճյուղերի:


<sup>219</sup> Կազմվել է ՀՀ ԿԲ առցանց տվյալների հիման վրա:

Այս նույն տրամաբանությունից ելնելով հակառակ միտումներն են գըրանցվել առևտրային բանկերի՝ ռեզիդենտներին տրված վարկերի տեսակարար կշիռների փոփոխության առումով, և եթե 2011թ. բանկերն ունեին 91.6% մասնաբաժին, ապա 2016թ. այն հասել էր 87.6%-ի, 2017թ. 88.3%-ի:

**Աղյուսակ 2.** ՀՀ վարկային կառույցների և առևտրային բանկերի՝ ռեզիդենտներին տրված վարկերի տեսակարար կշիռները<sup>220</sup> (%ընդհանուրի մեջ)

	2011	2012	2013	2014	2015	2016	2017/09
ՀՀ վարկային կազմակերպություններ	8.4	9.2	10.1	10.6	11.8	12.4	11.7
ՀՀ առևտրային բանկեր	91.6	90.8	89.9	89.4	88.2	87.6	88.3

Օգտագործելով վիճակագրական գործիքակազմ և, հատկապես, կիրառելով Excel ծրագրի էքստրապոլյացիայի և լոգարիթմական միտումների հաշվարկման հնարավորությունները մինչև 2020թ., կանխատեսվել է, թե ինչպես կփոխվեն ՀՀ վարկային կառույցների և առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի տեսակարար կշիռները:



**Գծանկար 2.** ՀՀ վարկային կառույցների և առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի տեսակարար կշիռների լոգարիթմական միտումների կանխատեսումները մինչև 2020թ.<sup>221</sup> (%-ներով ընդհանուրի մեջ)

Արդյունքները բավականին հետաքրքիր են, քանի որ նկատելի է, որ ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրվող վարկերի տեսակարար կշիռն աճելու է և մոտենալու է մոտ 13 տոկոսի, իսկ ՀՀ առևտրային բանկերի մոտ նկատվելու է նվազեցում: Լոգարիթմական հավասարումների գործակիցների դրական և բացասական լինելուց ևս դա ակնհայտ երևում է, քանի որ ՀՀ


<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>:

<sup>220</sup> Հաշվարկները կատարվել են ՀՀ ԿԲ առցանց տվյալների հիման վրա:

<https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

<sup>221</sup> Գծապատկերը կազմվել, իսկ հաշվարկները կատարվել են ՀՀ ԿԲ առցանց տվյալների հիման վրա: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

վարկային կառույցների մոտ այն դրական է՝  $y = 2.053\ln(x) + 8.099$  և նախանշում է աճ, իսկ ՀՀ առևտրային բանկերի մոտ բացասական է՝  $y = -2.05\ln(x) + 91.90$  և ցույց է տալիս նվազման միտում: Այստեղ կապ ունեն նաև ոչ միայն ընդհանուր միտումները, այլ նաև, թե կոնկրետ, որ արժույթով են տրվում վարկերը, քանի որ դրամային պորտֆելի ավելացումը նպաստել է նաև վարկավորման ծավալների կտրուկ աճին ՀՀ վարկային կառույցների մոտ: Չնայած հնարավոր գործոններից դա կարող է լինել միայն մեկը, չի բացառվում, որ ավելի փոքր և ճկուն լինելով վարկային կառույցները կառավարման արդյունավետության շնորհիվ շուկայում ավելացրել են իրենց մասնաբաժինը, որոնք 2011-2017թթ. դրամով տրված վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկային պորտֆելում 68%-ից հասցրել են 80%-ի, հետևաբար, արտարժույթային վարկերի տեսակարար կշիռն էլ 32%-ից նվազել է մինչև 20%: Սա ՀՀ տնտեսության մեջ դրական երևույթ է, քանի որ առանձին կառույցներ իրենց գործունեությամբ նվազեցնում են դոլարիզացիայի մակարդը<sup>222</sup> և բարձրացնում դրամի դերը: Իսկ առևտրային բանկերը միշտ ունեցել են 61-66% արտարժույթով վարկեր: Վարկային կառույցների տված դրամով վարկերի լոգարիթմական միտումների կանխատեսումները մինչև 2020թ. հուսադրող են՝ դրամային վարկերի տեսակարար կշիռը ՀՀ վարկային կառույցների կողմից աճելու է: Եթե 2011թ. կար տրված 76 մլրդ դրամի դրամով վարկ, ապա 2017թ. սեպտեմբերին դրանք աճել են 3 անգամ և 36 մլրդից հասել են 60 մլրդ դրամի:




**Գծանկար 3.** ՀՀ վարկային կառույցների տված վարկերի լոգարիթմական միտումների կանխատեսումները մինչև 2020թ.<sup>223</sup> (մլրդ ՀՀ դրամ)

Համադրվել են նաև վարկային կառույցների և առևտրային բանկերի պորտֆելների մեջ եղած դրամային վարկերը, կանխատեսվել դրանց հետագա միտումները մինչև 2020թ.: Տվյալները հուսադրող են վարկային կառույց-

<sup>222</sup> Full Dollarization, The Pros and Cons Andrew Berg, Eduardo Borensztein ©2000 International Monetary Fund December 2000, <https://www.imf.org/external/pubs/ft/issues/issues24/>.


<sup>223</sup> Գծապատկերը կազմվել, իսկ հաշվարկները կատարվել են ՀՀ ԿԲ առցանց տվյալների հիման վրա: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Ների մասով, իսկ առևտրային բանկերն իրենց դրամային պորտֆելը թեև վերջին տարում բարելավել են, բայց բացասական միտումներ ունեն: ԶՅ վարկային կառույցների և առևտրային բանկերի պորտֆելների մեջ եղած արտարժույթային վարկերը ցուցաբերում են դրամին հակառակ միտումները, որոնք ստորև բերված գծապատկերում ունեն հետևյալ տեսքը:



**Գծանկար 4.** ԶՅ վարկային կառույցների և ԶՅ առևտրային բանկերի կողմից դրամով տրված վարկերի տեսակարար կշիռների լոգարիթմական միտումների կանխատեսումները մինչև 2020թ.<sup>224</sup> (%-ներով ընդհանուրի մեջ)

Այսինքն՝ վարկային կառույցներն արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը կհասնեն 18-19%, իսկ առևտրային բանկերը՝ 61-63%:



**Գծանկար 5.** ԶՅ վարկային կառույցների և ԶՅ առևտրային բանկերի կողմից արտարժույթով տրված վարկերի տեսակարար կշիռների լոգարիթմական միտումների կանխատեսումները մինչև 2020թ. (%-ներով ընդհանուրի մեջ)

<sup>224</sup> Գծապատկերը կազմավել, իսկ հաշվարկները կատարվել են ԶՅ ԿԲ առցանց տվյալների հիման վրա: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Իհարկե, մրցակցային առավելությունների ձեռք բերելը ցանկացած կազմակերպության գործունեության հիմքում պետք է դրված լինի, իսկ շուկայում առավել մեծ մասնաբաժին ունենալը, ինչպես նաև շահութաբերությունը և ակտիվները պետք է ավելանան շուկայում զբաղեցրած դիրքին համահունչ: Այս համատեքստում միտումները, որոնք բացահայտվեցին վիճակագրական տվյալների վերլուծության արդյունքում թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ վարկային կառույցները որդեգրել են ճիշտ մարտավարություն և ռազմավարություն, քանի որ դա արտացոլվում է նրանց կողմից գրանցված ցուցանիշներով: Սակայն վարկավորման համակարգն ունի իր առանձնահատկությունները և դրանցից կարևորագույնը պայմանավորված է ոլորտային վարկերով, ըստ որոնց էլ փոփոխության են ենթարկվում նաև վարկերի վերադարձելիության, ինչպես նաև դասակարգման ցուցանիշները: Սա ևս մեկ հետազոտության լուրջ հիմնահարց է, թե ինչպիսի վարկերից է բաղկացած ՀՀ վարկային կառույցների վարկային պորտֆելը: Այս հիմնահարցով կարելի է նաև դուրս բերել վարկային կառույցների առջև դրված գերակայությունները, քանի որ ոլորտային տեղաբաշխման խնդիրները, հատկապես, բարձր ռիսկայնություն և բարձր տոկոսադրույքներ կապի, ինչպես նաև ցածր ռիսկայնություն և ցածր տոկոսադրույքների տեսանկյունից ևս շատ մեծ կարևորություն ունեն: Այսպիսով՝ հիմնական եզրակացությունն այն է, որ՝

➤ Վարկային կազմակերպությունները վերջին 7 տարիների ընթացքում ՀՀ վարկային շուկայում կարողացել են ավելացնել իրենց մասնաբաժինը: Դրական տեղաշարժերից է նաև այն, որ վարկային կազմակերպությունների մասնաբաժնի ավելացումը շարունակվելու է և դա պետք է ինչ-որ տեղ անհանգստացնի առևտրային բանկերին:

➤ Վարկային կառույցներին հաջողվել է իրենց պորտֆելում նվազեցնել արտարժույթով վարկերի տեսակարար կշիռը, ինչը շարունակվելու է, իսկ դա նշանակում է, որ արտարժույթային ռիսկերի կառավարման տեսանկյունից վարկային կառույցները հայտնվել են նպաստավոր դիրքերում:

➤ Դրանի դիրքերի ուժեղացման գործում ՀՀ վարկային կառույցները ստանձնել են ավելի մեծ դեր, քան ՀՀ առևտրային բանկերը: Մոտ 3 անգամ վերջին յոթ տարիներին ավելացել են նրանց դրամային վարկերը և այս միտումը ևս շարունակական բնույթ է կրելու առաջիկա տարիներին:

### **Արամ ԶՈՎԴԱՆՆԻՍՅԱՆ**

#### **ԶԶ վարկային կազմակերպությունների վարկավորման ցուցանիշների համեմատական վերլուծությունը**

*Բանալի բառեր. վարկային կազմակերպություն, դրամային վարկեր, դոլարային վարկեր, կանխատեսումներ, միտումներ*

Վարկային կազմակերպությունները վերջին 7 տարիների ընթացքում ԶԶ վարկային շուկայում կարողացել են ավելացնել իրենց մասնաբաժինը: Դրական տեղաշարժերից է նաև այն, որ վարկային կազմակերպությունների մասնաբաժնի ավելացումը շարունակվելու է և դա պետք է ինչ-որ տեղ անհանգըստացնի առևտրային բանկերին: Վարկային կազմակերպություններն իրենց պորտֆելում նվազեցնելու են արտարժույթային վարկերի տեսակարար կշիռը: Այս միտումը ևս շարունակվելու է, իսկ դա նշանակում է, որ արտարժույթային ռիսկերի կառավարման տեսանկյունից վարկային կազմակերպությունները հայտնվել են նպաստավոր դիրքերում:

### **Арам ОВАННИСЯН**

#### **Сравнительный анализ показателей кредитования кредитных организаций РА**

*Ключевые слова: кредитная организация, кредиты AMD, долларовые кредиты, прогнозы, тенденции.*

За последние семь лет кредитные организации смогли увеличить свою долю на армянском кредитном рынке. Один из положительных сдвигов в том, что увеличение доли кредитных организаций будет расти и в будущем, и это должно несколько беспокоить коммерческих банков. Кредитные организации сокращают долю кредитов в иностранной валюте в своем портфеле. Эта тенденция будет продолжаться, а это означает, что с точки зрения управления валютными рисками кредитные организации оказались на благоприятных позициях.

### **Aram HOVHANNISYAN**

#### **Credibility indicators comparative analysis of the credit organizations of the RA**

*Key words: credit organization, AMD loans (credits), dollar credits, forecasts, trends*

Credit organizations have been able to increase their share in the Armenian credit market over the past seven years. One of the positive shifts is that the increase in the share of credit organizations will continue and this should somewhat worry commercial banks. Credit organizations reduce the share of foreign currency loans in their portfolio. This tendency will continue, and this means that in terms of foreign exchange risk management, credit organizations have appeared in favorable positions.




**ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**Արամ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
ՀՊՏՀ հայցորդ

Բանալի բառեր. վարկային կազմակերպություն, դրամային վարկեր, դոլարային վարկեր, կառուցվածք, միտումներ


ՀՀ վարկային կազմակերպությունների գործունեության զնահատումն, ինչպես նաև վարկային պորտֆելի կառուցվածքի վերլուծությունը կարելի է իրականացնել մի շարք մոտեցումներից ելնելով: Օրինակ՝ ցանկացած երկրի պետական բյուջեի մասին զնահատական տալու համար փորձագետները, սովորաբար, ուսումնասիրում են առաջին 3 խոշոր հողվածները, նմանատիպ մոտեցում կարելի է կիրառել նաև վարկային կազմակերպությունների գործունեության զնահատման ժամանակ: ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տնտեսության ֆինանսավորման ծավալները 2011-2017թթ. 9 ամիսների ընթացքում հասել են մինչև 306.6 մլրդ դրամի: Առաջին երեք հորիզոնականում հայտնված տնտեսության ոլորտներն են՝ ֆինանսական և ապահովագրական գործունեությունը, որտեղ ուղղվում է ՀՀ վարկային կազմակերպությունների վարկերի 44-45%-ը կամ մոտ 136 մլրդ դրամը, որն, ի դեպ, 7 տարի առաջ 2011թ.-ին գրեթե 33 մլրդ դրամ էր կազմում:



**Գծանկար 1.** Ֆինանսական և ապահովագրական գործունեության վարկավորումը ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից (ժամանակահատվածի վերջ, մլրդ ՀՀ դրամ)

2-րդ հորիզոնականում է գտնվում գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և ձկնորսությունը, վերջին 3 տարիներին այս ոլորտի ֆինանսավորումը կազմել է վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի գրեթե 17-20%-ը և գերազանցել է 52 մլրդ դրամի սահմանագիծը: Սա բավականին կարևոր է, քանի որ գյուղատնտեսությունն այն հիմնական

իրական տնտեսության ճյուղն է, որտեղ վարկային կազմակերպությունների գործունեությունը բավականին ակտիվ և արդյունավետ է: Իսկ այս տեմպերով շարունակվելու պարագա 3 տարիներին այս ոլորտի ծավալները կարող են հասնել մոտ 60 մլրդ դրամի: Այսինքն՝ այստեղ միտումները և՛ դրական են, և՛ հուսադրող:




**Գծանկար 2.** Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության վարկավորումը ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից<sup>225</sup> (ժամանակահատվածի վերջ, մլրդ ՀՀ դրամ)

Վարկավորման երրորդ խոշոր ոլորտն առնչվում է սպառողական վարկերի հետ, որտեղ վարկավորման ծավալները 2011-2017թթ. ընթացքում հասել են 8-ից մինչև 15%, իսկ դրամական առումով գրեթե 46 մլրդ դրամի, այսինքն՝ համարյա մոտ են գյուղատնտեսության վարկավորման ցուցանիշներին: Սպառողական վարկերի երկու հիմնական ուղղությունները կտրուկ աճ են արձանագրել, դրանցից առաջինը՝ ոսկու գրավով վարկերն են, և եթե 2011թ.-ին կար տրված ընդամենը 1.6 մլրդ դրամի վարկ այս մասով, ապա 2017թ.-ի 9 ամիսների ընթացքում այս ցուցանիշը հասել է 23 մլրդ դրամի: Եվ եթե ավելի լուրջ մոտենանք այս ցուցանիշին, ապա կարող ենք նկատել, որ այստեղ վարկային գրավի տակ է հայտնվում տնային տնտեսությունների հարստությունը հանդիսացող ոսկին, իսկ դա բարեկեցության անկման լուրջ ինդիկատոր կարող է հանդիսանալ գնահատելու համար բնակչության կենսամակարդակը: Ընդհանրապես, սպառողական վարկերի հիմնահարցը դրված է ամբողջ համաշխարհային տնտեսության մեջ, իսկ եթե այդ վարկերն ուղղվում են նաև ներ-

<sup>225</sup> Հաշվարկները կատարվել են ՀՀ ԿԲ առցանց տվյալների հիման վրա: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

մուծված ապրանքների ձեռքբերմանը, ապա դա ոչ այլ ինչ է, քան սպառողների ներմուծման ֆինանսավորում վարկային կառույցների հաշվին:



**Գծանկար 3.** Սպառողական վարկերի վարկավորումը ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից (Ժամանակահատվածի վերջ, մլրդ ՀՀ դրամ)<sup>226</sup>

ՀՀ ԿԲ-ի կողմից ներկայացվող վիճակագրական տվյալների վերլուծությունը վարկային կազմակերպությունների, ինչպես նաև վերջիններիս գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ՝ թույլ է տալիս եզրակացնել, որ վարկային կազմակերպությունները հանդիսանում են առևտրային բանկերին ֆինանսավորող կազմակերպություններ, քանի որ միայն 2017թ.-ի 9 ամիսների ընթացքում վերջիններիս կողմից իրենց վարկային պորտֆելի 40%-ն ուղղվել է ՀՀ առևտրային բանկերին: Ինչ է ստացվում, որ եթե այս կազմակերպությունները ստեղծվել են ինքնուրույն վարկավորման գործառույթներ իրականացնելու նպատակով չեն զբաղվում դրանով և իրականացնում են առևտրային բանկերի ֆինանսավորում, այսինքն՝ վարկառուներին գումարներ հասցնելու տեսանկյունից առևտրային բանկերն այս շղթայում պարզապես վերածվել են միջնորդ օղակի, որոնք իրենց վրա կրում են վարկերի վերադարձելիության ռիսկերը և միևնույն ժամանակ պարտավորություն են ստանձնում ՀՀ վարկային կազմակերպությունների նկատմամբ: Ի՞նչի կարող է հանգեցնել նման փոխկապակցված համակարգի ձևավորումը: Առաջին հերթին սա փաստում է ոչ առողջ ֆինանսական համակարգի մասին, քանի որ եթե այս երկու օղակները կարող էին առանձին զբաղվել տնտեսության ֆինանսավորման հարցերով՝ սերտաճել են միմյանց՝ այն էլ գրեթե 40 տոկոսով, որը կազմում է գրեթե 124 մլրդ դրամ: Մյուս կողմից բանկային համակարգի ճգնաժամի

<sup>226</sup> Հաշվարկները կատարվել են ՀՀ ԿԲ առցանց տվյալների հիման վրա: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

պարագայում, եթե վարկային կազմակերպությունները կարող էին քիչ վնասներ կրել, ապա այս դեպքում հայտնվելու են լուրջ վնաս կրողների ցուցակում:

**Աղյուսակ 1.** ՀՀ վարկային կազմակերպություններ կողմից տրված (դրամ և արտարժույթով) վարկերը<sup>227</sup> (ժամանակահատվածի վերջ, մլրդ ՀՀ դրամ)

	2011	2012	2013	2014	2015	2016	2017/09
Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, արժույթային սվոպ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի, այդ թվում՝	112,7	157,5	195,7	248,9	267,2	299,8	306,6
A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	22,7	30,1	39,9	51,5	54,1	51,8	52,3
C. Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝	6,3	9,1	10,5	11,7	13,8	11,5	10,1
(10) սննդի արդյունաբերություն	2,0	3,4	4,0	4,1	4,9	5,0	4,6
F. Շինարարություն	3,3	5,7	5,6	5,0	3,4	3,0	4,1
G. Առևտուր, այդ թվում՝	14,8	19,3	22,2	25,1	22,8	19,6	19,5
(46) մեծածախ առևտուր	3,0	3,3	3,2	3,8	3,9	3,2	3,7
(47) մանրածախ առևտուր	11,6	15,7	18,6	20,6	18,0	15,6	14,8
H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	2,9	3,1	3,5	3,7	3,4	2,8	2,6
K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն, այդ թվում՝	33,1	45,4	58,9	82,5	105,4	133,9	136,0
առևտրային բանկեր	29,6	40,4	42,0	47,3	96,4	121,8	123,9
վարկային կազմակերպություններ	2,1	3,7	4,6	5,4	8,4	11,2	11,5
Տնտեսության այլ ճյուղեր	2,3	3,2	5,3	6,5	6,4	7,6	6,2
Հիպոթեկային վարկեր, այդ թվում՝	12,1	17,4	19,9	19,0	20,5	24,1	26,3
անշարժ գույքի ձեռքբերման հիպոթեկային վարկեր	7,1	9,4	9,9	10,4	12,3	15,2	16,4
անշարժ գույքի վերանորոգման հիպոթեկային վարկեր	4,7	7,8	9,7	8,0	6,9	7,5	7,4
Սպառողական վարկեր, այդ թվում՝	8,6	14,9	18,8	28,8	30,1	38,6	46,3
ոսկու գրավով վարկեր	1,6	2,8	2,9	5,3	15,3	20,7	23,0
այլ սպառողական վարկեր	5,5	9,7	13,4	22,0	13,4	16,8	22,3

Այս տեսանկյունից բավականին խելամիտ կլիներ, որպեսզի օրենսդրորեն այս գործունեությունը կարգավորվեր, որպեսզի տնտեսության ֆինանսավորման գործառույթ իրականացնող կառույցներն անկախ գործունեություն ծավալեին, այլ ոչ թե զբաղվեին միմյանց ֆինանսավորելով կամ իրար հետ սերտաճելով: Վարկային կազմակերպությունների առաջին երեք խոշոր վարկային հոդվածների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առկա է երեք խոշոր վարկառուների մասով գրեթե 76 տոկոսանոց գերկենտրո-

<sup>227</sup> <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

նացվածություն, որը չդիվերսիֆիկացված վարկային պորտֆել ունենալու մասին է փաստում:

**Աղյուսակ 2.** ՀՀ վարկային կազմակերպություններ կողմից տրված (դրամ և արտարժույթով) վարկերի տեսակարար կշիռները<sup>228</sup> (մլրդ ՀՀ դրամ)

	2011	2012	2013	2014	2015	2016	2017/09
Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, արժութային սվոպ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի, այդ թվում՝	100	100	100	100	100	100	100
A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	20	19	20	21	20	17	17
C. Մշակող արդյունաբերություն, այդ թվում՝	6	6	5	5	5	4	3
F. Շինարարություն	3	4	3	2	1	1	1
G. Առևտուր, այդ թվում՝	13	12	11	10	9	7	6
(47) մանրածախ առևտուր	10	10	10	8	7	5	5
K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն, այդ թվում՝	29	29	30	33	39	45	44
առևտրային բանկեր	26	26	21	19	36	41	40
վարկային կազմակերպություններ	2	2	2	2	3	4	4
Տնտեսության այլ ճյուղեր	2	2	3	3	2	3	2
Հիպոթեկային վարկեր, այդ թվում՝	11	11	10	8	8	8	9
անշարժ գույքի ձեռքբերման հիպոթեկային վարկեր	6	6	5	4	5	5	5
անշարժ գույքի վերանորոգման հիպոթեկային վարկեր	4	5	5	3	3	3	2
Սպառողական վարկեր, այդ թվում՝	8	9	10	12	11	13	15
ոսկու գրավով վարկեր	1	2	1	2	6	7	8
այլ սպառողական վարկեր	5	6	7	9	5	6	7

Ուսումնասիրելով առանձին վարկավորման ուղղությունների նախապատմությունը նկատում ենք, որ օրինակ՝ առևտրի և, հատկապես, մանրածախ առևտրի մասով վարկավորման պորտֆելում գրանցվել է գրեթե կրկնակի տեսակարար կշռի անկում, չնայած առևտուրը մոտ 20 մլրդ դրամի հասնող բաղադրիչ ունի, սա նշանակում է, որ առևտրի վարկավորումն իրեն ինչ որ առումով չի արդարացրել:

8-11% մասնաբաժին ունի ՀՀ վարկային կազմակերպությունների պորտֆելում հիպոթեքային վարկավորումը, որն իր հերթին բաժանվում է անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման բաղադրիչների: Այս վարկատեսակի

<sup>228</sup> Հաշվարկները կատարվել են ՀՀ ԿԲ առցանց տվյալների հիման վրա: <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

ծավալը ներկայումս կազմում է մոտ 26.3 մլրդ դրամ, որը ևս աճի հնարավորություններ ունի: Հիփոթեքային վարկերի գրեթե 14.7 մլրդը տրվել է դրամով, իսկ 11.6 մլրդ-ն արտարժույթով:

**Աղյուսակ 3. ՀՀ վարկային կազմակերպություններ կողմից տրված դրամով վարկերը<sup>229</sup> (ժամանակահատվածի վերջ, մլրդ ՀՀ դրամ)**

	2011	2012	2013	2014	2015	2016	2017/9
Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, արժութային սվոպ, ռեպո համաձայնագրերը ստ ճյուղերի, այդ թվում՝	76,3	108,5	141,0	180,0	207,6	232,6	245,6
A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	20,6	26,2	32,7	38,9	37,1	31,9	34,5
C. Մշակող արդյունաբերություն	3,9	6,4	7,6	8,0	9,5	7,8	6,9
G. Առևտուր	6,6	8,4	9,9	11,2	10,6	9,9	10,3
K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	25,3	38,8	54,1	74,1	99,3	120,6	126,9
Հիպոթեկային վարկեր	5,2	6,5	7,8	8,2	10,8	13,8	14,7
Սպառողական վարկեր, այդ թվում՝	8,6	14,9	18,7	28,7	29,6	37,8	45,7
ոսկու գրավով վարկեր	1,6	2,8	2,9	5,3	15,3	20,7	23,0
այլ սպառողական վարկեր	5,5	9,7	13,4	21,9	12,8	16,0	21,7

ՀՀ վարկային կազմակերպությունների առանձնահատկություններից մեկն արտարժութային վարկերի տեսակարար կշռի նվազմամբ էր արտացոլվում, դա նկատելի է նաև դրամային և արտարժութային պորտֆելների աղյուսակային տվյալներից: Հետաքրքիրն այն է, որ դրամային պորտֆելում կրկին առաջին հորիզոնականում ֆինանսական և ապահովագրական գործունեության ֆինանսավորումն է 126.9 մլրդ դրամ բաղադրիչով, որին հաջորդում են 45.7 մլրդ դրամի հասնող սպառողական վարկերը, իսկ դա նշանակում է, որ արտարժույթով գրեթե սպառողական վարկեր չեն տրամադրվում: 3-րդ հորիզոնականում դրամային պորտֆելում հայտնվել է գյուղատնտեսությունը 34.5 մլրդ դրամ ցուցանիշով, որն, ի դեպ, 2015թ.-ից սկսած վարկային կազմակերպությունների արտարժութային պորտֆելում զբաղեցրել է առաջատար դիրք, իսկ դրանից առաջ ամենաշատ արտարժութային վարկեր տրամադրվել են առևտրի և հիփոթեքային վարկավորման բնագավառում:

Այս վերլուծությունը կարելի է ավելի խորացնել՝ փորձելով գտնել նաև առանձին ոլորտներում տեղի ունեցած զարգացումների և դեպի այլ ոլորտներ գումարների ուղղորդման կամ ՀՀ վարկային կազմակերպությունների գործունեության և վարկային պորտֆելի մեջ տեղի ունեցած նաև փոքր տեղաշար-

<sup>229</sup> <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

Ժերի տրամաբանական կապերը, սակայն էականն այն է, որ շատ ավելի մեծ ու խոշոր, անգամ հայեցակարգային բույթի խնդիրներ են ի հայտ գալիս պորտֆելային վերլուծության և դրա գերկենտրոնացված ու չդիվերսիֆիկացված լինելու արդյունքում:

**Աղյուսակ 4.** ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրված արտարժույթով վարկերը<sup>230</sup> (ժամանակահատվածի վերջ, մլրդ ՀՀ դրամ)

	2011	2012	2013	2014	2015	2016	2017/09
Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, արժութային սվոպ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի, այդ թվում՝	36,4	49,0	54,7	68,8	59,5	67,1	60,9
A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	2,1	3,8	7,2	12,5	16,9	19,9	17,8
C. Մշակող արդյունաբերություն	2,3	2,7	2,9	3,7	4,2	3,6	3,1
G. Առևտուր	8,1	10,9	12,2	13,9	12,1	9,7	9,2
K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	7,7	6,6	4,8	8,4	6,1	13,2	9,1
Հիպոթեկային վարկեր	6,9	10,8	12,1	10,7	9,7	10,3	11,6

Այսպիսով՝ հիմնական եզրակացությունն այն է, որ՝

➤ Վարկային կազմակերպությունները վերջին 7 տարիների ընթացքում ՀՀ վարկային շուկայում չնայած ավելացրել են իրենց մասնաբաժինը, սակայն կորցրել են դիվերսիֆիկացվածությունն առանձին վարկատեսակների մասով:

➤ ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրված վարկերի 3/4-ը կենտրոնացված է «ֆինանսական և ապահովագրական գործունեության», «գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության» և «սպառողական վարկերի» բնագավառներում: Եվ այս միտումն ապագայում խորացման հեռանկարներ ունի:

➤ Վարկային կազմակերպություններին հաջողվել է իրենց պորտֆելում նվազեցնել արտարժութային վարկերի տեսակարար կշիռը, իսկ առաջնային դիրքեր այստեղ ունեն հիմնականում գյուղատնտեսական վարկերը:

➤ ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրվող դրամային վարկերի մեջ սպառողական վարկերի մասնաբաժնի աճն առաջիկա տարիներին կարող է դրանց վերադարձելիության խնդիրներ առաջացնել, քանի որ 7 տարվա ընթացքում 14 անգամ ավելացել են ոսկու գրավով վարկ վերցնողների հատկացվող գումարները:

<sup>230</sup> <https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx>

### **Արամ ԶՈՎԶԱՆՆԻՍՅԱՆ**

#### **ԶԶ վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի կառուցվածքի ու վարկավորման ուղղությունների վերլուծությունը**

*Բանալի բառեր. վարկային կազմակերպություն, դրամային վարկեր, դոլարային վարկեր, կառուցվածք, միտումներ*

Վարկային կազմակերպությունները վերջին 7 տարիների ընթացքում ԶԶ վարկային շուկայում չնայած ավելացրել են իրենց մասնաբաժինը, սակայն կորցրել են դիվերսիֆիկացվածությունն առանձին վարկատեսակների մասով: Նրանց կողմից տրված վարկերի 3/4-ը կենտրոնացված է երեք բնագավառներում: ԶԶ վարկային կազմակերպությունների կողմից տրվող դրամային վարկերի մեջ սպառողական վարկերի մասնաբաժնի աճն առաջիկա տարիներին կարող է դրանց վերադարձելիության խնդիրներ առաջացնել, քանի որ 7 տարվա ընթացքում 14 անգամ ավելացել են ոսկու գրավով վարկ վերցնողներին հատկացվող գումարները:

### **Арам ОВАННИСЯН**

#### **Анализ структуры кредитного портфеля и направление кредитов кредитных организаций РА**

*Ключевые слова: кредитная организация, кредиты AMD, долларовые кредиты, структура, тенденции*

За последние 7 лет кредитные организации увеличили свою долю на армянском кредитном рынке, но потеряли диверсификацию по отдельным видам кредитов. Около 3/4 из этих кредитов сосредоточены в трех сферах. Увеличение доли потребительских драмовых кредитов, выданных кредитными организациями Армении, может вызвать проблемы их возврата в ближайшие годы, поскольку сумма, выделенная заемщикам с золотым залогом, за последние 7 лет увеличилась в 14 раз.

### **Aram HOVHANNISYAN**

#### **Analysis of credit portfolio structure and crediting directions of the RA credit organizations**

*Key words: credit organization, AMD loans (credits), dollar credits, structure, trends*

Over the past 7 years, credit organizations have increased their share in the Armenian credit market, but have lost diversification in certain types of loans. About 3/4 of these loans are concentrated in three areas. The increase in the share of consumer credit loans issued by Armenian credit organizations may cause problems for their return in the coming years, since the amount allocated to borrowers with a gold lien has increased 14 times over the past seven years.



**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԴԻՐՔԱՎՈՐՈՒՄԸ ՄԵԴԻԱՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ**

**Արարատ ԶԱՔԱՐՅԱՆ**

ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի վարիչ, տնտ.գիտ.դոկտ., պրոֆեսոր

**Մերի Պետրոսյան**

ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. մեդիամարքեթինգ, առողջապահություն, շուկայական դիրքավորում, գովազդ, բաներ

Բժշկական-առողջապահական բնույթի ապրանքներ և ծառայություններ վաճառող կազմակերպությունների իրացման մարքեթինգային կանխատեսումներ կատարելիս և շուկայի պոտենցիալ տարողության հաշվարկելիս մեծ նշանակություն ունեն այն գործոնները (կոնյունկտուրայի կարճաժամկետ և երկարաժամկետ փոփոխություններ, պահանջարկի սեզոնային փոփոխություններ, ժողովրդագրական առանձնահատկություններ և այլն), որոնք կարող են նպաստել ինչպես շուկայի տարողության մեծացմանը, այնպես էլ նվազեցմանը:

Մարքեթինգի միջոցով կազմակերպությունների ղեկավարները տեղեկատվություն են ստանում, թե ինչ ծառայություններ և ինչու են սպառողները ցանկանում ստանալ, ինչ են պատրաստ դրա համար վճարել, որ տարածքներում են տվյալ ապրանքի կամ ծառայության նկատմամբ առավել բարձր պահանջարկ դրսևորում և որտեղ կարելի է նման ծառայությունների իրացումից առավել բարձր շահույթ ստանալ:

Հենց մարքեթինգի տվյալների հիման վրա պետք է ընդունվեն որոշումներ, թե ինչ ապրանքներ ու ծառայությունների կամ գործունեության որ ոլորտներում է առավել շահավետ կապիտալ ներդրումներ կատարել, որտեղ է պետք նոր կազմակերպություն հիմնել և ինչպես կազմակերպել դրա իրացումը:

Բժշկական-առողջապահական կազմակերպությունների շուկայական դիրքավորման մասին խոսելիս անհրաժեշտ է ընդգծել, որ առևտրային գովազդի առավել նպատակային միջոցառումները պետք է ուղղվեն ընդհանուր, անհատական և շուկայական պահանջարկի համակարգային վերլուծությանը: Այստեղ շատ կարևոր է պահանջարկի ձևավորման օրինաչափությունների ճիշտ բացա-

հայտումն և գնահատումը, որի համար անհրաժեշտ է տարբերակել ամբողջական պահանջարկը և անհատական պահանջարկը<sup>231</sup>:

Ամբողջական պահանջարկն, ըստ էության, ՀՆԱ-ի բժշկական-առողջապահական բաղադրիչն է իր տարրերով՝ տնային տնտեսությունների սպառում, ներդրումներ, պետական գնումներ և զուտ արտահանում: Իսկ անհատական պահանջարկը տվյալ ապրանքի կամ ծառայության նկատմամբ կոնկրետ անհատի պահանջներն են:

Ամեն դեպքում XIX դարի վերջին և XX դարի սկզբին բաններային գովազդների բացարձակ արդյունավետությունն արդեն իրականություն չէ և առավել շատ է տեղ հատկացվում և արդյունավետությամբ էլ ավելի բարձր ցուցանիշներ են արձանագրվում դեպի անհատ սպառողներին ուղղված գովազդի միջոցներն օգտագործելիս<sup>232</sup>:

Այս տեսանկյունից առանձնացվել են գովազդի այն տեսակները, որոնք առավել նպատակահարմար է օգտագործել բժշկական-առողջապահական ապրանքներ և ծառայությունների շուկայում (գծապատկեր 1.)

Ընդ որում, առաջնային (հեռանկարային) գովազդ նշելով այստեղ նկատի ենք ունեցել մարքեթինգային միջոցառման մաս՝ ուղղված անհատ սպառողներին հիշեցնող կամ ամրապնդող գովազդների ձևով: Այս ձևերի մեջ արդեն ընտրություն կատարելու կամ դրանց արդյունավետության տեսանկյունից կարևոր է հաշվի առնել տվյալ ապրանքի կամ ծառայության հասունության աստիճանը:


Գովազդի ստացիոնար ձևերից կարևորել և ներկայացրել ենք բաններային գովազդը և նշենք, որ այս գովազդների մոտ 80%-ը հիմնականում իրենցից ներկայացնում են կազմակերպության կամ ապրանքի լոգոն կամ նմանատիպ այլ պատկեր: Ընդ որում այդ պատկերը կարող է հայտնվել թե՛ հեռուստահաղորդումներում, թե՛ տպագիր մամուլում, թե՛ արտաքին գովազդային վահանակներում

Կարծում ենք, այս առումով, անհրաժեշտ է հենվել այն տեսակետի վրա, ըստ որի գովազդի բաններային ձևերը արդյունավետ օգտագործվում են ինչպես ստացիոնար ձևերով, այնպես էլ մոբայլ կամ էլեկտրոնային տարբերակներով: Նմա-

<sup>231</sup> Ильенкова Н.Д., совокупный потребительский спрос. – М.: Информатика, 2000. С. 35.

<sup>232</sup> Винокуров Б.Л., Рыночные фазы маркетинга медицинских услуг.//Здравница Причерноморья. 2009. №4, с. 38-39; Винокуров Б.Л., Баннерная реклама как ингредиент прогрессивной рыночной политики.// Торговля и маркетинг. 2003.. №4, с.27-29

նատիպ գովազդները բավականին արդյունավետ են, դրանց տեղադրումը բավականին էժան լինելու պատճառով ինչպես անհատների, այնպես էլ առևտրային առաջարկների համար: Ընդ որում բաններային գովազդն ունի որոշակի առավելություններ, որոնք հանգում են հետևյալին.



**Գծապատկեր 1.** Առողջապահական-բժշկական փոքր և միջին հաստատությունների մարքեթինգային գործառույթների իրականացման համար նախընտրելի գովազդի տեսակները

Ապրանքի կամ ծառայության վաճառքի մասին հայտարարության տեղադրում հիմնական բնութագրերը ներկայացնելով,

- Վաճառվող ապրանքի լուսանկարի՝ գովազդային հայտարարությանն ավելացնելու հնարավորություն,
- Հայտարարությունների հարմար որոնում կոնկրետ ապրանքի գնահատման տարբեր չափանիշներով,
- Տեղադրված հայտարարության օպերատիվ խմբագրման կամ վերացման հնարավորություն,
- Հայտարարությունների կրկնում նորությունների հեռուստատեսային սերվերներում,
- Էլեկտրոնային ծառայության հասանելիություն լայն զանգվածներին (օրինակ, ունենալով միայն բջջային հեռախոս, կարելի է հասանելիություն ապահովել տվյալ ապրանքին կամ ծառայությանը)

Նկատենք, որ գովազդներ ընդունող և դրանք իրենց կայքերում կամ այլ կայքերում տեղաբաշխելու աշխատանքներ կատարող կազմակերպությունների ծառայությունները եթե դիտարկում ենք իրենց դիտելիության ցուցանիշի հետ համեմատած, այդքան էլ թանկ չեն և կարող են բավականին բարձր արդյունավետություն ապահովել:

Հետազոտության շրջանակներում առողջապահական-բժշկական ապրանքների ու ծառայությունների շուկայում սպառողների բավարարվածության աստիճանի գնահատման վերլուծությունը թույլ է տվել ընդհանուր և անհատական մո-տեցումներով մշակել գովազդային քաղաքականություն, որտեղ հիմնական սկզբ-բունքը գովազդի բազմաձևությունն է և դա կիրառել որպես առանցքային գոր-ծիքակազմ հիվանդանոցների, պոլիկլինիկաների, առողջարանների, դեղատների մարքեթինգային ծրագրերում: Այս կտրվածքով հետազոտությունները թույլ են տալիս հիմնավորել բժշկական-առողջապահական կազմակերպությունների նո-րամուծական վարքագիծը այդ թվում բժշկական առանձնահատուկ տեսակի ծա-ռայությունների շուկայական առաջմղման ժամանակ (աղյուսակ 1.):

**Աղյուսակ 1.** Բժշկական-առողջապահական շուկայում գիտական վերլուծության և սպառողական նախասիրությունների ընդհանուր և անհատական մարքեթինգային մոտեցումների առևտրայնացման հիմնախնդիրները

Բժշկական-առողջապահական ապրանքի մեդիա-առևտրայնացման չափանիշները	Բժշկական-առողջապ. կազմակերպությունների մեդիա դաշտում ներկայացվելու ձևերը
<p>1. Մարքեթինգային զանգվածային տեխնոլոգիաների առևտրային «ախորժակ» (գովազդի արժեքի նվազեցման համար),</p> <p>1.1. գովազդային ձևակերպումների կարճություն և խտացվածություն</p> <p>1.2. նոր մեդիայի (բջջային, ինտերնետային) ձևերի գաղափարական պարզություն</p> <p>1.3. կարգախոսների գրական արտահայտչականություն, նոր գովազդային նյութի շարադրման ոճի պարզություն</p>	<p>ա) մեդիա դաշտում մարքեթինգային գովազդային բազմաձև նորամուծական տեխնոլոգիաների ներդրում՝ այսինքն գովազդի միևնույն տեսակի հնարավորությունը բյուրեղանալ և վերածվել իրացման քաղաքականության կարևոր և առաջատար բաղադրիչի (կախված սպառողների պահանջներից մեկը լինելուց. Օրինակ՝ առողջ սպորտակերպի կորպորատիվ ձև, էթնիկ կամ մտածելակերպի առանձնահատկություններ, վնասակար ցանկություններ, ինչպիսիք են շատակերությունը, ծխելը և այլն)</p>
Բազմաձև գովազդի առևտրայնացման մոտեցումը որպես բժշկական կազմակերպությունների ապրանքների և ծառայությունների առաջմղման ծրագրերի առանցքային մեդիագործիք	
<p>2. Առևտրային մեդիա վաճառքների իրավիճակային գործընթացի բազմաքննադատական մոտեցում հետևյալ քայլերով.</p> <p>2.1. բաշխման կապուղիներում դրական և բացասական սպառողական արձագանքների հարաբերակցության քանակական վերլուծություն</p> <p>2.2. բժշկական ապրանքների ու ծառայությունների որակի անհետաձգելի ճշգրտման կառավարչական որոշումների ընդունում՝ ելնելով զանգվածային տեղեկատվության միջոցներում դրանց քննադատման ռացիոնալ կողմերից</p>	<p>բ) սպառողին ներկայացնել շուկայում նորամուծությունների մասին՝ ելնելով հետևյալով մեդիագովազդի ինքնահետզման հատկանիշը և ներկայացնելով կառուցվածքային գնային շղթայի ուսումնասիրումը (որը ելնելով է կոնկրետ «հիվանդի» վրա բազմապրոֆիլ բժշկական ծառայությունների ընդհանուր բուժական ազդեցություն՝ դրանք միավորելով միասնական գնային միջակայքում, «Ֆլեշ»(գնորդի հետ համաձայնեցված) գներ, որտեղ հաշվի են առնվում տվյալ պահին գնորդի հնարավորությունները, ինֆյացիայի մակարդակը, մեդիատեղեկատվությունը և այլն:</p>
Մեդիամարքեթինգը հատուկ վերլուծության սխեմաների շուկայի առաջմղման գործում	
Տարբերվող պատկերացումների մեդիա ճշգրտում՝ այլ երկրներում, առաջատար բժշկական հաստատություններում նման ապրանքների և ծառայությունների համեմատ առավելությունների մասին	Մարքեթինգի միջոցներով ապացուցելիություն (ներառյալ առողջ մարդու կերպարի ստեղծման տեսագովազդային միջոցները), առանց վիրահատական միջամտության կամ ոչ դեղորայքային բուժում, տարբեր թերապիաների կիրառում և այլն

Ամփոփելով աղյուսակ 1-ը կարելի է նշել, որ բազմաձև գովազդային քաղաքականությունը հնարավորություն է տալիս առանց ժամանակային կորուստների փորձարկել տարբեր տիպի գովազդային կրիչների ու տարբեր մեդիա միջավայրերի հնարավորություններն ու բացահայտել լավագույն աշխատող սխեմաներով գովազդային միջավայրերն ու հասկանալ սպառողի իրական պահանջմունքը: Այս մեխանիզմը հնարավորություն է տալիս բյուրեղացնել-զտել առողջապահական-բժշկական կազմակերպությունների կողմից առաջարկվող ապրանքների ու ծառայությունների լավագույն հատկանիշները և հետագա գովազդային քաղաքականության մեջ առավել արդյունավետ օգտագործման մեխանիզմ մշակել:

**Արարատ ԶԱՔԱՐՅԱՆ, Մերի ՊԵՏՐՈՍՅԱՆ**

**Առողջապահության ոլորտի կազմակերպությունների շուկայական դիրքավորումը մեդիամարքեթինգի գործիքներով**

*Բանալի բառեր. մեդիամարքեթինգ, առողջապահություն, շուկայական դիրքավորում, գովազդ, բաներ*

Առողջապահական կազմակերպությունները, թեև ունեն որոշակի յուրահատուկ ուղղվածություն և ի սկզբանե նրանց հիմնական նպատակը բնակչության առողջության ապահովումն է, առևտրային կազմակերպություններ են և հետևաբար հիմնական նպատակների մեջ ոչ երկրորդական նշանակություն ունի նաև շահույթի ստացումը: Հոդվածում քննարկվել և ներկայացվել են մեդիամարքեթինգի գործիքակազմով առողջապահական կազմակերպությունների «արտադրանքի» մեդիա առևտրայնացման և առաջնդմանն ուղղված միջոցառումները:

**Ararat ZAKARYAN, Meri PETROSYAN**

**Рыночное позиционирование организаций сферы здравоохранения инструментами медиамаркетинга**

*Ключевые слова: медиамаркетинг, здравоохранение, позиционирование, реклама, баннер*

Не смотря на то, что организации в сфере здравоохранения имеют специальное направление и с перва у них главной целью является здоровье населения, они еще и коммерческие организации, главной целью которых является получение прибыли. В условиях конкуренции, для обеспечения больших объемов продаж и для получения больших прибылей эти организации тоже обращаются к инструментам маркетинга и в этом немало-важную роль играют возможности медиамаркетинга. В данной статье обсуждены и представлены мероприятия направленные на медиа коммерциализацию и продвижение продуктов организаций здравоохранения инструментами медиамаркетинга.

**Ararat ZAKARYAN, Mary PETROSYAN**

**Market positioning of the health sector organizations with mediamarketing tools**

*Key words: media marketing, health care, positioning, advertizing, banner*

In spite of the fact that the organizations in health sector have the special direction and at first a main goal is health of the population, they are also commercial organizations which main goal is receiving profit. In the conditions of the competition, for ensuring large volumes of sales and for receiving big profits these organizations addresses to instruments of marketing and in it an important role is played by possibilities of media marketing. Actions the commercialization and advance of products of the organizations of health care directed to media by instruments of media marketing are discussed and presented in this article.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՎԱՆՂՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՇԱՐՔԵՐԻ ԷՔՍՊՈՆԵՆՑԻԱԼ ՀԱՐԹԵՑՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ**

**Էլինա ՇԱՄՍԱԼՈՎԱ**

ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի դասախոս

Բանալի բառեր. վարկեր, ավանդներ, զարգացման միտում, տրենդ, կանխատեսումներ, էքսպոնենցիալ հարթեցում

Ժամանակային շարքերի վերլուծության մեջ կիրառվում է նաև ցուցչային (էքսպոնենցիալ) միջինների օգնությամբ շարքի հարթեցումը և կանխատեսումների իրականացումը: Ցուցչային միջինների էությունն այն է, որ պետք է գտնել այնպիսի միջիններ, որոնցում սոցիալ-տնտեսական երևույթի նախկին հետազոտության ազդեցությունը կսկսի մարել այն պահից սկսած, որի համար հաշվարկվում է միջին մակարդակը: Ժամանակային շարքի էքսպոնենցիալ հարթեցումը կատարվում է *Ռ. Բրաունի* բանաձևով՝ [6, սր.183]

$$Q_t = \alpha \times y_t + (1 - \alpha) \times Q_{t-1}, \quad \text{որտեղ}$$

$Q_t$  -  $t$  պահի դրությամբ ցուցչային միջինն է, ժամանակային շարքի հարթեցված նշանակությունն է,

$\alpha$  - ընթացիկ հետազոտության կշիռն է,

$y_t$  - ժամանակային շարքի փաստացի մակարդակն է  $t$  պահի դրությամբ,

$Q_{t-1}$  - նախկին մակարդակի ցուցչային միջինն է:

Հարթեցման ժամանակ ընտրվում է  $\alpha$  այն կշիռը, որի դեպքում մնացորդների քառակուսիների գումարը նվազագույնն է: Ցուցչային միջիններով ժամանակային շարքի հարթեցման դեպքում շարքի առաջին մակարդակի հարթեցված և փաստացի մակարդակները ընդունվում են միմյանց հավասար, որից հետո սկսվում է հարթեցված մակարդակների հաշվարկը: Կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ և ավանդների և վարկերի չափը ներկայացնող ժամանակային շարքի էքսպոնենցիալ հարթեցման դեպքում մնացորդների քառակուսիների գումարի նվազագույն մակարդակ է ստացվում, երբ  $\alpha = 0.9$  կշռի դեպքում:

Հարթեցման ժամանակ ընտրվում է  $\alpha$  այն կշիռը, որի դեպքում մնացորդների քառակուսիների գումարը նվազագույնն է: Ցուցչային միջիններով ժամանակային շարքի հարթեցման դեպքում շարքի առաջին մակարդակի հարթեցված և փաստացի մակարդակները ընդունվում են միմյանց հավասար, որից հետո սկսվում է հարթեցված մակարդակների հաշվարկը:

**Աղյուսակ 1.** Արցախի Հանրապետության առևտրային բանկերի ավանդների և վարկերի մեծությունը, տարեվերջին, մլն. դրամ, 2002-2016թթ.

Տարիներ	Վարկեր	Ավանդներ
2002թ.	5093.1	13274.0
2003թ.	6033.5	19354.0
2004թ.	9138.9	21579.0
2005թթ.	16612.3	14566.0
2006թ.	6180.4	20363.0
2007թ.	10417.0	24803.0
2008թ.	17812.8	33310.0
2009թ.	29249.1	29055.6
2010թ.	42526.1	34453.0
2011թ.	59617.9	41182.9
2012թ.	79425.8	49307.4
2013թ.	82862.8	55902.1
2014թ.	98234.1	58619.1
2015թ.	100805.0	61340.2
2016թ.	118825.1	74534.7

Կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ և ավանդների և վարկերի չափը ներկայացնող ժամանակային շարքի էքսպոնենցիալ հարթեցման դեպքում մնացորդների քառակուսիների գումարի նվազագույն մակարդակ է ստացվում, երբ  $\alpha = 0.9$  կշռի դեպքում:

**Աղյուսակ 2.** Նշված կշռով հարթեցված մակարդակները, փաստացի մակարդակից դրանց շեղումների քառակուսիները:

Տարիներ	Վարկեր			Ավանդներ		
	$y_{1t}$	$Q_{1t}$	$e_{1t}^2 = (y_{1t} - Q_{1t})^2$	$y_{2t}$	$Q_{2t}$	$e_{2t}^2 = (y_{2t} - Q_{2t})^2$
2002թ.	5093.1	5093.1	0.0	13274.0	13274.0	0.0
2003թ.	6033.5	5939.46	8843.522	19354.0	18746	369664
2004թ.	9138.9	8828.36	96435.09	21579.0	21356.5	49506.25
2005թթ.	16612.3	15864.96	558517.1	14566.0	15267.3	491821.7
2006թ.	6180.4	7223.59	1088245	20363.0	19783.3	336052.1
2007թ.	10417.0	9993.34	179487.8	24803.0	24359	197136
2008թ.	17812.8	17073.22	546978.6	33310.0	32459.3	723690.5
2009թ.	29249.1	28105.47	1307890	29055.6	29481.04	180999.2
2010թ.	42526.1	41198.4	1762787	34453.0	33913.26	291319.3
2011թ.	59617.9	57908.72	2921296	41182.9	40509.91	452915.5
2012թ.	79425.8	77445.01	3923529	49307.4	48494.95	660075
2013թ.	82862.8	82519.1	118129.7	55902.1	55242.63	434900.7
2014թ.	98234.1	96696.97	2362769	58619.1	58347.4	73820.89
2015թ.	100805.0	100547.9	66095.27	61340.2	61068.09	74043.85
2016թ.	118825.1	117023.1	3247240	74534.7	73215.25	1740948
Ընդամենը	-	-	18188243	-	-	6076893



Էքսպոնենցիալ հարթեցման հիման վրա կանխատեսման մակարդակների կառուցման ժամանակ յուրաքանչյուր նոր կանխատեսման մակարդակ հենվում է նախկին կանխատեսված մակարդակի վրա: [6; стр.185]

$$S_t = S_{t-1} + \alpha(y_{t-1} - S_{t-1}),$$

որտեղ

$S_t$  - կանխատեսման մակարդակն է t ժամանակահատվածի առումով,

$S_{t-1}$  - կանխատեսման մակարդակն է (t-1) ժամանակի առումով,

$\alpha$  -հարթեցման համար կիրառվող հաստատուն կշիռն է,

$y_{t-1}$  - (t-1) ժամանակահատվածի փաստացի մակարդակն է,

$(y_{t-1} - S_{t-1})$  - կանխատեսման սխալի մեծությունն է:

Էքսպոնենցիալ հարթեցման միջոցով կատարվել են կանխատեսումներ մինչև 2020թ.-ը, արդյունքներն ներկայացված են աղյուսակ 3-ում:

**Աղյուսակ 3.** ԼՂՀ առևտրային բանկերի վարկերի և ավանդների կանխատեսումները էքսպոնենցիալ հարթեցման միջոցով մինչև 2020թ.-ը, մլն. դրամ

Տարիներ	Վարկեր	Ավանդներ
2017թ.	118644.9	74402.76
2018թ.	118807.1	74521.51
2019թ.	118823.3	74533.38
2020թ.	118824.9	74534.57

#### Գրականություն

- 1.«Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին», եռամսյակային զեկուլյց, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2017, էջ. 65-69
- 2.2014-2015 «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը, 2015», վիճակագր. ժողովածու, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2016, էջ. 80-84
- 3.2012-2013 «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը, 2013», վիճակագր. ժողովածու, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2014, էջ. 64-68
- 4.2010-2011«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների վիճակագրությունը, 2011», վիճակագր. ժողովածու, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2012, էջ. 64-68
- 5.«ԼՂՀ վիճակագրական տարեգրքեր 2007-2013թթ. 2002-2008թթ.» էջ 270-276
- 6.Статистка: под ред. Члена-корреспондента Российской Академии наук И.И. Елисеевой, Москва 2010; 448 ст.; ст. 183-189

### Էլինա ՇԱՄԽԱԼՈՎԱ

#### Արցախի Հանրապետության առևտրային բանկերի ավանդների և վարկերի ժամանակային շարքերի էքսպոնենցիալ հարթեցում և կանխատեսումներ

*Բանալի բառեր. վարկեր, ավանդներ, զարգացման միտում, տրենդ, կանխատեսումներ, էքսպոնենցիալ հարթեցում*

Ժամանակային շարքերի վերլուծության մեջ կիրառվում է նաև ցուցչային (էքսպոնենցիալ) միջինների օգնությամբ շարքի հարթեցումը և կանխատեսումների իրականացումը: Հարթեցման ժամանակ ընտրվում է այն կշիռը, որի դեպքում մնացորդների քառակուսիների գումարը նվազագույնն է: Կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ և ավանդների, և վարկերի չափը ներկայացնող ժամանակային շարքի էքսպոնենցիալ հարթեցման դեպքում մնացորդների քառակուսիների գումարի նվազագույն մակարդակ է ստացվում, երբ  $\alpha = 0.9$  կշռի դեպքում: Էքսպոնենցիալ հարթեցման միջոցով կատարվել են կանխատեսումներ մինչև 2020թ.-ը:

### Элина ШАМХАЛОВА

#### Экспоненциальное сглаживание и прогнозы временных рядов вкладов и кредитов коммерческих банков Республики Арцах

*Ключевые слова: кредиты, тенденция к развитию, тренд, прогнозы, экспоненциальное сглаживание*

При анализе временных рядов также используется сглаживание ряда по методу скользящих (экспоненциальных) средних и осуществление прогнозирования. При сглаживании выбирается тот вес, при котором сумма остатка в квадрате минимальна. Проведенный анализ показал, что при экспоненциальном сглаживании временных рядов, представляющих вклады и кредиты, сумма остатка в квадрате получает минимальный уровень, когда  $\alpha = 0.9$ . С помощью экспоненциального сглаживания были осуществлены прогнозы до 2020 года

### Elina SHAMKHALOVA

#### The exponential smoothing of the time series of credits and deposits of commercial banks Republic of Artsakh

*Keywords: credit, deposit, tendency, trend, forecasting, exponential smoothing*

In time series analysis the exponential smoothing and forecasting is applied as the adaptive method of smoothing. During the exponential smoothing of time series that weight is chosen in which case the sum of the square of residuals are minimum. The results showed that the best weight for this analysis is 0.9 for the time series of either credits or deposits. The forecasting has done till 2020.

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՂՅ-ՈՒՄ**

**Դավիթ ԱԼԱՅԿԵՐԴՅԱՆ**

ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի ԱՊՀ էկոնոմիկայի  
հաշվապահական հաշվառման և աուդիտի ամբիոնի դասախոս

Բանալի բառեր. գյուղատնտեսության վարկավորում, գյուղատնտեսական  
արտադրություն, պետական աջակցություն, բարձր ռիսկայնություն

Արցախում գյուղատնտեսությունը դիտվում է որպես ազգային անվտանգության ոլորտ և անկախ իր զարգացվածությունից այն եղել ու մնալու է տնտեսության առաջատար ճյուղերից մեկը: Գյուղատնտեսությունը ոչ միայն ագրոարդյունաբերական համալիրի, այլև ամբողջ տնտեսության առավել բարդ ու աշխատատար ճյուղն է և պահանջում է ներկայիս պահանջներին համապատասխան արդյունավետ կազմակերպում: Գյուղատնտեսական արտադրության զարգացման նպատակն է բավարարել գյուղատնտեսական մթերքների նկատմամբ բնակչության և գյուղատնտեսական հունքի բազայի վրա աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների աճող պահանջմունքները: [2] Չնայած գյուղատնտեսության ոլորտում արձանագրված դրական տեղաշարժերի, այն դեռևս շարունակվում է մնալ տնտեսության առավել խոցելի ոլորտներից մեկը, որը կարիք ունի պետական հետևողական քաղաքականության իրականացման: Արցախում գյուղատնտեսությունը ներկայացված է հիմնականում փոքր գյուղացիական տնտեսությունների տեսքով, որոնք խոցելի են ինչպես բնակլիմայական պայմանների, այնպես էլ պետական ֆինանսավորման և վարկային միջոցների հասանելիության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովումը և անցումը դեպի նորարարական ուղղի պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ: Կապված այս ամենի հետ գյուղատնտեսական ապրանք արտադրողներն արտաքին ֆինանսավորման կարիք են զգում, որի դերը չափազանց մեծ է արտադրության արդյունավետության բարձրացման, սեզոնային պաշարների ձեռք բերման, արտադրանքի ապրանքայնության մակարդակի բարձրացման և այլ ծախսերի կատարման գործում: Քանի որ գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կապված է սեզոնային պայմանների հետ, ուստի պահանջվող ժամանակահատվածում փոխառու միջոցներ ունենալը կարող է հնարավորություն տալ զերծ մնալու արտադրական գործընթացում ի հայտ եկած մի շարք խնդիրներից՝ ապահովելով դրա անընդհատությունը: [4]

Ասվածից հետևում է, որ գյուղատնտեսական ապրանք արտադրողների համար կենսական նշանակություն է ստանում ֆինանսավորման հուսալի և

մատչելի աղբյուր գտնելը՝ այդ թվում վարկավորման հնարավորությունն առևտրային բանկերից ու վարկային կազմակերպություններից, որը և կարող է հանդիսանալ ագրոպարենային համակարգի առջև ծառայած խնդիրների լուծման ամենաարդյունավետ միջոցներից մեկը՝ նպաստելով ոլորտի մրցունակության բարձրացմանն ու գյուղական տարածքների ամրապնդմանը: Չընայած վերջին տարիներին պետության կողմից ոլորտի բարելավմանն ուղղված բազմաթիվ ծրագրերի, այնուամենայնիվ, վարկերը դեռևս մնում են անհասանելի գյուղատնտեսությանը զբաղվողների մեծ մասի համար: Մի կողմից գյուղատնտեսության ոլորտի բարձր ռիսկայնությունն ու ոլորտում առկա հիմնախնդիրները, մյուս կողմից էլ բանկերի և վարկային կազմակերպությունների ձգտումը՝ վարկավորելու տնտեսության կարճաժամկետ շրջանառությունն ապահովվող ճյուղերը, լուրջ խոչընդոտ են հանդիսանում ոլորտի վարկավորման համակարգի զարգացման գործում:

Վարկային միջոցների հասանելիության տեսանկյունից խոչընդոտ են հանդիսանում նաև վարկավորման բարդ պայմանները (վարկի ժամկետը, մարումների ժամանակացույցը, տոկոսադրույքը, արժույթային կուրսը), գյուղացիական տնտեսությունների ֆինանսական ծանր վիճակը, գրավի առարկայի հետ կապված ռիսկայնությունները:

Չնայած այս ամենի, այնուամենայնիվ, գյուղատնտեսության ոլորտում կան որոշակի գործոններ, որոնք բանկային կապիտալի համար գրավիչ են և դրանցից կարելի է առանձնացնել հետևյալները՝

- գյուղատնտեսական արտադրությունն ունի երկար ժամանակային տեվողություն, ինչը թույլ է տալիս լիարժեք վերահսկողություն իրականացնել վարկային միջոցների նպատակային օգտագործման վրա,

- սեզոնային վարկերի նկատմամբ կայուն պահանջարկի առկայությունը, որն էլ իր հերթին հնարավորություն է տալիս բանկերին և վարկային կազմակերպություններին ձևավորելու իրենց ֆինանսական քաղաքականությունը և հասնելու բարձր ֆինանսատնտեսական արդյունքների,

- ագրարային բիզնեսը հիմնականում կապված է հողային ռեսուրսի հետ, որն էլ վարկի մարման համար լրացուցիչ երաշխիքներ է ստեղծում: [1]

Չաշվի առնելով այն փաստը, որ գյուղատնտեսությունը բավականին զգայուն է ֆինանսավորման նկատմամբ և ելնելով գյուղատնտեսության վարկավորման զարգացման թույլ մակարդակից ու այդ գործընթացում ի հայտ եկած բազմաթիվ խնդիրներից, գյուղատնտեսության վարկավորման համակարգի լայնածավալ զարգացման ու դրա հասանելիության բարձրացման առումով կարևորվում է նաև հատուկ ուշադրություն դարձնելը պետական աջակցության ծրագրերի իրականացման մեխանիզմների վրա: [3]

Այժմ անդրադառնանք ԼՂՀ-ում գործող առևտրային բանկերի և ոչ բանկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսության ներկայիս վարկավորման ըստ 2013-2016 թվականները՝ վերլուծելով, համապատասխան գնահատականներ և առաջարկություններ տալով զարգացման ուղղությամբ (տես աղյուսակ 1-ը և 2-ը):

**Աղյուսակ 1. 2013-2016թթ. առևտրային բանկերի կողմից գյուղատնտեսության վարկավորման ծավալները (մլն. դրամ)<sup>233</sup>**

Տարիներ	2013թ	2014թ	2015թ	2016թ	Շեղումը (+, -) 2016թ./2015թ.	
					Բացարձակ	Հարաբերական
Ընդամենը	82862,8	98234,1	100805,0	118825,1	18020,1	17,9
Գյուղատնտեսություն	3034,7	2814,0	1853,3	998,8	- 854,5	- 46,1
%-ով ընդամենի նկատմամբ	3,7	2,9	1,8	0,8	- 1,0	- 55,6

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 2013-2016թթ-ը առևտրային բանկերի կողմից վարկավորման ծավալները անընդհատ աճել են, սակայն հակառակ պատկերն է արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում: 2016թ-ին այն կազմել է ընդամենը 998,8 մլն դրամ 2013թ-ի համեմատ կրճատվելով շուրջ երեք անգամ:

Ոչ բանկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսությանը տրամադրված փոխառությունների գծով ևս նվազման միտում է արձանագրվել: 2014 թվականին փոխառությունների ընդհանուր կառուցվածքում գյուղատնտեսության մասնաբաժինը կազմել է 34,4%, 2016 թվականին՝ 20,9%՝ նվազելով 13.5%-ով (տես աղյուսակ 2-ը):

**Աղյուսակ 2 2013-2016թթ. ոչ բանկային կազմակերպությունների կողմից գյուղատնտեսությանը տրամադրված փոխառությունները(մլն. դրամ)<sup>234</sup>**

Տարիներ	2013թ	2014թ	2015թ	2016թ	Շեղումը (+, -) 2016թ./2015թ.	
					Բացարձակ	Հարաբերական, %
Ընդամենը	44026,1	19411,4	28645,4	28413,7	- 231,7	- 0,8
Գյուղատնտեսություն	5776,5	6872	6169,1	5936,8	- 232,3	- 3,8
%-ով ընդամենի նկատմամբ	13,1	35,4	21,5	20,9	- 0,6	- 2,8

<sup>233</sup> ԼՂՀ ֆինանսների վիճակագրություն 2015-2016 թթ., էջ 81

<sup>234</sup> ԼՂՀ ֆինանսների վիճակագրություն 2015-2016 թթ., էջ 86

Այս պարզ վերլուծությունը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսության վարկավորման գործընթացում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնց հիմնական մասը կապված է գրավի առարկայի, վարկերի արտարժույթով տրամադրման, գյուղատնտեսության ապահովագրական, խորհրդատվական ու տեղեկատվական համակարգերի բացակայության հետ:

Գյուղատնտեսության վարկավորման կատարելագործումը ենթադրում է արտադրանքի իրացման գործընթացին պետական աջակցության կարգավորում, իսկ որպես գրավադրման պայմանների արդյունավետ տարբերակ ընտրել վարկառուի ապագա գործունեությունը:

Հաջորդ հիմնախնդիրը կապված է վարկերի արտարժույթով տրամադրման հետ, որն, երբեմն, նույնիսկ կործանարար ազդեցություն է ունենում գյուղացիական մանր տնտեսությունների համար (ի դեպ գյուղատնտեսության համախառն արտադրանքի գերակշիռ մասը՝ շուրջ 75%-ը արտադրվում է հենց այս տնտեսությունների կողմից), որոնց եկամտի աղբյուրը ՀՀ դրամով է՝ կապված տարադրամի տատանմամբ և դրամի արժեզրկմամբ: Այդ առումով, պետական աջակցությամբ հատկացվող վարկերի պարտադիր պայման պետք է հանդիսանա ՀՀ դրամով վարկերի տրամադրումը:

Գյուղատնտեսության զարգացման և վարկավորման համակարգի բարելավման առումով չափազանց կարևոր է խորհրդատվական, տեղեկատվական և ապահովագրական համակարգերի ներդրումը՝ ստեղծելով վարկատու (բանկ, վարկային կազմակերպություն) - խորհրդատվական կառույց - ֆերմեր - ապահովագրական ընկերություն քառակողմ համագործակցության մոդել: Արդյունքում խորհրդատվական կառույցի մասնագետը կկազմի հիմնավորված բիզնես ծրագիր, կտրամադրի անհրաժեշտ խորհրդատվություն ու տեղեկատվություն, միաժամանակ պատասխանատվություն կրելով խորհրդատվության համար, իսկ բանկը կամ վարկային կազմակերպությունը գումարը կվստահի առավել տեղեկացված ու գիտակ անձի, ռիսկի գործոնը որոշակի կմեղմանա, բնակլիմայական պայմաններով պայմանավորված կորուստների ռեպրում էլ ապահովագրական ընկերությունը կփոխհատուցի ֆերմերին և նա կկարողանա կատարել բանկի հանդեպ իր պարտավորությունները:

#### Գրականություն

1. Բայադյան Ա., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, “Գիտություն” հրատ., 2013, էջ 85-88
2. Դավթյան Գ., Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում, Եր.2004, էջ 413.
3. Ենգոյան Ա., Սուբսիդավորման և ֆինանսավորման սխեմաները գյուղատնտեսությունում, գյուղատնտեսական ապրանքների արտահանման խթանումը, էջ 3-10
4. Հակոբյան Լ., Ճեպեճյան Շ., Գյուղատնտեսության Էկոնոմիկա, Եր. 2012, էջ 83-85

**Դավիթ ԱԼԱԿՎԵՐԴՅԱՆ**

**Գյուղատնտեսության վարկավորման անհրաժեշտությունը և առկա խնդիրները ԼՂՀ-ում**

*Բանալի բառեր. գյուղատնտեսության վարկավորում, գյուղատնտեսական արտադրություն, պետական աջակցություն, բարձր ռիսկայնություն*

Արցախի տնտեսության զարգացման գործում մեծ է գյուղատնտեսության դերն ու նշանակությունը: Սույն հոդվածում ոլորտի զարգացման համար կարևորել ենք վարկավորման անհրաժեշտությունը, ներկայացրել վերջին չորս տարիների կտրվածքով վարկավորման ծավալները, նշել զարգացմանը խոչընդոտող խնդիրները ու դրանց համահունչ կատարել տնտեսագիտական մեկնաբանություններ:

**Давид АЛАХВЕРДЯН**

**Необходимость кредитования сельского хозяйства и существующие проблемы в НКР**

*Ключевые слова: сельскохозяйственное кредитование, сельскохозяйственное производство, государственная поддержка, высокий риск*

В развитии экономики Арцаха велика роль сельского хозяйства. В данной статье мы подчеркнули необходимость кредитования для развития сектора, представили объемы кредитования на протяжении последних четырех лет, указали проблемы, препятствующие их развитию и в соответствии с ними сделали экономические выводы.

**David ALAHVERDYAN**

**The need of crediting of the sector of agriculture and the existing issues in Artsakh Republic**

*Key words: the crediting of agriculture, the product of agriculture, government support, high risk*

The role and the sense of agriculture is very high for development of the economy in Artsakh. For the development of the pointed sector in the article are underlined the issues based on the role of the crediting, also are presented the volume of the crediting for 4 years, the factors, which negatively affected on the sector, and are given the economic description.

## ԻՆՉ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ

### Ֆաթմա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղի դասախոս

Բանալի բառեր. կոոպերացիա, կոոպերատիվ, կոլեկտիվ, փայատեր, ագրոպարենային համակարգ, պետական աջակցություն, արտադրական կոոպերատիվ, սպառողական կոոպերատիվ

Կոոպերացիայի համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում գյուղատնտեսական կոոպերացիան: Կոոպերացիան յուրահատուկ ձև է, որը հընարավորություն է տալիս անհատ արտադրողին օպտիմալ օգտագործել իր ռեսուրսները և ստանալ լրացուցիչ եկամուտ իրականացվող գործողությունների ժամանակ:

Կոոպերացիան ընկած է բոլոր հասարակական կարգերի հիմքում: Այն ընդգրկում է ոչ միայն ֆիզիկական անձանց կամավոր միավորման սկզբնական կոոպերատիվների, այլ նաև իրավաբանական անձանց: [2] Կոոպերացիայի ներկայիս պրակտիկան բոլորովին էլ առաջ չի անցել տեսական ուսումնասիրություններից: Իսկ առանց տեսության և պրակտիկայի փոխկապակցված գործունեության կոոպերատիվ շարժումը չի կարող բնականոն առաջ ընթանալ: Տնտեսական գործունեությունում կոոպերատիվ սկզբունքների լայն օգտագործմանը խոչընդոտող պատճառների շարքում էական է կոոպերացիայի հիմնադրույթի անձևությունը, ոչ հստակ լինելը:

Կոոպերացիայի նպատակը և խնդիրները միշտ և ամենուր միացյալ են՝ իր անդամների իրավունքների պաշտպանությունը, նրանց հետաքրքրությունների, շահերի բավարարումը: Երկար տարիներ կոոպերատիվ շարժման խնդիրները խորհրդային տնտեսագիտական գիտության մեջ ուսումնասիրվել են կապված կոլտնտեսությունների և սպառողական կոոպերացիայի հետ: Խորհրդային գյուղում կոլեկտիվացման փորձարկումների տարիներին դրանց նախաձեռնողները ելնում էին նրանից, որ կոոպերատիվ տնտեսությունները ենթադրում են աշխատանքի և արտադրության միջոցների հանրացում: Ներկայումս, կամավոր ստեղծվող կոոպերատիվներում սեփականությունը կրում է մասնավոր բնույթ՝ տնտեսական օգտագործման կոլեկտիվ ձևի պայմաններում [2,3]:



Հանրապետությունում լուծարված կոլտնտեսությունների և խորհունտեսությունների փոխարեն առաջ են եկել 18375 գյուղացիական տնտեսություններ, իսկ կոոպերատիվներ՝ չկան: Կարևոր գործոնը, որը խոչընդոտում է կոոպերատիվ կառուցվածքի զարգացմանը, դա գյուղական բնակիչների տնտեսական, ինքնակառավարման նորոյթների անբավարար տիրապետումն է, կառավարման մարմինների մոտ կոոպերատիվների նշանակության և դերի գիտակցման բացակայությունը շուկայական տնտեսությունում, առաջատարների բացակայությունը, որոնք ի վիճակի կլինեն գլխավորելու կոոպերատիվ շարժումը հանրապետությունում:

Ըստ տնտեսական գործունեության, հիմնական նպատակների, արդյունքների բաշխման տարբերվում են արտադրական, սպառողական, վերամշակման, իրացման, վարկային և այլ սպասարկումների: Ըստ իրավական կարգավիճակի կոոպերատիվները լինում են արտադրական և սպառողական [1]: Գյուղատնտեսական արտադրական կոոպերատիվը սեփականության վրա հիմնված, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող իր անդամների աշխատանքային պարտադիր մասնակցությամբ առևտրային կազմակերպություն է, որի նպատակն է զբաղվել գյուղատնտեսական արտադրանքների արտադրության, վերամշակման, իրացման ինչպես նաև օրենքով չարգելված այլ գործունեությամբ: Գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվը քաղաքացիների և իրավաբանական անձանց կամավոր միավորմամբ և տնտեսական գործունեությամբ ոչ առևտրային կազմակերպություն է: Դրանք ստեղծվում են կոոպերատիվի անդամների արտադրած արտադրանքի վերամշակման, իրացման, տրանսպորտային ու արտադրական սպասարկման ու այլ փոխշահավետ ծառայություններ մատուցելու նպատակով [2,3]:

Կոոպերատիվի անդամ կարող է լինել 16 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի, ով ընդունում է կանոնադրությունը և մասնակցություն է ունենում նրա աշխատանքային գործունեությանը [2,3]: Քաղաքացին միաժամանակ կարող է լինել արտադրական և սպառողական կոոպերատիվների անդամ: Կոոպերատիվի անդամ ընտրվելու համար կարող են սահմանվել նաև հետևյալ պահանջները՝

- որակավորման մակարդակը, անձնական հատկանիշները ,
- պայմանագրերից և ծառայություններից օգտվելու պարտավորությունները,

- տարածական հեռավորությունը,
- փայլավճարի գումարից ելնելով դիվիդենտներ չվճարելը :

Կոոպերատիվի անդամը իրավունք ունի՝ մասնակցել կոոպերատիվի գործունեությանը և դրա գործերի կառավարմանը, ընտրել և ընտրվել կոոպերատիվի վերահսկման և կառավարման մարմիններում, առաջարկություններ կատարել կոոպերատիվի գործունեության բարելավման, ղեկավար մարմինների և պաշտոնատար անձանց աշխատանքների թերությունների վերացման վերաբերյալ, ստանալ եկամուտի մասնաբաժին, իրենց նյութական և աշխատանքային ներդրմանը համապատասխան, որն ենթակա է բաշխման կոոպերատիվի անդամների միջև, օգտվել կոոպերատիվի գույքից և անդամների համար նախատեսված արտոնություններից [3]: Կոոպերատիվի անդամը իրավունք ունի նաև ստանալ աշխատանք կոոպերատիվում, հաշվի առնելով մասնագիտությունը, որակավորումը, մասնակցել ղեկավար մարմինների նիստերին և ներկայացնել առաջարկություններ:

Կոոպերատիվի անդամը իրավունք ունի դուրս գալ կոոպերատիվի կազմից, առանց մյուս անդամների համաձայնության, լինել այլ կազմակերպության անդամ, եթե դա չի խանգարում միավորման գործունեությանը [2,4]:

Կոոպերատիվի անդամները ունեն պարտավորություններ՝

- կատարել ընտրովի կառավարման և վերահսկման մարմինների որոշումները,
- կոոպերատիվի գործունեության ժամանակ կատարել իրենց պարտականությունները՝ աշխատանքային և գույքային մասնակցությամբ,
- մասնակցել կոոպերատիվի գործերի կառավարմանը,
- պահպանել պետական և կոոպերատիվի սեփականությունը:

Նշվեց, որ կոոպերատիվները ստեղծվում են կամավորության սկզբունքների հիման վրա, որը նշանակում է՝ ոչ միայն կամավոր անդամություն, այլ նաև առանց արգելքի նրանից դուրս գալիս մասնաբաժին վերադարձնելը [1,3]:

Քանի որ կոոպերացիայի ձևավորման հիմնական գործոնը մարդկային ներուժն է ապա բոլոր քայլերը պետք է կատարվեն զգուշորեն: Չցանկացողների նկատմամբ չպետք է կիրառվեն պարտադրման կամ ստիպողական մոտեցումներ: Նրանց հետ պետք է կազմակերպվեն կազմակերպչական,

խորհրդատվական աշխատանքներ: Պետք է պարզաբանել, որ նրանք չեն կորցնում իրենց սեփականության իրավունքը, բացառել այդ ձևի առավելությունները ու արդյունավետությունը [3,4]:

Կոոպերատիվների կազմակերպման հաջողությունները պայմանավորված են նրանով, թե կազմում ընդգրկվող սուբյեկտները ինչպիսի շահագրգռվածություն ունեն և ինչպես են պատկերացնում միավորվելու խնդիրները, յուրաքանչյուրի ֆունկցիաները և նրանց հետագա գործունեությունը: Կոոպերացումը կնպաստի լուծելու կարևոր հասարակական, պետական, սոցիալ տնտեսական խնդիրներ: Կախված տվյալ բնակավայրի առանձնահատկություններից, բնակչության ցանկություններից կազմակերպվում է միավորման այն ձևը, որը ընդունելի է բնակիչների կամ նրա կազմում ընդգրկվողներից:

Ազրոպարենային համակարգի հաջող զարգացմանը կնպաստի կոոպերատիվների ստեղծումը, որը միավորում է գյուղատնտեսական տարբեր տեսակի ապրանք արտադրողներին:

Գյուղացիական տնտեսությունների վիճակի վերլուծությունը ԱՀ-ում ցույց է տալիս, որ ներկայումս նպատակահարմար է զարգացնել , ստեղծել կոոպերատիվները:

Կարևոր է պետական աջակցության դերը կոոպերատիվների ստեղծման ընթացքում (անտոկոս վարկերի տրամադրում ):

Կոոպերացիան կնպաստի մանր ապրանք արտադրողների միավորմանը, անհրաժեշտ միջոց է ապահովելու ֆերմերային տնտեսությունների արդյունավետ գործունեությանը [2,3,4]:

Կոոպերատիվների ողջ գործունեությունն իրականացվում է կամավորության, նրանց անդամների ընդհանրության հիման վրա, ըստ գյուղատնտեսական գործունեության տեսակների, պրոֆեսիոնալ հետաքրքրության, ինչպես նաև փայատերերի ցանկացած գործունեությանը անձնական մասնակցության, այդ թվում ընտրության ժամանակ: Կոոպերատիվները պետք է երաշխավորեն բոլոր օպերացիաների գաղտնիությունը իր անդամների հաշիվների և ավանդների գծով: Ներկա ժամանակաշրջանում գյուղատնտեսական կոոպերացիայի ստեղծման աշդյունավետ ձևերից մեկը մանր ապրանք

արտադրողների միջհարևանային փոխօգնության կազմակերպումն է: Այն անպայման պետք է ամրապնդվի գրավոր պայմանագրով և հաճախ կրի ժամանակավոր, սեզոնային բնույթ:

Այդ կոոպերացիայի օբյեկտ կարող են հանդիսանալ աշխատանքի փոխվճարվող օգտագործումը, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկան և սարքավորումները:

Կոոպերատիվ կապերը, որ կլինեն գյուղացիական տնտեսություններում կարևոր են փոքր թվաքանակի դեպքում:

Պաշտոնական գործընկերային միջհարևանային կապերը կոոպերացիայում հանդես կգան որպես ուղի, որով էլ կսկսվի գյուղացիական կոոպերացիայի զարգացումը [1,4]: Պարզ գործընկերային կոոպերացիան կարող է հանդես գալ արտադրական կոոպերացիայի ձևով, որի դեպքում տեղի կունենա մասնավոր և մանր գյուղացիական տնտեսությունների ռեսուրսային բազայի միավորում, պահպանելով նրանց սեփականության իրավունքը հողի և այլ ունեցվածքի նկատմամբ:

Գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը խոչընդոտող հիմնական պատճառը գյուղացիական տնտեսությունների հողատարածքների ցրվածությունն է, կոոպերացիայի նկատմամբ անվստահության բարոյահոգեբանական մթնոլորտը [2]:

ԱՀ ճանաչում է կոոպերատիվների և դրանց միությունների իրավունքները և պաշտպանում նրանց օրինական շահերը: Պետական աջակցությունը կնպաստի կոոպերատիվների ստեղծմանը, կարգավորմանը և տնտեսական ինքնուրույնության ամրապնդմանը [22.12.2016 թ.]:

### **Գրականություն**

1. Աբրահամյան Մ., Գյուղացիական տնտեսությունների կոոպերացումը, կառավարումը և կազմակերպումը: Երևան, 2006 թ. էջ 70-75, 15-17:
2. Գևորգյան Ս., Գյուղատնտեսական կոոպերացիա: Եր., 2002թ., էջ 30-33, 102-165:
3. Դավթյան Գ., Մարգարյան Հ., Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում: Երևան, 2004 թ. էջ 48-60:
4. Ուռուտյան Վ., Ավետիսյան Ս. Գյուղատնտեսական կոոպերատիվներ: Եր. 2011թ. էջ 6-12, 73-86:

**Ֆաթմա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ**

**Ի՛նչ է գյուղատնտեսական կոոպերացիան**

Բանալի բառեր. կոոպերացիա, կոոպերատիվ, կոլեկտիվ, փայատեր, ագրոպարենային համակարգ, պետական աջակցություն, արտադրական կոոպերատիվ, սպառողական կոոպերատիվ

Յոդվածում խոսվում է կոոպերատիվների ստեղծման պայմանների և միասին աշխատելու առավելությունների մասին, որը ծանոթացնում է կոոպերատիվների նպատակներին և սկզբունքներին: Ներկայացված է կոոպերատիվի անդամների իրավունքները և պարտականությունները: Կարևորվում է կառավարության դերը կոոպերատիվների ստեղծման և զարգացման գործում:

**Фатма АРЗУМАНИЯН**

**Что такое сельскохозяйственная кооперация**

*Ключевые слова: кооперация, кооператив, коллектив, акционер, агропромышленный комплекс, государственная поддержка, производственный кооператив, потребительский кооператив*

В статье рассмотрены необходимые условия создания кооперативов и преимущества совместной работы, что ознакомливает с целями и принципами кооперативов. Представлены права и обязанности членов кооперативов. Подчеркивается роль государства в создании и развитии кооперативов.

**Fatma ARZUMANYAN**

**What is agricultural co-operation**

*Key words: co-operative, cooperative, collective, shareholder, agroindustrial complex, state support, industrial cooperative, consumer cooperative*

The article discusses the necessary conditions of creating co-operatives and the advantages of team-work. It also acquaints people with the aims and the principles of the co-operatives. The rights and duties of the members of co-operatives are presented in the article. It underlines the importance of the role of the government in creating and developing the co-operatives.

**ՀՀ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ՓՈԽՉԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

**Հրանտ ՄԱՐԳԱՐՅԱՆ**  
ՀՊՏՀ ասպիրանտ

Բանալի բառեր. էլեկտրաէներգետիկական համակարգ, էլեկտրաէներգիա, արտաքին առևտուր, հայ-վրացական համագործակցություն

Վրաստանի և Հայաստանի միջև էներգետիկ բնագավառում համագործակցությունը ներկայիս պայմաններում ձեռք է բերում հատուկ կարգավիճակ և հատուկ ուշադրություն է պահանջում պետական կառույցներից:

Երկու երկրներն ընդհանուր կարգավիճակ ունեն էներգակիրների ներմուծման հարցում, ինչը նշանակում է, որ կայուն և ճգնաժամային ժամանակաշրջանում անվտանգ էներգետիկ համակարգ ստեղծելու համար երկու պետությունները պետք է ունենան հետևյալ գերակայությունները՝ առաջին հերթին, ավելացնել էլեկտրաէներգիայի արտահանման աղբյուրների քանակը, և երկրորդ, էներգետիկ տրանզիտային երթուղիների քանակն ու բազմազանությունը և, վերջապես, պետության ներսում նոր էներգետիկ հզորությունների արտադրությունը:

Հայաստանի և Վրաստանի էներգետիկ բնագավառներում գոյություն ունեցող այս ընդհանրությունները համեմատելիս, նկատելի է, որ էներգետիկ ոլորտում յուրաքանչյուր երկրում «գերակայում է» մեկ պետություն. Հայաստանի դեպքում դա Ռուսաստանն է, Վրաստանի դեպքում՝ Ադրբեջանը: Այս իրավիճակը խորապես կախվածություն է ստեղծում այդ պետություններից, ազդելով ոչ միայն էներգետիկ քաղաքականության ռազմավարության վրա, այլև Հայաստանի և Վրաստանի անվտանգության համակարգերի վրա՝ ստիպելով վերջիններին մշտապես հաշվի առնել էներգամատակարարող պետության շահերը:

Ներկայումս Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրողականության գրեթե կեսը չի օգտագործվում: Էլեկտրաէներգիայի գումարային դրվածքային հզորությունը կազմում է 4200 ՄՎտ, որից ընթացիկը 55% (2300 ՄՎտ) (տես Աղյուսակ 1)<sup>235</sup>: Ատոմակայանը և հիդրոէլեկտրակայանները ապահովում են հզորության հիմնական պահանջարկը, իսկ ջերմային էլեկտրակայանները հիմնականում օգտագործվում են ձմռանը պիկային պահանջարկը բավարարելու համար:

<sup>235</sup> <http://www.minenergy.am/page/448> Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք

րելու և հիմնական կարիքների բավարարման համար, երբ ատոմակայանը ցանցից անջատված է հերթական նորոգումներն իրականացնելու համար:

**Աղյուսակ 1.** ՀՀ-ում էլեկտրաէներգիայի հիմնական արտադրողները՝ ՀԱԷԿ, ՀԷԿ, ՋԷԿ, Այլընտրանքային (վերականգնվող էներգիայի աղբյուրներ)<sup>236</sup>:

Արտադրություն (մլն. կվտժ)	2014	2015	2016
ՀԱԷԿ	2464.8	2787.7	2380.5
ՋԷԿ	3288.6	2801.2	2581.5
ՀԷԿ	1992.6	2205.6	2351.4
Վերականգնվող էլեկտրաէներգիա	4.0	3.7	1.8
Ջերմային էներգիա	144.9	160.0	90.0
Ընդամենը	7750.0	7798.0	7315.3

Հայաստանն արտադրում է բավարար քանակությամբ էլեկտրաէներգիա՝ ներքին պահանջներին բավարարելու համար, և ունի լրացուցիչ հզորություններ էլեկտրաէներգիայի արտահանման համար: Իրականում Հայաստանը էլեկտրաէներգիա արտահանող երկիր է, սակայն դրա ծավալը փոքր է կազմում է ընդհանուր արտահանման 5-6%<sup>237</sup>: Հատկապես 2010թ. էլեկտրաէներգիայի արտահանումը ավելացել է՝ հասնելով 80-85 մլն դոլարի (2014թ.՝ 1236 մլն կվտ/ժ): Ներկրվող էլեկտրաէներգիայի ծավալը շատ փոքր է, և ավելի շուտ, ունի էներգետիկայի կարգավորման նպատակ (տես՝ Աղյուսակ 2):

**Աղյուսակ 2.** ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրությունը և էլեկտրաէներգիայի արտաքին առևտուրը(մլն կվտ/ժ)<sup>238</sup>

Էլ. էներգիա	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Արտադրված	5941	5897	6114	5671	6491	7433	8036	7710	7750	7798
Ներմուծված	355	419	343.4	291.1	246	301	98	198	191	174
Արտահանված	755	451	360	336	1061	1383	1696	1226	1236	1424


Էլեկտրաէներգիա հիմնականում արտահանվում է Իրան և Վրաստան: Ավելին, 2007թ. Վրաստան արտահանումը բավականին բարձր էր, սակայն, փաստորեն, այն դադարեց 2007 թվականից հետո: 2012 թվականին էլեկտրաէներգիայի արտահանումը Վրաստան կազմել է 178 460 Մվտ/ժամ<sup>239</sup>:

<sup>236</sup> <http://psrc.am/am/sectors/electric/reports> ՀԾԿՀ էլեկտրական էներգիայի հաշվետվություններ

<sup>237</sup> <http://armstat.am/am/?nid=12&id=10001> ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք

<sup>238</sup> <http://psrc.am/am/sectors/electric/reports> Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողով

<sup>239</sup> [http://psrc.am/docs/reports/electric/Himnakan\\_bnutagir\\_%202012-4.pdf](http://psrc.am/docs/reports/electric/Himnakan_bnutagir_%202012-4.pdf) Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները կարգավորող հանձնաժողով



**Գծապատկեր 1.** ՀՀ էլեկտրաէներգիայի արտադրությունը և էլեկտրաէներգիայի արտաքին առևտուրը Վրաստանի հետ(մլն կվտժ)<sup>240</sup>

Չնայած Վրաստանում ՀԷԿ-երի բարձր պոտենցիալին, աշնանային և ձմեռային շրջանում գետերի սակավաջրությունը առաջացնում է էլեկտրաէներգիայի դեֆիցիտ, որը պետք է ծածկվի ՋԷԿ-երի արտադրած թանկ ինքնարժեքով էլեկտրաէներգիայի միջոցով (տես Աղյուսակ 3): Շատ վերլուծությունների և տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ Վրաստանի էներգետիկ հաշվեկշռում պահանջվում է մեծացնել ջերմային էլեկտրակայանների էլեկտրաէներգիայի ծավալը: Դրա մասին է վկայում նաև 2016թ. դեկտեմբերին ՋԷԿ-երի կողմից արտադրած 51% մասնաբաժինը<sup>241</sup> ընդհանուր ծավալում:

**Աղյուսակ 3.** Վրաստանում էլեկտրաէներգիայի արտադրության միջոցների կառուցվածքը(մլն կվտժ)<sup>242</sup>

	2014	2015	2016
ՀԷԿ	8271.2	8335.3	8453.8
ՋԷԿ	600	627.3	675.2
Արևային էներգիա	46.7	77	99.3
Ընդամենը	10059.3	10371.2	10832.5

<sup>240</sup> <http://psrc.am/am/sectors/electric/reports> Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող հանձնաժողով

<sup>241</sup> [http://gnerc.org/files/wliuri%20angariSi/GNRC\\_Report\\_2016\\_ENG\\_2017%2021%2007%2017.pdf](http://gnerc.org/files/wliuri%20angariSi/GNRC_Report_2016_ENG_2017%2021%2007%2017.pdf) Georgian national energy and water supply regulatory commission« Annual Report 2016.

<sup>242</sup> <http://gnerc.org/en/public-information/gazi/tsliuri-angarishi> Georgian national energy and water supply regulatory commission



Այս համատեքստում 2015թ. դեկտեմբերի 23-ին Իրանի, Ռուսաստանի, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչների միջև ստորագրված հուշագրով ձեռք բերվեց պայմանավորվածություն, որն ազդարարում է Վրաստան-Հայաստան էներգետիկ համագործակցության նոր դարաշրջանի մասին: Այս հուշագրի համաձայն, կկողմերը սկսում են էլեկտրական հաղորդակցության նոր համակարգի կառուցում, որը միացնելու է չորս երկրների էներգետիկ համակարգերը: Այս ծրագրի իրականացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի էներգահամակարգերի համաժամանակյա շահագործման համար, ինչը իր հերթին նպաստում է էներգետիկայի ոլորտում ներդրումների աճին: Այդ ներդրումների արդյունքում, մինչև 2018 թվականը, Հայաստանից Վրաստան և Իրան պետք է շահագործման հանձնվի 400 կիլովոլտ լարման նոր գիծը, որը դեպի Վրաստան և Իրան էլեկտրաէներգիայի նոր փոխհոսքեր կապահովի:

Այդ ծրագրերի արդյունքում կստեղծվի հյուսիս-հարավ էներգետիկ միջանցք, որը միաժամանակ աշխատելու է ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի էներգետիկ համակարգերի հետ: Այս չորս պետությունների էներգետիկ համակարգերի միջև համագործակցության ընդլայնումը թույլ կտա ստեղծել տարածաշրջանային էլեկտրաէներգետիկ շուկա, որտեղ միաժամանակ գործող համակարգերը զգալիորեն կփոխեն էլեկտրաէներգիայի գնագոյացման միջավայրը, ինչպես նաև կընդլայնի ՀՀ-ում նոր էներգետիկ հզորությունների կառուցմանն ուղղված ներդրումների ծավալը:

Հայ-վրացական էլեկտրաէներգետիկ ոլորտի փոխհարաբերությունների առավել բարձր արդյունավետության ապահովման նպատակով առաջարկվում է ստեղծել համատեղ աշխատանքային խումբ՝ բաղկացած երկու երկրների կողմից լիազորված ոլորտի մասնագետներից, որը կապահովի համագործակցության տեխնիկական, նորմատիվային ինչպես նաև իրավական հիմքերի նախագծեր, վերը նշված ծրագրերի իրականացմանն օժանդակելու նպատակով:

Էլեկտրաէներգետիկ ոլորտի հիմնախնդիրների լուծման ուղղություն է նաև դրա արտադրության սեփական աղբյուրների բազմազանեցումը, այդ թվում՝ վերականգնվող էներգիայի տեսակարար կշռի բարձրացումը երկրի էներգետիկ հաշվեկշռում:

Տարածաշրջանում մրցակցող երկու տնտեսական համակարգերի՝ Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի և ԵԱՏՄ-ի սահմանին հայ-վրացական էներգետիկ համագործակցությունը հնարավորությունների նոր հարթակ է, որից երկու երկրները՝ համատեղ աշխատանքի միջոցով, պարտավոր են հասնել փոխշահավետ տնտեսական իրավիճակի:

### **Հրանտ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

#### **ՀՀ և Վրաստանի էլեկտրաէներգետիկ համակարգերի փոխհարաբերությունների զարգացման ուղիները**

*Բանալի բառեր. էլեկտրաէներգետիկական համակարգ, էլեկտրաէներգիա, արտաքին առևտուր, հայ-վրացական համագործակցություն*

Էներգետիկ բնագավառն ունի ռազմավարական նշանակություն երկրի անկախության, անվտանգության և տնտեսության կայուն զարգացման համար: Էներգետիկ ոլորտը դիտվում է որպես տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների կարևոր բաղկացուցիչ, դեռ ավելին՝ էլեկտրաէներգետիկական համակարգը արտադրական ենթակառուցվածքի կարևոր տարր է, որով էլ հիմնավորվում և մեկնաբանվում է էներգետիկ բնագավառի դերը տնտեսական զարգացման գործում: Հայաստանի և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի փոխհարաբերությունների խորացումն ու ընդլայնումը բխում է երկու երկրների շահերից և պահանջում է շարունակական ուսումնասիրություններ:

### **Hrant MARGARYAN**

#### **The ways of development of interrelations of power systems between Armenia and Georgia**

*Key words: electric power system, electricity, foreign trade, Armenian-Georgian cooperation*

The energy sector has a strategic importance for the country's independence, security and sustainable economic development. The energy sector is considered as an important constituent of the infrastructure in the development of the economy, and moreover, the Electric Power System is an important element of the industrial infrastructure, which substantiates and explains the role of the energy sector in economic development. The development and expansion of the interrelationship between the energy systems of Armenia and Georgia proceeds from the interests of two countries and requires continuous research.

### **Грант МАРГАРЯН**

#### **Пути развития электроэнергетических взаимоотношений между Арменией и Грузией**

*Ключевые слова: электроэнергетика, электроэнергия, внешняя торговля, армяно-грузинское сотрудничество*

Энергетический сектор имеет стратегическое значение для независимости, безопасности и устойчивого экономического развития страны. Энергетический сектор рассматривается как важная составляющая инфраструктуры, необходимой для развития экономики, и, кроме того, электроэнергетическая система является важным элементом промышленной инфраструктуры, которая обосновывает и объясняет роль энергетического сектора в экономическом развитии. Углубление и расширение взаимосвязи между энергетическими системами Армении и Грузии исходит из интересов обеих стран и требует непрерывных исследований.

**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՐՈՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ  
ՉԻՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՓՈԽԿԱՕՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ  
(ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ)**

**Ռոզա ԱՎԱԳՅԱՆ**

ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղ

Բանալի բառեր. բնակչության կենսամակարդակ, սոցիալական ապահովություն, ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, բնակչության դրամական եկամուտներ, կոռեյացիայի գործակից

Երկրի բնակչության կենսամակարդակը փոխադարձ կախվածության մեջ է պետության վարած սոցիալական ապահովության քաղաքականությունից: Արցախի Հանրապետությունը (ԱՀ) որդեգրել է տնտեսության կայուն զարգացման ուղին, որի արդյունքները, ըստ վիճակագրական տվյալների, նրկատելի են վերջին տարիներին: Սակայն պետությունը, դեռևս գտնվելով պատերազմական իրավիճակում, շարունակում է բնակչության կենսամակարդակի բարելավմանն ուղղված սոցիալական ապահովության ծրագրերը:

**Աղյուսակ 1.** ԱՀ-ում նպաստառու ընտանիքների և երեխաների թիվը 2009-2016թթ.<sup>243</sup>

Տարիներ	Նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը	Երեխաների թիվը	Մինչև 18 տ. երեխա ունեցող ընտանիքների թիվը	Երեխաների թիվը	Մինչև 2 տարեկան երեխա ունեցող մայրերի թիվը	Երեխաների թիվը
2009թ.	10213	19052	5478	12576	3887	5089
2010թ.	10216	19144	5376	12740	3977	5225
2011թ.	10016	19202	5254	13019	4114	5207
2012թ.	9914	18999	5132	12956	4206	5176
2013թ.	9695	18722	5255	13117	3939	4901
2014թ.	9718	18592	5154	13044	4119	4928
2015թ.	10012	19042	5298	13186	4328	5320
2016թ.	9770	18988	5191	13344	4247	5199

Վերլուծությունները ցույց են տվել, որ 2009-2016թթ. ԱՀ-ում նպաստառու ընտանիքների թիվը տարեկան միջին հաշվով կրճատվել է 63-ով, ընդ որում՝ մինչև 18 տարեկան երեխաներ ունեցող նպաստառու ընտանիքների թիվը՝ 41-ով, իսկ նման ընտանիքներում երեխաների թիվը 2016թ.-ին 2009թ.-ի համեմատությամբ ավելացել է 768 երեխայով կամ 6.1%-ով:

<sup>243</sup>«Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին», ԼՂՀ, ԱՎԾ, Ստեփանակերտ 2017, էջ. 94; «ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2016, էջ. 82:

**Աղյուսակ 2.** ԱՅ-ում ամսական նպաստի չափը 2009-2016թթ., դրամ<sup>244</sup>

Տարիներ	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Մեկ նպաստառու ընտանիքի հաշվով	18048	18262	21546	21447	22132	22007	22190	22790
Մինչև 18 տ. երեխա ունեցող մեկ նպաստառու ընտանիքի հաշվով	21994	22296	25837	25964	26574	26912	26669	27699

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում մեկ նպաստառու ընտանիքի հաշվով ամսական նրպաստի չափը տարեկան միջինում ավելացել է 677.4 դրամով կամ 3.4%-ով, իսկ մինչև 18 տարեկան երեխա ունեցող ընտանիքի նպաստը՝ 815 դրամով կամ 3.4%-ով: Հարկ է նշել, որ մինչև 18 տարեկան երեխա ունեցող ընտանիքի նրպաստը նպաստառու ընտանիքի նպաստին գերազանցել է 1.21 անգամ: Ակընհայտ է, որ նպաստառու ընտանիքների թիվը, ամսական նպաստի չափը անմիջականորեն պայմանավորված է բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներից: Այս փոխկախվածության հետազոտության նպատակով որպես գործոնային հատկանիշներ ընտրել ենք ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտները և ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (փաստացի ընթացիկ գներով):

**Աղյուսակ 3.** ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտները և ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2009-2016թթ. (փաստացի, ընթացիկ գներով)<sup>245</sup>

Տարիներ	Բնակչության միջին տարեկան դրամական եկամուտները, մլն. դրամ	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, հազար դրամ
2009թ.	88366.8	723.7
2010թ.	96898.6	823.2
2011թ.	112936.4	936.1
2012թ.	125174.8	1023.0
2013թ.	136500.4	1137.9
2014թ.	150907.5	1268.1
2015թ.	155940.4	1443.8
2016թ.	161631.4	1577.3

Աղյուսակ 3-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ինչպես ԱՅ բնակչության միջին տարեկան եկամուտներն, այնպես էլ ՀՆԱ-ն բնակչության

<sup>244</sup>«Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին», ԼՂՀ, ԱՎԾ, Ստեփանակերտ 2017, էջ. 94; «ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2016, էջ. 83

<sup>245</sup>«Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին», ԼՂՀ, ԱՎԾ, Ստեփանակերտ 2017, էջ. 4,7; «ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015», ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2016, էջ. 76, 162


մեկ շնչի հաշվով ունեցել են աճի միտումներ: 2016թ. ԱՅ բնակչության միջին տարեկան եկամուտները 2009թ. համեմատ ավելացել են շուրջ 73264.6 մլն. դրամով կամ 82.9%-ով, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն՝ 853.6 հազար դրամով կամ 1.17 անգամ: Նպաստառու ընտանիքների թվի վրա նշված ցուցանիշների ազդեցության բացահայտման նպատակով, որպես գործոնային հատկանիշներ ընտրել ենք ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտները և ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով: Գծապատկեր 1 և 2-ից երևում է, որ Ա, Գ-ում նպաստառու ընտանիքների թիվը հակադարձ կախվածության մեջ է բնակչության միջին տարեկան դրամական եկամուտներից և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալներից: Այդ իսկ պատճառով այս երևույթների միջև կախվածությունը ներկայացրել ենք գծային ռեգրեսիոն մոդելի միջոցով՝

$$\hat{y}_i = a_0 + a_1 x_i, \text{ որտեղ՝}$$

$x_i$  -գործոնային հատկանիշի փաստացի մակարդակն է,

$\hat{y}_i$  -արդյունքային հատկանիշի տեսական մակարդակն է,


$a_0; a_1$  -պարամետրեր են, որոնք գնահատվում են փոքրագույն քառակուսիների մեթոդով<sup>246</sup>:



**Գծապատկեր 1.** ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների և նպաստառու ընտանիքների թվի փոխկախվածության գրաֆիկը

Վերլուծության արդյունքների համաձայն, ուսումնասիրվող ժամանակահատվածում ԱՅ բնակչության միջին տարեկան եկամուտների շուրջ մեկ մլրդ. դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստառու ընտանիքների թիվը կրճատվել է 5-ով: Ինչպես ցույց է տվել հաշվարկված կոռելյացիայի գործակիցը, այս երևույթների միջև կապը հակադարձ է և ուժեղ:

<sup>246</sup> Теория статистики: Учебник / Под ред. проф. Г.И. Громыко.-2-е изд., перераб. и доп. – М.: ИНФРА-М, 2005. -476с., ст. 243



**Գծապատկեր 2.** ԱՅ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և նպաստառու ընտանիքների թվի փոխկախվածության գրաֆիկը


Վերլուծության արդյունքները ներկայացնենք աղյուսակով:

**Աղյուսակ 4.** Նպաստառու ընտանիքների թվի վրա ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոխկախվածության վերլուծության արդյունքները


Ցուցանիշներ	Ըստ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների	Ըստ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի
Ռեգրեսիոն մոդելի տեսքը	$\hat{y}_i = 10708 - 0.005x_i$	$\hat{y}_i = 10468 - 0.469x_i$
Կոռելյացիայի գործակիցը	$r_{yx} = -0.787$	$r_{yx} = -0.696$
Ռետերմինացիայի գործակիցը	$R^2 = 0.620$	$R^2 = 0.458$
Էլաստիկության գործակիցը	-0.06	-0.05

Ստացված էլաստիկության գործակիցը ցույց է տալիս, որ ԱՅ բնակչության միջին տարեկան եկամուտների 1%-ով աճը հանգեցրել է նպաստառու ընտանիքների 0.06%-ով ընտանիքների կրճատմանը: Ըստ հաշվարկված դետերմինացիայի գործակցի, նպաստառու ընտանիքների թվի տատանումների շուրջ 62%-ը պայմանավորված է բնակչության միջին տարեկան եկամուտների վարիացիայով, իսկ մնացած 38%-ն՝ այլ և պատակահական գործոններով: Կատարված հաշվարկները ցույց են տվել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ԱՅ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շուրջ 10000 դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստառու ընտանիքների թիվը կրճատվել է ավելի քան 4-ով: Ինչպես ցույց է տվել հաշվարկված կոռելյացիայի գործակիցը, այս երևույթների միջև կապը հակադարձ է և միջին ուժգնության: Ստացված էլաստիկության գործակիցը ցույց է տալիս, որ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի 1%-ով աճը հանգեցրել է նպաստառու ընտանիքների 0.05%-ով ընտանիքների կրճատմանը: Ըստ հաշվարկված դետերմինացիայի գործակցի,

Նպաստառու ընտանիքների թվի տատանումների շուրջ 45.8%-ը պայմանավորված է բնակչության միջին տարեկան եկամուտների վարիացիայով, իսկ մնացած 54.2%-ն՝ այլ և պատակահական գործոններով:



**Գծապատկեր 3.** ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների և նպաստառու մեկ ընտանիքի հաշվով նպաստի չափի փոխկախվածության գրաֆիկը



**Գծապատկեր 4.** ԱՅ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և նպաստառու մեկ ընտանիքի հաշվով նպաստի չափի փոխկախվածության գրաֆիկը

Ինչպես երևում է գծապատկեր 3 և 4-ից նպաստների չափի և ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի միջև կապը ուղիղ է և գծային: Այս դեպքում նույնպես կապը կարող ենք ներկայացնել գծային ռեգրեսիոն մոդելի միջոցով: Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 5-ում: Կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների և նպաստների չափի միջև կապը ուղիղ է և շատ ուժեղ:

**Աղյուսակ 5.** Միջին ամսական նպաստի չափը ԱՅ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի փոխկախվածության վերլուծության արդյունքները

Ցուցանիշներ	Ըստ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների	Ըստ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի
Ռեգրեսիոն մոդելի տեսքը	$\hat{y}_i = 13296 + 0.06x_i$	$\hat{y}_i = 15307 + 5.15x_i$
Կոռելյացիայի գործակիցը	$r_{yx} = 0.902$	$r_{yx} = 0.7$
Դետերմինացիայի գործակիցը	$R^2 = 0.814$	$R^2 = 0.49$
Էլաստիկության գործակիցը	0.36	97.0

Ստացված ռեգրեսիայի գործակցի համաձայն, բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների մեկ մլրդ.դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստները միջին հաշվով ավելացել են 60 դրամով, իսկ բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների մեկ տոկոսի ավելացումը նպաստել է նպաստների 0.36% աճին: Հաշվարկված դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, որ ԱՅ-ում նպաստառու ընտանիքների նպաստների չափի վարիացիայի շուրջ 81.4%-ը պայմանավորված է բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների վարիացիայով: Ռեգրեսիոն վերլուծության համաձայն, ԱՅ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և նպաստների չափի միջև կապը ուղիղ է, ուժեղ և գծային: Հաշվարկված ռեգրեսիայի գործակիցը ցույց է տալիս, որ ԱՅ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի հազար դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստների չափը ավելացել է 5.15 դրամով, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեկ տոկոս աճը նպաստել է 97% նպաստների չափի ավելացմանը: Դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, որ նպաստառու ընտանիքների նպաստների չափի վարիացիայի շուրջ 49.0%-ը պայմանավորված է բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալների վարիացիայով:

Կատարված վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ԼՂՀ-ում բնակչության կենսամակարդակի հիմնական ցուցանիշների ավելացման հետ զուգահեռ կրճատվում են նպաստառու ընտանիքների թիվը և զուգահեռ ավելանում է նպաստների չափը:

**Գրականություն**

1. Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, ԼՂՀ, ԱՎԾ, Ստեփանակերտ 2017, էջ. 94;
2. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015, ԼՂՀ ԱՎԾ, Ստեփանակերտ 2016, էջ. 82
3. Теория статистики. / Под ред. Г.Л. Громыко. М.: ИНФРА-М, 2005. 476с., стр. 243



### **Ռոզա ԱՎԱԳՅԱՆ**

#### **Բնակչության սոցիալական ապահովության և կենսամակարդակի հիմնական ցուցանիշների փոխկապվածության վերլուծությունը (Արցախի տվյալներով)**

*Բանալի բառեր. բնակչության կենսամակարդակ, սոցիալական ապահովություն, ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով, բնակչության դրամական եկամուտներ, կորելյացիայի գործակից*

Երկրի բնակչության կենսամակարդակը փոխադարձ կապվածության մեջ է պետության վարած սոցիալական ապահովության քաղաքականությունից: Վերլուծության արդյունքների համաձայն, ուսումնասիրվող ժամանակահատվածում ԱՀ բնակչության միջին տարեկան եկամուտների շուրջ մեկ մլրդ. դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստառու ընտանիքների թիվը կրճատվել է 5-ով: ԱՀ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շուրջ 10000 դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստառու ընտանիքների թիվը կրճատվել է ավելի քան 4-ով: Բնակչության միջին տարեկան դրամական եկամուտների մեկ մլրդ. դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստները միջին հաշվով ավելացել են 60 դրամով, ՀՆԱ-ի հազար դրամով ավելացման հետ զուգահեռ նպաստների չափը ավելացել է 5.15 դրամով:

### **Роза АВАГЯН**

#### **Анализ взаимосвязи между социальным обеспечением и основными показателями уровня жизни населения (по данным НКР)**

*Ключевые слова: уровень жизни населения, социальное обеспечение, денежный доход населения, ВВП на душу населения, коэффициент корреляции*

Уровень жизни населения зависит от политики государства в области социального обеспечения. В результате увеличения годового денежного дохода населения на один миллиард драм количество семей получающих пособия сократилось на 5. В результате увеличения ВВП на душу населения на 10000 драмов число семей получающих пособия сократилось на 4. Согласно результатам, увеличение годового денежного дохода населения на один миллиард драмов привело к росту пособия размером на 60 драмов, а увеличение ВВП на душу населения на 1000 драмов привело к росту пособия размером на 5,15 драмов.

### **Roza AVAGYAN**

#### **The analyses of the relationship between the social security and the main indices of living standard of the population (by data of NKR)**

*Key words: the living standard of population, the social security, the money income of population, the GDP per capita, the coefficient of correlation*

The population life quality depend from the public policy of the state. As the result of the annual money income of the population by one billion AMD the number of families receiving allowances have decreased by 5. As the result of the increase of the GDP per capita by 10000 AMD the number of families receiving allowances have decreased by 4. According the results of the annual money income of the population by one billion AMD led the growth the size of allowance by 60 AMD and the increase of the GDP per capita by 1000 AMD led the growth the size of allowance by 5.15 AMD.

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՃԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԻՐԱՎԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ ՈՐՊԵՍ  
ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆ**

**Շուշան ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. փոքր և միջին ձեռնարկություն, իրավատնտեսական դաշտ, զբաղվածության մեծացում, գործազրկության կրճատում, ՓՄՁ սուբյեկտ


Փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) ոլորտը հանդիսանում է ՀՀ տնտեսության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը: ՀՀ-ում անընդմեջ քայլեր են ձեռնարկվում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված: Սկսած 2001թ. մշակվում ու իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք ուղղված են «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության մի շարք ուղղություններին<sup>247</sup>: Եվրամիությունն առանձնացնում է հետևյալ ՓՄՁ սուբյեկտները՝ հաշվի առնելով վերջիններում ներգրավված աշխատողների թիվը, ակտիվների հաշվեկշռային արժեքն ու տարեկան շրջանառության ծավալը՝ գերփոքր, փոքր, միջին:

ՓՄՁ սուբյեկտներ են համարվում այն կազմակերպությունները, որոնց աշխատողների թիվը չի գերազանցում 250-ը, տարեկան շրջանառությունը ոչ ավելին, քան 50 մլն եվրո է, ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 43 մլն եվրոն: Դիտարկենք 2012-2016թթ ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող ապրանքների ընդհանուր ծավալն ըստ ոլորտների:


Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ 2016թվականին ընդհանուր թողարկվել է 2644996 մլն դրամի արտադրանք, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է ավելի քան 17 տոկոսով, միաժամանակ պետք է փաստել, որ 5 տարվա մեջ նշված ցուցանիշը աճել է 150 տոկոսով: Ընդհանուր թողարկման մեջ փոքր մաս է կազմում գյուղատնտեսական ապրանքների թողարկումը, բայց ցուցանիշը զգալի աճ է գրանցել 2012թ. համեմատ՝ աճի տեմ-

<sup>247</sup> Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018թթ. Ռազմավարության <https://www.smednc.am/files/pdfs/attachments/original/bfaaf039.pdf>

պը կազմելով 56 տոկոս: Հաջորդ ցուցանիշը ՓՄՁ աշխատողների թվաքանակն է ըստ ոլորտների 2012-2016թթ:



**Գծապատկեր 1.** 2012-2016թթ ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող ապրանքների ընդհանուր ծավալը ըստ ոլորտների (մլն դրամ)<sup>248</sup>



**Գծապատկեր 2.** 2012-2016թթ ՓՄՁ աշխատողների թվաքանակն ըստ ոլորտների (մարդ)<sup>249</sup>

<sup>248</sup> ՓՄՁ ՁԱԿ պաշտոնական կայք էջ <http://www.smednc.am/am/publications/>

<sup>249</sup> ՓՄՁ ՁԱԿ պաշտոնական կայք էջ <http://www.smednc.am/am/publications/>

Գծապատկեր 2-ից պարզ է դառնում, որ ՓՄՁ աշխատողների թվաքանակը դիտարկվող ժամանակահատվածում կտրուկ աճել է 2016 թվականին, ինչ և կազմում է ամբողջ զբաղվածների թվաքանակի 21.8 տոկոսը<sup>250</sup>: Վերը նշված ցուցանիշներում հատկապես մեծ աճ է նկատվում ծառայությունների ոլորտում, ինչը 2016թվականին 2012 թվականի համեմատությամբ աճել է ավելի քան 2.5 անգամ: Ցուցանիշը աճը հատկապես պայմանավորված է վերջին տարիներում ՀՀ-ում ՏՏ ոլորտի արագ զարգացմամբ, նոր ընկերությունների ստեղծմամբ և հետևաբար ստացվում է աշխատողների թվաքանակի մեծացում:

Աշխատանքում առանձնացվել են այն հիմնական հարկատեսակները և օրենքները, որոնց մասով արտոնություններ են տված ՓՄՁ սուբյեկտներին: Մասնավորապես՝ 2017թ. հունվարի 1-ից ՀՀ-ում գործում է «Ինքնագրադանձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքը<sup>251</sup>: Օրենքը հնարավորություն է տալիս առանց հարկեր վճարելու և մի քանի այլ արտոնություններով զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ շուրջ 13 գործունեության տեսակներով և ենթատեսակներով: Հաջորդ խթանող գործընթացը կապված է «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունման հետ<sup>252</sup>, ըստ որի պետությունը նպատակ ունի բարձրացնել մրցակցությունը, խթանել օտարերկրյա և վենչուրային ներդրումները, ներգրավվել հմուտ աշխատուժ՝ մրցունակ աշխատավարձի ապահովման միջոցով<sup>253</sup>: Այնուհետև 2017 թվականի մարտի 1-ին ընդունվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»<sup>254</sup> ՀՀ օրենքի նախագիծը, որը էլ ավելի մեծ հարկային արտոնություններ է ընձեռում սկսնակ ոլորտի ձեռնարկատերերին: Հա-

<sup>250</sup> Հաշվարկն իրականացվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով 2016թվականի վիճակագրական տարեգրքում հրատարակված զբաղվածների թվաքանակը

<sup>251</sup> «Ինքնագրադանձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենք ՀՀՊՏ 2016.12.30/95(1275).1

<sup>252</sup> «ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1

<sup>253</sup> «Մահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1

<sup>254</sup> «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՀՊՏ 2017.03.29/19(1294) Հոդ.306

ջորդ արտոնությունը շահութահարկի արտոնությունն է, ըստ որի մինչև 2024 թվականի վերջն ընդգրկված հարկային տարիների համար ազատվում են շահութահարկի վճարումից գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված շահութահարկ վճարողները՝ գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի, և այլ ակտիվների իրացումից ստացվող և այլ եկամուտների մասով, եթե այլ ակտիվների իրացումից ստացվող ու այլ եկամուտների տեսակարար կշիռը համապատասխան հարկային տարվա համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը:<sup>255</sup>:

Հաջորդը 2015 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին»<sup>256</sup>, ՀՀ օրենքն է, որտեղ ներառված են 31 սահմանամերձ բնակավայր, և այդ բնակավայրերին տրվում են մի շարք հարկային արտոնություններ:

Այսպիսով, ընդհանրացնելով այս ամենը, կարելի է եզրակացնել, 2016 թվականին ՀՀ-ի ՀՆԱ-ն կազմել է 5 067.9 մլրդ դրամ, որտեղ ՓՄՁ-ի մասնաբաժինը կազմել է 1 681.7 մլրդ դրամ, կամ 33.1 տոկոս: Ի դեպ ՓՄՁ-ում նշված ցուցանիշը ունի հետևյալ մասնաբաժին յուրաքանչյուր ՓՄՁ սուբյեկտի համար ըստ ՓՄՁ դասակարգման՝ 10 տոկոս գերփոքր, 12 տոկոս փոքր և 11 տոկոս միջին ՓՄՁ սուբյեկտներ<sup>257</sup>: Ունենալով մեծ մասնաբաժին ՀՆԱ-ում, միաժամանակ 2016 թվականին ՓՄՁ ապահովել է 219 907 աշխատատեղ: Որից 49 տոկոսը ապահովել է գերփոքր ընկերությունները, 25.3 տոկոսը փոքր, իսկ մնացած 25.7 տոկոսը՝ միջին ՓՄՁ ընկերությունները:

<sup>255</sup> ՀՀ հարկային օրենքագիրք, Հոդված 126.

<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>

<sup>256</sup> «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2014.12.30/76(1089).1

<sup>257</sup> Research on SME Taxation field, EBRD Business Support Office, Yerevan 2017  
file:///C:/Users/MegaTex1/Downloads/Documents/SME-Taxation-Field-2016.pdf

### **Շուշան ԱՍԱՏՐՅԱՆ**

**Փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման իրավատնտեսական դաշտի բարելավումն որպես գործազրկության կրճատման պայման**  
*Բանալի բառեր. Փոքր միջին ձեռնարկություն, իրավադրժանական դաշտ, գրադավածության մեծացում, գործազրկության կրճատում, ՓՄՁ սուբյեկտ*

ՓՄՁ-ն աշխատանքի շուկայում և ընդհանրապես սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման գործում մեծ դեր ունի, որի համար էլ ՀՀ կառավարությունը հետևողականորեն օժանդակում է ձեռնարկատիրական գործունեության բարենպաստ միջավայր է ստեղծում պետական քաղաքականության համակարգված իրականացմանը և կատարելագործմանը:

### **Шушан АСАТРЯН**

**Улучшение правового-экономического поля МСП как условие сокращения безработицы**

*Ключевые слова: Малое среднее предприятие, легально-экономическая область, рост занятости, сокращение безработицы, субъект МСП*

МСП играет важную роль на рынке труда и, в целом, в развитии социально-экономических отношений, в силу чего правительство РА последовательно содействует предпринимательской деятельности, создает благоприятную среду для систематизированной реализации и совершенствования государственной политики.

### **Shushan ASATRYAN**

**Improving the legal and regulatory environment of SMEs as a condition for reducing unemployment**

*Key words: Small medium-sized enterprise, legal-economic field, employment growth, unemployment reduction, SME subject*

SMEs played an important role in the labour market and, in general, in the development of social and economic relations, which led the government to consistently promote entrepreneurship, creating an enabling environment for systematic implementation and improved policy-making.

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

**Էդվարդ ԱՏԵՓԱՆՅԱՆ**

ՀՊՏՀ Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. բնական ռեսուրսներ, բնապահպանության ոլորտ, շուկայական տնտեսական հարաբերություններ, էռոզիա, բնապահպանական անվտանգություն: շրջակա միջավայր:

Բնական ռեսուրսները մարդկային հասարակության կողմից օգտագործվում են անհիշելի ժամանակներից: Մարդկային հասարակության գոյատևումը պայմանավորված է բնօգտագործման և բնապահպանության երկմիասնական բնույթով, որը օբյեկտիվորեն ենթադրում է բնական ռեսուրսների օգտագործման ու պահպանության կապի ապահովումը, որն իրականացվում է տնտեսական մեխանիզմների միջոցով:

Բնապահպանության ոլորտի խնդիրն է հնարավորինս նվազեցնել շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողի, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի վրա տնտեսական գործունեության վնասակար ներգործությունները՝ ապահովելով շրջակա միջավայրի և մարդու առողջության պահպանության երաշխիքները<sup>258</sup>: Կլիմայի գլոբալ փոփոխությունները, օզոնային շերտի քայքայումը, մեծ հեռավորությունների վրա օդի, ջրերի անդրսահմանային աղտոտումն, արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործությունները, հողերի դեգրադացիան (անապատացում, աղակալում, էռոզիա և այլն), կենսաբազմազանության առանձին տեսակների անհետացման վտանգը տնտեսական գործունեության արդյունքն են, և դրանք ամբողջ աշխարհում առաջնային լուծում պահանջող խնդիրներ են:

Ներկայիս շուկայական տնտեսական հարաբերություններում շուկաները սահմանում են ապրանքների և ծառայությունների գները և քանակությունը: Համաձայն տեսության՝ շուկայով է պայմանավորված ապրանքների և ծառայությունների լավագույն համադրության առաջարկը և պահանջարկը, որը տանում է դեպի առավելագույն հնարավոր բարօրության (հաշվի առնելով արտադրության և սպառման սահմանափակումները): Սակայն, շուկայում չըվաճառված ապրանքների և ծառայությունների շուկայական գնի մասին ուղղակի տեղեկատվությունը հասանելի չէ, ինչը դժվարություններ է ստեղծում օպտիմալացնել նման ծառայությունների առաջարկը և պահանջարկը: Եվ սակայն գոյություն չունի հստակ սահմանված գին “անտառի”, “կենսաբազմազանության” համար, ակնհայտ է, որ շատերը որոշակիորեն արժևորում են

<sup>258</sup> ԲԽՏ/ ՀԱՇՄԱԻ 2000, < Բնապահպանական քաղաքականության առավելությունների գնահատումը>, Լոնդոն, 30 Հունիսի, 2000

նման գին չունեցող ապրանքները և ծառայությունները<sup>259</sup>: Հասարակության կայուն զարգացումը, ռացիոնալ բնօգտագործման և բնապահպանության ներդաշնակ երկմիասնական գործունեությունը պարտադիր կերպով ենթադրում է համապատասխան կառավարման համակարգի առկայություն, որը հանրային գիտակցության բարձր աստիճանի, օրենսդրական կատարյալ դաշտի, օրենքների ու օրինականության գերակայության պայմաններում կոչված է ապահովելու երկրի ներսում բնօգտագործման և բնապահպանության նկատմամբ պետական-հասարակական վերահսկողության ու կարգավորման հակակշիռների գործուն մեխանիզմների արդյունավետ աշխատանքը:

Բնապահպանական անվտանգությունը մեր օրերում ընդունել է ընդհանուր քաղաքական նշանակություն և միջուկային անվտանգության հետ գտնվում է նույն հարթության վրա<sup>260</sup>: Իսկ էկոլոգիական ճգնաժամից դուրս գալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել, ճանաչել ու օգտագործել բնապահպանական համակարգի ձևավորման բոլոր հիմնարար օրենքները և բնական ռեսուրսների շահագործման ռացիոնալ մեթոդները: Հայաստանում առաջին անգամ տնտեսական մեխանիզմները ներդրվել են 1986թ.: Այդ տարի ընդունվեց «Շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով ժողովրդական տնտեսությանը պատճառված վնասի պայմանական հաշվարկման մասին» որոշումը<sup>261</sup>, որը կանոնակագում էր ԽՍՀՄ բնապահպանական օրենսդրության փոփոխման հետևանքով տնտեսությանը հասցված վնասը: ՀՀ կառավարության 1993թ սեպտեմբերի 8-ի N 448 որոշմամբ ընդունվեց շրջակա միջավայրի աղտոտման համար վճարների համապարփակ համակարգ, որը կոչված էր կիրառել «աղտոտողը վճարում է» սկզբունքը: Հայաստանում չի իրականացվում բնապահպանական և բնօգտագործման վճարների տարբերակում ըստ աղտոտողների բնակավայրի, ինչը նույնպես էական բացթողում է համարվում: Հասկանալի է, որ մեկ միլիոնից ավել բնակչություն ունեցող Երևանում քաղաքում գործող աղտոտող ձեռնարկությունը շատ ավելի մարդկաց վրա է վնասակար ազդեցություն թողնում, քան որևէ մարզի հեռավոր գյուղում գործող ձեռնար-

<sup>259</sup> ԲՈՒԻ, 2006, < Բնապահպանական քաղաքականության առավելությունների գնահատումը > Ֆրանս Օնոտերիուսի կողմից խմբագրված (ԲՈՒԻ), մասնակցությամբ՝ Վերոնիկ Մոնիերի և Մեսիլ դը Աբբայեսի (BIO); Բենջամին Գորլակոի, Սնդրյու Յարվիսի և Ջեյմս Մեդիուրատի (GHK); Ոննո Կուիկի (ԲՈՒԻ), Ռոբին Վանների և Պոլ Էկինսի Robin (PSI); Յոհեն Յանցենի և Հենկ վան դեր Վոերդի (ԿԲՏԻ); Պետեր Վերկաեմստի և Ե. Մեյնաերթսի (VITO), Բնապահպանության գլխավոր տնօրինության համար, Ամստերդամ, Ապրիլ, 2006. [http://ec.europa.eu/environment/enveco/ex\\_post/costs.pdf](http://ec.europa.eu/environment/enveco/ex_post/costs.pdf)

<sup>260</sup> Կոնեկեր, Դինահ 2004, «Կորպորատիվ բնապահպանական գործունեության վերագիտակցում», Դեբոռա Հ. Բեննեթ, Գրեգորի Ա. Նորիս, Ջոն Դ. Սպենգլեր, Հարվարդի հանրային առողջության դպրոց, Արդյունաբերական էկոլոգիա թերթ, Բոստոն, Մայիս 2004:

<sup>261</sup> Շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով ժողովրդական տնտեսությանը պատճառված վնասի պայմանական հաշվարկման մասին՝ որոշում:



կությունը: Այս դեպքում Եվրոպական երկրներում ընդունված տարբերակ է խոշոր բնակավայրերում գործող աղտոտողների համար սահմանել առավել բարձր դրույքաչափ, նրանց շահագրգռելով օգտագործել նվազ աղտոտող սարքավորումներ<sup>262</sup>: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, հանրապետությունում 2000-2016թթ. բնապահպանական և բնօգտագործման վճարները կազմել են միջինը 3697,8 մլն դրամ: Սակայն դրանց առավելագույն գումարը արձանագրվել է 2011 թվականին` 5596,1 մլն դրամ, ինչը 2016 թվականին նվազելով 55,6%ով, կազմել է 2480.4 մլն դրամ:

**Աղյուսակ 1.** 2000-2016թթ. բնապահպանական և բնօգտագործման վճարները<sup>263</sup>

Տարի	Բացարձակ արժեք, մլն. դրամ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%)
2016	2480.4	82.1
2015	3021.8	101.8
2014	2969.8	153.8
2013	1930.8	11.2
2012	17313.6	309.4
2011	5596.1	116.4
2010	4808.6	142.3
2009	3379.5	87.1
2008	3879.0	94.5
2007	4105.9	99.7
2006	4117.2	120.1
2005	3428.3	198.3
2004	1728.6	152.6
2003	1132.6	99.4
2002	1139.1	133.4
2001	853.7	88.9
2000	960.5	81.6

Նույն ժամանակահատվածում հանրապետությունում գնալով ավելացել են վնասակար նյութերի արտանետումները դեպի մթնոլորտ: Այսպես, 2000-

- շինարարական թույլտվություններ (շինարարության իրականացման թույլտվության ստացման համար անհրաժեշտ ընթացակարգերը, ժամանակը, ծախսերը և ստուգումների իրականացումը),
- սեփականության գրանցում (սեփականության իրավունքի փոխանցման համար անհրաժեշտ ընթացակարգերը, ժամանակը և ծախսերը),
- վարկերի ստացում,
- ներդրողների շահերի պաշտպանություն (տեղեկատվության բացահայտման ինդեքս, տնօրենների պատասխանատվության ինդեքս, ընկերու-

<sup>269</sup>Рынок капитала в Армении, №9,10 (115,116), май, 2003, стр. 13

<sup>270</sup><http://www.doingbusiness.org/methodology>

թյան բաժնետերերի, ղեկավարների նկատմամբ դատական գործընթացների իրականացման բարենպաստության ինդեքս),

- հարկերի վճարում (հարկային վճարումների քանակը, հարկերի վճարման և հարկային հաշվետվությունների նախապատրաստման ու ներկայացման համար անհրաժեշտ ժամանակը, շահույթի մեջ ընդհանուր հարկերի տեսակարար կշիռը

- Միջազգային առևտուր
- Պայմանագրերի կիրարկում
- Էներգետիկ ռեսուրսների հասանելիություն և այլն:

Doing Business 2017-ում Հայաստանը գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանով զբաղեցնում է 47-րդ տեղը՝ 190 երկրների շարքում: Նախորդ տարվա համեմատ մեր երկիրը նահանջել է 9 հորիզոնականով՝ չնայած այն բանին, որ այս տարի ընդհանուր միավորները բարձրացել են 0.59-ով ու կազմել 72.51: Այդ միավորները կոչվում են սահմանագծից հեռավորության ցուցանիշ, որը գնահատում է երկրի կանոնակարգման աշխատանքների բացարձակ մակարդակը 0-100 սանդղակով, որտեղ 0-ն համապատասխանում է ամենացածր կատարողականին, իսկ 100-ը սահմանագիծն է: Այլ խոսքով՝ այս տարվա զեկույցում Հայաստանը միավորներով փոքր-ինչ առաջընթաց է գրանցել, մինչդեռ հորիզոնականով նահանջել է : Դա բացատրվում է նրանով, որ զեկույցում տեղ գտած երկրների մի մասն իրենց միավորներով շատ ավելի մեծ աճ են գրանցել, քան Հայաստանը: Կառավարությունը 2017-2022թթ. Գործունեության ծրագրում պլանավորում է երկրում ձևավորել այնպիսի գործարար միջավայր, որը թույլ կտա առաջիկա 4-5 տարիներին ապահովել հանրապետության տեղը նշված զեկույցի լավագույն 20 երկրների շարքում:

Այսպիսով, ներդրումային միջավայրի գնահատումը և դրա բարելավումը հանդիսանում է առանցքային պայման ներդրումային հոսքերի ներգրավման և ներդրումային գործընթացի ակտիվացման համար, ինչը, նախ և առաջ, ենթադրում է այդ ուղղությամբ քաղաքական, տնտեսական, իրավական և ինս-տիտուցիոնալ բնույթի միջոցառումների իրականացում:

## **Սեդրակ ԹՈՓԼԱՂԱԼՅԱՆ**

### **Ներդրումային միջավայրի գնահատման խնդիրները**

*Բանալի բառեր. ներդրումներ, տնտեսական աճ, սեփականություն, ներդրումային միջավայր, հարկեր, ՀՆԱ*

Հոդվածում քննարկվել են ներդրումային միջավայրի գնահատման հիմնական մոտեցումները և դրանց առանձնահատկությունները: Ներկայացվել են ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները և դրա բարելավման հիմնական ուղիները: Վերլուծության է ենթարկվել ներդրումային միջավայրի վիճակը հանրապետությունում և բացահայտվել են դրա գրավչությունը նվազեցնող հիմնախնդիրները: Առաջարկվել են լուծումներ հանրապետության ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ:

## **Седрак ТОПЛАГАЛЦЯН**

### **Задачи оценки инвестиционной среды**

*Ключевые слова: инвестиции, экономический рост, собственность, инвестиционный климат, налоги, ВВП*

В статье рассмотрены основные подходы к оценке инвестиционной среды и их особенности. Представлены факторы, влияющие на инвестиционную среду и основные пути к ее улучшению. Анализировано состояние инвестиционной среды в стране и выявлены основные проблемы, приводящие к снижению ее привлекательности. Предложены решения для улучшения инвестиционной среды в стране.

## **Sedrak TOPLAGHALTSYAN**

### **Problems of evaluation of investment environment**

*Key words: investments, economic growth, property, investment environment, taxes, GDP*

The primary approaches and their peculiarities of evaluation of investment environment were discussed in the article. Factors influencing on the investment environment and the main direction of their improvement were presented. The state of investment environment in the Republic was analyzed and the main problems diminishing their attractiveness were revealed. Solutions directed to the improvement of investment environment were offered.

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՐՇԵՍԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ  
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Սևակ ԹՈՐԳՈՄՅԱՆ**

Եվրասիա միջազգային համալսարանի «Կառավարում և տեղեկատվական տեխնոլոգիաներ» ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. անշարժ գույք, առևտրային օբյեկտներ, արտադրական օբյեկտներ, համատիրություն, ձևափոխվող բնակարան,

**Անշարժ գույքի բնակելի օբյեկտների դասակարգումը:**

Անշարժ գույքի բնակելի օբյեկտները կարող են ներառել բազմաբնակարան կամ միաբնակարան տները, որոնք հասանելի են բնակեցման ոչ առևտրային նպատակների համար: Բնակելի անշարժ գույքի օբյեկտները ընդունված է բաժանել հետևյալ տեսակների:<sup>271</sup>

**Համատիրություն:** Համատիրությունը սահմանվում է որպես քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված և իր անդամների գույքային փայլավճարների միավորման միջոցով ստեղծված շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կոոպերատիվ, որը հիմնադրվում է բազմաբնակարան շենքի կամ շենքերի բաժնային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման նպատակով:<sup>272</sup> «Ընդհանուր օգտագործման» տարածքներն ի տարբերություն այն տարածքների, որոնք անձնական սեփականության իրավուքով պատկանում են սեփականատերերին, չեն կարող առանձնացվել և վաճառվել, գրավադրվել կամ վարձակալության հանձնվել առանց փայտերների (համասեփականատերերի) համաձայնության:

Այսպիսով, մարդը, ստանալով բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք, ձեռք է բերում տվյալ բնակարանի ներբնակարանային միջնապատերը, միջսենյակային դռները, առաստաղի և միջնապատերի հարդարման շերտերը (պաստառներ, ներկեր) և մոնտաժված կառուցվածքներն ու սարքավորումները: Բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի սեփականատերն իրավասու է միայն փոփոխել բնակարանի հատակագիծը ոչ կրող պատերի տեղաշարժման հաշվին, երբ առանձնատան սեփականա-

<sup>271</sup> <http://www.thetruthaboutrealty.com/types-of-residential-real-estate/>

<sup>272</sup> «Համատիրության մասին» ՀՀ օրենքը, Հ 3, Կետ 1:

տերը՝ վերակառուցել, ընդլայնել (հարկ ավելացնել, պատշգամբ, կառուցել և այլն) իր տունը՝ իհարկե պահպանելով գործող օրենսդրությունը, ընդունված շինարարական նորմատիվները: Շինության յուրաքանչյուր սեփականատեր պարտավոր է կատարել համապատասխան վճարումներ ընդհանուր տարածքների պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման համար, որոնք սովորաբար ներառում են անցուղիները, արտաքին պատերը և տանիքը, պահեստարանները, նախասրահները, աստիճանահարթակները, միջանցքները և այլն:

**Բնակելի կոոպերատիվ:** Կազմակերպություն, որտեղ բնակելի սեփականատերերը ընդհանուր գույքի մեջ միավորում են իրենց փայաբաժինները և դրանք ներդնում կոոպերատիվի կանոնադրական կապիտալի մեջ: Կազմակերպատիրավական այսպիսի ձևի դեպքում առաջանում են գույքի երկու սեփականատերեր՝ բնակելի սեփականատեր և կոոպերատիվի տեսքով ընդհանուր գույքի սեփականության ձևական սեփականատեր<sup>273</sup>:

**Կոնդոթելներ.** իրենցից ներկայացնում են համատիրության (կոնդոմինիում) և հյուրանոցի խառնուրդի համադրություն: Կոնդոթելները սովորաբար ունենում են գրանցասեղան կամ կոնսիերժ և առաջարկում են սահմանափակ ծառայություններ՝ ամենօրյա մաքրում և սնունդ, գործում են որպես հյուրանոց, չնայած որ բնակելի միավորներն անձնական սեփականություններ են: Նախատեսված են թե՛ որպես կարճաժամկետ և թե՛ երկարաժամկետ բնակատարածք: Կոնդոթելները լայնորեն տարածված են գլխավորապես ԱՄՆ-ում:

**Ներդրումային բնակելի անշարժ գույքի օբյեկտներ.** բնակելիներ, որոնք բնակեցված չեն սեփականատիրոջ կողմից և ծառայում են որպես դրանցից ստացվող եկամտի աղբյուր՝ արժևորման կամ վարձակալության հանձնելու շնորհիվ: Ներդրումային բնակելի օբյեկտները ներառում են թե՛ միաընտանիք տները և թե՛ բնակարանները:

**Երկրորդային տներ.** բնակելի այս տեսակը, որն անվանում են նաև «արձակուրդային տներ», որպես կանոն տեղադրված են մերձքաղաքային ու առողջարանային վայրերում և ծառայում են որպես ոչ մշտական, սեզոնային բնակության վայրեր:

<sup>273</sup> Ա.Ասատու, Լ.Մեսրոպյան, Է.Սանդոյան, Անշարժ գույքի էկոնոմիկա, Եր.,2010, էջ 21

**Միաընտանիք բնակելի տներ (առանձնատուն).** նախատեսված են ապահովել ընդամենը մեկ բնակատեղ: Բնակելի անշարժ գույքի օբյեկտների այս տեսակը չի ներառում ընդհանուր օգտագործման տարածք և չունի ընդհանուր պատեր հարևան անշարժ գույքի օբյեկտների հետ, ինչը բնութագրական է բազմաբնակարան բնակելի շենքերին:

**Քաղաքային տներ (Townhouses).** նույնպես միաընտանիք տներ են, որպես կանոն բաղկացած երկու հարկից, որոնք ունեն ընդհանուր կողային պատեր հարակից նմանատիպ տների հետ: Սրանք, ի տարբերություն համատիրությունների վերևից կամ ներքևից չունեն հարևան բնակելի միավորներ և սովորաբար իրենց կառուցվածքում ունենում են բացօթյա տարածք՝ տան դիմային կամ հետևի հատվածում:

Անշարժ գույքի բնակելի օբյեկտները կարելի է դասակարգել տարբեր տիպաբանական չափանիշների հիման վրա.

1. Արտաքին պատերի շինանյութի տեսակով պայմանավորված, շենքերն առանձնանում են. տներ՝ քարե պատերով, պանելային, կասետային, մոնոլիտ և խառը տիպի:

2. Բնակելի օբյեկտների դասակարգման չափանիշները՝ համաձայն սպառողների վճարունակության և նրանց նախապատվությունների, տատանվում են՝ պայմանավորված տվյալ դարաշրջանով և պետությամբ:

Ներկայումս հայտնի են բնակելի օբյեկտների բազմաթիվ չափանիշներ: Դրանցից առավել տարածվածները հետևյալներն են<sup>274</sup>

**A կարգի բնակտարարածք.**

• Տնամերձ տարածքի կանաչ տնկարկների, հանգստի և մանկական հրապարակի կառուցման տարիքն չպետք է գերազանցի 10 տարին:

• Տունը՝ կառուցված բարձր որակի կոնստրուկտորա-տեխնոլոգիական չափանիշներով և հուսալի նյութերով:

• Ունենա գրավիչ և հետաքրքիր ճարտարապետական լուծում:

• Ժամանակակից և բարձր որակի արտաքին և ներքին հարմարությունների (ինժեներային ցանցեր և հաղորդակցության միջոցներ, անվտանգության տեխնիկա և հակահրդեհային պահպանություն, սարքավորումներ, անաղմուկ վերելակներ և այլն) առկայություն: Այս տեսակ բնակելի տանը առկա

<sup>274</sup> <http://www.crefcoa.com/property-classifications.html>

է լուսավորության, միկրոկլիմայի կառավարում, ջրի որակի, արտահոսքի հսկողություն, պահուստային էլեկտրական և ջրամատակարարում:

**B կարգի բնակտարածք.**

- Հիմնականում կառուցված վերջին 20 տարիների ընթացքում,
- Ներառում է արտաքին և ներքին հարմարությունների փաթեթ,
- Ժամանակակետցության առումով զիջում է A կարգին,
- Ունի կոնստրուկտորատեխնոլոգիական բարձր չափանիշներ՝ սպասարկման և նորոգման աշխատանքների իրականացման ավելի փոքր հաճախականությամբ:

**C կարգի բնակտարածք.**

- Հիմնականում կառուցված վերջին 30 տարիների ընթացքում,
- Ներառում է սահմանափակ և հնացած արտաքին և ներքին հարմարությունների փաթեթ,
- Չգացվում է բարեկարգումների կարիք, սպասարկման և նորոգման աշխատանքները իրականացվում են փոքր հաճախականությամբ,
- Սարքավորումների մեծամասնությունը փոխարինված չէ:

**D կարգի բնակտարածք.**

- Կառուցված լինելով ավելի քան 30 տարի առաջ, այս կարգի շինությունները բնութագրվում են մաշվածությամբ ու ֆիզիկական կյանքի կարճատև մնացորդային ժամկետով,
- Տեղադրված է քաղաքի ծայրամասային գոտիներում և ոչ հարգի շրջաններում,
- Ունի տնտեսական կյանքի կարճատև մնացորդային ժամկետ,
- Հարմարությունների փաթեթի գրեթե բացակայություն,
- Ցածր կոնստրուկտորատեխնոլոգիական, ճարտարապետանախագծային բնութագրականներ և պայմաններ:

Վերջին ժամանակներս ինչպես սպառող կազմակերպությունների, այնպես էլ անշարժ գույքի շուկայի արհեստավարժ մասնակիցների շրջանում ավելի մեծ հետաքրքրություն է առաջացել «ծալովի, ձևափոխվող բնակարան» գաղափարի նկատմամբ: Ձևափոխվող բնակարանը անշարժ գույքի օբյեկտ է, որտեղ հատուկ տեխնիկական միջոցներով ստեղծվում են ապրելու համար իդեալական պայմաններ՝ առավելագույնս խնայողաբար օգտագործելով տարածքը: Տան կամ բնակարանի մեր ներկայիս պատկերացումները

սահմանված սենյակներով, չտեղաշարժվող կայուն (ստատիկ) միջնապատերով և գույքով կարող են շուտով մնալ անցյալում: Նորարարական քաղաքային պլանավորման մասնագետների և հետազոտողների կողմից արդեն մշակվել և գործարկվել է նոր «ձևափոխվող» բնակարանների գաղափարը, որը հնարավորություն է ընձեռում մարդկանց հեշտորեն հարմարեցնել տարածության դասավորությունները իրենց փոփոխվող պահանջմունքներին<sup>275</sup>:

Ձևափոխվող բնակարանները կարող են շուտով արդիական դառնալ հատկապես այն քաղաքներում, որոնք բախվում են մատչելի (հասանելի) բնակարանի, բնակտարածքի ճգնաժամին և ուղեղների արտահոսքին, քանզի բնակելի օբյեկտները սահմանափակ և չափազանց թանկ են հեռանկարային շնորհաշատ երիտասարդների համար: Ձևափոխվող բնակարանները բնակչին թույլ են տալիս ձևափոխել գլխավոր սենյակը փոքր բնակարանի, երկտեղանոց մահճակալով ննջասենյակը՝ աշխատասենյակի կամ 20 հոգու համար նախատեսված հյուրասենյակի և այս ամենը ընդամենը ձեռքի շարժումով կամ անգամ ձայնային հրահանգով: Այս բնակարանները, անկասկած, ապահովում են ճկունություն և սահմանափակ տարածքի առավելագույն օգտագործում, որն անիրագործելի է բնակարանների ավանդական նախագծերով: Հաշվարկված է, որ ներկայումս քաղաքային տարածքներում բնակվողների հարաբերությունը աշխարհի ընդհանուր բնակչության թվաքանակին կազմում է 54%, ավելին, ըստ տարբեր գնահատականների՝ այդ մասնաբաժինը արդեն 2050 թվականին կազմելու է աշխարհի 9.7 միլիարդի հասած ընդհանուր բնակչության 66%-ը<sup>276</sup>, ինչը նշանակում է, որ քաղաքներն էլ ավելի մարդաշատ կդառնան և հասանելի բնակարանի պահանջմունքը կլինի բարձր, քան երբևէ: Վերոբերյալ կանխատեսումներն ավելի քան մտահոգիչ են՝ հաշվի առնելով մարդկանց տեղաբաշխման համար նախատեսված հողատարածքների սահմանափակությունը:

Ենթադրվում է, որ հասանելի բնակտարածքի մարտահրավերներին դիմակայման լուծումը պետք է փնտրել ոչ թե նորանոր տարածքների ներգրավման, այլ նորարարական ուղի- ների բացահայտման մեջ, որոնք թույլ կտան առավելագույն արդյունավետությամբ օգտագործել առկա տարածքը:

<sup>275</sup> [http://money.cnn.com/2014/05/02/real\\_estate/manhattan-folding-apartment/](http://money.cnn.com/2014/05/02/real_estate/manhattan-folding-apartment/)

<sup>276</sup> United Nations, World Urbanization Prospects, 2014, United Nations Publishing, NY, p 2.



### **Անշարժ գույքի առևտրային օբյեկտների դասակարգումը**

Հայաստանում անշարժ գույքի առևտրային օբյեկտների շուկան սկսեց հիմնականում ձևավորվել պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման մեկնարկի հետ միաժամանակ: Առևտրային օբյեկտների հատվածն ավելի փոքր է, քան բնակելիներինը, ուստի և գործարքներն են քիչ, չնայած աշխարհում առևտրային օբյեկտներն ավելի գրավիչ են համարվում:

**Անշարժ գույքի առևտրային օբյեկտներ:** Անշարժ գույքի առևտրային օբյեկտները տարաբաժանելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հենց անշարժ գույքի օբյեկտից ստացվող եկամտի և անշարժ գույքի օբյեկտի մասնակցությունից ստացվող եկամտի տարբերությանը: Եթե առաջին դեպքում անշարժ գույքի օբյեկտը եկամտի ստացման միակ աղբյուրն է (առևտրային համալիրներ, գրասենյակներ, ավտոկայանատեղեր, հյուրանոցներ), ապա երկրորդ դեպքում՝ եկամտի աղբյուրներից մեկը, և շատ հաճախ ոչ գլխավորը (արդյունաբերական օբյեկտներ, պահեստային շինություններ և այլն):

**Առևտրային համալիրներ:** Ներկայումս քաղաքներում հետևողականորեն զարգանում է անշարժ գույքի այն օբյեկտների շինարարությունը, որոնց ընդունված է անվանել բազմագործառույթ առևտրային կենտրոններ (ԲԱԿ): Վերջինս իրենից ներկայացնում է մանրածախ և այլ առևտրային հաստատությունների խումբ (համալիր), որը պլանավորվում, զարգացվում և կառավարվում է որպես մեկ ամբողջական անշարժ գույքի օբյեկտ՝ որպես կանոն, սեփական կայանատեղիով: ԲԱԿ-երի գործունեության կազմակերպման հիմնական սկզբունքը առևտրի և զվարճանքի համատեղումն է ունեցած տարածքի մասնագիտացման միջոցով. մի հատվածը տրամադրվում է առևտրական սրահներին՝ ապրանքների ամենաբազմազան տեսականիով, իսկ մյուսը՝ ծառայությունների ոլորտի ձեռնարկություններին (արագ սննդի կենտրոններ, լվացքատներ, բանկեր, ռեստորաններ, բարեր, բուլինգ, կինոսրահներ և այլն): ԲԱԿ-ի չափերը և շուկայական կողմնորոշումը հիմնականում պայմանավորված է տվյալ տարածաշրջանի տնտեսական բնութագրերով: Ներկայումս, միջազգային պրակտիկայում չափերի առումով ԲԱԿ-երի դասակարգման առավել տարածված չափանիշներն են<sup>277</sup>.

• Ասիա-խաղաղովկահանույան ԲԱԿ-եր. վարչական շրջանային՝ 2-20 հազար մ<sup>2</sup>, ենթատարածաշրջանային՝ 20-47 հազար մ<sup>2</sup>, տարածաշրջանային՝

<sup>277</sup> <http://www.icsc.org/research/references/c-shopping-center-definitions>

47-75 հազար մ<sup>2</sup>, սուպերարտատարածաշրջանային՝ 75 հազարից մինչև 139 հազար մ<sup>2</sup> և 140 հազար մ<sup>2</sup> և ավելի վարձակալության հանձնվող տարածքի ընդհանուր մակերես՝ մեգա-ԲԱԿ:

- Եվրոպական. փոքր՝ 5000-19999 մ<sup>2</sup>, միջին՝ 20000-39999 մ<sup>2</sup>, մեծ՝ 40000-79999 մ<sup>2</sup> և շատ մեծ 80 հազար մ<sup>2</sup> և ավելի վարձակալության հանձնվող տարածքի ընդհանուր մակերես:

- Ամերիկյան. խանութների շարասյուն՝ մինչև 3 հազար մ<sup>2</sup>, վարչական շրջանային՝ 3-12 հազար մ<sup>2</sup>, մեծ վարչական շրջանային՝ 12-40 հազար մ<sup>2</sup>, տարածաշրջանային՝ 40-75 հազար մ<sup>2</sup> և սուպեր-տարածաշրջանային՝ 75 հազար մ<sup>2</sup> և ավելի վարձակալության հանձնվող տարածքի ընդհանուր մակերես:

Առևտրի և զվարճանքի համատեղումը, որը կիրառելի է Արևմուտքում, տարածում է գտնում նաև Հայաստանում: Այստեղ հարկ է նշել Երևան Մոլ և Դալմա Գարդեն Մոլ առևտրային կենտրոնները, որոնք բացվել են համապատասխանաբար 2014 և 2012 թվականներին և ունեն 59000 մ<sup>2</sup>(4 հարկ) ընդհանուր մակերես՝ ներառյալ առևտրային տարածքներ, ծառայությունների ոլորտի ձեռնարկություններ (արագ սննդի կենտրոններ, խանութներ, բանկեր, լվացքատներ, վարսահարդարման սրահներ, 6 կինոսրահներ, զվարճանքների կենտրոն), ստորգետնյա ավտոկայանատեղի<sup>278</sup> և 50000 մ<sup>2</sup> (2 հարկ) ընդհանուր և 36000 մ<sup>2</sup> առևտրային տարածք, ինչպես նաև ավտոկայանատեղի՝ նախատեսված 742 մեքենայի համար<sup>279</sup>:

**Անշարժ գույքի հյուրանոցային օբյեկտներ:** Յուրաքանչյուր պետության մեջ ընդունված է հարմարավետության սեփական ստանդարտը՝ որպես դասակարգման չափորոշիչ՝ պայմանավորված պատմամշակութային և ազգային ավանդույթներով: Հենց այս իրողությունն է խոչընդոտում աշխարհում հյուրանոցների միասնական դասակարգման ընդունմանը: Ներկայումս հայտնի են հարմարավետության մակարդակի առումով հյուրանոցների դասակարգման 30 համակարգեր: Առավել տարածվածները հետևյալներն են.

- Եվրոպական («Աստղերի» համակարգ), որի հիմքում ընկած է հյուրանոցների բաժանումը 1-ից մինչև 5 աստղանի չափանիշը. կիրառվում է Իտալիայում, Ավստրիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում և այլուր:

- Տառերի համակարգ (A, B, C, D). օգտագործվում է Հունաստանում,

<sup>278</sup> <http://yerevanmall.am/>

<sup>279</sup> <http://www.dalma.am/hy/home#about1>

- «Թագ» համակարգ՝ Մեծ Բրիտանիայում:  
Կան նաև այլ դասակարգումներ (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1.** Հյուրանոցների դասակարգումը

Ըստ գների մակարդակի	Գերմանական դասակարգում		
Բյուջետային	\$ 25-30	Զբոսաշրջության կարգ	1*
Տնտեսական	\$ 35-55	Ստանդարտ կարգ	2*
Միջին	\$ 55-95	Հարմարավետ կարգ	3*
Առաջին կարգի	\$ 95-195	Առաջին կարգ	4*
Շքասենյակային (ապարտամենտ)	\$ 65-125	Լյուքս	
Պերճաշուք (ֆեշենբելային)	\$ 125-425		

Աղբյուր՝ Ա.Ասաույ, Լ.Մեսրոպյան, Է.Սանդոյան, Անշարժ գույքի էկոնոմիկա, Եր., 2010, էջ 51:

ՀՀ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» օրենքի 9-րդ հոդվածով հյուրանոցները սահմանվում են որպես հյուրանոցային տընտեսության օբյեկտներ, որտեղ մատուցվում են հյուրանոցային ծառայություններ մեկ կամ մի քանի շինություններում, որոնք ունեն առնվազն 10 սենյակ, որոնցից առնվազն 5-ը՝ մեկ կամ երկտեղանոց համարներով: Հայաստանում հյուրանոցները և մոթելները որակավորվում են որակավորման եվրոպական համակարգով, որոնք նշվում են հնգաթև աստղերով: Ներկայումս Հայաստանում գործում են որակավորման կարգ ստացած 22 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնցից 13-ը հյուրանոցներ են, 1-ը՝ պանսիոն, 8-ը՝ զբոսաշրջային տուն: Գործող 13 հյուրանոցներից երկու հյուրանոց՝ «Մուլտի Գրանդ Հոթել»-ը (Վերին Պողոնի) և «Գոլդեն Փելիս»-ը (Ծաղկաձոր), ունի 5 աստղանի դեյուքս որակավորում, որը գերազանցում է 5 աստղանի որակավորման կարգը և համարվում է ամենաբարձրը, մեկ հյուրանոց ունի 5 աստղանի որակավորում, յոթ հյուրանոց՝ 4 աստղանի, մեկ հյուրանոց՝ 3 աստղանի և երկու հյուրանոց՝ համապատասխանաբար 2 և 1 աստղանի որակավորում<sup>280</sup>: Ընդհանուր առմամբ անշարժ գույքի հյուրանոցային տիպի օբյեկտների թվին են պատկանում «Դեյուքս» օթելը, «Լյուքս» օթելը, միջին կարգի հյուրանոցը, հյուրանոց-շքասենյակները, օթել-առողջարանը, մոթելը, հյուրանոցը, հոթել-գարնին, պանսիոնատը, հյուրատունը, ռոթելը, բոթելը, ֆլո-

<sup>280</sup> <https://b24.am/economy/60180.html>

տելը և ֆլայտելը: Ներկայումս մեծ մասսայականություն է վայելում և հետևողականորեն զարգանում է մարմնամարզության կենտրոնների, թենիսի կորտերի, ավտոհավաքակայանների, նորաձևության տների, բուլինգի և զվարճանքի այլ օբյեկտների շինարարությունը:

**Գրասենյակային տարածքներ:** Առաջին հատուկ նպատակային գրասենյակային տարածքները կառուցվել են 18-րդ դարում՝ պայմանավորված արդյունաբերական հեղաշրջման ինտենսիվացման և այնպիսի խոշոր ու բազմաֆունկցիոնալ ընկերությունների հետևողական աճով ինչպես Royal Navy և East India Company<sup>281</sup>: Բանկային, երկաթուղու, ապահովագրական, մանրածախ առևտրի, բենզինի և հեռագրային ճյուղերի ծավալների և բազմաֆունկցիոնալության կտրուկ աճը և քաղաքների ճգողության կենտրոնների հատվածում հողատարածքի բարձր գինը հանգեցրեցին առաջին բազմահարկ շենքերի, իսկ արդեն հետագայում՝ երկնաքերերի կառուցմանը: Եթե կար ժամանակ, երբ գրասենյակները կարող էին կառուցվել ցանկացած վայրում և գրեթե ցանկացած շինությունում, գրասենյակների ժամանակակից պահանջները թե՛ օրենսդրական (օրինակ լուսավորության բավարար մակարդակը) և թե՛ տեխնիկական (օրինակ համակարգչային ցանցի պահանջները), ինչպես նաև այլ պահանջները, ինչպիսին են անվտանգությունը, հատակագծային ճկունությունը հանգեց-րեցին հատուկ նշանակության շենքերի կառուցմանը, որոնք նախատեսված են բացառապես կամ մեծամասամբ որպես գրասենյակներ օգտագործելու համար: Գրասենյակային տարածքը, հայտնի նաև ինչպես բիզնես կենտրոն, առևտրային անշարժ գույքի օբյեկտի տեսակ է, որը պարունակում է տարածքներ՝ հիմնականում նախագծված գրասենյակային գործունեություն իրականացնելու համար: Գրասենյակային շենքի առաջնային նպատակը աշխատավայրի և աշխատանքային միջավայրի ապահովումն է առաջին հերթին ադմինիստրատիվ և կառավարման ոլորտում աշխատողների համար: Այս աշխատողները գրասենյակային շենքում սովորաբար զբաղեցնում են սահմանված տարածքներ՝ ապահովված գրասեղաններով, համակարգիչներով և անհրաժեշտ այլ սարքավորումներով: Գրասենյակային շենքը կարող է բաժանված լինել հատվածների տարբեր կազմակերպությունների համար կամ ամբողջովին զբաղեցված լինել մեկ կազմակերպության կողմից: Ցանկացած դեպքում յուրաքանչյուր ընկերու-

<sup>281</sup> <http://www.concepts.org/index.php?title=Offices>

թյուն, որպես կանոն, ունենում է ընդունարան, մեկ կամ մի քանի հանդիպման սենյակներ, առանձնացված կամ «բաց նախագծով» գրասենյակներ, ինչպես նաև սանհանգույցներ: Բազմաթիվ գրասենյակային շենքեր ունեն նաև խոհանոց և անձնակազմի սենյակ, որտեղ աշխատողները կարող են նախաճաշել կամ ընդմիջել: Ըստ Շինության Սեփականատերերի և Կառավարիչների Ասոցիացիայի (BOMA)՝ գրասենյակային տարածքները դասակարգվում են երեք կարգերի՝ A կարգ, B կարգ և C կարգ: Համաձայն BOMA-ի դասակարգման՝ A կարգի գրասենյակային տարածքները բավարարում են որակի, տեխնիկական մակարդակի կատարելության ամենաառաջավոր չափանիշներին: B կարգի գրասենյակային շենքերը բնութագրվում են ֆիզիկական հարաբերականորեն մաշվածությամբ, սակայն ոչ տնտեսական, գործառույթային (ֆունկցիոնալ) կամ արտաքին մաշվածությամբ, այսինքն դրանք դեռ ունեն տեղադրման բարենպաստ վայր, կառավարման բարձր որակ և տեխնիկական մակարդակ: Այս դասի կառույցները կարելի է վերադարձնել «փառահեղ» A կարգի խոշոր նորոգման աշխատանքների իրականացման միջոցով, ինչպիսիք են ճակտոնի (ֆասադի) և ընդհանուր օգտագործման տարածքների բարելավումները: Գրասենյակային շենքերի և տարածքների ցածրագույն կարգը C կարգն է: Դրանց համար բնութագրական է ֆիզիկական, գործառույթային, տնտեսական և արտաքին մաշվածությունը: Այս կարգի շինությունները աչքի են ընկնում ճարտարապետանախագծային ցածր բնութագրականներով, շինության ենթակառուցվածքների և տեխնիկական վիճակի բարոյապես ծերությամբ<sup>282</sup>: Հաճախակի այս կարգերը՝ պայմանավորված սպառողների նպատակային խմբերի հարափոփոխ նախապատվություններով և այլ գործոններով, ենթարկվում են մոդիֆիկացման՝ ավելացնելով գումարման կամ հանման նշանը (օրինակ A+ կամ B -), ենթակարգեր ստեղծելու նպատակով:

Այնուամենայնիվ, վերոնշյալը գրասենյակային տարածքների դասակարգման միայն ուղեցույցն է: Գործնականում ֆորմալ և համընդհանուր դասակարգում գոյություն չունի: Գրասենյակային տարածքը անհրաժեշտ է դիտարկել տվյալ երկրի և նրա տարածքային շուկայի հայեցակետից, օրինակ A

<sup>282</sup> <http://www.boma.org/research/pages/building-class-definitions.aspx>

կարգի գրասենյակային տարածքը մի տարածաշրջանում կարող է չհամարվել A կարգ մի այլ տարածաշրջանում:

**Կայանատեղի:** Լինելով նախատեսված բացառապես ավտոմեքենաների կայանման համար, մերօրյա կայանատեղիներն ունեն մի շարք առավելություններ ավտոտնակների նկատմամբ՝ մասնավորապես տարածքի խնայողության, արդյունավետ օգտագործման և արտաքին գրավչության առումով:

**Լոգիստիկ համալիրներ:** Եթե առևտուրը երկրի տնտեսության «արյուն» է, ապա լոգիստիկ համակարգը՝ նրա «արյունատար անոթները»: Լոգիստիկ կենտրոնը կարող է ծառայել որպես պահեստավորման, կուտակման և (կամ) առաքման կենտրոն, ինչպես նաև որպես վերանորոգման դեպո: Վերջիններիս տեղակայման վայրերը հիմնականում քաղաքամերձ, միջպետական և հանրապետական ճանապարհներն են:

**Անշարժ գույքի արտադրական օբյեկտներ:** Արտադրական անշարժ գույքի օբյեկտները կարելի է բաժանել հետևյալ սկզբունքով<sup>283</sup>.

- ծանր արդյունաբերության օբյեկտներ (գործարաններ, կոմբինատներ, հանքավայրեր, հանքահորեր, էլեկտրակայաններ): Այս ճյուղի արդյունաբերական օբյեկտները ներգրավված են լինում սև և գունավոր մետալուրգիայի, արդյունահանման, վերամշակման, էլեկտրաէներգետիկայի, մեքենաշինական և քիմիական ոլորտներում: Այս տեսակին են վերաբերում նաև շինարարական նյութերի արտադրությանը մասնակցող օբյեկտները:

- սննդի արդյունաբերության օբյեկտներ. պատրաստի արտադրանքի կամ կիսաֆաբրիկատների արտադրության գործարանները, կոմբինատները: Այս դասին են պատկանում նաև ծխախոտային արտադրանքի և լվացող միջոցների արտադրության օբյեկտները:

- թեթև արդյունաբերության օբյեկտներ. ներառում են կաշվի, գործվածքի, մորթեղենի և կոշիկի գործարանները, ինչպես նաև ապակու, ճենապակու արտադրությանը մասնակցող անշարժ գույքի օբյեկտները:

- Մասնագիտացման լայն շրջանակով օբյեկտներ. պոլիգրաֆիական, մանրէաբանական և բժշկական օբյեկտներ:

Արդյունաբերական օբյեկտները ընդունված է դասակարգել նաև ըստ A, B, C կարգերի, որտեղ՝

<sup>283</sup> <https://regionalrealty.ru/library/chto-takoe-promyshlennaya-nedvizhimost/>

- A կարգի օբյեկտներ. գործարարության վարման համար անհրաժեշտ օբյեկտներ,
- B կարգի օբյեկտներ. ներդրումների համար նախատեսված օբյեկտներ,
- C կարգի օբյեկտներ. ավելցուկային անշարժ գույքն է՝ հողամասը շենքերով կամ առանց, որոնք չեն օգտագործվում գործարարության նպատակով:

Այսպիսով, անշարժ գույքի արհեստական օբյեկտները դասակարգվում են՝ ելնելով տարբեր սկզբունքներից՝ պայմանավորված տվյալ պետության կամ տարածաշրջանի սոցիալ- տնտեսական իրավիճակով, իրավական համակարգով և բնակչության նախապատվություններով: Մասնավորապես, ՀՀ անշարժ գույքի շուկայի արդի իրավիճակից ելնելով, անհրաժեշտ է ձևավորել արհեստական օբյեկտների միասնական դասակարգչի համակարգ, քանզի դասակարգումը նպաստում է շուկայում դրանց հետ կապված գործարքների դյուրինացմանը, ինչպես նաև առավել հաջողությամբ ուսումնասիրությանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասատլ Ա., Մերտոյան Լ., Մանդոյան Է., Անշարժ գույքի էկոնոմիկա, Երևան, 2010:

United Nations, World Urbanization Prospects, 2014, UN Publishing, New York, p 2.

ՀՀ օրենքը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին», Հոդված 9:

ՀՀ օրենքը համատիրության մասին, Հ 3, Կետ 1:

<http://www.icsc.org/research/references/c-shopping-center-definitions> վերջին մուտքի ամսաթիվ 06/06/2017 թ.

<https://b24.am/economy/60180.html> վերջին մուտքի ամսաթիվ 06/06/2017 թ.

<https://regionalrealty.ru/library/chto-takoe-promyshlennaya-nedvizhimost/> վերջին մուտքի ամսաթիվ 06/06/2017 թ.

<http://www.boma.org/research/pages/building-class-definitions.aspx>

<http://www.concepts.org/index.php?title=Offices> վերջին մուտքի ամսաթիվ 06/06/2017 թ.

<http://yerevanmall.am/> վերջին մուտքի ամսաթիվ 06/06/2017 թ.

<http://www.dalma.am/hy/home#about1> վերջին մուտքի ամսաթիվ 06/06/2017 թ.

[http://money.cnn.com/2014/05/02/real\\_estate/manhattan-folding-apartment/](http://money.cnn.com/2014/05/02/real_estate/manhattan-folding-apartment/)

<http://www.crefcoa.com/property-classifications.html>

<http://www.thetruthaboutrealty.com/types-of-residential-real-estate/> վերջին մուտքի ամսաթիվ 06/06/2017 թ.

## **Սևակ ԹՈՐԳՈՄՅԱՆ**

### **Անշարժ գույքի արհեստական օբյեկտների դասակարգման արդի հիմնախնդիրները**

*Բանալի բառեր. անշարժ գույք, առևտրային օբյեկտներ, արտադրական օբյեկտներ, համապիրություն, ձևափոխվող բնակարան,*

Հոդվածը նվիրված է անշարժ գույքի արհեստական օբյեկտների բնութագրերի և դասակարգման վերլուծությանը: Հոդվածում վերլուծվել է անշարժ գույքի արհեստական օբյեկտների դասակարգման համակարգը՝ բաժանելով արհեստական օբյեկտները խմբերի և ենթա խմբերի՝ տարբեր տիպաբանական չափանիշների հիման վրա: Հաշվի առնելով ՀՀ-ում անշարժ գույքի արհեստական օբյեկտների միասնական դասակարգիչի համակարգի բացակայությունը՝ ուսումնասիրվել են արտասահմանում մշակված դասակարգման առավել տարածված համակարգերը:

## **Севак ТОРГОМЯН**

### **Современные проблемы классификации искусственных объектов недвижимости**

*Ключевые слова: жилищая недвижимость, коммерческая недвижимость, объекты промышленной недвижимости, квартира-трансформер, таунхаусы*

Статья посвящена анализу характеристик и классификации искусственных объектов недвижимости. В статье анализируется система классификации искусственных объектов, разделяя их по группам и подгруппам, на основе разных стандартов. Учитывая что в Армении отсутствует единая система классификации искусственных объектов, были исследованы более распространенные системы, разработанные за границей.

## **Sevak TORGOMYAN**

### **Modern problems of artificial improvements classification**

*Key words: artificial improvements, residential real estate, commercial real estate, industrial real estate, condominium, transforming apartments, townhouses, hotel real estate*

The article is devoted to the analysis of artificial improvements characteristics and classification. In the article the classification system of artificial improvements has been analyzed through dividing them into groups and subgroup on the basis of various standards. Taking into account the absence of common classification system of artificial improvements in Armenia, more prevalent classification systems elaborated abroad have been studied.



## ЭКСПОРТНАЯ ОРИЕНТАЦИЯ ЭЛЕКТРОЭНЕРГИИ КАК ОСНОВА ЭНЕРГОЭФФЕКТИВНОСТИ В РА

Сурен АНАНЯН

соискатель кафедры Экономики и управления ЕРОА

Ключевые слова: энергоэффективность, энергобезопасность, налоговая и тарифная политика, атомная энергетика, инвестиционные модели возведения АЭС

Экспортная ориентация энергетики РА является ключом для обеспечения энергоэффективности и всех других вызовов в отрасли. Решение проблемы базируется на базе атомной энергетики и на важности повышения безуглеродного баланса электроэнергии. В целом проблему энергоэффективности в РА следует рассмотреть через призму внутренних и внешних проблем энергобезопасности и эффективности энергетического рынка РА:

*К внутренним факторам относятся:* 1) неэффективная налоговая и не сбалансированная тарифная политика; 2) необходимость полноценной либерализации внутреннего рынка энергии; 3) низкий уровень энергоэффективности и энергосбережения; 4) проблемы процессов диверсификации энергоснабжения по видам энергии и источников; 5) негативное влияние социальной ситуации населения на реализацию сбалансированной тарифной политики; 6) сокращение гидроэнергетических ресурсов вследствие деградации эко ситуации;

*К внешним факторам соответственно проблемы:* 1) реализации крупномасштабных проектов, связанные с блокадой инфраструктур; 2) диверсификации импорта топливно-энергетических ресурсов в РА; 3) полноценной интеграции энергетической системы РА в региональные энергетические рынки; 4) синхронизации правил рынка РА с директивами ЕС для присоединения к энерго рынкам ЕС.

Для преодоления указанных и производных проблем необходимо прежде всего иметь рациональный баланс электроэнергии и в т. ч. так называемый безуглеродный баланс электроэнергии. В энергетическом балансе – произведенной электроэнергии в РА в среднем 32% приходится на ААЭС, 35% на ТЭЦ и 33% на ГЭС, включая малые гидроэлектростанции, (за январь – август 2017г.) Доля ААЭС в отдельные периоды может возрасти до 45%, а потенциально превзойти черту 50%<sup>284</sup>. Произведенная электроэнергия без доли ТЭЦ работающих на импортируемых углеводородных ресурсах, а именно за счет ААЭС и гидро электростанций, включая малые ГЭС в Армении составляет 67% и может возрасти еще на 10-13 процентных пункта и составить 77-80%. В структуре вырабатываемой

<sup>284</sup> Министерство энергетических инфраструктур и природных ресурсов, Фактический баланс электроэнергии, (январь-август 2017), <http://www.minenergy.am/page/396>;

электроэнергии по итогам 2016 г. доля малых гидроэлектростанций Армении достигла 13%, что на 4% больше показателя предыдущего года. По данным на 1.01.2017 г. в РА действует 178 малых ГЭС (на 5 больше, чем год назад). Суммарная установленная мощность малых ГЭС составила около 328 МВт, выработка - около 957 млн. кВт.ч. Число малых ГЭС в Армении продолжит увеличиваться. По положению на 1.01.2017 г. в процессе строительства находятся еще 39 малых ГЭС суммарной проектной мощностью около 74 МВт и годовой выработкой 260 млн. кВт.ч.<sup>285</sup> Указанная картина наводит к следующим выводам: *Первый вывод* - имеем традиционный значительный удельный вес ААЭС в энергетическом балансе (чем надо воспользоваться), который вместе с гидро-энергетикой формирует доминирующий сектор без углеводородной электроэнергии. *Второй вывод* - условно в принципе за счет этих этих 80% выработанной (произведенной) *безуглеводородной электроэнергии* выработанной на ААЭС и ГЭС, включая малые гидро станции можно удовлетворить внутренние потребности РА и обеспечить резкое сокращение тарифа на электроэнергию для внутренних потребителей, примерно 35 драм на 1 кВт.ч., вместо действующего 44,98 драма за 1 кВт.ч.<sup>286</sup>. За счет указанного резерва снижения тарифа можно ввести также акцизный налог на электроэнергию, тем самым принять “эко” концепцию налогообложения в РА и за счет этого решать вопросы эффективного налогообложения энергетики, проблему сбалансированная тарифов, а также реализации задач экологической и социальной повестки и повышения эффективности реального сектора. *Третий вывод* - вся «углеводородная электроэнергия» выработанная на ТЭЦ может быть направлена на экспорт, и тогда следует сосредоточиться на повышении эффективности схемы природный газ взамен на экспортируемую электроэнергию (бартерная схема ввозимого природного газа из Ирана) и освоении новых сегментов экспортных рынков. Взамен импортируемого из Ирана 1 кв. м газа Армения бартером выплачивает 3.2 кВт.ч. электроэнергии, и 1,3 кВт.ч. передает “Армянской распределительной сети” по цене 0,4 (AMD)<sup>287</sup>.

Приведенное разделение - *без углеводородная электроэнергия для внутренних нужд, а углеводородная электроэнергия для нужд экспорта* условное, так как в отдельные периоды на внутреннее потребление может быть направлено элек-

<sup>285</sup> А. Аванесов, Министр: При строительстве малых ГЭС использовалось старое оборудование, что и нанесло ущерб экологии, 20 Октября 2017  
[http://finport.am/full\\_news.php?id=31966&lang=2](http://finport.am/full_news.php?id=31966&lang=2)

<sup>286</sup> КРОУ Армении: С 1 февраля 2017 года тариф на электроэнергию для населения понизится, <https://www.panorama.am/ru/news/2016/>;

<sup>287</sup> Иран начинает пробный экспорт газа в Грузию через Армению, Деловой экспресс, 29.07.2016, <http://www.express.am/news/view/iran-nachinaet-probnyi-eksport-gaza-v-gruziyu-cherez-armeniyu.html>

троэнергия произведенная на ТЭЦ и может иметь место другой расклад. Постановка такого алгоритма имеет концептуальное значение и стимулирует на экспортную ориентацию электроэнергии выработанной на углеводородах, с учетом факторов - торгового баланса РА, валютных резервов РА, инфляционного пресса, энерго-эффективности, экологической составляющей – загрязнение и плата за экологию, регулирования тарифов и в целом почти всех внутренних и внешних вызовов энергетической безопасности РА и эффективности энергетического рынка РА. Базой без углеводородной электроэнергии является и в дальнейшем будет являться атомная энергетика.

Атомная энергетика РА в нынешнем виде действующая представлена вторым блоком ААЭС. В будущем новые мощности и формат которого еще не определены. Но этот вопрос является не только определяющей для энергобезопасности РА, но также входит в прямую орбиту интересов РФ, Евросоюза, США и косвенно стран региона – Ирана, Турции, Грузии и Азербайджана. Задача РА определить возможность конвергенции их интересов степень или уровень этой конвергенции, то есть сближение интересов различных стран, сильно различающихся по своим интересам. Такое сближение интересов различных стран в интересах РА обусловлено определенной общностью и различием - геополитических, идеологических, экономических, финансовых, юридических, социальных проблем и наличием единых объективных закономерностей развития ядерной энергетике в целом. Задача в том, чтобы этот разновекторный узел интересов выстроить и развивать в интересах Армении, соблюдая равновесие всех заинтересованных сторон.

Одним из проявлений указанной конвергенции интересов для реализации предложенной нами концепции и определяющим фактором является строительство ЛЭП и формирование энергетического коридора Иран- Армения - Грузия – Россия. Основа для этого является подписанный в декабре 2015 г. в Ереване четырехсторонний меморандум между Арменией, Грузией, Ираном и Россией, предусматривающий повышение уровня управления перетоками электроэнергии, безопасности и надежности энергосистем. Целью этого является реализация инициативы по созданию электроэнергетического коридора Север-Юг, что даст возможность работать с энергосистемами ЕАЭС и ЕС. Общая стоимость финансирования проекта строительства ЛЭП Иран-Армения составляет \$107 млн., которые предоставлены иранской стороной, проект реализует иранская компания «Санир». Согласно Минэнерго РА, созданию благоприятной среды для сотрудничества способствует то обстоятельство, что энергосистемы четырех стран работают в параллельном синхронном режиме. В частности, предусмотрено до конца 2019г. сдать в эксплуатацию четвертую ЛЭП Армения-Грузия мощностью 400-500 кВт. В результате, будет обеспечена возможность работы в параллельном режиме с энергосистемой

Грузии, а мощность перетоков электроэнергии на первом этапе составит 350 МВт, а к 2021г. будет доведена до 700 МВт. Кроме того, до конца 2019г. в эксплуатацию будет задействована третья высоковольтная ЛЭП Иран-Армения, что позволит довести мощность перетоков до 1050 МВт, в настоящее время эта мощность составляет 350 МВт<sup>288</sup>.

В настоящее время ситуация в атомной энергетике такова: в ноябре 1995 г. в связи с острейшим энергетическим кризисом в РА был задействован второй энергоблок ААЭС мощностью 407,5 МВт. В марте 2014 г. правительство РА приняло решение о продлении срока эксплуатации второго энергоблока на 10 лет - до 2026г. Координацию проекта осуществляет дочерняя структура Госкорпорации "Росатом" - АО "Русатом Сервис". Окончание работ запланировано на 2019 г. Правительство РФ выделило на эти цели Армении государственный экспортный кредит на сумму \$270 млн. и грант в \$30 млн. В марте 2015 г. был создан Совместный координационный комитет (СКК) по реализации программы (до настоящего времени проведены пять заседаний СКК). Совет Европейского союза опубликовал текст Соглашения о расширенном и всеобъемлющем партнерстве между Арменией и ЕС, которое планируется подписать в ноябре 2017г. в рамках саммита Восточного партнерства. В части соглашения, касающейся темы ядерной безопасности, указывается на важность соблюдения на высоком уровне стандартов МАГАТЭ. Говорится и о закрытии и безопасном снятии с эксплуатации атомной электростанции в Мецаморе и сотрудничестве по ранее принятой с этой целью "дорожной карте" или плану действий, принимая во внимание необходимость замены АЭС новыми возможностями обеспечения энергетической безопасности Армении<sup>289</sup>. В связи с этим есть различные комментарии членов правительства РА. К примеру, министр юстиции РА не исключает возможности отказа Армении от строительства нового атомного энергоблока<sup>290</sup>. Министр энергетических инфраструктур и природных ресурсов РА ссылается на возможность возведения в Армении АЭС малой мощности – это модульные атомные реакторы мощностью в 50 МВт. (является закрытой атомной станцией). Но между тем, по словам самого министра в настоящее время эти реакторы находятся в стадии испытаний, и, как ожидается, будут возведены в течение ближайших двух лет. По словам министра

---

<sup>288</sup> А. Аванесов, Манукян: До конца 2019 года будут завершены работы по строительству третьей высоковольтной линии электропередачи Иран-Армения, 20 Октября 2017, [http://finport.am/full\\_news.php?id=31967&lang=2](http://finport.am/full_news.php?id=31967&lang=2)

<sup>289</sup> Ереван и Брюссель подтверждают, что соглашение Армения-ЕС будет подписано 24 ноября, Радио Азатутюн, <https://rus.azatutyun.am/a/28819526.html>

<sup>290</sup> А. Аванесов, Министр юстиции РА не исключает возможности отказа Армении от строительства нового атомного энергоблока, 17 Октября 2017, [http://finport.am/full\\_news.php?id=31898&lang=2](http://finport.am/full_news.php?id=31898&lang=2)

это и является причиной того, что правительство РА отсрочило рассмотрение вопроса о мощности нового атомного блока на 2 года<sup>291</sup>. Таким образом, можно констатировать, что РА не имеет четкой позиции по сохранению в РА атомной энергетики. А между тем главный вопрос упирается в инвестиционную составляющую - это примерно \$5 млрд., по сути Армения не разработала действенной инвестиционной платформы для решения задачи. Между тем, при оценке атомной энергетики РА следует исходить и учитывать не только факторы экономики и энергобезопасности, но и другие очень важные векторы развития, которые либо базируются на атомной энергетике, либо являются его производными. Это такие составляющие как – политическая, научно-техническая, инновационная, военная, развития человеческого капитала, построения действенной системы «образование - наука – производство», а также философско-мировоззренческая составляющие развития общества. Следует указать, что еще несколько лет назад Россия заявила о возможности своего участия в проекте в объеме 20%, позже эта цифра возросла до 40%. Глава французского государства Франсуа Олланд, в рамках своего государственного визита в Армению, заявлял о готовности французских компаний принять участие в строительстве в РА новой атомной станции. Вопрос в том, что при правильном построении интересов в реализацию данной программы можно вовлечь заинтересованных инвесторов.

Вопрос формирования консорциума для реализации проекта и инвестиций сводится к матрице инвестиционного проекта. Какой интерес может быть у инвесторов для участия в проекте? В международной практике такие концепции и подходы известны и успешно реализуются. В основе их возможность покупки электроэнергии по льготным ценовым условиям, в определенных объемах и на определенный период. Такая схема рассматривается и при строительстве АЭС «Акую» в Турции, которая строится при содействии «Росатома». В мировой практике можно указать на очевидно успешную финскую модель «Mankala»<sup>292</sup>, формула которой можно назвать «кооперация с нулевой прибылью в интересах акционеров», которая подразумевает, что акционеры вправе покупать электроэнергию по себестоимости, они несут ответственность за обслуживание долга, т. е. между акционерами распределены риски, оговорены принципы репатриации капитала и текущих расходов. В целом схемы сооружения АЭС подразумевают заключение следующих основных видов контракта:

---

<sup>291</sup> А. Аванесов, Министр: Развитие атомной энергетики Армении является приоритетом для правительства Армении, 20 Октября 2017,

[http://finport.am/full\\_news.php?id=31958&lang=2](http://finport.am/full_news.php?id=31958&lang=2)

<sup>292</sup> Mankala energy production model under threat?

[http://www.internationallawoffice.com/Newsletters/Energy-Natural-](http://www.internationallawoffice.com/Newsletters/Energy-Natural-Resources/Finland/Krogerus-Attorneys-Ltd/Mankala-energy-production-model-under-threat#)

[Resources/Finland/Krogerus-Attorneys-Ltd/Mankala-energy-production-model-under-threat#](http://www.internationallawoffice.com/Newsletters/Energy-Natural-Resources/Finland/Krogerus-Attorneys-Ltd/Mankala-energy-production-model-under-threat#)

1) Контракт «под ключ» (Turnkey contract). В этом случае организация-подрядчик берет на себя ответственность за реализацию всех этапов проекта, с начала проектирования до окончания сооружения. Данный подход максимально уменьшает риски и количество взаимоотношений между участниками проекта, и рекомендован МАГАТЭ для возведения новых энергоблоков АЭС;

2) Контракт отдельных поставок (Split package contract). В этой схеме обязательства по проектированию и сооружению АЭС разделены среди относительно небольшого числа подрядчиков, и каждый подрядчик несет ответственность за значительный объем работ;

3) Контракт отдельных поставок распределенный по компонентам (Multiple package contract). По данной схеме заказчик/владелец будущей АЭС берет на себя всю ответственность за управление проектом – от проектирования до окончания сооружения, с помощью компании проектанта и/или консультантов.

Во всех указанных типовых контрактах заказчику/собственнику АЭС поставляется готовая атомная электростанция со вводом в эксплуатацию, включая тесты приемки. Контракт отдельных поставок распределенный по компонентам, как правило, используется для внутринациональных проектов сооружения АЭС, в которых, генерирующая компания имеет долговременное сотрудничество с проектантами и производителями АЭС и сама определяет круг своих поставщиков, оценивает их предложения и управляет сооружением АЭС. Такой тип более приемлим для стран с развитой индустрией атомной энергетики, такие как РФ, Франция США и др.. Для РА может быть приемлива схема контракта «под ключ» или схема генерального подряда. В международной практике при такой схеме используется вариант генерального подряда («EPC» Engineering, Procurement, Construction). Контракт включает этапы инжиниринга, поставки оборудования и услуг, строительно-монтажные работ, включая сдачу АЭС в коммерческую эксплуатацию. Традиционная модель «EPC-контракта» с фиксированной ценой требует от владельца АЭС минимального контроля за поставками, включая также выбор субподрядчиков. Помимо подхода «EPC-контракт» существует также контракт по нефиксированной цене, который подразумевает существенный объем работ от владельцев АЭС и их поставщиков. Другой подход применяемый владельцами АЭС с целью получения информации о рынке и целевой цене, а также для соответствующего распределения рисков и затрат, является схема открытого ценообразования. При этой схеме собственник АЭС имеет возможность работать с инжиниринговыми компаниями для обеспечения прозрачности каждой из основных статей затрат, включая непредвиденные расходы и прогнозы увеличения стоимости. Важная особенность такого подхода в том, что собственник АЭС и инжиниринговая компания имеют возможность договориться об установлении зависимости между оплатой субподрядчиков от рисков сбоя технологии (оборудо-

вания), а также превышения сметы затрат. В указанных традиционных контрактах предметом контракта является поставка оборудования и услуг по проектированию, сооружению и пуску в эксплуатацию АЭС. Следует учесть, что в международной практике используются новые типы контрактов, в которых предметом контракта является также электроэнергия, которая будет производиться на строящейся АЭС и продаваться в течение определенного периода времени в будущем по фиксированной цене или по согласованному алгоритму ценообразования.

Возвращаясь к источникам инвестиций для финансирования проектов сооружения АЭС, следует указать, что в международной практике основными источниками инвестиций сооружения АЭС являются: а) государственные ассигнования и гарантии (госфинансирование из бюджета, финансирование под гарантии бюджета страны заказчика или подрядчика); б) собственные средства энергетической компании; г) акционерный и заемный капитал. В связи со значительным объемом обязательств и рисков исторически крупномасштабные проекты АЭС, в основном, финансировались, за счет государственных источников и гарантий. На современном этапе государственные ассигнования не преобладают, как правило, они направляются на стимулирование затратного этапа развития проекта.

С учетом большой капиталоемкости проектов АЭС (включая строительство, утилизация отходов) в настоящее время, как правило, наиболее часто применяются комбинированные схемы финансирования с привлечением различных источников. К примеру, механизм взаимодействия государства и бизнеса базируется на частно-государственном партнерстве, используя одновременно государственное финансирование и средства частных коммерческих инвесторов. В настоящее время в международной практике для финансирования проектов АЭС значительное место отводится акционерному капиталу. Наблюдается также тренд все большего использования заемного финансирования, источниками которого являются средства: а) агентств по экспортным кредитам, б) многосторонних международных организаций по развитию, г) международных коммерческих займов, д) облигаций. Таким образом, современные проекты АЭС базируются на комбинированном финансировании, включая акционерный капитал и корпоративный долг, и одновременно включение на различных важных этапах государственного финансирования. Для инвестиционной привлекательности проекта в принципе необходимо наличие двух важных условий: а) низко привлекательная стоимость квт-часа электроэнергии по сравнению с другими альтернативными способами генерации электроэнергии, б) достаточная потребность в электроэнергии на рынке потребления, где намечается реализовать ее.

В международной практике для повышения эффективности и конкурентоспособности проектов возведения АЭС используются механизмы: а) гарантии

правительства по компенсациям генерирующей компании для покупки электроэнергии по заранее оговоренной цене, включая падение рыночных цен на электроэнергию, б) соглашения о гарантированных объемах покупки электроэнергии, в) льготное кредитование и субсидирование кредитов, г) налоговые льготы на производство и инвестиции д) различные виды страхования рисков, включая страхование экспортных кредитов, рисков задержек строительства по вине государственных надзорных органов, е) включение проекта в программу льгот по сокращению экологически опасных выбросов (такие льготы применяются к проектам ветряной энергетики), ё) ускоренная амортизация и др..

В рамках частно - государственного партнерства в международной практике разработаны ряд схем проектного финансирования<sup>293</sup>. Особенности этих схем заключаются в функциональных составляющих проекта и различиях по уровню принимаемого риска. К числу таких схем относятся:

- Сооружение – Владение – (Эксплуатация и Техническое обслуживание) – (Передача) или Build–Own–Operate & Maintain – (Transfer) (BOOM),
- Сооружение – Владение – Передача или Build–Own–Transfer (BOT),
Հայաստանում գործում է «Վիասֆերա» բիզնես-ինկուբատորը, որը հիմնադրվել է 2000թ.-ին և մասնագիտացած է կիսահաղորդչային չիպերի մոդելավորման և արտադրության ծրագրավորման մեջ: «Վիասֆերան» հիմնադրվել է «Վիասֆերա ինթերնեշնլ» ամերիկյան ընկերության կողմից Հայաստանի էլեկտրոնային արդյունաբերության ձեռնարկություններից մեկի՝ «Տրանզիստորի» արտադրական տարածքների օգտագործմամբ<sup>301</sup>: ՀՀ-ում բիզնես ինկուբատորների ստեղծման հարցում պետք է հիմնվել զարգացած երկրների փորձի վրա: Վերջինիս նպատակն է նոր աշխատատեղերի ստեղծումը, փոքր բիզնեսի հիմքի վրա գործարար կյանքի աշխուժացումը: Հարկ է նշել, որ ձեռ-

<sup>301</sup> Խանիկյան Գ., Նազինյան Ա. Բիզնես ինկուբատորը որպես ինովացիոն ձեռներեցության զարգացման ենթակառուցվածքային բազային տարր, Рынок капитала в Армении №5,6 (87,88), март 2002

Նարկատիրության աջակցությունը, որքան որ պետական իշխանության մարմինների հոգածության խնդիր է, այնքան էլ պետք է լինի մարզային և համայնքային իշխանությունների հոգածության խնդիր: Կառավարման հմտությունների զարգացումը ՀՀ-ում նույնպես պատշաճ ուշադրության չի արժանացել: Ձեռնարկությունները խիստ կարիք ունեն ժամանակակից գիտելիքներով ու հմտություններով օժտված կադրերի պահանջի: Որքան ցածր է մասնագետների գիտելիքների ու հմտությունների մակարդակը, այնքան անարդյունավետ է գործում ձեռնարկությունը: Այսինքն, որպես տեխնիկական բնույթի առաջնահերթ հիմնախնդիր կարելի է առանձնացնել գործարարների համապատասխան գիտելիքների պակասը, գրագետ կազմված ֆինանսական, հաշվապահական հաշվետվություններ և գործարար ծրագրեր մշակելու ունակությունների պակասը, Հայաստանի Հանրապետությանը օրենսդրությանը թերի տիրապետելը և այլն: Այս ուղղությամբ գործունեություն է ծավալում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, և ուսուցողական եւ ՓՄՁ-ի կադրերի մասնագիտական վերապատրաստման ծառայություններն ունեն իրենց դրական ազդեցությունը, սակայն հաճախ իրականացվում են կարճաժամկետ ծրագրերի շրջանակներում, համակարգված չեն, որն էապես նվազեցնում է դրանց արդյունավետությունը<sup>302</sup>: Հայ ձեռնարկատերերի կազմակերպական եւ կառավարման գիտելիքների խորացման, մարքեթինգի, առաջավոր տեխնոլոգիաների յուրացման եւ այլ կարևոր մասնագիտական հմտությունների կատարելագործումը կարող են իրականացնել նաև փոքր ձեռնարկությունների «կլաստերների» և բիզնես-աջակցման ասոցիացիաների, միությունների և այլ կառույցների միջև փոխհամագործակցության միջոցով:

Կլաստերների համար հատկանշական է այն հանգամանքը, որ ՓՄՁ նման մասնագիտացված համակարգերը շատ հրապուրիչ են ինչպես արտասահմանյան, այնպես էլ տեղական ներդրողների համար: Որպես դրական հանգամանք կարելի է նշել այն, որ ՓՄՁ-ները, անցումային տնտեսությունների ցավոտ տեղերից մեկը հանդիսացող երևույթի՝ կոռուպցիայի զարգացմանը եթե չեն նպաստում, ապա չեն էլ նպաստում: Որպես նշվածի հիմնավորում կարելի է ներկայացնել դեպքերի զարգացման այնպիսի տարբերակ, երբ հնարավորություն չունենալով միմյանց միջև և պետական մարմինների հետ ձեռք բերված գաղտնի համաձայնությունների միջոցով էականորեն ազդել իրենց գործունեության հետ կապված որոշակի հարցերի՝ իրենց օգտին լուծման վրա, ՓՄՁ-ները շատ դեպքերում չեն ընդգրկվում կոռուպցիայի մեխանիզմում, ինչը, որպես կանոն, անցումային շրջանում գտնվող

<sup>302</sup> Հարությունյան Նարեկ Հայկի «Կառավարման հմտության զարգացումը որպես ՀՀ ՓՄՁ-ների արդյունավետության բարձրացման գործոն», Ատենախոսություն, 2005

տնտեսություններում զարգացման մեծ հնարավորություն ունի<sup>303</sup>: ՀՀ-ում ՓՄՁ-ն զարգացումը խթանելու առաջնահերթ հիմնախնդիր է հանդիսանում նաև այն իրավական նորմերի հստակեցումը, որոնք կապված են լիզինգի, հավատարմագրային կառավարման, ֆակտորինգի, կոնցենսիայի, ինչպես նաև գույքի օգտագործման իրավունքի օտարման այլ ձևերի հետ: Այս ոլորտում պակաս կարևոր չէ նաև վարչարարության և ընկերությունների գործունեության տարբեր փուլերում առկա արհեստական խոչընդոտների վերացումը, որոնք հիմնականում կապված են նրանց զրանցման, լիցենզավորման, եկամուտների հայտարարագրման, հարկերի վճարման ընթացակարգի հետ: ՓՄՁ զարգացման համար անհրաժեշտ է զարգացնել լիզինգային գործունեությունը /անշարժ և շարժական գույքի երկարաժամկետ վարձակալություն/, որը ՀՀ-ում կատարելագործելու կարիք է զգում: Լիզինգային մեխանիզմի իրականացման օրենսդրական /հատկապես ֆինանսական լիզինգի/ և տնտեսական մեխանիզմի մշակումը և դրանց հետևողական կիրառումը մեծ նպաստ կբերի ՀՀ-ում ՓՄՁ զարգացմանը:

ՓՄՁ-ների զարգացումը խթանող կարևոր ուղի է նաև տարբերակված հարկային արտոնությունների ցուցաբերումը հատկապես առավել կարևոր առաջնային ոլորտներում գործող ՓՄՁ-ներին: Ձեռնարկությունները անարդյունավետության պատճառով դադարեցրել են իրենց տնտեսական գործունեությունը կամ գործում են ստվերում: Ուստի սահմանափակ թվով /մոտ 2000/ ձեռնարկություններին հարկային արտոնությունների տրամադրումը մարզերի ՓՄՁ-ին մեծ վնաս չի հասցնի պետական բյուջեին: Օրինակ, Ճապոնիայում, ԱՄՆ-ում և Մեծ Բրիտանիայում կիրառվում են շահութահարկի և ԱԱՀ դիֆերենցված դրույքաչափեր, որոնց մեծությունը կախված է ընկերության տարեկան եկամտի մեծությունից: Դրույքի նվազումը ՓՄՁ համար կարգավորվում են ինչպես կառավարության, այնպես էլ տեղական իշխանությունների կողմից: Գերմանիայում գոյություն ունի ԱԱՀ և եկամտահարկի ռեզեսիվ աճ: Հարկային լծակները ՓՄՁ-ների համար հանդիսանում են զարգացման, խրթանման միջոց և ստեղծում են նոր կապիտալ ներդրումներ: ԱՄՆ-ում այն ծախսերը, որոնք իրագործվում են գիտության և տեխնիկայի զարգացման նպատակով, 65%-ով ազատվում են հարկերից: Արտոնյալ ռեժիմը ՓՄՁ-ին հնարավորություն է տալիս իրականացնելու անընդհատ արտադրական գործընթաց, թարմացնել արտադրատեսակները: Բացի հարկային արտոնություններից, այս երկրներում կառավարության կողմից որոշակի ֆինանսական օգնություն է տրամադրվում սուբսիդիաների և տրանսֆերտների տեսքով:

<sup>303</sup> Մարգարյան Հ., Մասնավոր ձեռնարկատիրական գործունեության արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում, ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, #14-5, մարտ-ապրիլ, 2005, էջ 51

Ջարգացած երկրներում ՓՄՁ-ներին տրամադրվում է արագացված ամորտիզացիայի իրականացման հնարավորություն, որը հզոր լծակ է արտադրության զարգացման համար: Ավելի բարենպաստ պայմաններում ձեռնարկությունները հնարավորություն կունենան կուտակելու բավարար միջոցներ իրենց պահուստային ֆոնդում և չեն դիմի բանկերին կարճաժամկետ վարկեր տրամադրելու համար: Արևմտյան երկրների փորձը վկայում է, որ վարկային, հարկային և ամորտիզացիոն քաղաքականությունների ճիշտ զարգացման դեպքում հնարավոր է բավականին կարճ ժամանակահատվածում հասնել նկատելի հաջողությունների:

Մարզերում ՓՄՁ զարգացման առաջնային ուղղություններից կարող է դառնալ արհեստագործությունը: Հայաստանում արհեստագործությունը հարուստ է տեքստիլ, կարի, կաշվի-կոշիկի, քարի (նաեւ թանկարժեք եւ կիսաթանկարժեք) մշակման, ձեռագործ գորգագործության, փայտի փորագրության, հախճապակու, ճենապակու, թանկարժեք եւ կիսաթանկարժեք մետաղներից զարդերի արտադրության եւ գեղանկարչության բնագավառում: Արվեստի նմուշները, հատկապես հուշանվերները, ունենալով ազգային դիմագիծ, նաև պետք է կազմեն զբոսաշրջության զարգացման քաղաքականության և ռազմավարության բաղկացուցիչ մաս: ՀՀ կառավարության դերն այստեղ կայանալու է նրանում, որ խրախուսի արհեստագործական «կլաստերների» ստեղծումն ու զարգացումը:

ՀՀ-ում ՓՄՁ զարգացման կարևոր ուղի է հանդիսանում պետական երաշխիքներով համատեղ ձեռնարկությունների հիմնադրումը, որոնք հիմնականում կնպաստեն ՀՀ-ից արտահանվող ապրանքների և ծառայությունների ծավալների աճին, ինչպես նաև նորագույն տեխնիկայի, տեխնոլոգիայի և արդյունավետ մեքենաների ներդրմանը:

ՓՄՁ-երը կարող են օգտագործել նաև Հայաստանում պարապուրդի մատնված արտադրական հզորությունները, վերագործարկել թերբեռնվածությանը աշխատող ձեռնարկությունների (հիմնականում խոշոր) ոչ բազային արտադրական հզորությունները: Փոքր և միջին արտադրությունների խրախուսմանն ու զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացման արդյունքում տեղի կունենա առևտրի ոլորտից ֆինանսական միջոցների մի մասի հոսք արտադրության ոլորտ<sup>304</sup>:

<sup>304</sup> Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք 3 օգոստոսի 2000 թվականի N 32

### **Արժրունի ՎԱՐԴԱՆՅԱՆ**

#### **Ձեռնարկատիրական գործունեության և դրա ենթակառուցվածքների կայացումը ՀՀ-ում. վիճակագրություն**

*Բանալի բառեր ձեռնարկատիրություն, էվոլյուցիա, կայացում, սուբյեկտ, ՀՆԱ:*

Ժամանակակից շուկայական տնտեսությունում փոքր ու մեծ ձեռնարկատիրությունը հանդիսանում է տնտեսական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը, որն էական դեր է խաղում տնտեսության կայունության և դինամիկ զարգացման գործում: ՓՄՁ հատվածը հանդիսանում է ցանկացած զարգացած տնտեսական համակարգի անբաժանելի և օբյեկտիվորեն անհրաժեշտ տարրը, առանց որի տնտեսությունն ու հասարակությունն ամբողջությամբ չեն կարող գոյություն ունենալ և զարգանալ:

### **Арцруни ВАРДАНЯН**

#### **Предпринимательская деятельность и становление ее инфраструктуры в РА: статистика**

*Ключевые слова: предпринимательство, эволюция, рост, субъект, ВВП*

В современной рыночной экономике малые и крупные предприятия являются одним из важнейших компонентов экономической системы, который играет важную роль в устойчивости и динамичном развитии экономики. Сектор МСП является неотъемлемым и объективным элементом любой развитой экономической системы, без которой экономика и общество не могут существовать и развиваться полностью.

### **Artsruni VARDANYAN**

#### **Entrepreneurial activity and formation of its infrastructure in RA: statistics**

*Key words: business, evolution, growth, subject, GDP.*

In a modern market economy, small and large enterprises are one of the most important components of the economic system, which plays an important role in the sustainability and dynamic development of the economy. The SME sector is an inalienable and objective element of any developed economic system, without which the economy and society can not exist and develop completely.

## ՖՐԱՆԶԱՅՁԻՆԳՐ Դ ԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### Ռոբերտ ԲԱԲԱՅԱՆ

ՀՊՏՀ Կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոնի ասիստենտ,  
տնտեսագիտության թեկնածու

Բանակի բառեր. ֆրանչայզինգ, իրավական համաձայնագիր, բիզնես միջավայր,  
իրավապայմանագրային հարաբերություններ, ֆրանչայզեր, ֆրանչայզի

«Ֆրանչայզինգ» բառը առաջացել է ֆրանսիական «fran-chise» բառից, ինչը նշանակում է արտոնություն, լիցենզիա, հարկից ազատում<sup>305</sup>: Ֆրանչայզինգը գործարարության կազմակերպման տեսակ է, գործարարական գործարարության առանձնահատուկ համակարգ, ուր ապրանքների և ծառայությունների շուկայում բարձր հեղինակություն ունեցող ֆիրման (ֆրանչայզերը) մյուս կողմին՝ ֆիրմային (ֆրանչայզի) է հանձնում սեփական արտադրանքը, մատուցվող ծառայությունը, և կոմեցիոն իրավունքը: Ֆրանչայզին պարտավորվում է այդ ապրանքը, ծառայությունը վաճառել ֆրանչայզերի կողմից բիզնեսի վարման նախօրոք սահմանված օրենքներով և կանոններով: Փոխարենը ֆրանչայզին իրավունք է ստանում օգտագործելու այդ ընկերության անունը, հեղինակությունը, արտադրանքն ու ծառայությունները, մարքեթինգային տեղեկատվական տեխնոլոգիաները: Ֆրանչայզինգին հատուկ են ներքոնշյալ առանձնահատկությունները

✓ Ֆրանչայզերը բացառիկ իրավունքներ ունի՝ ապրանքային նշանի, ֆիրմային ռճի, պատենտի, նոու-հաուի, իդեաների, հեղինակային իրավունքների և նմանատիպ իրավունքների,

✓ Ֆրանչայզերը որոշակի պայմաններով փոխանցում է սեփական իրավունքները ֆրանչայզին: Ֆրանչայզին իր գործունեությունը ծավալում է ֆրանչայզերի ապրանքանիշի ներքո՝ կիրառելով ֆրանչայզերի հեղինակությունը և համբավը,

✓ Ֆրանչայզերը հանդես է գալիս եզակի թվով, իսկ ֆրանչայզները, որոնք գործում են իրավունքների փոխանցման պայմանագրերով, կարող են լինել մի քանիսը,

<sup>305</sup> Տե՛ս Руденко А., «Франчайзинг. Новости» // Свой бизнес. 2003. №8, էջ 2-9:

✓ Ֆրանչայզերը ապահովում է ֆրանչայզին օգնության զանազան ձևերով և օգտվում է ֆրանչայզիի գործունեությունը կարգավորման իրավունքով,

✓ Ֆրանչայզին կատարում է նախօրոք որոշված որոշակի վճարումներ՝ ֆրանչայզերի իրավունքների կիրառման համար:

Ֆրանչայզինգը կարող ենք դիտել նաև որպես մի համաձայնագիր, որի ընթացքում արտադրողը տրամադրում է անկախ գործարարներին (մանրածախ առևտրականին) բացառիկ իրավունքներ սեփական արտադրությունը կամ ծառայությունը նշված տարածքում տարածելու համար նրա համար, որ ֆրանչայզերը կպարտավորվի պահպանել արտադրության ամբողջ տեխնոլոգիան<sup>306</sup>: Ֆրանչայզինգը, կախված ուղղվածությունից, լինում է հիմնականում չորս տարբեր տեսակի.

1. Ապրանքային կամ առևտրային ֆրանչայզինգ, որը հանդիսանում է ամենատարածված ֆրանչայզինգի տեսակն աշխարհում և որը ներկայացնում է ֆրանչայզիի կողմից ֆրանչայզերի արտադրած և ինչ-որ ձևով ֆրանչայզերի առևտրային նշանով դրոշմված ապրանքների վաճառք:

2. Արտադրական ֆրանչայզինգ, որը որոշակի արտադրատեսակի արտադրանքի կազմակերպման ամենաարդյունավետ ձևն է և տիրապետում է արտադրանքի գաղտնիքին, հունքին և պատրաստի արտադրանքի պատենտավորված տեխնոլոգիաներին:

3. Ծառայության ֆրանչայզինգ, որը հանդիսանում է ապրանքային և առևտրային ֆրանչայզինգների միաձուլումը, այսինքն՝ ֆրանչայզին ունենում է իրավունք իրականացնելու որոշակի տեսակի գործունեություն ֆրանչայզերի առևտրային նշանի ներքո:

ՀՀ բիզնես միջավայրում ֆրանչայզինգային գործունեությունը հանդիսանում է ավելի նոր գործունեության ձև, ուստի զարգացած երկրներում այն արդեն հարյուր տարվա կիրառվման պատմություն ունի: Միջազգային փորձի վերծրությունները ցույց են տալիս են, որ եվրոպական երկրներում ֆրանչայզինգային գործունեություն իրականացնող ֆիրմանների միայն 15%-ն է իր գործունեություն դադարեցնում, իսկ ԱՄՆ-ում միայն 5%-ը<sup>307</sup>: Այսինքն, ֆրանչայզինգը նվազեցնելով ձեռնարկատիրական ռիսկերը, օժանդակում է ՓՄՁ ոլորտին, ինչը ՀՀ-ում հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության առաջնորդման հիմնական ու նպատակային ուղղություններից մեկը:

<sup>306</sup> Տե՛ս. Фулоп К., Франчайзинг. Маркетинг. СПб.: Питер, 2002, էջ 7 – 19:

<sup>307</sup> Zinchak, E.V., 2012. Identification and analysis of trends in franchising based on the international rankings of franchises. Finance and Credit, 46(301): 1-14.

Մեր երկրում ֆրանչայզինգային բիզնես ուղղությունը ի հայտ է եկել 1990-ական թվականներին: Սակայն ժամանակակից հայկական բիզնես միջավայրի զարգացումը դժվարանում է կոմերցիոն ռիսկերի պատճառով: Ֆրանչայզինգի վրա հիմնված գործարարության կազմակերպումը զգալիորեն կրճատում է ձեռնարկատիրական ռիսկերը, քանի որ նման գործունեությունը հանդիսանում է արդեն մշակված և սեփական օգտակարությունը ցույց տված բիզնես նախագիծ: Այսօր արդեն Հայաստանում գործում են Պոլմա, Օրանժ Էլեֆանթ, Մանգո, Պիցցա Հատ, Ալդո, Ռեդիսոն Բլու, Ջառա, Պեպսի, Կոկա-Կոլա և այլ ապրանքանիշերով ֆրանչայզինգային գործունեություն ծավալող ներկայացուցչություններ: Նման բրենդները ՀՀ տնտեսության և բիզնես միջավայրում ընկալվում են որոշակի բրենդ արտադրող կամ ուժեղ բիզնեսի հետ, ովքեր ունեն բարձր հեղինակություն, ապահովելով ապրանքների և ծառայությունների բարձր որակը: Ֆրանչայզինգի պայմանագիրը ՀՀ օրենսդրությամբ առաջին անգամ նախատեսվել է 1998թ. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով<sup>308</sup>: Նախ ֆրանչայզինգի պայմանագրի վերաբերյալ իրավակարգավորումները նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 969 հոդվածով: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 970 հոդվածի՝ ֆրանչայզինգի պայմանագիրը կողմերի մեջ պետք է կնքվի գրավոր ձևով, հակառակ դեպքում այն առոչինչ է: Այն գրանցում է պայմանագրով որպես իրավատեր հանդես եկող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը գրանցած պետական մարմինը: Եթե իրավատերը՝ որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր գրանցված է օտարերկրյա պետությունում, համալիր թույլտվության պայմանագիրը գրանցում է որպես օգտագործող հանդես եկող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը գրանցած պետական մարմինը:

Օրինակ ՀՀ-ում որևէ ընկերություն ֆրանչայզինգային պայմանագիր կնքելու համար պետք է նախ ձեռք բերի տվյալ ֆիրմայի պահանջները: Որպես օրինակ կարող ենք ասել, «Cinnabon» ընկերությունն ՀՀ-ում իր օգտագործողին՝ «Cinnabon Armenia» ընկերությանը, առաջին հերթին փոխանցել է իր տեխնիկական և առևտրային փաստաթղթերը, տրամադրել է պայմանագրով վերապահված իրավունքների իրականացման համար այլ ինֆորմացիա, ապա հայկական կողմը այդ ամենից հետո նոր իրեն իրավունք է վերապահել այդ իրավունքների օգտագործումը և գործածումը: Դրանից հետո հայկական կողմին է հանձնվել պայմանագրով նախատեսված թույլտվությունները (լիցենզիաները)՝ ապրանքային նշանը, սպասարկման մակարդակը, աշխատակիցների վերապատրաստման աստիճանի գնահատման մակարդակը: Այնուհետև պայմանագրի կնքումից հետո հայկական կողմը պարավորվել է

<sup>308</sup> ՀՀ Քաղաքացիական օրենսգրք, 1998, գլուխ 53, հոդված 969:



Ֆրանչայզակալի օգտագործման իրավունքը կիրառել և ֆրանչայզերին վըճարել է նախատեսված գումարը նրա ապրանքային նշանի ներքո գործունեության ծավալման համար: Ըստ կնքված պայմանագրի՝ ֆրանչայզերի պարտականությունն է հանդիսանում օգտագործողին տեխնիկական և խորհրդատվական օգնության մշտական տրամադրումը, որի մեջ է մտնում նաև աշխատուժի ուսուցման ու որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը: Ֆրանչայզերի պարտականություններից է նաև վերահսկել օգտագործողի կողմից արտադրվող ապրանքների, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների որակը: Վերահսկողության պայմանների մասին իրավատերը պարտավոր է տեղեկացնել օգտագործողին մինչև պայմանագրի կնքումը, որը կատարվում է շահագործման փաստաթղթերի և տեղեկատուների միջոցով:

Իսկ ահա ֆրանչայզին, ըստ կողմերի միջև կնքված պայմանագրի, պարտավոր է ապահովել իր կողմից արտադրվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների որակի համապատասխանությունը իրավատիրոջ աշխատանքների որակին: Ֆրանչայզի պարտականությունների մեջ է մտնում նաև լրացուցիչ ծառայությունների մատուցումը, որը սպառողները կստանային, եթե օգտվեին հենց ֆրանչայզից:

ՀՀ-ում իրականացվող բիզնեսի ուղղություններից մեկը ներդրումային միջավայրի ամրապնդումն է՝ ներդրողների համար լավ միջավայրի ստեղծումը: Վերջին տարիներին ՀՀ-ում միջազգային բրենդները իրենց գործունեությունը զարգացնում են բավական արագ, ինչը պայմանավորված է նաև ֆրանչայզինգի տարածումով, ինչը մեծ ազդեցություն ունի տնտեսության վրա: Ֆրանչայզինգային գործունեության համար ՀՀ-ում կարող ենք դիտարկել առավելությունների 5 յուրահատկություններ: Այսպես.

- նախ ֆրանչայզինգը առաջ է քաշում հավելյալ դրամական միջոցներ գործարարության ընդարձակման և դիրքերի ամրապնդման համար: Եթե որևէ ֆիրմա փորձում է զարգանալ ազգային, տեղական և միջազգային շուկաներում, ապա դա անհրաժեշտություն է առաջացնում հավելյալ դրամական միջոցներ ներդրել բիզնես նախագծի իրականացման համար:

- ֆրանչայզիները հավելյալ ծախսեր են կատարում ֆրանչայզերների կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց:

- ֆրանչայզինգը քայլեր է անում նպատակային նոր շուկաներում արագ ընդարձակվելու, առկա շուկայում իր դիրքերն ամրապնդելու համար:

- ֆրանչայզինգը վերջնական սպառողների համար հնարավորություն է տալիս ավելի մեծ պատկերացում ունենալ արտադրանքի և ծառայություններ մասին՝ հիմնականում զովագրի և պրոմո ակցիաների միջոցով:

• Ֆրանչայզինգի արդյունավետությունը նոր բիզնես հայեցակարգի ստեղծումն է՝ ՀՀ բիզնես միջավայրում կախված շահութաբերությունից:

Իսկ ահա ֆրանչայզինգային գործունեության համար ՀՀ-ում կարող ենք դիտարկել հետևյալ թերությունների դիրքերը.

• Ֆրանչայզիի հետ հարաբերությունները ավարտելու անհնարինությունը, որը չի հետևում համակարգի կանոններին: Ֆրանչայզինգի պայմանագիրը որոշում է ֆրանչայզիի և ֆրանչայզերի միջև կապերի համակարգը:

• Ֆրանչայզին ֆրանչայզերի աշխատողը չէ, նա տվյալ երկրում հանդես է գալիս որպես տվյալ բիզնեսի տիրապետող:

• Ելնելով ֆրանչայզինգային պայմանագրի առանձնահատկություններից՝ ֆրանչայզին պարտավոր է հետևել պայմանագրի այն կանոններին, որոնք վերաբերում են բիզնեսում կատարվող ամենօրյա գործառնություններին և ֆրանչայզերի ապրանքային նշանի օգտագործմանը:

Ֆրանչայզինգի զարգացման համար առկա են հետևյալ հիմքերը՝

• Ֆրանչայզինգային գործունեությունը ՀՀ-ում կարևոր պայման է արտերկրում հայրենական արտադրողների առաջնիման համար:

• Երկրորդ դեպքում սա կհանդիսանա փոքր ձեռնարկատիրության զարգացման նախադրյալ, որի սուբյեկտներին պետք է բիզնեսի աջակցություն, մարքեթինգային տեղեկատվության ապահովում, իրավական դաշտի տեղեկացվածության բարձրացում, զովագրային աջակցություն:

• Երրորդ դեպքում, ֆրանչայզինգը, հանդիսանալով իրավական նորմերի համակարգ, պահանջում է որոշակի իրավական նորմեր և դրանց կիրառման կատարելագործում, որպեսզի գործընկերային կապերի համակարգերը հնարավորություն ունենան կատարյալ իրացվելու:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ֆրանչայզինգը լիցենզավորման զարգացած ձև է, որի ընթացքում մի կողմը մյուս կողմին հատուցման իրավունք է տալիս գործունեություն ծավալելու իր անունից՝ նպաստելով շուկայի ընդլայնմանը: Այն մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր տնտեսության զարգացման և ամրապնդման գործում: Նման գործունեության ձևով բազում ֆիրմաներ զարգացել և ընդլայնել են իրենց բիզնես ոլորտը: Ֆրանչայզինգի մշտական աճը նկատելիորեն կշարունակվի ամբողջ աշխարհում: Ֆրանչայզինգային իրավապայմանագրային հարաբերություններն աստիճանաբար զարգանում են ՀՀ-ում, սակայն այս առումով դեռևս չկա միասնական պետական մշակված քաղաքականություն՝ առանձին ոլորտների համաշխարհային առաջատար ֆրանչայզինգային կազմակերպությունների հետ համագործակցելու համար: Մշակելով նմանատիպ մեխանիզմներ և սխեմաներ, ֆրանչայզինգային հիմունքներով կարելի է ստեղծել բավականաչափ լուրջ միջավայր՝ ՀՀ բիզնես ոլորտի զարգացման համար: Այսօր ՀՀ-ում խթանել ֆրանչայզինգային գործունեության հա-

մագործակցությունը, հնարավոր է միայն արդյունավետ մշակված արդյունաբերական քաղաքականություն վարման արդյունքում, ինչպես նաև փոքր բիզնեսին աջակցություն ցույց տալու միջոցով:

### **Ռոբերտ ԲԱԲԱՅԱՆ**

#### **Ֆրանչայզինգը Հայաստանի Հանրապետությունում**

Բանալի բառեր. ֆրանչայզինգ, իրավական համաձայնագիր, բիզնես միջավայր, իրավապայմանագրային հարաբերություններ, ֆրանչայզեր, ֆրանչայզի:

Իրացման ամենաօգտակար ուղղություններից մեկը, որով արտադրանքը կամ որոշակի ծառայությունները ունենում են մեծ հնարավորություն ընդարձակվելու թե՛ երկրի ներսում, թե դրանից դուրս, հանդիսանում է ֆրանչայզինգը: ՀՀ տնտեսական համակարգում ֆրանչայզինգը համարվում է ավելի արդի հասկացություն, քանի որ այն զարգացած երկրներում կիրառվել է ավելի վաղ և ունի հարյուրամյակի պատմություն, ինչպես նաև կիրառվում է սպառողների շրջանակներում ապրանքներով կամ մատուցվող ծառայությունների տրամադրման գլխավոր հնարավորություններից մեկը:

### **Роберт БАБАЯН**

#### **Франчайзинг в РА**

*Ключевые слова: франчайзинг, правовое соглашение, бизнес среда, договорные отношения, франчайзер, франчайзи*

Одним из самых полезных направлений реализации, благодаря чему производство или определенные услуги приобретают возможность расширить сферу своей деятельности внутри своей страны или за ее пределами является франчайзинг. В экономической системе РА франчайзинг имеет более современное значение, так как в развитых странах он получил свое применение еще с давних времен и имеет столетнюю историю, а также применяется в качестве одного из важнейших возможностей по предоставлению услуг или товаров в рамках потребителей. Одним из особенностей деятельности франчайзинга является то, что в партнерских отношениях стороны имеют неоспоримые преимущества для расширения своей деятельности и в дальнейшем его развитии.

### **Robert BABAYAN**

#### **Franchising in RA**

*Key words: franchising, legal consent, business area, contractual agreement, franchisor, franchisee*

One of the most useful of the directions of implementation, whereby production or certain services acquire the opportunity to expand the scope of their activities either inside their own country or outside it, is franchising. In the economic system of RA, franchising has a more modern meaning, since in developed countries it has its application for a long time and has a hundred-year history, and is also used as one of the most important opportunities to provide services or goods within consumers. One of the peculiarities of the franchising activity is that in the partner relations the parties have undeniable advantages for expanding their activities and further developing it.

**ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ  
ՀԱՀՈՒԹԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ «ՀԱՄԱՆՄԱՆ ԽՄԲԵՐԻ»**

**Լևոն ԱԼԻՄԱՆՅԱՆ**

ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. վարկային կազմակերպություն, կապիտալի շահութաբերություն, կապիտալի բազմապատկիչ, Ղյուպոն բանաձև, «համանման խմբեր»

Վարկային կազմակերպությունների ֆինանսական կայունության գնահատման նոր մոտեցումներից մեկը «համանման խմբերի» կիրառումն է<sup>309</sup>: «Համանման խմբեր» առանձնացնելիս որպես չափորոշիչներ են վերցվել վարկային կազմակերպությունների լներիջը՝ հաշվարկված որպես ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերություն, և տեղաբաշխված վարկերի կառուցվածքը՝ տարանջատելով ըստ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Խմբավորված կազմակերպությունների ֆինանսական գործունեության արդյունավետությունը գնահատելու համար մեր կողմից հաշվարկվել են դրանց կապիտալի շահութաբերությունները (ROE) և բացահայտվել են դրանց տարրերը՝ օգտագործելով Ղյուպոն մոդելը:

Այս ուսումնասիրության խնդիրներից են «համանման խմբերում» ներառված վարկային կազմակերպությունների ֆինանսական արդյունավետության էմպիրիկ գնահատման իրականացումը, դրանց ֆինանսական արդյունավետության համեմատումը, տարանջատված փոփոխականների միջև առկա կորելյացիայի գնահատումը: Վերլուծվող ցուցանիշները վերցված են 2015 և 2016 թվականների տարեկան հաշվետվություններից ժամանակահատվածի համար՝ հրապարակված համապատասխան կազմակերպությունների պաշտոնական կայքերում: Ղյուպոն մոդելը կիրառվում է ուսումնասիրելու համար բաղկացուցիչ փոփոխականների ազդեցությունները, ինչն իր հերթին

<sup>309</sup> Լևոն Ալիխանյան, «Համանման խմբերի» առանձնացումը՝ ըստ ՀՀ վարկային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների», Ֆինանսներ և Էկոնոմիկա, 5-6 (201-202), 2017,

թույլ կտա կատարել ուսումնասիրության առջև դրված խնդիրները:<sup>310</sup> Կապիտալի շահութաբերությունը (ROE) ամենից հաճախ օգտագործվող շահութաբերության ցուցանիշներից է, որը չափում է կառավարման արդյունավետությունը բաժնետերերի համար եկամուտների ապահովման հարցում: Ներդրողները օգտագործում են այս ցուցանիշը հասկանալու համար թե արդյոք ընկերությունը շահութաբեր և արդյունավետ կառավարվող է թե ոչ: Կապիտալի շահութաբերությունը զուտ շահույթն է՝ բաժանած բաժնետիրա-կան կապիտալի վրա: ROE-ի երեք հիմնական խթաններն են վաճառքների, շահույթի սահմանների և պարտքի բարձր մակարդակները, որոնցից յուրաքանչյուրը կարող է բերել ROE-ի աճի: ROE-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ROE = \frac{Չուտ \text{ Շահույթ}}{Կապիտալ}: \quad (1)$$

ROE-ի հայտարարը հնարավոր է վերցնել կամ ժամանակաշրջանի վերջի դրությամբ, կամ միջինացված ժամանակաշրջանի համար: Վերջինս հատկապես իմաստ ունի հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվարկներում կիրառվող ֆինանսական արդյունքների հաշվետվության տարրերը նկարագրում են ամբողջ ժամանակաշրջանը և ոչ միայն դրա վերջին պահը: Տվյալ աշխատանքում կիրառվել է 2-րդ մոտեցումը: Դյուպոն բանաձև ունի հետևյալ տեսքը.

$$ROE = ԶՇՍ * ԱՇ * ԿԲ, \quad (2)$$

որտեղ՝  
 ROE-ն կապիտալի շահութաբերությունն է,  
 ԶՇՍ-ն զուտ շահույթի սահմանն է,  
 ԱՇ-ն ակտիվների շրջանառելիությունն է,  
 ԿԲ-ն կապիտալի բազմապատկիչն է<sup>311</sup>:  
 Գրառման մեկ այլ ձև է.

$$ROE = \frac{Չուտ \text{ Շահույթ}}{Հասույթ} * \frac{Հասույթ}{Ակտիվներ} * \frac{Ակտիվներ}{Կապիտալ}: \quad (3)$$

<sup>310</sup> Absanudiin Haider, “Comparative Analysis of Financial Efficiency of Bank of Baroda and HDFC Bank Using DuPont Model”, International Journal of Research in Management, Economics and Commerce, Volume 06, Issue 08, August 2016, Page 9-18.

<sup>311</sup> Գետազայում տեքստում և աղյուսակներում օգտագործվելու են այս նշանակումները.

Զնայած ընկերությունը կարող է մեծացնել ROE-ն մեծացնելով լներիջը, ընդհանրապես ավելի ցանկալի է մեծացնել մյուս երկու գործոնները<sup>312</sup>: Ընկերության զուտ շահույթի սահմանը (net income margin) ցույց է տալիս, թե մի միավոր ակտիվի դիմաց՝ արտահայտված դրամային ձևով, ինչ եկամուտ է ստացվում: ՋՇՍ-ը կախված է կազմակերպության կողմից դիմակայվող մրցակցությունից: Մրցակցային շուկայում սահմանը կլինի փոքր, մինչդեռ բարձր շահույթի սահմանը կվկայի, որ ընկերությունը ունի ապրանքի կամ ծառայության գնի բարձր վերադիր: Զուտ շահույթի սահմանը ընկերությունից ընկերություն տարբեր է: Ուստի կարևոր է համեմատել տնտեսության նույն ճյուղին պատկանող տարբեր ընկերությունների ROE-ները և այլ ֆինանսական ցուցանիշները, քանի որ նույն ճյուղում ներառված ընկերությունների համար գործում են միանման գործարար սահմանափակումներ:

Ակտիվների շրջանառելիությունը (asset turnover) նշանակում է, թե ինչքան հասույթ է ընկերությունը ստանում յուրաքանչյուր միավոր ակտիվի դիմաց: Սա օգնում է գնահատել կառավարման արդյունավետությունը: Բարձր զուտ շահույթի սահման ունեցող ընկերությունների մեծամասնությունը հակված են ունենալ ակտիվների ցածր շրջանառելիություն: Ընդհակառակը ցածր սահման ունեցող կազմակերպությունները հակված են ունենալու բարձր ակտիվների շրջանառելիության հարաբերակցություն, քանի որ շահույթը մեծացնելու համար նրանք մեծապես կախված են վաճառքների ծավալների բարձր մակարդակներից: Բարելավելով ակտիվների կառավարման քաղաքականությունները, ընկերությունը կարող է մեծացնել իր կապիտալի շահութաբերությունը:

Դյուպոն մոդելի վերջին և կարևոր բաղադրիչը կապիտալի բազմապատկիչը (equity multiplier) կամ ֆինանսական լներիջն է, որը օգնում է որոշել, թե ինչպես է ընկերությունը կարողանում շահել ակտիվների ֆինանսավորման համար պարտք վերցնելով: Կապիտալի բազմապատկիչի բարձր արժեքը նշանակում է բարձր ֆինանսական լներիջ, ինչն, իր հերթին, նշանակում է, որ ընկերությունը ակտիվները ֆինանսավորելիս ավելի շատ հիմնվում է փոխառնված միջոցների վրա: Կազմակերպությունը կարող է մեծացնել իր ROE-ն մեծացնելով կապիտալի բազմապատկիչը: Եթե ընկերությունը բարձր լներիջ ունի, ապա լրացուցիչ վարկավորումը ստեղծում է այնպիսի իրավիճակ, երբ այլևս հնարավոր չի լինի կատարել փոխատուների

<sup>312</sup> Z. Joe Lan, CFA, “Breaking Down ROE Using the DuPont Formula”, AAIJ Journal, pages (20-24), December, 2012.

նկատմամբ պարտավորությունները և սնանկացման հավանականությունը կլինի բարձր:<sup>313</sup>

Մեր վերլուծության համար վարկային կազմակերպություններին կհամապատասխանեցնենք տառաթվային արժեքներ այնպես, ինչպես ցույց է տրված աղյուսակ 1-ում և այդ նշանակումները կօգտագործենք ամբողջ տեքստում:

**Աղյուսակ 1.** Ուսումնասիրության շրջանակներում դիտարկված վարկային կազմակերպությունների ցուցակն ըստ խմբերի և դրանց հերթական համարները

Խումբ Ա

- Ա1 «Առաջին հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ
- Ա2 «ԳԼՈՐԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- Ա3 «ՄԱՅԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՍՊԸ
- Ա4 «Նոր Հորիզոն» ՈՒՎԿ ՍՊԸ
- Ա5 «Սեֆ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ
- Ա6 «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
- Ա7 «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ
- Ա8 «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ առևտրային կոոպերատիվ
- Ա9 «Ֆինքա» ՈՒՎԿ ՓԲԸ

Խումբ Բ

- Բ1 «ԳՈՒԴԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
- Բ2 «ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
- Բ3 «Էքսպրես Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ
- Բ4 «ԿԱՄՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ

Խումբ Գ

- Գ1 «ԱՐԵԳԱԿ» ՈՒՎԿ ՓԲԸ
- Գ2 «Գլաձոր» ՈՒՎԿ ՓԲԸ
- Գ3 «Կրեդիտ Կորպ» ՈՒՎԿ ՓԲԸ
- Գ4 «ՋԻ ԸՆԴ ԷՅ» ՈՒՎԿ ՍՊԸ
- Գ5 «Ֆիդես Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ

Խումբ Դ

- Դ1 «ԱԳԲԱ ԼԻՉԻՆԳ» վարկային կազմակերպություն ՓԲԸ
- Դ2 «ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ
- Դ3 «ՓՄՁ Ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ

Խումբ Ե

- Ե1 «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ

<sup>313</sup> Mehta Piyush Ramesh, "DuPont Analysis of Axis Bank", Asian Journal of Management Research, Volume 5, Issue 4, 2015, page 566-569.

Ե2 «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ

Աղյուսակ 2-ում և 3-ում առանձնացված ROE-ները ցածր են ֆինանսական շուկայի՝ վարկային կազմակերպությունների հատվածի ROE-ների մեղիանից՝ հաշվարկված տվյալ տարվա համար: Ի դեպ՝ վերջինիս հաշվարկի մեջ ներառվել են այնպիսի կազմակերպությունների ցուցանիշներ, որոնք ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել խմբավորման գործընթացից, սակայն դրանց համար հնարավոր է եղել հաշվարկել ROE-ները: 2015 թվականին ֆինանսական այս հատվածի ROE-ի մեղիանը եղել է 0.0687, իսկ 2016 թվականին՝ 0.0679-ը, հետևաբար այս ցուցիչը նվազել է 0.0008-ով: Ճյուղի մեղիանը վկայում է այն մասին, որ Ճյուղի կտրվածքով կապիտալի 6.8% շահութաբերությունը համարվում է նորմալ:

**Աղյուսակ 2.** Վարկային կազմակերպությունների կապիտալի շահութաբերությունները (ROE) և Ղյուպոն մոդելի տարրերը ըստ «համանման խմբերի» (2016թ.)<sup>314</sup>

	ROE	ՉՇՍ	ԱՇ	ԿԲ
<b>Խումբ Ա</b>				
1	0.1038	0.1516	0.1076	6.3645
2	0.1762	0.1398	0.1771	7.1191
3	0.0816	0.0974	0.2052	4.0805
4	(1.0464)	(0.5796)	0.2024	8.9188
5	0.1174	0.0839	0.2440	5.7354
6	(0.1006)	(0.0943)	0.1488	7.1708
7	0.5676	0.3452	0.3792	4.3360
8	(0.0952)	(0.0955)	0.1468	6.7877
9	0.0951	0.0657	0.2976	4.8638
<b>Խումբ Բ</b>				
1	(0.7818)	(0.3711)	0.4503	4.6788
2	(0.0543)	(0.0977)	0.2447	2.2684
3	0.0787	0.1526	0.1982	2.6014
4	0.0098	0.0187	0.2092	2.5210
<b>Խումբ Գ</b>				
1	0.1128	0.3523	0.2661	1.2029
2	0.0679	0.2138	0.1950	1.6285
3	0.0129	0.0518	0.1864	1.3357

<sup>314</sup> Բոլոր աղյուսակների տվյալները հաշվարկվել են՝ հիմք վերցնելով վարկային կազմակերպությունների պաշտոնական կայքերում հրապարակված տեղեկատվությունը:



4	0.0305	0.1766	0.1490	1.1581
5	0.0199	0.1115	0.1032	1.7261
Խումբ Դ				
1	0.0901	0.2015	0.1086	4.1192
2	0.1901	0.2450	0.1691	4.5876
3	0.1625	0.2043	0.1386	5.7381
Խումբ Ե				
1	0.0661	0.3369	0.0809	2.4273
2	0.0558	0.7684	0.0721	1.0073

Ա խմբում 2015 թվականի համեմատությամբ 2016-ին բոլոր կազմակերպությունների ROE-ները նվազել են, բացի 9-րդից (Աղյուսակ 2 և 3): Ա4<sup>315</sup>-ի, Ա6-ի և Ա8-ի ROE-ները ընդհանրապես բացասական են և կազմում են -1.0464, -0.1006, -0.0952 համապատասխանաբար: Դեռ ավելին այս թվերը նախորդ տարվա համեմատ նվազել են 0.7326-ով, 0.1194-ով և 0.0511-ով համապատասխանաբար: Ի տարբերություն սրանց, Ա7-ը աշխատում է 56.76% կապիտալի շահութաբերությամբ, որն առավելագույնն է ոչ միայն Ա խմբում, այլև բոլոր վարկային կազմակերպությունների շարքում: Միևնույն ժամանակ Ա4-ի վնասաբերությունը կազմում է 104.64%, ինչը նշանակում է, որ եթե տեղի չունենա կապիտալի զգալի համալրում վնասի կլանման համար կազմակերպությունը ամենայն հավանականությամբ կսնանկանա: Վերջինս վկայում է նշված կազմակերպությունում կառավարման ոչ միայն ցածր որակի մասին, այլև կատարյալ ձախողման մասին:

Բ խմբում կան երկու բացասական կապիտալի շահութաբերությամբ տարին ամփոփած կազմակերպություններ՝ Բ1-ը և Բ2-ը, և չորս կազմակերպությունից երեքի ցուցանիշները ցածր են ճյուղի միջինից՝ 0.0679-ից: Ի դեպ Բ1-ի վնասաբերությունը 2016 թվականին կազմել է 78.18%՝ 2015 թվականի 31.97% վնասաբերության հանդեպ աճելով 41.21%-ով:

Գ խմբում հինգ կազմակերպություններից ընդամենը մեկն է գերազանցում ճյուղի մեդիանը 0.0449-ով, սակայն չկան բացասական շահութաբերությամբ աշխատող կազմակերպություններ:

Դ խմբում 2016 թվականին բոլոր կազմակերպությունների ցուցանիշների արժեքները գերազանցել են ճյուղի մեդիանը: Ընդհակառակը, 2016 թվականին Ե խմբի կազմակերպությունների ROE-ները փոքր են եղել ճյուղի մեդիանից: Սա, հավանաբար, հետևանք է նրա, որ Ե խմբի կազմակերպու-

<sup>315</sup> Ա4-ը նշանակում է Ա խմբի 4-րդ կազմակերպությունը

թյունները գործում են պետական ծրագրերի շրջանակներում և ունեն յուրահատուկ առաքելություն, որն անհրաժեշտորեն չի հանգում շահույթի մաքսիմալացմանը:

**Աղյուսակ 3.** Վարկային կազմակերպությունների կապիտալի շահութաբերությունները (ROE) և Ղյուպոն մոդելի տարրերը ըստ «համանման խմբերի» (2015թ.)

1	2	3	4	5
	ROE	ԶՇՍ	ԱՇ	ԿԲ
<b>Խումբ Ա</b>				
1	0.1133	0.1465	0.1155	6.6990
2	0.2971	0.2234	0.1628	8.1690
3	0.0840	0.1341	0.1600	3.9167
4	(0.3138)	(0.2362)	0.2148	6.1824
5	0.1457	0.0950	0.2607	5.8847
6	0.0188	0.0179	0.1555	6.7631
7	0.6646	0.2873	0.4050	5.7118
8	0.0441	0.0435	0.1547	6.5474
9	0.0077	0.0055	0.2686	5.2004
<b>Խումբ Բ</b>				
1	(0.3197)	(0.3703)	0.4114	2.0987
2	(0.2526)	(0.3737)	0.2830	2.3887
3	0.0903	0.1747	0.2160	2.3922
4	0.0614	0.1046	0.2177	2.6963
<b>Խումբ Գ</b>				
1	0.1146	0.3243	0.2874	1.2297
2	0.1483	0.3734	0.2423	1.6391
3	0.0045	0.0187	0.1767	1.3573
4	0.0134	0.0775	0.1515	1.1393
5	0.0381	0.1934	0.1127	1.7484
<b>Խումբ Դ</b>				
1	0.0002	0.0003	0.1083	4.3351
2	0.1989	0.2199	0.1776	5.0954
3	0.1005	0.1063	0.1540	6.1350

Խումբ Ե				
1	0.0735	0.3144	0.0906	2.5810
2	0.0687	0.7679	0.0887	1.0079

Աղյուսակ 2-ի և 3-ի 2-րդ սյան տվյալները ավելի լավ հասկանալու համար պետք է անդրադառնալ դրանց հիմքը դարձած երեք գործոններին, որոնք ներկայացված են 3-րդ, 4-րդ և 5-րդ սյուներում: 2016 թվականի զուտ շահույթի սահմանի մեղիանը հավասար է 0.1398-ի, այսինքն՝ ֆինանսական շուկայի այս հատվածում գործող վարկային կազմակերպությունից ակնկալվում է, որ բոլոր ծախսերը հասույթից հանելուց հետո զուտ շահույթը կկազմի հասույթի 13.98%-ը: Այս ցուցիչը արձանագրել է աճ 2015 թվականի նկատմամբ աճելով 0.0057-ով:

Աղյուսակ 2-ի և 3-ի 3-րդ սյունը ցույց է տալիս, որ Ա4-ը 2016 թվականին իր ամբողջ եկամտի 57.96%-ի չափով վնաս է կրել: Ընդհակառակը, Ա7-ի օգուտը կազմել է իր հասույթի 34.52%-ը: Առաջինը ցածր է ճյուղի մեղիանից 0.7194-ով, իսկ երկրորդը գերազանցում է ճյուղի մեղիանը 0.2054-ով: Ա6-ն և Ա8-ը, իրենց հերթին, ունեն 0.0943 և 0.0955 զուտ շահույթի սահման համապատասխանաբար: Բ1 և Բ2 կազմակերպությունները ունեն բացասական զուտ շահույթի սահմանի մեծություններ. Բ1-ինը 0.3711 է ու անցյալ տարվա համեմատ աճել է 0.0008-ով, իսկ Բ2-ինը 0.0977 է ու 2015 տարվա համեմատ նվազել է 0.276-ով: Գ խմբում զուտ շահույթի սահմանի բոլոր ցուցանիշները դրական են միայն դրանցից երկուսը փոքր են ճյուղի մեղիանից: Սակայն ամենից լավ պատկերը Դ և Ե խմբերում է, որտեղ բոլոր կազմակերպությունների զուտ շահույթի սահմանները ոչ միայն բացասական չեն, այլև բարձր են ճյուղի մեղիանից: Հարկ են համարում հիշեցնել, որ վերջին երկու խմբերի մեջ ներառված կազմակերպությունների առանձնահատկությունը այն է, որ երկուսի մեջ էլ ներառված են առավելապես իրավաբանական անձանց ֆինանսավորող վարկային կազմակերպությունները: Հետևաբար, կարելի է որոշակի համոզվածությամբ ասել, որ գերակշռորեն իրավաբանական անձանց վարկավորող կազմակերպությունները ունեն ճյուղում ամենից լավ զուտ շահույթի մակարդակները:

Աղյուսակ 2-ի և 3-ի 4-րդ սյան մեջ ներառված բոլոր մեծությունները դրական են, քանի որ հասույթի համար թույլատրելի արժեքների տիրույթը  $[0; +)$  է: Սա իր հերթին նշանակում է, որ բոլոր կազմակերպությունները աշխատում են ինչ-որ չափի հասույթ ապահովելով: Նույնը ճիշտ է նաև 5-րդ սյան համար, քանի որ Ընդհանուր Ակտիվների և Ընդհանուր Կապիտալի հարաբերակցության արժեքը գործնականում միշտ լինելու է  $[1; +\infty)$  միջակայքում:

Հարկ է նշել, որ տեսականորեն հնարավոր է վերջին ցուցանիշի արժեքի ստացում (0;1) միջակայքում: Նման բան կարող է տեղի ունենալ, օրինակ, երբ հնարավոր կորուստների դիմաց ձևավորված պահուստները նվազեցնեն ակտիվների մեծությունը այնքան, որ Ընդհանուր Կապիտալն սկսի գերազանցել Ընդհանուր ակտիվները, իհարկե, Պարտավորությունների բավական փոքր լինելու պայմաններում:

5-րդ սյան խմբերի միջև կարող է նկատվել օրինաչափություններ, որոնք պատահական չեն: Հիշեցնենք, որ խմբերի առանձնացման երկու չափանիշներից մեկը հենց Լևերիջի մակարդակն էր՝ հաշվարկված որպես Ընդհանուր Կապիտալի և Ընդհանուր Ակտիվների հարաբերություն: Համապատասխանաբար, Ա խմբում ներառված են ցածր լևերիջ ունեցող կազմակերպությունները, Բ խմբում՝ միջին, և Գ խմբում՝ բարձր: Նույն ճիշտ է նաև Դ և Ե խմբերի համար: Դ խումբը ցածր լևերիջ ունեցողն է, Ե խումբը՝ բարձր իրավաբանական անձանց ֆինանսավորող կազմակերպությունների հատվածում:

Ա4 և Ա7 կազմակերպությունների վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ ROE-ների այդքան ցածր և բարձր լինելու պատճառները: Դրանց ROE-ների բանաձևերը կարելի ամփոփել հետևյալ կերպ.

$$-1.0464 = -0.5796 * 0.2024 * 8.9188, \text{ Ա4}$$

$$0.5676 = 0.3452 * 0.3792 * 4.3360, \text{ Ա7}$$

Դյուպոն բանաձևը ճյուղի ROE-ի համար հաշված բաղկացուցիչների մեդիանների արտադրյալներով կունենա հետևյալ տեսքը.

$$0.0729 = 0.1398 * 0.1950 * 2.6725, \text{ Ա}$$

Պարզ է դառնում, որ Ա4-ի խնդիրը կենտրոնացված է զուտ շահույթի սահմանի ոլորտում, քանի որ ակտիվների շրջանառելիության մեծությունը բավական մոտ է ճյուղի մեդիանին, իսկ լևերիջի բարձր լինելը տվյալ բանաձևում միայն խթան է ROE-ի մեծացման համար: Հետևաբար՝ Ա4-ի կառավարման մարմինները պետք է ձգտեն վերափոխեն իրենց ծախսային քաղաքականությունը: Ա-7-ը մյուս կողմից հաջող է հանդես գալիս բանաձևի բոլոր տարրերի ուղղությամբ՝ նշանակալիորեն գերազանցելով ճյուղի մեդիանները: Ներկայացնենք Բ խմբում ուշադրության արժան կազմակերպությունների Դյուպոն բանաձևերը:

$$-0.7818 = -0.3711 * 0.4503 * 4.6788, \text{ Բ1}$$

$$-0.0543 = -0.0977 * 0.2447 * 2.2684, \text{ Բ2}$$

Ինչպես Ա1-ի, այնպես էլ Բ1-ի և Բ2-ի դեպքում կազմակերպություններին չի հաջողվում զուտ շահույթի սահմանների առնվազն դրական մակարդակ-

ներ ապահովել: Ե խմբի մասին կարելի է ասել հետևյալը. Ե խմբի Կապիտալի շահութաբերությունը ցածր է ճյուղի մեդիանից, սրա պատճառը նրանց ցածր լևերիջն: Լևերիջի ցածր լինելը պայմանավորված է նրանով, որ այս կազմակերպություններում հիմնական մասնակիցը պետական կառավարման մարմիններն են և վերջիններս հետապնդում են ոչ այնքան կոմերցիոն նպատակներ, որքան սոցիալական: Կառուցենք վարկային կազմակերպությունների կապիտալի շահութաբերության, ՋՇՍ, ԱՇ, ԿԲ տվյալների շարքերի կոռելյացիոն մատրիցը (Աղյուսակ 4):

**Աղյուսակ 4.** Ըստ Դյուպոն բանաձևի տարրերի կառուցված կոռելյացիոն մատրից (2016թ.)

	ROE	ՋՇՍ	ԱՇ	ԿԲ
ROE	1.000000			
ՋՇՍ	0.778187	1.000000		
ԱՇ	-0.193612	-0.374140	1.000000	
ԿԲ	-0.341684	-0.553502	0.081782	1.000000

Կոռելյացիոն մատրիցը ցույց է տալիս, որ և կապիտալի շահութաբերության և ակտիվների շրջանառելիության միջև առկա է բացասական կոռելյացիա: Նման բանը սպասելի էր, քանի որ և ակտիվների շրջանառելիությունը և կապիտալի բազմապատկիչը կապիտալի շահութաբերությունը խթանող գործոններ են, հետևաբար՝ դրանց բարձր մակարդակները պետք է բերեն ավելի բարձր կապիտալի շահութաբերության և հակառակը: Կապիտալի շահութաբերության ու կապիտալի բազմապատկիչ բացասական կապը կարող է բացատրվել նրանով, որ ներգրավված փոխառությունների կառավարման արդյունավետությունը չի գտնվում բավարար մակարդակի վրա:

**Եզրակացություններ**

Ամփոփելով նշենք, որ հետազոտության ընթացքում ուսումնասիրվեցին «համանման խմբերի» կազմում ներառված վարկային կազմակերպությունների ROE-ները և այդ ROE-ների ամբողջական պատկերը տվող դրանց տարրերը՝ զուտ շահույթի սահմանները, ակտիվների շրջանառելիությունը և կապիտալի բազմապատկիչը Դյուպոն բանաձևի միջոցով: Դյուպոն բանաձևի օգտագործմամբ իրականացված վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ մի շարք կազմակերպություններ ձախողվում են ծախսերը պլանավորելիս: Վերջինիս արդյունքում զուտ շահույթի սահմանները բացասական արժեք են ստանում՝ բացասական դարձնելով նաև ROE-ն: Վերլուծության արդյունքում կարող ենք կատարել հետևյալ եզրահան-գումները.

1. Վերլուծության արդյունքում չարձանագրվեցին ROE-ների բաշխման օրինաչափություններ կազմված «համանման խմբերում», քանի որ Ա, Բ և Գ խմբերում պատկերը կամայական էր: Միակ օրինաչափությունը այն էր, որ իրավաբանական անձանց վարկավորման վրա շեշտը դրանց կազմակերպությունների շարքում (Դ և Ե) չկային բացասական ROE-ով աշխատող կազմակերպություններ, ի տարբերություն ֆիզիկական անձանց վարկավորման վրա կենտրոնացած կազմակերպությունների,

2. Կառուցված կոռելյացիոն մատրիցը ցույց տվեց բացասական կապի առկայություն կապիտալի շահութաբերության և ակտիվների շրջանառելիության և կապիտալի բազմապատկչի միջև:

Նշենք, որ ROE-ների բացասական արժեքները վտանգում են կազմակերպության ֆինանսական կայունությունը՝ անվստահություն առաջացնելով ներդրողների մոտ, ինչպես նաև վատթարացնում ճյուղի ընդհանուր պատկերը՝ նվազեցնելով ֆինանսական այս հատվածի գրավչությունը:

#### Լևոն ԱԼԻԽԱՆՅԱՆ

#### Վարկային կազմակերպությունների կապիտալի շահութաբերության վերլուծությունն ըստ «համանման խմբերի»

*Բանալի բառեր. վարկային կազմակերպություն, կապիտալի շահութաբերություն, կապիտալի բազմապատկչի, Ղյուպոն բանաձև, «համանման խմբեր»*

Կազմակերպության ֆինանսական վերլուծության հայտնի մոդելներից է Ղյուպոն մոդելը: Այն շեշտը դնում է կապիտալի շահութաբերության վրա, որն ուսումնասիրում են՝ տրոհելով բաղկացուցիչ մասերի: Այս հոդվածում Ղյուպոնի մոդելի միջոցով համեմատվում են ըստ «համանման խմբերի» առանձնացված վարկային կազմակերպությունների կապիտալի շահութաբերությունները և դրանց աճին նպաստող գործոնները:

#### Левон АЛИХАНИЯН

#### АНАЛИЗ РЕНТАБЕЛЬНОСТИ КАПИТАЛА “ПОХОЖИХ ГРУПП” КРЕДИТНЫХ ОРГАНИЗАЦИЙ

*Ключевые слова: кредитные организации, мультипликатор капитала, рентабельность капитала, формула Дюпон, “группы похожих организаций”*

Модель Дюпон является одной из известных моделей финансового анализа. Она основана на изучении отдельных составляющих рентабельности капитала. В этой статье сопоставляется рентабельность капиталов “похожих групп” кредитных организаций и факторы влияющие на их рост с помощью модели Дюпон.

#### Levon ALIKHANYAN

## ANALYSIS OF THE ROE INDICATORS OF CREDIT ORGANIZATIONS BY “THE PEER GROUPS”

*Key words: credit organizations, return on equity, equity multiplier, DuPont formula, “peer groups”*

The DuPont model is one of the well-known tools for financial analysis of a company. It emphasises the importance of the Return on Equity by breaking it down into components. In this article, a comparison is made between the credit organizations included in “peer groups” by focusing on the return on equity and factors contributing to its increase, using the DuPont model.

## RECOGNIZING CULTURES IN INTERNATIONAL SALES

**Reza ARMANPOUR**

PhD Student at European Regional Academy of Armenia

*Key words: English: Negotiation, Culture, interactive task, international business, Cultural Diversity, low and rich standard*

### ***Introduction***

Today, the people of the world are increasingly forced to interact, negotiate and understand other cultures. One country's culture has long been the main cause of the systematic differences in behavior as an important environmental factor. The disregard for cultural differences has been the cause of many commercial failures (Steenkamp, 2001; 30). However, when cultural differences are well understood and successfully managed, they can lead to competitive commercial operations and sustainable resources. Companies operating in international trade, due to the various cultural and national boundaries faced, should be familiar, also owing to diaspora (Manaseryan T., 2004) with the various ways, in which sales and business negotiations are conducted. This means that negotiators are interacting with people of cultures that are not homogeneous and must be able to provide different negotiation styles according to the situation (Simintiras and Thomas, 1998; 10).

### ***The Effect of Cultural Diversity on International Trade:***

Global companies are increasingly dependent on the effectiveness of business negotiations for their survival and growth. In search of opportunities in global markets, managers have been significantly involved in international trade talks. International negotiations are one of the most challenging tasks and managers spend more than 50% of their time on this (Reynolds et al., 2003; 236). As markets, competition and organizations become global, businessmen, politicians and consumers who form these institutions are also forced to interact, guide, negotiate and understand with other people's cultures. Working with people whose values and beliefs differ from you in terms of language and traditions can lead to curiosity and even costly business failures. As such, Baha'i's experiences of managers and politicians have been made clear that trade and politics are not

separate and that the intellectual domination of activity is separate from the particular beliefs and cultural values of a society. All social behaviors are realized in a particular context and deeply connected with values and beliefs. This means that the mismanagement of cultural differences has high risks. Neglecting or falsely guiding these differences can mean inability to protect employees, misinterpretation of the potential of international border unionism, inevitable mistakes in marketing, and failing to create sustainable sources of competitive advantage. Mismanagement in cultural differences may lead other successful organizations and managers to intercultural activities with impasse and inefficiency. But when cultural differences are managed successfully, it can lead to creative business operations, better and faster training in organizations, and the creation of sustainable resources for competitive advantage (Hulkin, 1998; 51).

***The role of sales negotiations in international trade:***

International trade has contributed significantly to the growth and growth of global trade. Companies operating in international trade, due to the various cultural and national boundaries faced, should be familiar with the various ways in which sales and commercial negotiations are conducted. This means that the negotiators are interacting with people of different cultures and, in order to succeed in the negotiations, must be able to provide different negotiation styles with respect to the situation (Simintiras and Thomas, 1998; 10). Obstacles to successful agreements in the intercultural trade negotiations are the most cultural, economic or legal barriers. In such cases, the parties understand the negotiation of their ethnic and racial backgrounds and their own experiences, and they often fail to understand why the negotiations failed. This indicates the lack of awareness and knowledge of the culture and the strange and unnatural expectations of the other side, which is considered as an obstacle to efficient and effective negotiations with people from other cultures. The success of intercultural negotiations depends on the ability to see issues from the standpoint and perspective of other people in the negotiation and understanding of cultural values and their backgrounds (Gulbro and Herbig, 1995; 19). Considering that international negotiations today are one of the most important and essential skills in any form of international trade, and on the other hand, given the significant growth of international trade at the global level, the ability and skill in negotiating international sales has a special significance and is considered as an important advantage (Simintiras and Thomas, 1998; 10). Most sales are linked to negotiation skills. The parties involved in the transaction need to agree on prices and other issues related to the sale. Marketing is dependent on transaction activity as well as the way in which the exchange is carried out. In the negotiations, two or more entities are linked to each other for an agreement. Although the price is one of the things most discussed, other issues such as contract completion time, the quality of the goods and services offered, the volume of purchases, liability and financial obligations, risk, promotion and product safety are also among other issues. Marketers who are in a negotiating and negotiating position



need some special attributes and skills to function effectively and efficiently. The most important of these skills are: planning skills and awareness of the nature and subject of negotiation, the ability to be accurate and fast under stressed and uncertain situations, effective listening skills, judgment and general intelligence, integrity, honesty, persuasion and tolerance. (Kotler, 2000; 638--639).

***Culture Effects on Intercultural Sales Talks:***

Նշված խնդիրները Հայաստանում արմատական բնույթ ունեն, այդուհանդերձ, երկիրը կարող է իրականացնել մեծ աշխատանք՝ այդ խնդիրներից խուսափելու և երկիրը ներդրումների տեսանկյունից գրավիչ դարձնելու համար: Ստորև ներկայացնենք մի շարք միջոցառումներ, որոնց միասնական իրականացման դեպքում երկիրը ձեռք կբերի ներդրումային գրավչություն՝

1. Իրավա-օրենսդրական համակարգի բարելավում և հստակեցում,
2. Ստվերային տնտեսության և կոռուպցիայի կրճատում և վերացում,
3. Ենթակառուցվածքային համակարգերի ստեղծում և զարգացում,
4. Մենաշնորհի դեմ պայքար,
5. Քաղաքական ռիսկերի նվազեցում,

6. Հայաստանի ներդրումային վարկանիշի բարձրացում:

Առանձնապես անհրաժեշտ է մշակել և ունենալ ճշգրիտ ներդրումային միջավայրը ներկայացնելու, տեղեկատվություն մշակելու և տրամադրելու համակարգ, որով ներդրողներին կարելի է բաժանել խմբերի և դրանց առանձնահատկություններից ելնելով, ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը և հնարավորությունները: Անհրաժեշտ է նաև առաջավոր տեխնոլոգիաների և նոու հաուների ներմուծմամբ, միջազգային փորձի փոխանակմամբ մշակել ներդրումային միջավայրի կատարելագործման համակարգ:

**Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ**

**ՀՀ-ում ներդրումների ներգրավման գործում խոչնդոտ գործոնները**

*Բանալի բառեր. ՕՈՒՆ, խոչնդոտ գործոններ, փնտրեսական շրջափակում, ներքին փոքր շուկա, կոռուպցիա*

Հայաստանը, լինելով տարածաշրջանով և բնակչության թվաքանակով փոքր երկիր, ունենալով բնական ռեսուրսների սահմանափակ քանակություն, տարածաշրջանային և աշխարհագրական դիրքի խնդիրներ, այդուհանդերձ, ունի մի շարք առավելություններ և հնարավորություններ օտարերկրյա ներդրողների համար գրավիչ, շահութաբեր և վստահելի լինելու համար: Այսօր արդեն ակնհայտ է փաստը, որ նույն աշխատուժը, սոցիալ-տնտեսական պայմաններից ելնելով կամ ձգտելով ստանալ որակով կատարված աշխատանքի դիմաց համապատասխան վարձատրություն, արտագաղթում է երկրից:

**Haykanush AYVAZYAN**

**Key obstacles to attract investments in RA**

*Key words: FDI, obstacle factors, economic blockade, domestic small market, corruption*

Armenia, being a small country with a region and population, having a limited number of natural resources, regional and geographical issues, however, has a number of advantages and capabilities for being attractive, profitable and trustworthy for the foreign investors.

**Айкануш АЙВАЗЯН**

**Препятствующие факторы привлечения инвестиций в РА**

*Ключевые слова: ПИИ, препятствующие факторы, экономическая блокада, внутренний небольшой рынок, коррупция*

Армения, будучи небольшой страной своей территорией и числом населения, имея ограниченное количество природных ресурсов, региональные и географические

проблемы, тем не менее, имеет ряд преимуществ и возможностей для того, чтобы быть прибыльной и заслуживающей доверие для иностранных инвесторов.

### ՕՈՒՆ-ԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՎՐԱ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ, ԷՄՊԻՐԻԿ ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

#### Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ

ԵՊՀ Տնտեսագիտության և միջ.տնտ.հար. ամբիոնի ասպիրանտ

ՕՈՒՆ, տնտեսական աճ, տնտեսաչափական մոդել, Էմպիրիկ վերլուծություն

ՕՈՒՆ-երի՝ տնտեսության վրա ունեցած ազդեցությունը բազմաթիվ տնտեսագետների ուսումնասիրության աղբյուր է: Տարիներ շարունակ ՕՈՒՆ-երի և տնտեսության միջև փոխկապակցվածությունը ոչ միայն կրել է հետազոտական բնույթ, այլև բազմաթիվ երկրներ առաջնորդվել են տնտեսության արդյունքերով և մշակել են դրանց վրա իրենց տնտեսական քաղաքականությունները: Նպատակ ունենալով դիտարել՝ ՕՈՒՆ-տնտեսական աճ փոխկապակցությունը, իրականացրել ենք Էմպիրիկ միջճյուղային հետազոտություն 87 երկրների համար՝ հետևյալ ուսումնասիրություններով.

**Հետազոտված տվյալների նկարագրությունը:** Տվյալները ձեռք են բերվել Համաշխարհային Բանկի տվյալների բազայից 87 զարգացող և զարգացած երկրների համար, ընդ որում դրանք դիտարկվել են որպես ներդրվող (dummy) փոփոխական: Զարգացող երկրների շարքում ընդգրկվել է նաև Հայաստանը: Ժամանակահատվածը ընտրվել է 2001-2016թթ.-ը: Ստորև ներկայացնենք տվյալների ամփոփ բնութագիրը՝

**Աղյուսակ 1.** Միջճյուղային տնտեսաչափական վերլուծության ցուցանիշների ընդհանուր բնութագիրը

Դիտումների քանակ 1392				
Փոփոխական	Միջին	Ստանդարտ շեղում	Մինիմում	Մաքսիմում



*ՕՈՒՆ-երի ամենամեծ ցուցանիշը՝ 451.7 Մալթայի ցուցանիշն է 2007թ.-ի համար, ամենափոքր	GDP	7.13	8.91	-14.73	63.94
	FDI	6.06	21.18	-43.46	451.71
	GCF	30.7	16.8	3.94	147.87
	PG	1.28	1.44	-1.91	17.31
	EGS	41.37	23.69	4.4	164.8
	Developing	.701	.45	0	1
	Developed	.29	.45	0	1

ցուցանիշը՝ Կիպրոսի ցուցանիշն է 2011թ.-ի համար

**Մեթոդաբանություն:** ՕՈՒՆ-տնտեսական աճ փոխկապակցվածությունը դիտարկելու համար ի սկզբանե ստուգվել է, թե որ մեթոդով պետք է վերլուծությունը անել: Վերջինս ստուգելու համար կիրառվել է Հաուսմանի թեստը: Մոդելի տեսակը որոշելուց հետո իրականացվել են մոդելի որակը և ճշգրտությունը ստուգելու հետազոտություններ՝ հետևյալ հերթականությամբ՝

1. Հաուսման թեստ
2. Բրոշ -Պագան Լագրանժ-Բազմապատկիչ թեստ
3. Պեսարանի թեստ
4. Սերիական կորելացման թեստ
5. Ռոբաստ

**Տնտեսական մոդել:** Մոդելը կառուցում ենք հիմնական արտադրական ֆունկցիայի միջոցով: Ենթադրենք արտադրության գործոնները և արտադրության տեխնոլոգիան տնտեսության մեջ սահմանում են թողարկվող արտադրանքի քանակը հետևյալ կերպ՝

$Y = f(K, L)$ , որտեղ  $Y$ -ը թողարկվող արտադրանքի քանակն է ( $ՀՆԱ$ ),  $K$ -ը՝ Կապիտալի մեծությունն է, և  $L$ -ը՝ աշխատուժի մեծությունն է:

Մոդելում ավելացնում ենք այն հիմնական ցուցանիշները, որոնք տնտեսական աճի մոդելներում և տեսություններում ևս դիտարկման ենթակա էին: Դրանք են՝ ՕՈՒՆ (FDI), ապրանքների և ծառայությունների արտահանումը (EGS) և երկրների երկու խմբի դասակարգումը՝ ըստ զարգացած և զարգացող երկրների խմբի (Develop):

$$Y = f(GCF, PG, FDI, EGS, Develop)$$

**Տնտեսաչափական մոդել:** Դիտարկելով վերը նշված արտադրական ֆունկցիան բազմակի ռեգրեսսիայի կոնտեքստում՝ ֆունկցիան տնտեսաչափական մոդելի տեսքով կլինի՝

$$Y_{it} = \beta_0 + \beta_1 (GCF_{it}) + \beta_2 (PG_{it}) + \beta_3 (FDI_{it}) + \beta_4 (PG_{it}) + \beta_5 (EGS_{it}) + \beta_6 (Develop_{it}) + \varepsilon_{it}$$

որտեղ՝  $Y$  = Տնտեսական աճ (ՀՆԱ աճ (տարեկան %)),

GCF = Համախառն կապիտալի կուտակում (ՀՆԱ մեջ, %),

PG = Բնակչության աճ (տարեկան %),

FDI = Օտարերկրյա ուղղակի ներդրումներ, զուտ ներհոսք (ՀՆԱ մեջ %),

EGS = Ապրանքների և ծառայությունների արտահանում (ՀՆԱ մեջ %),

Develop = ներդրվող (dummy) փոփոխական, այն ընդունում է 0 արժեք, երբ երկիրը զարգացող է և 1 արժեք, երբ երկիրը զարգացած է:

$\beta_0$ - հաստատուն փոփոխականն է, որ բնութագրում է տնտեսական աճը և չի ընդգրկվում մնացած հինգ գործոնների կողմից,

$\varepsilon$ - շեղումների մեծությունն է, i-երկիրը, t- տարին:

**Արդյունքներ:** Վերլուծությունը սկսելուց առաջ, նախևառաջ, իրականացվել է Հաուսմանի թեստը՝ ստուգելու համար արդյոք շեղումները կորելացված են ռեգրեսորների հետ: Ստացված արդյունքները վկայում են, որ գրոյական հիփոթեզը ժխտվում է և պետք է կիրառել պատահական էֆեկտներով մոդել: Ինչը նշանակում է, որ մոդելում երկրների միջև փոփոխությունը պատահական է և կորելացված չէ կախյալ և անկախ փոփոխականների հետ:

**Աղյուսակ 2.** Ֆիքսված թե պատահական: Հաուսման թեստ

Գործոններ	fixed	random	Difference	S.E.
FDI	.0180606	.0154014	.0026591	.0014345
GCF	.3991953	.3989079	.0002874	.0042898
PG	.0960302	.0355291	.0605011	.0543789
EGS	.0749385	.0459274	.0290111	.0104867

$$\chi^2(4) = (b-B)'[(V_b - V_B)^{-1}](b-B) = 7.90$$

**Prob > chi = 0.0954**

Ստուգելով մոդելի ճշգրտությունը՝ ի սկզբանե ստուգվել է երկրների միջև նշանակալի տարբերությունների առկայությունը: Լագրանժի բատմապատկիչ թեստի միջոցով երկրների միջև նշանակալի տարբերությունների դիտարկման ստուգումը ցույց է տվել, որ գրոյական հիփոթեզը ժխտվում է և հաստատվում է, որ երկրների միջև գոյություն ունի նշանակալի տարբերու-

թյուն, այսինքն ևս մեկ անգամ հաստատվում է պատահական էֆեկտներով մոդելի կիրառման անհրաժեշտությունը ( $Pr = 0.0000$ ):

**Աղյուսակ 3.** Բրոշ Պագան Լագրանժի բազմապատկիչ թեստ

$chibar2(01) = 1324.29$
$Prob > chibar2 = 0.0000$

Երկրների միջև շեղումների կորրելացումը ստուգելու համար իրականացվել է Պեսարանի թեստ: Թեստի միջոցով գծային փոխկապակցվածության ստուգումը ցույց է տվել, որ զրոյական հիփոթեզը ժխտվում է և հաստատվում է, որ երկրների միջև շեղումները կորրելացված են ( $Pr = 0.0000$ ):

**Աղյուսակ 4.** Պեսարանի թեստ

Pesaran's test of cross sectional independence = 36.501, $Pr = 0.0000$
Average absolute value of the off-diagonal elements = 0.301

Մոդելում սերիական կորելացման առկայությունը ստուգելու համար իրականացվել է Լագրամ-Մալթիփլայեր թեստ, որի արդյունքներով հաստատվել է զրոյական հիփոթեզը, այն մասին, որ մոդելում առկա է առաջին աստիճանի սերիական կորրելացում ( $F(1, 86) = 22.222$ ,  $Prob > F = 0.0000$ ):

**Աղյուսակ 5.** Լագրամ-Մալթիփլայեր թեստ

$H0$ : no first-order autocorrelation
$F(1,86) = 22.222$
$Prob > F = 0.0000$

Արդյունքում, ունենալով գծային փոխկապակցվածություն և սերիական կորրելացում, մոդելը կարիք ունի սահմանել ճշգրտված ստանդարտ շեղումների ցուցանիշներ: Արդյունքերը ներկայացված են ներքոնշյալ՝

**Աղյուսակ 6.** Սահմանված ռեգրեսսիոն մոդել (ճշգրտումից հետո)

Դիտումների քանակ = 1392  
 Խմբերի քանակ = 87  
 $Wald\ chi2(5) = 172.08$   
 $Prob > F = 0.0000$   
 Within R-squared = 0.4417

Variables	Coefficient****	Coefficient	STD.****	STD.	P-Value****	P-Value
FDI	.0154014	.0154014	.0081684	.0068589	0.059	0.025
GCF	.3989079	.3989079	.0342613	.0111745	0.000	0.000
PG	.0355291	.0355291	.1687919	.1367399	0.833	0.795

ԱՅԼԸՆՏՐՎԱՔ Գիտական հանդես

EGS	.0459274	.0459274	.0207504	.0119503	0.027	0.000
Developing	1.882515	1.882515	.9710873	.8844067	0.053	0.033
Հաստատուն փոփոխական (Constant)	-8.472476	-8.472476	1.360222	.9873997	0.000	0.000

\*\*\*-ով սահմանված են ճշգրտված ցուցանիշները

Ինչպես տեսնում ենք, փոփոխականների գործակիցները նույնն են մնում, սակայն մնացած արժեքները փոփոխվել են, քանի որ երբ կորելացման խնդիրը չի դիտարկվում, նշված արժեքները կարող են լինել ավելի փոքր, քան դրանք ճշգրտելուց հետո: Ճշգրտումից հետո փոփոխականների մեծ մասը կրկին նշանակալի է և մոդելը դառնում է ճշգրտված:

Համախառն կապիտալ ( $\beta_1$ ): Մեկ միավոր համախառն կապիտալի ավելացումը բերում է տնտեսական աճին 0.39 միավորով, երբ մնացած փոփոխականները մնում են հաստատուն:

Բնակչության աճ ( $\beta_2$ ): Բնակչության մեկ միավոր աճը հանգեցնում է 0.035 միավորով տնտեսական աճին: Դիտարկվող միջնուղային վերլուծությունում բնակչության աճի ազդեցությունը տնտեսական աճի վրա վիճակագրորեն ոչ նշանակալի է:

Օտարերկրյա ուղղակի ներդրումներ ( $\beta_3$ ): Օտարերկրյա ուղղակի ներդրումների մեկ միավոր աճը հանգեցնում է 0.015 միավորով տնտեսական աճին: Դա նշանակում է, որ մոդելում առկա է դրական փոխկապակցվածություն ՕՈՒՆ-երի և տնտեսական աճի միջև: Այսինքն՝ ՕՈՒՆ-երի աճը բերում է տնտեսական աճի ցուցանիշի ավելացմանը: Ընդ որում՝ ստացված ցուցանիշը վիճակագրորեն նշանակալի է:

Ապրանքների և ծառայությունների արտահանում ( $\beta_4$ ): Ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների 1 միավոր աճը կբերի 0.045 միավորով տնտեսական աճին:

Երկրների դասակարգման դեպքում ակնհայտ է դառնում այն հանգամանքը, որ այն դեպքում, երբ երկիրը զարգացող է, 1.882 միավորով մեծանում է տնտեսական աճի վրա դրական ազդեցության հավանականությունը, ընդ որում ստացված արդյունքը ևս վիճակագրորեն նշանակալի է:

Ինչպես մոդելի արդյունքներն են վկայում, ՕՈՒՆ-երը ունեն նշանակալի ազդեցություն տնտեսական աճի վրա, ընդ որում զարգացող երկրների դեպքում այդ ազդեցությունը կարող է ավելի մեծ լինել: ՀՀ-ն, լինելով զարգացող երկիր, ևս նշված դիտարկման հիմքում է և կարող է ՕՈՒՆ-երի ներգրավման քաղաքականության արդյունքում էականորեն բարելավել երկրի տնտեսությունը և ապահովել տնտեսական աճ:

### **Հայկանուշ ԱՅՎԱԶՅԱՆ**

#### **ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա երկրների օրինակով, էմպիրիկ միջճյուղային հետազոտություն**

*Բանալի բառեր. ՕՈՒՆ, տնտեսական աճ, տնտեսաչափական մոդել, էմպիրիկ վերլուծություն*

Ելնելով ՕՈՒՆ-երի ունեցած մի շարք դրական ազդեցություններից՝ այսօր երկրների մեծ մասը վարում է ՕՈՒՆ-երի խրախուսման և ներգրավման համար մշակված քաղաքականություններ: Տնտեսագիտական գրականության մեջ առանձնացվում են մի շարք հետազոտություններ, որոնք միտված են ուսումնասիրել ՕՈՒՆ-երի ազդեցությունը տնտեսական աճի վրա: Տնտեսագետների մի մասը իրենց աշխատանքներում ցույց է տալիս, որ ՕՈՒՆ-երը ունեն դրական ազդեցություն, իսկ մյուս մասը՝ բացասական:

### **Haykanush AYVAZYAN**

#### **FDI impact on economic growth in selected countries, empirical intersectoral analysis**

*Key words: FDI, Economic growth, Economic and econometric model, Data observation, Empirical analysis*

Based on the many positive effects of FDI, today most of the countries conducts clarified policies for the FDI encouragement and attraction. In the economic literature a number of researchers are separated that are focused on studying the impact of FDI on economic growth. Some economists have shown that FDI have a positive effect, others have shown that the impact is negative. Special emphasis is given to the comparative analysis of mentioned indicators in developing and developed countries.

### **Айкануш АЙВАЗЯН**

#### **Воздействие ПИИ на экономический рост на примере стран, эмпирическое исследование**

*Ключевые слова: ПИИ, экономический рост, экономическая и эконометрическая модель, аналитические данные, эмпирический анализ*

Исходя из ряда положительных эффектов ПИИ, большинство стран сегодня проводят политику, направленную на поощрение и привлечение ПИИ. В экономической литературе выделяется ряд исследований, нацеленных на изучение влияния ПИИ на экономический рост. Часть экономистов в своих работах отмечает, что ПИИ оказывают положительное влияние, а другая их часть - отрицательное. Отдельный сравнительный анализ указанных показателей проведен для развивающихся и развитых стран.

## **ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ**

**Հասմիկ ՓԱԼԱՆԴՈՒՋՅԱՆ**

ՀՊՄՀ Հոգեբանության ամբիոնի դասախոս

Բանալի բառեր. հարմարում, ռազմահայրենասիրական դաստիարակություն, նյարդահոգեկան կայունություն, տազնապայնություն, կյանքի իմաստավորվածություն

Հանրային կառավարման կարևոր ասպարեզներից է զինվորական ծառայության գործընթացի կազմակերպումն ու կանոնակարգումը: Զինվորական գործն իր բնույթով գործունեության բավականին բարդ և յուրօրինակ տեսակ է, որն բավականին խիստ պահանջներ է ներկայացնում նորակոչիկին: Կառավարման մեթոդների արդյունավետությամբ և անհատական խառնըլվածքով պայմանավորված՝ ոմանք արագորեն հարմարվում են բանակային կենսագործության պայմաններին, իսկ շատերն էլ ունենում են որոշակի բար-դություններ, քանզի անձը մի սոցիումից հայտնվում է մեկ այլ սոցիումում, որն ունի իր յուրահատուկ պահանջները, որոնք միանգամայն չեն համընկնում նախորդի պահանջներին: Ըստ մի խումբ մասնագետների հետազոտությունների վերլուծության արդյունքների՝ կապված զինվորական ծառայությանը հարմարման տարբեր փուլերի առանձնահատկությունների հետ, կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

- զինվորական ծառայության նախնական (նախապատրաստական) փուլը սկսվում է նախագորակոչային տարիքի երիտասարդներին զինվորա-

կան կոմիսարիատին կցագրումից: Հարմարման տեսակետից այս փուլի էությունը ունի հիմնականում ճանաչողական բնույթ, որի նպատակն է առաջիկա կենսակերպի, միջավայրի, գործունեության առանձնահատկությունների մասին համապատասխան տեղեկության պաշարի կուտակումը: Այս փուլի կարևորությունը այն է, որ գոյանում է տեղեկության դաշտ, որը մեծ դեր ունի անձնավորության հարմարվողական վարքի ձևավորման համար,

- ծառայողական գործունեության հաջորդ փուլը սկսվում է զորակոչիկի զորամասում հայտնվելու առաջին իսկ րոպեներից, այսինքն՝ այն պահից, երբ նա սկսում է զգալ տվյալ սոցիումի և նախորդի միջև տարբերությունը: Այս փուլում զորակոչիկը պետք է հարմարվի զինվորական միջավայրին, ծառայության պահանջներին և պայմաններին, յուրացնի զինվորական մասնագիտությունը: Հարմարման այս փուլի տևողությունը կազմում է, որպես կանոն, չորսից մինչև վեց ամիս, որի ընթացքում զորակոչիկը հարմարվում է զորանոցային ծառայողական պայմաններին: Այդ ժամանակահատվածը հոգեբանական գիտության բնագավառում ընդունված է անվանել սկզբնական հարմարման փուլ: Հենց սկզբնական հարմարման փուլում է, որ ձևավորվում են զինծառայողի միանգամայն նոր աշխարհայացքը (հասարակական-քաղաքական հարմարում), նա ձեռք է բերում ռազմատեխնիկական գիտելիքներ ու կարողություններ, յուրացնում է զինվորական մասնագիտությունը, հարմարվում է տեխնիկական սպասարկման պայմաններին (ռազմատեխնիկական հարմարում), ուսումնասիրում իր տարելային հրազենը, ձևավորվում է նրա հմտությունների համակարգը՝ կապված այդ հրազենից կրակի արձակման և զինված պայքարի վարման հետ (ուսումնական-մարտական հարմարում), ինտեգրվում է զինվորական կոլեկտիվին, հարաբերություններ է հաստատում անմիջական հրամանատարական կազմի հետ (սոցիալական հարմարում),

- հաջորդ փուլը՝ նոր կենսագործունեության միջավայր մուտք գործելու սուր հոգեկան հակազդումների փուլն է (սկզբնական ապահարմարում), որը համարվում է հարմարվողական գործընթացի փուլ, ըստ որի անձնավորությունը սկսում է իր վրա զգալ կենսակերպի փոփոխված պայմանների հոգեձին գործոնների ազդեցությունը, ինչի հետևանքով զինծառայողի օրգանիզմը ենթարկվում է համալիր գործոնների ազդեցությանը՝ հանգեցնելով նրա աշխատունակության մակարդակի անկմանը: Ընդ որում, բնավորության գծերի շեշտվածության կամ նյարդահոգեկան անկայունության, հոգեֆիզիոլոգիական վիճակների ինքնակարգավորման ունակությունը զարգացած չլինելու

պարագայում ստրեսսածին գործոնների ազդեցությունը կարող է հանգեցնել կարգավորիչ մեխանիզմների աշխատանքի խաթարմանը, զինձառայողի վարքի և գործունեության ապահարմարմանը:

- ապահարմարումը զորային պայմաններին արտահայտվում է նյարդահոգեկան անկայունության ձևով: Զինձառայողների շրջանում նյարդահոգեկան անկայունությունը դիտվում է որպես հոգեկան աշխատունակությունը, կատարվող գործունեությանը համարժեք նյարդահուզական լարվածության մակարդակը, հուզածին ազդեցությունների դեպքում հոգեկան ֆունկցիաների հաստատունությունը պահպանելու անկարողություն: Ընդ որում, ապահարմարումը պայմանավորված է ոչ միայն օրգանիզմի պաշտպանական հակազդումների վատթարացմամբ, այլև այն հանգամանքով, որ օրգանիզմը ի վիճակի չէ կատարելու իր առջև դրված սոցիալական խնդիրները,

- զորամասը նոր համալրած զինձառայողների շրջանում նյարդահոգեկան խանգարումների գերակշռող մասը կրում է հարմարվողական բնույթ, ինչը նշանակում է, որ այն պայմանավորված է զինվորական կենսագործունեության առանձնահատուկ պայմաններին նրանց դժվար հարմարմամբ, ֆունկցիոնալ լարվածությամբ, հետևաբար և օրգանիզմի ներուժային հնարավորությունների նվազմամբ,

- զինվորական ծառայության ընթացքում զինձառայողների հարմարման տևողության հետ կապված կան իրարամերժ կարծիքներ: Հետազոտողների մի մասը պնդում է, որ զորակոչիկի հարմարումը զորային կառույցի պայմաններին տևում է մինչև երեք ամիս: Ընդ որում, այդ ընթացքում շատանում են հիվանդացության դեպքերը: Երեք ամիս հետո այդ դրսևորումները հետին պլան են մղվում: Իսկ հետազոտողների մյուս մասն էլ պնդում է, որ ծառայողական-մարտական պայմաններին զինձառայողների հարմարման գործընթացը առաջին երեք ամիսներին չի ավարտվում և հաճախ են այն դեպքերը, երբ նյարդահոգեկան անկայունության խանգարումները գրանցվում են հենց երեքից մինչև վեց ամիս ծառայած զինձառայողների շրջանում [1, 17]:

Բանակային կենսակերպին զինձառայողների արդյունավետ հարմարումը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է զինվորական ծառայության անցած անձնավորությունը տրամադրված դեպի այդ գործունեությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագորակոչային տարիքի անձանց կողմնորոշումը դեպի ռազմամասնագիտական գործունեությունը



սերտորեն կապված է դաստիարակության հետ, նպատակահարմար է այն իրագործել ռազմահայրենասիրական դաստիարակության շրջանակներում:

Ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցով երիտասարդների մեջ բացի կոնկրետ անձնային հատկություններից ենթադրվում է նաև ձևավորել զորային կառույցի վերաբերյալ համարժեք գիտելիքներ և պատկերացումներ՝ հստակ կողմնորոշվելու և ըստ այդմ՝ մասնագիտությունը ընտրելու նպատակով: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության շրջանում հաշվի չեն առնվում ռազմամասնագիտական կողմնորոշման տեղեկատվական, ախտորոշական և դաստիարակչական ուղղությունների առանձնահատկությունները: [3, էջ 143]: Մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս նաև, որ այդ գործընթացն ունի տարերային բնույթ: Նույնիսկ այն անձինք, ովքեր զինկոմիսարիատի կողմից հնարավորություն են ստանում մասնակցելու բարձրագույն ռազմական հաստատությունների ընդունելության քննություններին, չեն ենթարկվում համակողմանի հոգեբանական հետազոտության, հաշվի չեն առնվում զինվորական գործունեության առանձնահատկությունները, հետեվաբար և անձնավորության համապատասխանությունը տվյալ մասնագիտությանը ներկայացվող պահանջներին:

Հանրակրթական դպրոցներում կատարած հետազոտությունների արդյունքում նախազորակոչային տարիքի 124 անձանց շրջանում առանձնացվել են զինվորական ծառայության նկատմամբ դրական և բացասական դիրքորոշում ունեցող անձինք: Հետազոտության հաջորդ փուլում հստակեցվել են դրական և բացասական դիրքորոշում ունեցող անձանց շրջանում զինվորական ծառայության պայմաններին հարմարված և չհարմարված զինծառայողները: Վերլուծության են ենթարկվել Կյանքի իմաստավորվածության ախտորոշման մեթոդիկան (Ա. Լենգլե, Կ. Օրգլեր) [4, 141-170], Պրոգնոզ-2 անկետան (Վ.Յու.Ռիբնիկովա) [5, 132-135] և Թեյլորի տագնապայնության չափման մեթոդիկան [6, 64-69]:

Ըստ Թեյլորի տագնապայնության մեթոդիկայի արդյունքների վերլուծությունից ստացված տվյալների և դրական և բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը չհարմարված հետազոտվողների մոտ տագնապայնության մակարդակը բարձր է, իսկ դրական դիրք-

րոշում ունեցող, զինվորական կենսագործունեությանը առանց «ցնցումների» հարմարված զինծառայողների շրջանում միջինից ցածր ձգտման միտումով: Բացասական դիրքորոշում ունեցող և հարմարված հետԱզոտվողներինը՝ միջին, դեպի բարձր ձգտման միտումով: Պրոգնոզ-2 (Վ.Յու.Ռիբնիկովա) անկետայի վերլուծության տվյալների հիման վրա առանձնացրել ենք նյարդահոգեկան կայունության 3՝ ցածր միջին և բարձր մակարդակներ: Նյարդահոգեկան կայունության մակարդակը ցածր է արտահատված բացասական դիրքորոշում ունեցող և չհարմարված հետազոտվողների շրջանում, իսկ դրական դիրքորոշում ունեցող և հարմարված և չհարմարված հետազոտվողների շրջանում նյարդահոգեկան կայունության մակարդակը միջին ցուցանիշներ ունի: Զինվորական ծառայության նկատմամբ դրական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը առանց «ցնցումների» հարմարված հետազոտվողների «SD» /«ինքնահեռավորվելու» կարողությունը/ ցուցանիշի միջինացված արժեքը կազմում է 28,78-29,71, որը համարվում է միջին ցուցանիշ, ինչը նշանակում է, որ հետազոտվողները շրջակա միջավայրը առավել ճիշտ են ընկալում, հստակ պատկերացում են կազմում ստեղծված իրավիճակի մասին, նրանց ուշադրությունը մշտապես ուղղված է դեպի արտաքին միջավայրը, հետևաբար և հետազոտվողների այդ թվակազմի շրջանում իրենց ներաշխարհի նկատմամբ «հեռավորությունը» մեծանում է, այսինքն՝ նրանք չեն սևեռվում իրենց ներաշխարհի վրա:

Զինվորական ծառայության նկատմամբ բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը դժվարությամբ հարմարված հետազոտվողների «SD» ցուցանիշի միջինացված արժեքներն են 24,46-24,13: «SD»-ի ցածր ցուցանիշը նշանակում է, որ հետազոտվողը սևեռված է իր ներաշխարհի վրա, «SD»-ի ցածր ցուցանիշը ցույց է տալիս, որ մարդը առավելապես զբաղվում է ինքն իրենով, ինչը ուղեկցվում է սևեռուն ցանկություններով, չկշռադատված մտածողությամբ, իր իսկ կողմից իրեն ուղղված մեղադրանքներով և այլն: Սակայն նշենք, որ «SD»-ի ցածր ցուցանիշներ կարող են գրանցվել նաև իրադրային գերծանրաբեռնվածությունից:

Զինվորական ծառայության նկատմամբ դրական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը առանց «ցնցումների» հարմարված հետազոտվողների ինքնատրանսցենդենտության (ST) ցուցանիշի միջին արժեքը կազմում է (57,81-57,19): «ST» ցուցանիշի միջին արժեքը կարելի

է համարել հավասար 58-ի, ինչը փաստում է հետազոտվողների հարուստ հուզական ներաշխարհի և արժեքային հիմքերը հասկանալու և դեպի այդ արժեքները կողմնորոշվելու ներքին կարողության մասին: Նմանատիպ արդյունք է գրանցվել նաև բացասական դիրքորոշում ունեցող և բանակային կենսակերպին հարմարված հետազոտվողների շրջանում 57,19: Չինվորական ծառայության նկատմամբ բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը դժվարությամբ հարմարված հետազոտվողների «Տ» ցուցանիշի միջին արժեքներն են 50,25–47,27: «Տ»-ի ցածր արժեքները փաստում են մարդկանց հետ հարաբերություններում անձնավորության հուզական դրսևորումների պակասի մասին: Չինվորական ծառայության նկատմամբ դրական և բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը սահուն կերպով հարմարված հետազոտվողների ազատության (F) ցուցանիշի միջին արժեքներն են 49,14–50,78, որը ըստ մեթոդիկայի վերլուծության միջին ցուցանիշ է: Չինվորական ծառայության նկատմամբ բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը դժվարությամբ հարմարված հետազոտվողների «F» ցուցանիշի միջինացված արժեքներն են 36,54–34,07: «F» ցուցանիշի ցածր արժեքները վկայում են որոշում ընդունելու անկարողության, անվճռականության ու անվստահության մասին: «F» ցուցանիշի ցածր արժեքների դեպքում որոշումների ընդունումը ընկալվում է որպես անիմաստ գործընթաց: Կարող են զարգանալ կենսակերպից կախվածության ձևեր և այս դեպքում, օրինակ, ալկոհոլը, փողը, մոլի խաղերը կարող են կատարել կոմպենսատորական դեր, ինչը կապված է ազատության զգացում չունենալու հետ:

Չինվորական ծառայության նկատմամբ դրական և բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը սահուն կերպով հարմարված հետազոտվողների պատասխանատվության «V» ցուցանիշի միջին արժեքներն են 52,91–55,29: Նշենք, որ «V» սանդղակը չափում է անձնական արժեքներով որոշումները ավարտին հասցնելու ունակությունը: Ըստ մեր հետազոտական տվյալների՝ «V» ցուցանիշի միջին արժեքները փաստում են պատասխանատվության զգացումի աճի և կենսակերպին ներառվածության մակարդակի աճի մասին: Իսկ բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը դժվարությամբ հարմարված հետազոտվողների «V» ցուցանիշի միջինացված արժեքներն են 48,93–44,73: Սպասելի էր

41-ից ցածր թվային արժեքների գրանցում, սակայն դրանք գերազանցում են «V»-ի ցածր ցուցանիշի թվային արժեքը: Բացի այդ, հետազոտվողները ունեն տազնապայնության բարձր մակարդակ և ցածր նյարդահոգեկան կայունության մակարդակ: Դրական և բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը սահուն կերպով հարմարված հետազոտվողների պերսոնալության (P) = (SD) + (ST) ցուցանիշի միջին արժեքներն են 179,94–87,52: «P» ցուցանիշի միջինացված թվային արժեքները գերազանցում են «P» ցուցանիշի թեստով նախատեսված միջին արժեքը: Իսկ բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը դժվարությամբ հարմարված հետազոտվողների «P» ցուցանիշի միջինացված արժեքներն են 75,62–73,07: «P»-ի ցածր ցուցանիշները վկայում են մարդու ինքնամոտիվության մասին: Նա կամ սևեռված է դեպի իր ներաշխարհը, ինչը պայմանավորված է տևական հոգեկան ծանրաբեռնվածություններով, կամ էլ դեռ չի ձևավորվել որպես լիարժեք անձնավորություն: Դրական և բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը սահուն կերպով հարմարված հետազոտվողների էքզիստենցիալության (E) = (F) + (V) ցուցանիշի միջին արժեքներն են 103,69–104,43: Ըստ մեր հետազոտական տվյալների՝ գրանցված են «E» ցուցանիշի միջին արժեքներ, որոնք վկայում են կյանքի համար վճռականության և պատասխանատվության աստիճանի աճի մասին: Մարդը ձգտում է կառուցելու իր կյանքը: Մեր դեպքում գրանցվել է «F»-ը <«V»-ից տարբերակը, ինչը բնորոշում է «մարդու կենսակերպը, որը հիմնված է պարտքի զգացումի վրա»: Բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը դժվարությամբ հարմարված հետազոտվողների «E» ցուցանիշի միջինացված արժեքներն են 79,46–88,33, որոնք մի դեպքում չեն գերազանցում «E» ցուցանիշի ցածր արժեքը, իսկ մյուս դեպքում 7,33-ով գերազանցում են այդ ցուցանիշը: Հարկ է նշել, որ «E» ցուցանիշի ցածր արժեքները վկայում են այն մասին, որ մարդը իր կենսակերպում որոշումները ընդունում է դժվարությամբ, նա գատված է ակտիվ գործողությունների կատարումից, ծանրաբեռնվածություններին դիմակայելու թույլ կարողությունը, խոչընդոտների նկատմամբ զգայունակությունը: Իսկ «E» ցուցանիշի արժեքների մեծացումը վկայում է այն մասին, որ աշխարհի նկատմամբ կա հստակ վերաբերմունք: Եվ, ելնելով կոնկրետ իրավիճակներում լավ կողմնորոշվելու կարողությունից, իր որոշման մեջ վստահությունից՝ մարդը կարող է ինչ-որ կարևոր բան կյանքի կոչել: Զինվորական կենսագործունեությանը սա-

հուն հարմարված հետազոտվողների ընդհանրական  $(G) = (P) + (E)$  ցուցանիշի միջինացված արժեքներն են 189,88–191,95, իսկ «G» ցուցանիշի միջինացված տվյալները համապատասխանում են թեստով նախատեսված միջին թվային արժեքներին: Մեր պարագայում «G» ցուցանիշի միջին արժեքները վկայում են շրջակա միջավայրի պահանջներին արձագանքելու մարդու պատրաստակամության մասին (եթե «P» և «E» ցուցանիշները հավասարաչափ աճում են, իսկ մեր դեպքում այդ ցուցանիշները աճում են): Բացասական դիրքորոշում ունեցող և զինվորական կենսագործունեությանը դժվարությամբ հարմարված հետազոտվողների «G» ցուցանիշի միջինացված արժեքներն են 156,29–161,40: «G» ցուցանիշի ցածր արժեքները վկայում են անձնավորության էքզիստենցիալ չիրագործվելիության մասին և արտացոլում են նրա փակ լինելը: Համեմատական վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ բանակային կենսակերպին հարմարման արդյունավետությունը չի կարող սահմանափակվել միայն զինվորական ծառայության հանդեպ անձի դրական դիրքորոշմամբ, հոգեբանական բաղադրիչների ամբողջական դրսևորվածությամբ ապահովվում է նախազորակոչային տարիքի անձանց սոցիալ-հոգեբանական պատրաստությունը, որը նպաստում է զորային կառույցին կարճ ժամանակում լիարժեք ինտեգրվելուն և ծառայողական պարտականությունները առավել արդյունավետ կատարելուն: Վերոնշյալը ապահովելու համար նպատակահարմար է, որ նախազորակոչային տարիքի անձանց հոգեբանական պատրաստությունը պլանաչափ զուգակցվի ռազմահայրենասիրական դաստիարակության հետ, որի գերնպատակն է բանակային կենսակերպին հարմարվելու ժամանակի կրճատումը՝ զինվորական ծառայությանը սոցիալ-հոգեբանական բարձր մակարդակի ապահովմամբ:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է վերանայել հանրակրթական դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակության մի շարք սկզբունքներ: Ի վերջո դաստիարակչական ներգործությունը կարող է լինել արդյունավետ այն դեպքում, եթե մենք լիարժեք պատկերացում ենք կազմում նախազորակոչային տարիքի անձանց անհատական առանձնահատկությունների, կյանքի իմաստավորվածության, նյարդահոգեկան կայունության, տագնապայնության մակարդակի և այլ առանձնահատկությունների մասին:

### **Գրականություն**

1. А. Мухаметжанов, Н. Смагулов, С. Жаутикова, Ф.Абикенова, Р. Есимова, С. Аринова, Г. Иманбаева, Ф. Умер. Особенности адаптации военнослужащих в процессе прохождения воинской службы. «Совр. проблемы науки», 2012, № 3., И. Мосягин. Психофизиологические закономерности адаптации военно-морских специалистов. Архангельск, 2007, с. 17:
2. Մ. Օհանյան XXI դարի բանակը: Ե., 2007, 270 էջ:
3. Մարգարյան Վ.Հ., Փալանդուզյան Հ.Հ. Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմամասնագիտական կողմնորոշման հիմնական պրոբլեմները: «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր (հոկտեմբերի 25-27): Ե., 2013, 454:
4. Кривцова С.В., Лэнгле А., Орглер К. Шкала экзистенции А.Лэнгле, К.Орглер. 2009. 212с.
5. Рыбников В.Ю. Экспресс-методика "Прогноз-2" для оценки нервно-психической неустойчивости кандидатов на учебу в ВУЗ, М.: Воениздат, 1990. - С. 132-135.
6. Практическая психодиагностика, под. ред. Д.Я.Райгородского, Самара, 2001, с 664

### **Հասմիկ ՓԱԼԱՆԴՈՒԶՅԱՆ**

#### **Զինվորական ծառայության արդյունավետ հարմարմանը նպաստող մի շարք հոգեբանական բաղադրիչներ**

*Բանալի բառեր. հարմարում, ռազմահայրենասիրական դաստիարակություն, նյարդահոգեկան կայունություն, փազնապայնություն, կյանքի իմաստավորվածություն*

Հոդվածում ուսումնասիրված են զինվորական ծառայությանը հարմարման տարբեր փուլերի հոգեբանական առանձնահատկությունները, նախագորակոչային տարիքի անձանց շրջանում զինվորական ծառայության նկատմամբ ունեցած դիրքորոշումները՝ և դրական, և բացասական, ինչպես նաև մի շարք անձնային հոգեբանական բաղադրիչներ՝ նյարդահոգեկան կայունություն, տազնապայնության մակարդակ, ինքնատրանսգենդենտություն, պատասխանատվություն, էքզիստենցիալություն, պերսոնալություն: Ռազմահայրենասիրական դաստիարակության ներգործության արդյունավետությունը բարձրացնելու համար նպատակահարմար է հաշվի առնել վերոնշյալ անձնային հոգեբանական բաղադրիչները:

### **Асмик ПАЛАНДУЗЯН**

#### **Ряд психологических компонентов, способствующих эффективной адаптации военной службы**

*Ключевые слова: адаптация, военно-патриотическое воспитание, нервно-психическая устойчивость, тревожность, осмысленность жизни*

В статье изучены психологические особенности различных этапов адаптации к военной службе положительные и отрицательные установки к военной службе у лиц допризывного возраста, а также некоторые личностные психологические компоненты: нервно-психическая устойчивость, уровень тревожности, самоотрацен-

денции, персональность, экзистенциальность, персональность. В целях повышения эффективности военно-патриотического воспитания целесообразно учитывать вышеупомянутые персональные психологические компоненты.

**Hasmik PALANDUZYAN**

**A number of psychological components that contribute to the effective adaptation of military service**

*Key words: adaptation, military-patriotic upbringing, neurological stability, anxiety, the meaning of life*

The article examines the psychological peculiarities of different stages of adaptation to military service, the stance on the military service among the persons before military age, as well as a number of personal psychological components, such as neurological stability, anxiety level, self-transcendence, responsibility, existentially and personality. In order to increase the effectiveness of military-patriotic education, it is expedient to take into consideration the above mentioned personal psychological components.

**ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Արամ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ**

« ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. հանրային կառավարում, պետական կառավարում, պետական կառավարման արդյունավետություն, սոցիալական արդյունավետություն

Տնտեսագիտության և կառավարման հիմնախնդիրների շարքում առանձնահատուկ նշանակություն և կարևորություն ունի հանրային կառավարման արդյունավետության գնահատման տեսական և գործնական բնույթի հիմնահարցերի ուսումնասիրությունը<sup>323</sup>: Բավական է նշել, որ այս հիմնահարցը բավարար խորությամբ չէ ուսումնասիրված նաև Հայաստանի Հանրապետության տնտեսագետների կողմից, մինչդեռ հանրային կառավարումն ու դրա համապատասխան գործիքակազմի կիրառումն ապահովում է ողջ հանրային կառավարման համակարգի կենսունակությունը և արդյունավետության բարձրացումը: Այս տեսանկյունից, հանրային կառավարման համակարգում անհրաժեշտ է առանձնացնել պետական կառավարման արդյունավետությանը և դրա գնահատմանը վերաբերող մեթոդաբանական մոտեցում-

<sup>323</sup> Յու.Սուվարյան, Վ.Միրզոյան, Հանրային Կառավարման Տեսություն և Պատմություն, Ե., 2013., էջ 12-64: Վ.Քալաշյան, Պետական Կառավարման Արդյունավետությունը, Ե., 2014, էջ 9-68 :

ներն ու գործիքակազմը: Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ հանրային կառավարման կազմում պետական կառավարումն ունի առյուծի բաժին և, ըստ էության, դրա չափերից և կառավարման արդյունավետությունից է կախված հանրային կառավարման ողջ համակարգի կենսունակությունը, ուստի մեր ուսումնասիրության առարկան պետական կառավարման արդյունավետությունն է:

Պետական կառավարման արդյունավետության գնահատման հիմնական տեսակներ կարող են լինել. ընդհանուր սոցիալական արդյունավետությունը, պետական կառավարման մարմինների ենթակա կազմակերպությունների արդյունավետությունը և պետական կառավարման համակարգի արդյունավետությունը (աղյուսակ 1):

**Աղյուսակ 1. Պետական կառավարման արդյունավետությունը**

Արդյունավետության տեսակները	Արդյունավետության առանձին տեսակների բովանդակությունը
Ընդհանուր սոցիալական արդյունավետություն	Բնակչության կենսամակարդակ և կյանքի որակ
Պետական կառավարման մարմինների ենթակայության կազմակերպությունների արդյունավետությունը	1. Կառավարման գործընթացի բովանդակությունը և կազմակերպումը 2. Կազմակերպական կառուցվածքի ռացիոնալությունը 3. Պետական կառավարման համակարգի կազմակերպական-տեխնիկական մակարդակը
Պետական կառավարման համակարգի արդյունավետությունը	1. Պետական կառավարման հիմնական նպատակներին հասնելու աստիճանը 2. Արդյունքային և ծախսային արդյունավետության պահանջների զուգակցումը 3. Պետական կառավարման համակարգի մեջ մտնող յուրաքանչյուր ենթահամակարգի արդյունավետությունը

Պետական կառավարման ընդհանուր սոցիալական արդյունավետությունը արտահայտվում է բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի դինամիկայով: Պետական կառավարման ընդհանուր սոցիալական արդյունավետության որոշման ժամանակ օգտագործվում են բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի գնահատման տարբեր մեթոդիկաներ: Հիմնականում դրանք իրենցից ներկայացնում են՝

ա/ սոցիոլոգիական հետազոտություններ՝ որոնց նպատակն է ուսումնասիրել և բացահայտել բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի հիմնական բաղկացուցիչների բավարարվածության մակարդակը,

բ/ ինչպես նաև մի շարք մեթոդիկաներ, որոնք հենվում են քանակական մեթոդների և օգտագործվող վիճակագրական տվյալների վրա:




Պետական կառավարման արդյունավետության հաջորդ երկու տեսակները պայմանավորված են պետական կառավարման տվյալ մարմիններին փոխանցած լիազորությունների իրացմամբ և կարող են գնահատվել ելնելով առաջադրված առաջադրանքների կամ խնդիրների լուծման որակից: Պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետության գնահատումն իրենից ներկայացնում է հետազոտական գործընթաց, որը բաղկացած է մի քանի փուլերից.

- պետական կառավարման արդյունավետության ինդիկատորների համակարգի և կառուցվածքի հիմնավորում և ընտրություն. ընդ որում, ինչպես ընթացիկ ֆինանսավորման, այնպես էլ պետության ռազմավարական զարգացման համար,

- պետական կառավարման արդյունավետության չափանիշների և ցուցանիշների որոշում,

- առանձին ցուցանիշների հաշվարկման մեթոդների մշակում:

Պետական կառավարման արդյունավետության գնահատման համար կարող է առաջարկվել չափանիշների համակարգ, որը ներկայացված է գծանկար 1-ում:



**Գծանկար 1.** Պետական կառավարման արդյունավետության գնահատման չափանիշների համակարգը

Գծանկար 1-ում բերված պետական կառավարման գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների համակարգը հնարավորություն է տալիս ձևավորել պետական կառավարման արդյունավետության ինդիկատորները և ցուցանիշները<sup>324</sup>: Պետական կառավարման արդյունավետության ցուցանիշների համակարգի ձևավորման ժամանակ կարելի է առանձնացնել կառավարման գնահատման հետևյալ ինդիկատորները.

• գործունեություն՝ պետական կառավարման համակարգի առջև դրված նպատակներին հասնելու աստիճանն է: Որպեսզի այն չափվի, համեմատում են կառավարման պլանավորված արդյունքները փաստացիի հետ: Գործունեության չափումն ուղղված է ինչպես առանձին աշխատակիցների, այնպես էլ կառավարման ավելի բարձր մակարդակների արդյունքների գնահատմանը,

<sup>324</sup> *Stu ġuwl*.` The Worldwide Governance Indicators, 2017 [www.govindicators.org](http://www.govindicators.org)

- խնայողականություն՝ ռեսուրսների հարաբերակցությունն է, որը ենթադրում է ծախսել որոշակի նպատակների հասնելու և կոնկրետ աշխատանքներ կատարելու համար, փաստացի կատարված ծախսերը,


- որակ՝ կառավարման համակարգի համապատասխանության աստիճանն է նրան ներկայացվող սպասումներին և պահանջներին,

- պետական կառավարման արդյունքների և ծախսերի հարաբերակցություն՝ համակարգի հանրային ծառայությունների ծավալի (գործունեության) և այդ ծառայությունները տրամադրելու ծախսերի (խնայողականության) հարաբերակցությունն է,

- աշխատանքից բավարարվածություն՝ պետական կառավարման ոլորտում աշխատանքի վարկն է, անվտանգության զգացումը, վստահությունը: Այդ ցուցանիշի չափման մեթոդները հենվում են սոցիալ-հոգեբանական պայմանների վերաբերյալ աշխատակիցների պատկերացումների և փաստացի պայմանների համապատասխանության աստիճանով,

- նորամուծությունների ներդրում՝ արտացոլում է կառավարման կազմակերպման ոլորտում նոր նվաճումների իրական օգտագործումը՝ դրված նպատակներին հասնելու համար:

Այսպիսով, վերը նշված չափանիշ-ինդիկատորները թույլ են տալիս ձևակերպել պետական կառավարման կազմակերպման արդյունավետության որոշման ալգորիթմը: Պետական կառավարման կազմակերպման արդյունավետության գնահատման ժամանակ օգտագործվող ցուցանիշները ներկայացված են գծանկար 2-ում: Ինչպես հետևում է գծանկար 2-ից, բոլոր ցուցանիշները կարող են բաժանվել երեք խմբի: Առաջինը բնութագրում է կառավարման գործընթացի արդյունավետությունը, այսինքն՝ կառավարչական աշխատանքի ծախսերի և արդյունքային ցուցանիշների հարաբերակցությունը: Կառավարման ծախսերի դերում կարող են կիրառվել այնպիսի հեշտությամբ չափվող ցուցանիշներ, ինչպիսիք են կառավարման ապարատի պահպանության ընթացիկ ծախսերը, տեխնիկական միջոցների շահագործման, շենքերի և շինությունների պահպանման, կառավարման կադրերի պատրաստման և վերապատրաստման ծախսերը:



**Գծանկար 2.** Պետական կառավարման կազմակերպման արդյունավետության ցուցանիշները

Կառավարման գործընթացի արդյունքայնության (ամփոփիչ) ցուցանիշները կարող են գնահատվել ինչպես քանակապես, այնպես էլ որակապես և օգտագործվել որպես արդյունավետության չափանիշներ, այն դեպքում, երբ կազմակերպական կառուցվածքը փոփոխվում է առանց մյուս ցուցանիշների մեկ կամ դրանց խմբի փոփոխության (վատացման կամ լավացման) ուղղությամբ: Կառավարման ապարատի աշխատանքի արտադրողականություն-

նր որոշվում է տեղեկությունների կառավարման գործընթացում մշակվող ծավալի մեծությամբ: Կառավարման ապարատի խնայողականություն ասելով հասկացվում են նրա գործունեության համար համեմատական (հարաբերական) ծախսերը (օրինակ, կառավարման ապարատի պահպանման ծախսերի տեսակարար կշիռը): Կառավարման համակարգի հարմարվողականությունը որոշվում է տրված գործառույթները փոփոխվող պայմանների որոշակի միջակայքում արդյունավետորեն կատարելու ընդունակությամբ: Որքան լայն է այդ միջակայքը, այնքան հարմարվողական է համակարգը: Կառավարման համակարգի ճկունությունը բնութագրում է պետական կառավարման մարմինների հնարավորությունը՝ ծագած խնդիրներին համապատասխան, փոխելու իր դերը որոշումների ընդունման գործընթացում և հաստատելու նոր կապեր՝ չխախտելով տվյալ կառուցվածքին բնորոշ կարգավորվածությունը:

Կառավարչական որոշումների ընդունման օպերատիվություն նշանակում է կառավարչական հիմնախնդիրների ժամանակին բացահայտում և դրանց լուծման արագություն, որն ապահովում է առաջադրված նպատակին առավելագույն ձևով հասնելու ապահովումը՝ հաստատված կառավարչական գործընթացների կայունության պահպանման դեպքում: Կառավարման ապարատի հուսալիությունն ամբողջությամբ բնութագրվում է անխափան գործունեությամբ, այսինքն՝ սահմանված ժամկետներում և առանձնացված ռեսուրսների շրջանակներում առաջադրանքների կատարման ապահովման ընդունակությունը: Կառավարման ապարատի և դրա ենթահամակարգերի հուսալիության գնահատման համար կարող են օգտագործվել պլանային առաջադրանքների կատարման մակարդակը, հաստատված նորմատիվներին հետևելը և ցուցումների կատարման շեղումների բացակայությունը: Երկրորդ խումբ ցուցանիշների գնահատման համար, որոնք բնութագրում են պետական կառավարման կազմակերպական կառուցվածքի ռացիոնալությունը, զգալի նշանակություն ունի նրա համապատասխանությունը կառավարման օբյեկտին: Դա իր արտացոլումն է գտնում կառավարման գործառույթների կազմի և նպատակների հաշվեկշռվածության, աշխատողների կազմի թվաքանակի և աշխատանքերի բարդության համապատասխանության, պահանջվող տեղեկությունների ամբողջության և լիարժեքության, տեխնիկական միջոցներով կառավարման գործընթացների ապահովվածության մեջ:

**Աղյուսակ 2.** Պետական կառավարման համակարգի կազմակերպատեխնիկական արդյունավետության ցուցանիշների վերծանումը

Ցուցանիշ	Հաշվարկման բանաձևը	Բաղկացուցիչների վերծանումը
Գ1՝ ծառայողների աշխատանքի բաժանման մակարդակն է	Գ1=Ծ1/Ծ	Ծ1-ը պաշտոնական հրահանգների հիման վրա գործող ծառայողների թվաքանակն է, Ծ-ն՝ ծառայողների ընդհանուր քանակն է
Գ2՝ կառավարման տեխնոլոգիականության մակարդակն է	Գ2=Փ1/Փ	Փ1-ը՝ մարմնի կամ կառուցվածքային ստորաբաժանման գործառույթների թիվն է, որոնց կատարման համար առկա են հրահանգչական կամ մեթոդական կայուն, ֆ-ն՝ մարմնի կամ կառուցվածքային ստորաբաժանման գործառույթների ընդհանուր թիվն է
Գ3՝ կառավարչական որոշումների կատարման հսկողության մակարդակն է	Գ3=Ո1/Ո	Ո1-ը՝ որոշակի ժամանակահատվածում հսկման ենթակա որոշումների թիվն է, Ո-ն՝ այդ նույն ժամանակահատվածում որոշումների ընդհանուր թիվն է
Գ4՝ ծառայողների գործունեության պլանավորման մակարդակն է	Գ4=Ես/Ե	Ես՝ ծառայողների թվաքանակն է, որոնց աշխատանքը պլանավորվում է տվյալ ժամանակահատվածում, Ե-ն՝ ծառայողների միջին ցուցակային թվաքանակն է
Գ5՝ ծառայողների թվաքանակի մակարդակն է, որոնց ընթացիկ արդյունքները մշտապես գնահատվում է	Գ5=Ծօ/Ծ	Ծօ ծառայողների թվաքանակն է, որոնց ընթացիկ արդյունքները մշտապես գնահատվում է, Ծ-ն՝ ծառայողների ընդհանուր թվաքանակն է
Գ6՝ կադրերի կայունության մակարդակն է	Գ6=1-Ծ2/Ծ	Ծ2-ը՝ տարվա ընթացքում աշխատանքից ազատված ծառայողների թվաքանակն է, Ծ-ն՝ ծառայողների ընդհանուր թվաքանակն է
Գ7՝ կադրերի կարգապահության մակարդակն է	Գ7=1-Ծ3/Ծ	Ծ3-ը՝ տարվա ընթացքում կարգապահական տույժեր ստացած ծառայողների թվաքանակն է, Ծ-ն՝ ծառայողների ընդհանուր թվաքանակն է
Գ8՝ ծառայողների աշխատանքային տեղերի կազմակերպման մակարդակն է	Գ8=1-Ծ4/Ծ	Ծ4-ն՝ ծառայողների քանակն է, որոնց աշխատատեղերը համապատասխանում են աշխատանքի գիտական կազմակերպման պահանջներին և հագեցած են համապատասխան պայմաններով
Գ9- ծառայողների տեխնիկական զինվածության մակարդակն է	Գ9=1-Ծ5/Ծ	Ծ5-ը՝ անհատական համակարգիչներ ունեցող ծառայողների թվաքանակն է, Ծ-ն՝ ծառայողների ընդհանուր թիվն է
Գ10՝ ծառայողների մասնագիտական պատրաստվածության կազմակերպման մակարդակն է	Գ10=1-Ծ6/Ծ	Ծ6-ը՝ տարվա ընթացքում մասնագիտական պատրաստվածություն անցած ծառայողների թվաքանակն է, Ծ-ն՝ ծառայողների ընդհանուր թվաքանակն է
Գ11՝ պետական կառավարման մարմիններում քաղաքացիների դիմումների հետ աշխատանքի մակարդակն է	Գ11=1-Դ1/Դ	Դ1-ը՝ որոշակի ժամանակում, որի ընթացքում սահմանված ժամկետում ընդունվում են որոշումներ՝ կապված քաղաքացիների դիմումների հետ, Դ-ն՝ այդ նույն ժամանակում քաղաքացիների դիմումների ընդհանուր թիվն է

Պետական կառավարման համակարգի կազմակերպատեխնիկական արդյունավետության ցուցանիշների երրորդ խումբը ներկայացվում է բանաձևի տեսքով.  $Ա_{կտմ} = (Գ1+Գ2+Գ3+Գ4+Գ5+Գ6+Գ7+Գ8+Գ9+Գ10+Գ11)/11$ , (1)

որտեղ  $Ա_{կտմ}$  –ն պետական կառավարման համակարգի կազմակերպատեխնիկական արդյունավետությունն է, իսկ Գ1-Գ11՝ ցուցանիշների վերծա-

նումը բերված է աղյուսակ 2-ում: Վերը բերված ցուցանիշների հաշվարկը թույլ է տալիս գնահատել պետական կառավարման կազմակերպման արդյունավետությունը: Տվյալ գնահատականները վկայում են միայն արդյունավետության մի մասի արդյունավետության մասին, քանի որ ընդհանուր արդյունավետության մեջ անհրաժեշտ է անմիջականորեն որոշել պետական կառավարման համակարգի արդյունավետությունը:

Այսպիսով, ուսումնասիրելով պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետության էությունը և հասկացությունը, կարելի է նշել, որ պետական կառավարման արդյունավետությունը բարդ հասկացություն է: Այն կարող է չափվել միայն ցուցանիշների հատուկ համակարգի միջոցով: Պետական կառավարման արդյունավետության չափման համար պահանջվում է մի քանի մեթոդական մոտեցումների համակցություն, որոնցից յուրաքանչյուրի դեպքում արդյունավետությունն ունի իր որակական բովանդակությունը: Այդ պատճառով էլ, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հիմնավորել և մշակել չափանիշների և ցուցանիշների համակարգ, որն իր դժվարությամբ կհամապատասխանի կառավարման բուն օբյեկտի դժվարությանը: Ըստ որում, տեղային և մասնակի չափանիշների հետ մեկտեղ, որոնք արտացոլում են կառավարման առանձին կողմերը և մակարդակները, անհրաժեշտ են արդյունավետության ընդհանրացնող չափանիշներ և ինտեգրալային ցուցանիշներ: Միայն պետական կառավարման համակարգի արդյունավետության գնահատման համար, այսինքն միայն անմիջականորեն հասարակությունում գործընթացների վրա պետական իշխանության անմիջական ազդեցության հետ կապված, կարող են օգտագործվել տարբեր մոտեցումներ, որոնք արտացոլում են արդյունավետության այս կամ այն չափանիշները (աղյուսակ 3): Աղյուսակում բերված առաջին երեք մոտեցումները կարելի է օգտագործել անալիտիկ ձևավորման ճանապարհով՝ մեկ ամբողջի մեջ ինտեգրելով օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականները<sup>325</sup>: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում պրագմատիկ մոտեցումը, քանի որ այն պոտենցիալ ամենաօբյեկտիվն է և մեր կարծիքով պետական իշխանության մարմինների կառավարման համակարգի առանցքային բաղկացուցիչն է, որը կողմնորոշված է դեպի արդյունքայնությանը:

<sup>325</sup>Տես՝ Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում/ Ե., 2014, Էջ 59-92:

**Աղյուսակ 3. Պետական կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումների տեսակները**

Մոտեցումը	Արդյունավետության գնահատման հիմնական բնութագիրը	Գնահատման ձևավորման համար բազան
Իրավական	Գնահատվում է հիմնարկի գործունեության ընթացքում խախտումների բացակայությունը	Հարկային, հսկող-վերահսկող, դատախազության, մյուս ստուգող մարմինների ստուգման տվյալներ
Սոցիալական կողմնորոշման	Գնահատվում է պետական հիմնարկի գործունեության մասին բողոքների առկայությունը կամ բացակայությունը, քաղաքացիների դրական կարծիքները	Մամուլում քաղաքացիների դիմումների, հրապարակումների, հասարակական կարծիքի վերլուծություն
Փորձագիտական	Գնահատման տարբեր մեթոդների ներառում, որոնց հիմքը իրազեկ աշխատակիցների կարծիքն է պետական հիմնարկի գործունեության արդյունավետության և հանրային օգտակարության վերաբերյալ	Փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ տեղեկություններ
Պրագմատիկ	Քանակական և որակական գնահատման ցուցանիշների հիման վրա գնահատվում է պետական հիմնարկների գործունեության անմիջական արդյունքները	Գործունեության արդյունքների վերաբերյալ տարեկան և եռամսյակային հաշվետվություններ, վիճակագրական և այլ տվյալներ

Սակայն պրագմատիկ մոտեցման հիման վրա բյուջետային հիմնարկների գործունեության արդյունավետության հիմնավոր գնահատման համար անհրաժեշտ են հանրային ծառայություններից յուրաքանչյուրի համար նորմատիվներ կամ էլ միասնական բազա՝ համեմատությունների համար, ինչը ներկայումս մեծամասամբ բացակայում է: Այդ պատճառով էլ այսօր պրագմատիկ մոտեցմամբ հնարավոր է իրականացնել արդյունավետության մասնակի գնահատում: Դրա համար օգտագործվում է երեք հիմնական մեթոդ.<sup>326</sup>

- պետական հիմնարկի նպատակներին հասնելու աստիճանի գնահատման մեթոդ,
- պահանջմունքային, արդյունքային և ծախսային արդյունավետության հարաբերակցության գնահատման մեթոդ,
- պետական կառավարման համակարգի և նրա յուրաքանչյուր ենթահամակարգի արդյունավետության գնահատման մեթոդ:

Պետական կառավարման հիմնական նպատակներին հասնելու աստիճանի գնահատման որոշման ժամանակ արդյունավետության որոշումը հիմնականում կապված է հետևյալ բանաձևի հաշվարկման հետ.

$$A_n = G_{\text{պ}} \times G_{\text{ու}} \times G_{\text{միս}}, \quad (2), \quad \text{որտեղ՝}$$

<sup>326</sup> Зенков М. Профессиональная оценка госслужащих и законодательная база// Кадровик, Кадровый менеджмент, 2007, N8, с. 24.



Ա<sub>6</sub>-ն՝ պետական կառավարման համակարգի նպատակներին հասնելու ամփոփ գործակիցն է, Գ<sub>9</sub>-ն՝ պետության (երկրի) բնակչության գոյատևման մակարդակի գործակիցն է: Բնութագրում է գոյատևման պայմանը, որը ձևավորվել է պետական իշխանության մարմինների գործունեության արդյունքում և գործել է կոնկրետ (որոշակի) տարածքում: Այդ ցուցանիշը որոշվում է որպես գնահատվող ժամանակահատվածում պետության (երկրի) տարածքում ծնվածների թվաքանակի հարաբերությունը նախորդ ժամանակահատվածում մահացած քաղաքացիների թվաքանակին: Եթե այդ հարաբերությունը մեծ է 1-ից, ապա կոնկրետ տարածքում պետական իշխանության մարմինների գործունեությունը տվել է դրական արդյունք:

Գ<sub>10</sub>-ն՝ համապտասխան տարածքում բնակչության կենսամակարդակի գործակիցն է: Որոշվում է որպես գնահատման ժամանակահատվածի նվազագույն կենսամակարդակի դրամական գումարի մեծության հարաբերությունը նախորդ ժամանակահատվածի համանման ցուցանիշին: Եթե այդ հարաբերությունը մեծ է 1-ից, ապա իշխանության պետական կառավարման մարմինների գործունեությունը տվել է դրական արդյունք:

Գ<sub>11</sub>-ն՝ որոշակի ժամանակահատվածում պետությունում մարդու իրավունքների խախտման մակարդակի գործակիցն է: Այդ գործակիցը որոշվում է իշխանության սահմանված մարմնի կողմից նախընթաց և գնահատվող ժամանակահատվածներում մարդու իրավունքների խախտման դեպքերի հարաբերակցությամբ: Եթե այն մեծ է 1-ից, ապա իշխանության պետական կառավարման մարմինների գործունեությունը տվել է դրական արդյունք:

Այսպիսով, վերը բերված մոտեցման համաձայն, պետական կառավարման հիմնական նպատակներին հասնելու աստիճանի գնահատումը կապված է անուղղակի գործոնների որոշման հետ, որոնք բնութագրում են երկրի բնակչության կենսամակարդակը: Ըստ որում, այդպիսի անուղղակիությունը միշտ չէ, որ օբյեկտիվ է, քանի որ որքան մեծ տարածքից են հավաքում հաշվարկի համար նյութերը, այնքան ավելի շատ է միջինացվում գնահատման մակարդակը: Բացի այդ, անհնար է հաշվի չառնել տեղեկությունների օբյեկտիվության հանգամանքը՝ օրինակ, կապված աշխատավարձի, մարդու իրավունքների խախտման ցուցանիշների մեծությունների հետ:

Վերևում նշվածը թույլ է տալիս պնդելու, որ անհրաժեշտ է ունենալ գնահատման այլ մեթոդ, որը հնարավորություն կտա գնահատել պետական կառավարման մեծությունը, կապված տվյալ գործունեության հետ անմիջապես (ոչ թե անուղղակի): Ուստի պրագմատիկ մոտեցման օգտագործման ժամանակ կիրառվում է մեկ այլ մեթոդ՝ պահանջմունքային, արդյունքայնություն և ծախսային արդյունավետության հարաբերությունների որոշումը: Այդ առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ հաճախ կարծում են, որ ձեռքբերված արդյունքների հարաբերությունը առաջադրված նպատակին (նպատակային արդյունավետության) և ռեսուրսների հարաբերությունը այդ արդյունքներին (ծախսային և ռեսուրսային արդյունավետություն) սպառում են պետական կառավարման արդյունավետությունը: Դրանով հանդերձ պրագմատիկ մոտեցումը չի սպառվում միայն արդյունքայնության (նպատակահարմար) և տնտեսական (ծախսային) արդյունավետության տարբերակմամբ (տարբերությամբ): Բացի այդ, բավարար չէ խոսել միայն ծախսերի նպատակահարմարության և արդյունքայնության մասին: Անհրաժեշտ է նաև գործունեության նպատակների հիմնավորվածության վերլուծություն, այսինքն պետական գործունեության արդյունավետությունը նրա նպատակների նորմատիվային իդեալների և արժեքային նորմերի համապատասխանության տեսանկյունից, որոնք ընդունվում են հանրության կողմից՝ նրա զարգացման որոշակի փուլում: Այդ արդյունավետությունը կոչվում է պահանջմունքային: Ուստի արդյունավետության համալիր հասկացությունը՝ համաձայն պրագմատիկ մոտեցման նշված մեթոդի, համապատասխանում է հետևյալ արտահայտությանը.

$$U_h = U_{պ} \times U_w \times U_s, \text{ որտեղ } U_{պ} = \eta/\zeta, U_w = \tau/\lambda, U_s = \mu/\sigma, \quad (3)$$

$U_{պ}$  ցուցանիշը որոշում է պահանջմունքային արդյունավետությունը և հաշվարկվում է որպես նպատակների հարաբերություն պահանջմունքներին, իդեալներին և նորմերին:  $U_w$  ցուցանիշը որոշում է արդյունքային արդյունավետությունը և հաշվարկվում է որպես ձեռքբերված արդյունքների հարաբերություն առաջադրված նպատակներին: Վերջապես,  $U_s$  ցուցանիշը ծառայում է որոշելու ծախսային արդյունավետությունը և հաշվարկվում է որպես ծախսերի հարաբերություն ձեռքբերված արդյունքներին:

Նշված մեթոդը հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ գնահատել պետական իշխանության մարմինների գործունեությունը սահմանված գոր-

ծունեության շրջանակներում, ինչը մեծացնում է տվյալ գնահատականի արդյունքների գործնական նշանակությունը: Սակայն, մի շարք ցուցանիշներ միշտ չէ, որ կարելի է անհրաժեշտ ճշգրտությամբ որոշել, որը հիմնականում վերաբերում է որակական նշանակություններին: Այդ պատճառով էլ պրագմատիկ մոտեցման օգտագործման դեպքում հնարավոր է նաև պետական կառավարման համակարգի արդյունավետության գնահատման մեթոդի կիրառումը նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ենթահամակարգի կառավարման արդյունավետության գնահատման հիման վրա: Այդ դեպքում խնդիրները հանգում են պետական կառավարման առանձին ոլորտներում կառավարման համակարգի արդյունավետության գնահատման խնդիրների մասնակի լուծմանը և դրանց հիման վրա ամբողջական գնահատման ստացմանը՝ առանձին ոլորտների կարևորության վարկանիշային գնահատումների մեծությունների միջոցով: Յուրաքանչյուր դեպքում վարկանիշային մեծությունները կարող են որոշվել փորձագիտորեն, ելնելով ժամանակի որոշակի ժամանակում պետությունում առանձին հիմնախնդիրների կարևորությունից:

Գնահատման նշված մոտեցումներով դրանց ցանկը չի սպառվում: Գործնականում գոյություն ունեն նաև պետական կառավարման մարմինների գործունեության արդյունավետության գնահատման այլ մոտեցումներ, որոնց շարքում կարելի է անվանել անմիջականորեն իշխանության մարմինների կողմից բավականին ակտիվորեն օգտագործվող մոտեցումը, որը հենվում է մի շարք գնահատումների համալիր միավորման վրա:

Այսպիսով, պետական կառավարման արդյունավետության գնահատման վերը բերված մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս որոշակի ճշգրտությամբ գնահատել կառավարման որակը, ինչի առնչությամբ կարծում ենք, անհրաժեշտ է ընդունել << կառավարության համապատասխան որոշում, որով կհաստատվի վերը բերված արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը, ինչպես նաև դրա կիրառման կարգը:

**Արամ ԽԱՉԱՏՈՒՅԱՆ**

**Հանրային կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը**

*Բանալի բառեր. հանրային կառավարում, պետական կառավարում, պետական կառավարման արդյունավետություն, սոցիալական արդյունավետություն*

Հանրային կառավարման արդյունավետության գնահատման տեսական և գործնական բնույթի հիմնահարցերի ուսումնասիրությունը առանձնահատուկ նշանակություն և կարևորություն ունի տնտեսագիտության և կառավարման հիմնախնդիրների շարքում: Աշխատանքում առանձնահատուկ անդրադարձ կա պետական կառավարման արդյունավետությանը, կառավարման արդյունավետության գնահատմանը, գնահատման չափանիշներին, ներկայացված են կոնկրետ առաջարկներ պետական կառավարման արդյունավետության գնահատման մեթոդաբանության վերաբերյալ:

**Aram KHACHATURYAN**

**Public administration efficiency assessment methodology**

*Key words: public administration, state administration, efficiency of public administration, social productivity*

The study of theoretical and practical issues of evaluation of the effectiveness of public administration is of particular importance and significance among the problems of economics and governance. There is a special reference to the effectiveness of public administration, assessment of governance efficiency, evaluation criteria, concrete proposals on the methodology of public administration efficiency assessment.

**Арам ХАЧАТУРЯН**

**Методология оценки эффективности публичного управления**

*Ключевые слова: публичное управление, государственное управление, эффективность государственного управления, социальная эффективность*

Изучение ключевых проблем теоретических и практических вопросов оценки эффективности публичного управления имеет особое значение и важное место среди проблем экономики и управления. В работе особое внимание уделяется на эффективность государственного управления, оценку эффективности управления, критерии оценки, конкретные предложения по методологии оценки эффективности государственного управления.

**ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵԱՏՄ ԱՆԴԱՄ  
ԵՐԿՐՆԵՐՈՒՄ . ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՆԵՐ**

**Խաչատուր ԻԳԻԹՅԱՆ**

ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոնի առկա ասպիրանտ

Բանալի բառեր ներդրումային գործունեություն, օտարերկրյա ներդրող,  
մասնավորեցում, ձեռնարկատիրություն, սեփականության իրավունք, հարկային  
դրույքաչափ

Ժամանակակից պայմաններում ՀՀ տնտեսությունում ներդրումային գործունեության ակտիվացումը հնարավոր է պետության հետևողական և արդյունավետ ներդրումային քաղաքականության շնորհիվ<sup>327</sup>: Իհարկե, վերոնշյալ կետերի շուրջ բարեփոխումներ իրականացվել են, սակայն դեռևս գոյություն ունեն կառուցվածքային խնդիրներ, որոնք բավարար չեն օտարերկրյա ներդրողի վստահությունը շահելու համար:

Տնտեսական զարգացման նախադրյալներից մեկը ներդրումային ռեսուրսների ներգրավելու ունակությունն է, որն իր հերթին հիմք է հանդիսանում տնտեսական աճի համար: Ներդրումների աճի ապահովումը լուծում է մի շարք կարևորագույն խնդիրներ, ինչպիսիք են աշխատատեղերի ստեղծումը, նոր տեխնոլոգիաների ներգրավումը, նոր շուկաների բացահայտումը, նրանց հասանելիությունը և այդ շուկաների մուտք գործելու հնարավորությունները: Հետևաբար, Հայաստանի ներդրումների խթանումը և աջակցումը տնտեսական զարգացման առանցքային և առաջնահերթ խնդիրներից է: Խնդրի լուծումը զգալի չափով պայմանավորված է երկրում ներդրումների խթանման և արդյունավետ գործող համակարգի ձևավորմամբ: Հայաստանում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման խնդիրներն առավել արդիական դարձան անկախության հռչակումից հետո, նոր տնտեսական համակարգի ձևավորման հետ մեկտեղ, երբ երկրի տնտեսությունը կտրուկ անկում ապրեց: 1990-ական թթ. կեսերի մասնավորեցման փորձը մեր հասարակության մեջ և տնտեսական կյանքում չձևավորվեց այն լիարժեք պայմաններն ու նախադրյալները, որոնք անհրաժեշտ էին այդ մասնավորեցմանը հետևող ներդրումների ներգրավման և ձեռնարկատիրության խթանման հա-

<sup>327</sup> Միմոնյան Ա. «ՀՀ ներդրումային միջավայրի վերլուծությունը» «Հանրային կառավարում» գիտական հանդես, թիվ 2-3, Երևան, 2010թ. էջ 53:

մար: Ներկայումս իրենց արդիականությունը չեն կորցրել ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնք պայմանավորված են այդ միջավայրը կարգավորող տնտեսական, օրենսդրական գործոններով և վարչական ընթացակարգերով: Հայաստանի ներդրումային միջավայրը աչքի է ընկնում բարձր ռիսկայնությամբ, ինչը պայմանավորված է առկա քաղաքական որոշակի անորոշությամբ և անկայունությամբ, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով:

Ներդրումների ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի վերլուծությունը ենթադրում է այն իրավական հենքի ուսումնասիրությունը, որը կապված է ներդրողների իրավական կարգավիճակի, ներդրումների պաշտպանության պետական երաշխիքների, ներդրումներ և դրանցից ստացվող դրամական հոսքերի հարկման և մաքսային կարգավորման, ներդրողների և աշխատանքային ռեսուրսների ազատ տեղաշարժի և մուտքի արտոնագրերի տրամադրման, արժեթղթերի շուկայի առանձնահատկությունների, սեփականության իրավունքի, վեճերի լուծման համար գոյություն ունեցող ընթացակարգերի և բազմաթիվ այլ ոլորտների հետ, որոնք եթե ոչ ուղղակիորեն, ապա անուղղակիորեն ազդում են ներդրումային որոշումներ վրա:

Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար առաջնահերթ գործոններ են հանդիսասանում ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի կայունությունը և կանխատեսելիությունը, որը ենթադրում է ներդրումների լիարժեք պաշտպանության իրավական երաշխավորում: Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ներդրումները օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող լիովին ձեվավորված և մաքողջ ծավալով գործող ենթակառուցվածքներ: ՀՀ ներդրումային միջավայրի պետական կարգավորման կարևորագույն բաղադրիչներից մեկը «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքն է<sup>328</sup>, որը սահմանում է ՀՀ տարածքում օտարերկրյա ներդրումների իրականացման, իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմքերը և ուղղված է՝ օտարերկրյա ներդրողների իրավունքների, օրինական շահերի, գույքի պաշտպանության ապահովմանը, օտարերկրյա նյութական և ֆինանսական միջոցների

<sup>328</sup>«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 04.07.1994թ.:

ներգրավմանը, առաջավոր տեխնոլոգիաների, կառավարման և կազմակերպման փորձի ներդրման և արդյունավետ օգտագործման նախադրյալների ստեղծմար: Օրենքով սահմանվում են օտարերկրյա ներդրումների պաշտպանության պետական երաշխիքները, որոնք բացառում են որևէ խտրականություն հօգուտ տեղական ներդրողի<sup>329</sup>: Միաժամանակ, օրենքը սահմանում է, որ կարևորագույն բնագավառներում օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով կարող են սահմանվել լրացուցիչ արտոնություններ, ինչպես նաև սահմանվել տարածքներ, որտեղ, ելնելով ազգային անվտանգության ապահովման պահանջներից, օտարերկրյա ներդրողների և օտարերկրյա ներդրումներով ձեռնարկությունների գործունեությունը սահմանափակվում կամ արգելվում է:

**Աղյուսակ 1.** ԵԱՏՄ երկրների զուտ ներդրումների շարժընթացը 2000-2016թթ (նախորդ տարվա նկատմամբ, %)<sup>330</sup>

	Հայաստան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Տաջիկստան
2000	127	117	102	149	137	...
2001	106	112	97	145	86	...
2002	145	103	106	111	90	...
2003	141	112,5	121	117	93	...
2004	115	112	121	123	102	150
2005	141	110	120	134	106	112
2006	138	117	132	111	106	170
2007	120	123	116	114	105	215
2008	103	110	124	115	106	141
2009	63	87	105	103	131	82
2010	98	106	116	97	91	113
2011	91	111	118	103	97	103
2012	97	107	88	104	142	77
2013	92	100,8	109	107	108	114
2014	100	98,5	94	104	125	125
2015	98,8	89,9	81,2	103,7	114,0	128,3
2016	87,5	99,1	82,6	102	105,8	120,3

<sup>329</sup> Հարկ է նշել այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության համաձայն, օտարերկրյա քաղաքացիներն ու իրավաբանական անձինք որպես սեփականություն հող ձեռք բերելու իրավունք չունեն:

<sup>330</sup> <http://www.cisstat.com/>

Հարկ է արձանագրել, որ ընդհանուր առմամբ, «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը կարելի է բնութագրել որպես բավականին ազատականօրենք: Օտարերկրյա ներդրումները կարող են Հայաստան մուտք գործել ազատորեն, առանց որևէ լրացուցիչ թույլատվությունների, սուբյեկտիվ կամ որոշակի ցուցանիշով քննություն անցնելու: Սակայն փոժը ցույց է տալիս, որ միայն այս օրենքի առկայությունը բավարա նախապայման չէ մեծածավալ ներդրումների ներգրավման համար, քանի որ ինչպես նշվեց վերևում, ներդրումային որոշումների վրա ազդում են բազմաթիվ այլ գործոններ, այդ թվում նաև այլ օրենսդրական նորմեր և փասթաթղթեր: Ինչպես ցույց են տալիս է աղյուսակ 1-ի տվյալները, ԵԱՏՄ անդամ երկրներում և ՀՀ-ում ներդրումային հոսքերը սկսել են նվազել 2014-2015թթ. ընթացքում, ինչը պայմանավորված է նաև անդամ երկրներում ներդրումային քաղաքականության փոփոխության հետ:

2017 թվականի առաջին եռամսյակում կապիտալ ներդրումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ իրական արտահայտությամբ աճել են շուրջ 2.7%-ով՝ պայմանավորված պետական ներդրումների շուրջ աճով և մասնավոր ներդրումների վերականգնմամբ: Ներդրումներին դրականորեն է նպաստել անշարժ գույքի հետ կապված գործունեության և հանքագործության ոլորտներում կատարված ներդրումների աճը, բացասաբար է ազդել տրանսպորտի և մշակող արդյունաբերության ճյուղերում կատարված ներդրումների նվազումը<sup>331</sup>:

Հարկ է նշել, որ օրենսդրությունը և որոշակի կարգավորումները որոշիչ դեր են կատարում ներդրումների ներգրավման և ձեռնարկատիրական գործունեության ակտիվացման գործում: Կայուն, պարզ և թափանցիկ իրավական դաշտը արագ զարգացող ներդրումային միջավայրի կարևոր նախադրյալ է: Իրավական դաշտի կայունության ապահովման համար անհրաժեշտ է բարձրացնել օրենքների բովանդակության, ինչպես նաև դրանց մշակման և ընդունման գործընթացների թափանցիկության և կանխատեսելիության մակարդակը<sup>332</sup>: Այս առումով, կարևորվում է ՀՀ-ի ներդրումային ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կատարելագոր-

<sup>331</sup> Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների կապիտալ շինարարությանն ուղղվող մասին: Մանրամասն՝ Ծինարարություն հատվածում:

<sup>332</sup> Legislative and Policy Engagement. Guidelines for Retirement and Health. CA 2015 p. 3- 56/



ծումը, որը կարող է կամ խթանել, կամ դադարեցնել օտարերկրյա ներդրումների հոսքը դեպի Հայաստան, ուստի, նպատակ ունենալով ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման՝ հանրապետությունում իրականացվում է «բաց դռների» քաղաքականություն: Այդ առումով, 1994 թվականից մինչ օրս հանրապետությունում գործում է՝ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը<sup>333</sup>, ինչպես նաև տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի ներդրումներին վերաբերող այլ դրույթները:

ՀՀ ներդրումային գրավչության ապահովման համար առաջնահերթ են քաղաքական, իրավական համակարգի կայունությունը, ինչպես նաև քաղաքական և տնտեսական ազատականությունը (օրինակ ցածր հարկային դրույքաչափերը, շուկայական հավասար պայմանները)<sup>334</sup>: Այս ամենը նպաստում է ինչպես լրացուցիչ ռեսուրսների, այնպես էլ առկա հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործմանը: Նշված բոլոր պայմանները պետք են ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման առումով, ինչը հնարավորություն կտա ներգրավել ներդրումներ թե՛ ներքին, թե՛ արտաքին աղբյուրներից: Դա է գլխավոր պատճառը, որ ներկայում ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորումը տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակներից է<sup>335</sup>:

Յուրաքանչյուր երկրի ներդրումային միջավայրի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների ողջ համալիրի վրա մեծ ազդեցություն ունեն համաշխարհային առևտուրը և արտաքին տնտեսական հարաբերությունները:

<sup>333</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=34872>

<sup>334</sup> Անանյան Ա. Ներդրումային գործընթացների կարգավորման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր ՀՊՏՀ» գիտական հանդես, Երևան 2013թ. էջ 50

<sup>335</sup> Պարոնյան Մ. Ներդրումային միջավայրի ձևավորման հիմնարար (մրցակցային) գործոններն ու դրանց փոխհարաբերության հիմնախնդիրները, ֆինանսներ և էկոնոմիկա հանդես, #5(155) մայիս, 2013 թ. էջ 24

**Khachatur IGITYAN**

**Analysis of investment environment in member countries of Eurasian Economic Union: financial issues and challenges**

*Key words: investment activity, foreign investor, privatization, entrepreneurship, property right, tax rate*

For the formation of a favorable investment climate, the priority is the sustainability and predictability of the regulatory framework regulating investment, which implies the legal protection of full investment protection. In order to effectively implement investment policy, there is a need for investment support and investment, as well as fully developed and viable infrastructures dealing with investment and investor protection.

**Хачатур ИГИТЯН**

**Анализ инвестиционного климата в странах ЕЭС: финансовые проблемы и вызовы**

*Ключевые слова: инвестиционная деятельность, иностранный инвестор, приватизация, предпринимательство, право собственности, налоговая ставка*

Для формирования благоприятного инвестиционного климата приоритетом является устойчивость и предсказуемость нормативной базы, регулирующей инвестиции, что подразумевает правовую защиту полной защиты инвестиций. Для эффективного осуществления инвестиционной политики существует потребность в инвестиционной поддержке и инвестициях, а также в полностью развитых и жизнеспособных инфраструктурах, связанных с инвестициями и защитой инвесторов.

**Խաչատուր ԻԳԻԹՅԱՆ**

**Ներդրումային միջավայրի վերլուծությունը ԵԱՏՄ անդամ երկրներում.**

**Ֆինանսական խնդիրներ և մարտահրավերներ**

*Բանալի բառեր. ներդրումային գործունեություն, օտարերկրյա ներդրող, մասնավորեցում, ձեռնարկատիրություն, սեփականության իրավունք, հարկային դրույքաչափ*

Ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորման համար առաջնահերթ գործոններ են հանդիսանում ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի կայունությունը և կանխատեսելիությունը, որը ենթադրում է ներդրումների լիարժեք պաշտպանության իրավական երաշխավորում: Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ներդրումները օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող լիովին ձևավորված և մաքող ծավալով գործող ենթակառուցվածքներ:

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՆԵՐ

Սուրեն ԹՈՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ Բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. անշարժ գույք, շուկայի սեզմենտ, շարժական գույք,  
սեփականության իրավունք

Անշարժ և այլ (շարժական) գույքերի միջև հիմնական տարբերությունը անշարժ գույքի տեղայնացումն է: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով անշարժ և շարժական գույքերի բնութագրականներն ու բնորոշումները կանոնակարգման, կարգաբերման և գործածության տեսանկյուններից առաջին հայացքից իր մեջ պարունակում, հասկացվում և կրում է որոշակի երկակիություն: Այն է՝ գույք ընդհանրական հասկացությունը մատուցվում է իբրև անշարժ և շարժական գույքերի պարզ հանրագումար, ընդ որում՝ անշարժ գույքի սահմանումը տրվում է մանրամասն, իսկ շարժականի դեպքում կատարվում է «թվաբանական» գույք հանրագումարի և իրավաբանորեն հաստատված «անշարժ գույք» իրողության տարբերությամբ կամ արստրահմամբ:

«Գույք» = «Անշարժ գույք» + «Շարժական գույք»

Հատկանշանական, որ անշարժ գույքի բազիսային բաղադրիչ հանդիսացող հողը և հողի հետ կապված բոլոր հարաբերությունները հանգամանորեն քննարկված են ՀՀ հողային օրենսգրքում, ընդ որում սահմանված է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հողերին վերաբերվող մասով հողային հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ՀՀ հողային օրենսգրքի դրույթների հաշվառմամբ և գերակայությամբ:<sup>336</sup> Անշարժ գույքի բնութագրման համար անհրաժեշտություն է առաջանում բազային հող հասկացությունը բերել միավորի տեսքի, ներմուծել հողամաս հասկացությունը և այդ ճանապարհով ամբողջացնել անշարժ գույքի և շարժական գույքի էական տարբերությունները: Հողամասը՝ հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքի մաս է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), զըտնըվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում:

Անշարժ գույքը սահմանվում է այսպես՝ հողամասերը, ընդերքի մասերը, մեկուսի ջրային օբյեկտները, անտառները, բազմամյա տնկիները, ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները և հողին ամրակցված այլ գույքը,

<sup>336</sup> ՀՀ Հողային օրենսգրք, հոդված 1, պարագրաֆ 3:

այսինքն՝ այն օբյեկտները, որոնք անհնար է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ հանգեցնում են դրանց բնութագրման փոփոխման, դադարման կամ նպատակային նշանակությամբ՝ հետագա օգտագործման անհնարինության<sup>337</sup> Այստեղից պարզ է, որ բնության մեջ երկու նույնպիսի անշարժ գույք գոյություն ունենալ չի կարող, զոնե այն պատճառով, որ նրանցից յուրաքանչյուրը գտնվում է իր առանձնացված տեղում և նրանք տարբերվում են հասցեներով: Անշարժ գույքի յուրահատկություններից մեկը այն է, որ նա չի հանդիսանում բորսային առևտրի առարկա, որովհետև անշարժ գույքը չի կարող բնութագրվել սերտիֆիկատով: Շարժական գույքը բնութագրվում է հենց սերտիֆիկատով, կարող է ստուգվել նրա համապատասխանությունը նկարագրությանը և վաճառվել մեծ քանակությամբ: Անշարժ գույքի դեպքում վերջինս որպես կանոն չի հանդիպում:

Մի շարք պետություններում «գույք» հասկացությունը բացատրվում է այսպես՝ իրերի ամբողջականություն, որը հանդիսանում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի սեփականություն (այդ թվում փողը, արժեթղթերը): Ասվածը շատ պարզ է ու հասարակ պայմանով, որ սահմանված է «սեփականության իրավունք» հասկացությունը: Այսինքն, եթե օգտագործվող տերմինները և հասկացությունները չսահմանվեն և չստանան իրական իմաստ, ապա հարցի քննարկումը կլինի անիմաստ: Այդ պատճառով անդրադառնանք մի շարք հասկացությունների և ձևակերպումների սահմանմանն ու նկարագրությանը: Սեփականությունը իրավաբանական հասկացություն է, որը բնութագրում է որևէ բանի պատկանելությունը մեկին (մի քանիսին) և բացառում այդ իրողության պատկանելությունը ուրիշներին: Սեփականություն կարող են հանդիսանալ և առարկանները և իրավունքները:<sup>338</sup> Սեփականությունը առարկա է, եթե այն հեշտությամբ կարելի է ֆիզիկապես տեղաշարժել և իրավունք է, եթե այն հնարավոր չէ ֆիզիկապես տեղաշարժել: Սեփականության առաջին տեսակը ընդունված է անվանել շարժական գույք, երկրորդը՝ անշարժ գույք: Շարժական գույքը կարող է ամրակայված լինել անշարժ գույքին, այդ դեպքում նրա անջատումը կարող է ազդել անշարժ գույքի արժեքի վրա, այդպիսի գույքը անվանվում է ֆիքսված կամ կապակցված գույք: Ընդհանուր առմամբ անշարժ գույքի գլխավոր կոմպոնենտը հողն է: Հողին ամրակայված գույքերը ունեն իրենց սահմանումները, սակայն հողը չի սահմանվում: Տրամաբանությունը այսպիսին է, այն ինչ ստեղծել է մարդը կարող է և սահմանել, այն ինչ ինքը չի ստեղծել նկարագրվում է իրեն բնորոշ հատկություններով: Հողը կարելի է բնութագրել հետևյալ հատկություններով.

- ֆիզիկական անշարժելիությունը,

<sup>337</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 134:

<sup>338</sup> Գնահատողների միության «Ինֆորմացիոն տեղեկագիրք», դեկտեմբեր 1999 թ.

- հավերժությունը,
- անհամասեռությունը,
- սակավությունը,
- տեղակայումը,
- Ֆիզիկական բարելավումները (հողին ամրակայված գույք, կառուցապատում շենքեր, շինություններ, ժամանակավոր կառույցներ):

Անշարժ գույքի շուկան տարբերվում է այլ շուկաներից, քանի որ այն որոշակի մեխանիզմների ամբողջականություն է, որոնց միջոցով սեփականության իրավունքները և նրանց նկատմամբ հետաքրքրությունները փոխանցվում են մի անձից մյուսին, որոշվում և սահմանվում են գները, ընտրվում են հողօգտագործման տարբերակներ: Ընդհանրապես շուկայի իմաստը վաճառողներին և գնորդներին հանդիպեցնելու մեջ է, որը գործողությունների և ընթացակարգերի բազմակի պրոցես է և դիտարկվում է տնտեսա-իրավական առանձնացված դաշտում: Շատ հաճախ գործարքի գինը որոշվում է կողմերի սակարկություն անելու ունակություններով: Այս ամենից գատ, անշարժ գույքի շուկան շերտավորված է՝ սեգմենտավորված:<sup>339</sup> Այն սեգմենտավորվում է ըստ մի շարք պարամետրերի.

- ըստ օգտագործման - բնակելի օգտագործման, կոմերցիոն, գրասենյակային, արտադրական, գյուղատնտեսական նշանակության կամ հողամասերի շուկաները նույնը չեն;

- ըստ աշխարհագրական գործոնի – յուրաքանչյուր համայնք կամ թաղամաս կարող է ունենալ իր շուկան, միևնույն քաղաքի տարբեր հատվածների շուկաները կարող են տարբերվել իրենց շուկայական պայմաններով:

- ըստ գնի - գոյություն ունեն տարբեր գների անշարժ գույքեր, բարձրարժեք անշարժ գույքի գնորդները տարբերվում են առավել ցածր գներով անշարժ գույքի գնորդներից;

- ըստ գույքի որակի – քաղաքի տարբեր թաղամասերում գտնվող գրասենյակները նույն որակի չեն, կան բարձրարժեք թաղամասեր, որտեղ գույքի նկատմամբ որակական պահանջները ավելի խիստ են, քան ցածրարժեք թաղամասերում;


- ըստ ներդրումային նկատառումների - գնորդների մի մասը ցանկություն ունի գնել այնպիսի գույք, որը հակված է արժեքի աճի, մյուս մասը՝ այնպիսի գույք, որը կբերի շատ եկամուտ, մեկ ուրիշ մաս պարզապես կատարում է ներդրումներ և այլն;

---

<sup>339</sup> Д.ж. Фридман, Н. Ордуеу, Анализ и оценка приносящей доход недвижимости, Москва, Дело 1997, стр. 23:

• ըստ սեփականության իրավունքի իրավագործությունների - գույքը կարող է վարձակալվել, այս դեպքում օտարվում են օգտագործման և տիրապեծման իրավագործությունները:

Ի տարբերություն այլ շուկաների, որտեղ ապրանքի արժեքը սովորաբար որոշվում է առաջարկի և պահանջարկի մեծ քանակության փոխհարաբերությամբ, այս շուկայում հնարավոր են սեզմենտներ, որտեղ առաջարկները և պահանջարկը սակավ են: Գոյություն ունեն շուկայի սեզմենտներ, որտեղ կարող է լինել մեկ առաջարկ և մեկ գնորդ, հատկապես հատուկ նշանակության անշարժ գույքի սեզմենտում: Անշարժ գույքի կառուցվածքային կարգավիճակը կարելի է բնորոշել հետևյալ կերպ.



Այդպիսի գույքերը ունեն օգտագործման սահմանափակ հնարավորություն, իսկ երբեմն օգտագործման միակ հնարավորություն: Անշարժ գույքի կառուցումը երկարաժամկետ գործ է: Դա նշանակում է, որ գների աճի ժամանակ դժվար կլինի մեծ արագությամբ ապահովել շուկան համապատասխան քանակի առաջարկով: Նաև անշարժ գույքի անհամապատասխան մեծ առաջարկի դեպքում գների հիմնականում մնում են ցածր, քանի դեռ ողջ վելցուկային գույքը չի վաճառվել: Այս ամենից կարելի է կատարել հետևյալ եզրակացությունը՝ շուկայի ուսումնասիրության ժամանակ պետք է հստակ պատկերացնել շուկայի ուսումնասիրվող սեզմենտը և կատարել այդ սեզմենտի տվյալների հավաքագրում ու մշակում:

**Սուրեն ԹՈՐՈՍՅԱՆ**  
**Անշարժ գույքի շուկաներ**

*Բանալի բառեր. անշարժ գույք, շուկայի սեգմենտ, շարժական գույք, սեփականության իրավունք*

Անշարժ գույքի հասկացության բնութագրման, բացահայտման ճգրիտ սահմանման համար անհրաժեշտ է այն դիտարկել տարբեր տեսական դատողությունների, հիմնավոր եզրահանգումների և պրակտիկ իրադրությունների համադրման պայմաններում: Քանի որ անշարժ գույքի շուկան լայն իմաստով տեղեկատվական բազմաթիվ հոսքերի և տնտեսա-իրավական շերտերի ընդլայնված բախում է, ուստի հայցորդի կողմից հողվածում բերված մոտեցումները, շարժական գույքի հետ ունեցած տարբերությունները, շուկայի մասնակիցների հետաքրքիր դասակարգումներն ու խմբավորումները կարող են հիմք հանդիսանալ հետագա կոնկրետ դիտարկումների և բազմագործոն վերլուծությունների համար:

**Сурен ТОРОСЯН**  
**Рынки недвижимости**

*Ключевые слова: движимое имущество, недвижимое имущество, сегмент рынка, право на собственности*

Понятия характеристики недвижимости, проблемы его типичного и конкретного определения необходимо рассмотреть в рамках различных теоретических предположениях, выводах и практических ситуациях. Поскольку рынок недвижимости в широком смысле олицетворяет множество информационных потоков и слоев расширения экономического и правового трения, поэтому подходы статьи, различие с движимым имуществом, группы и участники рынка могут стать основой для дальнейших конкретных наблюдений и многофакторного анализа.

**Suren TOROSYAN**  
**Real estate markets**

*Key words: real estate, property rights, market segment, movable estate*

To accurately define the description and disclosure of the concept of real estate it is necessary to consider it in the context of different theoretical judgments, substantiated conclusions and practical situations. Since the real estate market is a widespread clash of information flows and economic layers in a broader sense, so the approach taken by the applicant in the article, the differences between the mobile market and the market participants may be based on the following observations and multidimensional analyzes.

**ԲԶՋԱՅԻՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Հակոբ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. բջջային կապ, ծառայություններ, մարքեթինգ

Բջջային կապի ծառայությունների շուկան զարգացման ընթացքում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների: Տեխնոլոգիայի զարգացման հետ մեծ փոփոխությունների են ենթարկվել բջջային կապի ծառայությունները՝ որոշները գրեթե դուրս են եկել գործածությունից (ինչպես օրինակ փեյջինգը և ֆաքսը), որոշներն ավելացել ու մեծ տարածում են ստացել (ինչպես օրինակ բջջային ինտերնետը): Այս իրողությունների ներքո անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել բջջային կապի ծառայությունների մարքեթինգային առանձնահատկությունները:

Այդ նպատակով բջջային կապի ծառայությունները դիտարկենք մարքեթինգային տեսության մեջ հայտնի ապրանքի երեք հիմնական մակարդակների կտրվածքով՝ բազային ապրանք (core product), իրական ապրանք (actual product) և լրահամալիրով ապրանք (augmented product)<sup>340</sup>: **Բազային ապրանքի** մակարդակը վերաբերում է այն հիմնական օգուտին, որը գնորդը ստանում է ապրանքը գնելիս, այսինքն՝ գնորդի խնդրի լուծումն է: Բջջային կապի ծառայության պարագայում բազային ապրանքը (բջջային կապի ծառայությունը) կապի հաստատումն է կողմերի միջև: Այս ծառայությունները հնարավորություն են տալիս տեղեկատվություն փոխանակել մարդկանց և սարքավորումների միջև: Ընդ որում տեղեկատվության փոխանակումը կարող է լինել ինչպես մարդ-մարդ, այնպես էլ մարդ-սարքավորում (և հակառակը) և սարքավորում-սարքավորում սխեմայով (machine to machine, M2M): Որպես օրինակներ կարող են լինել՝ բաժանորդների միջև տեղի ունեցող զանգերը, բաժանորդի զանգը ֆիրմայի զանգերի կենտրոն և ավտոմատացված ծայնային մենյուից օգտվելը, բաժանորդի կողմից ավտոմատացված հաղորդագրության ստացումը, բանկոմատի կողմից ինտերնետի միջոցով տեղեկա-

<sup>340</sup> Ph. Kotler, V. Wong, J. Saunders, G. Armstrong, “Principles of Marketing”, Fourth European Edition, 2005, p. 539.



տվության փոխանցումը բանկի տվյալների բազա և այլն: Բջջային կապը սպառողին թույլ է տալիս կրճատել հեռավորու-թյունը և խնայել ժամանակը:

Ապրանքի երկրորդ մակարդակը **իրական ապրանքն** է: Այն իրենից ենթադրում է բազային ապրանքի հիմնական օգուտների վերափոխումը իրական ապրանքի: Այս մակարդակը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից՝ որակի մակարդակ (quality level), ապրանքի և ծառայության բնութագրիչներ (product and service features), ոճավորում (styling), մակնիշային անվանում (brand name) և փաթեթավորում (packaging)<sup>341</sup>: Ըստ այդմ կարող ենք ասել, որ բջջային կապի ծառայության դեպքում այս մակարդակը ենթադրում է այն ամենի առկայությունը, ինչը հնարավոր է դարձնում բջջային կապի ծառայության մատուցումը սպառողին, այդպիսիք կարող են լինել՝ բջջային կապի ծառայության մատուցման համար անհրաժեշտ բաժանորդային սարքավորումը (հեռախոս, պլանշետ, wifi երթուղիչ և այլն), բջջային ցանցի բազային կայանները, SIM քարտերը, սակագնային փաթեթները և այլն:

Հաջորդ մակարդակը **լրահամալիրով ապրանքն** է, որը ներառում է հավելյալ ծառայություններ ու օգուտներ, որոնց միջոցով ապրանքն ավելի ամբողջական է դառնում: Թերևս, բջջային կապի ծառայության դեպքում լրահամալիրով ապրանքը ներառում է այնպիսի լրացուցիչ ծառայություններ, ինչպիսիք են SIM քարտի առաքումը բաժանորդին, ծառայության միացումն ու կարգավորումը և այլն: Այս լրացուցիչ ծառայությունները հավելյալ արժեք են ավելացնում հիմնական ծառայությանը և կարող են հանդիսանալ մրցակցային առավելություն բջջային կապի օպերատորի համար: Բջջային կապին բնորոշ են ծառայություններին հատուկ բոլոր հիմնական հատկանիշները<sup>342</sup>.

1. Շոշափելի չէ: Բջջային կապի ծառայությունը հնարավոր չէ զգալ զգայարաններով (շոշափել, տեսնել, լսել, համտեսել, հոտ քաշել) մինչ այն ձեռք բերելը, ուստի՝ բաժանորդը դրա մասին պատկերացում կազմելու համար պիտի հիմնվի օպերատորի նկարագրության վրա: Թեև բջջային կապը շոշափելի չէ, դրա մատուցման համար անհրաժեշտ են ֆիզիկական բաղադրիչներ բջջային սարքավորումը, SIM քարտը, բազային կայանները և այլն:

<sup>341</sup> Ph. Kotler, V. Wong, J. Saunders, G. Armstrong, “Principles of Marketing”, Fourth European Edition, 2005, էջ 540

<sup>342</sup> Тультяев Т.А., “Маркетинг услуг”, Московская финансово-промышленная академия, Москва, 2005, էջ 9-12

2. Արտադրվում և սպառվում է միաժամանակ. բջջային կապի ծառայությունն արտադրվում է այն ժամանակ, երբ սպառողն այն օգտագործում է:

3. Որակը փոփոխական է: Բջջային կապի ծառայության որակը կարող է փոփոխվել տարբեր գործոնների ազդեցությամբ, օրինակ, կախված այն բանից, թե որտեղ է սպառողն օգտվում բջջային կապի ծառայությունից, որքանով է բջջային ցանցը ծանրաբեռնված տվյալ պահին և այլն:

4. Բջջային կապի ծառայությունը հնարավոր չէ պահեստավորել: Սա նշանակում է, որ օրինակ, բջջային կապի օպերատորը չի կարող նախօրոք արտադրել և պահեստավորել որոշակի ծավալով բջջային կապի ծառայություն, որպեսզի բարձր պահանջարկի շրջանում սպասարկի սպառողներին:

Բացի վերոնշյալից, բջջային կապին բնորոշ է սեզոնայնությունը: Օրինակ, բջջային կապի ծառայությունների սպառումը, սովորաբար, մեծանում է երրորդ եռամսյակում, ինչը պայմանավորված է զբոսաշրջիկների ներհոսքով: «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում<sup>343</sup> տրվում է դրա բնորոշումը. «ծառայություն, որը, որպես կանոն, մատուցվում է հատուցման դիմաց, և ամբողջությամբ կամ մասամբ բաղկացած է էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ազդակների հաղորդումից, իսկ համապատասխան դեպքերում՝ ազդակների ուղղորդումից, սակայն չի ներառում էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով հաղորդվող բովանդակության նկատմամբ խմբագրական հսկողություն տրամադրող կամ իրականացնող ծառայությունները», ինչպես նաև *ձայնային ծառայության* բնորոշումը. «տեղական կամ միջազգային հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայության մատուցում, որն ամբողջովին կամ մասամբ կազմված է իրական ժամանակում կամ գրեթե իրական ժամանակում երկկողմ ձայնային հաղորդակցությունից՝ անկախ դրա հիմքում ընկած տեխնոլոգիայից և որի համար ամբողջովին կամ մասամբ օգտագործվում է հանրային համակցման ցանցը»: Համաձայն ԱՎԾ՝ հեռահաղորդակցության կապը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը լարային, անլար և արբանյակային հեռահաղորդակցական համակարգերի միջոցով<sup>344</sup>: Մարքեթինգի առումով նպատակա-

<sup>343</sup> «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքը՝ համար ՀՕ-176-Ն, ընդունված 08.07.2005 թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2005.08.24/54(426) Հոդ. 1034

<sup>344</sup> ՀՀ ԱՎԾ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2017, էջ 331

հարմար է, ելնելով ոլորտի ուսումնասիրությունից, առանձնացնել բջջային կապի ծառայության երկու հիմնական տեսակ՝ *սակագնային փաթեթ* և *ծառայություն*: **Սակագնային փաթեթն** (ՍՓ) իրենից ներկայացնում է բջջային կապի հիմնական ծառայությունների (ձայնային, SMS, MMS, ինտերնետ և այլն) ամբողջությունը և սահմանում է դրանց տարիֆիկացման համակարգը: Օրինակ, Ucom-ի «Ս!Պարզ» սակագնային փաթեթի շրջանակներում դեպի տեղական բոլոր ցանցեր և Արցախ զանգի մեկ թույլի սակագինը, Ucom-ի ցանցում տեսազանգի մեկ թույլի, շարժական ինտերնետի մեկ ՄԲ-ի, դեպի ՀՀ և Արցախի ցանցեր մեկ SMS-ի, միջազգային համարներին ուղարկվող մեկ SMS-ի, դեպի տեղական ցանցեր մեկ MMS-ի սակագինը սահմանվում են 15 դրամ, իսկ մեկ միջազգային MMS-ի սակագինը 290 դրամ<sup>345</sup>: Սակագնային փաթեթներն իրենց կազմությամբ տարբերվում են միմյանցից: Ընդհանուր առմամբ, սակագնային փաթեթները կարող ենք բաժանել երկու տեսակի՝ ա) սակագնային փաթեթներ, որոնք բաղկացած են միայն ծառայությունների բազային սակագներից, բ) ՍՓ-ներ ներառումով: Առաջին դեպքում բաժանորդը վճարում է միավոր օգտագործած ծառայության դիմաց (ինչպես վերը նշված օրինակում), երկրորդ դեպքում բաժանորդը վճարում է տվյալ սակագնային փաթեթի ամսավարձը և ստանում որոշակի ներառումներ՝ տվյալ ամսվա ընթացքում (սովորաբար 1 ամիս կամ այլ ժամկետներով) սպառելու համար: Օրինակ, VivaCell-MTS-ի «Viva 1500» սակագնային փաթեթը 1500 դրամ ակտիվացման գումարի դիմաց ներառում է 1500 թույլ ներցանցային խոսելաժամանակ, 1000 ՄԲ ինտերնետ և 150 SMS դեպի ՀՀ բջջային ցանցեր 30 օր գործողության ժամկետով<sup>346</sup>:

**Ծառայությունները**, սովորաբար, սակագնային փաթեթի մեջ ներառված չեն լինում: Դրանք ակտիվացվում են ի հավելումն սակագնային փաթեթի և փոփոխության ենթարկում ՍՓ-ի որևէ բաղադրիչ կամ բաղադրիչներ: Ծառայությունները նույնպես լինում են տարբեր տեսակի, օրինակ, դրանց ակտիվացումը կարող է տրամադրել որևէ ծառայության որոշակի փաթեթ կամ որոշակի ժամանակահատվածում փոփոխել սակագնային փաթեթի բազային սակագներից մեկը և այլն: Օրինակ, Beeline-ի «Giga 3 ԳԲ» ծառայու-

<sup>345</sup> <https://www.ucom.am/hy/personal/personal-mobile-services/voice-prepaid/u-simple/>

<sup>346</sup> <https://www.mts.am/Individual-customers/mobile-connection/Tariffs-and-discounts/Viva-tariff-plans/For-prepaid/viva-1500>

թյունը 2000 դրամ ամսավճարի դիմաց 31 օր գործողության ժամկետով տրամադրում է 3 ԳԲ գերարագ ինտերնետ առանց մեգաբայթային տարիֆիկացման<sup>347</sup>, իսկ «Ռուսաստանյան» ծառայությունը 1000 դրամ ամսավճարի դիմաց 30 օր ժամկետով թույլ է տալիս զանգել ՌԴ Beeline բջջային ցանց և բոլոր ֆիքսված ցանցեր 20 դրամ/րոպե, իսկ ՌԴ այլ բջջային ցանցեր 35 դրամ սակագնով<sup>348</sup> (առանց ծառայությունն ակտիվացնելու զանգահարելու դեպքում 1 րոպեի արժեքը 192 կամ 168 դրամ/րոպե՝ կախված օրվա ժամից<sup>349</sup>): Ուսումնասիրելով ՀՀ բջջային կապի ծառայությունները՝ կարող ենք նշել, որ ժամանակի ընթացքում հավելյալ ծառայություններն այսօր բջջային կապի ծառայության հիմնական բաղկացուցիչներից են՝ օրինակ SMS-ը, MMS-ը և ինտերնետը: Բացի այդ, բջջային կապի օպերատորները «ՍՓ + ծառայություն» առաջարկից անցում են կատարում ներառումով/փաթեթով սակագնային փաթեթին: Նախկինում սպառողներին առաջարկվում էին տարբեր սակագնային փաթեթներ՝ միանալու նաև առանձին ծառայությունների: Բջջային կապի օպերատորները մրցակցում էին սակագնային փաթեթների բազային սակագները փոփոխելով և սպառողների համապատասխան սեգմենտների համար որոշակի առանձին ծառայություններ մշակելով: Հետագայում տրամադում գտան ներառումով սակագնային փաթեթները: Ներկայումս ՀՀ բջջային կապի բոլոր օպերատորները երկու առաջարկներից էլ ունեն, սակայն մշակվում են ներառումով սակագնային փաթեթներ կամ փաթեթների շարք, որի ներառումների ծավալի աճին զուգընթաց աճում է նաև ամսավարձը կամ ակտիվացման վճարը: Սա օպերատորին հնարավորություն է տալիս գրավել սպառողների տարբեր թիրախային խմբեր: Սովորաբար բոլոր օպերատորները ներառումով սակագնային փաթեթներում ներառում են գործնականում անսահմանափակ (երբեմն ծավալը սահմանափակվում է, սակայն միևնույն ժամանակ այնքան մեծ է լինում, որ միջին վիճակագրական սպառողն ամբողջ ծավալը չի օգտագործում) րոպեներ ներցանցային զանգերի համար:

Ժամանակին բջջային կապի օպերատորներն իրենց ապրանքացանկում ունեին ծառայություններ կամ ՍՓ-ներ, որոնք որոշակի վճարի դիմաց որոշակի գործողության ժամկետով (սովորաբար 1 ամիս կամ օր) տրամա-

<sup>347</sup> [https://beeline.am/customers/mobile/internet\\_services/details/giga-3/](https://beeline.am/customers/mobile/internet_services/details/giga-3/)  
<sup>348</sup> <https://beeline.am/customers/mobile/services/details/rusastanyan/>  
<sup>349</sup> <https://beeline.am/customers/mobile/services/details/mezhdunarodnaya-svyaz/>

դրում էին *անսահմանափակ ինտերնետ* (գործնականում ինտերնետի ծավալը սահմանափակված էր միայն ինտերնետի արագությամբ, որը սահմանվում էր տվյալ ծառայությամբ կամ ՍՓ-ով): Այդուհանդերձ, որոշ ժամանակ անց փորձը ցույց տվեց, որ նման ծառայությունները կամ ՍՓ-ները շահեկան չեն բջջային կապի օպերատորի համար, և քանի որ ինտերնետից օգտվողների թվաքանակը գնալով աճում էր, բջջային կապի օպերատորները որոշեցին անցում կատարել այլ մոդելի, այդպիսով շեշտը դնելով ամսվա կամ օրվա ընթացքում ինտերնետի որոշակի ծավալ տրամադրող ծառայությունների կամ ՍՓ-ների վրա<sup>350</sup>:

Բջջային կապի ծառայության տարբեր առաջարկների համատեքստում կարևոր է նշել Over-the-top (OTT) հավելվածների ազդեցության մասին: Դրանց լայն տարածումից փորձեց օգտվել Beeline-ը, որն իր Սմարթ սակագնային փաթեթի ներառումներում ավելացրեց WhatsApp հավելվածով անվճար շփումը (սակագնային փաթեթի ներառումների ակտիվ գործողության ընթացքում): Օպերատորն այդ առաջարկով թերևս նպատակ ուներ ներգրավել հնարավորինս շատ բաժանորդներ, սակայն, հավանաբար այս քայլն իրեն այդքան էլ չարդարացրեց: Ենթադրաբար, WhatsApp հավելվածի միջոցով տրամադրվող անվճար շփման պատճառով օպերատորն ունենում էր ֆինանսական չիրացված պոտենցիալ, այսինքն բջջային տրաֆիկի (րոպեներ, SMS-ներ, ՄԲ-եր) մի հատվածը, որից ֆիրման կարող էր եկամուտ ստանալ, ընկերությանը եկամուտ չէր բերում (քանի որ դրանք փոխարինվում էին հավելվածով անվճար շփումով), իսկ առաջարկի միջոցով ներգրավվող բաժանորդների քանակը, հավանաբար, բավարար չէր նկարագրված ֆինանսական արդյունքը փոխհատուցելու համար: Այդպիսով, որոշ ժամանակ անց օպերատորն իր սակագնային փաթեթի ներառումներից բացառեց WhatsApp հավելվածով անվճար շփումը: Սա յուրօրինակ փորձ էր բջջային կապի օպերատորի կողմից՝ OTT ծառայությունների ներկայացրած մարտահրավերը հրնարավորություն դարձնելու, որը սակայն չհաջողեց: Իսկ Orange Armenia-ն փորձ արեց տարածել Libon հավելվածը՝ իր բաժանորդներին անվճար տալով 30 օր գործողության ժամկետով 30 րոպե միջազգային զանգեր կատարելու

<sup>350</sup> Հարկ է նշել, որ ՀՀ բջջային կապի օպերատորների անվանացանկում ներկայումս կան ծառայություններ կամ ՍՓ-ներ, որոնք տրամադրում են անսահմանափակ ինտերնետ, սակայն դրանք շատ քիչ են և հիմնականում նախատեսված են համակարգչով, պլանշետով կամ USB երթուղիի օգնությամբ ինտերնետից օգտվելու համար

համար, սակայն այս հավելվածը ևս լայն տարածում չգտավ և ժամանակի ընթացքում մոռացվեց հայ սպառողի կողմից: Ի տարբերություն Beeline-ի, որը ոչ մի կապ չունի WhatsApp հավելվածի հետ, Orange Armenia-ի պարագայում պետք է նշել, որ Libon հավելվածն, ըստ էության, պատկանում էր (ներկայումս նույնպես) միջազգային Orange ընկերությանը:

Վերջին տարիներին ՀՀ բջջային կապի ծառայությունների շուկայում զարգանում են բջջային և ֆիքսված կապի զուգամետ (կոնվերգենտ) ծառայությունները, այսինքն՝ բջջային կապի և ֆիքսված կապի ծառայությունները մատուցվում են մեկ փաթեթով: Այդպիսի առաջարկի օրինակ է Beeline-ի «Quatro» սակագնային փաթեթների շարքը, որը ներառում է ֆիքսված ինտերնետ, բջջային կապ և IP հեռուստատեսություն<sup>351</sup>: Ucom-ը նույնպես ունի նման առաջարկ՝ «4Play» փաթեթի տեսքով, որը հանդիսանում է «TriplePlay» ծառայության և «Ucom Ունիվերսալ» ծառայության համադրություն<sup>352</sup>: Նշված երկու օպերատորներն էլ տրամադրում են թե ֆիքսված կապի և թե բջջային կապի ծառայություններ, ինչը նրանց թույլ է տալիս հանդես գալ նման առաջարկներով: Բջջային կապի օպերատորներից միայն VivaCell-MTS-ը դեռ նման առաջարկ չունի, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն 2017 թ. մայիս ամսին ձեռք բերեց «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ ակտիվները՝ կարող ենք ասել, որ այն ևս ապագայում կտրամադրի զուգամետ ծառայություններ<sup>353</sup>: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ մոտ ապագայում ֆիքսված և բջջային կապի զուգամետ ծառայություններն ավելի լայն թափով կզարգանան ու կդառնան բջջային կապի օպերատորների ապրանքացանկի կարևորագույն տարրերից մեկը, քանի որ բջջային կապի օպերատորի մի քանի ծառայություններից օգտվելու հանգամանքը տեսակաՆորեն կնվազեցնի տվյալ օպերատորի ծառայություններից սպառողի հրաժարվելու հավանականությունը:

<sup>351</sup> <http://quatro.beeline.am>

<sup>352</sup> <https://www.ucom.am/hy/personal/best-deals/4-play/>

<sup>353</sup> <https://www.mts.am/about-us/news/detail/2017/05/16/vivacell-mts-has-acquired-the-assets-of-the-adc-company>

### **Հակոբ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

#### **Բջջային կապի ծառայությունների մարքեթինգային առանձնահատկությունները (<< օրինակով)**

*Բանալի բառեր. բջջային կապ, ծառայություններ, մարքեթինգ*

Բջջային կապի ծառայությունների շուկան զարգացման ընթացքում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների: Տեխնոլոգիայի զարգացման հետ մեծ փոփոխությունների են ենթարկվել բջջային կապի ծառայությունները՝ որոշները գրեթե դուրս են եկել գործածությունից (ինչպես օրինակ փեյջինգը և ֆաքսը), որոշներն ավելացել ու մեծ տարածում են ստացել (ինչպես օրինակ բջջային ինտերնետը): Այս իրողությունների ներքո անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել բջջային կապի ծառայությունների մարքեթինգային առանձնահատկությունները, որի համար իրականացրել ենք << բջջային կապի օպերատորների ծառայությունների առաջարկների վերլուծություն:

### **Акоп БАГДАСАРЯН**

#### **Маркетинговые особенности услуг мобильной связи (примером РА)**

*Ключевые слова: мобильная связь, услуги, маркетинг*

Рынок мобильной связи во время развития подвергся многим изменениям. С развитием технологии большие изменения несли услуги мобильной связи – некоторые почти вышли из обихода (как, например, пейджинг и факс), а другие добавились и получили широкое распространение (как, например, мобильный интернет). Учитывая все сказанное, возникает необходимость изучить маркетинговые особенности услуг мобильной связи, для чего сделали анализ предложений услуг операторов мобильной связи РА.

### **Hakob BAGHDASARYAN**

#### **Marketing features of mobile communication services (by the example of RA)**

*Key words: mobile communication, services, marketing*

The market of mobile communication services underwent big changes during its development. With the development of technology mobile communication services have changed significantly – some have almost gone out of use (like, for instance, paging and fax), some have added and gained large popularity (like, for instance, mobile internet). In the light of these events there's a need to study marketing features of mobile communication services, for which we conducted an analysis of service offers of mobile communication operators of RA.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**Ռոբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

ՀՊՏՀ Միջ. տնտ. հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. տնտեսական դիվանագիտություն, գլոբալ և տարածաշրջանային ինտեգրում, տնտեսության միջազգայնացում, միջազգային հարաբերություններ

Վերջին տարիներին, պետությունների միջև առևտրային և տնտեսական հարաբերությունների բարելավումը գտնվում է դիվանագիտական գործողությունների կենտրոնում: Դիվանագիտության նկատմամբ հետաքրքրության պատմական տնտեսական ակունքների հիմնական պատճառները հետևյալներն են՝

- զարգացած երկրների մեծ մասում ՀՆԱ-ում արտաքին առևտրի և ներդրումների բաժինը՝ տեղական արտադրության համեմատ, միշտ աճում է,

- զարգացած երկրներում շուկայական տնտեսության ձևավորման բարեփոխումները և զարգացման ռազմավարությունը կողմնորոշված է արտահանման ամրապնդմանը, գլոբալ տնտեսությանը երկրի ինտեգրմանը,

- առևտրի և բիզնեսի գլոբալացումը՝ արտադրության ու ծառայությունների ծավալների աճը ստեղծում է երկրների միջև բազմակողմանի կանոնավոր կապերի ակտիվացման անհրաժեշտություն,

- միջազգային առևտրի և ներդրումների խոչընդոտները վերացնելու նըպատակով տարածաշրջանային առևտրային համաձայնագրերի՝ ԵՄ, Մերկոսուրի, ՍԵՖԹԱ-ի, ՆԱՖԹԱ-ի, ԵԱՏՄ-ի և այլնի ընդլայնումը:

Ժամանակակից միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում տնտեսական դիվանագիտության դերի աճին նպաստում են՝

1. Համաշխարհային տնտեսական համակարգում երկրների փոխկապակցվածության ուժգնացումը և միջազգայնացման գործընթացներն ընթանում են գլոբալ և տարածաշրջանային ինտեգրման հարթություններում:

2. Շուկայական տնտեսության տարածքի սրընթաց ընդլայնումը, ազգային տնտեսությունների ազատականացումը և առևտրով ու միջազգային ներդրումներով դրանց փոխազդեցության ուժգնացումը: Համաշխարհային տնտեսության ավելի մեծ թվով սուբյեկտները՝ վերազգային կորպորացիաները, բանկերը, ներդրումային խմբերը լուրջ ազդեցություն ունեն գլոբալ քա-



ղաքականության, միջազգային հարաբերությունների վրա: Նոր անկախ երկրների տնտեսությունների աճող կախվածությունը համաշխարհային շուկաներից, ներդրումներից, տեխնոլոգիաներից ստիպում է իրենց դիրքորոշումը հարմարեցնել միջազգային քաղաքական և ռազմական խնդիրներին:

3. Համաշխարհային տնտեսության գլոբալացումը բարձրանում է նոր քանակական ու որակական մակարդակի՝ արտադրողական ուժերի միջազգայնացման գործընթացների խորացումը համատեղելով բազմազգ կորպորացիաների գերիշխող դիրքերը համաշխարհային շուկայում ամրապնդելու հետ, ինչն էլ մեծացնում է տնտեսական դիվանագիտության դերը, քանի որ այն նպաստում է ի շահ բոլոր երկրների միջազգայնացման զարգացմանը և դրա հետ մեկտեղ հակազդում է գլոբալացման առավելությունները մենաշնորհեցնող ձգտումներին:

4. Կառավարման առաջադիմական մեթոդների, էներգախնայողական և նոր տեխնոլոգիաների ներդրումը, օտարերկրյա ներդրումների միջոցով երկրների և միջազգային կազմակերպությունների միջև համագործակցության զարգացումը: Դա նվազեցնում է գաղտնիության և ավտարկիայի միտումները, արտաքին բացությունը դառնում է նորմ:

5. Արտաքին բացությանը տնտեսության նորարարական աջակցությունը ստեղծում է երկրի դրական իմիջ, կերպար, իսկ դա հանգեցնում է երկրում օտարերկրյա զբոսաշրջության ներգրավվածությանը, որը նաև տնտեսական աճի և օտարերկրյա ներդրումների ներգրավման որոշիչ գործոն է:

Ազգային մրցունակության ամրապնդումը ներառում է ինչպես ներքին տնտեսական (տեխնոլոգիական զարգացման և նորարարական գործունեության), այնպես էլ արտաքին տնտեսական (արտահանման խթանում, արտաքին շուկաների հասանելիության, օտարերկրյա ներդրումների, տեխնոլոգիաների ներգրավման պայմանների բարելավում) քաղաքականության փոխկապակցված և փոխլրացնող մի շարք միջոցառումներ: Հետևաբար, այդ շարքում տնտեսական դիվանագիտությունն ունի առանձնահատուկ տեղ, որը ձևավորում է մրցունակության բարձրացման գործնական խնդիրների լուծման բարենպաստ արտաքին միջավայր: Օտարերկրյա ներդրումների ներգրավումը տնտեսական դիվանագիտության կարևորագույն խնդիրն է: Դրա իրականացման հիմնական միջոցը արտահանողների և նրանց հավանական գործընկերների հանդիպման համար բարենպաստ միջավայր ստեղծելն է՝

բացահայտելու և հստակ սահմանելու համար առաջնահերթություններն ու այն օգուտները, որոնք կարող են ստանալ ապրանքներ և տեխնոլոգիաներ արտահանողները: Սակայն, անհրաժեշտ է ընդգծել պետության մանրամասն մշակված արտահանման ռազմավարության կարևորությունը, որը սահմանում է ապրանքների արտահանման հիմնական ուղղությունները: Սա պետք է լինի առևտրատնտեսական առաքելությունների առաջնային նպատակը:

Պետական իշխանության համակարգում, գրեթե ամենուր, դիտարկվում է տնտեսական դիվանագիտության կարգավիճակի բարձրացում, դրա ինստիտուցիոնալ և կազմակերպչական բազայի ամրապնդում: Երկրի արդյունավետ արտաքին ռեսուրսների մոբիլիզացիայի զարգացման նպատակով մեծանում է երկրների առևտրատնտեսական առաքելությունների թիվը, ընդլայնվում են դրանց գործառույթները, բարելավվում է աշխատանքի որակը, արտաքին տնտեսական գործունեության՝ արտասահմանում տեղական ընկերությունների շահերի լոբբինգը, առևտրաքաղաքական աջակցությունը և այլն: Պետության համար միջազգային տնտեսական համագործակցության բարենպաստ պայմանների ապահովումը, որը, ի վերջո, նպաստում է բնակչության կյանքի որակի և մակարդակի բարելավմանը, ևս տնտեսական դիվանագիտության առաջնային խնդիրներից է: Դրանում մեծ դեր ունեն առևտրատնտեսական առաքելությունները, որոնք օտար երկրներում հանդես են գալիս որպես երկրի «կղզի»՝ հյուրընկալ երկրի մասին կուտակելով լայնածավալ տեղեկատվություն, ի շնորհիվ իրենց անմիջական քաղաքական և այլ բնույթի շփումների և երկարաժամկետ ներկայության: Հետևաբար, առաքելությունների աշխատանքը պետք է ուղղված լինի հյուրընկալող երկրի մասին մատչելի և վստահելի տեղեկատվության ստացմանը, ներդրումային հետաքրքրությունների օբյեկտիվության աստիճանին, փոխշահավետությանը: Անգամ եթե պետք է գնալ զիջումների, ապա օգուտները պետք է ավելի մեծ լինեն, քան փաստացի զիջումները:

Իրենց երկրի մասին դրական կերպարի ընկալման ձևավորումը դիվանագիտական առաքելությունների, Արտաքին գործերի նախարարության և պրոֆեսիոնալ դիվանագետների հիմնական խնդիրն է, թեև արտերկրներում իրենց երկրի մասին ընկալման վրա արմատապես կամ ազդելու նրանց փաստացի կարողությունները հաճախ սահմանափակ են: Ժամանակակից դիվանագիտության հայտնի տեսաբան Բրայան Հոկինգը՝

վերլուծելով երկրի ընկալման ազդեցությունը օտարերկրյա գործարարների կողմից ձեռնարկատիրական գործունեության սկսելու մասին որոշումների վրա, ասել է, որ 72%-ի դեպքում երկրի ընկալումը որոշիչ է այդ երկրի հետ ներդրումային կամ այլ ձևերի տնտեսական համագործակցության որոշումների կայացման համար<sup>354</sup>: Համաշխարհային բանկը, իր «Երկրի մարքեթինգ. գովազդը որպես օտարերկրյա ներդրումների ներգրավման գործիք» հրապարակման մեջ ցույց է տալիս օտարերկրյա ներդրումների ներգրավման մեջ երկրի դրական կերպարի առանցքային նշանակությունը: Նույնիսկ միմյանց հետ ոչ մի դիվանագիտական կապ չունեցող և լուրջ քաղաքական խընդիրներով ծանրաբեռնված երկրների միջև կարող է ձևավորվել ինտենսիվ տնտեսական փոխանակություն: Առավել ևս, երկկողմ կապերը, որոնք հիմնված են ազգային ինքնության դրական ընկալման վրա, առևտրատնտեսական կապերի ավելի դինամիկ և դյուրին զարգացման հիմք են:

Նախաձեռնողականություն, նորարարություն և նորամուծություն՝ ահա այն հատկանիշները որոնք ընկած են դիվանագիտական առաքելությունների հաջողությունների հիմքում: Այստեղ կարևոր են դիվանագիտության գործունեության իրականացման բոլոր մեթոդները, այդ թվում հյուպատոսական, մշակութային և կրթական գործունեությունը, ՁԼՄ-ների և Սփյուռքի հետ հարաբերությունները և այլ ոլորտներում դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատանքները, որոնց հիմնական խնդիրը հյուրընկալ երկրում իրենց երկրի մասին դրական իմիջի ձևավորումն է:

Որպես տնտեսական դիվանագիտության գործիքներ հաճախ օգտագործվում են ֆինանսական ռեսուրսները՝ կամ որպես աջակցություն, կամ որպես սահմանափակումներ, հասնելու համար արտաքին քաղաքականության կոնկրետ նպատակներին: Այդ կապակցությամբ տնտեսական գրականության մեջ առանձնացվում են տնտեսական դիվանագիտության չորս ոլորտներ՝

- նորմատիվաքաղաքական, որը ներառում է աշխարհատնտեսական կապերի կարգավորման միջազգային և բազմակողմ կանոնները,
- տեղեկատվական-վերլուծական, այսինքն միջազգային և ազգային շուկաներում իրավիճակի վերլուծությունը և կանխատեսումը, այդ թվում կարգա-

<sup>354</sup> Баранай П., Филини Н. *Современная экономическая дипломатия*  
<http://www.proza.ru/2010/10/30/706>

վորման կանոնները, միջազգային կազմակերպություններին և խմբավորումներին անդամակցության տնտեսական օգուտների մասին բացատրությունը,

- տեխնիկական-խորհրդատվական, այսինքն տեխնիկական աջակցության ներկայացում և օգնություն զարգացմանը,

- ֆինանսավարկային գործառնություններ, որոնք ունեն հստակ նպատակային ուղղվածություն:

Ելնելով տնտեսական դիվանագիտության հետաքրքրությունների սահմանումից, կարելի է պնդել, որ ազգային տնտեսության շրջանակներում դրա սուբյեկտներն են բոլոր տնտեսական նախարարությունները, կառույցները, որոնց գործունեությունն ուղղված է առևտրի և ներդրումների խթանմանը, առևտրի պալատները, և, իհարկե, Արտաքին գործերի նախարարությունը: Գոյություն ունեն տնտեսական դիվանագիտության բազմաթիվ միջոցներ, որոնք, ընդհանուր առմամբ, վերաբերում են ազգային արտադրողների աջակցության ոչ գնային մեթոդներին: Կապիտալի գլոբալ շուկայի պայմաններում հատուկ նշանակություն են ստանում ներդրումների պաշտպանության և խրախուսման, կրկնակի հարկման բացառման, ֆինանսական ծառայությունների ընդլայնման մասին համաձայնագրերը: Յուրաքանչյուր երկրից դուրս տնտեսական դիվանագիտության սուբյեկտ են դեսպանությունները, հյուպատոսարարները և առևտրային ներկայացուցչությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին կից առաքելությունները (ԱՀԿ, ՄԱԿ-ի տնտեսական կառույցները): Վերջիններիս գործունեությունը ուղղվում է օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, տեխնոլոգիական համագործակցությանը և զբոսաշրջության զարգացմանը:

Ընդ որում, տնտեսական դիվանագիտությունն իրականացվում է քաղաքական, սոցիալական և դիվանագիտական աշխատանքի այլ հատվածների հետ սերտ հաղորդակցության պայմաններում: Այդ տեսանկյունից, պետությունը և դրա գործընկերները, ազգային և օտարերկրյա գործարարների ներկայացուցիչները, ինչպես նաև օրենսդիրները պետք է աշխատեն միասին՝ լուծելու արդի գլոբալ խնդիրները՝ տեխնոլոգիական զարգացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, ինչպես նաև համագործակցեն ավելի ավանդական՝ միջազգային առևտրի և ֆինանսների ոլորտներում:

## Ռոբերտ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

### Տնտեսական դիվանագիտության առանձնահատկությունները ժամանակակից պայմաններում

*Բանալի բառեր. տնտեսական դիվանագիտություն, գլոբալ և տարածաշրջանային ինտեգրում, տնտեսության միջազգայնացում, միջազգային հարաբերություններ, շուկայական տնտեսություն, արտաքին առևտուր, կապիտալ ներդրումներ*

Համաշխարհային պատմության ողջ ընթացքում երկրների արտաքին քաղաքականության հիմնական շարժառիթը եղել է տնտեսական շահը: Նոր տարածքների գրավումը, հարևան երկրներում իշխանություն հաստատումը միշտ հետապնդել է սեփական երկրի ազգային հարստությունը մեծացնելու նպատակ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երկարատև ժամանակաշրջանում, տարածում ստացավ այն իրողության գիտակցումը, որ ռազմական մեթոդներով՝ տնտեսական, հետևաբար և քաղաքական իշխանության հասնելու հնարավորությունը հեռանկար չունի: Ի հայտ եկան նոր մեթոդներ, գործիքներ և կազմակերպություններ, որոնք հնարավորություն տվեցին հասնել նույն նպատակներին, այսպես կոչված, «նուրբ ուժի» օգնությամբ:

## Роберт АЙРАПЕТЯН

### Особенности экономической дипломатии в современных условиях

*Ключевые слова: экономическая дипломатия, глобальная и региональная интеграция, интернационализация экономики, международные отношения, рыночная экономика*

На протяжении всей мировой истории основным мотивом внешней политики стран был экономический интерес. Захват новых территорий, установление власти в соседних странах всегда преследовали цель увеличения национального богатства своей страны. После Второй мировой войны, в течение длительного периода времени, распространился осознание той реальности, что возможности достижения экономической и, следовательно политической власти вооруженными методами не имеет перспективы. Появились новые методы, инструменты и организации, которые позволили им достичь тех же целей, с так называемой, «утонченной силой».

## Robert HAYRAPETYAN

### Features of economic diplomacy in modern conditions

*Key words: economic diplomacy, global and regional integration, internationalization of the economy, international relations, market economy, foreign trade, investment*

Throughout world history, the main motive of foreign policy of the countries was economic interest. The seizure of new territories, the establishment of power in neighboring countries have always pursued the goal of increasing the national wealth of their country. After the Second World War, over a long period of time, the realization that reality of the possibility of achieving economic and, consequently, political power by armed methods has no prospects has spread. There were new methods, tools and organizations that allowed them to achieve the same goals, with the so-called "refined force."

**ՀՀ-ՈՒՄ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՌԻԴԻՏԻ ՏԵՂԻՆ ԼԻՆԵԼԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԲՆՈՒՅԹԻՑ ԿԱԽՎԱԾ**

**Գնել ԽԱԶԱՏՐՅԱՆ**

MBA(US), ACCA (UK), Աուդիտի ղեկավար

Բանալի բառեր. պարտադիր աուդիտ, աուդիտորի եզրակացություն, խոշոր կազմակերպություն, հանրային հետաքրքրության կազմակերպություն

Այս հոդվածում կներկայացնենք, թե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ո՞ր կազմակերպություններից է պահանջվում հրապարակել աուդիտորական եզրակացություն, և ինչքանով է այդ պահանջը հիմնավոր ու արդյունավետ: Նաև, վերլուծության արդյունքից ելնելով կներկայացնենք պարտադիր աուդիտի գծով առկա բացերը և կառաջարկենք բարեփոխումներ:

**Աուդիտորական գործունեության առաջացումը ՀՀ-ում**

Չնայած աուդիտորական ծառայությունը Եվրոպայում տարածվել է 19-րդ դարի սկզբից, այն սկսվել է 1990-ականներից, երբ արտերկրի կազմակերպությունները սկսեցին ներդրումներ կատարել ՀՀ-ում, կամ ցանկացան հավաստիանալ տրամադրվող դրամաշնորհային կամ վարկային միջոցների օգտագործման վերաբերյալ: Այդ ժամանակ էր մեր երկրում բացվեցին առաջին աուդիտորական ընկերությունները, մասնավորապես, 1997թ. բացվեց KPMG-ի գրասենյակը, որը համաշխարհային խոշորագույն աուդիտորական կազմակերպություններից մեկն էր: Աուդիտորական գործունեության կանոնակարգման նպատակով առաջին իրավական ակտերը սկսվեցին ընդունվել 1994թ., մասնավորապես աուդիտորական կազմակերպության կանոնադրության ձևի վերաբերյալ<sup>355</sup>: Սակայն աուդիտի վերաբերյալ հիմնական պահանջները ՀՀ-ում ներդրվեց 2000-ական թվականներից, երբ 2001թ. առաջին անգամ հրապարակվեց աուդիտի միջազգային ստանդարտների հայերեն թարգմանությունը՝ որոշ տեղյանացումով ու փոփոխություններով<sup>356</sup>, իսկ 2002թ. ընդուն-

<sup>355</sup> “Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեության ժամանակավոր կանոնադրությունը հաստատելու մասին”; ՀՀ Կառավարության 16.12.1994թ.-ի N 581 որոշում; (ուժը կորցրած է նախաչվել 1998թ.-ին)

<sup>356</sup> “Աուդիտի ստանդարտները հաստատելու մասին”, ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարություն, 10.09.2001թ.-ի N 324 հրաման (ուժը կորցրած է նախաչվել 2008թ.-ին)

վեց “Աուդիտորական գործունեության մասին” ՀՀ օրենքը<sup>357</sup>, որը որոշ փոփոխություններով գործում է մինչև այժմ:

**Պարտադիր աուդիտի օրենսդրական պահանջը ՀՀ-ում**

Աուդիտորական եզրակացության պարտադիր հրապարակման պահանջը ՀՀ-ում սկսվեց ներդրվել 2000-ական թվականներից, երբ պետությունը այն դիտեց որպես օգտակար գործիք ֆինանսական կառավարման բարելավման և ֆինանսական տեղեկատվության արժանահավատության բարձրացման նպատակով: Մասնավորապես, պարտադիր աուդիտի պահանջը օրենքով 2017թ. ներառում է հետևյալ կազմակերպությունները.

**• Արժեթղթերի շուկայի մասնակիցներ<sup>358</sup>.**

- Բաժնետոմսեր և պարտատոմսեր ցուցակած կազմակերպություններ,
- Ներդրումային կազմակերպություններ,
- Արժեթղթերի շուկայի օպերատոր,
- Կենտրոնական դեպոզիտարիա,
- Թողարկման ազդագիր հրապարակող:

**• Բանկեր<sup>359</sup>:**

**• Ապահովագրական կազմակերպություններ<sup>360</sup>:**

**• Վարկային կազմակերպություններ<sup>361</sup>:**

**• Հիմնադրամներ** - եթե հաշվետու ամսաթվի դրությամբ ունեն 10 միլիոն դրամը գերազանցող ակտիվներ<sup>362</sup>:

**• Հասարակական կազմակերպություններ** - եթե հաշվետու տարվա հանրային ֆինանսավորումը գերազանցում է 5 միլիոն դրամը<sup>363</sup>:

**• Խաղատներ, շահումով, ինտերնետ խաղերի կազմակերպիչներ<sup>364</sup>:**

**• Հեռուստառադիոընկերություններ<sup>365</sup>:**

<sup>357</sup> “Աուդիտորական գործունեության մասին” ՀՀ օրենք, ընդունված է 26.12.2002թ.-ին

<sup>358</sup> “Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենք, 11.10.2007թ. (հոդվ.11.2, 83.1, 128.1, 141.1)

<sup>359</sup> “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենք, 30.06.1996թ.(հոդվ. 43.1.ա)

<sup>360</sup> “Ապահովագրության և ապահովագրական գործուն. մասին” ՀՀ օրենք, (հոդվ. 37.1)

<sup>361</sup> “Վարկային կազմակերպությունների մասին” ՀՀ օրենք, ընդ. 29.05.2002թ., (հոդվ.16)

<sup>362</sup> “Հիմնադրամների մասին” ՀՀ օրենք, ընդունվել է 26.12.2002թ.-ին; (հոդված 39.3)

<sup>363</sup> “Հասարակական կազմակերպությունների մասին” ՀՀ օրենք, 16.12.2016թ. (հոդված 26)

<sup>364</sup> “Շահումով խաղերի, ինտերնետ խաղերի և խաղատների մասին” ՀՀ օրենք, (հոդվ.10.2)

<sup>365</sup> “Հեռուստատեսության և ռադիոյի մասին” ՀՀ օրենք, 09.10.2000թ.: (Հեռուստառադիոյի կազմակերպությունների համար կա պահանջ, որ հրապարակեն տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Սակայն ՀՀ Ֆինանսների նախարարությունը 2017թ.-ին պարզաբանել է, որ դրանք պետք է հրապարակվեն աուդիտի եզրակացությամբ)

**Խոշոր կազմակերպությունների համար պարտադիր աուդիտի օրենսդրական պահանջ**

Պարտադիր աուդիտի պահանջը 2008թ.-ին ներդրվեց խոշոր կազմակերպությունների համար<sup>366</sup>: Որպես խոշոր կազմակերպություն այդ օրենքով սահմանվեց հաշվետու տարում 500 միլիոն դրամի ընդհանուր ակտիվ կամ հասույթ ունեցող կազմակերպությունները: 2009թ.-ին խոշոր կազմակերպության գումարային սահմանաչափը փոխվեց՝ այն դարձնելով մեկ միլիարդ դրամ<sup>367</sup>:

Խոշոր կազմակերպությունների մասով պարտադիր աուդիտի նորմի ներդրումը ամենանշանակալին էր, քանի որ տարեկան աուդիտի ենթակա խոշոր կազմակերպությունների քանակը կազմում էր մոտ 900 կազմակերպություն: Հատկապես, այդ պահանջի կարևորությունը ընդգծվեց, այն խոշոր կազմակերպությունների համար, որոնք մասնակցում էին պետական գնումների համակարգով անցկացվող գնումներին, քանի որ ՀՀ Ֆինանսների նախարարի հրամանով սահմանվեց, որ գնումներին կարող է մասնակցել այն կազմակերպությունը, որոնց համար եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ, ապա այդ աուդիտորական եզրակացությունը պետք է լինի չձևափոխված /դրական/<sup>368</sup>:

Սակայն խոշոր կազմակերպությունների համար պարտադիր աուդիտի պահանջը հանվեց 2014թ.-ին<sup>369</sup>: Այն հիմնավորվեց այդ պահին նոր կառավարության բիզնեսին աջակցելու ռազմավարությամբ, նշելով որ որոշ բիզնեսմեններ դժգոհում են, որ պարտադիր աուդիտը իրենց ոչինչ չի տալիս, այլ լրացուցիչ բեռ է բիզնեսի վրա:

Խոշոր կազմակերպությունների պարտադիր աուդիտի նորմի վերականգնումը առկա է “Հաշվապահական հաշվառման մասին” օրենքում փոփոխություններ կատարելու ՀՀ Ֆինանսների նախարարության նախաձեռ-

<sup>366</sup> “Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենք, ընդունվել է 26.12.2008թ.-ին, (հոդված 7)

<sup>367</sup> “Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենք, ընդունվել է 10.12.2009թ.-ին, (հոդված 1)

<sup>368</sup> “Ֆինանսական միջոցներ” չափանիշի գնահատման համար անհրաժեշտ փաստաթղթի և դրա գնահատման կարգը հաստատելու մասին”, ՀՀ Ֆինանսների նախարարի 20.06.2013թ.-ի N500-Ն հրաման

<sup>369</sup> “Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենք, ընդունվել է 20.05.2014թ.-ին, (հոդված 1)



նությունում, որի վերաբերյալ ռազմավարությունը ներկայացվել է 2017թ.-ի գարնանը, սակայն այդ փոփոխությունները դեռևս ՀՀ Ազգային Ժողով չի ներկայացվել<sup>370</sup>: Մասնավորապես, այդ նախագծով առաջարկվում է փոխել “խոշոր կազմակերպություն” սահմանումը, նրանց նկատմամբ սահմանելով բազմակի բարձր սահմանաչափերի միաժամանակյա առկայություն:

**Աուդիտորական եզրակացության տրամադրման այլ պահանջներ**

Աուդիտորական եզրակացություն նաև պահանջվում է այլ հանգամանքներում. մասնավորապես.

- **Կամավոր** – երբ կազմակերպության սեփականատերերը կամ ղեկավարությունը ցանկանում է անցկանցնել աուդիտ՝ ֆինանսական կառավարման համակարգի բարելավման և արժանահավատ բարձր որակի ֆինանսական հաշվատվություններ ունենալու նպատակով:

- **Գնումների մասնակցության պահանջ** – հատկապես շինարարական գնումների մրցույթում, մրցույթի մասնակից կազմակերպություններից պահանջվում է ներկայացնել աուդիտորական եզրակացություն:

- **Դրամաշնորհների ու վարկային միջոցների ստացում** – Շնորհատուները կամ վարկատուները մեծամասամբ պահանջում են աուդիտորական եզրակացություն ստացված և օգտագործված դրամական միջոցների վերաբերյալ:

- **Պետական բյուջեից ֆինանսավորում** – հաճախ ոչ առևտրային կազմակերպություններից պահանջվում է ներկայացնել աուդիտորական եզրակացություն պետական բյուջեից ստացված միջոցների օգտագործման վերաբերյալ:

**Պարտադիր աուդիտի բացերը և խոչընդոտները ՀՀ-ում**

Չնայած աուդիտի կարևորության վերաբերյալ օրենսդրական ու իրավական նման պահանջների, ՀՀ-ում աուդիտի վերաբերյալ շարունակում է մընալ վստահության պակաս և աուդիտի որակի չպահպանման վերաբերյալ առկա են բազմաթիվ փաստված թերություններ:

Նկատենք, որ վերջին երկու տասնամյակում աուդիտորական գործունեության վերաբերյալ ընդունվել են նշանակալի իրավական ակտեր, թարգ-

<sup>370</sup> “Ֆինանսների նախարարությունը ցանկանում է վերականգնել պարտադիր աուդիտի իրավական նորմը”, <<https://armenpress.am/arm/news/878649/finansneri-nakhararutyuny-cankanum-e-verakangel-partadir.html>>

մանվել ու հրապարակվել են աուդիտի միջազգային ստանդարտների փոփոխությունները, աուդիտորական կազմակերպությունների քանակը անցել է երեք տասնյակից, ստեղծվել և գործում է մասնագիտական ասոցիացիա, ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից իրականացվել են որակի ստուգման միջոցառումներ, առկա են 400-ից ավելի որակավորված աուդիտորներ, սակայն աուդիտի որակը շարունակում է հեռու մնալ ցանկալի մակարդակից:

Դեռևս լայն տարածում ունի “աուդիտորական եզրակացությունների վաճառքը” առանց աուդիտորական ընթացակարգերի իրականացման աուդիտորական եզրակացության տրամադրումը, որը հատկապես լայն կիրառություն ուներ, երբ խոշոր կազմակերպությունների աուդիտը պարտադիր էր: Մասնավորապես, նշենք մի քանի տվյալներ.

- ՀՀ-ում, և՛ նախկինում և՛ հիմա, առկա չէ աուդիտորական կազմակերպությունների արդյունավետ վերահսկողություն, որի արդյունքում աուդիտորական կազմակերպությունները շարունակում են “աուդիտորական եզրակացությունների վաճառքը” առանց որևէ պատասխանատվության:

- Խոշոր կազմակերպությունների աուդիտորական եզրակացությունները մեծամասամբ տրամադրվում են փոքր աուդիտորական կազմակերպությունների կողմից: Մի քանի անձից բաղկացած ընկերությունները տարեկան միջինը տրամադրում էին 50 խոշոր կազմակերպության աուդիտ, որը ակնհայտ հեռու էր նրանց կարողություններից: Նկատենք, որ ՀՀ Ֆինանսների Նախարարությունը 2012թ. և 2013թ. հրապարակել էր խոշոր կազմակերպությունների պարտադիր աուդիտ ամփոփումը<sup>371</sup>, որտեղ առաջ տասնյակում միայն երկու միջազգային աուդիտորական կազմակերպություն էին առկա:

- Թերթերում, սեփական կայքերում կամ ֆինանսական հաշվետվությունների հրապարակման պաշտոնական կայքում՝ [www.azdara.am](http://www.azdara.am), աուդիտորական եզրակացությունները շարունակվում են հրապարակվել առանց աուդիտի ենթարկված կից ֆինանսական հաշվետվությունների, կամ հրապարակվում են ֆինանսական հաշվետվությունների միայն առաջին կամ մի քանի էջերը; որն ակնհայտ հակասում է աուդիտի միջազգային ստանդարտներին, ՀՀ օրենսդրական պահանջներին և հասարակ տրամաբանությանը:

<sup>371</sup> “Հայկական “մեծ քայակը” – 6 աշխատակցով ընկերությունը սպասարկել է 58 խոշոր կազմակերպություն”, <<http://www.banks.am/am/news/newsfeed/7835/>>

• Հրապարակված աուդիտորական եզրակացությունների զգալի մասը չի համապատասխանում աուդիտի միջազգային ստանդարտներին<sup>372</sup>:

• Շատ կազմակերպություններ չեն հրապարակում պարտադիր աուդիտի եզրակացություններ, հաճախ նախընտրելով վճարել չհրապարակման սահմանված տուգանքը: Օրինակ, ըստ ՀՀ Ֆինանսների նախարարության 2013թ. հրապարակված տվյալների, պարտադիր աուդիտի ենթակա խոշոր կառույցների 30%-ը չի հրապարակել աուդիտի եզրակացություն<sup>373</sup>:

• Աուդիտորական ծառայության համար ողջամիտ պահանջվող գինը եր-բեմն գերազանցում է պարտադիր աուդիտի ենթակա կառույցի ֆինանսական հնարավորությունները, օրինակ, հեռուստառադիոյի կառույցների, հիմնադրամների, այլ հասարակական կազմակերպությունների դեպքում:

• Շատ կառույցներ չունեն ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի եզրակացության արտաքին օգտագործողներ, որով նրանց ֆինանսական հաշվետվությունների աուդիտի պահանջը դառնում է ինքնանպատակ:

• Հաճախ աուդիտորական ծառայության գինը շատ ցածր է ողջամիտ գնագոյացումից, որը կասկած է առաջացնում աուդիտի որակի վերաբերյալ:

• Երբեմն աուդիտորական կառույցն անկախ չէ աուդիտի ենթարկվողից:

• Հաշվի առնելով ՀՀ տնտեսական միջավայրը, որոշ կառույցներ չեն կարող անցնել աուդիտի միջազգային ստանդարտներով աուդիտ և ակնկալել պահանջվող չձևափոխված /դրական/ եզրակացություն, օրինակ՝ շատ շինարարական կառույցներ, ստվերում գործող խոշոր կազմակերպություններ, խաղատներ ու շահումով խաղերի կազմակերպիչներ:

### **Երբ է՞ պարտադիր աուդիտը սպեղծում արժեք**

ՀՀ-ում պարտադիր աուդիտի նորմի կիրառման նպատակով կարևոր է հաշվի առնել հետևյալ հանգամանքները.

• Աուդիտորական եզրակացությունը ուղղված է արտաքին օգտագործողներին: Այսինքն, աուդիտի նպատակն է տրամադրել անկախ մասնագիտական կարծիք ֆինանսական հաշվետվությունները օգտագործողներին, ովքեր ներգրավված չեն տնօրինության մեջ: Օրինակ՝ կազմակերպության խոշոր բաժնետերերը ցանկանում է իմանալ թե ինչպե՞ս է դեկավարությունը

<sup>372</sup> “Աուդիտի եզրակացության նշանակալի փոփոխությունը և ՀՀ-ում կիրառումը”, Գնել Խաչատրյան, “Այլընտրանք” եռամսյա գիտական հանդես, 2017 #3. <<http://alternative.am>>

<sup>373</sup> “Ընկերությունները հայտվել են ռիսկային դաշտում”, <<http://armlur.am/51770/>>

տնօրինում սեփական ռեսուրսները; կամ հանրությունը ցանկանում է իմանալ, թե ինչպես է համահայկական հիմնադրամը տնօրինում աշխարհով մեկ հանգանակված նշանակալի գումարները:

- Աուդիտը արժեք ունի միայն այն դեպքում, երբ այն իրականացվում է աուդիտի միջազգային ընդունված ստանդարտներով, գործելավորով և որակի արդյունավետ վերահսկողության համակարգի պահպանումով:

- Աուդիտը հանրության համար կարող է դառնալ վստահելի՝ աուդիտի նկատմամբ արդյունավետ վերահսկողության համակարգի դեպքում:

- Պարտադիր աուդիտի նորմ պետք է սահմանվի միայն այն կառույցների հանդեպ, որոնք ունեն հանրային հետաքրքրություն և նշանակալիություն:

Պարտադիր աուդիտի նորմը պետք է սահմանվի հաշվի առնելով նշված հանգամանքները:

#### **Ամփոփում – առաջարկներ**

Հաշվի առնելով վերոնշվածը պարտադիր աուդիտի նորմի վերաբերյալ՝ այսինքն այն, որ կազմակերպությունները պարտավոր են հրապարակել հաշվետու տարվա ամբողջական ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորի եզրակացության հետ միասին, առաջարկում ենք.

**ա/ խոշոր կազմակերպություններ** - որոնք նախորդող երկու տարիների համար բավարարում են նշված երեք նվազագույն պայմաններից առնըվազն երկուսին, սահմանել պարտադիր աուդիտի նորմ.

- ✓ Ընդհանուր ակտիվները տարվերջի դրությամբ՝ չորս միլիարդ դրամ,
- ✓ Տարվա եկամուտը՝ երկու միլիարդ դրամ,
- ✓ Աշխատակիցների քանակ՝ հարյուր անձ:

Օրինակ, նման կազմակերպությունները ներառում են “Գազպրոմ Արմենիա” ՓԲԸ, “ՀԷՑ” ՓԲԸ, “Քաջարանի Պղնձամոլիբդենային Կոմբինատ” ՓԲԸ, ինչպես նաև պետության և լայն հանրության համար ակնհայտ նշանակալի կարևորություն ու հետաքրքրություն ունեցող այլ կազմակերպություններ: Նրանց քանակը մոտ 300 է, որը երեք անգամ պակաս է նախկին օրենքով սահմանված “խոշոր կազմակերպությունների” քանակից: Նման նախագիծ կա և պետք է ներկայացվի ՀՀ Ազգային Ժողովին:

**բ/ Արժեթղթերի շուկայի մասնակիցներ, բանկեր, ապահովագրական ընկերություններ** – ինչպես առկա է ներկա օրենսդրությամբ:

գ/ **Վարկային** կազմակերպություններ – պարտադիր աուդիտի այժմ առկա նորմը պետք է հանել: Վարկային կազմակերպությունը կարող է պարտադիր աուդիտի ենթարկվել, եթե բավարարի “խոշոր կազմակերպության” սահմանմանը կամ ունենա ցուցակված արժեթղթեր: Վարկային կազմակերպությունը հանրային հետաքրքրություն չի ներկայացնում, քանի որ այն հանրային միջոցներ չի տնօրինում: Եթե վարկային կազմակերպության կրեդիտորները կամ սեփականատերերը ցանկանում են աուդիտ, ապա նրանք կարող են դա անել պայմանագրի կամ կանոնադրության համաձայն:

դ/ **Հիմադրամներ** – պարտադիր աուդիտի նորմի պահանջի սահմանաչափը պետք է փոխել՝ 10 միլիոն դրամ ընդհանուր ակտիվից, դարձնելով՝ 100 միլիոն դրամ հաշվետու տարվա ընդհանուր ծախսեր, քանի որ վերջինը առավել է համապատասխանում հիմնադրամի բնույթին: Այն կարող է նաև պարտադիր աուդիտի ենթարկվել հոգեբարձուների պահանջով:

ե/ **Հասարակական կազմակերպություններ** – պարտադիր աուդիտի շեմ ցանկալի է սահմանել 100 միլիոն դրամը՝ ներկա 5 միլիոն դրամ հանրային ֆինանսավորման դեպքում: Առաջարկը կապված է գումարի նշանակալի լինելու և աուդիտի ողջամիտ ծախսը հաշվի առնելու հանգամանքից: Անշուշտ, հասարակական կազմակերպության ղեկավարությունը կամ առանձին շնորհատու կարող է պահանջել կամավոր աուդիտ՝ համաձայն կանոնադրության:

զ/ **Խաղատներ, շահումով կամ ինտերենետ խաղերի կազմակերպիչներ** – աուդիտի պարտադիր նորմը ցանկալի է հանել: Այն կարող է պարտադիր աուդիտի ենթարկվել, եթե բավարարի “խոշոր կազմակերպության” սահմանմանը, կամ՝ կանոնադրության համաձայն: Նման կառույցները հանրային հետաքրքրություն չունեն և հանրային միջոցներ չեն տնօրինում, իսկ երկու տասնամյակի փորձը ցույց է տալիս, որ այդ կառույցներում աուդիտը հիմնականում վստահություն չի ներշնչում լայն հասարակության կողմից:

է/ **Հեռուստառադիոընկերություններ** - պարտադիր աուդիտի նորմը ցանկալի է հանել: Այն կարող է պարտադիր աուդիտի ենթարկվել, եթե բավարարի “խոշոր կազմակերպության” սահմանմանը, կամ ղեկավարության ցանկությամբ՝ կանոնադրության համաձայն:

Եվ, ինչպես նշեցինք, պարտադիր աուդիտի նորմը կլինի արդյունավետ միայն այն դեպքում, երբ ՀՀ-ում ներդրվի աուդիտի որակի արդյունավետ վերահսկողության համակարգ: Նման համակարգի վերլուծությունը ծավալուն է, և կներկայացվի մեկ այլ հոդվածում:

## **Գնել ԽԱՉԱՏՐՅԱՆ**

### **ՀՀ-ում պարտադիր աուդիտի տեղին լինելը կազմակերպության բնույթից կախված**

*Բանալի բառեր. պարտադիր աուդիտ, աուդիտորի եզրակացություն, խոշոր կազմակերպություն, հանրային հետաքրքրության կազմակերպություն*

Այս հոդվածում ներկայացվել է, թե այժմ ՀՀ-ում ո՞ր կազմակերպություններից է պահանջվում հրապարակել աուդիտորական եզրակացություն և քննարկում է, թե ինչքանով է այդ պահանջը հիմնավոր ու արդյունավետ: Նաև, ներկայացվել է վերլուծություն և առաջարկ, թե Հայաստանի որ կազմակերպություններից է առավել պատշաճ պահանջել պարտադիր աուդիտ, և ինչպիսի սահմանաչափեր պետք է կիրառել:

## **Гнел ХАЧАТРЯН**

### **Актуальность обязательного аудита в зависимости от характера организации в Республике Армения**

*Ключевые слова: Аудит, обязательный аудит, аудиторский отчет, крупная организация, общественная организация, применение в Армении*

В этой статье описывается характер организаций, требующих обязательной аудиторской проверки, и обсуждается актуальность и обоснованность этих требований. Кроме того, рекомендуем какие организации нужно включать в сферу обязательного аудита в Армении и какие пороги следует применять.

## **Gnel KHACHATRYAN**

### **Relevancy of mandatory audit depending on nature of audited organization in the Republic of Armenia**

*Key words: Audit, mandatory audit, statutory audit, auditor's report, big organization, public interest organization, application in Armenia*

This article presents the nature of organizations that required to undertake statutory audit, and discusses whether that requirement is relevant and justified. Also, evaluations and recommendations are presented regarding to what kind of organizations be under the scope of statutory audit in Armenia, and what kind of thresholds should be applied.

**Ձեռներեցների Հոգեբանական Առանձնահատկությունների  
Հասեմասնական Վերլուծություն**

**Սոնա ԷԼՈՅԱՆ**

ԵՊՀ գործնական հոգեբանության վերապատմաստման  
կրթական ծրագրի ուսանող

Բանալի բառեր. Ձեռներեց, հոգեբանական հատկանիշներ, անձ, գործունեություն,  
ռիսկ, մոտիվացիա

Շուկայական տնտեսությունն ունի բազմաթիվ բնութագրիչներ, որոնցից առանձնահատուկ տեղ է հատկացվում բնակչության լայն զանգվածների ներգրավմանը ձեռներեցային գործունեության մեջ, որն էլ իր հերթին բնութագրվում է սուբյեկտի սեփական ռեսուրսները տնօրինելու կարողությամբ: Այն ուղղված է ռիսկի ու անորոշության պայմաններում եկամտի ստացմանը, ինքնակատարելագործմանը, եկամտի բաշխմանը և դրա արդյունքների համար պատասխանատվություն կրելը: Ձեռներեցությունը պատկանում է գործունեության այն ոլորտին, որը պահանջում է հատուկ հատկանիշներ, հետևաբար կարող ենք ասել, որ ոչ բոլոր անհատները կարող են դառնալ հաջողակ և արդյունավետ ձեռներեցներ<sup>374</sup>:

Ձեռներեցային գործունեության արդյունավետությունը մեծ մասամբ պայմանավորված է հոգեբանական գործոններով, ինչպիսիք են՝ մոտիվացիան, բավարարվածությունը, ռիսկի դիմելու աստիճանը, անհաջողության դեպքում վարքի դրսևորումը, ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու ունակությամբ և այլն<sup>375</sup>:

Ոչ բոլոր մարդիկ կարող են դառնալ ձեռներեցներ: Կան սուբյեկտներ որոնց շատ հեշտությամբ է հնարավորություն ընձեռնվում մուտք գործել ձեռներեցության ոլորտ, իսկ մի այլ զանգվաչի դա չի հաջողվում կամ էլ իրենց գործունեությունը ավարտում են անհաջողությամբ: Այստեղ որոշիչ դեր են խաղում անհատի մի շարք հոգեբանական առանձնահատկություններ:

<sup>374</sup>Позняков В.П. (2001). Психологические отношения и деловая активность российских предпринимателей. М.: Изд-во «Институт психологии РАН».

<sup>375</sup>Новиков В.В. (2002). Социальная психология. М.: Изд-во МАПН и РНО, С. 187-188.

Գոյություն ունի հաջողված ձեռներեցության սուբյեկտիվ հոգեբանական նախադրյալների որոշման երկու մոտեցում՝ առաջինը այն ձեռներեցներն են, որոնք օժտված են որոշակի հոգեբանական որակներով, որոնք նրանց հնարավորություն են տալիս հաջողություն գրանցել: Ըստ մյուս մոտեցման այս խմբի ձեռներեցները տիրապետում են գործարար ակտիվության, բայց տարբեր չափով: Քանի որ կայացած ձեռներեցների շրջանակը մեծ չէ, կարելի է հետևություն անել, որ գերիշխում է երկրորդ խումբը:

Ձեռներեցների հոգեբանակն դիմանկարի կարևոր հատկանիշներից են՝

➤ Մտավոր ոլորտ՝ իրազեկություն, կազմակերպչական ձիրք, զարգացած երևակայություն, ճկուն մտածողություն

➤ Հաղորդակցության ոլորտ՝ աշխատակիցների ունակությունները ճիշտ դասակարգելու կարողություն, պատշաճ շփման ունակություն և պատրաստակամություն

➤ Մոտիվացիոն-կամային ոլորտ՝ հակավճություն ռիսկին, ներքին վերահսկողություն, պայքարելու և հաղթելու ձգտում, հասարակական ճանաչում ձեռք բերելու ձգտում:

Այս ամենին պետք է ավելացնել նաև լավատեսությունը և առողջությունը, քանի որ հենց ձեռներեցն ինքն է առաջին հերթին ծավալելու գործունեությունը և կրելու ամբողջ պատասխանատվությունը: Ներկայացված ձեռներեցի պատկերը պատկանում է իդեալական ձեռներեցի մոդելին, բայց իրականում ձեռներեցները տարբեր են լինում և հաճախ չեն պատկանում իդեալական ձեռներեցի մոդելին: Հիմնականում ձեռներեցների տարբեր խմբեր օժտված են լինում այս կամ այն հոգեբանական առանձնահատկություններով և հենց այդ տարբերություններին էլ համապատասխան նրանք ձևավորում են իրենց գործունեությունը:

Ինչպես նշեցինք, որ ոչ բոլոր ձեռներեցներն են պատկանում իդեալական ձեռներեցի մոդելին, հետևաբար նրանց մոտ բացակայում են որոշ հոգեբանական առանձնահատկություններ որոնք վճռորոշ դեր են խաղում նրանց ծավալած գործունեության ընթացքում: Այնուհանդերձ տարբեր հետազոտական աշխատանքների արդյունքներ մատնանշում են այն հանգամանքը, որ բոլոր ձեռներեցների մոտ լավ է արատահայտաված մոտիվացիոն-կամային ոլորտի բաղադրիչները: Եվ դա կարող ենք բացատրել դա այն հանգաման-



քով, որ ձեռներեցը հենց ինքն է առաջին գործող անձը, այս փաստը տարածվում է ձեռներեցության բոլոր ոլորտներում<sup>376</sup>: Ինչպես նաև առանձնահատուկ դեր և նշանակություն ունի նաև "ռիսկը": Ռիսկը ձեռներեցների ամենակարևոր բնութագրիչներից է, կարելի է ասել որ նրանից է կախաված ամբողջ գործունեության հետագա ընթացքը: "Ռիսկ" տերմինը կոմպլեքսային հասկացությաուն է հեևաբար կարող ենք նրան տարբեր սահմանումներ տալ: Ներկայումս կարծիքների շատ մեծ տարանջատում գոյություն ունի, այդ իսկ պատճառով շատ է դժվարեցնում ռիսկի ճշգրիտ ձևակերպումը: "Ռիսկ" տերմինին երկու գլխավոր սահմանում կարող ենք տալ, որը կարող ենք համընդհանուր մոտեցումներ համարել ձեռներեցության մեջ:

Առաջինը դա անհաջողություն գրանցելու հավանականությունն է՝ կորուստ գրանցելու վախը: Երկրորդ դեպքում այն կարող է հանդես գալ ինչպես հաջողություն նվաճելու շանս, բայց այս մոտեցումը հիմնականում դրսևորվում է այն ժամանակ, երբ ձեռներեցը նոր նվաճումների խիստ անհրաժեշտություն է զգում:

Ռիսկ տերմինն անդրադարձել են ոչ միայն տնտեսագետները և հոգեբանները այլ նաև լեզվաբանները: Կառանձնացնեմ Ս. Ի. Օժեգովին, ըստ նրա ռիսկի անբաժան մասնիկն են կազմում անորոշության և վախի զգացումը, այսինքն կարող ենք ասել, որ առանց այս երկու երևույթների առկայության այս տերմինը գոյություն չի ունենա՝ կզրկվի իր իմաստից:

Օ. Renna պնդում էր, որ ռիսկը մարդու գործունեության մի մասն է կազմում, կամ էլ հենց այդ նույն գործունեության արդյունք կարող է հանդիսանալ:

Հոգեբանության մեջ ռիսկը հանդես է գալիս, որպես սուբյեկտիվ հասկացողություն և նրա հավնական արտահայտչաձևներով:

Ռիսկը կապում են նաև անորոշ իրավիճակների հաղթահարման հետ, երբ չես կարող խուսափել ընտրությունից, միաժամանակ հնարավորություն ունենալով գնահատել հնավոր քանակը և որակը: Այս մոտեցման հիմնախնդիրը հանդիսանում է Ալեգինը: Այս մոտեցումը բաղկացած է մի քանի էլեմենտներից՝ նպատակից հրաժարում՝ հանուն, որի իրականանում է մեկ այլ

<sup>376</sup> Chinonye Love Moses, Determining women entrepreneurial Motivation: A review of theoretical Models, Vol. 2 , No. 3 , 2014, pp 43-54.

հնարավորություն, ցանկալի արդյունքին հասնելու ցանկությունը, անցանկալի արդյունքների ի հայտ գալը անորոշության պայմաններում:

Չնայած այս բոլոր տարբեր մոտեցումներին, նրանք ունեն նաև ընդհանրություններ և որպես այդպիսին կառանձնացնեն անորոշությունը<sup>377</sup>: Եթե մարդիկ իմանային թե ինչ է սպասվում իրենց ապագայում կամ էլ ապագան կախված չլիներ ներկայում կատարած գործողություններից ապա կարելի էր ասել, որ Ռիսկ տերմինը գոյություն չէր ունենա: Այս տերմինի գոյությունը կի-մաստավորվի միայն այն ժամանկ, երբ մարդ չի կարողանա կանխատեսել իր գործողության բոլոր հետևանքները և անցանկալի արդյունքներ գրանցելու հավանականությունը:

Գեղեցիկ օրինակ կարող է հանդիսանալ գիտատեխնիկական առաջընթացը: Քանի որ այն հնարավորություն չի տալիս ամբողջովին կանխատեսել գիտական հայտնությունների հետևանքները:

Այնպիսի գործոններ ինչպիսիք են անբավարար ինֆորմացիա օբյեկտի մասին, երևույթի, պրոցեսի, հանգեցնում են անորոշության առաջացման: Մարդը անընդհատ սահմանափակված է անընդմեջ փոփոխվող ինֆորմացիայով, այդ իսկ պատճառով լայն տարածում է գտել "փորձ և մարդ" մեթոդը:

Համաձայն վերը նշված առանձնահատկությունների տարբեր հեղինակներ տվել են ձեռներեցության իրենց մոդելը: Օրինակ ըստ Վարներդի չենք կարող առանձնացնել հստակ խմբեր՝ ձեռներեցների և ոչ ձեռներեցների. նրանք կարող են տարբերվել միայն իրենց գործունեության ակտիվությամբ, որն էլ իր հերթին կախված է այլ գործոններից, օրինակ բյուջեից: Իսկ ըստ Ռոնենի երկրաչափ մոդելի գործունեության նպատակաուղղվածության ու նորամուծությունների փնտրտուքների հիման վրա է կառուցվում ձեռներեցությունը: Այս մոդելի հետաքրքրությունը և առավելությունը կայանում է նրանում, որ հնարավորություն է տալիս հոգեբանական հատկանիշների օգնությամբ տարանջատել ձեռներեցների և կառավարիչների միջև եղած տարբերությունները: Նրանց տարբերությունները առաջին հերթին կարելի է բնութագրել այն հանգամանքով, որ կառավարիչները խուսափում են նորամուծություններ կատարելուց և ռիսկի դիմելուց, չնայած այն հանգամանքին, որ

<sup>377</sup> А. А. Арямов: Общая теория риска: юридический, экономический и психологический анализ, Российская академия правосудия. -2-е изд. -М.: Волтерс Клувер,2010, с.73

դրսևորում են գործարար ակտիվություն: Իսկ ձեռներեցների գործարարությունը զգալիորեն տարբերվում է կառավարիչների վարած քաղաքականությունից. նրանք ձգտում են փոփոխությունների, զարգացման ինչպես նաև ռիսկի:

Հաջողության ձգտումը մարդու հիմնական ցանկություններից մեկն է, որին մենք ձգտում ենք մեր կյանքի ամբողջ ընթացքում: Ձեռներեցների գործունեության սկզբում հաջողության հասնելու ձգտումը միշտ չէ, որ ձևավորվում է գրագետ ձևով, օրինակ նրանք կարող են հաջողություններ գրանցել ուրիշներին վնասելով և կարծես, որ դա իրական հաջողություն է: Ձեռներեցության մեջ հաջողության տարբեր պատկերացումներ գոյություն ունեն: Ձեռներեցների մի մասը հաջողություն են համարում իրենց գաղափարների իրականացումը, մեկ այլ հատված հաջողություն է համարում շահույթ ստանալը և այլն: Չնայած հաջողության տարբեր սահամանումներին, որոնք տալիս են ձեռնարկատերերը գոյություն ունի մի շատ կարևոր հանգամանք. Անկախ իրենց տարիքից, փորձից, պաշտոնից ցանկացած ձեռնարկատեր պետք է շարունակի սովորել, կատարելագործվել, օբյեկտիվորեն գնահատել իր թերություններն ու առավելությունները: Իսկ որպես այդպիսին իբրև համընդհանուր հաջողության ցուցանիշ ձեռներեցների համար հանդիսանում է շահույթի չափը :

Ինչպես ցանկացած մասնագիտություն պահանջում է որոշակի հոգեբանական առանձնահատկություններ, այնպես էլ նա իր հերթին ձևավորում է նոր առանձնահատկություններ: Ձեռներեցությունն էլ որպես գործունեության մի ոլորտ օժտում է ձեռներեցներին որոշակի հատկություններով:

Ձեռներեցներին կարող ենք պայմանորեն բաժանել երկու խմբի՝ հաջողակ ձեռներեցներ և անհաջողակ ձեռներեցներ: Բնականաբար այս երկու խմբի հոգեբանական դիմանկարը զգալիորեն տարբերվում են մեկը մյուսից: Հաջողակ ձեռներեցներին բնորոշ հատկություններն են՝

- Կենսափորձը կյանքում օգտագործելու ունակությունը
- Շփոխականությունը՝ ուրիշների հետ մատչելի լինելը
- Երևույթների էության ընկալումը
- Նպատակասլաց և եռանդուն գործելու կարողությունը
- Նախաձեռնությունը

- Հաստատակամությունը՝ կամքի ուժը
- Ինքնատիրապետումը
- Կազմակերպվածությունը՝ իր գործունեությունը պլանավորելու ունակությունը

Ինչպես և կարելի է ենթադրել անհաջող ձեռներեցների հոգեբանական դիմանկարը կտրուկ տարբերվում է հաջողակ ձեռներեցների դիմանկարից: Նրանց բնորոշ են՝

- Չի հավատում իր ուժերին
- Կասկածանքով է վերբերվում բոլոր մարդկանց և ընդունակ չէ անկեղծ հարգանքի
- Չի սիրում վերլուծական աշխատանք
- Չի ընդունում այլակարծությունը

Չնայած նրան, որ ձեռներեցները պետք է օժտված լինեն մի շարք հոգեբանական առանձնահատկություններով այնպես էլ կան այնպիսիները որոնք պետք է զարգացնել:

Հենց այս փաստի մասին է վկայում է այն հանգամանքը, որ ինչպես Հայաստանում այնպես աշխարհի մի շարք երկրների լավագույն համալսարանները կենտրոնացել են ապագա ձեռներեցներ պատրաստելու հանգամանքի վրա:

Նախկինում արևմտյան տնտեսագետները համարում էին, որ ձեռներեցներ ծնվում են այլ ոչ թե դառնում կամ այլ կերպ ասված պատրաստվում, բայց ներկայումս նրանք հիմնովին վերանայել են և փոխել են իրենց մոտեցումը: Օրեցօր ավելանում են ձեռներեցության վերաբերյալ դասավանդվող առարկաները այնպես էլ դրան զուգահեռ աճում է այս ոլորտով հետաքրքրվող ուսանողների շրջանակը: Այս կտրուկ փոփոխությունը պայմանավորված է հոգեբանության ներթափանցմամբ այս ոլորտ: Հոգեբանությունում պատրաստավծություն ասելով հասկացվում է տեղեկատվության գիտակցաբար արձագանքելու ձևը: Մարդու գործունեության շարժառիթ է հանդիսանում այն հանգամանքը, որ մարդ սկսում է իր պահանջմունքները բավարարել և լուծել իր առջև ծառայացած խնդիրները, որի ժամանակ էլ կարևոր դեր է խաղում նպատակին հասնելու պատրաստակամությունը: Հենց այդ ընթացքում էլ առաջանում են մարդու հիմանական անձնային որակները: Այս պրոցեսը

կարող ենք անվանել մի այնպիսի գործընթաց որտեղ մարդու բնածին և ձեռք-բերովի հատկությունները միաձուլվում են: Պատրաստավածության վրա ազդում են՝ խնդրի էությունը, միջավայրը, շրջապատողների վարքը, մոտիվները, ինքնագնահատականը, հոգեվիճակը: Եվ վերջնական արդյունքում պատրաստավածությունը դառնում է անձի կարևոր և կայուն բնութագրիչ: Իսկ այն հարցին հնարավոր է արդյոք ուսուցանել ձեռներեցություն մասնագետների մեծ մասը համակարծիք են գտնում են, որ ձեռներեցության համար անհրաժեշտ է անձի որոշակի տեսակ ապա պետք է ուսուցանել նրանց: Անձի տեսակը որոշելու համար գոյություն ունեն որոշակի տեստեր, որոնք կիրառում են Հարվարդի համալսարանում: Հարվարդի բիզնեսի դպրոցի պրոֆեսոր Սթիվենսոնը նշում է, որ դպրոցի շրջանավարտները որոնք հետագայում են իրենց բիզնեսը զգալիորեն տարբերվում են մյուս ձեռնարկատերերից, որոնք չունեն հատուկ կրթություն<sup>378</sup>:

Այսպիսով, ներկայացրվեց տարբեր հեղինակների կողմից տրված ձեռներեցների մոդելներ՝ անդրադառնալով նաև այն հանգամանքին, որ ժամանակի ընթացքում ձեռներեցների և նրանց պատրաստման եղանակները զգալի փոփոխությունների են կրել: Հենց այդ փոփոխությունների շնորհիվ էլ շուկայական դաշտը զգալիորեն փոփոխվել է:

---

<sup>378</sup> <http://www.entereprenuer.com>

### **Սոնա ԷԼՈՅԱՆ**

#### **Ձեռներեցների հոգեբանական առանձնահատկությունների համեմատական վերլուծություն**

*Բանալի բառեր. ձեռներեց, հոգեբանական հատկանիշներ, գործունեություն, ռիսկ, մոտիվացիա*

Հոդվածում քննարկվում են ձեռներեցների հոգեբանական դիմանկարի առանձնահատկությունները, որոնք որոշիչ դեր են խաղում ձեռներեցների ծավալած գործունեության մեջ: Ուշադրության կենտրոնում է առնվել այն հանգամանքը թե ինչպես հոգեբանական հատկանիշները կարող են խթանել ձեռներեցների արդյունավետ գործունեությանը: Միաժամանակ ներկայացվել է այն հարցի պատասխանը, արդյոք ձեռներեց դառնում են թե ծնվում՝ ուշադրություն դարձնելով այն փաստին, որ ժամանակի ընթացքում այն փոփոխության է ենթարկվել :

### **Sona ELOYAN**

#### **A comparative analysis of the psychological characteristics of entrepreneurs**

*Key words: entrepreneur, psychological characteristics, activity, risk, motivation*

The article discusses the special features of the psychological portrait of entrepreneurs and which are a decisive factor in business. Paying attention in the fact how psychological characteristics can promote entrepreneurial activity. At the same time article presents the answer to the question whether they become entrepreneurs or born of mentioning to the fact that the answer is changed over time .

### **Сона ЕЛОЯН**

#### **Сравнительный анализ психологических характеристик предпринимателей**

*Ключевые слова: предприниматель, психологические особенности, деятельность, риск, мотивация*

В статье обсуждается особенности психологического портрета предпринимателей и которые имеют решающее значение в их деятельности. Особое внимание уделяется тому, как психологические особенности могут способствовать деятельности предпринимателей. В то же время мы попытались дать ответ на вопрос, предпринимателями рождаются или становятся, обратив внимание на то, что оно со временем изменяется.

**ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՀԵԼԻՈՖՏԻԿԱՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԻ  
ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Թաթույ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Վահե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի հայցորդ

Բանալի բառեր. էներգետիկ անվտանգություն, էլեկտրաէներգիա, ատոմային էլեկտրակայան, արեգակնային էներգիա

Էներգետիկ անվտանգության մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե որքանով է հիշյալ համակարգը խոցելի պետական վերահսկողության և կարգավորման առումներով, հետո նաև՝ թե որքանով է ինքնաբավ, ինչ չափով է ինտեգրված տնտեսությանը, մրցունակության մակարդակը տեղական շուկայում և տարածաշրջանում և տեխնիկական հագեցվածությունը և այլն: Դատելով այն գործընթացներից, որոնք հանգեցրել են հանրային վերահսկողությունից էներգետիկ համակարգի մեկուսացմանը և գույքի օտարման տարբեր եղանակներով ձեռնարկությունների դուրս բերմանը բնական մենաշնորհի կարգավիճակից, երբեմն կարելի է արձանագրել պետական վերահսկողության կորուստ և որոշակի խոցելի վիճակ: Այսօր էներգետիկայի ոլորտի ձեռնարկությունների մոտ գերակշիռ մասը մասնավորեցված է, սակայն ոլորտը համարվում է բնական մենաշնորհ և կարգավորվում է համապատասխան օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, որոնք կոչված են ապահովել Հայաստանի Հանրապետության էներգետիկ, այդ թվում միջուկային էներգետիկայի անվտանգությունը:

Հայաստանի էներգետիկ համակարգն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել ոլորտի հետագա զարգացումն ու անվտանգությունն ապահովելու գործընթացներում:

Նախ, էներգետիկան երկրի այն սակավաթիվ ոլորտներից է, որ ունի բացարձակ մրցակցային առավելություն ինչպես տեղական շուկայում, այնպես էլ տարածաշրջանում:

Երկրորդ, Հայաստանն առաջինն ու առայժմ միակն է տարածաշրջանում ոչ միայն միջուկային էներգիա ստանալու, միջուկային էլեկտրաէներգիա արտադրող ձեռնարկություն կառուցելու և շահագործելու, այլև այդ էլեկտրակայանը վերագործարկելու փորձով:

Երրորդ, միջուկային հումքից ստացվող էլեկտրաէներգիան ամենամաքուրն է բնապահպանական առումով, ինչպես նաև ամենաէժանն այսօր օգտագործվող էներգիայի տեսակներից:

Չորրորդ, էլեկտրաէներգիայի արտադրության մեջ միջուկային էլեկտրաէներգիայի արտադրության տեսակարար կշիռը Հայաստանում ամենամեծն է՝ մինչև 40%, մինչդեռ երկրի տարածքում գործող բոլոր հիդրոէլեկտրակայանների թողարկածը հազիվ 22% է կազմում, իսկ մնացածը բաժին է ընկնում ջերմաէլեկտրակայաններին:

Հինգերորդ, Հայաստանը միակն է տարածաշրջանում ոչ միայն էլեկտրաէներգիայի ինքնաբավությամբ, այլև այն կարողությամբ, որի մասնակի օգտագործումն անգամ հնարավորություն է ընձեռում էլեկտրաէներգիա արտահանել հարևան երկրներ:

Վեցերորդ, հանրապետությունում ներկայումս օգտագործվում է էներգետիկ հզորությունների միայն մեկ երրորդ մասը՝ ստանալով 5,800-6,000 գիգավատ/ժամից ավելի էլեկտրաէներգիա:

Յոթերորդ, միայն էներգետիկայի ոլորտը զարգացնելով և օգտագործելով առկա հնարավորությունները, էլեկտրաէներգիայի արտադրության ավելացմամբ կարելի է ընդհուպ մոտենալ արտաքին առևտրի հաշվեկշռի հավասարակշռմանը՝ վերացնելով վտանգավոր կախվածությունը ներմուծումից, որը ներկայումս կրկնակի անգամ գերազանցում է արտահանմանը և հանգեցնում զգալի նյութական միջոցների արտահոսքին:

Ութերորդ, էներգետիկ հզորությունների ավելացումն իր հետ կբերի նաև նոր աշխատատեղերի ստեղծում: Հզորությունների միայն մեկ երրորդի օգտագործման պայմաններում էներգետիկայի ոլորտում աշխատում են 30.000-ից ավելի մարդ: Սա կթեթևացնի նաև պետության սոցիալական բեռը:

Այս ամենով հանդերձ, փորձ է արվում էներգետիկ ոլորտում կրկնել տընտեսության այլ ճյուղերում թույլ տրված որոշ բացթողումներ: Նախ, խոսելով



պետական կառավարման անարդյունավետության մասին, դարձյալ փորձ է արվում մի ծայրահեղությունից՝ պետական սեփականության ձևից կտրուկ անցում կատարել մեկ այլ ծայրահեղության՝ լրիվ մասնավոր սեփականության: Վերջին տարիներին ակտիվորեն շրջանառվում է նաև էլեկտրաէներգիայի շուկան ազատականացնելու գաղափարը, որն արդեն օրենքի նախագծի տեսքով ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Մինչդեռ կարևոր է հաշվի առնել կառավարման այնպիսի մոդելներ, որոնք ներառում են սեփականության այլ՝ համատեղ, խառը, խմբային, բաժնետիրական և այլ ձևերի օգտագործումը, կոնցեսիոն կառավարման հնարավորությունն ու այլ եղանակներ: Հատկանշական է, որ տնտեսական զարգացման համադրելի մակարդակի վրա գտնվող որևէ երկիր իրեն թույլ չի տվել բնական նման մենաշնորհից հրաժարում: Ավելին, բնական մենաշնորհը, որը տվյալ աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական պայմաններում տնտեսության մեջ ունեցած բացառիկ դերով, ինչպես նաև մի շարք այլ գործոններով տվյալ ոլորտին շնորհված կարգավիճակ է, ամենևին էլ չի նշանակում միայն իրավունքի մենաշնորհ: Հատկապես միջուկային էներգետիկայի պարագայում այն վերածվում է նաև պատասխանատվության մենաշնորհի: Եթե փորձենք թողնել երկրի միջուկային էներգետիկան առանց պետական մենաշնորհի, ապա հնարավորություն կընձեռենք հարևան Թուրքիային և Ադրբեջանին ավելի առարկայական փաստարկներ գտնել առ այն, որ Մեծամորի ատոմակայանը հսկողությունից դուրս է և լուրջ սպառնալիք է տարածաշրջանում: Մի հանգամանք, որը ԵՄ հետ կնքված շրջանակային համաձայնագրում ևս արձանագրվում է մտահոգության համատեքստում: Մյուս կողմից, միջուկային էներգետիկայի պետական մենաշնորհի վերացումը ենթադրում է նոր ատոմակայանի կառուցում, մինչդեռ Եվրամիությունը մի քանի տարի առաջ 100 միլիոն եվրո էր առաջարկել Մեծամորի ատոմակայանի փակման աշխատանքների համար: Մի կարևոր հանգամանք ևս: Միջուկային էներգետիկայի մենաշնորհի վերացումը ենթադրում է որոշակի մրցակցության ծավալում, հետևաբար անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրել այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ Հայաստանում նման մենաշնորհի բացակայության պայմաններում՝ տնտեսության ռազմավարական կարևորության այս ճյուղում:

Էներգետիկ անվտանգության ապահովման կարևորագույն նախապայմաններից է էներգիայի այլընտրանքային և վերականգնվող աղբյուրների օգտագործումը: Մասնավորապես, վերջին տարիներին Հայաստանում մեծ զարգացում է ապրում արեգակնային էներգիայի օգտագործմանը միտված նոր տեխնոլոգիաների մշակումն ու կիրառումը: Այն միտված է ոչ միայն դիվերսիֆիկացնելու էներգետիկ հաշվեկշիռը, այլև էականորեն նվազեցնելու գիտղական բնակավայրերում էներգիայի ավանդական աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիայի սպառումն, ինչը կարևոր սոցիալական նշանակություն է ձեռք բերում:

Գյուղի հելիոֆիկացման գաղափարը պատկանում է գիտնականների խմբին, որը ղեկավարում է «Տեխնոստանդարդ» ընկերության տնօրեն, դոկտոր Վահան Համազասպյանը: Գործունեության տասը տարիների ընթացքում խումբը մշակել և փորձարկել է Հայաստանի տարբեր կլիմայական գոտիներում շահագործման տարբեր հնարավորություններով DV II տիպի համակցված հելիոդիկ համակարգեր: Գյուղերի լայն հելիոֆիկացման գաղափարը քննարկվել է մի շարք տարածաշրջանային եւ միջազգային համաժողովներում, այդ թվում՝ 2007 թ. Հունիսին Ստամբուլի 2-րդ Ստանդարտ ժողովրդավարության և անվտանգության համաժողովում: Կենցաղային տաք ջրի ընդունման և գյուղմթերքների վերամշակման համար սկսվել է տարիներ առաջ և կկիրառվի արդյունաբերական արտադրության մեջ: Հելիոֆիկացման գաղափարը հաստատվել է Ռուսաստանում, Չինաստանում, Թաիլանդում և Բուլղարիայում փորձնական ծրագրերի համար, որոնցից մի քանիսը արդեն մշակումների և իրագործման փուլում են: Ավելին, նշված երկրների որոշ շրջաններում նախագծի համար հատկացվել են հսկայական տարածքներ:

Հելիոֆիկացման հիմնական տարրը հելիո համակարգն է, որը կարող է սահմանվել հետևյալ կերպ.

- արևային ճառագայթման էներգիայի փոխակերպման համար այլ, հեշտ օգտագործվող էներգիայի տեսակների (այսինքն, ջերմային կամ էլեկտրական ջերմային միջոցով) փոխակերպումը;
- արևային էլեկտրակայանները կիրառվում են ջրի և օդի ջեռուցման եւ սառեցման, բանջարեղենի և մրգերի չորացման, ջրի տաքացման և այն էլեկտրաէներգիայի վերածելու, էլեկտրաէներգիայի արտադրման եւ այլ առնչվող նպատակների համար.

- արևային էլեկտրակայանները վերականգնվող էներգիայի էկոլոգիապես մաքուր աղբյուրներ են.

- շատ դեպքերում արևային էներգիայի արտադրությունը խրախուսվում է ավանդական էներգիայի աղբյուրների հետ միասին:

Ծրագրի թիմը սկսել է շահագործման հանձնված տեղամասում գործարանների, ցուցադրական կանգառների և պահեստի կառուցման աշխատանքներից: Բացի այդ, կառուցվել է «Արևային սրճարանի» նոր տեսակ: Հելիոֆիկացիայի գործընթացը սկսած համար առաջին գյուղերից մեկը գտնվում է Արագածոտնի մարզի գեղատեսիլ վայրում, որտեղ կան հարյուրավոր ճարտարապետական հուշարձաններ, այդ թվում IV դարի եկեղեցի եւ XI դարի վանք: Հետևաբար, ենթադրվում է, որ Սառնաղբյուր գյուղը կարող է դառնալ զբոսաշրջիկների համար գրավիչ վայր:

Հելիոֆիկացիայի համակարգի առաջադրման հիմնական նպատակն է ապահովել՝

- տաք ջրամատակարարում և մասնավոր տների և ամառային հանգույցների, հյուրանոցների, պանսիոնատների և հանգստյան տների ջեռուցում;

- ռեստորանների, սրճարանների և բարերի տաք ջրամատակարարման համակարգի համար արևային վակուումային կոլեկտորներ;

- նորակառույց տների և բազմաբնակարան շենքերի տաք ջրամատակարարում;

- լողավազանների ջեռուցման արևային համակարգեր;

- արևային կոլեկտորներ, որոնք պատշգամբներում տեղադրված են և ապահովում են տաք ջրամատակարարում և սպասարկում են քաղաքային բնակարանները տան ջեռուցման համակարգերով;

- ժամանակավոր շինությունների և շենքերի տաք ջրամատակարարում;

- տաք ջրամատակարարում և արդյունաբերական օբյեկտների ջեռուցում:

Գիտնականների խումբը փորձում է օրակարգ ձևավորել՝ սկսելու արևային ջրատաքացուցիչների հզորությունը սկսած 50 կիլոգրամից մինչև 200 կիլոգրամ գյուղական բաղնիքների, դպրոցների և հիվանդանոցների համար: Ծրագրի երկրորդ փուլը կլինի Սառնաղբյուրի գյուղի բաղնիքի և դպրոցի նման սարքավորումները, ինչպես նաև Պ.Հերունիի կողմից նախագծված

արևային էլեկտրակայան կառուցելը: Բացի այդ, նախատեսվում է, որ գյուղական բնակավայրերի, հատկապես՝ հեռավոր գյուղերի բնակիչները հնարավորություն ունենան ստանալ հեղիումային համակարգեր համեմատաբար ավելի բարենպաստ պայմաններով: Նախնական հաշվարկի հիման վրա նախատեսվում է, որ այս նախագծի միջոցների զգալի մասը ձեռք է բերվում՝ էներգախնայողության, արդյունավետության և այլընտրանքային աղբյուրների օգտագործման և այլ հարակից ծրագրերի իրագործման համար: Գյուղի հեղիոֆիկացիան, իհարկե, կենսական և առաջնային խնդիր է: Այնուամենայնիվ, դա չի կարող ինքնանպաստակ լինել: Մեր կարծիքով, այն կարող է խրախուսել և աջակցել նորարարական նոր ձեռնարկության զարգացմանը և միջազգային շուկաներին ներկայացնել «նոու-հաու» և նոր տեխնոլոգիաներ:

Էներգետիկ ճգնաժամը հարկադրում է որոնել այլընտրանքային էներգիայի ավելի արդյունավետ ձևեր, որոնք հավասարապես կարևոր են բոլոր պետությունների համար էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում և էներգետիկ կայուն անվտանգություն ապահովելու համար:

Համակցված helio համակարգի DVH շարքի աշխատանքի կատարումը հիմնված է ընդունող օբյեկտի (փոխարկիչի) արևի լույսի կլանման և օգտագործման բարձր ճշգրտության վրա: Կախված խնդրի լուծման ձևերից՝ համակենտրոնացման մակարդակը կարող է լինել հետևյալ սահմաններում.

- 100-500 կաթսայատուն, ջեռուցման օբյեկտներ, տնային տնտեսությունների համար տաք ջուր ստանալու, սեղմված ջրի մեջ սեղմված ջրից էներգիայի փոխարկմանը, ջեռուցման պայմաններին բիոգազի ռեակտորներ բերելու, քիմիական տոքսինների և պարարտանյութերի լույսով մշակման և ակտիվացման, ֆումիգացման և այլն:

- 500-1000 - տաք ջրի և գոլորշու էլեկտրատուրբինների և տուրբո պոմպերի համար

- 1000-10000 - բարձր ջերմաստիճանի սինթեզ, ջրածնային ռեակտորների համար, կիսահաղորդիչների ֆոտոդիֆուզիոնների համար, կիսահաղորդիչների պատրաստված նյութերի գոտի հալեցման և գերբնական նյութերի արտադրության, հրակայուն նյութերի մշակման և հատուկ հատուկ համաձուլվածքների մշակման, միկրո և նանո միջակայքերում հետազոտություններ, բարձր ջերմաստիճանում նյութերի թեստեր, այլ գիտական հետազոտություններ Հատկանշական է ընդգծել նշված խմբի գիտնականների գործունեությունը բացառիկ առարկաներում՝ բարձր ջերմաստիճանի կլանիչներ:

րով: Այստեղ գիտական գործի հիմնական էությունը եզրափակվում է. Դա նորարարություն է, նոր տեխնիկա, որը ճառագայթների համակենտրոնացման համար հստակության միջոց է, այսպես կոչված, պարաբոլիկ խտանյութեր՝ տասը տարի շարունակվող աշխատանքների արդյունք, ուղղված ճառագայթների խնդրի վրա: Չնայած տարբեր երկրներում գիտնականների փորձերին, հելիոֆիկացիայի ոլորտում նման արդյունքների հասնելու համար նոր համակարգը աշխարհում նմանը չունի: Արդյունավետության պարտականության գործոնն այն կարգի վրա է, որը վերցված է մյուս տեսակի սարքավորումներից, քանի որ այն կարող է տարվա ամենաքիչ ցուլարձակում ունեցող օրերին նվազագույն քանակով բավարար էներգիա կենտրոնացնել: Հայտնի է, որ շատ երկրներում մեծ նշանակություն է տրվում արևային էներգիայի օգտագործմանը: Որոշ երկրներ աջակցում են նման տեխնոլոգիաների առաջընթացին, այլընտրանքային էներգիայի փոխանցման գործընթացին աջակցող օրենքներին: Օրինակ, նրանք, ովքեր ցանկանում են օգտագործել հելիո տեխնիկան Միացյալ Նահանգներում ընտանիքի կարիքների համար, իրավասու են ստանալ ցածր տոկոսադրույքով և երկարաժամկետ վարկեր: Անշուշտ, ոչ բոլոր կառավարությունները բավարար միջոցներ ունեն նման ծրագրերի իրականացման համար, հետևաբար, մարդիկ փնտրում են այլ հնարավորություններ՝ գալիք տարիներին ավելի լավ տեխնոլոգիաների օգտագործման միջոցներ գտնելու համար: Ավելի կոնկրետ, ամբողջ աշխարհում ֆերմերները կարող են զգալիորեն օգտվել հելիո համակարգերից, սարքավորումներ օգտագործելով՝ գումար խնայել և աշխատել էկոլոգիապես մաքուր և անվտանգ միջավայրում: Քանի որ հարցն ավելի գլոբալ է, միջազգային կառույցներից հատուկ ֆինանսավորումը կարող է հիմնավորված լինել: Բացի այդ, հաշվի առնելով գյուղական տարածաշրջանային զարգացման անհամապատասխանությունները նվազեցնելու առաջնային նպատակները, ակնհայտ է, որ անհրաժեշտ է հատուկ օրենք ընդունել այլընտրանքային էներգիայի աղբյուրների և գյուղական տների ու մասնավոր բնակավայրերի շինարարության կանոնների վերաբերյալ, հետևաբար՝ պարտադիր դարձնել արեգակնային էներգիայի տեխնիկայի, հելիո համակարգերի և հարակից տեխնոլոգիաների օգտագործումը:

Գիտահետազոտական դիտարկումների, սպառողների գնահատականների և հետազոտությունների հիման վրա մշակված հելիոդիկ համակարգը

շատ պարզ և հարմար է շահագործման մեջ, ինչը ոչ միայն կարևոր է, այլև, ինչպես վկայում են փորձագետները՝ շահավետ է ամեն տեսանկյունից:

Ներկայումս հատուկ ուշադրություն է դարձվում գործածվող հելիո համակարգերի կողմից ճաշատեսակների և տարբեր ճաշերի պատրաստման չափանիշների մշակմանը: Մասնավորապես, շարունակական հետաքրքրություն է դարձվում սննդի հիգիենայի նորմերին և չափանիշներին: Այս տեխնիկան աներևակայելի արժեք կունենա էկոլոգիապես մաքուր և անվտանգ բիոտեխնոլոգիաներ արտադրելու համար, մասնավորապես, միջազգային շուկայում աճող պահանջարկով չորացրած մրգերի և չորացրած բանջարեղենի արտադրություն: Կարելի է նկատել, որ վերջին տասնամյակում զգալի, զգալի առաջընթաց չի արձանագրվել այս ոլորտում: Համեմատած ամերիկյան «Ամերիկայի արևային կաթսա» ամսագրում ներկայացված հնարավոր անալոգների, այս համակարգն ունի որոշակի առավելություններ: Ներկայացվում են հելիո համակարգի նման այլ սարքավորում և գործիքներ, ինչպիսիք են այսպես կոչված «արեային խոհանոցները», ինչպես նաև արևային ջրատաքացուցիչները: Դրանք առաջարկվում են օգտագործել ավելի քիչ զարգացած երկրներում, ինչպիսիք են Տանզանիան, Հնդկաստանի որոշ շրջաններ: Այնուամենայնիվ, բոլոր այս պայմանավորվածությունները ունեն մեկ թերություն, դրանց օգտագործումը հիմնականում տեղական է: Նմանատիպ ծրագրերի իրականացումը սովորաբար կախված է բարեգործական քարոզարշավներից և նվիրատվություններից: Անշուշտ, Հայաստանում էլ կարելի է օգտագործել արևային էներգիայի վերափոխման սարքավորման տեսակները: Այնուամենայնիվ, հելիո ծրագիրը և դրա արտադրանքի օգտագործումը շատ ավելի լայն, ավելի համապարփակ և բարձր վստահություն է ստեղծում: Ավելին, հելիո համակարգը չի սահմանափակվում միայն արևային էներգիայի օգտագործմամբ. այն ենթադրում է բիոգազերի օգտագործումը, ինչպես նաև արևային էներգիան էլեկտրաէներգիայի վերածելը:

Անհատական համակցված helio համակարգերի տեխնիկական եւ տրնտեսական պարամետրերը DVH՝

Range ջերմային հզորությունը՝ 0-250 կՎ (շարժական համակարգեր);

էլեկտրական հզորություն - 0 10 կՎ (բջջային համակարգեր);

Range ջերմային հզորությունը՝ 0,4 50 մեգավատ; (շարժական);

Range էլեկտրական հզորություն - 0,1-1 մեգավատ (շարժական);

Տեղադրված ջերմային հզորության 1 կվ գինը՝ 100-150 դոլար;  
Ներքին էլեկտրական հզորության 1 կվ գինը՝ 600 դոլար;  
Հելիոյի համակարգի ծառայության ժամկետը՝ 50 տարի;  
Անվճար սպասարկման երաշխիքային ժամկետ 3 տարի:

Համաձայն տնտեսական վերլուծության և կանխատեսումների, գազի և նավթի շուրջ հակամարտությունները 2020 թ. ընթացքում սպասվում են ամբողջ աշխարհում: Շատ երկրներ մեծապես կախված են էներգետիկ ռեսուրսներից: Հետևաբար, անհրաժեշտ է առաջիկա մարտահրավերներին լավ պատրաստվել: Շատ երկրներ պետք է ուշադրություն դարձնեն ջրային ռեսուրսների վրա՝ ՀԷԿ-երի, քամու էներգիայի օգտագործման և, անշուշտ, անսպառ արևային էներգիայի վրա: Մենք պետք է սովորենք օգտագործել այն առավելագույնս: Աշխարհում տարբեր արևային ծրագրերի կիրառման բազմաթիվ օրինակներ կան: Այնուամենայնիվ, նրանց մեծամասնությունը փորձարկման փուլի, թեստերի փուլում է: Երբեմն, որոշ համակարգերի ներքին զարգացումն արտասահմանյան անալոգների վերը նշված կարգի համար է, որը հիմնված է միջազգային պարբերականների և մամուլում հրապարակվող նյութերի ուսումնասիրության վրա, ինչպես նաև ինտերնետից ստացված տվյալների վերլուծության վրա: Իհարկե, տեխնոլոգիաների այս ուղղությունը համեմատաբար նոր է և շատ բան է կատարվում պրոֆեսիոնալ խանդավառության վրա, բայց եթե նպատակն է լրջորեն ձեռնարկել նոր արտադրանքի զարգացումը և ներմուծումը՝ երկրի բոլոր գիտական և տեխնիկական հնարավորությունները միացնելու համար, ինչպես նաև ամուր միջոցների ներդրմամբ՝ դա կարևոր դիվիդենդներ կբերի, ընդ որում, ոչ միայն տնտեսական: Կստեղծվեն նոր տեխնոլոգիաներ, բացի այդ, պետական աջակցությամբ նման տեխնոլոգիաները պահանջարկված են, մասնավորապես, մանկական արտադրանքի արդյունաբերության ոլորտում:

Սև ծովի ավազանի շատ երկրներ բնական գազ են ստանում Ռուսաստանից, իսկ Իրանում, հավանաբար, մոտ ապագայում կարող է փոխվել պատկերը: Քանի որ ոչինչ հավերժական չէ՝ աշխարհաքաղաքական իրավիճակները ևս կարող են փոխվել ցանկացած ժամանակ: Կառավարությունները և սպառողները պետք է պատրաստ լինեն տնտեսության անսպասելի տեղաշարժերի: Պետական տնտեսական քաղաքականության և ներդրումային ռեժիմի առումով պետք է աջակցություն և համապատասխան վերա-

բերմունք դրսևորվի՝ ներգրավելով տարբեր ֆոնդերի ներկայացուցիչների, գործարարների և արդյունաբերողներ, որոնք կարող են օգնել նախագծին: Ինչպես ցանկացած բիզնես նախաձեռնության կամ մեկնարկի դեպքում, ռիսկի տարրը, իհարկե, առկա է: Բայց դա նվազագույն է և բացարձակապես արդարացված, ուստի պետք չէ վախենալ առաջին քայլը կատարելու համար: Գյուղերի հեղինակացիան կարող է համարվել միայն սկիզբը, որը այս ուղղությամբ հետագա առաջընթաց կբերի:

Մինչ օրս որոշակի առաջընթաց է գրանցվել.

- մշակվում է անհատական համակցված helio համակարգ DVH;
- Լաբորատոր նախնական արտադրության մոդելները պատրաստվում են DVI helio համակարգով և տարբեր կլիմայական գոտիներում գործնական փորձարկումներ են իրականացվում,
- մշակվել է տարբեր մոդիֆիկացիաների և ֆունկցիոնալ նշանակության ավտոմատացված դիզայնի անձնական հեղինակ համակարգը,
- 2,6 կիլոգրամ, 4 կՎտ, 6,5 կՎտ, 15 կՎտ, 24 կՎտ եւ 40 կՎ ջերմային հզորություններ ունեցող, 6 նոր մոդելների նոր տեխնոլոգիաներ և բյուրեղային արտադրություն:
- 0,3-ից մինչեւ 250 կՎ բարձրության վրա տարբեր հզորությունների պատվերով պատրաստված անձնական հեղինակային համակարգ արտադրելու տեխնոլոգիաների մշակում;
- մշակվել է չափագիտության պահպանման, տեխնիկական եւ տեխնոլոգիական հսկողության համակարգը, ինչպես նաև արտադրանքի փորձարկում՝ փաթեթային արտադրության պայմաններում.
- Հիմնական հիելիոտեխնիկական գործարանի նախագիծը «առանցքային հիմքի վրա» մշակվել է բարձր արտադրողականությամբ, մինչև 1000 ամբողջական խտասկավառակի հիդրո համակարգ (5 կՎտ հզորությամբ հզորությամբ) փոփոխության համար:

Անշուշտ, ավանդական վառելիքից հանկարծակի և ամբողջական հրաժարվելն անհնար է: Հետևաբար, անհրաժեշտ է գնալ քայլ առ քայլ: Սակայն գլոբալ վթարից խուսափելու համար մարդիկ պետք է սովորեն ստանալ այլընտրանքային էներգիայի աղբյուրներ: Նշված ծրագիրը կարող է դառնալ համընդհանուր և ներգրավել ներդրողներին: Նման նախագծի իրագործումը ցանկացած երկրի համար նոր մշակույթ է: Ցանկացած տեխնիկական



նորարարություն, որն օգտագործվում է կյանքի համար, հատկապես գյուղում, ժամանակ է պահանջում մարսելու և սովորելու համար: Գյուղատնտեսության մեջ հելիո համակարգին անցումը պահանջում է նաև մտածելակերպի փոփոխություն, որպեսզի հասկանան, որ ոչ ստանդարտ կաթսա է ստացվել, ինչն ապահովված է նոր տեխնոլոգիաներով ու վերամշակման ժամանակակից սարքերով: Ընդհանուր առմամբ, հելիո համակարգի հիմնական առանձնահատկությունները և առավելությունները կարող են սահմանվել հետևյալ կերպ.

- սպառողների համար բարձր որակի ապահովում.
- ընդլայնված գործառույթներ;
- նոր և արդյունավետ դիզայն;
- յուրահատուկ «նոու-հաու» հատուկ նշանակության միջոցների կիրառմամբ.
- զարգացած մակարդակի հատուկ հելիոտեխնիկական մեքենաշինություն;
- տեղեկատվական տեխնոլոգիաների վերջին ձեռքբերումների կիրառում ու դրանց զարգացում;
- Ծառայության պարզություն;
- Հեշտ հավաքում և տեղադրում;
- Բոլոր կլիմայական գոտիներում աշխատելու ունակություն;
- Ամենակարճ ժամանակում (մոտ 10 օր) նոր մոդելների մշակում և տեղադրում:

Այսպիսով, հելիո համակարգը հնարավորություն է տալիս խնայել գյուղում օգտագործվող էներգիայի 40% -ը, կփոխի ֆերմերների սոցիալական և տնտեսական պայմանները: Ի վերջո, հելիո համակարգի պատշաճ ներդրումը կարող է նպաստել կաթնամթերքի որակի ընդհանուր բարելավմանը, տեղական և միջազգային շուկաներում նրա մրցունակության աճին:

**Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, Վահե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**  
**Էներգետիկ անվտանգության ապահովման հնարավորությունները և**  
**հելիոֆիկացիայի ծրագրի իրագործման հեռանկարները Հայաստանի**  
**Հանրապետությունում**

*Բանալի բառեր. էներգետիկ անվտանգություն, էներգիա, ատոմային էներգիա*

Էներգետիկ անվտանգության մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել, թե որքանով է հիշյալ համակարգը խոցելի պետական վերահսկողության և կարգավորման առումներով, հետո նաև՝ թե որքանով է ինքնաբավ, ինչ չափով է ինտեգրված տնտեսությանը, մրցունակության մակարդակը տեղական շուկայում և տարածաշրջանում և տեխնիկական հագեցվածությունը և այլն: Դատելով այն գործընթացներից, որոնք հանգեցրել են հանրային վերահսկողությունից էներգետիկ համակարգի մեկուսացմանը և գույքի օտարման տարբեր եղանակներով ձեռնարկությունների դուրս բերմանը բնական մենաշնորհի կարգավիճակից, երբեմն կարելի է արձանագրել պետական վերահսկողության կորուստ և որոշակի խոցելի վիճակ:

**Tatul MANASERYAN, Vahe MARTIROSYAN**  
**Opportunities for ensuring energy security and prospects for heliofication program**  
**in the Republic of Armenia**

*Key words. energy security, electricity, atomic power station, solar energy*

While talking about energy security it is necessary to take into account the extent to which this system is vulnerable to state control and regulation, and to the extent that it is self-sufficient, to what extent it is integrated into the economy, competitiveness in the local market and in the region, and technical equipments. Judging from the processes that have led to the isolation of the energy system from public control and the abolition of enterprises through a variety of foreign properties, natural monopoly status can sometimes be recorded as a loss of state control and a particular vulnerability.

**Татул МАНАСЕРЯН, Ваге МАРТИРОСЯН**  
**Возможности обеспечения энергетической безопасности и перспективы**  
**программы гелиофикации в Республике Армения**

*Ключевые слова: энергетическая безопасность, электричество, атомная электростанция, солнечная энергия*

Говоря об энергетической безопасности, важно учитывать, насколько эта система уязвима с точки зрения государственного контроля и регулирования и насколько она самодостаточна, насколько она интегрирована в экономику, конкурентоспособность на местном рынке и в регионе, а также техническое оборудование. Судя по тем процессам, которые привели к изоляции энергетической системы от общественного контроля и упразднению предприятий через различные зарубежные объекты, потерь статуса естественной монополии иногда может рассматриваться как потеря государственного контроля и особая уязвимость.

## ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԵՔՍՈՒՄ

### Աճի Սերոբյան

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառման ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. ՀՀ Հարկային օրենսգիրք, միասնական հաշիվ, շահաբաժինների վճարում, ֆինանսական շահույթ, հարկային բազա, ինքնազբաղված անձիք

2018 թվականի հունվարի մեկից ուժի մեջ է մտել նոր հարկային օրենսգիրքը: Դեռևս 2015 թվականի հոկտեմբերի 8-ին ՀՀ կառավարությունը հավանության արժանացրեց Հարկային օրենսգրքի նախնական տարբերակը: Մինչ այսօր տեղի է ունեցել բազմաթիվ քննարկումներ, ինչպես շահագրգիռ գերատեսչությունների հետ համատեղ, այնպես էլ հարկային խորհրդում: Փաստաթուղթը բավականին լայնածավալ է, սակայն այս հոդվածի շրջանակներում անրադարձել ենք մի քանի սկզբունքների, առանցքային փոփոխությունների, որտեղ, ըստ մեզ, առկա են խնդիրներ և բացթողումներ:

Այսպիսով, ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ստացած շահաբաժինները հարկվում են եկամտային հարկով՝ հաշվառվելով հաշվառման դրամարկյղային մեթոդով: ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը հաշվարկվում է հինգ տոկոս դրույքաչափով (փոփոխության ուժի մեջ է մտնելու 2018թ. հունվարի 1-ից): Ներդրվել է ստացված շահաբաժիններից վճարված հարկի վերադարձի կարգ: Շահաբաժինների եկամուտները դրանց ստացման հարկային տարվա ընթացքում շահաբաժին վճարող՝ ՀՀ ռեզիդենտ կազմակերպության կանոնադրական կապիտալում օրենքով ներդնելու դեպքում ներդրված գումարը, բայց ոչ ավելի, քան շահաբաժիններից պետական բյուջե վճարված հարկի գումարները, պետական բյուջեից փոխհատուցվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով: Հարկային օրենսգրքում նշվում է նախորդ տարվա տվյալներով շահույթի բաշխման մասին<sup>379</sup>, այստեղ հարց է առաջանում. եթե կազմակերպությունը նախորդի նախորդ տարում ունեցել է ֆինանսական վնաս կամ կուտակված վնաս և այս տարի ունեցել է ֆինանսական շահույթ, որը չի ծածկում նախորդ տարիների վնասը, արդյոք այս տարվա շահույթից մասհանում պետք է կատարի թե ոչ, եթե այո, ապա որևէ տնտեսագիտական հիմնավորում չկա և հաշվապահության հետ "կոնֆլիկտ" տեղի կունենա:

Գործող "Հարկերի մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով<sup>380</sup> ֆիզիկական անձի հարկային պարտավորությունները դադարում են նրա մահվան դեպքում: Մինչդեռ 2018թ. Հարկային օրենսգրքի ուժի մեջ մտնելուն պես, ֆիզի-

<sup>379</sup> Հարկային օրենսգրքի նախագիծ, Հոդված 109, 3-րդ մաս 5-րդ կետ:

<sup>380</sup> ՀՀ օրենքը Հարկերի մասին, հոդված 16, երկրորդ պարբերություն.

կական անձի մահվան դեպքում մահվան օրվա դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կատարվելու են նրա ժառանգի կողմից (մեկից ավելի ժառանգների դեպքում չկատարված հարկային պարտավորությունները կատարվելու են ժառանգների կողմից՝ ժառանգած՝ ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի շուկայական արժեքին համամասնորեն): Բայց, եթե մահացած անձի ժառանգը հրաժարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա հանդիսացող գույքի ժառանգությունից, ապա իր մասով ազատվում է հարկային պարտավորության կատարումից:<sup>381</sup> ՀՀ օրենսգրքի 51-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ մահացած ֆիզիկական անձի ժառանգը իրեն փոխանցվող հարկային պարտավորությունը պարտավոր է կատարել՝ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ մինչև ժառանգությունն ընդունելու օրը ներառող հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ: Օրինակ, եթե ժառանգությունը անցնում է նոյեմբերի երեսունին, ապա ժառանգը կունենա մեկ օր (ըստ Հարկային ներկա օրենսգրքի) հարկային պարտավորությունները կատարելու համար, եթե ժառանգությունը անցնի ժառանգին օրինակ դեկտեմբերի 2-ին՝ ապա 364 օր կունենա հարկային պարտավորությունները կատարելու համար, ակնհայտ է, որ սա անհավասար պայմաններ է ստեղծում: Համատեղ գործունեության իրականացման դեպքում<sup>382</sup>, եթե որևէ մեկ կողմի մոտ առկա լինի հարկային գերավճար, ապա հարկային մարմինը կձանուցի և համատեղ գործունեության շրջանակներում առաջացած և չվճարված հարկային պարտավորությունը կգանձեն տվյալ կողմից: Մեր կարծիքով, սա հակասում է ներդրումների խթանմանը:

ՀՀ հարկային օրենսգրքի 53-րդ հոդվածի 9-րդ կետով թվարկվում է գործունեության վերսկսման դեպքերը, որում բաց է թողնված 2018 թվականի հունիսի 30-ին շահաբաժնի վճարման դեպքը, ըստ մեզ այն պետք է շտկել, քանի որ այժմյան շարադրանքով այն կհամարվի գործունեության վերսկսում:

Հարկային օրենսգրքով նվազեցվել է ԱԱՀ-ի շեմը՝ 115 միլիոն ՀՀ դրամի փոխարեն կազմելու է 58,35 միլիոն ՀՀ դրամ: Ակնհայտ է նպատակը, քանի որ առկա էր՝ տրոհման՝ երևույթ՝ խոշոր կազմակերպությունը տրոհվելով տեղավորվում է ՓՄՁ համար նախատեսված մեղմ հարկային քաղաքականության հարթակում և սկսվում է անհավասար մրցակցություն փոքր բիզնեսի հետ: Արդյունքում օրինակ 250 մլն ՀՀ դրամ շրջանառություն ունեցող ընկերության 4 անգամ տրոհման հավանականությունն ավելի փոքր է: Մեր կարծիքով, հարկային մարմինները, հավատարիմ մնալով իրենց սկզբունքներին, խնդիրը

<sup>381</sup> ՀՀ հարկային օրենսգրքի նախագիծ, Հոդված 51.

<sup>382</sup> ՀՀ հարկային օրենսգրքի նախագիծ, Հոդված 5.

վերացնելու նպատակով կարգավորում են հետևանքները: Եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխության հետևանքով առավել կտուժեն 279000 դրամից ավել աշխատավարձ ստացողները, մինչև 150000 դրամ ստացողները կունենան չնչին ավելացում, ներկայիս 24,4 %-ի փոխարեն կվճարեն 23 %: Մեր կարծիքով կուտակային համակարգով չգանձված գումարների բացը կլրացվի այս փոփոխության արդյունքում, ինչը կազդի միջին խավին և կաճի “ստվերը”: Այսինքն բեռը կընկնի բարեխիղճ հարկատուների ուսերին:

Անրադառնալով ինքնազբաղվածների հարկային արտոնություններին, հարկ է նշել, որ եթե նպատակը հարկային արտոնություն տրամադրելն էր, ապա կարելի էր ուժը կորցրած ճանաչել “Արտոնագրային վճարների մասին” օրենքի հավելված 1-ը՝ նոր օրենք գրելու փոխարեն: Արդյունքում այս անձիք կմնային հարկային դաշտից դուրս՝ արտոնյալ կարգավիճակում: Մինչ այսօր հարկային մարմինը չէր կարող հավաքագրել այդ գումարները, քանի որ դրանք չնչին էին և վերասկողություն իրականացնելը շատ թանկ էր: Հարկային մարմինը հակված չէր, օրինակ ինչ որ կոշկարի հարկային դաշտ բերել հավաքագրվող գումարից ավել գումար ծախսելով, ինչը տնտեսագիտորեն հիմնավորված չէ: Նման տնտեսվարողները շատ չեն, նրանք հարկային դաշտում միկրոէլեմենտ են: Որպեսզի ինքնազբաղված անձիք ազատվեն հարկումից, պետք է հաշվառվեն հարկային մարմնում, ինչը կձևավորի հարկ վճարողի ինքնահայտարարագրման մշակույթ: Այսինքն առանց գումար ծախսելու ինքնազբաղվածները կտեղափոխվեն տնտեսավարողների հարկային բազա որոշ ժամանակ անց նրանց հարկելու նպատակով: Նշենք, որ խոսքը վերաբերում է տարեկան մինչև 9 մլն դրամի շրջանառություն ունեցողներին:

2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ հարկային օրենսգրքի դրույթների վերլուծությունը վկայում է, որ միասնական հաշվի կիրառումը իրականում չի համապատասխանում այն գաղափարին, ինչի համար նախատեսված էր դրա ներդրումը:

Գործող ընթացակարգով տարբեր գանձապետական հաշիվների առկայության պայմաններում, հաշվանցումների իրականացման համար ներկայացվում է փաստաթղթեր, տվյալ հարկատեսակի հաշվեհամարի փոխարեն այլ հաշվեհամարի փոխանցելը, որի հետևանքով հաշվարկվում է տույժեր: Ենթադրվում է, որ արմատապես պարզեցվելու են գործող ընթացակարգերը: Սակայն, ըստ մեզ, հարկ վճարողները նոր համակարգի կիրառման արդյունքում ավելի լուրջ խնդիրների առաջ կարող են կանգնել, առանձնացնենք դրանցից մի քանիսը.

➤ Ճշտված հաշվարկների կամ ստուգման արդյունքում լրացուցիչ հարկային պարտավորության դեպքում՝ սկզբնական հարկի վերջնաժամկետից հաշվարկվում են տույժեր (առկա գերավճարները հաշվի չեն առնվում),

➤ Եթե տնտեսվարող սուբյեկտն օրինակ եկամտային հարկի գծով ունի 50000 դրամի չափով չկատարված պարտավորություն, և միաժամանակ՝ շրջանառության հարկի գծով՝ 50000 դրամի չափով քիչ պարտավորություն, տնտեսվարող սուբյեկտը հայտնաբերել է սխալը ինքնուրույն և կատարել համապատասխան ուղղում՝ ներկայացնելով ճշտված հաշվարկներ, արդյունքում պակաս հաշվարկված պարտավորության գծով հաշվարկվելու է տույժ, իսկ վճարված ավել գումարների դիմաց ոչ մի եկամուտ չի ստանալու,

➤ Տույժերը հաշվարկվում են օրը 0.075 %-ի չափով նախկին 0.15 %-ի փոխարեն: Սակայն Հարկային օրենսգիրքը ներկայացնելիս չի նշվել, որ տույժերի հաշվարկն էլ կատարվում է մինչև 730 օր՝ նախկին 365 օրվա փոխարեն, այսինքն իրականում էական փոփոխություն չկա: Տույժերի հաշվարկման տուկոսը 2 անգամ նվազել է, միաժամանակ՝ տույժերի հաշվարկման օրերի թիվը 2 անգամ ավելացել է: Եվ եթե հաշվի առնենք միջին ռիսկայնություն ունեցող հարկ վճարողների մոտ ստուգումների իրականացման պարբերականությունը՝ 3 տարին 1 անգամ, և վերլուծություն կատարենք, միանշանակ ակնհայտ է դառնում, որ շատ դեպքերում տնտեսվարողները չեն օգտվում տույժերի հաշվարկման տուկոսի իջեցումից և տույժի գումարը նույնն է լինելու,

➤ Ստուգման ակտով հարկային պարտավորությունների նկատմամբ տույժերը և տուգանքները հաշվարկվում են մինչև ստուգման ակտը կազմելու օրը՝ առանց հաշվի առնելու դեբետային գումարները (այդ թվում՝ նույն ստուգմամբ արձանագրված լրացուցիչ դեբետային գումարները): Այսինքն՝ որքան երկար տևի ստուգումը, այնքան ավելի շատ տույժեր կհաշվարկվեն,

➤ Հարկային պարտավորությունները հաշվառվում են հաշվարկի ներկայացման ամսաթվով և միասնական հաշվից հարկերը մարվում են ժամանակագրական կարգով: Եթե, օրինակ, փետրվարին կազմակերպությունը ներկայացնի նախորդ տարվա շահութահարկի հաշվարկը և հաշվառվի շահութահարկի պարտավորությունը և մարտի 30-ին վճարի միասնական հաշվին և մարտի 31-ին արտոնագրային հարկի հայտարարություն ներկայացնի հաջորդ ամսվա համար, արդյունքում կստացվի, որ առանց արտոնագրի գործունեություն է իրականացնում, քանի որ մինչև արտոնագրի հայտարարությունը միասնական հաշիվ մուտքագրված գումարի հաշվին շահութահարկի պարտավորությունը մարված կլինի (չնայած, որ դեռ մինչև ապրիլի 20-ը այդ պարտավորությունը կատարելու ժամանակ ուներ), արտոնագրային հարկի գծով անհրաժեշտություն կառաջանա կրկին վճարում կատարել:

Մեր կարծիքով հարկային օրենսգիրքը քննարկելու, ուժի մեջ մտցնելու համար երկու տարին շատ քիչ էր: Պետք է այն ավելի խորը քննարկվեր՝ ավելի ընդհանրական և արդյունավետ փաստաթուղթ ունենալու համար: Չենք կարող չնշել, որ կան փոփոխություններ, որոնք իրապես բարեփոխումներ են, սակայն կարևոր է նաև նկատել առկա բացթողումները:

**Ani SEROBYAN**

**Issues related to the tax code reforms**

*Key words: The tax code of RA, The RA Law "On Patent Payments", The RA Law "On Taxes" single account, payment of dividends, financial profit, the tax base, self-employed persons*

Summarizing, we can note that the collection of taxes should be where possible. Obviously, the Tax Code focuses on collecting additional taxes. However, it should be remembered that without expanding the tax base, it will be impossible to do this endlessly, since, having reached a critical point, the tax base will begin to decline. In fact, this phenomenon is observed in our country, since no steps are taken in this Tax Code to expand the tax base.

**Ани СЕРОБЯН**

**Вопросы реформ налогового кодекса**

*Ключевые слова - Налоговый кодекс РА, Закон РА «О патентных платежах», Закон РА «О налогах», единый счет, выплаты дивидендов, финансовая прибыль, налоговая база, самозанятые лица*

Обобщая, можем отметить, что сбор налогов должен быть там, где это возможно. Очевидно, что в Налоговом кодексе основное внимание уделяется сбору дополнительных налогов. Однако следует помнить, что без расширения налоговой базы, делать это бесконечно будет невозможно, так как, достигнув критической точки, налоговая база начнет снижаться. На самом деле, в нашей стране наблюдается именно это явление, поскольку в этом Налоговом кодексе не предпринимается никаких шагов по расширению налоговой базы.

**Անի ՍԵՐՈԲՅԱՆ**

**Հարկային օրենսգրքի բարեփոխումների հիմնախնդիրները**

*Բանալի բառեր. ՀՀ Հարկային օրենսգրք, Արտոնագրային վճարների մասին ՀՀ օրենք, Հարկերի մասին ՀՀ օրենք, միասնական հաշիվ, շահաբաժինների վճարում, ֆինանսական շահույթ, հարկային բազա, ինքնագրադված անձիք*

Ամփոփելով կարող ենք նշել, որ պետք է հարկահավաքություն անել այնտեղ, որտեղ հնարավոր է: Ակնհայտ է, որ Հարկային օրենսգրքում հիմնական շեշտը դրված է լրացուցիչ հարկերի հավաքագրման վրա: Սակայն պետք է հիշել, որ անվերջ դա չի կարող լինել առանց հարկային բազան ընդլայնելու, քանի որ ինչ որ պահից հետո, երբ հասնի կրիտիկական կետի, հարկային բազան սկսելու է նվազել: Իրականում մեզ մոտ այդ երևույթն է, քանի որ հարկային բազայի ընդլայնմանն ուղղված որևէ քայլ այս Հարկային օրենսգրքում չկա:

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՈՒՄԸ ԲՈՒՇԵՐՈՒՄ**

**Արա ԱՂԱԶԱՆՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, ՀՊՏՀ

**Նոնա ԽԱԶԱՏՐՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, ԵՊՀ

Բանալի բառեր. կրթության որակ, մրցակցային կրթական ծրագրեր, ծառայությունների որակի վարկանիշավորում, կրթական ռեսուրսներ

Մասնագիտական կրթական ծրագրերի որակի գնահատումը բուհերում առաջնահերթորեն կարևորվում է շահառուների տեսանկյունից: Ուսանողները, ծնողները, գործատուներն ու պետությունը շահագրգռված են համալսարանական կրթական ծառայությունների որակով: Այս առումով. միջազգային պրակտիկայում զանազան վարկանիշավորման աղյուսակներ են հրատարակվում, ներկայացնելով կրթական ծառայությունների շուկայում գործող հանրահայտ բուհերի գնահատումների դիրքերը (տես աղյուսակ 1): Սակայն դեռևս ներհամալսարանական համակարգում իր գործածությունը չի գտնում իրականացվող տարբեր մասնագիտական ծրագրերի վարկանիշավորումը, որը մեր կարծիքով լուրջ խթան կհանդիսանա որակի ներքին ապահովման արդյունավետության բարձագման գործընթացում:

Վարկանիշային սանդղակների կազմումը նպատակ է հետապնդում թողարկվող մասնագիտությունների որակը գնահատել յուրօրինակ մոտեցումներով: Որպես կանոն, որակի վարկանիշային գնահատումը հնարավորինս հաշվի է առնում գործոնների այն համախումբը, որոնք ուղղակիորեն առընչվում են կրթական ծառայությունների մատուցման մակարդակի հետ: 383 Դրանք մեր կողմից ներկայացում են հետևյալ խմբերով:

**Կրթական ծրագրերի մոնիտորինգ և վերանայում**

- a. կրթական ծրագրերի վերանայման հաճախականություն,
- b. գործատուների կողմից ծրագրերի բարեփոխումների առաջարկներ,
- c. կրթական ծրագրերի իրացման ճկուն ձևաչափեր (առկա, հեռակա, հեռաուսուցում):

<sup>383</sup> Ա. Ճուղուրյան, Ա., Մխիթարյան, Ասպիրանտուրայից դոկտորանտուրա, հեղ. հրատ., Եր. 2016, էջ 24



**Աղյուսակ 1. Աշխարհի 10 լավագույն համալսարանների վարկանիշային սանդղակը (2017 թ)<sup>384</sup>**

Դիրքը	Համալսարանը	Ուսանողների թվաքանակը	Մեկ աշխատակցի հաշվով ուսանողներ	Միջազգային ուսանողների տես. կշիռ	Իզական/արական ուսանողների հարաբերակցություն
1	Օքսֆորդի համալսարան	19 718	10,9	35%	46/54
2	Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտ	2181	6,7	27%	31/69
3	Ստենֆորդի համալսարան	15658	7,7	22%	42/58
4	Քեմբրիջի համալսարան	18 605	11,3	35%	45/55
5	Մասսաչուսեթի տեխնոլ. Ինստիտուտ	11 192	8,8	33%	35/65
6	Հարվարդի համալսարան	19 890	8,8	25%	45/55
7	Փրինսթոն համալսարան	7 925	8,4	23%	45/55
8	Լոնդոնի թագավորական քոլեջ	15 236	11,3	52%	37/63
9	Յյուրիխի տեխնոլոգիական ինստիտուտ	18 616	14,9	37%	31/69
10	Բերքլի համալսարան	34 834	12	16%	52/48

**Դասավանդող անձնակազմի որակական հատկանիշները**

- d. դասախոսական կազմի գիտական կոչումների տեսակարար կշիռը,
- e. հրատարակված ուսումնական ձեռնարկների թիվը տվյալ տարում,
- f. դասախոսներին տրվող ուսանողների գնահատականը,
- g. մանկավարժական պարտականությունների իրացման աստիճանը:

**Ուսանողների գիտելիքների գնահատումը**

- h. քննությունների միջին որակական գնահատականը,
- i. ուսանողական անհատական, խմբային աշխատանքի արդյունքները,
- g. դասերին հաճախումների աստիճանը:

**Դասավանդման ռեսուրսները**

- k. համակարգիչների քանակը մեկ ուսանողի հաշվով,
- l. գրադարանի ուսումնական ձեռնարկները մեկ ուսանողի հաշվով,
- m. ինտերնետ կապի հասանելիության աստիճանը,
- n. կրթական նորամուծական տեխնոլոգիաների ներդրման աստիճանը:

<sup>384</sup> [https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2017/world-ranking#!/page/0/length/25/sort\\_by/rank/sort\\_order/asc/cols/stats](https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2017/world-ranking#!/page/0/length/25/sort_by/rank/sort_order/asc/cols/stats)

Իրականացվող կրթական ծրագրերի որակը բնութագրող ցուցանիշների համախումբը կարող է ընդլայնվել կամ կրճատվել, ելնելով մասնագիտության պատրաստման գործընթացի վրա ներքին և արտաքին միջավայրի գործոնների ազդեցության փոփոխմամբ: Այսպես, կրթական ծրագրերի մոնիտորինգի հաճախականությունը կարող է ակտիվանալ, ելնելով աշխատանքի շուկայից բխող մասնագիտության որակական պահանջարկի փոփոխությունից: Կրթական ծրագրերի վերանայման գործընթացի վրա կարող են ազդել նաև ներքուհական գործոնները, կապված պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակական կառուցվածքի փոփոխման, կրթական արդիական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ձևավորման, ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների հայթայթման հետ:

Կրթական ծրագրերի իրացման որակը գնահատելիս կարևոր է նաև տեղեկատվական այլընտրանքային աղբյուրների հնարավոր լան շրջանակի կիրառումը: Սահմանափակ տեղեկատվական աղբյուրները երբեմն սուբյեկտիվիզմ են պարունակում, ուստի թողարկվող մասնագիտությունների որակը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես գործատուների, այնպես էլ ուսանողների, և կրթության բնագավառի հասարակական կազմակերպությունների կարծիքը: Որակի վարկանիշային սանդղակի կառուցման պարագայում անհրաժեշտություն է առաջանում, տարբեր գործոններ հաշվի առնելուց բացի, ձևավորել դրանց համեմատման միջավայրը: Նման խնդիրը լուծվում է վերլուծության «տարածությունների եղանակի» օգնությամբ:<sup>385</sup> Այսպես, համալսարանում պատրաստվում են 5 մասնագիտություն՝ “X”, “Y”, “Z”, “U”, “V”: Խնդիր է դրվում ներկայացնել մասնագիտությունների թողարկման որակի վարկանիշային սանդղակը՝ հետևյալ քայլերով.

I քայլ. կատարվում է մասնագիտությունների թողարկման որակին առնչվող տվյալների հավաքագրում (տես աղյուսակ 1): Տեղեկատվության մըշակման պարագայում ոչ միայն կարևորվում է որակի տարաբնույթ գործոնների հավաքագրումը, այլև դրանցից յուրաքանչյուրի ազդեցության չափի որոշումը կրթական ծրագրերի որակի ձևավորման վրա:

Ուսումնական ձեռնարկների հրապարակման առումով առավել նպաստավոր դիրքերում են գտնվում “Z” և “U” մասնագիտությունները:

<sup>385</sup> Ն. Խաչատրյան, Կրթության էկոնոմիկա, “Էդիթ Պրինտ”, Եր., 2010, էջ 45

**Աղյուսակ 1.** Կրթական ծրագրերի որակի գնահատման տեղեկատվական ցուցանիշներ

	Որակի վարկանիշի ձևավորման գործոններ	Կշիռ	Կրթական ծրագրեր				
			“X”	“Y”	“Z”	“U”	“V”
a	կրթական ծրագրերի վերանայման հաճախականություն	20%	1	3	2	4	1
b	գործատուների կողմից ծրագրերի բարեփոխումների առաջարկությունների քանակ	5%	2	5	4	7	2
c	կրթական ծրագրերի իրացման ճկուն ձևաչափեր (առկա, հեռակա, հեռաուսուցում)	2%	4	3	1	2	2
d	դասախոսական համակարգի գիտական կոչումներ ունեցողների տեսակարար կշիռը	5%	45	60	70	40	85
e	հրատարակված ուսումնական ձեռնարկների քանակը հաշվետու տարում (սլայդափայլանկա էջ)	7%	1840	2435	3241	560	425
f	դասախոսներին տրվ. ուսանող. գնահատականը (100 բալ)	2%	70	50	60	85	90
g	Մանկավ. սլայդափայլանկա. իրականացման աստիճանը (%)	6%	90	100	95	95	100
h	Քննությունների միջին որակ. գնահատականը (100 բալ)	25%	92	85	90	79	45
i	ուսանողական անհատական (խմբային) աշխատանքների արդյունքները (100 բալ)	2%	25	60	85	5	35
j	դասերին հաճախումների աստիճանը (%)	12%	92	87	93	90	85
k	համակարգիչների քանակը մեկ ուսանողի հաշվով	3%	0.5	0.25	0.75	0.5	0.25
l	գրադարանի ուս. ձեռնարկները մեկ ուսանողի հաշվով	5%	1	2	3	3	2
m	ինտերնետ կապի հասանելիության աստիճանը (%)	4%	70	67	80	95	75
n	կրթական նորամուծ. տեխնոլոգ. Ներդրմ. աստիճանը (%)	2%	30	15	10	35	33

**Աղյուսակ 2.** Կրթական ծրագրերի որակի ցուցանիշների շեղումները առավելագույն մակարդակից<sup>386</sup>

	“X”	“Y”	“Z”	“U”	“V”
A	0,250	0,750	0,50	1,000	0,250
B	0,288	0,714	0,571	1,000	0,288
C	1,000	0,750	0,250	0,500	0,500
D	0,529	0,706	0,824	0,471	1,000
E	0,568	0,751	1,000	0,173	0,131
F	0,778	0,556	0,667	0,944	1,000
G	0,900	1,000	0,950	0,950	1,000
H	1,000	0,924	0,978	0,859	0,489
I	0,294	0,706	1,000	0,059	0,412
J	0,989	0,935	1,000	0,968	0,914
K	0,666	0,333	1,000	0,666	0,333
L	0,333	0,667	1,000	1,000	0,667
M	0,737	0,705	0,842	1,000	0,789
N	0,857	0,429	0,286	1,000	0,943

II քայլ. ընդգծվում են կրթական ծրագրերի իրականացման որակի այն ցուցանիշները, որոնց գծով տարբեր մասնագիտություններ ձեռք են բերել լավագույն մակարդակը: Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, որ ծրագրերի մատուցման առավելագույն ճկունություն կա “X” մասնագիտությամբ, իսկ դասահաճախումների առավել մեծ ակտիվություն՝ “Z” մասնագիտության գծով:

<sup>386</sup> Կազմված է աղյուսակ 1-ի տվյալներով:

III քայլ. որոշվում է «էտալոնային» մակարդակից ծրագրի որակական ցուցանիշների շեղումը (աղ. 2): Եթե a գործոնով լավագույն որակ ունի “Ս” ծրագիրը, ապա “X” ծրագրի շեղումը այդ մակարդակից կկազմի 0.250 (1/4):

IV քայլ. ճշգրտվում են շեղումները, ելնելով ծրագրերի որակի վրա ամեն գործոնի ազդեցության չափից: Այսպես, կոնկրետ բուիում մասնագիտության որակի վրա ազդում է ծրագրերի վերանայման պարբերականության գործոնը՝ 20%-ով: Հետևաբար, “X”-ի շեղումը կլինի՝  $0.250 \times 20\% = 0.050$  և այլն:

V քայլ. ճշտգրված շեղումների հանրագումարով ձևավորվում է թողարկվող մասնագիտությունների վարկանիշային սանդղակը: Որքան շեղումների գումարը ձգտում է 1.0-ի, այնքան մասնագիտության որակը մոտենում է բուի կրթական ծառայության լավագույն մակարդակին (տես աղյուսակ 4):

**Աղյուսակ 3.** Որակի ազդեցության չափով ճշգրտված շեղումները<sup>387</sup>

	“X”	“Y”	“Z”	“Ս”	“V”
a 20%	0.050	0.150	0.100	0.200	0.050
b 5%	0.014	0.036	0.029	0.050	0.014
c 2%	0.020	0.015	0.005	0.010	0.010
d 5%	0.026	0.035	0.041	0.024	0.050
e 7%	0.040	0.053	0.070	0.012	0.009
f 2%	0.016	0.011	0.013	0.019	0.020
g 6%	0.054	0.060	0.057	0.057	0.060
h 25%	0.250	0.231	0.245	0.215	0.122
i 2%	0.006	0.014	0.020	0.001	0.008
j 12%	0.119	0.112	0.120	0.116	0.110
k 3%	0.020	0.010	0.030	0.020	0.010
l 5%	0.017	0.033	0.050	0.050	0.033
m 4%	0.029	0.028	0.034	0.040	0.032
n 2%	0.017	0.009	0.006	0.020	0.019
Հանրագումար	0.678	0.797	0.819	0.833	0.547

**Աղյուսակ 4.** Որակի ազդեցության կշիռներով ճշգրտված շեղումները<sup>388</sup>

Վարկանիշը	Համալսարանում իրագործվող կրթական ծրագրերը	Հանրագումար
1	“Ս”	0.833
2	“Z”	0.819
3	“Y”	0.797
4	“X”	0.678
5	“V”	0.547

Կատարելով թողարկվող մասնագիտությունների վարկանիշավորում, բուիը կարող է կատարել համեմատական վերլուծություններ և բացահայտել որակի ապահովման թույլ կողմերը: Այսպես, եթե “Ս” մասնագիտության պատրաստման կրթական ծրագրերի որակը լավագույնն է համարվում, ապա համալսարանին պետք է մտահոգի “V” մասնագիտության կրթական ծրագրի իրականացման որակական հատկանիշների բարելավումը, հիմք ընդունելով նաև այդ բնագավառում “Ս” մասնագետների թողարկման փորձը:

<sup>387</sup> Կազմված է աղյուսակ 2-ի տվյալներով:

<sup>388</sup> Կազմված է աղյուսակ 3-ի տվյալներով:

**Արա ԱՂԱԶԱՆՅԱՆ, Նոնա ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Կրթական ծրագրերի որակի վարկանիշավորումը բուհերում**

*Բանալի բառեր. կրթության որակ, մրցակցային կրթական ծրագրեր, ծառայությունների որակի վարկանիշավորում, կրթական ռեսուրսներ*

Վերջին տասնամյակներում համալսարանների վարկանիշավորման գործընթացը ակտիվացավ միջազգային կրթական շուկայում, որը մրցակցային միջավայր ստեղծեց բուհերի համար: Սակայն, դրանք զուգահեռ, պետք է կարևորել նաև յուրաքանչյուր համալսարանի ներսում որակի ներքին ապահովման վարկանիշավորումը՝ ըստ առանձին կրթական ծրագրերի, հաշվի առնելով կրթական ծրագրերի իրականացման ռեսուրսների առկայությունը և դրանց օգտագործման արդյունավետությունը:

**Արա АГАДЖАНИЯН, Нона ХАЧАТРЯН**

**Рейтинг качества программ образования для вузов**

*Ключевые слова: качество образования, конкурентоспособные образовательные программы, качество услуг, образовательные ресурсы*

За последние десятилетия рейтинг университетов стал активным фактором в международном образовательном рынке, создавшим конкурентную среду для университетов. Тем не менее, с учетом наличия образовательных программ и эффективности их использования параллельно, становится также необходимостью создания внутреннего рейтинга качества в каждом университете в соответствии по отдельными индивидуальными образовательными программами,.

**Արա AGHAJANYAN, Nona KHACHATRYAN**

**Ranking of educational programs in higher educational institutions**

*Ke ywords: education quality, competitive educational programs, quality of services, educational resources*

Over the last decades, the ranking of universities has become active an international educational market, that has created a competitive environment for universities. However, in parallel, it should also highlight the internal quality assurance ranking within each university, according to individual educational programs, taking into account the availability of educational programs and the effectiveness of their use.

**ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ և  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՋՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

**Գևորգ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**Անի ՍԱՐԳՍՅԱՆ**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

Բանալի բառեր. հարկային քաղաքականություն, հարկային համակարգ,  
տնտեսության պետական կարգավորում, հարկերի գործառույթներ

Տնտեսական զարգացման ժամանակակից փուլում հարկային համակարգն առանցքային նշանակություն ունի ոչ միայն պետության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական բազայի ձևավորման, այլ նաև երկրում գործարար միջավայրի բարելավման, սոցիալական խնդիրների լուծման, ներդրումային հոսքերի ներգրավման, ինչպես նաև միջարք այլ խնդիրների լուծման գործում: Այլ խոսքով, հարկային քաղաքականությունը, բացի ֆիսկալ խնդիրների լուծման նպատակ հետապնդելուց, իրականացնում է նաև տնտեսական գործընթացների պետական կարգավորում: Պատահական չէ այն հանգամանքը, որ երկրում գործող հարկային համակարգի հիմնավորվածությամբ և տնտեսական գործընթացներին համարժեքությամբ են մեծապես պայմանավորված պետության և հասարակության բնականոն կենսագործունեությունը և նրանց պահանջմունքների արդյունավետ բավարարումը: Երկրում իրականացվող հարկային քաղաքականությունն ուղղակի ներգործություն ունի նաև գործարար միջավայրի և ձեռնարկատիրական նախաձեռնությունների վրա: Հետևաբար, հարկային համակարգի զարգացմանն ուղղված քայլերը և միջոցառումները տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղություններից են և մեծապես պայմանավորում են վերջիններիս հաջողությունը:

Ըստ էության, հարկային համակարգի հիմնական նպատակն է ձևավորել պետության կենսագործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների բազա, ստեղծել բարենպատ պայմաններ ազգային տնտեսության զարգացման համար և նպաստել բնակչության բարեկեցության բարձրացմանը: Այս տեսանկյունից, երկրում իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի նշված նպատակների միջև որոշակի հա-

մակցության ապահովմամբ դրանցից յուրքանչյուրի ձեռքբերմանը՝ չվտանգելով մյուսների իրացմանը: Ընդ որում, հարկային համակարգի այս կամ այն նպատակի ձեռք բերման համար ընտրվող գործիքների գործնական կիրառումը, ապահովելով տվյալ նպատակի իրացումը, կարող է բացասաբար անդրադառնալ մյուսների վրա: Ընդհանուր առմամբ, հարկային համակարգը շուկայական տնտեսության բնականոն կենսագործունեության ապահովման կարևոր բաղադրիչներից է, որի ազդեցությունը չափազանց մեծ է տնտեսական և սոցիալական նպատակների ձեռք բերման վրա: Հարկերը բյուջետային եկամուտների ձևավորման հիմնական աղբյուր են, որոնց ծավալը որոշիչ է պետության տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլ գործառույթների պատշաճ իրականացման համար: Հետևաբար, տնտեսական վերափոխումների արդյունավետությունը, նախ և առաջ, պայմանավորված է հարկային համակարգի զարգացման մակարդակով, ինչը պահանջում է դրա ձևավորման և հարկային քաղաքականության մշակման ու իրականացման ուղղությամբ հիմնավոր և երկրի տնտեսական և սոցիալական իրողություններից բխող մոտեցումներ: Շուկայական հարաբերություններին անցման փուլում, տնտեսական վերափոխումների շրջանում մեծանում է ֆինանսական միջոցների պահանջարկը, վերջինիս մղելով հարկային բեռի ավելացմանը: Սակայն երկար ժամկետում այս սցենարը հեռանկարային չէ: Հետևաբար, նման քայլի իրականացումը պետք է կրի ժամանակավոր բնույթ և տնտեսության կայունացմանը զուգընթաց պետք է իրականացվի գործարար միջավայրի բարելավմանն ուղղված հարկային քաղաքականություն: Հակառակ պարագայում, հարկային համակարգը կդառնա լուրջ խոչընդոտ տնտեսության համար, սահմանափակելով տնտեսական գործունեության իրականացման և ողջամիտ շահույթ ստանալու հնարավորությունները:

Ակնհայտ է, որ տնտեսական գործընթացների վրա պետական ներգործության իրականացման հարցում հարկային գործիքներն ունեն կարևոր նշանակություն: Միաժամանակ, այդ համատեքստում իրականացվող հարկային քաղաքականությունը պետք է ունենա գիտական հիմնավորվածություն՝ հաշվի առնելով ազգային տնտեսության առանձնահատկությունները և ելնելով ձևավորված մակրոտնտեսական իրավիճակից և ձեռնարկատիրական գործունեության պայմաններից: Ինչպես հարկային համակարգի բնականոն գործունեության, այնպես էլ գործարար միջավայրի վրա բացասական ազդեցություն

են ունենում հարկային օրենսդրության անկայունությունը, հարկային վարչարարության ցածր արդյունավետությունը, իրականացվող հարկային քաղաքականության ֆիսկալ ուղղվածությունը և այլն: Տնտեսական զարգացման ներկա փուլում հարկային քաղաքականությունը պետք է հիմնված լինի կիրառվող մոտեցումների գիտականորեն հիմնավորվածության վրա՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, հարկ վճարողների ֆինանսատնտեսական հնարավորությունները և մի շարք այլ պայմաններ: Հարկային քաղաքականության կայունության ապահովման գործում կարևոր է հարկային ռազմավարության ընդունումը, ինչը թույլ կտա հարկային ոլորտում սահմանել առավել արդյունավետ և երկարաժամկետ նպատակներ և դրանցից ելնելով մշակել հարկային վարչարարության բարձրացմանն ուղղված համալիր փոփոխություններ, ինչն ունի որոշիչ դեր և կարևոր նախապայման է հարկային քաղաքականության խնդիրների լուծման համար, ուստի առանց արդյունավետ հարկային վարչարարության՝ համակարգը չի կարող լիարժեք իրականացնել իր առաքելությունը:

Ընդհանուր առմամբ, հարկային համակարգի հիմքում դրված այս կամ այն սկզբունքի կամ մեթոդի առկայությունը վկայում է հարկային քաղաքականության որոշակի ուղղվածության մասին: Ակնհայտ է, որ այն կարող է դառնալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր գործիք եթե հիմնված է հարկման հիմնարար սկզբունքների վրա և հաշվի է առնում երկրի տնտեսական առանձնահատկությունները: Սակայն այնպիսի գործոններ, ինչպիսիք են հարկային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրական դաշտի անկայունությունը, ինչպես նաև դրա բարդությունը բացասաբար են անդրադառնում տնտեսական գործունեության մասնակիցների վարքագծի և գործարար միջավայրի վրա՝ հետին պլան մղելով հարկային համակարգի կարգավորիչ դերը տնտեսական գործընթացներում: Ըստ էության, նշված խնդիրներն այսօր տարբեր դրսևորումներով առկա են Հայաստանի Հանրապետությունում՝ նվազեցնելով հարկային համակարգի գործունեության արդյունավետությունը: Իրավիճակի վրա բացասաբար են անդրադառնում նաև հասարակության հարկային կուլտուրայի ցածր մակարդակը կամ դրա բացակայությունը, ինչպես նաև հարկերի հաշվին ձևավորվող բյուջետային միջոցների օգտագործման ցածր թափանցիկությունը և անարդյունավետությունը:



Անշուշտ, հարկային համակարգի արդյունավետ գործունեության հարցում առանցքային նշանակություն ունի իրականացվող հարկային վարչարարությունը, քանի որ դրանով է զգալիորեն պայմանավորված երկրի տնտեսության և հարկաբյուջետային համակարգի առջև ծառայած խնդիրների լուծումը: Հարկային վարչարարության իրականացման գործիքակազմի կատարելագործման անհրաժեշտությամբ հանդերձ, կարևոր նշանակություն ունի նաև հարկ վճարողների մոտ հարկային համակարգի հանդեպ վստահության մակարդակի և հարկային պարտավորությունների կատարման ուղղությամբ մոտիվացիոն մեխանիզմի ձևավորումը: Հարկային վարչարարության հսկողական գործիքակազմի համալրմանը զուգընթաց ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև բարեխիղճ հարկ վճարողների հանդեպ խթանիչ բնույթի միջոցների կիրառումը, որը կարող է հանդես գալ պետական պատվերների տեղաբաշխման և գնումների գործընթացում վերջիններիս ներգրավման, ինչպես նաև այլ միջոցներով: Միևնույն ժամանակ, օրինական և ոչ օրինական ճանապարհներով հարկերի վճարումից խուսափողների համար պետք է սահմանվեն պատասխանատվության խիստ միջոցներ՝ ապահովելով պատժի անխուսախելիության սկզբունքի գործնական իրացումը: Այլ կերպ ասած, հարկային վարչարարությունը պետք է արդյունավետ կերպով համադրի պատժիչ և խթանիչ գործիքների կիրառումը, օրինապահ հարկատուների համար ապահովելով լրացուցիչ առավելություններ, իսկ հարկերի վճարումից խուսափողների համար՝ պատասխանատվության խիստ միջոցներ և գործիքներ:

Այսպիսով, կարելի է պնդել, որ հարկային համակարգը հանդիսանում է պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության իրականացման կարևոր գործիք, որը կարող է ինչպես խթանել, այնպես էլ զսպել տնտեսության զարգացումը: Հետևաբար, հարկային համակարգի ձևավորման ժամանակ պետք է հատկապես կարևորել հարկերի ֆիսկալ և կարգավորիչ գործառույթների արդյունավետ զուգակցումը, որի պարագայում միայն հնարավոր կդառնա ապահովել պետության գործունեության համար անհրաժեշտ կենտրոնացված ֆինանսական բազայի ձևավորումը՝ չվանգելով տնտեսական գործունեության իրականացման հնարավորություններ և ձեռնարկատիրական նախաձեռնությունները:

**Գևորգ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Անի ՍԱՐԳՍՅԱՆ**

**Հարկային քաղաքականության կատարելագործման և տնտեսական առաջնթացի ապահովման հիմնախնդիրները**

*Բանալի բառեր. հարկային քաղաքականություն, հարկային համակարգ, տնտեսության պետական կարգավորում, հարկերի գործառույթներ*

Հոդվածում քննարկվել են տնտեսության պետական կարգավորման հիմնահարցերը և ներկայացվել է հարկային համակարգի դերն այդ գործում: Հարկման տեսական հիմքերի վերլուծության արդյունքում ներկայացվել են ռացիոնալ հարկային համակարգի ձևավորման հիմնական սկզբունքները և պայմանները: Քննարկվել են տնտեսության վրա հարկերի ներգործության եղանակները և հարկային համակարգի կարգավորիչ դերի բարձրացման ուղիները: Առաջարկվել են այն հիմնական մոտեցումները և սկզբունքները, որոնք պետք է ընկած լինեն հանրապետությունում իրականացվող հարկային բարեփոխումների հիմքում:

**Геворг КИРАКОСЯН, Ани САРГСЯН**

**Проблемы улучшения налоговой политики и экономического роста**

*Ключевые слова: налоговая политика, налоговая система, государственное регулирование экономики, функции налогов*

В статье обсуждены вопросы государственного регулирования экономики и представлена роль налоговой системы в этом деле. В результате анализа теоритических основ налогообложения представлены основные принципы и условия формирования рациональной налоговой системы. Обсуждены основные способы воздействия налогов на экономику и пути повышения регулирующей роли налоговой системы. Предложены основные принципы и подходы, которые должны быть в основе налоговых реформ в республике.

**Gevorg KIRAKOSYAN, Ani SARGSYAN**

**Issues related to tax policy and economic growth**

*Key words: tax policy, tax system, state regulation of the economy, functions of taxes*

The article discussed the issues of state regulation of the economy and the role of the tax system in it. The basic principles and conditions of formation of a rational tax system are presented as a result of analysis of the theoretical foundations of taxation. The main methods of taxes influence on the economy and ways to improve the regulatory role of the tax system are discussed in the article. The basic principles and approaches that should be the basis of tax reforms in the Republic are proposed in the article.

## НЕФОРМАЛЬНАЯ ЗАНЯТОСТЬ И ЕЕ ПОСЛЕДСТВИЯ ДЛЯ ЭКОНОМИКИ РА

Эстер АКОПЯН

Преподаватель кафедры экономической теории РАУ

Ключевые слова: экономика Армении, неформальная занятость, неформальная предпринимательская деятельность, неформальных сектор, законодательство

В 1990-е годы в армянской экономике наблюдался значительный отток населения в неформальный сектор из формальной экономики. В данный промежуток времени рынку труда Армении было свойственно ухудшение правового, а также в целом экономического состояния трудовых ресурсов, которое сопровождалось резким сокращением уровня заработной платы.

После распада СССР было закрыто множество предприятий, была осуществлена приватизация земли и предприятий в области сельского хозяйства. В результате обострились такие негативные явления, как:

- ✓ длительные отпуска;
- ✓ высокий уровень безработицы;
- ✓ невыплаты заработной платы,
- ✓ отсутствие правовой защищенности;
- ✓ снижение спроса на трудовые ресурсы.

Ситуация наладилась лишь в конце 1990-х и начале 2000-х годов (рисунок 1).




Рисунок 1. Размер средней номинальной заработной платы в РА, 2001-2016 гг. <sup>389</sup>

<sup>389</sup> С 2013г. показатель рассчитан на основе закона РА «О подоходном налоге» ((1 января 2013г.): в РА в оплату труда включены выплаты на обязательное социальное страхование. График составлен автором на основе данных НСС РА [www.armstat.am](http://www.armstat.am)

В сложившихся условиях крупномасштабное развитие официально незарегистрированной занятости является своего рода механизмом естественного саморегулирования экономики, а также формой, которую население вынужденно выбрало с целью адаптации к установившейся экономической ситуации. Занятость в неформальном секторе в начале 1990-х годов в значительной мере сдерживала значительное сокращение уровня жизни населения, а также увеличение безработицы. Помимо всего сказанного, неформальный сектор играл стимулирующую роль в процессе расширения рынка выпускаемой продукции, а также, в некоторой степени, в процессе формирования основы с целью дальнейшего развития малого и среднего предпринимательства, а также формирования у населения соответствующих навыков с целью осуществления предпринимательской деятельности.

Однако неформальный сектор, смягчив последствия экономического кризиса в сфере рынка труда, породил несколько довольно острых проблем социального характера. В данной ситуации отсутствует контроль за условиями труда, обеспечением социальных гарантий, контроль за качеством выпускаемой продукции, механизмы повышения квалификации работников, а также совершенствования профессиональных навыков. Официально незарегистрированная деятельность, которая проводится на рабочем месте, сокращает управляемость персоналом, отрицательно отражается на основном производстве.



**Рисунок 2.** Динамика численности трудовых ресурсов Армении 2008-2016гг.<sup>390</sup>

Наиболее распространенными в Армении видами деятельности, которая скрыта от контрольных органов и официально не зарегистрирована, являются следующие:

- ✓ услуги населению в области строительства;
- ✓ услуги пошива одежды и обуви,

<sup>390</sup> График составлен автором на основе данных НСС РА [www.armstat.am](http://www.armstat.am)

- ✓ услуги по ремонту;
- ✓ репетиторство, а также частные уроки;
- ✓ услуги по приготовлению пищи;
- ✓ уличная торговля;
- ✓ частные услуги по уборке квартир и офисных помещений;
- ✓ посредническая деятельность.

В неформальную занятость в наибольшей степени среди возрастных групп населения вовлечены студенты, которые в большей степени учатся на платной форме и вынужденно работают для покрытия платы за обучение, и молодежь. В неформальном секторе пониженная доля занятых выше 45 лет, в связи с тем, что от рабочего стажа данной категории зависит уровень их пенсии.

В соответствии с законодательством Республики Армения формальная занятость обеспечивается только юридически зарегистрированными организациями. Учитывая, что регистрация является одним из факторов, определяющих формальность предприятий, следует, что в стране формальная занятость существует только на официальных предприятиях.<sup>391</sup> Случаи формальной занятости в неформальных предприятиях или домашних хозяйствах, то есть сотрудники с контрактами на незарегистрированных предприятиях или частные домохозяйства, нанимающие работников с контрактами, маловероятны.




**Рисунок 3.** Динамика численности экономически активного населения РА<sup>392</sup>

В целях сокращения неформальной занятости правительство ввело дополнительные меры, в том числе, поправки к «Закону о труде РА» и «Закон РА об административных правонарушениях» и т. д.


<sup>391</sup> Предпринимательская деятельность без государственной регистрации запрещена Законом РА «О государственной регистрации юридического лица», а удержание работника без трудового договора запрещено Законом РА «Об административном нарушении закона».

<sup>392</sup> График составлен автором на основе данных НСС РА [www.armstat.am](http://www.armstat.am)



**Рисунок 4.** Официально зарегистрированные безработные в Армении, тыс.чел.<sup>393</sup>

<sup>424</sup> ՄԱԿ-ը 2005թ. միկրոֆինանսավորման միջազգային տարի հայտարարեց՝ ընդլայնելու միկրոֆինանսավորումը, որը ծրագրեր են փոքր վարկերով և ընդգրկում են ավելի շատ աղքատ շերտեր, այլ ոչ թե վարկի միջին չափի ավելացում:  
<sup>425</sup> Global Financial Inclusion (Global Findex) Database Annual 15-Apr-2015 World Bank Group


Վերջինս մեկ անգամ ևս ապացուցում է տարբեր հետազոտողների այն տեսակետը, որ միկրոֆինանսավորումը գործիք է, որն հանգեցնում է ներգրավվածության մեծացմանը և տնտեսական աճին: Մի շարք հետազոտողներ ցույց են տվել, որ ֆինանսական զարգացումը բերում է աղքատության կրճատմանը և եկամուտների բաշխման անհավասարության նվազմանը: Օգտագործելով Ջինի գործակիցը անհավասարության գնահատման համար, մեր կողմից բացահայտվել է, որ միկրոֆինանսավորման և Ջինի գործակցի լրգարիթմական ֆունկցիաները նվազող են, այսինքն, այս մեծությունների միջև գոյություն ունի հակադարձ կախվածություն: Դա նշանակում է, որ միկրոֆինանսավորման մեծացման դեպքում Ջինի գործակիցը նվազում է: Նշենք նաև, որ Ջինի գործակիցը տատանվում է 0-ից 100 միջակայքում, և գործակցի մեծությունը ինչքան մոտ է 0-ին այնքան տնային տնտեսություններն ունեն նմանատիպ եկամուտներ և եկամուտների բաշխումը հավասար է: Իսկ 100-ի դեպքում նշանակում է, որ բոլոր եկամուտները ստանում է մեկ տնային տնտեսություն: Գծ.2-ից պարզ է դառնում, որ ՀՀ-ում նախնական օգուտները սկզբում ստանում է հարուստ հատվածը, սակայն միկրոֆինանսավորման մեծացմանը զուգընթաց օգուտները ստանում են ավելի աղքատ հատվածները և ըստ ֆինանսական միջոցների հասանելիության ընդլայնման անհավասարությունը կրճատվում է ավելի կտրուկ: Ենթադրվում է, որ կրճատվող անհավասարությունը խթանում է նաև ֆինանսական զարգացումը: Ֆինանսական հատվածում և՛ առևտրային, և՛ սպառողական վարկերի մեծ ծավալները միշտ չեն վկայում ֆինանսական ծառայությունների աճի մասին, քանի որ վարկը կարող է կենտրոնացած լինել մեծ ընկերությունների և հարուստ անհատների շրջանում:



**Գծապատկեր 2.** Միկրոֆինանսավորման և եկամուտների անհավասարության միջև կախվածության գնահատականը ՀՀ-ում, 2004-2015թթ.

Ֆորմալ հաշիվների օգտագործումը թույլ է կոռելացված ֆինանսական խորության հետ, մասնավորապես, տնտեսության ստորին շերտերում, և տարբեր երկրների օրինակներն էլ վկայում են այդ մասին: Օրինակ, Վիետնամի մասնավոր հատվածին տրամադրված վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը

125 տոկոս է, մինչդեռ չափահասների միայն 21 տոկոսն ունի ֆորմալ հաշիվներ: Եվ ընդհակառակը, Չեխիան, որն ունի համեմատաբար համեստ ֆինանսական խորություն /մասնավոր վարկեր և ՅՆԱ հարաբերությունը 56 տոկոս է/, ունի բնակչության ներգրավածության մեծ տոկոս՝ չափահասների 81 տոկոսն ունեն ֆորմալ հաշիվներ: Սա վկայում է, որ ֆինանսական խորությունը և ֆինանսական ներգրավածությունը ֆինանսական զարգացվածության տարբեր չափորոշիչներ են և որ ֆինանսական համակարգերը կարող են դառնալ խորը առանց բոլորի համար ֆինանսական հասանելիության: ՀՀ-ում ֆինանսական խորության և ֆինանսական ներգրավվածության կապը գնահատելու համար կառուցվել են նաև այս ցուցանիշների կապն արտահայտող լոգարիթմական ֆունկցիաները: Որպես ֆինանսական ներգրավվածության ցուցանիշ ծառայել են 100 հազ. չափահաս բնակչին բաժին ընկնող բանկի մասնաճյուղերի և բանկոմատների քանակը: Որպես տվյալների աղբյուր ծառայել է Համաշխարհային բանկի ֆինանսական զարգացման ցուցանիշների բազան, իսկ վերլուծությունն ընդգրկում է 2004-2015թթ: Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, լոգարիթմական ֆունկցիան աճող է, այսինքն կապը դրական է: Դա նշանակում է, որ ՀՀ տնտեսության համար ֆինանսական ներգրավվածության մեծացումը խթանում է տնտեսության ֆինանսական խորացմանը: Մասնավորապես առաջին մասից երևում է, որ ՀՀ բանկերի մասնաճյուղերի ավելացումը գրեթե նույն ծավալի փոփոխություն է առաջացնում ֆինանսական խորության մեծության մեջ:



**Գծապատկեր 3.** ՀՀ տնտեսության ֆինանսական խորության և ֆինանսական ներգրավվածության կապը, 2004-2015թթ

Քանի որ ցանկացած գործընթացի խորացման անհրաժեշտ պայմաններից մեկը մասնակիցների մեծ քանակի առկայությունն է, ապա ֆինանսական ներգրավվածությունը ՀՀ ֆինանսական շուկաների խորացման անհրաժեշտ պայմաններից մեկն է ևս: Ֆինանսական հատվածի զարգացումը և խորությունը

նը մղում են տնտեսական աճ՝ արտադրողական հատվածներից հավաքագրելով խնայողություններ և ներդրումներ: Ֆինանսական համակարգի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքները խթանում են տեղեկատվության, գործարքային և պայմանագրային ծախսերի նվազումը, որն էլ իր հերթին արագացնում է տնտեսական աճը և խթանում է աղքատների նպատակադրված աճը: Այսպիսով, ֆինանսական ներգրավածության բարձրացումը նվազեցնում է տնային տնտեսությունների տնտեսական խոցելիությունը, խթանում է տնտեսական աճը, նվազեցնում է աղքատությունը և բարելավում կյանքի որակը: Իսկ կատարված հետազոտությունը թույլ է տալիս անել հետևյալ եզրահանգումները. Առաջին, ՀՀ միկրոֆինանսավորման և ֆինանսական ներգրավածության միջև կապը դրական է, այսինքն միկրոֆինանսավորման գործիքների զարգացումը կարող է խթանել ֆինանսների հասանելիության մեծացումը: Երկրորդ, ՀՀ միկրոֆինանսավորման և եկամուտների անհավասարության միջև կապը բացասական է, այսինքն միկրոֆինանսավորման ծավալների ավելացումը խթանում է եկամուտների բաշխման հավասարության մեծացումը: Երրորդ, ՀՀ-ում ֆինանսական խորության և ֆինանսական ներգրավածության միջև կապը դրական է, այսինքն ֆինանսական ներգրավածության մեծացումը դրական է անդրադառնում ՀՀ տնտեսության ֆինանսական զարգացման վրա: Եվ վերջապես, հաշվի առնելով վերոնշյալը, տրամաբանական է եզրակացնել, որ միկրոֆինանսավորումը կարող է ազդել ֆինանսական խորության վրա ֆինանսական ներգրավածության մեծացման միջոցով:

Կատարված հետազոտությունը ընդգծում է միկրոֆինանսավորման և ֆինանսական խորության՝ ֆինանսական զարգացման կարևորությունը, ապացուցելով, որ դրանք կարող են դառնալ ռազմավարության կոնկրետ ուղղություններ, որով հնարավոր կլինի ազդել աղքատության մակարդակի նվազեցման վրա: Աղքատությունը հիմնականում կենտրոնացած է ծայրամասերում և խուլ գյուղերում և միկրոֆինանսավորումը կարող է լինել աղքատության հաղթահարման գործիք: Օգտագործելով միկրոֆինանսավորումը կարելի է մեծացնել ֆինանսական հասանելիությունը՝ դրանով իսկ ազդելով ֆինանսական խորության և աղքատության վրա: Չնայած միկրովարկավորման ծրագրերի հաջողությանն ամբողջ աշխարհում, Հայաստանում գոյություն ունի միկրոֆինանսավորման «հովանավորչություն»,՝ այն գովազդվում է, որպես աղքատների վարկային պահանջների բավարարման ձև: Իրականում, ֆինանսական ծառայությունները, մասնավորապես միկրոֆինանսավորումը, պետք է դառնան հասարակական բարիք՝ աղքատների կենսապայմանների բարելավման, ֆինանսական ներգրավածության և խորության մեծացման, ինչպես նաև տնտեսական աճի ապահովման համար:

**Աշոտ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ, Սրբուհի ԻՍՐԱՅԵԼՅԱՆ**  
**Ֆինանսական խորության, միկրոֆինանսավորման և ֆինանսական**  
**ներգրավվածության կապը ՀՀ-ում**

*Բանալի բառեր. ֆինանսական ներգրավվածություն, միկրոֆինանսավորում, ֆինանսական խորություն, ֆինանսական ծառայություն, կյանքի որակ, տնտեսական աճ*

Ներկա պայմաններում միկրոֆինանսավորումը, ֆինանսական ներգրավվածությունը և տնտեսության ֆինանսական խորությունը հսկայական ներուժ են պարունակում ոչ միայն բնակչության աղքատ հատվածի կենսապայմանների և կյանքի որակի բարելավման, այլև տնտեսական աճի ապահովման համար: Հոդվածում քննարկվում են նշված ցուցանիշների փոխադարձ կախվածությունները, ինչպես նաև մաթեմատիկական ժամանակակից մեթոդների օգնությամբ տրվում դրանց գնահատականները ՀՀ տնտեսության համար և կատարվում համապատասխան եզրահանգումներ:

**Ashot SALNAZARYAN, Srbuhi ISRAELYAN**  
**Взаимосвязь между финансовой глубиной, микрофинансированием и**  
**финансовым включением в Республике Армения**

*Ключевые слова: финансовое включение, микрофинансирование, финансовая глубина, финансовые услуги, качество жизни, экономический рост*

В нынешних условиях микрофинансирование, финансовое включение и финансовая глубина экономики имеют огромный потенциал не только для повышения качества жизни бедных слоев населения, но и для обеспечения экономического роста. В статье обсуждается взаимозависимость этих показателей, а также с помощью современных математических методов даны их оценки для экономики Армении и оформлены соответствующие выводы.

**Ashot SALNAZARYAN, Srbuhi ISRAELYAN**  
**Relationship between the financial depth, microfinancing and financial inclusion**  
**in the Republic of Armenia**

*Key words: financial inclusion, microfinance, financial depth, financial services, quality of life, economic growth*

Under current conditions, microfinancing, financial inclusion and financial depth of the economy have a huge potential not only to improve the quality of life of the poor, but also to ensure economic growth. The article discusses the interdependence of these indicators, with the help of modern mathematical methods, their estimates for the Armenian economy are given and the corresponding conclusions are drawn up.



**ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿՈՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԻ ԳԻՆԸ ԵՎ  
ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ**

**Վահագն Մելիք-Փարսադանյան**  
ԵՊՀ դասախոս  
**Անի Գալստյան**

Բանալի բառեր. վարկային ռիսկ, վարկային սպրեդ, սպասվող կորուստ, դեֆոլտի հավանականություն, ռիսկից զերծ տոկոսադրույք

**I. Անհրաժեշտ նշանակումները**

Դիտարկենք վարկային ռիսկի ենթակա պարտատոմս, որն ունի հետևյալ բնութագրիչները՝  $n$  դրամական հոսք (արժեկտրոն) ժամանակի  $1, \dots, n$  պահերին,  $c$  արժեկտրոնի մեծություն (փուլի համար) և  $s$  ռիսկից զերծ տոկոսադրույքի (մինչև մարում եկամտաբերության) նկատմամբ սպրեդ: Ենթադրենք, որ ռիսկից զերծ տոկոսադրույքը  $r$  է, իսկ  $LGD$ -ն դեֆոլտ գնալու դեպքում կորստի սպասվող մասնաբաժինն է ( $0 \leq LGD \leq 1$ ): Կատարենք նաև հետևյալ նշանակումները.

$P(r)$ - պարտատոմսի գինը հորիզոնի սկզբում՝ հաշվարկված ռիսկից զերծ տոկոսադրույքով<sup>426</sup> [6].

$$P(r) = \frac{c}{(1+r)^1} + \dots + \frac{c}{(1+r)^i} + \dots + \frac{c+100}{(1+r)^n}, \quad (1)$$

$P(r, s)$ - պարտատոմսի գինը հորիզոնի սկզբում՝ հաշվարկված ռիսկի սպրեդ պարունակող տոկոսադրույքով [3].

$$P(r, s) = \frac{c}{(1+r+s)^1} + \dots + \frac{c}{(1+r+s)^i} + \dots + \frac{c+100}{(1+r+s)^n}, \quad (2)$$

$RR$ - դեֆոլտ գնալու դեպքում վերականգված մեծության սպասվող մասնաբաժինը ( $0 \leq RR \leq 1$ ) [5].

$$RR = 1 - LGD, \quad (3)$$

$MacD_r$  և  $MD_r$ - Մաքրլիի և ձևափոխված դյուրացիաները հաշվարկված տոկոսադրույքի  $r$  մակարդակի համար [8].

$$MacD_r = MD_r \times (1 + r) = \left[ 1 \times \frac{c}{(1+r)^1} + \dots + i \times \frac{c}{(1+r)^i} + \dots + n \times \frac{c+100}{(1+r)^n} \right] \times \frac{1}{P(r)}, \quad (4)$$

*Expected Loss (EL)*- սպասվող կորուստի չափը (սույն հոդվածում ենթադրվում է, որ վարկային ռիսկի ենթակա և ռիսկից զերծ պարտատոմսերի գների տարբերությունը պայմանավորող միակ գործոնը սպասվող կորուստն է [1]).

$$EL = P(r) - P(r, s): \quad (5)$$

<sup>426</sup> Պարզության համար հաշվարկներն արվում են արժեկտրոնի փուլի սկզբի դրությամբ:

Ենթադրելով, որ ինչ-որ ժամանակահատվածում դեֆոլտի ենթարկվելու դեպքում վճարումն իրականացվում է հաջորդ արժեկտրոնի փուլի սկզբում, ստորև ներկայացնենք դեֆոլտի հավանականությունների նկարագրությունը:

Դեֆոլտի հավանականությունը

Ենթադրենք, որ յուրաքանչյուր  $(i - 1, i]$  ժամանակահատվածում (արժեկտրոնի փուլում) դեֆոլտի ենթարկվելու՝ ռիսկի նկատմամբ չեզոք պայմանական հավանականությունը՝ պայմանով, որ դեֆոլտ չի եղել նախորդ պահերին,  $p$  է, իսկ դեֆոլտ չլինելու հավանականությունը՝  $1 - p$ : Ընդ որում,  $p$ -ն կախված չէ  $i$ -ից և հավասար է բոլոր ժամանակահատվածների համար: Նշանակելով  $i_+$ -ով  $(i - 1, i]$  ժամանակահատվածում (տվյալ ժամանակահատվածի որևէ պահին) դեֆոլտի ենթարկվելու և  $i_-$ -ով՝ դեֆոլտի չենթարկվելու պատահույթները՝ վերոնշյալ ենթադրությունը կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով.

$$P(i_+ | i - 1_-) = p, \quad i = \overline{1, n}, \quad (6)$$

$$P(i_- | i - 1_-) = 1 - p, \quad i = \overline{1, n}: \quad (7)$$

Այսինքն՝ մինչև  $i - 1$  պահը դեֆոլտի չենթարկված պարտատոմսի համար  $i - 1$ -ից  $i$  պահն ընկած ժամանակահատվածում (այդ ժամանակահատվածի որևէ պահին) դեֆոլտի ենթարկվելու հավանականությունը  $p$  է:

Կիրառելով  $[B_1, \dots, B_n]$  անհամատեղելի պատահույթների համար ( $B_i \cap B_j = \emptyset, \forall i, j = \overline{1, n}$ ) լրիվ հավանականությունների բանաձևը՝  $P(A) = P(A|B_1) \times P(B_1) + \dots + P(A|B_n) \times P(B_n)$  [7], կարող ենք ստանալ նաև հորիզոնի սկզբի դրությամբ,  $(i - 1, i]$  ժամանակահատվածում դեֆոլտի ենթարկվելու ոչ պայմանական հավանականությունը, այն է՝ հավանականություն, որ պարտատոմսը դեֆոլտի կենթարկվի հենց  $(i - 1, i]$  ժամանակահատվածում: Վերջինս ենթադրում է, որ պարտատոմսը կգոյատևի մինչև  $i - 1$  պահը և դեֆոլտի կենթարկվի հաջորդ ժամանակահատվածում: Այսպես, քանի որ հորիզոնի սկզբում մեր ուսումնասիրության առարկան գոյություն ունեցող կամ դեֆոլտի չենթարկված պարտատոմսերն են, ապա  $(0, 1]$

ժամանակահատվածում դեֆոլտի ենթարկվելու հավանականությունը ոչ պայմանական է՝  $P(1_-) = (1 - p)$  և  $P(1_+) = p$ :  $(1, 2]$  ժամանակահատվածում դեֆոլտի ենթարկվելու և գոյատևելու ոչ պայմանական հավանականությունները, ըստ լրիվ հավանականությունների բանաձևի, հավասար են  $P(2_-) = P(2_-|1_-) \times P(1_-) = (1 - p) \times (1 - p) = (1 - p)^2$  և  $P(2_+) = P(2_+|1_-) \times P(1_-) = p \times (1 - p)$ : Իսկ  $(i - 1, i]$  ժամանակահատվածի համար կստանանք.

$$P(i_-) = P(i_- | i - 1_-) \times P(i - 1_-) = (1 - p)^i, \quad (8)$$

$$P(i_+) = P(i_+ | i - 1_-) \times P(i - 1_-) = p \times (1 - p)^{i-1} : \tag{9}$$

Այսինքն՝  $(i - 1, i]$  ժամանակահատվածում դեֆոլտի ենթարկվելու ոչ պայմանական հավանականությունը՝  $p \times (1 - p)^{i-1}$ , իրենից ներկայացնում է հավանականություն, որ պարտատոմսը կգոյատևի մինչև  $i - 1$  պահը և դեֆոլտի կենթարկվի  $(i - 1, i]$  ժամանակահատվածում, իսկ  $(i - 1, i]$  ժամանակահատվածում գոյատևելու հավանականությունը՝  $(1 - p)^i$ , որ պարտատոմսը կգոյատևի բոլոր  $(0,1], (1,2], \dots, (i - 1, i]$

ժամանակահատվածներում:

Մյուս կողմից, եթե յուրաքանչյուր  $i$ -րդ պահին բոլոր հնարավոր ելքերի

բազմությունը նշանակենք  $\Omega_i = \{1_+, 2_+, \dots, i - 1_+, i_+, i_-\}$  և  $(i - 1, i]$

ժամանակահատվածում դեֆոլտի ենթարկվելու ոչ պայմանական

հավանականությունը  $\pi_i$ -ով, կստանանք՝  $P(\Omega_i) = 1 = \pi_1 + \dots + \pi_{i-1} + \pi_i +$

$P(i_-)$ , որտեղից կստանանք  $(i - 1, i]$  ժամանակահատվածում գոյատևելու ոչ

պայմանական հավանականության մեկ այլ բանաձև՝  $P(i_-) = 1 - \sum_{k=1}^i \pi_k$ :

Վերջինս իրենից ներկայացնում է մնացորդային հավանականություն,

այսինքն՝ ստացվում է բոլոր հնարավոր ելքերի բազմությունից բացառելով

$(i - 1, i]$  ժամանակահատվածում գոյատևելուց բացի մյուս հնարավոր

դեպքերը<sup>428</sup>: Ստացված արտահայտությունը հավասարեցնելով  $(i - 1, i]$

ժամանակահատվածում գոյատևելու՝ լրիվ հավանականությունների

բանաձևի միջոցով ստացած (8) արտահայտությանը՝ կստանանք.

$$(1 - p)^i = 1 - \sum_{k=1}^i \pi_k, \tag{10}$$

իսկ (9) հավասարումը, ըստ մեր նշանակման, կներկայացնենք հետևյալ

տեսքով.

$$\pi_i = p \times (1 - p)^{i-1} : \tag{11}$$

Նշենք նաև, որ  $p$  և  $\pi_i$  գաղափարները կիրառվում են նաև ժողովրդագրության

մահացության աղյուսակներում, որտեղ  $p$ -ն հանդես է գալիս որպես


ժամանակահատվածում մահանալու պայմանական հավանականություն [2]:

Պարտատոմսի դեֆոլտ լինելու վերոնշյալ հավանականությունների մեկնաբանությունն՝ ըստ դրամական հոսքերի վճարման պահերի՝ Նկար 1-ում [4]:


<sup>427</sup> Այսինքն՝  $i$  պահին հնարավոր են հետևյալ դեպքերը՝ կամ պարտատոմսը գոյատևել է մինչև  $i$  պահը, կամ դեֆոլտի է ենթարկվել մինչև  $i$  պահը որևէ ժամանակահատվածում:

<sup>428</sup> Հորիզոնի սկզբում դիտարկվող պարտատոմսի համար  $(i - 1, i]$  ժամանակահատվածում գոյատևելուց բացի մյուս հնարավոր դեպքերը հետևյալն են. պարտատոմսը դեֆոլտի կենթարկվի  $(i - 1, i]$  ժամանակահատվածում  $\pi_i$  հավանականությամբ կամ  $i - 1$  պահի դրությամբ արդեն գոյություն չի ունենա՝ դեֆոլտի ենթարկված լինելով  $(0,1], (1,2], \dots, (i - 2, i - 1]$  ժամանակահատվածներից որևէ մեկում՝ համապատասխանաբար  $\pi_1, \pi_2, \dots, \pi_{i-1}$  հավանականություններով:

Սկար 1. Պարտատոմսի դրամական հոսքերի ստացման հավանականությունների ծառը:



Սկար 2.  $\pi_i$  մակարդակները ըստ  $i$ -ի և  $p$ -ի:



$p$ -ի և  $n$ -ի փոքր արժեքների դեպքում  $\pi_i$ -ի արժեքները միմյանցից շատ չեն տարբերվում (Սկար 2): Այսինքն՝  $p$ -ի և  $n$ -ի փոքր արժեքների դեպքում,  $\pi_i$  մեծությունը կարելի է մոտարկել  $p$ -ով<sup>429</sup>, ինչը ստորև կօգտագործենք որոշ մոտարկումներ ներկայացնելու համար<sup>430</sup>:

$$p = \pi_1 \approx \pi_i : \tag{12}$$

Մյուս կողմից (10)-ի համար օգտագործելով Թեյլորի մոտարկումը փոքր  $x$ -երի համար՝  $(1+x)^n \approx 1+nx$ , կստանանք նաև.

$$\sum_{k=1}^i \pi_k \approx i \times p : \tag{13}$$

Դրամական հոսք(եր)ի սպասվող կորուստի չափը (**EL**)

(0,1] ժամանակահատվածում պարտատոմսի դեֆոլտի ենթարկվելու դեպքում ժամանակի մեկ պահին ներդրողի ներդրման արժեքը՝ զեղչված ռիսկից գերծ տոկոսադրույքով, կկազմի  $P_1(r) = c + \frac{c}{(1+r)^1} + \dots + \frac{c}{(1+r)^i} + \dots + \frac{c+100}{(1+r)^{n-1}}$ , ուստի ներդրման վերականգնված մեծության չափը կկազմի  $P_1(r) \times RR$ , որը բազմապատկելով դեֆոլտ լինելու ռիսկի նկատմամբ չեզոք

<sup>429</sup> Հարկ է նշել նաև, որ  $p \geq \pi_i$ :

<sup>430</sup> Հատկանշական է, որ Moody's գործակալության 1983-2015 թվականների տվյալների համաձայն՝ և՛ սուվերեն, և՛ կորպորատիվ թողարկողների դեպքում դեֆոլտի հավանականությունը Ba և բարձր վարկանիշների համար չի գերազանցում 1%-ը, իսկ B վարկանիշի համար կազմում է մոտ 3% (Moody's Investors Service "Sovereign-Global: Sovereign Default and Recovery Rates, 1983-2015", June 2016):

հավանականությամբ և բերելով մինչև հորիզոնի սկիզբ՝ կստանանք  $(0,1]$  ժամանակահատվածում դեֆոլտի ենթարկվելու դեպքում պարտատոմսի սպասված արժեքը հորիզոնի սկզբի դրությամբ՝  $\frac{P_1(r) \times RR \times \pi_1}{(1+r)^1}$ : Նույն ձևով  $(i-1, i]$  ժամանակահատվածի համար նշված մեծությունը կկազմի՝  $\frac{P_i(r) \times RR \times \pi_i}{(1+r)^i}$ :

Նկատենք, որ նշված մեծությունը իրենից ներկայացնում է հավանականությամբ կշռված վերականգման դրույք՝ ներդրման սպասված արժեք: Այն իրենից ներկայացնում է ռիսկից զերծ մեծություն, և զեղչվում է ռիսկից զերծ տոկոսադրույքով:

Դեֆոլտի դեպքում դրամական հոսքի սպասված արժեքից ակնհայտ է, որ դրամական հոսքի սպասված կորստի չափը կկազմի  $\frac{P_i(r) \times (1-RR) \times \pi_i}{(1+r)^i} = \frac{P_i(r) \times LGD \times \pi_i}{(1+r)^i}$ , ուստի պարտատոմսի համար սպասված կորուստը կկազմի վերոնշյալ դրամական հոսքերի համապատասխան մեծությունների գումարը՝  $EL = \sum_{i=1}^n \frac{P_i(r) \times LGD \times \pi_i}{(1+r)^i}$ : (14)

Հավասարում (12)-ը տեղադրելով (14) հավասարման մեջ, կստանանք  $EL \approx LGD \times p \times \left\{ \frac{1}{(1+r)^1} \times \left[ c + \frac{c}{(1+r)^1} + \dots + \frac{c+100}{(1+r)^{n-1}} \right] + \dots + \frac{1}{(1+r)^i} \times \left[ c + \frac{c}{(1+r)^1} + \dots + \frac{c+100}{(1+r)^{n-i}} \right] + \frac{1}{(1+r)^n} \times [c + 100] \right\} = LGD \times p \times \left\{ 1 \times \frac{c}{(1+r)^1} + 2 \times \frac{c}{(1+r)^2} + \dots + i \times \frac{c}{(1+r)^i} + n \times \frac{c+100}{(1+r)^n} \right\}$ :

Օգտագործելով հավասարում (4)-ը կստանանք.

$$EL \approx LGD \times p \times MacD_r \times P(r), \quad (15)$$

և ենթադրելով, որ ընդունելի է  $1+r \approx 1$  մոտարկումը, կստացվի.

$$EL \approx LGD \times p \times MD_r \times P(r): \quad (15.1)$$

Այսինքն՝ պարտատոմսի սպասվող կորստի չափը մոտարկվում է դեֆոլտի դեպքում կորստի չափի, դեֆոլտի հավանականության (ռիսկի նկատմամբ չեզոք պայմանական հավանականության), ռիսկից զերծ տոկոսադրույքի մակարդակի համար հաշվարկված պարտատոմսի ձևափոխված (Մաքուրի) դյուրացիայի և ռիսկից զերծ տոկոսադրույքով հաշվարկված պարտատոմսի գնի արտադրյալով:

Վարակային ռիսկով պարտատոմսի գինը

Դիտարկվող պարտատոմսի գինը հաշվարկելու համար անհրաժեշտ է պարտատոմսի ռիսկից զերծ տոկոսադրույքով զեղչված դրամական հոսքերի

գումարը ճշգրտել սպասված կորստի չափով: Հավասարում (5)-ից կստանանք.

$$P(r, s) = P(r) - EL \text{ կամ } P(r, s) = \frac{c}{(1+r)^1} + \dots + \frac{c}{(1+r)^i} + \dots + \frac{c+100}{(1+r)^n} -$$

$$\left[ \pi_1 \times LGD \times \left( \frac{c}{(1+r)^1} + \dots + \frac{c+100}{(1+r)^n} \right) + \dots + \pi_i \times LGD \times \left( \frac{c}{(1+r)^i} + \dots + \frac{c+100}{(1+r)^n} \right) + \dots + \right.$$

$$\left. \pi_n \times LGD \times \left( \frac{c+100}{(1+r)^n} \right) \right] \text{ հետևաբար,}$$

$$P(r, s) = \frac{c}{(1+r)^1} \times [1 - \pi_1 \times LGD] + \dots + \frac{c}{(1+r)^i} \times [1 - (\pi_1 + \dots + \pi_i) \times LGD] +$$

$$\dots + \frac{c+100}{(1+r)^n} \times [1 - (\pi_1 + \dots + \pi_n) \times LGD]: \quad (16)$$

Օգտագործելով հավասարում (3)-ը՝  $i$ -րդ դրամական հոսքի գեղջված արժեքի գործակիցը կարող ենք ներկայացնել հետևյալ տեսքով.  $1 - (\pi_1 + \dots + \pi_i) \times LGD = 1 - \sum_{k=1}^i \pi_k \times (1 - RR) = (1 - \sum_{k=1}^i \pi_k) + \sum_{k=1}^i \pi_k \times RR$ , որը տեղադրելով (16)-ում վարկային ռիսկով պարտատոմսի գինը կներկայացնենք որպես դրամական հոսքերի սպասվող արժեքների գեղջված մեծությունների գումար.

$$P(r, s) = \frac{c \times (1 - \sum_{k=1}^i \pi_k) + c \times \sum_{k=1}^i \pi_k \times RR}{(1+r)^1} + \dots + \frac{c \times (1 - \sum_{k=1}^i \pi_k) + c \times \sum_{k=1}^i \pi_k \times RR}{(1+r)^i} + \dots +$$

$$\frac{(c+100) \times (1 - \sum_{k=1}^n \pi_k) + (c+100) \times \sum_{k=1}^n \pi_k \times RR}{(1+r)^n}; \quad (17)$$

Մյուս կողմից, (10)-ից հետևում է, որ  $(1 - \sum_{k=1}^i \pi_k) + \sum_{k=1}^i \pi_k \times RR = (1 - p)^i + (1 - (1 - p)^i) \times RR$ , հետևաբար.

$$P(r, s) = \frac{c \times (1-p) + c \times p \times RR}{(1+r)^1} + \dots + \frac{c \times (1-p)^i + c \times (1 - (1-p)^i) \times RR}{(1+r)^i} + \dots +$$

$$\frac{(c+100) \times (1-p)^n + (c+100) \times (1 - (1-p)^n) \times RR}{(1+r)^n}. \quad (18)$$

Հավասարում (18)-ը ավելի պարզ ներկայացնելու նպատակով կարող ենք կիրառել հավասարում (13)-ը, և գինը մոտարկել հետևյալ բանաձևով.

$P(r, s) \approx \frac{c \times (1-p) + c \times p \times RR}{(1+r)^1} + \dots + \frac{c \times (1-p)^i + c \times i \times p \times RR}{(1+r)^i} + \dots +$ $\frac{(c+100) \times (1-p)^n + (c+100) \times n \times p \times RR}{(1+r)^n},$	(19)
$P(r, s) \approx \frac{c(1-p \times LGD)}{(1+r)^1} + \dots + \frac{c(1-p \times LGD)}{(1+r)^i} + \dots + \frac{(c+100) \times (1-p \times LGD)}{(1+r)^n}.$	(19.1)

Վարկային ռիսկով պարտատոմսի սարեղը

Առաջին տարբերակ: Սարեղը գնահատելու համար անհրաժեշտ է հավասարեցնել գնի համար ստացված մեծությունը (19)-ը (ինչպես նաև (17)-ը և (18)-ը) սարեղով գեղջված դրամական հոսքերի գումարին՝ (2).

$$P(r, s) \approx \frac{c \times (1-p) + c \times p \times RR}{(1+r)^1} + \dots + \frac{c \times (1-p)^i + c \times (1 - (1-p)^i) \times RR}{(1+r)^i} + \dots +$$

$$\frac{(c+100) \times (1-p)^n + (c+100) \times (1 - (1-p)^n) \times RR}{(1+r)^n} = \frac{c}{(1+r+s)^1} + \dots + \frac{c}{(1+r+s)^i} + \dots + \frac{c+100}{(1+r+s)^n},$$

որտեղից իտերացիոն մեթոդներով հեշտությամբ կարելի է գտնել  $s$ -ի մեծությունը:

Երկրորդ տարբերակ: Կիրառական տեսանկյունից կարող է հարմար լինել սպրեդը հաշվարկել անալիտիկ մեթոդով, այդ պատճառով ստորև տրվում է սպրեդի՝ անալիտիկ տեսքով մոտարկման մեթոդաբանություն:

Մեթոդաբանության հիմքում ընկած է հետևյալ հարցադրումը. որքան պետք է փոխվի հավասարում (1)-ի՝

$$P(r) = \frac{c}{(1+r)^1} + \dots + \frac{c}{(1+r)^i} + \dots + \frac{c+100}{(1+r)^n},$$

տոկոսադրույքը ( $\Delta r \cong s$ ), որպեսզի պարտատոմսի գինը հավասարվի

$$\text{հավասարում (2)-ին՝ } P(r, s) = \frac{c}{(1+r+s)^1} + \dots + \frac{c}{(1+r+s)^i} + \dots + \frac{c+100}{(1+r+s)^n}, \text{ որը}$$

նախօրոք հաշվարկվել է վերոնշյալ մեթոդաբանությամբ: Ըստ ձևափոխված

$$\text{ոյուրացիայի հատկության՝ } \frac{P(r,s)-P(r)}{P(r)} \approx -MD_r \times \Delta r: \text{ Այսինքն.}$$

$$s \approx \frac{1}{MD_r} \times \left(1 - \frac{P(r,s)}{P(r)}\right): \quad (20)$$

Մյուս կողմից հավասարումներ (5)-ից և (15.1)-ից ստացվում է, որ  $P(r, s) \approx$

$$P(r) - LGD \times p \times MD_r \times P(r) \text{ կամ } \frac{P(r,s)}{P(r)} = 1 - LGD \times p \times MD_r: \text{ Վերջինս}$$

տեղադրելով հավասարում (20)-ում կստանանք.

$$s \approx LGD \times p: \quad (21)$$

Ստացված արդյունքը կիրառելով (15.1) հավասարման մեջ՝ կստանանք սպասված կորստի չափի մոտարկման անալիտիկ բանաձև.

$$EL \approx s \times MacD_r \times P(r) \approx s \times MD_r \times P(r): \quad (15.2)$$

Այսպիսով, ստացանք վարկային ռիսկով պարտատոմսի գնի, այդ գինը պայմանավորող գործոնների գնահատման ճշգրիտ եղանակ, ինչպես նաև որոշ պայմանների տեղի ունենալու դեպքում այդ մեծությունների մոտարկումներ:

1. BIS, “Quarterly Review”, March 2007 Q4
2. Dickson D., Hardy M., Waters H., “Actuarial Mathematics for Life Contingent Risks”, 2013
3. Elton E., Gruber M., Agrawal D., “On the Valuation of Corp. Bonds, September 15, 2003
4. FRM, “Financial Risk Manager Handbook”, Part I/Part II, 2011
5. PRM, “Professional Risk Manager Handbook Series”, Volume III
6. Smith D., “Bond Math”, Wiley 2011
7. Stewart W.J., “Probability, Markov Chains, Queues, and Simulations”, 2009
8. Գալստյան Ա. Գ., Հարոյան Լ. Հ., Մելիք-Փարսադանյան Վ. Ա., «Մաթրիի ոյուրացիայի մի հատկության վերաբերյալ», ՀՀ ճարտարագիտ. համալս. Լրաբեր, հ. 14, #2, 2017, էջ. 200-206

**Վահագն Մելիք-Փարսադանյան, Անի Գալստյան**  
**Վարկային ռիսկով պարտատոմսի գինը և եկամտաբերությունը**

*Բանալի բառեր. վարկային ռիսկ, վարկային սպրեդ, սպասվող կորուստ, դեֆոլտի հավանականություն, ռիսկից զերծ տոկոսադրույք:*

Վարկային ռիսկի ենթակա պարտատոմսի համար ներդրողները պահանջում են ավելի մեծ եկամտաբերություն, քան նույն հատկանիշներով վարկային ռիսկից զերծ պարտատոմսի համար: Եկամտաբերության այդ տարբերությունը՝ սպրեդը, իրենից ներկայացնում է այն փոխհատուցումը, որ ներդրողը պահանջում է վարկային ռիսկը կրելու համար: Աշխատանքում ներկայացված է վարկային ռիսկով պարտատոմսի գնի և այդ ռիսկը բնութագրող այլ ցուցանիշների գնահատման մոդել՝ ենթադրելով, որ սպրեդը պայմանավորող միակ գործոնը սպասվող կորուստն է:

**Ваагн Мелик-Парсаданян, Ани Галстян**  
**Стоимость и доходность облигации с кредитным риском**

*Ключевые слова: кредитный риск, кредитный спред, ожидаемая потеря, вероятность дефолта, безрисковая процентная ставка*

Для облигации, подлежащей кредитному риску, инвесторы требуют большей доходности, чем для облигации с теми же характеристиками, но лишенной кредитных рисков, и эта разница в доходности – спред, представляет собой ту компенсацию, которую требует инвестор для того, чтобы нести кредитный риск. В работе представлена модель оценки цены облигации с кредитным риском и иных показателей, полагая, что фактором спреда является ожидаемая потеря.

**Vahagn Melik-Parsadanyan, Ani Galstyan**  
**Price and Yield Calculation for Defaultable Bond**

*Key words: credit risk, credit spread, expected loss, default probability, risk-free interest rate*

Investors demand higher yield for bonds that are susceptible to credit risk than for default-free bonds with the same characteristics, and the difference between these yields is the compensation that an investor demands for bearing credit risk. In this article a model for defaultable bonds price estimation as well as other indicators of credit risk are presented assuming that the only factor affecting the spread is expected loss.



**ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՀՀ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**<sup>431</sup>


**Էդգար ԹԱՂԱՐՅԱՆ**

ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ

Բանալի բառեր. որակյալ տնտեսական աճ, կարգավիճակի համաթիվ, գլոբալ մրցունակության համաթիվ, տեխնոլոգիական բաղադրիչ

**ՀՀ նորարարական ներուժը**

Ներկայումս լայն մասսայականություն է վայելում Հայաստանում գիտատեխնիկական, տեխնոլոգիական և նորարարական՝ որպես երկարաժամկետ հեռանկար ունեցող և տնտեսության մրցունակության բարձրացմամբ պայմանավորված որակյալ տնտեսական աճ ապահովող գործոնների դերի ու նշանակության կարևորումը: Հայաստանի մրցունակությունը և նորարարական պոտենցիալը գնահատելու համար սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է 152 երկրի համար համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հաշվարկված գլոբալ մրցունակության համաթվի բացվածքը<sup>432</sup>:



**Գծապատկեր 1.** Հայաստանի մրցունակությունն ըստ 12 հենայունների 2016-2017թթ.

Գծապատկեր 1-ից երևում է, որ առավելագույն և նվազագույն ցուցանիշների համեմատ ՀՀ մրցունակությունը բնութագրող ենթահամաթվերն ընդհանուր առմամբ զբաղեցնում են միջանկյալ դիրքեր: Միջինից բարձր ցուցանիշներ են գրանցվել «առողջապահություն և հիմնական կրթություն», «բարձրագույն կրթություն և վերապատրաստում», «ապրանքային շուկայի

<sup>431</sup> Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀԲՀ ՀԲ 16-03 գիտական ծրագրի շրջանակում  
<sup>432</sup>The Global Competitiveness Index

արդյունավետություն» և «աշխատանքի շուկայի արդյունավետություն» հենասյունների մասով, մինչդեռ մյուս հենասյուններով Հայաստանի ցուցանիշները միջինից ցածր են, իսկ միջինից ցածր ցուցանիշներով աչքի են ընկնում «ներքին շուկայի ծավալ», «նորարարություններ», «ենթակառուցվածքներ» և «գործարարության բարդություն» հենասյունները, որոնց շեղումը միջինից կազմում է համապատասխանաբար՝ 1.49, 0.78, 0.44 և 0.43: Երկրի նորարարական ներուժը պայմանավորված է ինչպես որակյալ մարդկային կապիտալի առկայությամբ ու դրա վերարտադրությամբ, այնպես էլ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման նպատակով կատարվող ներդրումներով, անհրաժեշտ ենթակառուցվածքների և ինստիտուտների ստեղծմամբ: Վիճակագրությունը վկայում է, որ 2015թ. հետազոտություններ և մշակումներ կատարող թվով 70 կազմակերպություններում աշխատողների թվաքանակը 2011թ. 5,718 մարդուց դինամիկ կրճատվել է 2015թ. կազմելով ընդամենը 5,044 մարդ: Չնայած 2011թ. հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը 9,276մլն դրամից աճել են 2015թ. հասնելով 11,930մլն դրամի, այնուամենայնիվ դրանց մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ շարունակում է աննշան մնալ և կազմում է ընդամենը 0.23%, որից 78%-ը բաժին է ընկնում բյուջետային ռեսուրսներին<sup>433</sup>:

Համեմատության համար նշենք, որ զարգացած երկրներում այս ցուցանիշը հիմնականում գերազանցում է 2.5%-ը, իսկ նախկին ԽՍՀՄ երկրներից ամենաբարձրը կազմել է Ռուսաստանում՝ 1.13%<sup>434</sup>: Երկրի նորարարական ներուժը գնահատելու առումով կարևոր ցուցանիշ է նաև գիտահետազոտական և նորաստեղծական ոլորտում աշխատողների միջին աշխատավարձերը: Հատկանշական է, որ «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության» և «կրթության» ոլորտներում միջին աշխատավարձերը 2015թ. կազմել են համապատասխանաբար 167,573 դրամ և 115,882 դրամ, ինչը բավականին՝ ունեցողների մասնաբաժինը կազմում է մոտ 29%, որից 59%-ը գործազուրկ է, ինչը խոսում է որակյալ մասնագիտական ռեսուրսների առկայության մասին, որի մի զգալի մասը, սակայն, չի օգտագործվում: 2015թ. ասպիրանտուրայում սովորողների թվաքանակը կազմել է 1,178, որի մեջ 37.7%-ը բաժին է ընկել բնագիտական և

<sup>433</sup> ՀՀԱՎԾ, 2016թ. -ի տարեգիրք

<sup>434</sup> <http://www.worldbank.org/>

տեխնիկական, իսկ 62.3%-ը հասարակագիտական մասնագիտություններին: Եթե հաշվի առնենք տեխնոլոգիական փոփոխությունների գործում բնագիտական և տեխնիկական մասնագիտությունների անմիջական ազդեցությունը, ապա կարելի է մատնանշել մասնագիտությունների կառուցվածքային փոփոխությունների անհրաժեշտությունը՝ հոգուտ բնագիտական և տեխնիկական մասնագիտությունների, իհարկե չանտեսելով նաև հասարակական գիտությունների դերակատարությունը, հատկապես՝ գիտական գիտելիքների առևտրայնացման համար ինստիտուցիոնալ արդյունավետ հարթակի մշակման և ներդրման կարևորագույն խնդրի լուծման նպատակով:

Դատելով վիճակագրությունից պետք է արձանագրել նաև, որ Հայաստանում նորարարությունները խթանելու համար կատարվող ներդրումները ոչ միայն բավարար չեն, այլև դրանց «առյուծի բաժինն» ընկնում է պետական ֆինանսավորման աղբյուրներին: Իրականում, հետազոտությունների և մշակումների ֆինանսավորումը՝ պայմանավորված մեծ անորոշություններով և կատարված ներդրումների հետգնման բարձր ռիսկի առկայությամբ՝ ներդրողների համար այնքան էլ գրավիչ չէ: Այս առումով տեղին է մեջբերել այն տեսակետը, համաձայն որի «Ինովացիաների ռիսկայնության բարձր աստիճանը այս ոլորտի ֆինանսավորման գործընթացներում առաջացնում է ներդրումային բարձր զգոնություն, որի հետևանքով, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի վկայությամբ, ինովացիաների ֆինանսավորման համար ստեղծվել են հատուկ ֆինանսական գործիքներ և ինստիտուտներ»<sup>435</sup>: Մյուս կողմից, սակայն, մտահոգիչ է գործարար միջավայրի պասիվությունն այդ հարցում, որն ըստ էության հանդիսանում է մրցունակ տնտեսության շարժիչ ուժը: Իհարկե, նման պասիվ վարքագծի համար բարձր ռիսկերի առկայությունը չպետք է դարձնել այսպես կոչված «քավության նոխագ»: Դրանում մեղքի իր բաժինը կարող է ունենալ նաև թե՛ պետական պատասխանատու կառույցների, և թե՛ մասնավոր հատվածի շահառուների կողմից մշակվող նորարարական ծրագրերի ու ռազմավարությունների ոչ հստակ և ներդրողների համար պակաս համոզիչ լինելու հանգամանքը: Որոշ փորձագետներ նույնիսկ առաջարկում են նորաստեղծական կենտրոնների գործունեության արդյունավետությունը գնահատելու համար հիմնվել դրանց սեփա-

<sup>435</sup> Հ. Ս. Ավետիսյան, «Ինովացիոն ֆինանսավորման հնարավոր աղբյուրներ և կառուցակարգեր», էջ 135

կան դրամական միջոցներ հայթայթելու ունակության վրա»<sup>436</sup>: ՀՊՏՀ «ՀՀ տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում» թեմայով 2012-2013թթ ներհամալսարանական դրամաշնորհային հետազոտությունը փաստում է, որ «ՀՀ ազգային նորաստեղծական համակարգի՝ տեխնոլոգիաների ստեղծման և փոխանցման գոյություն ունեցող հիմնական սուբյեկտները գործում են միմյանցից մեկուսացված (կրթություն, հետազոտություններ և մշակումներ իրականացնող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական հաստատություններ, մասնավորիատված), իսկ մի շարք առանցքային ինստիտուտներ կամ չկան (տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ), կամ սաղմնային վիճակում են (տեխնոպարկեր, գերազանցության կենտրոններ, վենչուրային հիմնադրամներ): Կամ էլ դրանք կան, սակայն դրանց տնօրինած ֆինանսական ռեսուրսները և, համապատասխանաբար, գործունեության մասշտաբն ու ապահոված արդյունքն առայժմ է ական տեղաշաժ չեն առաջացնում համապատասխան ոլորտներում»<sup>437</sup>: Իսկ Ջոնսոն Քորնել համալսարանի, համաշխարհային բիզնես դպրոցի և մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից 2015թ.-ին հրատարակված համաշխարհային նորարարական համաթվի մասին զեկույցում նշվում է, որ «համալսարանների և արդյունաբերության միջև թույլ կապը խոչընդոտում է Հայաստանին նորարարական ներկայացվածությանը»<sup>438</sup>:

Նույն զեկույցի՝ 2017թ.-ին նորացված տարբերակում համաշխարհային նորարարական համաթիվը Հայաստանում [0-100] միջակայքում կազմել է 35.65 և թվով 127 երկրների շարքում զբաղեցրել է 59-րդ հորիզոնականը<sup>439</sup>, այն դեպքում, երբ 2015թ.-ին կազմել է 37.31 և զբաղեցրել 61-րդ հորիզոնականը: Ինստիտուցիոնալ փոփոխությունների առումով հետաքրքրական է նաև գերմանական «Բի-Թի-Այ» կազմակերպության կողմից հաշվարկված

<sup>436</sup>Լուսինե Մարգարյան, « ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմները» էջ 88

<sup>437</sup>«ՀՀ տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում», ՀՊՏՀ 2012-2013թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, էջ 17

<sup>438</sup>«The Global Innovation Index 2015», page 73

<sup>439</sup> «The Global Innovation Index 2017», page 20

կարգավիճակի համաթիվը, որն իր հերթին հանդիսանում է քաղաքական և տնտեսական փոխակերպման համաթվերի միջին թվաբանականը: Դրանք պատկերացում են տալիս զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում քաղաքական և տնտեսական փոփոխությունների մասին: Համաձայն 2016թ. հաշվետվության քաղաքական և տնտեսական փոխակերպումների համաթվերը [0-10] միջակայքում կազմել են 5.23 և 5.89, որոնցով 129 երկրների շարքում ՀՀ-ը զբաղեցրել է 74-րդ և 56-րդ հորիզոնականները<sup>440</sup>:

<p><b>Ուժեղ կողմեր.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Խորհրդային տարիներից ժառանգված մի շարք գիտահետազոտական ին-ստիտուտների և ենթակառուցվածքների առկայություն</li> <li>- Ինստիտուցիոնալ և մակրոտնտեսական փոփոխությունների դրական դինամիկա (շնչին ընկնող ՀՆԱ-ի աճ, գործարար միջավայրի բարելավում, տեխնոլոգիաների խթանման համար պետական գերատեսչությունների կողմից ռազմավարությունների մշակում և այլն)</li> <li>- Երկրում առկա բարձր ձեռնարկատիրական ակտիվություն, բարձրագույն կրթություն ունեցող որակյալ աշխատուժի առկայություն</li> </ul>	<p><b>Թույլ կողմեր.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Հետազոտությունների և մշակումների համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների սղություն: Մասնավոր հատվածի կողմից նորարարություններին ուղղված ներդրումների պասիվություն</li> <li>- Արտահանման, տնտեսական աճի ապահովման գործում տեխնոլոգիական բաղադրիչի աննշան մասնակցություն</li> <li>- Գիտություն – արտադրություն կապի, հիմնարար հետազոտությունների նյութականացման և առևտրայինացման անբավարար մակարդակ</li> <li>- Գիտահետազոտական նյութատեխնիկական ռեսուրսների բարոյական և ֆիզիկական մաշվածություն</li> </ul>
<p><b>Հնարավորություններ.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Արտասահմանում Հայաստանը ներկայացնելու, նոր գիտելիքների, փորձի և ֆինանսական միջոցներ ստանալու մեծ սփյուռքի առկայություն</li> <li>- ՀՆԱ կառուցվածքում ծառայությունների մեծ մասնաբաժին, տեղեկատվության և կապի դինամիկ զարգացող շուկա (2015թ. մատուցված համախառն ծառայությունների 19%-ը՝ ՏՏ ոլորտին)</li> <li>- ԵՄ և ԵԱՏՄ շրջանակներում համագործակցության ընդլայնում</li> </ul>	<p><b>Սպառնալիքներ.</b></p> <ul style="list-style-type: none"> <li>- Գործազրկություն՝ բարձր որակավորում ունեցող կադրերի շրջանակներում: Արտագաղթի չդադարող տեմպեր</li> <li>- Ձեռնարկությունների կողմից տեխնոլոգիաների կլանման ոչ բավարար մակարդակ (Գլոբալ մրցունակության համաթվից տեխնոլոգիաների կլանման համաթիվը 2015-2016թթ. ՀՀ-ն զբաղեցրել է աշխարհում 113-րդ տեղը)</li> <li>- Փոքր ներքին շուկա, արտաքին անբարենպաստ պայմաններ ազդակներ</li> </ul>

Հայաստանում տեխնոլոգիական փոփոխությունների՝ երկրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները գնահատելու հա-

<sup>440</sup>“Armenia Country Report”, BTI 2016, page 1

մար կատարվել է SWOT վերլուծություն՝ մի շարք հեղինակների և կազմակերպությունների կողմից արդեն իսկ կատարված SWOT վերլուծությունների և սույն աշխատանքի շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքների համախմբման և փոխլրացման միջոցով<sup>441</sup>:

**Եզրակացություն .**

Ամփոփելով հետազոտության շրջանակներում կատարված վերլուծությունները կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին .

- ՀՀ տնտեսական աճի մեջ տեխնոլոգիական բաղադրիչն ունի գրեթե աննշան մասնակցություն;

- ՀՀ-ում նորարարությունների համար, ի դեմս թվով 70 գիտահետազոտական կենտրոնների, առկա է զգալի նյութատեխնիկական բազա, որը, սակայն, հիմնականում հանդիսանում է խորհրդային ժառանգության արդյունք և ունի տեխնիկական վերազինման կարիք

- Չնայած բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող կադրերով զգալի ապահովվածությանը, այնուամենայնիվ առկա է որակյալ աշխատուժի թերօգտագործման խնդիր, ինչը պայմանավորված է մի կողմից ԲՈՒՀ-արդյունաբերություն կապի թույլ լինելու հանգամանքով, մյուս կողմից՝ որակավորված կադրերի փորձի պակասով;

- Բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող աշխատուժի մեջ զգալիորեն փոքր է տեխնոլոգիական գործոնի վրա ուղիղ ազդեցություն ունեցող՝ բնագիտական և տեխնիկական կրթությամբ մասնագետների տեսակարար կշիռը;

- Առկա է նորարարությունների խթանման ֆինանսական ռեսուրսների խիստ սահմանափակություն: Ցածր է գործարար միջավայրի նորարարական գործընթացներում ներդրումային մասնակցության մակարդակը;

- Կայացած չեն նորարարական գործընթացներում ի հայտ եկող մեծ ռիսկերի բաշխման, կառավարման և ապահովագրության ինստիտուտները:

---

<sup>441</sup> Tigran Arzumanyan, Mikael Abovyan “Country Report Armenia” supported by the European Commission under the grant agreement N609532, page 27, «Եվրոպայի փոքր բիզնեսի ակտիվ իրականացման գնահատում», Արևելյան գործընկերության երկրներ 2016թ. հաշվետվություն, էջ 4, Հայաստանի Հանրապետության տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում», ՀՊՏՀ, 2012-2013թթ. ներհամալսարանական գիտական դրամաշնորհային հետազոտություն, էջ 19

**Էդգար ԹԱԴԱՐՅԱՆ**

**Նորարարական ներուժը ՀՀ երկարաժամկետ տնտեսական աճի գործոնների համակարգում**

*Բանալի բառեր. որակյալ տնտեսական աճ, կարգավիճակի համաթիվ, գլոբալ մրցունակության համաթիվ, տեխնոլոգիական բաղադրիչ*

Տեխնոլոգիական գործոնը երկարաժամկետ կայուն և որակյալ տնտեսական աճի գրավականն է: Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ՝ մի շարք գործոններով պայմանավորված նորարարական ներուժը, ինչպիսիք են որակյալ աշխատուժի, նյութատեխնիկական բազայի, ֆինանսական ռեսուրսների, անհրաժեշտ ինստիտուտների առկայությունը և այլն: Բացահայտվել են տեխնոլոգիական գործոնով պայմանավորված որակյալ տնտեսական աճի համար երկրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները:

**Эдгар ТАГАРЯН**

**Инновационный потенциал РА в системе факторов долгосрочного экономического роста**

*Ключевые слова: качественный экономический рост, индекс состояния, индекс глобальной конкурентоспособности, технологическая составляющая*

Технологический фактор является долгосрочной гарантией устойчивого и качественного экономического роста. В рамках этого исследования инновационный потенциал Армении изучен по ряду факторов, таких как высококвалифицированная рабочая сила, материальная база, финансовые ресурсы, наличие необходимых институтов и т. Д. Выявлены сильные и слабые стороны, возможности и угрозы страны для качественного экономического роста из-за технологического фактора.

**Edgar TAGHARYAN**

**Innovative potential of Armenia in a system of long term economic growth factors**

*Key words. quality economic growth, status index, global competitiveness index, technological component*

The technology factor is a long-term guarantee of sustainable and high-quality economic growth. Within the framework of this research, Armenia's innovation potential has been studied, due to a number of factors, such as high-skilled labor, material base, financial resources, availability of necessary institutes and so on. The strengths and weaknesses, opportunities and threats of the country for high-quality economic growth due to the technological factor have been revealed.

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԱՌԱՋՆԱԳԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԽԻՍՏ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ**

Գրիգոր (Գրիշա) Ալեքսանի Ղարիբյանի, Ալվարո Ալբերտի Խառատյանի, Ռազմիկ Կամոյի Իսահակյանի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները անկախության տարիներին» գրքի վերաբերյալ

Սոցիալ-տնտեսական զարգացման, մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները բազում գիտական քննարկումների առարկան են և ներկա գիտական զարգացումների դեպքում կրկին ու կրկին վերարժևորվում ու վերագնահատվում են: Այս տեսանկյունից ևս ընտրված թեման, արժարժված ուղղությունը հրատապ է, իսկ ներկայացված աշխատանքը՝ պահանջված է: Այն, նաև ակնհայտ մեծ հետաքրքրություն է առաջացրել հասարակական տարբեր շրջանակներում: Պատճառը, թերևս ոչ միայն ուսումնասիրության գիտական արժեքն է ու մասնագիտական նշանակությունը, այլ նաև հանրամատչելի լեզուն ու այն սոցիալական մտահոգությունը որով շաղախված է այս ինքնատիպ գիրքը: Այն բաղկացած է ներածությունից, չորս հիմնական մասից, վերջաբանի փոխարեն ներկայացված մտահոգություններից, առաջարկություններից, եզրակացություններից, գրականության ցանկից, որում ավելի քան հարյուր մասնագիտական աղբյուրներից հղումներ են կատարված, անդրարդած է կատարված հայ գրականագետների, հայտնի գրողների աշխատանքներին:

Աշխատությունում նկատելի է վերլուծությունների կատարման էվոլյուցիոն սկզբունքի հստակ կիրառությունը: Այս տեսանկյունից հիմնախնդրի վերլուծական ելակետը նախախորհրդային և խորհրդային Հայաստանի համապատասխան դիտանկյունից տնտեսական պատկերի շարադրությունն է: Փոխառնչությունների այս տիրույթում ուղղակիորեն, սահուն անցում է ապահովված, հանգամանալից քննարկված է կապիտալի նախասկզբնական կուտակման հայաստանյան դժվարությունները, կոռուպցիոն դրսևորումները և ծանր հետևանքները: Այս տեսանկյունից ԽՍՀՄ փլուզումը և Հայաստանում շուկայական տնտեսության կայացման հիմնախնդիրները հատկապես հստակեցվում են հետահայաց ուսումնասիրությամբ: Չինաստանի տնտեսական փորձի համեմատական վերլուծությունը հնարավորություններ է ընձեռում ամրապլնդել կատարված եզրակացությունների, ներկայացված առաջարկությունների գիտական հենքը: Հատկապես համաշխարհային տնտեսությունում, գիտական մտքի անդաստանում աննախադեպ է վարչահրամայական սոցիալ-տրն-



տեսական համակարգի վերափոխումն ու անցումը շուկայական տնտեսական կացութեւին: Այն տնտեսագիտական համապատասխան հիմնավորումների, տեսությունների, հանգամանալից քննարկումների բացակայությամբ, հետագա վերարժևորումների «պահանջ է իրենում ամփոփում»: Այս տեսանկյունից որպես հետևանք աշխատությունում պատահական չի դիտվում Հայաստանի տնտեսական և սոցիալական խորը ճգնաժամի առկայությունը, հարստության և եկամուտների բևեռացված բաշխումը, բնակչության աղքատացման միտման առկայությունը:

Փոխառնչությունների ներկայացված տիրություն հատկապես ուշագրավ են Հայաստանի Հանրապետության մարդկային կապիտալի ներդրումային հնարավորությունների, որակական կորուստների և դրանց կանխման հիմնախնդիրների բացահայտման փորձերը և այս տեսանկյունից առանձնակի ուշադրության են արժանացել ՀՀ անցումային ժամանակշրջանի միգրացիոն հիմնախնդիրները և կրթական համակարգի զարգացման հիմնահարցերը:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ պետական բազմաթիվ պարզատրումներ և կոչումներ ունեցող ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պատվավոր պրոֆեսոր Գ. Ա. Ղարիբյանի գլխավորությամբ ստեղծված աշխատանքը սրտացավ վերաբերմունքի արարում է և փաստերի օբյեկտիվ շարադրման ու հանգամանալից վերլուծության դրսևորում է: Այն արժանի է մասնագիտական ամենաբարձր գանահատականի և համապատասխան ոլորտի մասնագետներին, փորձագետներին լուրջ մտորումների տեղիք կարող է տալ և հատկապես կիրառվել ոլորտին առնչվող տնտեսական քաղաքականության և ինստիտուցիոնալ ռազմավարության մշակումներում:

**Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Արման ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

## ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

“Այլընտրանք” գիտական հանդեսում հրատարակման համար հոդվածները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին ու պահանջներին.

✓ Վերևում՝ հոդվածի վերնագիրը (տպատառերով), ներքևում՝ աջ անկյունում՝ հեղինակի անունը (առաջին տառը՝ մեծատառ, մյուսները՝ փոքրատառ), ազգանունը (բոլորը տպատառերով), աշխատավայրը, պաշտոնը, գիտական աստիճանը, գիտական կոչումը, ներքևում՝ գրվում են թեմային առնչվող մինչև հինգ բանալի բառեր:

✓ Հոդվածի վերջում նշվում է հեղինակի անունը /առաջին տառը՝ մեծատառ, մյուսները՝ փոքրատառ/, ազգանունը (բոլորը տպատառերով), որից հետո՝ վերնագիրը (առաջին բառի առաջին տառը՝ մեծատառ, մյուսները՝ փոքրատառերով), ներքևում՝ բանալի բառերը՝ շեղատառերով: Հաջորդ տողում զետեղվում է հոդվածի ամփոփագիրը՝ մինչև 60 բառ: Նշված տեղեկությունները պետք է ներկայացվեն երեք լեզվով (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

✓ Ներքևում՝ հեղինակի անունը, ազգանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը, գիտական աստիճանը և կոչումը:

✓ Էջի չափը՝ A4

✓ Տառատեսակը՝ հայալեզու հրապարակումների համար՝ Arial Armenian, անգլիալեզու և ռուսալեզու հրապարակումների համար՝ Arial:

✓ Տառաչափը՝ 12:

✓ Միջտողային հեռավորությունը՝ 1, 5:

Հոդվածի հետ միասին խմբագրությանը ներկայացվում է կարծիք տվյալ հոդվածի վերաբերյալ՝ գիտական ղեկավարից կամ տվյալ թեմայի գծով մասնագիտացած այլ փորձագետի կողմից:

Հոդվածները ներկայացվում են էլեկտրոնային էլեկտրոնային փոստով՝ [tatoulm@gmail.com](mailto:tatoulm@gmail.com) կամ [researchcenteralternative@yahoo.com](mailto:researchcenteralternative@yahoo.com) հասցեով: